# ՆԻՒԹԵՐ
# Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
# ՊԱՏՄՈՒԹԵԱՆ



## Գ. ՀԱՏՈՐ

Բ. Տպագրութիւն
Պէյրութ - 2007

Այս հատորի Բ. տպագրութիւնը
կը կատարուի
Տէր եւ Տիկին
Գաբրիէլ եւ Անժէլ Չեմպերճեաններու
նուիրատուութեամբ
2007



# Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
# ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Չորրորդ Ընդհանուր Ժողովը Հ. Յ. Դաշնակցութեան ամենէն կարեւոր եւ անկիւնադարձ կազմող համագումարներէն մէկն է:

Երրորդ Ընդհանուր Ժողովին (1) յաջորդող եռամեակը Դաշնակցութեան գործունէութեան ամենաբեղուն շրջաններէն մէկը հանդիսացաւ, անժխտելիօրէն: Սասնոյ ապստամբութիւն, արշաւախումբեր, Վասպուրականի եւ Լեռնապարի յեղափոխական-զինական կազմակերպում, Հայ Դատի ի նպաստ արտաքին քարոզչութեան ծաւալում, Զաւարեանի եւ Վարդանի շրջապտոյտ՝ Եգիպտոսէն Կիլիկիա, Սուլթանի մահափորձ եւ Իզմիրի դաւադրական ձեռնարկ, մասնակցութիւն համառուսական յեղափոխական շաժման ու հայ-թաթարական կռիւներ, — թուած ըլլալու համար գլխաւոր խորագրերը միայն հայ ազատագրական շարժման ու յեղափոխութեան պատմութեան շքեղ այդ էջերուն:

Կովկասի մէջ էր, մանաւանդ, որ ռուս յեղափոխական շարժման բռնկումով, դէպքերը 1904–1906 եռամեակի ընթացքին զարգացան զահավէժ արագութեամբ: Ցարական բռնակալութեան դէմ պայքարը Դաշնակցութեան համար սկսած էր անշուշտ աւելի կանուխէն՝ հայ եկեղեցական կալուածներու գրաւման հրամանագրի օրերէն: Բայց զուտ ազգային այդ պայքարը 1904էն սկսեալ զուգահեռ գնաց համառուսական պոռթկումի ընկերային-յեղափոխական առաջադրանքներուն հետ: Դաշնակցութեան կովկասեան մարմինները մասնակցեցան Ռուսաստանի կուսակցութեանց համաժողովներուն, կազմակերպչական ու դաւադրական աշխատանքներուն: Եւ անկասկած՝ շատ աւելի կարեւոր պիտի ըլլար Դաշնակցութեան մարտակա՛ն մասնակցութիւնը համառուսական յեղափոխութեան, եթէ 1905 Փետրուարին չսկսէին հայ-թաթարական կռիւները, որոնք մեր կազմակերպութեան զինեալ ուժերը պիտի զբաղեցնէին աւելի քան տարի մը:

Այս պայմաններուն մէջ հասկնալի է ուրեմն՝ որ 1904–1906 տարիները Դաշնակցութեան կովկասեան մարմիններուն համար յատկանշուած ըլլան թէ՛ ժողովական, կազմակերպչական, քարոզչական եւ մարտական տենդագին գործունէութեամբ մը, եւ թէ, միաժամանակ, գաղափարաբանական հետզհետէ շեշտուող զարգացումով մը՝ դէպի արտա-ազգային, ընկերային-դասակարգային առաջադրանքները (2): Արեւելեան Բիւրոն, կովկասեան մարմինները ու յաջորդական Ռայոնական ժողովները պարտաւորուեցան զբաղուիլ ծրագրային նոր պահանջներու եւ համապատասխան գործունէութեան եղանակներու ձեւակերպումով: Ընկերվարութեան ամբողջապէս յարելու կամ ցարական բռնակալութեան դէմ ծառացումը զուտ ազգային-ազատագրական պայքարի հունին մէջ պահելու հակոտնեայ ձգտումները յաճախ բախեցան իրարու, ստեղծելով բուռն վէճեր (3):

Դաշնակցութեան խորհուրդն էր որ, 1905ի գարնան, բիւրեղացնելով արտայայտուած տրամադրութիւնները պիտի որոշէր՝ «Կովկասեան շարժման ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունէութեան, մշակել ծրագիր՝ համաձայն Կովկասեան Ռայոնական Ժողովում արտայայտուած տրամադրութեան, ուղարկել կովկասեան դաշնակցական մարմիններին՝ ժամանակաւորապէս ղեկավարուելու այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական մշակումը եւ հաստատումը առաջիկայ Ընդհանուր Ժողովին»: Ու խորհուրդը պիտի կազմէր ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ (4):

Ծանօթ է որ ՆԱԽԱԳԻԾԻ հրատարակութիւնը ընդհանուր յուզում յառաջացուց Երկրի եւ ընդհանրապէս՝ արեւմտահայ մարմիններուն եւ ընկերներուն մօտ: Կովկասեան գործունէութեան կարեւորութեամբ անդրադառնալով հանդերձ, Երրորդ Ընդհանուր Ժողովը բացայայտօրէն նախատեսած չէր ինքնապաշտպանու-

թեան շրջանէն հակացարական կազմակերպուած գործունէութեան անցնումը: Ուստի շատերու համար ՆԱԽԱԳԻԾԻ իրական արժէքի եւ խորհուրդի իրաւասութեան հարցը կը դրուէր շեշտակի կերպով: Տակաւին, թէեւ նորութիւն չէին ՆԱԽԱԳԻԾԻ բերած ընկերվարական շունչն ու գործնական կարգ մը առաջադրութիւնները, քանի արդէն իսկ յստակօրէն մարքսիստ տրամադրութիւններ կային Դաշնակցութեան անդրանիկ Ծրագրին մէջ իսկ(5), սակայն տասնըհինգ տարիներու ազգային-ազատագրական կռիւը երկրորդական մակարդակի վրայ էր նետած, երբեմն նոյնիսկ մոռացութեան տուած, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնովին ընկերվարական սկզբնական գաղափարախօսութիւնը: Եւ ազատագրական համազգային պայքարի տենդին մէջ՝ դասակարգային կռուի կարգախօսները խորթ կը հնչէին — հասկնալի կերպով — Դաշնակցութեան մարտիկ տարրին մօտ մասնաւորաբար, որուն համար, հինէն ի վեր, յեղափոխութեան էական ու միակ նպատակը սուլթանական բռնակալութենէն Թրքահայաստանի ազատագրութեան մէջ կը կայանար: Հիմնական գործունէութեան երկրորդ եւ ընդարձակ դաշտի մը, կռուի երկրորդ ճակատի մը այդ բացումը պատճառ պիտի դառնար, ըստ շատերու կարծիքին, Երկրի գործունէութեան տկարացումին:

Ատկէ՝ տրամադրութեանց եւ տեսակէտներու ծանօթ բախումը, որ յանգեցաւ դժբախտաբար ծայրայեղ կարգ մը կեցուածքներու: Այլամերժ «ազգայնականները» կը համախմբուէին խմբապետ Միհրանի շուրջ, ոչ միայն իրենք զիրենք անջատելով կազմակերպութենէն, այլ նաեւ, արտաքին դրդումներու իբրեւ հետեւանք, հակադրուելով պաշտօնական մարմիններուն եւ կազմելով «ժամանակաւոր Զինուորական խորհուրդ»: Իսկ ծայրայեղ «ձախակողմեանները», բաղկացած առաւելաբար կովկասահայ *ինտելիգենտ* երիտասարդութենէն, կ'իյնային հակադարձ չափազանցութեան մը մէջ, ուզելով բաժնուիլ «դասական» Դաշնակցութենէ եւ համառուսական ծիրին մէջ դասակարգային պայքարի նետուիլ՝ նոր կուսակցութեան մը դրօշին տակ:

1906ի վերջերը, Չորրորդ Ընդհանուր ժողովի նախօրեակին, Հ. Յ. Դաշնակցութիւնը կը գտնուէր պառակտման վտանգին տակ: Հակամարտութիւնն ու պայքարը նոյնքան սուր չէին թերեւս որքան Մարտ-Ապրիլ ամիսներուն՝ Կովկասեան Ռայոնական ժողովի օրերուն, բայց Միհրանական շարժումը ջլատած էր կազմակերպական կարգ մը միաւորներ եւ, հակառակ Ռայոնական ժողովին մէջ «անջատման» կողմնակիցներու կրած պարտութեան — արդիւնք՝ Ռոստոմի, Զաւարեանի, Խաժակի եւ Թոփչեանի նման կեդրոնական դէմքերու հաւասարակշռուած եւ առողջ կեցուածքին(6), — ծայրայեղ «նախագծականները» վերջնականապէս հրաժարած չէին Կովկասի մէջ ընկերվարական առանձին «դաշնակցութիւն» մը հիմնելու իրենց առաջադրանքէն: Ընդհանուր ժողովը կրնար պայթումով աւարտիլ: Կրնար նաեւ — եւ ակնկալելի էր այդ բոլոր առողջ մտածող դաշնակցականներուն համար — վերջ դնել «աջ» թէ «ձախ» բոլոր ծայրայեղ ու վնասակար թեքումներուն, եւ կազմակերպութիւնը վերամիաւորել մէկ դրօշի տակ, վերանորոգուած Ծրագրով ու գործունէութեան ընդարձակուած դաշտի մը մէջ՝ զայն մղելու համար նորանոր խոյանքներու:

Այդպէս ալ պիտի ըլլար, բարեբախտաբար:

⁂

Համաձայն Երրորդ Ընդհանուր ժողովի որոշման, Դաշնակցութեան Չորրորդ Համագումարը պէտք է բացուէր 1906 Դեկտեմբեր 1ին(7):

1905ի խորհուրդը սակայն որոշած էր այդ թուականը կանխել մէկ տարիով, այն պատճառներով՝ որոնք տրուած են 20 Օգոստոս 1905ին երկու Բիւրոներուն կողմէ մարմիններուն ուղղուած հետեւեալ շրջաբերականով(8).—

## Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ

*Ընկերներ,*

*Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհանուր ժողովի որոշմամբ առաջիկայ Ընդհանուր ժողովը պիտի գումարուէր 1906 տարուան Դեկտեմբերին: Սակայն «Դաշնակցութեան Խորհուրդը»՝ նկատի ունենալով Տաճկահայաստանի մէջ անկնկալուած ապագայ դէպքերէ վերջ տակտիքի հաւանական փոփոխութիւնը*(9), *Կովկասեան անցքերու արտակարգ բնաւորութիւնը*(10) *եւ «Խորհուրդ»ի մշակած Կովկասեան Նախագծի վաւերացման կարեւորութիւնը՝ որոշեց Ընդհանուր ժողով հրաւիրել ներկայ տարուան վերջը:*

*Հաղորդելով «Խորհուրդի» ներկայ որոշումը Արեւելեան եւ Արեւմտեան շրջաններու մարմիններուն՝ կ'առաջարկենք, կազմակերպական կանոններու* 101 *յօդուածի տրամադրութեան համաձայն, շուտով ուղարկել Արեւմտեան Բիւրոյին այն հարցերու ցանկը, որ կը փափաքիք ժողովին քննութեան ենթարկել:*

*Կը խնդրենք ըստ կարելոյն շուտ ձեռնարկել նախապատրաստական գործին, որպէսզի Արեւմտեան Բիւրոն հնարաւորութիւն ունենայ ժամանակին հաւաքել, կազմել հարցերու ամփոփ ցանկը եւ ուղարկել դաշնակցական մարմիններուն խնդիրներու օրակարգը:*

Ընկերական բարեւներով՝

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ

20 Օգ. 1905 թ.



Հայ-թաթարական կռիւներու ծաւալումը Արեւելեան Բիւրոն եւ կովկասեան բոլոր մարմինները ամէնօրեայ պայքարի թոհուբոհին մէջ ամբողջապէս կլանուած ըլլալով, խորհուրդի այդ որոշման գործադրութիւնը հնարաւոր չեղաւ: Այդ բացատրութիւնը կը տրուի Արեւելեան Բիւրոյի կողմէ Կեդրոնական Կոմիտէներուն ուղղուած շրջաբերականով մը, ճշդելով միաժամանակ՝ որ Ընդհանուր ժողովի նախօրօք որոշուած թուականը — Դեկտեմբեր 1906 — կը մնայ ուրեմն անփոփոխ: Շրջաբերականը(11) մարմիններուն կը փոխանցէ նաեւ օրակարգի նախագիծ մը.—

## Հ. Յ. Դ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆԵՐԻՆ

*Ընկերնե՛ր.*

*Ինչպէս յայտնի է, Հ. Յ. Դ.* III *Ընդհանուր ժողովում որոշուած էր, որ հետեւեալ Ընդհանուր ժողովը տեղի ունենայ* 1906 *թ. վերջին: Սակայն նոր տակտիկայ մշակելու անհրաժեշտութիւնը տաճկահայ յեղափոխութեան վերաբերմամբ եւ կովկասեան գործունէութեան ստիպողականութիւնը պատճառ դարձան, որ* 1905 *թ. գումարուած Հ. Յ. Դ. Խորհուրդը յարմար գտնեց ընդհանուր ժողով հրաւիրել ժամանակից աւելի շուտ, նոյն թուի Դեկտեմբեր ամսուայ վերջին: Հայ-Թուրքական ընդհարումները Կովկասում, որ անսպասելի կերպով չափազանց լայն ծաւալ ստացան, բոլորովին անհնար դարձրին իրագործելու այդ մտադրութիւնը եւ այդպիսով Ընդհանուր ժողովի գումարման ժամանակը մնում է նոյնը, ինչ որոշուած էր սկզբից:*

*Ուղարկելով ներկայ հրաւէրը, առաջարկում ենք ձեզ միաժամանակ խնդիրների ցանկը, որ մեր կողմից անհրաժեշտ ենք համարում դնել Ընդհանուր ժողովի քննութեան: Խնդրում ենք կազմել ձեր շրջանում ըստ կարելոյն լայն խորհրդակցութիւններ, որով հնարաւորութիւն տրուի ամէն մի դաշնակցական խմբի լիովին արտայայտելու իր կարծիքները այն բոլոր խնդիրների վերաբերմամբ, որ նա իր ձեռնհասութեան սահմանի մէջ է համարում: Սրանից հետեւում է բնականաբար, որ ժողովին ներկայացող ամէն մի պատգամաւոր իւր հետ պիտի բերէ ոչ միայն իւր շրջանի մեծամասնութեան, այլ եւ փոքրամասնութեան կարծիքները:*

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

### I. Տեղեկագիր մարմինների.

1) *Ժողովրդի տնտեսական կացութիւնը եւ անդրադարձումը յեղափոխական շարժումների վրայ;*

2) *Ժողովրդի տրամադրութիւնը եւ նրա վերաբերմունքը դէպի մեր մարմինները:*

3) *Տեղական մարմինների կազմը եւ նրանց ծաւալը զանազան խաւերում:*

4) *Աշխատաւոր դասակարգի շահերի պաշտպանութեան համար առաջ եկած մարմինները, նրանց ծաւալը եւ գործունէութիւնը:*

5) *Կազմակերպութիւնից դուրս գտնուող խաւերի պահանջները դէպի կազմակերպութիւնը եւ նրանց ստանձնած պարտականութիւնները:*

6) *Ռուսահայ մարմինների վերաբերումը դէպի Տաճկահայ դատը.* [*Տաճկահայ եւ արտասահմանեան մարմինների վերաբերումը դէպի կովկասեան խնդիրը եւ դէպի ընդհանուր Ռուսական յեղափոխութիւնը* (12)]:

7) *Ամփոփ զեկուցում բոլոր դաշնակցական մարմինների գործունէութեան՝ յեղափոխական ձեռնարկներ, պրոպագանդա, ինքնապաշտպանութեան միջոցներ եւ ժողովրդի զինումն, յարաբերութիւններ եւ համերաշխ գործակցութիւն այլ ազգային եւ յեղափոխական կուսակցութիւնների հետ:*

8) *Կազմակերպութեան եկամուտների աղբիւրները ներկայումս եւ ապագայում:*

9) *Հաշուետուութիւն դրամական եւ ռազմական:*

10) *Առաջիկայ բիւջէ ել եւ մտից (ցանկալի է ներկայացնել այս տեղեկագիրը գրաւոր):*

### II Տաճկահայ խնդիր:

1)*Երկրի դրութեան մէջ առաջ եկած փոփոխութիւնները:*

2) *Շարժումներ մահմեդական տարրերի մէջ: Հաւանական դաշնակցութիւն նրանց հետ (Երիտասարդ Թուրքեր, մակեդոնական կազմակերպութիւն եւ այլն):*

3) *Նոր քաղաքական պայմանները եւ նրանց հաւանական ազդեցութիւնը «հայկական դատի» վրայ:*

4) *Տակտիկի քննութիւնը նոր պայմանների եւ պահանջների համաձայն, — ինքնապաշտպանութիւն, զինում, թռուցիկ խմբեր, կենտրոնացում, ցուցական ձեռնարկներ թուրք եւ այլ տարրերի հետ:*

5) *Զինուորական եւ ռազմական ոյժի կազմակերպումն եւ պատրաստութիւն թէ Երկրի ներսը եւ թէ դրսում:*

6) *Քաղաքական-դիպլոմատիական քայլեր:*

### III. Կովկասահայ խնդիր:

1) *Յեղափոխական շարժման առաջ գալը Կովկասում եւ նրա պատճառները. ա) ճնշում ազգային-կուլտուրական հողի վրայ, խոչընդոտներ հայ ժողովրդի զարգացման դէմ, սահմանափակում տնտեսական յառաջդիմութեան ասպարէզում եւ այլն: բ) արդիւնաբերութեան-վաճառականութեան լայնացում, դասակար-*

*գային գիտակցութեան զարգացումը եւ դրանից բնականօրէն առաջ եկած պահանջները ։ դ) Համառուսական շարժումը եւ նրա անդրադարձումը կովկասահայերի վրայ ։*

2) *Ինքնապաշտպանութեան գործը Կովկասում ։*

3) *Մեր ուղղութիւնը եւ բռնելիք դիրքը ընդհանուր յեղափոխական շարժման մէջ, ինչպէս եւ մեր ունենալիք յարաբերութիւնները միւս յեղափոխական կուսակցութիւնների հետ ։*

4) *Աշխատաւոր խաւերի կազմակերպութիւնը եւ մեր ստացած հետեւանքները ։*

5) *Դաշնակցութեան դերը քաղաքական-հասարակական այլ ասպարէզներում ։*

IV. 1) *Տաճկահայ եւ կովկասահայ խնդիրների ներքին կապը գործունէութեան եւ կազմակերպական տեսակէտներից ։*

2) *Հայկական գաղութների դերը Թուրքահայ եւ կովկասահայ խնդիրների վերաբերմամբ ։*

3) *Դաշնակցական մարմինների գաղութներում ունեցած դերը տեղական քաղաքական-տնտեսական հարցերի նկատմամբ ։*

V. Խմբագրութիւն Հ. Յ. Դ. ծրագրի՝ *համաձայն* II, III *ընդհանուր ժողովների յանձնումների ու բացատրութիւնների, Խորհուրդների ու Ռայոնական ժողովների առաջարկների, ինչպէս եւ կեանքի դրած լայն պահանջների ։*

1) Նպատակ. *ա) տեսական հիմնաւորում, բ) քաղաքական նպատակ, գ) տնտեսական նպատակ ։*

2) Միջոցներ *այդ նպատակին հասնելու. ա) որ խաւերի վրայ յենուելու ենք մենք եւ այդ խաւերի կազմակերպումը համապատասխան մեր տակտիկայի, բ) տակտիկայի տեսական մասը, գ) տակտիկայի գործնական մասը ։*

3) Կազմակերպական ձեւ *ա) այլ եւ այլ մարմիններ եւ նրանց փոխադարձ յարաբերութիւններն ու կապը, բ) նրանց պարտականութիւններն ու իրաւասութիւնները, դ) դատաւորութիւն, կարգապահութիւն եւ կոնտրոլ ։*

4) *Մեր ծրագրի իրագործումը Թուրքիայում, Ռուսաստանում, Բուլգարիայում, Ամերիկայում եւ այլ վայրերում, ուր կայ հայ մասսայ ։*

### VI Պրոպագանդա

1) *«Դրօշակ» եւ այլ կիսապաշտօնական թերթեր ։*
2) *Կուսակցական այլ գրականութիւն ։*
3) *Պրոպագանդան բանուորական, գիւղացիական, ուսանողական խաւերում ։*
4) *Արտասահմանեան պրոպագանդա ։*

### VII Դրամական հարց ։

1) *Եկամուտներ ։*
2) *Տեղական ծախքեր ։*
3) *Ընդհանուր պէտքերի անհրաժեշտ գումարներ ։*
4) *Բիւջէ որոշած ձեռնարկները ապահովելու համար ։*

VIII. *Տեղեկագրերի քննութիւնից բխած կամ վերեւ չյիշուած հարցեր, որ մարմինները պատշաճ կը համարեն դնել Ընդհ. Ժողովի առաջ ։*

IX. *Այլ եւ այլ մարմինների ընտրութիւն ։*

*Ընկերական բարեւներով*
*Հ. Յ. Դ. Արեւելեան բիւրօ*

*Յ. Գ.* IV *հերթական ժողովը կը գումարուի ոչ ուշ քան* 1906*ի Դեկտեմբերի մէկը. ժողովի տեղի, ինչպէս եւ ճիշդ ժամանակի մասին, կը յայտնուի առանձին գրութեամբ ։*

Շրջաբերական-նամակով մը, 1906 Յուլիս 31ին Արեւմտեան Բիւրոն մարմիններէն կը պահանջէ իրենց տեղեկագրերը, հաշիւները եւ այլ մանրամասնութիւնները(13) —

## Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ
(Շրջաբերական նամակ)

*ԸՆԿԵՐՆԵՐ.*

*Արդէն ձեռնարկած լինելով Ընդհանուր Ժողովի գումարման պատրաստութեանը — տեղը եւ ժամանակը կը ծանուցուի ձեզ առանձին — խնդրում ենք շտապել ուղարկելու մեզ՝*

*ա) Լրացուցիչ հարցեր եւ առաջարկներ, որ կը կամենայիք ենթարկել Ընդհանուր Ժողովի քննութեան.*

*բ) Դրամական մանրամասն հաշիւ, վաւերացուած, մտցնելով նրա մէջ ելքն ու մուտքը, եթէ հնար է, մինչեւ* 1906 *թուի Սեպտեմբերի վերջը ։*

*գ) Տեղեկագիր ձեր մարմնի եւ շրջանի գործունէութեան (եթէ արդէն ուղարկուած չէ) ։*

*դ) Ցուցակ-տեղեկատու այն ընկերներին, որոնք փափաք ունին իրենց դնել Ընդհ. Ժողովի տրամադրութեան տակ, կազմակերպութեան այլ եւ այլ ձեռնարկների համար ։*

*ե) Մանրամասն տեղեկացոյց ձեր շրջանի մարմինների կազմի եւ անդամների քանակի մասին ։*

*Շատ մօտիկ ապագայում ձեզ կ՚ուղարկենք Ընդհանուր Ժողովի մօտաւոր «Օրակարգը» ։*

Ընկերական բարեւներով
*Հ. Յ. Դ.*
*ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ*



Սեպտեմբերին, վերջապէս, Արեւմտեան եւ Արեւելեան Բիւրոներուն կողմէ մարմիններուն ուղղուած շրջաբերական մը(14) վերջնական կերպով կը ճշդէ Ընդհանուր Ժողովի Օրակարգի բոլոր մանրամասնութիւնները ։ Բացման համար նախատեսուած թուականը (1 Դեկտեմբեր 1906) կը մնայ անփոփոխ ։

Մարմիններու համար

## ՕՐԱԿԱՐԳ
## ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
## Դրդ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

(ԿԱՑԱՆԱԼԻ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1906, . . . ՔԱՂԱՔԻ ՄԷՋ)

*ա) Պատգամաւորներու լիազօրութեան վաւերացումը ։*
*բ) Ժողովի կազմն ու բացումը ։ Օրակարգի հաստատումը ։*

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿ

ՏԵՂԵԿԱԳԻՐ — ԶԵԿՈՒՑՈՒՄ (1904 - 1906)

1) Երկրի Մարմիններու՝

*ա) Վասպուրական*
*բ) Սասուն-Մուշ*
*գ) Ցուցական Մարմին (Ոսկեհանքի հետ)*
*դ) Լեռնավայր ։*

2) Արեւմտեան Բիւրոյի՝

*ա) Բիւրոյի ձեռնարկները, — կազմակերպական, զինական եւայլն ։ Շրջանի ընդհանուր պատկերը.*
*բ) «Դրօշակ», «Պրօ Արմէնիա» եւ ուրիշ հրատարակութիւններ (զանազան լեզուներով).*
*գ) Եւրոպական պրոպագանդ ։*

*Տեղեկագիր՝*
*ա) Բալկանեան Կեդր. Կոմիտէի.*
*բ) Ամերիկայի Կեդր. Կոմիտէի.*
*գ) Զեկուցում Եգիպտոսի շրջանի.*
*դ) Զեկուցում Եւրոպայի Հայ Ուսանողական Մարմիններու մասին ։*

3) Արեւելեան Բիւրոյի՝

*ա) Կազմակերպական-պրոպագանդային գործունէութիւն՝ Կովկասի մէջ.*
*բ) Հայ-Թրքական ընդհարման խնդիրը.*
*գ) Զինական-մարտական ձեռնարկներ (Երկիր եւ Կովկասի մէջ)*
*դ) Պարբերական եւ այլ հրատարակութիւններ.*
*ե) Շրջանի Կեդր. Կոմիտէներու գործունէութիւնը ։*

*Տեղեկագիր՝ Վրէժի Կեդր. Կոմիտէի ։*

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ

*ա) Դրամական հաշուետուութիւն իւրաքանչիւր Մարմնի* (1904–1906 *տարեշրջանի) ։*
*բ) Ամբողջ կազմակերպութեան հաշիւներու եւ դրամական վիճակի պատկերացոյց ։*

### Բ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻԿԱՅԻ ՄԷՋ

1) Թուրքիոյ մէջ՝
*ա) Ժողովրդական ապստամբական ձեռնարկներ՝ (Շամ, Դուրան, Բարձրաւանդակ, Արծուաբերդ).*
*բ) Թռուցիկ խմբերու կազմակերպումն՝ (Ս . . . , Տ . . . , Կ . . . եւայլն) ։ Ինքնապաշտպանողական գնդեր.*
*գ) Յատուկ ձեռնարկներ Վչ . . . ի մէջ.*
*դ) Տեռոր.*
*ե) Ցուցական գործունէութեան նոր ծրագիր.*
*զ) Գործակալներ, ուսումնասիրողներ, դրսէն դացող մտաւորական եւ այլ ուժեր ։*

2) Կովկասի մէջ՝
*ա) Դաշնակցութեան վերաբերմունքը դէպի հայ-թրքական կռիւը. Ծրագիր.*
*բ) Դաշնակցութեան դիրքը՝ Ռուսական ընդհանուր շարժման մէջ.*
*գ) Յեղափոխական ակտիվ գործունէութիւն ։ Նախկին Ընդհանուր Ժողովի որոշման քննութիւնը.*
*դ) Զինական-կազմակերպական ձեռնարկներու ծրագիր.*
*ե) Արեւմտեան Բիւրոյի հրատարակած «Նախագծի» քննութիւն (Սոցիալիստական ծրագիր) եւ այս մասին որոշում.*
*զ) Դաշնակցական ընդհանուր Ծրագրի մշակումն եւ վաւերացում ։*


1907 թ.





# Ա.— Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## Ա. ՆԻՍՏ (22 Փետր., առաւօտ)

*Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Չորրորդ Ընդհանուր Ժողովը բացուեցաւ Վիեննա, Աւստրիական Սոցիալիստական Ընկերութեան սրահին մէջ, 1907 թուի Փետրուար 22ին։*

*Ժողովին մասնակցելու հրաւիրուած են, ըստ Կանոնագրութեան, 27 պատգամաւորներ, որոնց ցուցակը հետեւեալն է.*

Մուշ - Սասուն — *Անդրանիկ, Մուրատ*
Վասպուրական — *Սալման*
Լեռնապար [Ռշտունիք եւ Մոկս] — *Իշխան*
Շամ [Վան] — *Արամ*
Արեւելեան Բիւրօ — *Ռոստոմ*
Մրգաստանի Կ. Կոմիտէ [Երեւան] — *Բժ. Զաւրեան*
Ապառաժի Կ. Կոմիտէ [Ղարաբաղ] — *Բարսեղեան*
Այգեստանի Կ. Կոմիտէ [Գանձակ] — *Մաչուրեան*
Քարի Կ. Կոմիտէ [Ալեքսանդրապոլ] — *Աւ. Իսահակեան*
Ջրաբերդի Կ. Կոմիտէ [Կարս] — *Ղարիբ (Ահարոնեան)*
Ժլատի Կ. Կոմիտէ [Հիւս. Կովկաս] — *Տիկ. Յուշիկ*
Նալբանդի Կ. Կոմիտէ [Նոր Նախիջեւան] — *Ս. Գրուզինեան (Սիդ)*
Մեծ Քաղաքի Կ. Կոմիտէ [Թիֆլիս] — *Ե. Թոփչեան*
Նաւահանգիստի Կ. Կոմիտէ [Պաթում] — *Վարանդեան (Յովհաննէսեան)*
Ոսկանապատի Կ. Կոմիտէ [Պաքու] — *Զոփուրեան*
Ռուսաստանի Դաշն. Ուսանող. [Միութիւն] — *Արթուր (Շահխաթունեան)*
Զինուոր. Մարմին — *Ս. Տէր Մկրտչեան (Գազիկ)*
Ատրպատականի Կ. Կոմիտէ — *Ս. Վրէժունի (Ստեփանեան)*
Արեւմտեան Բիւրօ — *Ակնունի (Մալումեան)*
Լեռնավայրի Կ. Կոմիտէ [Կիլիկիա] — *Անտոն (Զաւարեան)*
Ցուցական Մարմին — *Սաֆօ*
Ամերիկայի Կ. Կոմիտէ — *Վահագն Տաթեւեան, Հայկ Արմէն (Ջելալեան)*
Բալկանեան Կ. Կոմիտէ — *Ասլան (Զարդարեան), Արամ Աշոտ (Մինասեան)*
Եւրոպայի Դաշն. Ուսանողութիւն — *Ա. Իսահակեան*(1)։

*Բացման նիստին ներկայ էին 18 պատգամաւոր[ներ]։*

*Բացակայ էին հետեւեալ պատգամաւորները.— Վասպուրական, Լեռնամայր, Շամ, Քար, Ջրաբերդ, Նալբանդ, Մեծ Քաղաք, Նաւահանգիստ եւ Զին. Մարմին։*

*Ներկայ եղողները 2/3ի օրինական մեծամասնութիւն կազմելով, ըստ Կանոնագրի, Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը, ընկ. Մալումեան, երկու Բիւրոներու կողմէ ձեռնարկեց Ժողովի պաշտօնական բացման եւ հակիրճ ու յուզուած ճառի [մը] մէջ, խորին յարգանքով յիշատակումը ըրաւ այն յեղափոխական ընկերներուն, որոնք իրենց նուիրական պարտականութեան ճամբուն վրայ նահատակուած էին, բարձր պահելով Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դրօշակը։ Յիշեց զոհուած ընկերները, որոնք նախորդ Ընդհ. Ժողովին ներկայ էին՝ Քրիստափոր, Երկաթ, Յովհաննէս Վանեցի, Վաղարշակ, եւ դոցա Թուում Եղուարդ. այլեւ այն ընկերները, որոնք Սասունի եւ Բասենի կռիւներուն մէջ ինկած էին՝ Հրայր, Վահան, Թորգոմ, Երկաթ, Թոխմախ, Որսորդ Գէորգ, Գայլ Վահան, Բարգէն, փոքրիկ խումբը։ Ապա անցաւ անդրկովկասեան վերջին հայ-թաթարական ընդհարումներու ժամանակ զոհուած յեղափոխական ընկերներու՝ Ստեփանեան, Մոսո, Արտեմ, Մուշեղ Սղերդցի, Խնուսցի Մուշեղ, Գալօ, Ասլան, էլօ եւայլն։*

*Ժողովը ի յարգանս անձնազոհ ընկերներու անմոռաց յիշատակին՝ ոտքի կանգնեց։*

*Ատենաբանը խնդրեց նոյնպէս յոտնկայս պատուել Ռուսաստանի եւ Թուրքիոյ բոլոր ազգերուն պատկանող յեղափոխական զոհերու յիշատակը, որը Ժողովը կատարեց։*

*Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը Ժողովը բացուած յայտարարելով՝ առաջարկեց ընտրել ժամանակաւոր դիւան։ Նախագահ ընտրուեցաւ Խ. Մալումեան եւ քարտուղար՝ Ս. Մինասեան։*

կարող էր հեռանալ մեզանից. **վախը** կապում էր նրանց մեզ հետ: Կարող ուժերի բացակայութեան պատճառաւ, պրոպագանդը բնականաբար առաջ էր տարւում շատ թոյլ ու անգոյն, այդ պատճառով անհնար էր լինում ստեղծել կուռ յեղափոխական գործ: Հարստահարող դասակարգը առերես համակրանք էր ցոյց տալիս մեր հակավաշխառուական գործունէութեան, մտածելով մեզ ամփոփել իւր ձեռքերի մէջ եւ գործածել յօգուտ իւր շահերին: Դրա համար նրանք անում էին մեծ-մեծ կոմպրոմիսներ եւ մի ժամանակ մեր բանակների յոխորտացող մասն էին կազմում: Բայց երբ անվերջ փաստերը հիասթափեցրին նրանց, տեսան, որ մենք յօգուտ հարըստահարուող տարրերի պատրաստ ենք անվերջ կըռուել նրանց հետ, նրանք սկսեցին կասկածանքի եւ անհանգստութեան նշաններ ցոյց տալ: Նրանց վերաբերմունքի հետ փոխուեց և աշխատաւոր ու հարստահարուած ժողովուրդի վերաբերմունքը, որքան հեռու էին կգում իրենց մեզանից հարստահարողները, այնքան աւելի մօտենում էին հարստահարուածները: Առաջինների մի մասը դիմաւորուեց արմենականութեամբ, մի մասը հեռաւոր համակրող հանդիսացաւ, իսկ միւս մասը համակուած վախով՝ մնաց մեր շարքերում, անբաւական մեզանից:

«Գործնական պրոպագանդը կոտրեց քիւրտ տիրապետութեան թափը: Դէպքից յետոյ հայ ժողովուրդի գըլխին ստեղծուած երկրորդ կառավարութիւնը իր լայն-լայն պահանջներն էր ասպարէզ հանել, որոնց ենթարկըւում էին հայերը: Աղան իսկայական ապօրինի տուրքեր էր յօրինել. ամէն մի հայ պարտաւորուում էր իր տարեկան բերքից բաժին հանել աղային, սկսած ամենատարրականից մինչեւ ամենախոշորները: Բացի դրանից ամէն մի հայ պարտաւորուում էր տարեկան չորս իսլամական տօներին սկսած 50 ղրուշից մինչեւ 2 ոսկու նուէրով այցելել աղա-բէյին: Այդ բոլորից զատ, ամիսը մի գիւղ պարտաւորուում էր տարեկան 10-20 օր ձրի աշխատութեան գնալ եւ քառասնապատիկ թանգ գընով գիւղին պահապան վարձել աղայի ազգականին կամ նրա ցանկացած քրտին: Աղան խառնուում էր եւ ընտանեկան ներքին խնդիրներում. նրա ձեռքն էր ամփոփուած դատավարութիւնը, որի պատճառով նա իսկայական տուգանքներ էր քամում հայերից: Պրոպագանդը ինքնագիտակցութիւն վարթեցրեց հայերի մէջ, եւ խաղաղ կռուով կամաց-կամաց վերջ տրուեց դրանց. այդ բանում մանաւանդ հակահարուած հանդիսացան յեղափոխական դատարանները, որոնք համերաշխ հողի վըրայ արդարութեամբ վերջ էին տալիս բոլոր խնդիրներին, առանց թոյլ տալու շահագործուելու աղայից: Այդ կողմնակի տուրքերի, հարստահարութեան եւ կեղեքման վերանալը արդէն ուժեղ ազդակ եղաւ յեղափոխական տրամադրութեան վարթման եւ ժողովրդի բարեհաճ վերաբերմունքին դէպի մեզ: Չի կարելի ասել, որ այնտեղ մենք ունենք միանգամայն պատրաստուած յեղափոխական ժողովուրդ. բայց նա անցել է յեղափոխական նախապատրաստութեան փազը, եւ միայն ժամանակի ընթացքում պէտք է նրա յեղափոխական աշխարհահայեացքը ամրանայ եւ ստեղծուի իսկական յեղափոխական հասկացողութեամբ ժողովուրդ, որի վրայ ապագայ գործողութիւնների ժամանակ կարելի լինի վստահօրէն յենուել: Շատ քիչ է յեղափոխական կազմակերպութիւն եւ տրամադրութիւն ունենալը, անհրաժեշտ է եւ յեղափոխական աշխարհահայեացքը: Մեր կազմակերպութեան մէջ դեր է խաղում եւ **վախը**, եւ գուցէ աւելի ուժեղ դեր: Բայց դա առաջացել է կանապան անակնկալներից եւ երեւոյթների թիւր ըմբռնումից. սա կամաց-կամաց կ'անհետանայ ի հարկէ. դա նրանից է որ մենք ստեղծել ենք յեղափոխական կառավարութիւն. բնականաբար եւ ակամայ տեղի են ունենում այնպիսի պատահարներ եւ դէպքեր, որ ծնեցնում են վախը: Վերջերս լուրջ կերպով Ռայոնական Ժողովը կբաղուեց Կուսակցութիւնը ոչ-յեղափոխական տարրերից մաքրելու խնդրով. որովհետեւ կարող էր այսպիսով Կազմակերպութիւնը մի օր ներսից պայթել. դրա համար միջոցներ ձեռք առնուեցին վերացնելու վախի կոշմարը, որով հնարաւորութիւն տրուի իրենց շահերով մեզ հակադիր տարրերին հեռանալու Կազմակերպութիւնից, եւ ոչ թէ վախից դրդուած մնալու նրա մէջ»:

Ապա ընկերը անցնում է նկարագրելու ինքնապաշտպանութեան գործի կազմակերպութիւնը, որի համար իբրեւ սկզբունք ընդունուած է՝ սկզբնական միջոցներով, իբրեւ համայնական սեփականութիւն, ձեռք բերել ինքնապաշտպանութեան միջոցներ, որոնք գտնուում են ղեկավարող մարմինների տրամադրութեան տակ, կարեւոր դէպքում ինքնապաշտպանական նպատակով գործադրելու համար: Ապա անցնելով կուռ կազմակերպչական մասի ընդհանուր նկարագրութեան, ընկերը յետոյ կանգ է առնում իւրաքանչիւր գաւառակի եւ շրջանակի գործունէութեան, կազմակերպական վիճակի եւ յեղափոխական մակերեւոյթի վրայ:

«Ժողովուրդի տրամադրութիւնը միանգամայն հակած է դէպի խաղաղ գործունէութիւնը, եւ միշտ մեզանից պահանջում են գործել այդ ուղղութեամբ. նրանք միանգամայն հակառակ են վաղահաս ձեռնարկների. նրանց տրամադրութիւնն է որքան կարելի է լաւ պատրաստուած ասպարէզ դուրս գալ: Մեր գործունէութիւնը բաւական կրթիչ ազդեցութիւն է ունեցել եւ քիւրտ խաղաղ տարրի վրայ: Հարստահարող աղաների, վաշխառուների հետ ունեցած մեր բախումը այնքան տպաւորիչ էր, որ նոյնիսկ մի քանի գիւղերից առաջարկներ ենք ստացել՝ իրենց մէջ գնալու եւ իրենց կազմակերպելու, սակայն այդ առաջարկը մեզ ոչ մի ապահովութիւն չի ներշնչել: Մասնաւոր յարաբերութիւններ ենք ունեցել մի քանի աղաների հետ. նրանք ձգտել են կամ հայ գիւղերում իրենց շահերը ապահովելու, կամ փէշքէշ ստանալու: Նրանք ձգտել են նաեւ մեր դաշնակցութեանը իրենց հակառակութիւնների մէջ՝ կառավարութեան դէմ, կամ այլ ընդհարումների դէպքում՝ իրենց հակառակորդներին խարպանելու մի ուժեղ ձեռք ունենալու նպատակով»:

*5 րոպէ ընդմիջումից յետոյ սկսուում են խօսակցութիւնները:*

Մաշուր.— *Խնդրում եմ բացատրել թէ ի՛նչ դրութեան մէջ էր Երկիրը կոտորածից առաջ եւ ի՛նչ փոփոխութիւն է կրել ներկայումս:*

Շահխաթունեան.— *Հողատէրերը քանի՞ տոկոս են կազմում, մարդագլուխ ի՞նչքան հող է գալիս. մարաբաների համար՝ հող ձեռք բերելը հողատէրերի՞ց է կախուած. եւ կարո՞ղ են մարաբաները անցնել հողատէրերի շարքը:*

Անդրանիկ.— *Ընդհանուր դրութիւնը ամէն տեղ մէկ մէկու նման չէ, Սասուն-Մուշ, Դիարբեքիր ու Բուլանուղ մարաբայ չկայ, ամէնքն ալ հող ունեցած են. եթէ հողերը ծախել են, այդ միայն հայերը իրար մէջ, բարեկամը բարեկամին. իսկ Վասպուրականում հողագործներուն հողից զրկողը ես համարում եմ կառավարութիւնը, որ նեղել է հայերին որոնք տեղի են տուել, եւ հողերը գրաւել են հայդարանցիք, սիպկանցիք եւ ջալալցիք:*



Իշխան.— *Մինչեւ կոտորածները Վասպուրականում հայերը բաւական բարեկեցիկ են եղել. եղել են տներ, որ 120–500 ոչխար են ունեցել: Դէպքերի ժամանակ քայքայուել են, մանաւանդ այն տեղերը, ուր կազմակերպութիւն չէ եղել. յեղափոխական գործը կենտրոնացած է եղել միայն Վան քաղաքում, արմենականների շնորհիւ: Մինչեւ դէպքերը քրտերը մեծ ազդեցութիւն չունէին, իսկ յետոյ խրախուսուած կառավարութիւնից, նրանք անարգել գրաւում են հայերից հողերը:*

Խաժակեան.— *Չկա՞ն ուրիշ պայմաններ, որ առաջ են բերում վաշխառութիւնը, բացի սովորական տուրքերից: Ի՞նչ դրութեան մէջ է վաճառականութիւնը:*

Ռոստոմ.— *Ի՞նչ փողի աղբիւրներ ունի Լեռնապարի ժողովուրդը:*

Իշխան.— *Վաճառականութիւն՝ բառի իմաստով Լեռնապարում չկայ, պարզ ապրանքների փոխանակութիւն. ներմուծութիւն չկայ. արտահանում են հում նիւթեր, ոչխար, բուրդ, դիաժ. տնայնագործութիւնը, որ առաջներում այնքան զարգացած էր եւ մի օգտաւէտ պարապմունք էր համարուում (ինչպէս շալ գործելը), շնորհիւ Դիարբեքիրից եկող վաճառականների, որ իրենց հետ բերին դրամը, թանկացաւ բուրդը, արտահանութիւնը ազդեց գների վրայ: Ներկայումս այդ արտահանութիւնը վաշխառութեան մի նոր ձեւն է. վաշխառուներից ժողովուրդը ձմեռը դրամ է վերցընում, ամառը բուրդով վճարելու պայմանով. թէ՛ արտահանութիւնը եւ թէ մթերքների փոխանակութիւնը ազդեցին տնայնագործութեան վրայ. պարապ ձեռքերը դիմում են պանդխտութեան, գործում են ինչ չափով միայն իրենց տնային պահանջներին բաւարարութիւն է տալիս: Իսկ կանանց հագուստները բերում են Դիարբեքիրից: Շատախցիները փող են ձեռք բերում ածխավաճառութիւնից, իսկ ծովեզերեայ տեղերում նաւավարութեամբ են զբաղուած, որը որոշ արդիւնք ունի: Մոկսը գաղթականներ եւ պանդուխտներ շատ ունի Էջմիածին եւ Բաղու, որտեղից եւ ստանում են իրենց ապրուստի միջոցները. հող շատ քիչ ունեն եւ չեն օգտըւում. լեռնոտ տեղերում հողի պակասութեան պատճառով պարապում են անասնապահութեամբ, իսկ դաշտային տեղերում բաւական բարեկեցիկ են. իրենց բերքերի վաճառումից դրամ են ձեռք բերում:*

Սեպուհ.— *Համեմատելով կոտորածից առաջուայ միջակ հայ գիւղացիների կարողութեան հետ, այժմ շատ անմխիթար եմ գտնում:*

Զարդարեան.— *Կը խնդրենք Վասպուրականում տեղի ունեցող սովի մասին տեղեկութիւն տաք. ինչի՞ց առաջ կու գայ սովը:*

Իշխան.— *Սովը ընդհանրապէս, վերջին տարիներս քրոնիկական կերպարանք է առել լեռնային գաւառներում, որովհետեւ լեռնային գաւառները առաջներում ունէին շարժման լայն միջոցներ, նրանց համար համարեա բաց էին գոնէ ներսի՝ Տաճկաստանի ներքին նահանգների աշխատանքի դռները, որոնք ներկայումս փակուած են: Տեղական աշխատանքը անկարող է լինում բաւարարութիւն տալ նրանց պահանջներին. իսկ դրա փոխարէն աւելանում են կառավարչական տուրքերը, որոնց բաւարարութիւն տալու համար նա ստիպուած է լինում սպառել իւր բոլոր ապրելու միջոցները. սրան մեծ զարկ է տալիս Տաճկաստանի յայտնի վաշխառուական մեթոդը — սարաֆութիւնը: Իսկ վերջին տարուայ սովը հետեւանք է անբերութեան:*

## 9ՐԴ ՆԻՍՏ (26 Փետր., երեկոյ)

*Նախագահում է Վռամեան:*

*Ներկայ են 19 ժողովական:*

*Բացակայ է Սաֆօ:*

Վահագն.— *Մանդատներ քննող յանձնաժողովի կողմից զեկոյց Եգիպտոսի պատգամաւոր Սիրական Բոյաճեանի պատգամաւորական իրաւունքի մասին՝ յանձնաժողովի քննութեան հետեւանքը, որ հետեւեալն է.*

«1.— 1906 *թուի Օգոստոս 28ին Ալեքսանդրիոյ, Գահիրէի եւ* ............(5) *ենթակոմիտէներից շրջանային ժողով են գումարել Եգիպտոսի Կոմիտէ ընտրելու, այդ ժողովի մէջ էլ ընտրում են Ընդհանուր Ժողովի պատգամաւոր. արձանագրութեան մէջ ընտրուածի անունը չէ յիշուած:*

2.— *Մի նամակով, Դեկտեմբեր 26, 1906ին Գահիրէի Կոմիտէն կը բողոքէ կոմիտէական ընտրութեան դէմ եւ չի ճանչնար Շրջանային Ժողովի օրինականութիւնը:*

3.— *1907ի Յունուար 12ին Եգիպտոսի Կոմիտէն պաշտօնական հրաժարական է տալիս:*

4.— *1906ի Փետրուար 2ին հրաժարուած կոմիտէի երկու անդամի ստորագրութեամբ, Եգիպտոսի կոմիտէական բլանկի [տպագրուած պաշտօնաթուղթ] վրայ, վկայական կու տան Սիրական Բոյաճեանին, իբրեւ պատգամաւոր Ընդհանուր Ժողովի:*

5.— *Եգիպտոսի ծանօթ ընկեր Եփրեմեանը (6) Յունուար 12ին Արեւմտեան Բիւրոյին ուղղած մի նամակում խնդրում է Հ. Յ. Դաշնակցութեան պատիւը փրկելու համար յորդորել Եգիպտոսում որեւէ դաշնակցական մարմնի գոյութիւն չունենալը:*

*Քննելով այս փաստաթղթերը, եւ աչքի առաջ ունենալով նաեւ ցենզի վերաբերեալ Կանոնագրութեան կէտը՝ եւ անձամբ հարցուփորձ անելով Սիրական Բոյաճեանը՝ եկանք այն եզրակացութեան, որ նա չէ կարող օրինական պատգամաւոր համարուել Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին Եգիպտոսի կողմից»:*

*Այդ հարցի առթիւ տեղի է ունենում կարծիքների փոխանակութիւն եւ ժողովը որոշում է Սիրականին չճանաչել իբրեւ պատգամաւոր, այլ օգտուելով նրա ներկայութիւնից հրաւիրել տեղեկութիւններ տալու Լեռնավայրի մասին, միայն այն նիստում, երբ այդ հարցը կը դրուի քննութեան:*

*հասարակ տրամադրութիւն ցոյց չեն տար գաւառները գալու եւ պարտականութիւն ստանձնելու։*

Անդրանիկ *կը հարցնէ, թէ զինուած ժողովուրդը, իր զէնքերը քանդելու եւ սարքելու վարժուա՞ծ է, նոյնպէս, կռուի ատեն կամաւորներէն ո՞րքանը կարելի է երաշխաւորել, թէ պիտի մասնակցութիւն ունենան։*

Իշխան *կը հաստատէ, որ կամաւորները վարժ են իրենց զէնքերը քանդելու եւ սարքելու, իսկ ինչ որ կը վերաբերի մեծ կռուի մը ատեն անոնց մասնակցութեան չափին, ինքն եւս թերահաւատ է բոլորին համար, այս իսկ պատճառով վարժութիւններ կը լինեն՝ կռուի պատրաստելու խումբերը եւ դաստիարակելու զանոնք գործնական ճանապարհով։ Եզրակացնում է, որ կարելի է կամաւորներու 1/3ին վրայ միայն յոյս դնել։*

Վռամեան — *Զինավարժութիւնը ի՞նչ կարգ ու կանոնով կը կատարուի եւ ո՞րքան կանոնաւոր է։*

Իշխան — *Ունեցած ենք ենթասպաներ եւ զինուորականներ, որ աշխատած են բանակային զինավարժութեամբ մարզել խումբերը եւ լեռներուն մէջ հրացանաձգութիւն ընել տալ։ Զինավարժութեան բոլոր այս մարզանքները կը կատարուին հերթական կերպով, այնպէս որ մարզանքի իւրաքանչիւր տեւողութեան մէջ, ամէն մէկ խումբ երեք չորս օր կ'ունենայ իրեն համար տրամադրելի։*

Վռամեան — *Պրոպագանդը ի՞նչ նիւթերով եւ ի՞նչ ձեւով տեղի կ'ունենայ։*

Իշխան — *Հաւաքելով տեղացի պրոպագանդիստները, անոնց կու տանք նիւթերը, կը պարզաբանենք, որպէսզի անոնք ալ իրենց կարգին երթան քարոզելու։ Նիւթերն եղած են ինքնօգնութիւն, ինքնապաշտպանութիւն եւ ազգային այլ եւ այլ հարցեր։ Լսարանական ձեւով պրոպագանդ կատարուած չէ, միայն խումբերը հաւաքուած են գիշերները, որոնց խօսուած է եւ թերթեր ու գրքեր կարդացուած։*

Զեյլեան — *Քանի որ արտասահմանեան թերթերը կը ստացուին Երկրին մէջ եւ կը պարունակեն այլ եւ այլ ընկերական, հասարակական եւ կազմակերպական խնդիրներու վերաբերեալ յօդուածներ, անոնց մասին ի՞նչ վերաբերութիւն ցոյց կու տան տեղացիները։*

Իշխան — *«Դրօշակ»ն է միայն, որ ժողովրդական բնոյթ ունի եւ կը տարածուի, մինչ միւս թերթերը սահմանափակ լինելով՝ կը մնան որոշ շրջանակներու մէջ եւ կը դրկուին մի քանի գաւառներ։ Ժողովուրդը բուռն հետաքրքրութիւն ունի քաղաքական խնդիրներու մասին, մինչ տեղացի պրոպագանդիստները չեն կրնար պէտք եղած գոհացումը տալ։*

Սեպուհ — *Կովկասեան դասակարգային եւ ծրագրային վերջին խնդիրները ի՞նչ տպաւորութիւն կը թողնէին ժողովուրդին վրայ։*

Իշխան — *Մինչեւ իմ մեկնիլս այդ հարցերը դեռեւս արծարծուած չէին, բայց կ'իմանամ թէ մեկնելէս ետքը լսուած են հոն, կազմուած է Շրջանային ժողով եւ կայացած անոնց մասին որոշումներ։ Իմ հոն եղած միջոցիս ալ Շրջանային ժողով գումարուեցաւ, բայց կառավարական խստութեանց պատճառով մնաց սահմանափակ։*

Վռամեան — *Զէնքերու դրամը ո՞վ է տուած, ժողովո՞ւրդը թէ դաշնակցական ընկերները. նոյն դրամէն զէնքէ դուրս ուրիշ նպատակներու ալ ծախսա՞ծ էք։*

Իշխան — *Մեր ծախսերը առհասարակ ժողովուրդը կը հոգայ, մեզի տալով ուտելիք, խմելիք, եւն.։ Առաջները տարին մէկ անգամ ժողովուրդին կողմէ հանգանակութիւն կը լինէր մեզի համար, բայց 906ին, նկատի առնելով ժողովուրդի տնտեսական խեղճ դրութիւնը, արգիլեցինք այդ հանգանակութիւնը։ Զէնքերու դրամը ժողովուրդը ինքը հայթայթած է, Կովկասի կազմակերպութիւնը ժողովուրդի զինման համար ոչ մէկ օգնութիւն չէ ըրած. իրաւ է թէ զէնքեր ստացած ենք կազմակերպութենէն, բայց անոնք յատկացուցած ենք խումբերուն, ոչ թէ ժողովուրդին։*

Անդրանիկ — *Գործիչներն ու զինուորները ի՞նչ միջոցով կ'ապրին։*

Իշխան — *Մեր շրջանին մէջ ժողովուրդը ինք կը պահէ մեզ, իսկ Վանի մէջ կազմակերպութեան ծախսով կ'ապրին գործիչներն ու զինուորները. իւրաքանչիւր զինուոր իր բնակած տան կը վճարէ 100 փարա օրողջէք իր ապրուստին համար։*

Վռամեան — *Կիներ ի՞նչ դեր ունին յեղափոխական գործին մէջ։*

Իշխան — *Կիները որեւէ դեր չունին, միայն մեզի համար կերակուր կ'եփեն, իսկ քաղաքին մէջ փոխադրութեանց կը մասնակցին երբեմն. անոնց մէջ կազմակերպութիւն չէ եղած. խումբեր կազմակերպուած չեն անոնցմէ։*

*Լեռնապարի հարցը սպառած լինելով ժողովը կը փակուի։*

## 10ՐԴ ՆԻՍՏ (27 Փետր., երեկոյ)

*Նիստը կը բացուի ժամը 4ին։ Բացման պահուն բացակայ են ընկերներ Իսահակեան եւ Մաշուրեան։*

*Ժողովը կ'անցնի օրակարգի յաջորդ հարցին, այն է՝ Սասուն-Մուշի տեղեկագրի ընթերցման։ Ընթերցումը կը կատարէ Սեպուհը։*

Տեղեկագիրը կարդում է ընկեր **Սեպուհը**: Ընթերցումը տեւում է երկու եւ կէս նիստ: Տեղեկագիրը սկըզբում կանգ է առնում ժողովրդի վիճակի նկարագրութեան վրայ, մանրամասն պատկերացնելով Թիւրքիայի ֆինանսական քաղաքականութիւնը, որ արտացոլւում է նրա յոռի հարկային սիստեմի մէջ: Մանրամասն նկարագրելով հարկերի տեսակները եւ դրանցից իւրաքանչիւրի աստիճանական կարգացումը եւ ներգործութիւնը ժողովրդական տնտեսութեան վրայ, տեղեկագիրը անցնում է հողատիրական յարաբերութիւնների նկարագրութեան եւ (ճշդում) կառավարութեան դիրքը դրա մէջ, որը յանգում է սիստեմաթիկ ձգտման՝ հողակրկել հայութիւնը եւ հողատէր դարձնել մահմետական տարրերին: Ապա նկարագրելով քրտերի խաղացած դերը տաճիկ կառավարութեան եւ հայ յեղափոխութեան յարաբերութիւնների մէջ, տեղեկագիրը անցնում է յեղափոխական շարժման պատմութեան այդ շրջանում: Սկսելով 1890--91 թուերից, ժամանակագրական կարգով յիշատակւում են բոլոր գործիչները, խմբերը, դէպքերը, շարժումները, կառավարութեան աւերումները եւն. մինչեւ մեր օրերը: Իր շարունակութեան մէջ տեղեկագիրը տալիս է շրջանի մանրամասն վիճակագրութիւնը՝ գիւղերի անունները, ազգաբնակութեան քանակը, պարապմունքները, կանական ազգութիւնների թիւը եւ այլն:

Այս ընդհանուր տեղեկութիւններից յետոյ տեղեկագիրը անցնում է բուն կազմակերպական գործունէութեան.--

«Վերեւ յիշուածներից կարելի է եզրակացնել, թէ հայ տարրը տնտեսական ինչ նեղ պայմաններում է ապրում. բնական է, որ այդ դժոխային պայմանները, ապրելու, իր գոյութիւնը պահպանելու ամենատարրական միջոցներից զուրկ լինելը պէտք էր ժողովրդի մէջ, առանց նոյնիսկ արտաքին դրդումների, կարգացնէին մի բուռն ատելութիւն դէպի իր տկրուկ հարեւանները, որոնք նրա արիւն-քրտինքով ապրում են հանգիստ ու խաղաղ: Ժողովուրդի ատելութիւնը բուռն է, որին սընունդ է տալիս նրա տնտեսական նեղ վիճակը՝ սովը, որից նա ելք է գտնում կամ գաղթականութեամբ դէպի օտար, աւելի անդորր նահանգներ, կամ յարելով յեղափոխութեան: Դուրան-Բարձրաւանդակի ժողովուրդը յեղափոխական է, եւ յեղափոխական է, որովհետեւ սոված է: Շատ սխալ կը լինէր, եթէ յեղափոխութեան հիմնաքարը հաշուէինք գաղափարական ձգտումներ. դա գոնէ այստեղի սոված ժողովուրդի համար մի անմիտ ցնորք կը լինէր, եւ դժուար կը լինէր մի սոված հարստահարուած «փլահ» դասակարգից սպասել կանայկան ազգային ձգտումներ. Նրա ձգտումը գլխաւորապէս ուղղուած է ձեռք բերել տնտեսական ապատութիւն եւ, չգիտենք դըժբախտաբար թէ բարեբախտաբար, այստեղի յեղափոխական կազմակերպութեան հիմնաքարը դասակարգայինտնտեսական ապատութեան մի ձգտում է՝ գունաւորուած ազգային ապատութեան փայլուն ներկերով: Այդ պատճառով կարծում ենք, որ այստեղի կազմակերպութիւնը շատ հաստատուն է եւ անհնար է նրան արմատախիլ անել, քանի գոյութիւն ունեն այս հարստահարութիւնները, քանի այսպիսի տնտեսական նեղ վիճակի մէջ է ժողովուրդը: Սխալ է թէ Կազմակերպութիւնը արհեստականապէս՝ քարոզչութեամբ ժողովրդին խելացնոր է արել. կազմակերպութիւնը առաջ է բերում տաճիկ բռնակալութիւնը ինքը: Առաջին կազմակերպողները սուլթանական ռեժիմն ու սովն են, իսկ երկրորդը՝ ժողովուրդից ծնունդ առած յեղափոխականները: Այդ հանգամանքը պէտք է պարզ լինի: Սա մի լոկ ազգային անջատման կռիւ չէ, յեղափոխականների գլխից ծնուած, կամ կանայկան աւանտիւրիստների մի ցնորական գործ, այլ մի ժողովրդական յուսահատ շարժում բխած սոսկալի բռնութիւնից: Ճիշդ է այս շարժմանը կարկ են տալիս եւ հայի ազգային ու կրօնական արհամարհուած ստորադաս վիճակը, անկախութեան ձգտումները եւ այլն, բայց այս բոլորը շաղախւում են տնտեսական բացառիկ դրութեան հետ եւ կորցնում նրա մէջ: Սխալ չէր լինի ասել, որ հայը, մանաւանդ գիւղացի հայը, մի դասակարգ է, բանուորական դասակարգի պէս, որի աշխատանքը լափում են կառավարութիւնն ու պաշտօնեաները, թուրքն ու քիւրտը, միայն այն տարբերութեամբ, որ հայ դասակարգի ցաւերը աւելի մեծ են, վէրքերը աւելի խոր: Հայը նախկին հէլոտն է. արդէն այստեղի օտար տարրը ըմբռնելով այդ, նրան տալիս է «ֆլահ» (հէլոտ) անունը: Եւ քաներորդ դարի այդ դժբախտ հէլոտը կզալով իր դրութիւնը, իր սուրբ իրաւունքների բռնաբարուելը, կազմակերպւում է ինքնաբերաբար, յօժարակամ: Մի գիտակցական, բայց անհաւասար կռիւ է թոյլի եւ ուժեղի մէջ. եւ չնայելով, որ հայը երկար ու ձիգ տարիների ընթացքում տեսել է իր արիւնոտ կռիւները անհետեւանք, սրբագործել է իր իրաւունքները կախաղաններով, նահատակներով, տնտեսական քայքայումով, բայց այդ բոլորը միայն կազդուրել, վերակազմել են նրա ռազմական հոգին, նրա գիտակցութիւնը: Յուսահատութիւն չկայ. անյաջողութիւնները գրգռել, կազմակերպել են թշնամիներին: Ակամայ մարդ յիշում է Եղիշէի խօսքերը.— «եւ արջք օրհասականք հզօրագոյնս կռուին»: Ապա տեղեկագրում թուած են մի շարք դէպքեր, երբ կանայկան տեղեր, չնայած այսքան կրած կըրկանքներին, դիմադրութիւն են ցոյց տալիս կառավարութեան՝ մի տեղ հարկահաւաքներին գիւղից դուրս հանելով, մի այլ տեղ զօրանոցի կինուորները տփելով, մի երրորդ տեղ թշնամիներից մարդիկ գողանալով եւայլն: «Շատ երկար կը լինէր այս ցաւոտ ժողովրդի աննկունութեան, հերոսութեան փաստեր բերելը: Նա տեսնում է իր ըմբոստութեան դառն հետեւանքը, բայց շարունակում է ու շարունակում, որովհետեւ անհնարին է չշարունակել: Ժողովուրդը կզում է իր թուլութիւնը, որոնում է մինին օգնական, եւ յանձին յեղափոխականի գտնում է այն հաւատարիմ նեցուկը, որին լիովին կարող է վստահանալ: Դրանով կարելի է բացատրել միայն՝ այս դժոխային պայմաններում մեր գոյութեան պահպանուելը»:

Ժողովուրդի աչքում յեղափոխութիւնը արդարութեան, աղէլաթի պաշտպան է, որի համար նա կոհաբերում է իր անձը: Յանձին յեղափոխականների՝ նա տեսնում է մի հսկայական ուժ, որ վաղ թէ ուշ պէտք է ձեռք բերէ ժողովուրդի իրաւունքները: Զանազան ձեռնարկների անյաջող ելքը չեն գցել յեղափոխականի վարկը. ժողովուրդը այդ անյաջողութիւնները բացատրում է եւ արդարացնում յեղափոխականին՝ պատճառները գտնելով տարուայ եղանակի, այս կամ այն անձի մեղքի մէջ եւ այլն: Ժողովուրդը չափազանց հաւատում է յեղափոխականին, եւ բոլոր երեւոյթները նպաստաւոր կերպով բացատրում՝ իրեն հաւատքի առարկայ յեղափոխական կազմակերպութեան համար: Այդ է պատճառը, որ չնայած շատ գիւղերի քրտախառն վիճակին, շատ գիւղերում կառավարական ազէնտների եւ կօրքերի ներկայութեան եւ յաճախակի տեղի ունեցող, երբեմն մեծ ծաւալ կրող խուզարկութիւններին, յեղափոխականները ապատ են մնում կառավարութեան ձեռքերից: 24 անգամ տեղի ունեցած խուզարկութիւնների ժամանակ միայն մի դէպքում, այն էլ իր անզգուշութեան պատճառով, բռնուել է մի կինուոր: Ժողովուրդի գուրգուրալի վերաբերմունքը դէպի յեղափոխականը ոչ միայն նրա համար է որ նա սպասում է նրանից իր ապագայ ապատագրութիւնը, այլ եւ այն պատճառով, որ նրա ներկայ

Թիւրքական բանտերը, Մար. 22) Քաղաքական կուսակցութիւնները Ռուսաստանում, Արարատսկի. 23) Հայաստանը եւ Եւրոպան, Գ. Բրանդէս:

Պատրաստւում է մեր յեղափոխական հերոսների եւ գործողների կենսագրականը «Դէպի պանդէոն» անունով, ինչպէս մի աշխատութիւն կովկասեան վերջին դէպքերի մասին, նաեւ օտար յեղափոխականների կենսագրականները՝ բրօշիւրային ձեւով հրատարակելու համար: Տարածուած գրքերի եւ բրօշիւրների քանակը հասնում է 80 հազարի: Եւրոպական լեզուներով բրօշիւրներ՝ մօտ 20 հազար («Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան» հրատարակութիւն). հրատարակուած են մեծ քանակութեամբ հերոսների պատկերներ եւ յեղափոխական նկարներ: «Pro Armenia»ն խմբագրուելով հանրածանօթ հայասէր ֆրանսիացիների ձեռքով, այդ օրգանը մատուցանում է գնահատելի ծառայութիւն մեր դատին: Համաձայն Խորհուրդի որոշման, ձեռնարկուեց նոյնպէս մի թերթի հրատարակութեան Լոնդոնում, անգլերէն լեզուով, որի մի համարը միայն լոյս տեսաւ: Յիշեալ քաղաքում հիմնուեցաւ մի «օֆիս» պրոպագանդի գործին նպաստելու համար. տարաբախտաբար գործը տեւողական չեղաւ (սրա մանրամասնութիւնները թողնուեց Եւրոպական Պրոպագանդի տեղեկագրին): Հռովմում լոյս տեսնող իտալերէն «L'Italia all Estero» թերթի մէջ կարեւոր տեղ պիտի գրաւէ Հայկական Հարցը: Այդ օրգանը նպաստի դիմում է արել Արեւմտեան Բիւրոյին:

ե) **Պրոպագանդա.**-- Գործը մամուլից դուրս եկաւ և դրուեց աւելի լայն հողի վրայ, հասնելով պարլամենտներին, միջ-պարլամենտական կոնգրէսներին [խորհրդաժողովներ, համագումարներ]: Հայոց Հարցը Լահէի Ժողովի առաջ տանելու համար դիմումներ են եղել Ռուզվելթին եւ եւրոպական մի քանի երկիրների կառավարութիւններին: Տեղեկութիւններ կան, որ Միացեալ Նահանգների նախագահը, հակառակ իւր ձեւական բացասութեան, մտադիր է մեր հարցով զբաղուել: Յիշատակուեցաւ թէ ինչպէս Հռովմի ամերիկեան հիւպատոսը եւ մի ամերիկացի խմբագիր, Ժընեւ գալով, յայտնել են Բիւրոյին, թէ նախագահը տրամադիր է քայլեր առնել եւ հարկաւոր է միայն ազդեցիկ բարեկամի միջոցով ազդել: Բերուած տեղեկութիւններից երեւաց, որ Ամերիկայի նախագահը յանձնարարել է Պոլսոյ դեսպանին մի տեղեկագիր պատրաստել Հայոց Հարցի մասին, մանրամասն կերպով: Այդ տեղեկագիրը երեւի պիտի ծառայէ իբր նիւթ Լահէի դիմումին: Առաջ բերելով Պարիզ եւ Լոնդոն եղած դիմումները եւ կաբինետներին [դահլիճներ] ուղարկուած մեմորանդումները [յուշագրեր], զեկուցանողը յայտնում է թէ Հայկական Խնդիրը շատ արծարծուած է, նպաստաւոր հող ունի եւ միայն յարմար մոմենտի [պահի] է սպասում, նոր քայլեր առնելու համար:

զ) **Միջ-կուսակցային համերաշխութեան խնդիր.**-- Բիւրոն այդ մտքով կարեւոր քայլեր է արել: Յարաբերութիւններ մշակելով սոցիալիստ-յեղափոխականների և ֆինլանդացիների հետ՝ նրանց հետ միասին յաջողել է կազմակերպել միջկուսակցային մի կոնգրէս Պարիզում (1904), կազմուած 12 կուսակցութիւնների ներկայացուցիչներից, եւ մի երկրորդը՝ Ժընեւում, 1905ին: Այս երկու կոնգրէսների որոշումները տպուած են «Դրօշակ»ում (№ 12/1904 եւ 5/1905): Յիշում է նմանապէս որ կազմուեց Միջկուսակցային Բիւրօ, Ժընեւի մէջ, հայ, ֆին, լեհ P.P.S. եւ վրացիների կուսակցութիւններից, որոնք ապա իրենց գործունէութիւնը փոխադրեցին Ռուսաստան: Այդ ուղղութեամբ գործելը եղել է Խմբագրութեան գլխաւոր տեսակէտներից մէկը:

է) **Համերաշխութեան առաջարկներ.**-- Հայ յեղափոխական կուսակցութիւնների եւ վանական խմբերի անընդհատ եւ վնասակար կռիւներին վերջ տալու անհրաժեշտութիւնը՝ յառաջ է բերել համերաշխութեան որոշ տրամադրութիւն շրջանների մէջ, Ամերիկա, Բալկան, Պարսկաստան եւն.: Այդ համերաշխութեան գործին Արեւմտեան Բիւրոն զարկ է տուել իւր շրջաբերականներով եւ արած քայլերով: Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնի կողմից պաշտօնական դիմում է եղել Բիւրոյին՝ համերաշխ գործունէութեան համար: Դիմումի լրջութեան երաշխաւորութիւն կարելի է համարել նրա ներկայի վարիչ Մուրատի անունը: Այդ դիմումին Բիւրոն պատասխանել է սկզբունքային համաձայնութեամբ, եւ մասնաւոր վայրերի համերաշխ գործունէութեան կոչով, որի արդիւնաւոր հետեւութիւնն է Պարսկաստանում կայացած մասնակի հաշտութիւնը: Բայց ի նկատի ունենալով Երրորդ Ընդհանուր Ժողովի որոշումը հնչակեանների նկատմամբ, այս խնդրին վերջնական լուծումը ըսպասւում է ներկայ Ընդհանուր Ժողովից:

ը) **Օսմանեան կառավարութեան դէմ կռուող տարրերի** միջեւ համերաշխութիւն մտցնելու համար, փորձեր եղած են հայ, թուրք, մակեդոնացի, բուլղար, սերբ եւ հերսեգոնացի խմբերի շրջանում: Այդ նպատակով ժողովներ են տեղի ունեցել «Դրօշակ»ի խմբագրութեան նախաձեռնութեամբ եւ երկար վիճաբանութիւններից յետոյ, որոշուել է այդ գործին հիմք դնել՝ կազմելով միտինգ Ժընեւում եւ Պարիզում: Համերաշխութեան գործում մի քանի որոշումներ են եղել, -- բողոքել ազգային ներքին թշնամութիւնների դէմ, միատեղ կռիւ սկսել՝ ընդդէմ ռեժիմի [վարչակարգ], պահանջել ինքնավարութիւն Հայաստանի եւ Մակեդոնիայի համար եւ պարլամենտական ռեժիմ՝ օսմանեան բոլոր տարրերի օգտին: Բանակցութիւններ են սկսուած մահմետական գործողների հետ: Յաջողուել է գտնել անհատ թուրքեր, որոնք Դաշնակցութեան դրօշի տակ մտնելով, գործելու պատրաստականութիւն են յայտնել: Յիշատակուեց փաստեր:

թ) **Զէնքի գործը.**-- Բիւրոն ամէն հնարաւոր միջոց գործ է դրել Կովկասին զէնքեր հայթայթելու: Այդ նպատակով Բրուսել են գնացել ընկերներ՝ Անդրանիկ, Յովնան եւ Վահրամ, Պարիզ՝ ընկեր Խաչատուրը: Գնել են 239 ատրճանակ (Մաւզեր եւ Պարաբելում) եւ 58.000 փամփուշտ: Ընկեր Գարոյի միջոցով գնուել է 240 հազար փամփուշտի գնդակի պատեան: Առաքումը կատարուած է գլխաւորապէս ծովային գծով, գաղտնի ճանապարհներով: Յիշում է նմանապէս վանական առեւտրական տների եւ յեղափոխական կուսակցութիւնների առաջարկները՝ զէնք անց կացնելու Բալկանի, Պարսից ծոցի եւ Սեւ ծովի նաւահանգիստների վրայով: Զեկուցանողը յիշում է պայթուցիկ--հրանիւթի քանակը, որ պատրաստի գտնւում է (մօտ 300 կիլօ) Սոֆիայում եւ Աթէնքի պահեստում:

ժ) **Վասպուրականին նոր տեսակի զէնք** հայթայթելու համար, ծրագրուած է, Անդրանիկի առաջարկով, 150.000 ֆրանքի մի գնում, բաժանելով գումարը Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոների ու Ամերիկայի Կ. Կոմիտէի վրայ: Ձեռք է բերուած թրքական նոր հրացանի մոտելը: Այդ ծրագրի մանրամասները առաջարկւում է Ժողովի յատուկ ուշադրութեան: Այդ առիթով զեկուցանողը յիշատակում է եւ այն՝ որ Բիւրոն ի նկատի առնելով Անդրանիկի առաջարկը, համաձայնութեան է գալիս հիմնելու զինավարժական դպրոց, Բուլղարիայում (որի մանրամասնութիւններին կարելի է ծանօթանալ Բալկանեան Կ. Կոմիտէի տեղեկագրից):



ժա) **Երկիրը ուսումնասիրելու** համար, համաձայն Ընդհանուր Ժողովի որոշման, որոշ քայլեր արուեց. Բիւրոն այդ նպատակով բանակցութեան մէջ մտաւ Պրոֆէսօր Ռակկայի հետ Թրքահայաստան ճանապարհորդելու համար, հայթայթելով ամբողջ ծախքը, սակայն այդ ձեռնարկը չյաջողուեց: 1905ին, Կովկասեան ընդհարումների միջոցին, այնտեղ ուղարկուեց մի յատուկ եւրոպացի թղթակից, Բերդրան, յանձնարարուած Ժորեսի կողմից, նրա վրայ պարտք դնելով Եւրոպային ներկայացնել հայկական դէպքերի իսկական պատկերը: Նրա աշխատութիւնը դեռ լոյս չէ տեսել: Զեկուցանողը յայտնեց, որ Բերդրան չարդարացրեց իր վրայ դրած յոյսերը: Յիշատակելով մի քանի այլ դիմումներ, Թիւրքաց Հայաստան թղթակից ուսումնասիրող ուղարկելու մասին, զեկուցանողը կանգ առաւ այն տեսակցութեան վըրայ, որ տեղի ունեցաւ Ժընեւում, Խմբագրութեան անդամների եւ Վասպուրականի ծանօթ միսիոնար Ռայնոլտսի միջեւ: Ռայնոլտսը յայտնեց, թէ՛ իր եւ թէ հանրածանօթ Զէյմս Բրայսի կողմից, թէ հայկական յեղափոխութիւնը կորստաբեր կարող է լինել հայերի համար, որովհետեւ Եւրոպան այժմ անկարող է օգնել, ուստի պէտք է շարժումը առ այժմս կանգնեցնել: Այն հարցին թէ «կարո՞ղ էք երաշխաւորել որ ժողովուրդի դրութիւնը չի վատթարանար, եթէ յեղափոխութիւնը կանգ առնէ», Ռայնոլտս պատասխանում է թէ «անկարող է պատասխանել այդ հարցին եւ թէ դրութիւնը կարող է հաւանօրէն աւելի վատանալ»: Ռայնոլտսը իւր խօսակցութեան մէջ, ի միջի այլոց յայտնում է, որ հայ յեղափոխութիւնը Երկրում ունեցել է բարոյակրթական մեծ ազդեցութիւն եւ չնայելով ժողովրդեան թշուառ ու ճնշուած դրութեան, յեղափոխական գործը պահում է նրանց աչքում իւր հըմայքը եւ մեծ ազդեցութիւն ունի ժողովրդական խաւերի վրայ: Զէյմս Բրայս Ռայնոլտսին յանձնարարել է մանրամասն տեղեկութիւն պատրաստել Հայաստանի մասին եւ ուղարկել իրեն, իբրեւ նիւթ Անգլիոյ ապագայ միջամտութեան համար:

ժբ) **Երկրի հետ յարաբերութիւն** պահպանելու խնդրում Արեւմտեան Բիւրոն նպաստաւոր դրութեան մէջ չէ, բայց եւ այնպէս Բիւրոն կարողացել է յարաբերութիւն պահպանել Վասպուրականի, Սասուն--Մուշի, Տրապիզոնի, Պոլսի հետ: Սեբաստիոյ հետ չէ կարողացել պահպանել մարմին չլինելու պատճառով: Զեկուցման մէջ յիշատակուած էին Երկրի կարիքների մանրամասները: Նպաստներ ուղարկուած էին, Երկիր՝ մօտ 35.000 ֆրանք, ֆրանսական հիւպատոսների միջոցով, Շամի եւ Սասուն--Մուշի ընկերներին 3 նուագ՝ 10.000 ֆր., Աքիայի բանտարկեալներին՝ 1000 ֆրանք. վճռըւած էր 8000 ֆր. ուղարկել ի նպաստ բանտարկեալների, բայց ճանապարհների փակ լինելու պատճառով մնում է անկատար: Նպաստներ տրուած են նմանապէս այլ կուսակցութիւնների եւ անձանց, -- 1000 ֆրանք՝ ռուսաց. դեմոկրատների Ժընեւի օրգան «Իսկրա»յի խմբագրութեան՝ փոխարինաբար, 1000 ֆր.՝ «Պոտեմկին»ի կռիւներին, 200 ֆր. լեհացիներին, 1000 ֆր. «Humanité» թերթին, Ցուցական Մարմնի որոշման համաձայն՝ բանտարկուած Ժորեսի քրոջը՝ ապրուստ երկու տարի, 500 ֆր. Ժորեսին եւ այլն:

ժգ) **Փոխադրութեան գործը.**-- Թէ՛ հրատարակութիւնների եւ թէ զէնքի փոխադրութեան գործը դրուած է բաւական կանոնաւորութեան մէջ, փոխադրելով ծրարները, Մարսէյլից, Բաթումի վրայով Կովկաս. փորձուած է ուղարկել նաեւ Օդեսայի վրայով, բայց մեծ մասամբ անյաջող: Առաջարկել են գիծ բանալ Աւստրիայի վրայով, բայց սա էլ ունի իր դժուարութիւնները: Պարսից կառավարութեան յարուցած արգելքը՝ «Դրօշակ»ի եւ մեր այլ հրատարակութիւնների դէմ, մեծամեծ դժուարութիւններ է յառաջ բերում: Զեկուցանողը հաղորդեց թէ ի՛նչ դիմումներ են եղել պարսից կառավարութեան այդ անտեղի արգելքը վերացնելու համար:

ժդ) **Ինտելիգենտ [մտաւորական] ուժերի խնդիրը,** համաձայն վերջին Ընդհանուր Ժողովի յայտնած ցանկութեան, ուշադրութեան է առնուած Բիւրոյի կողմից: Տարաբախտաբար տաճկահայ ոեւէ ընկեր յանձն չի առել Երկիր գնալ: Հայ--թրքական ընդհարումների ընթացքում՝ Բիւրոյի ջանքերով եւ հաշուով մօտ 10—12 երիտասարդ ուղարկուած է Կովկաս իբր պրոպագանդիստ եւ իբրեւ ղեկավար ուժեր: Նրանց մի քանիսը իբրեւ ուսանողներ վերադարձան, անախորժ տպաւորութիւն թողնելով ուսանողութեան վրայ: Զեկուցման մէջ յիշուեցին գնացողների անունները:

ժե) **Հաշուական--դրամական.**-- Չնայելով Բիւրոյի յաճախակի դիմումներին եւ շրջաբերականներին, որ Մարմինները կանոնաւոր հաշիւ ուղարկեն, նրանց մեծագոյն մասը այդ չէ արել եւ այդ պատճառով՝ Բիւրոն անկարող է եղել պատրաստել Կազմակերպութեան հաշուական—դրամական ընդհանուր պատկերը: Այդ փաստի վրայ է հրաւիրում Ժողովի յատուկ ուշադրութիւնը: Բիւրօ--Խմբագրութեան հաշիւները պահուած են բաւարար կերպով, կանոնաւոր մատեանների մէջ, յատկապէս դրա համար հրաւիրուած գանձապահ--հաշուապահի ձեռքով: Բիւրոյի երեք տարուայ հաշիւները (1904--1906) տպագրուած են, եւ դրա հետ՝ երեք տարուայ հաշուեկշիռը առանձին: Տպագրուած տախտակները ներկայացւում են Ժողովին, ծանօթանալու համար մանրամասնութիւններին: Կարդացւում է երեք տարուայ հաշուեկշիռը մանրամասն: Զեկուցանողը Ժողովի ուշքն է հրաւիրում այն փաստի վրայ, որ «Դրօշակ»ի բաժնեգինը շատ քիչ մուտք է տուել եւ այդ այն պատճառով, որ Մարմինները չեն ուղարկում հաւաքած գումարները: Միայն «Դրօշակ»ը պիտի տար Խմբագրութեան աւելի քան 30 հազար ֆրանք (12.600 օրինակ, 3ական ֆրանք) մինչդեռ չէ ստացուել դրա տասներորդ մասն անգամ:

ժզ) **Միջազգային Սոցիալիստական Բիւրօ.**-- Մի քանի խօսքով շեշտելով սրա կարեւորութիւնը, զեկուցանողը յայտնեց հետեւեալը.-- Յիշեալ բիւրոն 1905ի Յունիսին դիմեց «Դրօշակ»ի Խմբագրութեան մի նամակով, որը տպուած է «Դրօշակ»ի այդ ամսի համարում, հարցնելով թէ Դաշնակցութիւնը յարե՞լ է արդեօք Սոցիալիստական Միջազգային Կոնգրէսի որոշումներին, որին պատասխանուեց համաձայնութեամբ. պատասխանը տպուած է «Դրօշակ»ի նոյն համարում: Սոցիալիստական Բիւրոյի վերաբերմունքը դէպի Դաշնակցութիւնը շատ նպաստաւոր է. պահպանում է մշտական յարաբերութիւն եւ հարկաւոր ժամանակը բողոք է բարձրացնում հայերի դէմ եղած ճնշումների առիթով, համաձայն մեր դիմումներին: Այս առիթով զեկուցանողը յիշատակեց մի տգեղ վարմունք որ իրենց թոյլ են տուել «հայ սոցիալիստ» անունը կրող մի քանի անձինք: Նրանք մի նամակով դիմում են Բրիւսելի Բիւրոյին եւ յայտնելով թէ

ի հարկէ դէմ չենք, որ Ամերիկայի ընկերները կապեր են հաստատում սրա նրա հետ. բայց միայն պարտաւոր են նախօրօք յայտնել Բիւրոյին, հարցնելով թէ արդեօք մենք ի՞նչ կարծիք ունենք այն մարդկանց մասին, որոնց հետ նրանք գործ են սկսում: Այս չեն անում. եւ մեր ցանկութիւնը՝ համոզել նրանց, որպէսզի թողնեն գործելու այդ սխալ սիստեմը՝ անցաւ ապարդիւն: Դարձեալ մի փաստ. Քղիում ամերիկացիները արժանաւոր ընկերներ են գտել, նոյնիսկ մարմին՝ կնիքով, մինչդեռ Արեւելեան Բիւրոն այդ մասին լուր չունի: Եւ լուր չունի այն պարզ պատճառով, որ այդպիսի մարմին այնտեղ գոյութիւն չունի: Եւ ահա Քղիից 100 լիրայի պահանջ է լինում կնքուած մի թղթով, մինչդեռ Արեւելեան Բիւրոն բնաւ ոչ մի տեղեկութիւն չի ունեցել այդ կնիքների մասին, որ զարկուած են եղել Քղիից ստացուած թղթի վրայ, եւ հետեւաբար նրանք կեղծ պիտի համարուեն: Այստեղ այս դէպքի առիթով, ես յիշեցնում եմ ընկ. Վռամեանի այն խօսքը՝ թէ «մարմիններ չկան, կնիքները չահագործւում են»: Երբ մենք գրեցինք Ամերիկա, թէ մենք տեղեկութիւն չունենք Քղիի մասին, այն ժամանակ այնտեղի Կ. Կոմիտէն իրեն թոյլ տուեց մի շրջաբերական հրատարակել, որի մէջ մեղադրում է Բիւրոյին՝ Քղիի մարմինը չճանաչելու համար. սա մի անբացատրելի քայլ է կուսակցական դիսցիպլինայի [կարգապահութեան] տեսակէտից: Էլի մի փաստ. Ամերիկան թոյլ տուեց իրեն՝ ուղարկելու մեզի մի ամերիկահայ ընկեր, յանձնարարելով Պոլիս մտնել, Սուլթանի դէմ մահափորձ կատարելու: Ապշեցուցիչ է այս կարգադրութիւնը: Նրա մասին մենք ոչ մի գաղափար չունէինք եւ բնականաբար դժուարացանք այդօրինակ պատասխանատու գործ յանձնել նրան. բայց քանի որ ծախք էր արել, Ամերիկայից Ժընեւ եկել, մենք փորձեցինք ընտրել երկու չարիքից փոքրագոյնը եւ առաջարկեցինք նրան թողնել մահափորձի «ծրագիր»ը եւ Վիչապ գնալ միայն մի նպատակով — մինչեւ Ընդհանուր Ժողովը մի զեկուցում կազմէր եւ ներկայացնէր Ժողովին: Տեռորի գործը իրեն յանձնել անկարող էինք, որովհետեւ այդ մարդը նոյնիսկ զէնքի վարժ չէր. զինավարժութիւն սովորելու համար ուղարկեցինք նրան Բուլղարիա՝ Անդրանիկի մօտ: Այնտեղից գնացել էր Կիպրոս, որտեղ նա ձերբակալուած է առանց գործ անել կարողանալու: Ամերիկայի ընկերների եռանդը գովելի է, բայց եռանդի գործադրութեան սիստեմը սխալ է, պէտք է այդ սիստեմը միանգամայն ուղղել:

Մուրատ.— Դիսցիպլինայի տեսակէտից, ի հարկէ Ամերիկայի Կոմիտէն սխալներ է արել. բայց միւս կողմից ես արդարացնում եմ նրա ինքնագլուխ գործունէութիւնը Քղիում կամ այլ տեղերում, քանի որ այլ մարմինների թուլութեան պատճառով գործ չէ սկսուել այդ վայրերում:

Անդրանիկ.— Այո, դիսցիպլինայից դուրս բան է, երբ Ամերիկան գործում է ինքն իրեն... ես տեսայ այն մարդուն, որը յանձնարարուած էր Ամերիկայի կողմից՝ Պոլիս մտնելու. ծիծաղս էր գալիս, մի՞թէ դա ընդունակ էր լինելու՝ մի հսկայական գործ կատարելու:

Իշխան.— Ամերիկայի կողմից սխալ է եղել ուրիշների գործունէութեան միջամտելու: Վասպուրականը կանոնաւոր մարմին ունի այսօր, բայց եւ այնպէս Ամերիկան կարիք է համարում թելադրումներ անելու մեզ: Ապացոյց այն, որ դուք մեզ անցեալ ամառ գրել էք հետեւեալը. «ինչպէս մինչեւ այժմ թելադրումներ ենք արել ձեզ, նոյնպէս կը վարուենք եւ այսուհետեւ»:

Արամ.— Ճիշդ է, Ամերիկան մեզ թելադրումներ է անում: Վանի կոտորածի տասնամեակի առթիւ մենք մի թռուցիկ արձակեցինք, որից եւ ուղարկեցինք Ամերիկա՝ «Հայրենիք»ին: Այնտեղից մեզ պատասխանում են, թէ «թելադրում ենք զգոյշ լինել. չգրգռել կառավարութիւնը». երբ մենք գրեցինք այնտեղի ընկերներին, որ մենք ինքներս աւելի լաւ ծանօթ լինելով Երկրի կացութեանը, գիտենք, թէ ինչ է հարկաւոր անել.— մեզ մի նոր սիւրպրիզ [անակնկալ] արին ամերիկացիք. «Այո, դուք երկրումն էք, բայց մենք եւս դուրսը լինելով, հետեւում ենք քաղաքական կեանքին. ուստի նորից խորհուրդ ենք տալիս ձեզ՝ զգոյշ լինել»:

Ջելալեան.— Խնդիրն այն է, որ Վասպուրականի ընկերները մեր «թելադրում» բառը այլ մտքով են հասկացել, քան մենք ենք գործածել. մեզ մօտ «թելադրել» նշանակում է «խորհուրդ տալ». նոյնիսկ աւելի մեղմ նշանակութիւն ունի: Այս իմաստով էլ մենք գրել ենք Վասպուրականի ընկերներին՝ մեր նամակը. ուստի սրանք վիրաւորուած չպէտք է զգան իրենց:

Մինասեան.— Արամի բացատրութիւնը աւելի եւս արդարացրեց Ամերիկայի ընկերների ընթացքը: Սրանց տուած խորհուրդները եղել են արտայայտութիւն այն ընդհանուր ցանկութեան, որ ունէր այն ժամանակ ամբողջ հայութիւնը: Արեւմտեան Բիւրոն չափազանցում է մեղադրելով Ամերիկայի մարմինը ինքնագլուխ գործունէութեան մէջ: Իւրաքանչիւր մարմին գործին նախանձախնդիր լինելով, կարող է ինքը ձեռնարկել այս կամ այն բանին:

Վռամեան (դրաւոր).— Բացարձակապէս կը բողոքեմ այն կարգ մը բառերու դէմ, որոնք գործածուեցան Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչի կողմէն, բացատրելու ատեն մեր յարաբերութիւնները այդ Բիւրոյի եւ միւս մարմիններու միջեւ: Նախ եւ առաջ՝ ես կը պնդեմ, որ Ամերիկայի Կ. Կոմիտէն չարժած է ոչ միայն իր պարտականութիւններու, այլեւ իրաւունքներու սահմաններուն մէջ: Վերջին Ընդհանուր Ժողովը յանձնարարած էր «Կազմակերպութեան թէ՛ դրսի եւ թէ ներսի իրաւասու մարմիններուն՝ չսահմանափակել իրենց գործողութիւնը իրենց շրջանով միայն, այլ ամէն ջանք թափել կազմակերպելու նաեւ նոր վայրեր մասնաւորաբար Մեծ Հայքի եւ Փոքր Ասիոյ զանազան կէտերու վրայ» (տես քաղուածքներ Գ. Ընդհանուր Ժողովի Արձանագրութիւններէն, երես 22): (Ընդմիջում ոմանց կողմէ.— «Իրաւասու մարմիններու համար ըսուած է սա»): Ես կը զարմանամ, որ այդպիսի առարկութիւն կ'ընեն. եթէ Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէն իրաւասու չէ, ի՞նչ գործ ունի հապա կազմակերպական գերագոյն մարմնի մէջ ներկայացուցիչ ունենալու: Ընդհանուր Ժողովը կազմող բոլոր մարմինները իրաւասու են այդ յօդուածի իմաստով հաւասարապէս: Եթէ Ժողովը այդ իմաստով չի հասկնար, ինչպէս ես, ապա ուրեմն ես կը նստեմ մինչեւ որոշուի այդ խնդիրը. հակառակ պարագային Ամերիկայի պատգամաւորներուն կը մնայ հեռանալ այս Ժողովէն, իբրեւ ոչ իրաւասու մարմնի մը ներկայացուցիչները: Եթէ ես եմ, որ սխալ կը հասկնամ այդ յօդուածին իմաստը, պիտի խնդրուի բացատրել Ժողովին նախագահէն, որ միանգամայն Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչն է, թէ արտասահմանի մէջ ո՞ր մարմիններն են, որ իրաւասու պէտք է նկատուեն այդ գործին: Եթէ Ամերիկան չէ, ապա ուրեմն չեն նաեւ Բալկանի, Ատրպատականի, Կովկասի բոլոր Կ. Կոմիտէները. անդին կը մնան միայն Բիւրոները: Եթէ այդքան անձուկ ըլլար օրէնսդրական միտքը, պէտք չկար դրսի եւ ներսի բառերը գործածելու, այլ անուանելու էր պարզապէս Բիւրոները եւ Պատասխանատու Մարմինները:

Նախագահը կ'ընդունի ընկ. Վռամեանի բացատրութիւնը, միջադէպը փակուած կը նկատուի:

Վռամեան (շարունակելով).— Այսպէս ուրեմն, մենք մեր իրաւունքներու սահմաններն անցած չենք, կազմակերպել ջանալով Փոքր Ասիոյ եւ Մեծ Հայքի այն վայրերը, որոնք ցարդ խոպան մնացած էին կամ կիսամշակ՝ կազմակերպական տեսակէտով: Ի նկատի ունենալու է, որ տարիներէ ի վեր շեշտուած էր կազմակերպելու պէտքը, 1898ի Ժողովին կողմէ մասնաւոր որոշում մը իսկ անցած էր, նորէն ի դուր: Եթէ կայ ուշադրութեան առնելու կէտ մը, սա պէտք էր լինէր, թէ Ամերիկայի Կ. Կոմիտէի ջանքերը ոեւէ կերպով ընդհարուա՞ծ են ուրիշ Կ. Կոմիտէներու գործունէութեան թէ ոչ: Արեւմտեան Բիւրոյի ներկայացուցիչը ջանաց ապացուցանել, թէ չարիք ծնած է ատկէ, եւ ի հաստատումն բերաւ կարգ մը իրողութիւններ: Արդ, ես պիտի ապացուցանեմ անմիջապէս, որ բոլորովին միակողմանի լուսաբանութիւն մը տրուեցաւ այդ փաստերուն: Էդուարդը(15) ծանօթ էր մեզ մօտ 10 տարիներէ ի վեր, իբրեւ գործիչ Պոլսի եւ Իզմիրի: Երբ իմացանք, թէ Ֆիլիպպէ կը գտնուի ան, անգործ վիճակի մէջ, խորհեցանք առաջարկել անոր, որ անցնի Լեռնավայրի շրջանը, ուրկէ հեռացած էին Պատասխանատու Մարմիններու անդամները եւ ուր ..........(5) մինակ եւ յուսահատ դրութեան մը մէջ կը գտնուէր: Մենք բնաւ տեղեկութիւն չունէինք, որ Էդուարդը ամբաստանութեան տակ կը գտնուի. մեր փափաքն էր քիչ շատ փորձառու գործիչները չթողնել, որ արտասահմանի մէջ դեգերեն. երեւոյթ մը, որ սովորական եղած էր վերջին տարիները. Էդուարդը պատասխանեց մեզի, որ ինքը պատրաստ է անցնելու Լեռնավայր, եթէ մենք կը համաձայնենք իւր ծրագրին: Այդպիսի պատասխան չէինք ակնկալեր, ուստի անմիջապէս իմացուցինք անոր, թէ մենք որեւէ ծրագիր չենք կրնար ընդունիլ կամ պաշտպանել Պատասխանատու Մարմնի ընդունած ծրագրէն զատ եւ եթէ ինք կը յօժարի երթալ Լեռնավայր, իրեն կը մնայ համաձայնիլ Արեւմտեան Բիւրոյին եւ Պատասխանատու Մարմնին կամ անոր փոխարինող ոեւէ մարմնի հետ: Այդպէս ալ վերջացաւ այդ խնդիրը: Սարհատի խնդիրը շատ աւելի պարզ է. այդ անձը Լեռնավայրի գործերուն մասնակցել է առաջ. մէկ երկու տարի բնակած էր Ամերիկայի մէջ եւ հոն քաղաքացի եղած: Անոր եւ Կ. Կոմիտէի միջեւ որեւէ յարաբերութիւն չկար ինքնին. արդէն Սարհատի մեկնումը եղած էր առանց եւ մասամբ հակառակ Ամերիկայի Կ. Կոմիտէին. վերջինս գիտէր միայն, թէ Սարհատ կը գործէր Լեռնավայրի շրջանին մէջ: Եւ ահա յանկարծ օր մը հեռագիր մը կը ստացուի անկէ, Եգիպտոսէն, թէ ինք վտանգուած է, ձերբակալուելու վիճակին մէջ, թէ հիւպատոսը չ'ուզեր պաշտպանել իրեն: Ինչպէս ուրիշ պարագաներու մէջ ըրած էինք ամերիկեան քաղաքացի ընկերներու նկատմամբ, նոյնը պատրաստ էինք ընել նաեւ անոր համար, ցորչափ Սարհատ մեզ յայտնի էր իբրեւ գործին մասնակցող անձ մը: Մենք անմիջապէս դիմեցինք ամերիկեան կառավարութեան, փաստաբանի ձեռքով. մեզ խորհուրդ տրուեցաւ, որ անոր ճամբու ծախս տրուի Եգիպտոսէն հանելու համար. այդպէս ալ ըրինք, 75 տոլար տրամադրելի ընելով: Ճիշդ այդ միջոցին է միայն, որ անուղղակի աղբիւրներէ կ'իմանայինք, որ Սարհատը հեռացուած է Լեռնավայրի շրջանէն եւ թէ դիտաւորութիւն կար զինք դատի ենթարկելու. Ամերիկայի Կ. Կոմիտէն անմիջապէս կարգադրեց դրամը ետ առնել եւ խզել իր յարաբերութիւնները Սարհատի հետ: Ինչպէս կը տեսնէք, թէ՛ Էդուարդի եւ թէ Սարհատի միջադէպերը փակուած են, Ամերիկայի Կ. Կոմիտէի կողմէն, ճիշդ պատշաճ պահուն: Գամ հիմա Քղիի կնիքով եղած դրամի պահանջի խնդրին: Նորէն թիւրիմացութիւն եւ բաւական մեծ: 1906ին էր կարծեմ, որ Կարինէն նամակ մը ստացանք դրամի պահանջով: Խորաձորի կոմիտէի կնիքով խնդրուած էր Ամերիկայի Կ. Կոմիտէէն՝ 200 ոսկի, զէնքի գնման համար, եւ այդ պաշտօնագիրը վաւերացուած էր Բարձրբերդի Կ. Կոմիտէի կնիքով: Այդ նամակին հետ, միաժամանակ, մեզ կը հաղորդուէր նաեւ հասցէ մը այդ

կուսակցութիւն է հենց իր հիմնական ծրագրի համաձայն, եւ առիթը ներկայացուած դէպքում, մենք աշխատել ենք ցոյց տալ, որ այդպիսի կուսակցութիւն ենք։ Օրինակ Թիֆլիսի մօտ կան մեծ կալուածներ, որոնց տէրերը մեծամեծ տուրքեր են առնում իրենց գիւղացիներից, որը շատ ծանրաբեռնում է նրանց։ Եւ որովհետեւ այդ կալուածատէրերը ապրում են Թիֆլիսում, մենք դիմել ենք նրանց եւ գիւղացիների վիճակի թեթեւութիւնը պահանջել։ Ընկ. Տաճատի ասելով, իբր թէ ակամայից պիտի ընդունէին Տաճկահայկական հարցը. մեր արհեստակցական միութիւնները զանազանւում են միւսներից նրանով, որ նրանք կուսակցական են, պիտի մասնակցին նաեւ քաղաքական հարցերին եւ ոչ թէ միայն տնտեսականներին։ Մենք բանուորներին ասում ենք, որ մենք ընդունում ենք բացի ստամոքսի պահանջից նաեւ գաղափարական պահանջը։ Ասում են, որ իբր թէ ակամայից են ընդունելու միութեան անդամները, մեր ծրագիրը։ Բայց սա սխալ է. կան արհեստանոցներ, ուր բանուորութիւնը դաշնակցական է, կան միայն մի քանի սոց.—դեմոկրատներ. բայց նրանք ամենեւին ակամայից մեզ չեն միանում, այլ կա՛մ առանձին են կազմակերպւում, կամ միանում են մի այլ արհեստանոցի հետ։ Մուրատի ասածը ճիշդ է, որ մեր մասսան այնքան գիտակից չէ եւ շատ անգամ Դաշնակցութեան ուժի վրայ յենուած է գործադուլ անում։ Իսկ ինչ վերաբերում է կուսակցութեան դերին գործադուլի մէջ, ինչքան էլ որ կուսակցութիւնը պրոպագանդա անի, բայց այնուամենայնիւ վերջին խօսքը պատկանում է մասսային։ Գործադուլ անելու հարցը մասսան է վճռում եւ ոչ թէ մարմինները, որովհետեւ գործադուլը բանուորների կաշուն է վերաբերում։

---

Ժողովը փակուեց ժամը 1ին, վիճաբանութիւնների շարունակութիւնը թողնելով երեկոյեան նիստին։

### 32ՐԴ ՆԻՍՏ (13 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան։
Բացակայ են՝ Ռոստոմ, Մանուկ, Սաֆօ։

Շարունակութիւն առաւօտեան նիստի,
Դրամական վիճակ (Մեծ Քաղաքի)։

Մուրատ.— Արդեօք արհեստակցական միութիւններից զուտ ո՞րքան դրամ է մտել Դաշնակցութեան գանձարանը եւ ի՞նչ ստացականով։

Շահխաթունեան.— Տեղեկագրում յիշուած հաշիւը արդեօք արհեստակցական միութիւնների ամբողջ եկամո՞ւտն է պատկերացնում, որի 50%ը մնում է իրենց եւ 50% մտնում կազմակերպական գանձարանը, թէ դա միայն Կազմակերպութեան գանձարանը մտած 50%ն է։

Թոփչեան.— Արհեստակցական միութիւններից մի քանիսը ունեն իրենց վարչութիւնը եւ կնիքը. մարմնի կողմից նրանց ստացագրեր են տրւում հաշուով, եւ հաշուով էլ պահանջւում են։ Ստացագրերի մի մասը տրուած է Կ. Կոմիտէի կնիքով, երբ գործը դեռ խառն էր եւ յատուկ գրքոյկներ չկային։ Վերջերումս նկատեցինք որ կոմիտէի կնիքով ստացականներ տալը անյարմար է, նախ որ արհեստակցական միութիւնները կարող են շատ հեշտութեամբ լեգալ հաստատութիւններ դառնալ եւ իբրեւ այդպիսին գործել, ուստի եւ նրանց ստացականները անյարմար է որ Կ. Կոմիտէի կնիքը կրեն, միւս կողմից կոմիտէի կնիքը, այդքան յաճախ գործածուելով, կը կորցնէր իր արժէքը։ Ուստի յարմար դատուեց, որ արհեստակցութիւնները ունենան իրենց կնիքը. իսկ մի մասն էլ ուղղակի թերթիկների վրայ հաւաքում էր ամսավճարները։ Գանձապահը յանձնում էր Կազմակերպութեան եւ մի ընդհանուր ստացական ստանալով, ցոյց էր տալիս բոլորին։ Արհեստակցութիւնների կնիքը ձուաձեւ է, մանիշակագոյն թանաքով վրան գրուած օրինակ՝ «Դաշնակցական կօշկակարների արհեստակցական միութեան վարչութիւն», առանց զինանիշի, եւ ոչ մի նմանութիւն չունի կուսակցութեան կնիքին հետ։ Անդամավճարները, արհեստակցական միութիւնների հաշիւները կենտրոնանում էին տեղական կոմիտէի մօտ, որ հրաժարուեց։ Այս 10.000 ռուբլու մեծ մասը տուել են միութիւնները եւ բանուորական խմբերը. խառն խմբերը թուով քիչ են։ Այս հաշիւների մէջ մտնում են միութիւնների մի մասի ամբողջ եկամուտը, իսկ մնացած մասի, օրինակ գործակատարների եկամուտի՝ մի մասը միայն։ Այսպիսով ընդհանուր դաշնակցական եկամուտը աւելի է քան այս ցոյց տուած հաշիւը. օրինակ՝ գործակատարները բանկում ունեն մօտ 700 ռուբլի։

Մուրատ հարցնում է, թէ իւրաքանչիւր բանուոր ո՞րքան դրամ է տալիս եւ պատասխան է ստանում՝ եկամտի 2%ը։

Ստեփանեան.— Արհեստակցական միութիւնների կնիքները արդեօք Բիւրոների գիտութեա՞մբ են շինուած, թէ ինքնագլուխ։

Թոփչեան.— Թէեւ ամբողջ աշխարհում այդպէս է, որ արհեստակցական միութիւնները իրենց կնիքները ունին, բայց մեզանում այդ դեռ չկար։ Վերջը երբ դրա կարիքը զգացուեց, մենք ոչ միայն կնիք ունենալու որոշում տալը տեղական կոմիտէին չթողինք, այլ նոյնիսկ Կեդր. Կոմիտէն իր իրաւասութեան սահմաններից վեր համարեց այդ խնդիրը լուծել, ուստի մենք խառն ժողով կազմեցինք Բիւրոյի հետ եւ այդ որոշումն այնտեղ տուինք։

Նախագահը.— Մեր կանոններով՝ կնիք պատրաստելու իրաւունքը պատկանում է միայն Արեւմտեան Բիւրոյին. մինչեւ անգամ Արեւմտեան Բիւրոն էլ այդ իրաւունքը չունի։ Կնիքների վրայ չէ գրուած «Դաշնակցութիւն» ինչպէս մեր պաշտօնական կնիքների մէջ, այլ «դաշնակցական եւն.». ուստի այդ իրաւունքը կարելի է տալ Արեւելեան Բիւրոյին։ Եթէ կնիքի մասին եղած հարցումները իրաւունքի խնդիրներ են յարուցանում, այն ժամանակ Դիւանը այս հարցը կը դնի առանձին։

Նախագահը համարում է հարցը սպառուած եւ առաջարկում է անցնել Մեծ Քաղաքի շրջանի գործունէութեան միւս կողմերին՝ պրոպագանդային եւ զինավարժութեան։

### Զինավարժութեան խնդիր

Վարդան.— Ի՞նչ ձեւով էր կատարւում զինավարժութիւնը եւ ո՞վ էր ղեկավարում։

Սեպուհ.— Ի՞նչ արդիւնքներ էք ունեցել մինչեւ այժմ։

Միհրանեան.— Այդ զինավարժութիւնը ինքնապաշտպանութեա՞ն նպատակով էր, թէ այլ նպատակներով։

Թոփչեան.— Ինչպէս տեղեկագրում յիշուած էր, բանուորների մէջ լուրեր էին տարածւում, որ երբ նրանք արհեստակցական դառնան, այլեւս իրաւունք չունեն զինուոր դառնալու եւ մեզ շարունակ հարցնում էին, թէ ճշմարի՞տ է այդ բանը։ Այդ լուրերի առաջն առնելու համար, նաեւ որ[ովհետեւ] միլիցիան պէտք էր նախապատրաստել, մենք պարտաւորեցնում էինք, որ ամէն մարդ ինքը պիտի պարտաւորի իր տունը, ընտանիքը պաշտպանել եւ ոչ թէ յոյսը յատուկ զինուորների վրայ դնել. ուստի պարտաւոր է զէնքի վարժուիլ։ Կազմեցինք խմբեր, որոնց հետ թէ՛ բանաւոր եւ թէ գործնական կերպով պարապում էին։ Նրանց տրամադրութեան տակ հրացաններ էին դրուած, զբօսանքներ էին կատարում եւ վարժութիւններ անում։

Շահխաթունեան.— Լրացնում եմ ընկ. Թոփչեանի ասածը. գործարաններում շատ ցանկացողներ կային. կառավարական զօրքում ծառայած զինուորների ղեկավարութեամբ մասերի էին բաժանուել, մաս-մաս գնում էին մօտակայ գիւղերը փոխն ի փոխ եւ վարժւում։ Հենց Թիֆլիսի մէջ երկու մեծ սենեակ էր վարձուած, ուր նոյնպէս վարժութիւններ էին անում։

Մուրատ.— Ի՞նչ բան են այդ մարտական խմբերը, միլիցիա՞ թէ միայն բանուորների համար։

Թոփչեան.— Վարժութիւնները միայն կուսակցութեան անդամների համար չէին, այլ նաեւ ժողովրդի համար. իսկ մարտական խմբերի նպատակը այն էր, որ իսկական քաղաքական յեղափոխական ակտեր անելու համար չէ կարելի ամէն զինուորի ամէն գործի համար ղրկել. հարկաւոր էր ունենալ վարժ եւ վստահելի խմբակներ, որոնց կարելի լինէր յանձնել կարեւոր ակտերը իրագործելը. դրանք են մարտական խմբերը, որոնց թիւը պիտի քիչ լինէր. բայց սա դժուար եղաւ իրագործել։

### Պրոպագանդա

Վարդան.— Արդեօք արհեստակցական միութիւններ կազմելիս բանուորներին միայն կովկասեան նախագի՞ծն էր բացատրւում թէ ծանօթացնում էիք նաեւ տաճկահայկական հարցի հետ։ Ասում էք որ բանուորները իրենց սրտին մօտ են համարում Թրքահայ դատը եւ ցանկանում են, որ Դաշնակցութիւնը երկուսն էլ միասին տանի։ Բայց արդեօք, բանուորները որի՞ն են առաւելութիւն տալիս։

Վռամեան.— Ցանկալի էր մի քիչ աւելի տեղեկութիւններ Թիֆլիսի կոմիտէի հրաժարականի եւ երիտասարդական շարժման մասին։

Զարդարեան.— Դպրոցական խնդիրներին միջամտելը ի՞նչ օգուտ կամ վնաս տուեց Կազմակերպութեանը։

Զօփուրեան.— Արդեօք մարմինները կոնտրոլ ունեցե՞լ են պրոպագանդայի վերաբերմամբ, որ սա մի ուղղութեամբ տարուի, թէ՛ քաղաքում եւ թէ գիւղերում։

Մուրատ.— Ասում էք որ 30 պրոպագանդիստ սովորում էին եւ պատրաստւում. արդեօք իւրաքանչիւրին ի՞նչ ռոճիկ է տրուել եւ քանի՞ պրոպագանդիստ էք ունեցել։

Վահագն.— Բողոքող երիտասարդները ուսանողնե՞ր են թէ այդ պատրաստուած պրոպագանդիստներից էլ կան։

Զօփուրեան.— Խնդրում եմ նաեւ դասընթացքի մասին տեղեկութիւններ տալ։

Անդրանիկ.— Այդ մօտ 30 պրոպագանդիստները, որ զանազան տեղեր իրար յաջորդում են, ո՞վ է դրանց խօսածին ուղղութիւն տալիս եւ ի՞նչ հիման վրայ։

Տաճատ.— Նոյն հարցերը ես ուզում էի դնել նաեւ գիւղերի վերաբերմամբ։

Միհրանեան.— Նաեւ մամուլի պրոպագանդի մասին տեղեկութիւններ թող տրուին։

Մաշուր.— Այս երեք տարուան ընթացքում պրոպագանդան ի՞նչ շրջաններով է անցել. այդ մասին ցանկալի է, որ մի տեսութիւն տրուէր։

Թոփչեան.— Տաճկահայկական դատի համար արդէն տեղեկագրում ասուած էր, որ մինչեւ Ռուսաստանի յեղափոխական շարժումը սկսուելը՝ պրոպագանդայի մեծ մասը տաճկահայկական դատի շուրջ էր պտըտում։ Իսկ երբ սկսեց Ռուսաստանի յեղափոխական

չարժումը, մի քանի ամիս այլեւս տաճկահայկական դատի մասին չէր խօսւում, այլ ընթացիկ հրատապ խնդիրների մասին, իսկ տաճկահայկական դատի մասին՝ միջանկեալ կերպով: Իսկ վերջերս, նորից, այդ մասին լինում են դասախօսութիւններ, երբեմն մի քանի խմբեր միանում են եւ մարդ են հրաւիրում եւ խնդրում տաճկահայկական դատի մասին խօսել: Չկայ մի խումբ, որ չուզէ ջերմ կերպով աջակցել տաճկահայ դատին, բայց չկայ նաեւ մի խումբ, որ ուզենայ Թրքահայ դատին օգնել, առանց մասնակցելու կովկասեան գործունէութեան: Խառն խմբերի ներկայացուցիչների ժողովներում գալիս էին նաեւ Միհրանականները, որոնք ասում էին, որ մենք հակառակ չենք կովկասեան գործունէութեան, բայց թող այդ գործունէութիւնը ինքնապաշտպանութեան սահմաններից չանցնի. բայց ինքնապաշտպանութիւն նրանք հասկանում են միայն հայ-թրքական ընդհարումների մէջ. այն ինչ՝ առաջ, 1903ից, մեր ինքնապաշտպանութիւնը կռիւ էր կառավարութեան դէմ: Բայց երբ մենք նրանց բացատրում էինք խնդրի էութիւնը, նրանք համաձայնում էին, ասելով որ իրենց այլ կերպ են հասկացրել: Ընդհանուր ժողովի որոշումների մասին կովկասեան գործունէութեան վերաբերմամբ՝ մեր մասսան գաղափար չէ ունեցել: Այդ որոշումի արձանագրութիւնները յետոյ են հրապարակ եկել. և մասամբ այդ է պատճառը Նախագծի վերաբերմամբ եղած շփոթութեան: Տեղական կոմիտէի հրաժարումը եղել է այն պատճառով, որ սա իւր մեծամասնութեամբ անջատման կողմնակից էր եւ ուզում էր այդ մասին պրոպագանդ անել նաեւ խմբերում:

Նախագահ.— Այս հարցը վերցւում է մէջտեղից:

Թոփչեան.— (շարունակելով) Ընդհանուր ժողովի մասին վաղուց արդէն խօսւում էր եւ հարցերը պէտք շրջաններում քննուէին: Ընկերներից մի քանիսը այն կարծիքին էին, որ զանազան դիտումներով, Դաշնակցութիւնը պէտք բաժանուի երկուսի: Առաջարկ եղաւ, որ այդ մասին խօսուի նաեւ մասսաներում: Ի հարկէ տեղական մարմինը պէտք ղեկավարուէր Դաշնակցութեան Ծրագրով, որը բաժանման հարց չունէր իւր մէջ, եւ հրաւիրուած պրոպագանդիստներն էլ դաշնակցականներ էին և պարտաւոր էին ղեկավարուել Ծրագրով. բաժանման խնդիրը մասսաների առաջ դնելու մասին տարբեր կարծիքներ յայտնուեցին. ի միջի այլոց, թէ կարելի՞ է արդեօք դաշնակցական լինելով բաժանման մասին խօսել: Մի շարք ժողովներում, Բիւրոյի եւ այլ ընկերների հետ միասին, մենք քննում էինք այդ խնդիրը: (Միջանկեալ ասեմ, որ պրոպագանդիստների ռոճիկների մասին զանազան առասպելներ են տարածուած. պրոպագանդիստների 9/10ը ձրի է կատարել իւր պաշտօնը, միայն երկու հոգի են եղել, որ ամսական 30–35 ռուբլի ապրուստի փող են ստացել): Տեղական մարմինը ուզում էր, որ ազատութիւն տրուի բաժանման մասին խօսելու: Երկար վիճաբանութիւններից յետոյ, որոշուեց որ երիտասարդները բաժանման մասին կարող են խօսել մասսաների առաջ, միայն այն պայմանով, որ հակառակ կարծիքի ներկայացուցիչներ եւս ներկայ լինել ժողովի ժամանակ. դրանով մարմինների միջի կոնֆլիկտը [բախում, անհամաձայնութիւն] վերացաւ եւ սկսուեցին այդ ուղղութեամբ ժողովներ. երբ մինը ժողովի էր գնում, իմաց էր տալիս նաեւ հակառակ կարծիքի ներկայացուցչին: Հետզհետէ այդպիսի ժողովները լայնացան, բանաձեւեր քուէարկուեցին եւ մեծամասնութեամբ ընդունւում էին ոչ-բաժանման մասին եղած բանաձեւերը. բաժանման կողմնակիցները չնչին թուով էին: Գաւառներում պրոպագանդիստների պակասութիւն է զգացուել միշտ. երբեմն ոմանք շրջիկի նման անցել են, մի քանի դասախօսութիւններ արել. իսկ գաւառներում տեղական մարմինները պրոպագանդիստների վրայ էին հսկում: Պրոպագանդիստների դասընթացքը առանց ծախսի է եղել, ձրիաբար, ընկերական սկզբունքով. ընկերները իրենց ազատ ժամերին դասախօսել են: Դասախօսութիւնները լայն ծրագրով էին տարւում, բայց մասնակցել են միայն Թիֆլիսի պրոպագանդիստները: Մեր տեղական պրոպագանդիստների գլխաւոր մասը այդ բովից անցել է: Պրոպագանդիստներ եղել են ուսանողներից, Ներսիսեան դպրոցի աւարտածներից: Պրոպագանդիստների դպրոցում առաջին տարին դասախօսել են երկու հոգի, — Խաժակը եւ ես. երկրորդ տարին՝ 4 հոգի — Սիմոնը, ես, Լիպարիտը եւ Տէր Յակոբեանը. իսկ այս տարի, երրորդ շրջանում՝ Միքայէլը, Խաժակը, ես, Սիմոնը, Համոն, Լ. Բաբայեանը: Այս տարի հնարաւոր չեղաւ ցանկալի չափով իրագործել, որովհետեւ պրոպագանդիստների մի մասը սպասում էին Ընդհանուր ժողովի որոշումներին եւ դասախօսների մի մասն էլ շրջանից հեռացած էին կամ զբաղուած: Այժմեան ունկնդիրներ են՝ Ներսիսեան դպրոցի Զ. եւ Ե. դասարանի աշակերտներից, գործակատարներից, բանուորներից եւ այլ գիտակից անհատներից: Այս ընտրողական պայքարում սրանք ղեկավարող դեր են կատարել:

Վռամեան յիշեցնում է իւր հարցը թէ պրոպագանդայի դպրոց անցածներիցն էլ կայի՞ն մարդիկ, որոնք հրաժարուել էին պրոպագանդա անելուց:

Թոփչեան.— Դրանցից կային 2–3 հոգի:

Մուրատ.— Պրոպագանդիստները ուղարկւում էին կենտրոնից. սկզբում նրանց մասին չէր կարելի ասել, թէ տաճկահայ դատը մոռանում էին: Բայց մի քանի շրջաններում նրանք սկսել էին խիստ խօսել, որ տաճկահայերը յեղափոխութիւն չեն ընդունում, ուզում են Թուրքերի հետ հաշտ ապրել: Ապա երբ նրանք մտնում էին կազմակերպուած խմբերի մէջ, ասում էին, որ



Երկրի հետ գործ չունենք: Էնֆիաջեանի, Բողարջեանի, Ադելխանովի եւ .......(5) գործարանից եկել էին եւ լալով գանգատւում, որ իրենց չեն խօսում Երկրի մասին:

Թոփչեան.— Դրանք բոլորը թիւրիմացութիւններ են: Ճիշդ է, պրոպագանդիստները ասում էին, որ բաժանուի, բայց այդպիսի կոպիտ պատասխան չեն տուած լինել: Երեւի ընթացիկ խնդիրների մասին դասախօսելիս, հարցում արած կը լինին Թուրքիայի մասին եւ պրոպագանդիստը պատասխանած կը լինի, որ այժմ այդ խնդրի մասին չենք խօսում:

Մաշուր.— Իւր տուած հարցին բաւարարութիւն ստացած չլինելով, ինքն է սկսում բացատրել իւր միտքը եւ պրոպագանդան բաժանում է երեք շրջանի, ա) 1904ից անմիջապէս յետոյ՝ երբ պրոպագանդը ուղղուած էր կազմակերպելու [ազգային ?] հարցի կողմը, սոցիալիստական մասը տեղ չէր բռնում. երկրորդ շրջանը՝ յեղափոխութեան ժամանակ, երբ խօսւում էր կառավարութեան մասին եւ յեղափոխական ակտերի շուրջը. երրորդ շրջանը՝ 1905ից, երբ սկսում է սոցիալիստական պրոպագանդը եւ զանազան հոսանքների յառաջացումը:

Թոփչեան.— Մեզ մի անգամ լուր տուին, թէ Միհրանը գնացել է Ադելխանովի գործարանը եւ այնտեղ բանուորների առաջ խօսել է, թէ մի՞թէ դուք մեր արիւնոտ երկրի դատը ուզում էք մոռանալ, եւն.: Եւ ամբողջ գործարանը իբր թէ միհրանական է դարձել: Մենք գնացինք գործարան, բացատրեցինք խնդրի էութիւնը: Ոմանք, միհրանականներից, այժմ մեր արհեստակցական միութիւնների անդամ են դարձել եւ անձամբ համոզւում են, որ դրանք այնպիսի հրէշաւոր բաներ չեն, ինչպէս նրանց նկարագրել են:

Նախագահը փակում է հարցերի ցանկը եւ յայտարարում է 5 րոպէ ընդմիջում:

---

Նախագահը խօսք է տալիս Ռուսաստանի եւ Եւրոպայի ուսանողութիւնների պատգամաւորներին, որոնք կարդում են իրենց տեղեկագրերը: Ռուսաստանի ուսանողութեան պատգամաւորը, Շահխաթունեան, իւր տեղեկագրի երկրորդ կէսը բերանացի է անում. իսկ Եւրոպայի դաշնակցական հայ ուսանողութեան պատգամաւոր Իսահակեանը՝ իւր տեղեկագրի մի մասը: Ժողովը պարտաւորացնում է նրանց, իրենց տեղեկագրերը լրացնել եւ գրաւոր տալ: Նրանք խօսք են տալիս:

Հարցումները նախ տրւում են Ռուսաստանի դաշնակցական ուսանողութեան պատգամաւորին:

Վահագն.— Կարմիր Խաչը քանի՞ տարի է գոյութիւն ունի, ո՞րքան է եղել նրա մուտքը եւ ի՞նչ գործ է կատարել: Ո՞րչափ է դաշնակցական ուսանողութեան թիւը, դրամական մուտքն ու ելքը մօտաւորապէս: Պրոպագանդը ի՞նչ նիւթերի մասին է եղել. ուսանողութիւնը ուժեր տուե՞լ է, որոնք տրամադրելի լինէին կազմակերպութեան մէջ գործելու, կամ Երկիր գնալու:

Չելալեան.— Ասում էք որ Զիֆոնին աջակցել էք. ի՞նչ չափով է եղել այդ աջակցութիւնը: Ի՞նչ բանի համար է դաշնակցական զինուորական խմբակը Մոսկուայում:

Զարդարեան.— Եթէ ներկայացուցչական ժողովը յանգի Մոսկուայի ռեզոլուցիայի [բանաձեւին] հակառակ որոշման, ի՞նչ է մտածում անել ուսանողութիւնը:

Բարսեղեան.— Ի՞նչ յարաբերութիւնների մէջ էք այլ կուսակցութիւնների հետ. ի՞նչ դասախօսութիւններ են տրուել Դաշնակցութեան վերաբերմամբ. Վորոնէժում գտնուած հայերը ի՞նչ տարրերից են: Նաեւ Կարմիր Խաչի մասին տեղեկութիւն տուէք:

Վռամեան.— Ռուսաստանի ուսանողութիւնը ի՞նչ ուժեր է տուել Դաշնակցութեան եւ քանի՞ տոկոս մօտաւորապէս, արդեօք ուսանող գործիչները միայն ամա՞ռն են զբաղուել դաշնակցական գործերով, թէ մընայուն են եղել:

Շահխաթունեան.— Կարմիր Խաչը, որքան ծանօթ եմ, 2½ տարի է, որ կազմուած է. նա կազմուած է երկու տեսակ տարրերից, երիտասարդներից եւ բաւական դիրքով տիկիններից, որոնք ուզում են իրենց ղեկավարութեան տակ դնել այդ գործը եւ վիճում են երիտասարդների մասին, թէ նրանք հիւրե՞ր պէտք է լինեն Կարմիր Խաչի մէջ, թէ հաւասար ձայն պէտք է ունենան: Տիկինները չեն ուզում կոմիտէի հետ յարաբերութիւն ունենալ, նրանց մէջ նոյն տրամադրութիւնն է տիրում, ինչ որ գաղութի մէջ առհասարակ: Աւելի լաւ կը լինէր՝ Կարմիր Խաչը տիկիններից կազմուած լինէր: Հայ ուսանողների թիւը շատ է, մօտ 800, գուցէ եւ աւելի: Մինչեւ այս տարի, եղած ուսանողութեան խոշոր տոկոսը դաշնակցական էր, սա իմացւում էր ժողովներից, ուր եկած ուսանողների մեծ մասը դաշնակցական էր: Ամբողջ Ռուսաստանում կը լինի մօտաւորապէս 150 հոգի դաշնակցական ուսանողներ, աւելացրած վրան մի 50 հոգի Օտեսայից: Այս տարի ուսանողութիւնը բոլորովին մուտք չէ ունեցել, որովհետեւ համալսարանը փակ է եղել եւ ուսանողութեան եկամտի գլխաւոր աղբիւրը, հայկական երեկոյթը, չէ տրուել: Պրոպագանդայի բովանդակութիւնը եղել է դասախօսութիւններ Դաշնակցութեան եւ Սոց.-դեմոկրատիայի մասին, հրապարակային ժողովներում, ուր եկել են նաեւ այլ կուսակցութիւնների ուսանողներ, երբ վիճաբանութիւնների նիւթը եղել է ծրագրային հարցի շուրջը: Այս տարի սոց.-դեմոկրատները վճռել են մի շարք դասախօսութիւններ [տալ] սիստեմատիկ կերպով, մեր դէմ, ռուսերէն լեզուով, որին հրաւիր-

զբաղուել են միայն այն անհատները կամ մարմինները, որոնց յանձնուած է եղել այդ ձեռնարկների գործադրութիւնը։ Այս հանգամանքը, ասացի ես անցեալ անգամ, շատ վատ է անդրադարձել դաշնակցական ուսանողութեան վրայ։ Կուսակցութիւնը ուսանողութեան առաջ տեսական հարցեր չէ դրել եւ ոչ մի մղումն չէ տուել նրա մտաւոր գործունէութեանը եւ այդպիսով դաշնակցական ուսանողութիւնը ընկել է մի տեսակ մտաւոր ծուլութեան եւ անշարժութեան մէջ։ Այժմ ընկ. Վալադեանը գալիս է ասելու, որ դաշնակցական ուսանողութեան անպատրաստութեան պատճառը այն չէ, որ Դաշնակցութիւնը բարձի թողի է արել իւր տեսական հարցերը. այլ դրա պատճառը այն է որ առհասարակ հայ ուսանողութիւնը ծոյլ է, չէ աշխատում։ Սա իրողութեան լուսաբանութիւն չեղաւ. եթէ ի նկատի ենք ունենում այն հանգամանքը, որ սոցիալ–դեմոկրատ եւ սոցիալ–յեղափոխական կուսակցութեանց պատկանող ուսանողներից, դաշնակցական ուսանողները իրենց մտաւոր պատրաստութեամբ ցած են եղել կանգնած՝ մենք պէտք է ասենք թէ այդ ծուլութիւնը յատուկ է միայն դաշնակցական ուսանողներին. իսկ այդպիսի բան ասել մենք չենք կարող։ Միւս կողմից այն հանգամանքը, որ վերջին տարիներս, երբ մեր մէջ եւս սկսել են տեսական հարցեր արծարծուել՝ մեր դաշնակցական ուսանողները, հակառակ կուսակցութիւններից պատին սեղմուած, սթափուել եւ սկսել են կարդալ՝ այս հանգամանքը եւս գալիս է հաստատելու, որ մեր մինչեւ այժմու անպատրաստութեան պատճառը մեր ուսանողութեան ծուլութեան մէջ չպէտք է փնտռել, այլ մի ուրիշ տեղ։ Վերջացնելով խօսքս պարտք եմ համարում ասել, որ դաշնակցական մտքի քաոսային վիճակը այլեւս չէ կարող տանել ուսանողութիւնը. եւ եթէ Ընդհանուր Ժողովը վերջ չտուեց այս քաոսին, եթէ նա չմշակեց այնպիսի մի հաստատուն ծրագիր, որ կարողանայ բաւարարութիւն տալ ուսանողութեանը, նա վերջ ի վերջոյ կը հեռանայ կուսակցութիւնից։

Մալումեան.— *Թոյլ տուէք ինձ, թէ՛ իբրեւ նախկին ուսանողի եւ թէ իբրեւ «Եւրոպայի հայ ուսանողական միութեան» գործերին մօտիկից ծանօթ մի մարդու, մի քանի տեղեկութիւններ հաղորդել այդ խնդրի մասին։ Նախ մի քանի թուեր. Եւրոպայում կան՝ 350–400 հայ ուսանող, — 100–130 Գերմանիայում, 100–120 Շվէյցարիայում, 8–10՝ Աւստրիայում։ Քանի՞սն են եղել սրանցից դաշնակցական։ «Միութեան» բոլոր համաժողովներին (Միւնխէն 1901ին, Ժընեւ 1902ին, Բերն՝ 1905ին) դաշնակցականները 80–90% են կազմել։ Այն հարցին թէ տաճկահայերն ի՞նչ տոկոս են կազմում — հաստատ թուերով շատ դժուար է պատասխանել։ Մօտաւոր տեղեկութիւնը այս է. Գերմանիայում՝ համարեա չկան. տաճկահայերը գլխաւորաբար Ֆրանսա են գնում. արդէն տասնեակ տարիներից ի վեր Ֆրանսիան իր գրականութեամբ, իր յեղափոխական անցեալ շարժումներով, միշտ աւելի է գրաւել Պոլսի հայ երիտասարդներին։ Նրանք այնտեղ գնում էին շատ վաղուց, մի քանիսը նոյնիսկ մասնակցել են 48ի յեղափոխութեանը։ Այսօր, սակայն, Պարիզում անգամ տաճկահայ ուսանողութիւնը հեռու է մնում յեղափոխական գործից, պատճառաբանելով, թէ ուսանողը չպէտք է զբաղուի քաղաքական հարցերով։ Նրանց հեռու մնալը մենք երկու կերպ ենք ուզում բացատրել. նախ՝ նրանք վախենում են սուլթանական կառավարութիւնից, եւ ապա՝ նրանք ընդհանրապէս ձգտում են իրենց համար մի ապահով վիճակ ստեղծել ուսումն աւարտելուց յետոյ։ Վախը նրանց մէջ այնքան մեծ է, որ նոյնիսկ ուսանողական համագումարներին քաշւում են ներկայանալ. եղել են դէպքեր, որ Ժընեւ գալով, նրանցից ոմանք խոյս են տալիս «Դրօշակ»ի խմբագրութիւնից։ Բայց պէտք է աւելացնել, որ տաճկահայ այդ անյեղափոխական ուսանողները սկսում են կամաց կամաց մօտենալ մեր գործին. Պարիզում օրինակ անցեալ տարի կարելի եղաւ գործի շուրջը համախմբել այնտեղի տաճկահայերից մի մասը։ Դառնում եմ ընկ. Իսահակեանի արած այն յայտարարութիւնը՝ որ «եթէ մշակուելիք ծրագիրը չյարմարուեց ուսանողութեան աշխարհահայեացքին, նրանք կը հեռանան»։ Այսպիսի մի պահանջ դնել Ընդհ. Ժողովի առաջ՝ ես համարում եմ անհամեստութիւն։ Այո՛, ուսանողութիւնը կարող է ասել, որ իրենց ունեցած աշխարհահայեացքը՝ կ'ուզէին ծրագրի մէջ մտցուած տեսնել. բայց ոչ երբեք պայման դնել՝ «եթէ չընդունէք՝ կը բաժանուենք»։ Սա մի հայեցակէտ է, որին, համոզուած եմ, չի՛ համակերպի ուսանողութեան մեծագոյն մասը։ Համաձայն եմ Վալադեանի այն կարծիքի հետ, որ հայ ուսանողները Եւրոպայում ընդհանրապէս ծոյլ են։ Մտաւոր ծուլութիւնը մեր ուսանող երիտասարդութեան յատկանիշն է։ Այս փաստը չէ արգիլում ասել թէ՝ օրինակ Շվէյցարիայում, դաշնակցական ուսանողները աւելի պատրաստուած են եղել, քան հայ սոցիալ–դեմոկրատները. խօսքը, հարկաւ, բացառութիւնների մասին չէ։ Ստեփանեանը Պարիզում հրատարակուած թերթի մասին հարցում է անում. ես պարտաւորութիւն չեմ զգում, ոչ իբրեւ նախագահ, ոչ էլ իբրեւ Բիւրոյի անդամ, այդ մասին զեկուցում տալ։ Ընկ. Մինասեան կարող կը լինի այդ անել, որպէս այդ թերթի խմբագիր։*

Ռոստոմ.— *Ուսանողութեան հարցը պէտք է կապել ինտելիգենցիայի [մտաւորականութեան] դերի հետ։ Մեր յեղափոխական կեանքի սկզբնական շրջանում, երբ մղւում է մի ընդհանուր կռիւ, երբ դասակարգային խտրութիւններ աչքի չեն ընկնում եւ հասարակութեան բոլոր խաւերի ուշադրութիւնը կլանուած է գլխաւորապէս ընդհանուր թշնամու դէմ կռուելու խնդրով, այդպիսի պարագաներում ինտելիգենցիա կոչուած դասը իբրեւ ուրոյն մի հասարակական միութիւն, որոշ դեր ունի կատարելիք, կարող է ղեկավարող ոյժ հանդիսանալ։ Բայց ինտելիգենցիան, իբրեւ մի ամբողջական հասարակական միութիւն, կորցնում է հետզհետէ իր նշանակութիւնը այնչափով, ինչ չափով յեղափոխական գործը արմատանում է մասսաների մէջ, ինչ չափով կոնկրէտ [շօշափելի] արտայայտութիւն են ստանում դասակարգային խտրութիւնները։ Այդ է պատճառը, որ Եւրոպայում մենք չենք տեսնում այն ինտելիգենցիան, որը գոյութիւն ունի Ռուսաստանում։ Այնտեղ, այսպէս կոչուած, մտաւորականները մտնում են հասարակական գործունէութեան մէջ արդէն իբրեւ անհատներ։ Եւ որովհետեւ Ռուսաստանի եւ մասնաւորապէս Կովկասի կեանքը յեղաշրջման այդ ճանապարհի վրայ է, բնական է, որ ինտելիգենցիան էլ եւ նրա աչքը կոչուած ուսանողութիւնը՝ հետզհետէ կորցնէ իր հասարակական դիրքը եւ նշանակութիւնը։ Այս տեսակէտով եթէ նայենք տաճկահայ ուսանողութեան վրայ, մեզ համար կը պարզուի մասամբ այն հանգամանքը, որ նրանց ստուար մեծամասնութիւնը անտարբեր է կամ հակառակ յեղափոխական գործունէութեան։ Դասակարգային խտրութիւնները ծագել են այնտեղ շատ վաղուց, 60ական թուականներից սկսած, շնորհիւ Սահմանադրութեան։ Այնտեղ ունեւոր եւ աշխատաւոր — ռամկավար դասակարգերը աւելի որոշ կերպով են բաժնուած իրարից, եւ որովհետեւ արտասահման գնացող ուսանողները գրեթէ բացառապէս ունեւոր դասից են եւ այն էլ ծովեզերեայ քաղաքներից, մասնաւորապէս Պոլսից, որը իբրեւ մայրաքաղաք գտնւում է բացառիկ արտօնեալ դրութեան մէջ, պարզ է, որ նրանք իրենց սրտի մօտիկ չեն ընդունում աշխատաւորների դատը։ Իսկ եթէ վերցնենք հայկական նահանգներից, մենք չենք կարող ասել, որ նրանք բնաւ հետաքրքրութիւն չեն արտայայտում դէպի գործը։ Եթէ դրանց թիւը յեղափոխական կեանքի մէջ քիչ է, դրա պատճառը այն է, որ առհասարակ ուսանողներ բուն հայկական նահանգներից քիչ են։*



Շահխաթունեան.— *Ես համաձայն եմ Ռոստոմի այն մտքի հետ, որ ուսանողութիւնը այսօր կորցրել է իւր ինքնուրոյն դիրքը։ Հին կարծիք է, թէ ուսանողները համալսարան են գնում՝ իրենց Երկրի համար իբրեւ հասարակական գործիչներ պատրաստուելու նպատակով։ Այդպէս էր առաջ, բայց այսօր այլ բան է. երիտասարդութեան 90%ը բարձրագոյն կրթութիւն է ստանում՝ միայն եւ միմիայն անձնական շահի տեսակէտից։ Մենք չպէտք է ունենանք այլեւս՝ ուսանողական մի ջոկ հարց. կարող ենք խօսել միայն ինտելիգենցիայի մասին ընդհանրապէս։ Ընկ. Մալումեանի ասելով, դաշնակցական ուսանողները աւելի բարձր եղած են միւս կուսակցութիւններին պատկանող հայ ուսանողներից, բայց ես չեմ հասկանում, ո՞րն է եղել դաշնակցական ուսանողութեան համար դաշնակցական ուղղութիւնը, որին նրանք հետեւած լինէին։ Այստեղ ես յիշում եմ մի ընկերոջ հետեւեալ խօսքերը, թէ «սոցիալիզմը թէորիա [տեսութիւն] է, բայց ի՞նչ է դաշնակցականիզմը»։ Եւ որ իսկապէս գոյութիւն չէ ունեցել մի յատուկ «դաշնակցականիզմ»՝ այս կը հաստատի ինքը՝ Ընդհանուր Ժողովը։ — Զարմանալի է ընկ. Մալումեանի դժգոհութիւնը, ընկ. Իսահակեանի յայտարարութեան հանդէպ. մի՞թէ ինքը՝ ընկ. Մալումեանը՝ կը մնայ Դաշնակցութեան մէջ, եթէ Ժողովը նրա սկզբունքների հակառակ մի ծրագիր մշակի։ Եւ եթէ ուսանողութիւնը սկզբից հենց յայտարարում է, թէ այդպիսի դէպքում կը թողնէ կուսակցութիւնը, — սա ապացոյց է, որ ուսանողութիւնը լուրջ է վերաբերուել գործին։ Ռոստոմի ասելով, ռուս ուսանողութիւնը սկսել է թէորիաներով եւ կամաց–կամաց անցել է գործնականին. իսկ հայ ուսանողութիւնը՝ ընդհակառակն է անում։ Սխալ է, այո՛, ոչ մի կուսակցութիւն չէ կարող հրապարակ գալ՝ առանց տեսականի. հակառակ դէպքում կուսակցական գործը ստանում է բարեգործական ընկերութեան բնաւորութիւն։ Եւ իւրաքանչիւր կուսակցութիւն, նախ քան գործնականին դիմելը, պէտք է գիտական հիմունքներ հաստատի։*

Մինասեան.— *Իսահակեանի տեղեկութիւնները տաճկահայ ուսանողութեան մասին ճիշդ չեն. նա գաղափար չունի այդ ուսանողութեան մասին։ Պէտք է գիտնալ, որ մինչդեռ կովկասահայ ուսանողը նախ* մարդն *է պատրաստում, ապա միջնոլորտը ստեղծում. տաճկահայը ընդհակառակն, նախ միջնոլորտը, ապա մարդը։ Տաճկահայ ուսանողը աւելի զգոյշ է եւ շրջահայեաց, որովհետեւ ապրում է այլ պայմաններում քան կովկասահայը եւ այդ շրջահայեցութիւնը չպէտք է համարել վախկոտութիւն կամ կարիերիստութիւն։ Եթէ տաճկահայը բժշկութիւն է սովորում, սա այն պատճառով է որ ոչ միայն ինքը ուսանողը, այլեւ նրա ամբողջ ընտանիքն է շահագրգռուած, այդ մասնագիտութեամբ, որը իբրեւ ապրուստ հայթայթելու միջոց պէտք է ծառայի. տաճկահայ ուսանողը չէ կարող անմիջական մասնակցութիւն ցոյց տալ գործին, քանի որ նա ամէնուրեք շրջապատուած է լրտեսներով. երբ մի ուսանող Պոլիս է վերադառնում, տասնեակ վկայութիւններ են պահանջում նրանից, որ նա իսկապէս չէ զբաղուել յեղափոխութեամբ։ Բայց եւ այնպէս ուսանողութեան 60–70% հետաքրքրուած է մեր գործով։*

Վռամեան.— *Ես այն կարծիքին եմ, որ այստեղ պէտք է հրաւիրէինք ոչ թէ ուսանողութիւնը, այլ ինտելիգենցիան։ Ուսանող ասելով մենք հասկանում ենք այն, որ ուսանողները պէտք է դեռ ուսանին եւ ոչ թէ գան ու վճիռներ կայացնեն այստեղ։ Դաշնակցութեան փիլիսոփայութեան մասին խօսելիս հասկանալի է, որ*

տաճկահայ եւ ռուսահայ ուսանողների մէջ հասկացողութեան անդունդ կայ· որովհետեւ այդ երկուսի կազմուածքը տարբեր է· տաճկահայի գաղափարը կեանքի դառնութեան արդիւնքն է, իսկ ռուսահայինը՝ ոչ։ Յետոյ, դուք ի՞նչ իրաւունքով էք պահանջում, օրինակ Պարիզի տաճկահայ ուսանողութիւնից, որ սա գործի հայրենիքի համար· չէ՞ որ նա գլխաւորապէս հարուստներից է բաղկացած։ Երկրի նե՛րսը նայինք, այնտեղ է ուր ուսանողները գործում են· ես գիտեմ մի ուսանող, որ իւր ուսումը թողած, Բէյրութում ջորեպան էր դարձել ու զէնք փոխադրում· ապա պատրիարքի վրայ ատրճանակ պարպողը եւս մի ուսանող էր։ Պարիզը չպէտք է նոյնացնել Երկրին։

Զաւրեան·— Ես զարմանում եմ, որ ուսանողութեան մասին եղած խօսակցութիւնը այսպիսի օրիգինալ [ինքնատիպ] բնաւորութիւն ստացաւ։ Մէկ կողմից ուզում են արհամարհել ուսանողներին, որոնք դեռ չեն կազմակերպուած որպէս հասարակական ուժ, միւս կողմից՝ ընկ· Նախագահն օրինակ այնքան լաւատես է ուսանողութեան վերաբերմամբ, որ բնաւ չէ նկատել նրա մութ կողմերը։ Խօսելով ուսանողական համագումարների մասին ընկ· Մալումեան շեշտում է, որ դաշնակցականները աւելի պատրաստուած են եղել· բայց նա մերցնում է 1902–1905ի շրջանը, — մի ժամանակ, երբ Եւրոպայի հայ ուսանողութեան շարքերում զօրեղ շարժում կար յօգուտ Դաշնակցութեան։ Այդ այն ժամանակն էր, երբ Դաշնակցութիւնն ընդարձակ գործունէութիւն ունէր Կովկասում։ Երբ սակայն, այնուամենայնիւ, Ռուսաստանում նոր օրեր եկան, ուսանողութիւնը տեսաւ, որ Դաշնակցութիւնը չունի իտէալներ, աւելի ճիշդը, հիմքեր՝ ունեցած իտէալները բացատրելու։ Ես յիշեցնում եմ այն ուսանողական ժողովները, որ մենք ունեցել ենք Պետերբուրգում· այդտեղ մի կողմից՝ պատրաստուած մեծամասնութիւնը ոչ-դաշնակցական, միւս կողմից դաշնակցականների մի աննըշան խմբակ։ — Ուսանողութիւնը չպէտք է արհամարհել, քանի որ նա այն աղբիւրն է, որից մենք ստանում ենք մեր բոլոր մտաւոր ուժերը։ Ասել թէ «ուսանողութիւնից քիչ յեղափոխականներ են դուրս գալիս», սխալ կը լինի այն տեսակէտից, որ ուրիշ դասերն եւս խոշոր թուով յեղափոխականներ չեն տալիս։

Թոփչեան·— Իսահակեան, ուսանողների կողմից յայտարարում է, որ եթէ ժողովը չընդունի նրանց աշխարհահայեցողութիւնը՝ կը հեռանան· եւ այդ առթիւ իւր ցաւակցութիւնն է յայտնում։ Ես գալիս եմ սակայն ապացուցանելու, որ նրա ցաւակցութիւնը աւելորդ է։ Իւրաքանչիւր կուսակցութեան մէջ, մտաւոր ուժեր առաջ են գալիս ոչ թէ ուսանողութեան միջից, այլ հենց կեանքի միջից· եթէ մի կուսակցութիւն raison d'être [գոյութեան իմաստ] ունի, ուժեր միշտ էլ հրապարակ կը գան առանց ուսանողութեան· ուժերը մի՞թէ բոլորը համալսարանական պէտք է լինեն։ Մասսաների միջից շատ անգամ անհատներ են դուրս գալիս, որոնք աւելի առողջ միտք ունեն հասարակական խնդիրներ ըմբռնելու համար, քան շատ համալսարանականներ։ Մտաւորական ուժերը մեզանում, մեր կուսակցութեան միջին կրթութիւն ունեցողների շարքերից են դուրս գալիս։

Ռոստոմ·— Երբ մենք խօսում ենք տաճկահայ ուսանողների մասին, մեր ընկերները թասիբի խնդիրներ են հանում։ Ընկերների յառաջ բերած պատճառաբանութիւնները, թէ ինչո՞ւ տաճկահայ ուսանողները չեն հետաքրքրւում գործով, չհերքեցին իրականութիւնը· փաստը մնում է փաստ, որ տաճկահայ ուսանողութիւնը շատ քիչ է հետաքրքրւում յեղափոխութեամբ։

Շահխաթունեան·— Վռամեան ասում է թէ ուսանողը դեռ ուսանելու կարիք ունի։ Եթէ խօսքը կուսակցութեան սկզբունքների մասին է, այս դէպքում՝ ներկայ եղողներից շատերը կարիք ունին ուսանելու։ Ուսանողութիւնը դրել է հարց, որ Ընդհանուր ժողովը տայ իրեն մի որոշ ծրագիր· եւ նրանց այս քայլը, կրկնում եմ, շատ հասկանալի է։

Ջելալեան·— Ռոստոմը գտնում է, որ տաճկահայ ուսանողները քիչ են հետաքրքրւում յեղափոխական յեղափոխական գործով։ Դաշնակցութիւնից զատ կայ նաեւ այլ կուսակցութիւն, որի մէջ կան շատ ինտելիգենտ ուժեր· ասել է թէ տաճկահայ ինտելիգենցիան գործի շուրջն է հաւաքուած, թէեւ մենք նրանց յեղափոխական չենք համարում։

Սեպուհ·— Ուսանողութիւնը ուլտիմատումներ [վերջնագրեր] է դնում ժողովի առաջ։ Բայց արդեօք նա ծանօ՞թ է հայ իրականութեան հետ։

Իսահակեան·— Ոչ ոք չէ ասել մեզ, որ մենք կըտրական ուլտիմատում [վերջնագիր] դնենք, մենք միայն մեր ցանկութիւնն ենք յայտնում։ Մալումեանն ասում է, որ ուսանողութիւնն անշարժ է· զարմանալի է, որ այդ անշարժութիւնն աչքի է ընկնում ճիշդ այն ժամանակ, երբ Երկիրը տակնուվրայ է լինում։ Դաշնակցական ուսանողները, Մալումեանի ասելով, աւելի պատրաստուած են եղել քան սոցիալ-դեմոկրատ հայ ընկերները· այդ ճիշդ է երբ մենք գործ ունենք այնպիսի տափակ դեմոկրատների հետ, որոնք պնդում են, թէ տաճկահայ դատը բուրժուական գործ է· կամ երբ խօսքը վերաբերում է կովկասեան ինքնապաշտպանութեան խնդրին, այդտեղ նրանք իրօք յիմա՛ր դրութեան մէջ են ընկնում մեզ հետ վիճելիս· սակայն երբ հարցը վերաբերում է թէորիական [տեսական] խնդրի՝ իսկոյն երեւում է դաշնակցական ուսանողին անպատրաստութիւնը։ Ընկ· Ռոստոմ ասում է՝ ինտելիգենցիան հետզհետէ կորցնում է իւր յատուկ նշանակութիւնը· այդ ճիշդ է միայն այնտեղ, որտեղ երկիրը կուլտուրական բարձր աստիճանի վրայ է կանգնած, կեանքը



հակադիր զօրեղ հոսանքների է բաժանուած՝ դասակարգային կռուի պատճառով։ Մենք, սակայն դեռ ինտելիգենցիայի առանձին կարիքն ունենք։ Ես համաձայն եմ Վռամեանի հետ, — տաճկահայ ինտելիգենցիան [մտաւորականութիւնը] գործում է Երկրում· բայց իմ խօսքը Եւրոպայի ուսանողութեան մասին է, եւ ես դարձեալ կ'ասեմ, որ Եւրոպայում տաճկահայ ուսանողութիւնը իներտ [անգործօն] է դէպի հասարակական գործունէութիւնը։

Նիստը փակւում է։

### 34ՐԴ ՆԻՍՏ (14 Մարտ, երեկոյ)

Նախագահում է Մալումեան։

Բացակայ են՝ Իշխան, Մուրատ, Աւ· Իսահակեան, Սաֆօ։

Ապառաժի պատգամաւոր Բարսեղեանը կարդում է շրջանի տեղեկագիրը, որի վերջանալուց յետոյ՝ նախագահը հարցումները բաժանում է խմբերի·—

ա·) Կազմակերպական· բ·) Հաշուական· գ·) Ընդհարումներին վերաբերեալ խնդիրներ· դ·) Պրոպագանդա եւ ե·) Տեռորական։

Թոփչեան·— Հետաքրքիր է թէ ո՞րքան է զուտ կազմակերպական բիւդճէն։

Ստեփանեան·— Արդեօք Ապառաժը իւր բիւդճէից Երկրին տուե՞լ է որեւէ բան, դրամով կամ զէնքով։

Բարսեղեան·— Զուտ կազմակերպական բիւդճէն չեմ կարող հանել այս հաշուից, դա կարող է հաշուական յանձնախումբը անել։ Այս երեք տարուայ ընթացքում անմիջականօրէն Երկրին փող չէ յատկացուել· 1904ին ուղարկուած է Բիւրոյին՝ 2000 ռուբլի։

Զոփուրեան·— Բարսեղեան տուաւ բաւական խոշոր թուեր զէնքի եւ ռազմամթերքի, որ գտնւում են ժողովուրդի ձեռքում· արդեօք բոլոր այդ զէնքերը կռուի համար պէտքակա՞ն են կամ դրանց ո՞ր մասը անպէտք է։

Վռամեան·— Ո՞րքան է կազմակերպութեան զէնքերի թիւը։

Զոփուրեան·— Մեր կողմերում շատ են խօսում, որ նոյնիսկ դաշնակցական զինուորները մասնակցել են թալաններին։ Արդեօք ճի՞շդ են սրանք եւ ո՞ր դէպքում։ Կռիւների ժամանակ եղած թալաններին ի՞նչ գործադրութիւն է տրուած։ Ի՞նչ տոկոս էին կազմում դրսեցի զինուորները եւ ի՞նչ տեղական կամաւորները։

Անդրանիկ·— Ի՞նչքան է կազմակերպական զէնքերի թիւը։ Կռիւների ժամանակ մեծաքանակ թալան է եղել ոչխարի եւ տաւարի· արդեօք այդ թալանը ժողովուրդի՞ն է բաժանուած, թէ կազմակերպական զինուորները իրենց են յատկացրել։ Վերադարձրած թալանները որո՞նն են եղել, հայերի՞նը թէ թուրքերինը։

Շահխաթունեան·— Ես էլ եմ դնում ընկ· Զոփուրեանի տուած հարցը· բացի այդ, թող ցոյց տրուի այն գիծը, որ տարւում է կազմակերպական գործերի եւ կողմնակի մարդկանց կամ ամբոխային գործողութիւնների մէջ, որ իմանանք, թէ ո՞ր գործի համար ո՞վ է պատասխանատու։

Սեպուհ·— Երկու տարի է, որ Դաշնակցութիւնը ղեկավարում էր կռիւները եւ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը։ Այժմ կուսակցութիւնը հեռանալով գործը թողել է ժողովուրդին։ Արդեօք, եթէ որեւէ դէպք պատահի, ժողովուրդը կարո՞ղ է ինքնուրոյն կերպով պաշտպանուել։

Վարդան (պատասխանում է այս հարցերին, իբրեւ գործին աւելի մօտիկից ծանօթ) — Ժողովրդի մօտ եղած զէնքերից, ինչպէս ես եմ հասկանում, եթէ լաւերը ընտրելու լինենք, կարելի է հարիւրից 30ը դէն գցել։ Բայց կան զէնքեր, որոնք թէեւ լաւերը չեն, բայց կարելի է գործածել եւ գործածողին վնաս չեն տալ· եւ եթէ դրանք էլ հաշուենք, անպէտքները կը լինեն 20–25%։ Զէնքերի քանակը՝ Զիւանշիրում կար մօտ 50–60 հրացան· բայց ծախուել են ժողովրդին, այժմ կը լինին 25ի չափ մոսիններ· Խաչէնում կայ մօտ 15–18 մոսին· Վարանդայում՝ 15 հատ· Դիզաքում, հաստատ չգիտեմ, գուցէ 12 հատ· Զանգեզուրում՝ 30–40 եւ գուցէ աւելի· քաղաքում կայ մօտաւորապէս 150, թէ՛ բերդան եւ թէ մոսին, իւրաքանչիւրից կէս առ կէս· մաուզեր ատրճանակ՝ գուցէ 20, հասարակ ատրճանակ՝ 20–30· իսկ քաղաքի ժողովրդի մօտ ամէն տեսակից միասին մօտ 300 հրացան, իսկ ատրճանակ շատ աւելի։ Գալով թալանի հարցին՝ քաղաքում 1905ին հրդեհի պատճառով հայկական մասը ենթարկուեց թալանի· երբ ժողովուրդը փախչում էր ամէն բան թողած, այն ժամանակ թալանում էին, ով ինչ կարող էր՝ տանում էր իւր հետ, ասելով թէ միեւնոյնն է, պիտի այրուի։ Թալանին մասնակցել է ամբողջ քաղաքը ե՛ւ քաղաքացի, ե՛ւ զինուոր ե՛ւ կամաւոր։ Մենք ուզեցինք թալանողներին պատժել, բայց տեսանք, որ ստիպուած ենք ամբողջ քաղաքը պատժել։ Թալանած ապրանքներից մեր հաւաքածի գումարը, մօտաւորապէս հասնում էր 150,000ի· այդ բոլորը հաւաքել ենք տեղեկութիւն ստանալով, լրտեսելով, խուզարկելով· մինչեւ անգամ գիւղերից գտել ենք թալանուած ապրանքից։ Ապա հաւաքել ենք ժողովուրդին եւ ստուգելով վկաների միջոցով, իւրաքանչիւրի ապրանքը տուել ենք իրեն։ Թալանը շատ մեծ էր, մեծ կորուստը չենք հաշւում։ 1905ին զինուորների թիւը քիչ էր· (ապա պատմում է համառօտակի կռուի ընթացքը եւ հայկական մասի այրուիլը՝ քամու պատճառով)։ Եթէ թուրքերը վախկոտ եւ թուլամորթ չլինէին, կարող էին շատ հեշտութեամբ ներս խուժել։ Իսկ

1906ին աւելի լաւ էր կազմակերպուած· դրսից եկած զինուորների թիւը շատ քիչ էր՝ 15–20· գաւառներից շատ մարդ կար, որոնց մի մասը աւելորդ էր։ Կռիւը յաջող է անցել· ոչ մի թալան չէ եղել· քաղաքացիք խաղաղ շարունակում էին իրենց առուտուրը, իսկ սահմանների վրայ շարունակւում էր կռիւը։ Ունէինք 120 ռոճիկաւոր կռուող· բոլոր կրակած փամփուշտների կէսը զուր տեղն է կրակուած եղել։ Միայն Դաշնակցութեան պահեստից 100·000ի չափ դուրս է եկել, չհաշուած ժողովրդի կրակածը։ Մի անգամ ընդ միշտ պէտք ասել, որ սպաննուած թուրքերի թիւը երբեք չէ կարելի ճշդութեամբ իմանալ։ Մեր կարծիքով, նրանց սպաննըւածների թիւը, այս կռւում, 100ից աւելի է· նրանք ասում են որ 30 է։ Մեզնից սպաննուած է 27 մարդ, ունենք 100ի չափ վիրաւորուածներ, մեծ մասամբ թեթեւ։ Մենք շատ աւելի բարեյաջող պայմաններում ենք կռուել, քան թուրքերը· մենք ունէինք մանր ու խոշոր թնդանօթներ, ռումբ, հրթիռ, լաւ հրացանաձիգներ։ Այս բոլորը աչքի առաջ ունենալով թուրք սպաննուածների թիւը շատ պէտք լինի։ Թուրք բժիշկ Մեհմանդարովը պատմում էր, որ սաստիկ յոգնած է վիրաւորներին նայելուց, նրա ասելով վիրաւորներ շատ կային։ Գաւառներում թալանը եղել է ամէն տեղ· յարձակւում էին թուրքական գիւղերի վրայ, այրում, ձեռին ընկածը սպաննում եւ ապրանքը թալանում։ Թալանի մի մասը սեփականացուել է, օրինակ ոչխարներ, ձիեր, դրուել են Կազմակերպութեան տրամադրութեան տակ։ Կազմակերպութիւնը այդ բոլորը ծախել է ժողովուրդին, երբեմն շատ էժան· պատահել է, որ 50 կոպեկով ոչխար ենք ծախել։ Փողը յանձնուել է Կազմակերպութեան, որով զինուորներին ռոճիկ է տրուած, զէնք, ձի ենք գնել եւ առհասարակ ծախսել ենք ինքնապաշտպանութեան համար։ Այդ մուտքերը նշանակուած են հաշիւներում։ Թալաններին մասնակցել են ե՛ւ զինուորները եւ բոլորը։ Այն հարցը, թէ արդեօք ժողովուրդը ընդունա՞կ է ինքնիրեն պաշտպանելու առանց Կազմակերպութեան ղեկավարութեան՝ թւում է, թէ առանց ղեկավար մարդկանց ժողովուրդը հազիւ թէ կարողանայ ինքն իրեն պաշտպանել։ Մենք այդ ժողովուրդին բռնի ենք պաշտպանել· այժմ բողոքում են մեր արած բռնութիւնների դէմ· այո՛, բռնութիւններ եղել են, բայց յօգուտ այդ նոյն ժողովրդի։ Երբ հարկաւոր էր՝ դիրք դուրս չեն եկել, զէնք չեն գնել, ահա սրանց համար բռնութիւններ են եղել։ Շուշում բողոքողներին ես ասում էի· «Դուք ինչքան ուզում էք բողոքեցէք, բայց մենք ձեզ զոռով պէտք պաշտպանենք քանի վտանգ կայ»· իսկ երբ վտանգը անցաւ եւ խաղաղուեց, ամէն բան տուինք իրենց։

Անդրանիկ — Եթէ այժմ անսպասելի կերպով նորից հայ–թրքական ընդհարումները կրկնուին կամ, անհաւատալի կերպով, ստիպուի ժողովուրդը օրինակ վրացու դէմ կռուիլ կամ կառավարութեան դէմ, արդեօք ռազմական տեսակէտից այդ ժողովուրդը կարողութիւն ունի՞ կռուելու։

Վարդան — Ժողովուրդը վախենում է միայն կառավարութիւնից։ Բացի կառավարութիւնից ամէնքի դէմ էլ կարող է կռուել· նա կը կռուի նոյնիսկ կառավարութեան դէմ, եթէ թուրքերը չէզոք մնան եւ չմիանան կառավարութեան, շնորհիւ անառիկ դիրքերի յարմարութեան։

Անդրանիկ — Կառավարութեան ծառայած զինուորներից եւ սպաներից գտնուեցա՞ն այնպիսիները, որոնք կռիւների ժամանակ օգնէին իրենց մասնակցութեամբ։

Վարդան — Զինուորներ եղել են, բայց սպաներ մեր կողմում գոնէ ոչ մէկը չէ եղել։ Ապարանը իւր աշխարհագրական դիրքով, ամենաաննպաստ դրութեան մէջ է եղել կռուելու համար։ Միակ Ելախի ճանապարհը փակուած էր, եւ ժողովուրդը ստիպուած է եղել 5–6 օր ճանապարհ գնալ։ Պէտք ասեմ, որ մեր կողմերում պետական զինուորների եւ սպաների համակրանքը ընդհանրապէս մեր կողմն է եղել։

Սեպուհ — Խնդրում եմ տեղեկութիւններ տալ Թռուցիկ Գէորգի դէպքի մասին։

Վարդան — Այդտեղ մի թիւրիմացութիւն է տեղի ունեցել· Գէորգը իւր նախաձեռնութեամբ մի քանի զինուոր է ուղարկում, մեծ ճանապարհի վրայ պտտելու, որ տեսնեն թէ ի՞նչ կայ, ի՞նչ չկայ։ Կարգադրըւած էր ամէն միջոց գործ դնել, որ խուսափին մեծ ճանապարհի վրայ ընդհարման առիթներ տալուց։ Գնացողները տեսնում են սայլապաններ իրենց սայլերով անցնելիս, դրանց բռնում եւ բերում են Գէորգի մօտ, որը մտածելով, որ եթէ դրանց բաց թողնեն, նրանք լուր կը տան դէպքի մասին եւ կը վտանգեն գիւղը, ուստի հրամայում է դրանց կոտորել։ Մեզ յայտնում են այդ մասին։ Դատարկ սայլերը առանց տէրերի, ուշադրութիւն են գրաւում եւ հետքը բռնելով գալիս են մինչեւ հայ գիւղը· կառավարութիւնը պահանջում է սայլապաններին, ռմբակոծում է գիւղը, ահագին տանջանքներ է տալիս մարդկանց եւ պահանջում է դիակները· բայց դիակները վաղուց անյայտացրած էին։ Ես գնացի գիւղ, բացատրութիւն պահանջեցի Գէորգից, զինաթափ արի զինուորներին եւ Գէորգին հեռացրի շրջանից։

Վռամեան — Ո՞րքան գիւղ է աւերուած հայերի ձեռքով եւ ո՞րքան թուրքերի· որքա՞ն է իւրաքանչիւր կողմի վնասը։

Վարդան — Աւերուած է 70–80 թուրք գիւղ, որոնցից ամենամեծը 800 տուն էր։ Եթէ ամբողջ Ապարանի շրջանը վերցնենք եւ մանր գիւղերն էլ հաշուենք, գուցէ աւերուած թուրք գիւղերի թիւը 90ից էլ աւելի լինի, մինչեւ թերեւս 100։ Դրանց մի մասը ամբողջապէս այրուած է· մի մասը կիսով չափ է այրուած· մի մասը բնակիչները փախել են եւ գիւղը թալանուել։ Բայց յետոյ համարեա բոլորը, շատ քիչ բացառութեամբ, վերադարձել են իրենց տեղերը եւ կրկին հաստատուել։ Չեն վերադարձել նրանք միայն, որոնք ոչինչ չեն ունեցել նորից հաստատուելու համար։ Նիւթական վնասի մասին հաստատ թուեր չեմ կարող ասել, բայց այսքանը գիտեմ, որ թուրքերի նիւթական վնասը անհամեմատ աւելի շատ է քան հայերինը· մարդկային զոհերի թիւը՝ նմանապէս թուրքերինը 3–4 անգամ աւելի է։ Հայկական գիւղերից վնասուած է 10–13 գիւղ։

Անդրանիկ — Այդ շրջանում ժողովրդի զանազան դասակարգերից, վաճառական, կալուածատէր, խանութպան եւ արհեստաւոր, իւրաքանչիւրը ո՞րքան դրամ է տուել ինքնապաշտպանութեան համար։

Արամ — Ես դրան կ՚աւելցնեմ, թէ ո՛ր դասակարգը ի՞նչպէս է տուել· բռնութիւն որի՞ վրայ է գործադրուած։

Վարդան — Բռնութիւն եղել է ունեւորների վրայ։ Դրամը տուել է ժողովուրդը ըստ կարողութեան։

### Պրոպագանդա

Տաճատ — Տեղեկագրում ասուած էր, որ մարմինները ընտրուել են գիւղի ազդեցիկ մարդկանցից, այսինքն հարուստներից, աղաներից։ Իսկապէս ուզում եմ իմանալ, թէ պրոպագանդը ի՞նչպէս է եղել գիւղերում, երբ մարմինների անդամները ունեւոր մարդիկ էին։

Զոփուրեան — Ասուած էր, որ աշակերտութիւնը մի ժամանակ դաշնակցական է եղել եւ մեծ օժանդակութիւն է արել Կազմակերպութեան։ Ուզում եմ իմանալ, թէ ինչի՞ մէջ է արտայայտուել այդ օժանդակութիւնը։ Յիշուած գործարանները ո՞ւմ են պատկանում, քանի՞սը հայի եւ քանի՞սը թուրքի, եւ բանուորներից քանի՞սն են հայ եւ քանի՞սը թուրք։

Ասլան — Ինչո՞ւ է կոմիտէն Կարաբէգեանին պաշտօնական թուղթ դրել· ի՞նչպէս է բացատրում այն, որ դպրոցական հարցի շուրջը եղած պրոպագանդի համար կոմիտէն Կազմակերպութեան կնիքով թուղթ է գրում Կարաբէգեանին։

Շահխաթունեան — Եթէ Կարաբէգեանի պրոպագանդը անձնական է եղել մի դաշնակցականի դէմ, ինչո՞ւ էր կոմիտէն դրա համար պաշտօնական թուղթ գրում։

Բարսեղեան — Թէ այն տեղերում, ուր ենթակոմիտէն ազդեցիկ մարդկանցից է եղել կազմուած, պրոպագանդը ի՞նչ հետեւանքներ է ունեցել, դրա համար կոնկրէտ դէպքեր չեն եղել, որ արտայայտուէր։ Բէկերից մարմինների մէջ ոչ ոք չէ եղել։ Աշակերտները եղել են պրոպագանդիստներ, կռուողներ (ռէալական դպրոցի 6րդ դասարանը սոց.–դեմոկրատ է, 5րդի կէսը սոց.–դեմոկրատ, կէսը՝ դաշնակցական։ 4րդը դաշնակցական է։ Թեմական դպրոցը՝ դաշնակցական)։

Մաշուրեան յայտնում է որ գործարաններում 1500 չկազմակերպուած բանուոր կայ։

Շահխաթունեան — Տեղեկագրում ոչինչ ասուած չկայ կազմակերպական գործի համար· այնտեղ արհեստակցական միութիւններ կան, որոնց մասին չէ յիշուած։ Պրոպագանդիստների ի՞նչ քանակ եւ որակ կայ այնտեղ։ Արդեօք ընդհարումների ընթացքում կամ առաջ չէ՞ եղել որեւէ գործնական քայլ Կազմակերպութեան կողմից։

Զարդարեան — Սոց.–դեմոկրատները ո՞րքան կազմակերպուած մարդիկ ունին եւ մեզ հետ ի՞նչպէս են մրցում։

Բարսեղեան — Կան մի քանի սոց.–դեմոկրատներ, որոնք ոչ մի խումբ չունին։ 40 հոգի աշակերտներից ունին։ Գործարաններում չկան սոց.-դեմոկրատներ· իսկ գաւառներում ոչինչ չունին։ Հնչակեաններն էլ խումբ չունին· սրանք ունէին 40–50 գիւղ, որ անցել են մեր կողմը· Զանգեզուրում ունին մի երկու գիւղ։

Մաշուր — Դաշնակցութեան գործունէութեան հետեւա՞նքն է, որ սոց.–դեմոկրատները յաջողութիւն չունին։

Բարսեղեան — Արհեստակցական միութիւններ 2–3 ամիս է որ կազմուած են· գործնական քայլեր չեն արուած, որովհետեւ թուրք–հայկական ընդհարումները այդ չէին թոյլ տալիս· իսկ 1904ին արհեստակցական միութիւններ չեն եղել։

### Տեռորական

Անդրանիկը յիշում է որ տեղեկագրում տուած 10–15 տեռորների մէջ կար մէկը, առանձին ուշադրութեան արժանի· — տեռորի է ենթարկուած մի մարդ իր կնոջ սպաննած լինելու պատճառով· կը խնդրէ այդ մասին բացատրութիւն։

Զոփուրեան հարցնում է թէ տեռորներից քանի՞սն է յայտարարուած։

Նախագահը յայտնում է, թէ ով որ տեռորների մասին հարցում ունի, թող ներկայացնէ տեռորական յանձնաժողովին, որը այդ խնդրի մասին մանրամասն զեկուցում է պատրաստում։

Նիստը փակուելուց առաջ նախագահը դիւանի կողմից առաջարկեց ընկեր Վարդանին, իբր Լեռնավայրի Պատասխանատու Մարմնի նախկին անդամի (12), տեսնուել Սիրականի եւ Սարհատի հետ (եկած Եգիպտոսից) եւ իմանալ թէ Սարհատը ի՞նչ միտքով է եկել եւ նրանց թղթերը ստանալով, զեկուցանել ժողովին։

դարձող բանուորները իրենց մնասները ստացան միայն հայ ֆիրմաների՞ց, թէ նաեւ օտարներից: 400 զինուորը՝ Կազմակերպութեա՞ն թէ քաղաքացիների հաշուով էր պահւում:

Զարդարեան.— Ինչո՞ւ է լուծուել երկու կոմիտէն: Ի՞նչպէս է որ մինչեւ այժմ Ոսկանապատի մարմնի մէջ դեռեւս կան բուրժուա եւ կղերական դասին պատկանող մարդիկ եւ դրանց մինչեւ հիմա չէք հեռացրել: Օտար ֆիրմաները չեն ընդունում հայ բանուորներին, իսկ հայերն էլ ուզում են իրենց գործերը ծախել օտարներին. ի՞նչ է մտածում այդ մասին Կազմակերպութիւնը: Ո՞րքան զէնք կայ հայ ժողովրդի ձեռքին: Երբ հարուստները ուզեցին կազմակերպութեան դրամ տալ ինքնապաշտպանութեան համար եւ պայման առաջադրեցին ի միջի այլոց, որ այդ դրամով գնուած զէնքերը չգործադրուեն իրանց դէմ՝ ի՞նչ է նշանակում սա. ի՞նչպէս կարելի էր զէնքը գործածել նրանց դէմ:

Մանուկ.— Ինչո՞ւ մի անդամի պատճառով ամբողջ կոմիտէն հրաժարուեց: Զիֆոնի համար եղած հանգանակութեանը՝ բուրժուաններն էլ մասնակցեցին: Ինչո՞ւ պահանջուած դրամները լրիւ չվճարուեցին: Նուխուայ գիւղերը պաշտպանելու համար ուղարկուած զինուորները ի՞նչ զէնքեր ունէին եւ ո՞վ էր դրանց խմբապետը: Ի՞նչպէս եղաւ որ հիւանդանոցի մէջ ապաստանած զինուորներից միայն 40 հոգի դուրս եկան:

Զեյլպեան.— Լուրջ կերպով պահանջուած դրամը՝ պաշտօնական նամակով, ինչո՞ւ լրիւ չստացուեց:

Զոփուրեան.— Օտար ֆիրմաները հալածում են հայերին, որովհետեւ նրանց են համարում ընդհարումների պատճառը. իսկ հայ բանուորներին համարում են ամենաըմբոստ տարրը. այդ ֆիրմաները վարձում են համշարինները, որովհետեւ սրանք խաղաղ եւ հնազանդ տարր են, եւ ռուսներ՝ որոնք լաւ արհեստաւորներ են: — Դէպքերից յետոյ օտար ֆիրմաներում ծառայող հայ բանուորներն էլ բաւարարութիւն ստացան: — Զինուորները պահւում էին քաղաքի ինքնապաշտպանութեան համար հաւաքուած գումարով, որը քաղաքացիք իրանք էին հանգանակած: Իսկ վերջում գումարները այնպէս խառնուել էին, որ չէր կարելի որոշել թէ ի՛նչ փողով էին ապրում զինուորները. բայց քաղաքը այնքան չէր տուել որ բաւականանար զինուորների ապրուստի համար: — Հրաժարուած կոմիտէներից մինը Բիբիէյբաթի ենթակոմիտէն էր, որի ներկայացուցիչներից մէկին Ոսկանապատի Շրջանային Ժողովը չընդունեց իբրեւ պատգամաւոր եւ որոշեց նոր ընտրութիւն կատարել: Բիբիէյբաթի ենթակոմիտէն չկամեցաւ ենթարկուել այդ որոշման: Շրջանային մարմինների ընկերներից կազմուեց դատական մարմին, որը քննեց գործը եւ միւս երկուսին էլ մեղաւոր ճանաչեց: Այդ պատճառով կենտ. Կոմիտէն ստիպուած էր կազմալուծուած յայտարարել այդ մարմինը: Քաղաքային կոմիտէի գանձապահի հաշիւներում գտանք դրամական զեղծում եւ կորսուած դրամի համար պատասխանատու համարեցինք ամբողջ կոմիտէն: Քննութիւնը պարզեց, որ գանձապահն է միայն մեղաւոր: Դատական մարմինը նրան ժամանակ տուեց, որ գումարը վերադարձնի. հակառակ պարագային՝ կը դիմէ միջոցի: Հրաժարուեցին եւ միւսները, որովհետեւ անյարմար համարեցին դրանից յետոյ մնալ: — Խմբերի քայքայուելու պատճառը պրոպագանդիստների պակասութիւնն է: Զահելների մի մասը տատանւում է, մընացածը անջատական է. պարապող չկայ եւ խմբերը անտէր, քայքայուող վիճակի մէջ են: Հայ ֆիրմաների տարածած այն լուրը, որ իբր թէ ուզում են ծախել իրենց գործերը, մի մանէօվր էր բանուորների վրայ ազդելու համար: — Ժողովրդի մօտ գտնուած զէնքերի քանակի մասին վիճակագրութիւն չունենք: — Նուխուայ գիւղերի պահպանութեան համար ուղարկուած էր տասը զինուոր, իրենց խմբապետով. սրանց մի քանի անտակտ քայլերի պատճառով, ստիպուեցինք նրանց յետ կոչել: Նոյն դրութիւնը ստեղծուեց եւ Շամախի ու Գէօգչայ. ժողովուրդը փող չէր ուզում տալ: — Հիւանդանոցում հաւաքուած էին մօտ 1500 մարդ, որոնց մօտ կար 3–400 զէնք. երբ ժողովուրդը որոշում է զէնքերը յանձնել, 40 հոգի, որոնց մեծ մասը մեր տղաներից էին, հրաժարում են տալ եւ դուրս են գալիս, խորհրդակցելով Բալախանիի կոմիտէի երկու անդամի եւ կ. Կոմիտէի մի անդամի հետ, որոնք ներկայ էին: Սրանք դուրս են գալիս, որ միանան մի այլ ֆիրմայում եղած հայերի հետ, բայց տեսնելով որ կարիք չկայ՝ դնում են քաղաք: — Պաշտօնական նամակներով պահանջուած դրամի մեծ մասը ստացել ենք. իսկ մնացածների վերաբերմամբ, չուզելով խիստ միջոցների դիմել, չենք էլ ուզում հեշտութեամբ զիջում անել, դրա համար էլ այդպէս մնացել է: Բուրժուա եւ կղերականներին չենք հեռացրել մարմիններից, որովհետեւ նրանց ընտրել են տեղական խմբերից մի տարով. Նոր ընտրութիւնները անելու ենք Ընդհանուր Ժողովից յետոյ. թէ ի՛նչ հետեւանք կ՚ունենայ, այդ կը տեսնենք շուտով:

Ասլան.— Ընկ. Զարդարեանի հարցը հիմնուած է թիւրիմացութեան վրայ: Մի՞թէ պիտի մարմնից հեռացնել մէկին, որովհետեւ նա հոգեւորական է կամ իր ծագմամբ ու հասարակական դիրքով բուրժուա դասակարգին է պատկանում: Շատերը կարող են այդպէս լինել, բայց իրենց աշխարհահայեացքով մեր կուսակցութեան պատկանել:

Վարդան.— Ես կ՚աւելացնեմ տեղեկագրին, որ իսկապէս հայ ֆիրմաներում աւելի են գործադուլներ եղել, քան օտար ֆիրմաներում, նոյնիսկ այնպիսի դէպքում, երբ հայ ֆիրմաներում ամսականները աւելի բարձր են եղել: — Մեր ընկերներից ոմանք ինձ ասացին, որ դա մանէօվր չէ, այլ իսկապէ՛ս եղել է մտադրութիւն ծախելու:



Ասլան.— Բացատրում է, որ ոչ մի տարի, նաւթը այնպիսի բարձր գին չէ ունեցել, ինչպէս վերջերս (28 կ.) եւ նաւթարդիւնաբերողները երբեք այնպիսի դիվիդենտ [եկամտային շահաբաժին] չեն ունեցել ինչպէս այժմ, ուստի չէ կարելի հաւատալ այդպիսի լուրերին, որ իբր թէ հայերը ցանկացել են իրենց ֆիրմաները ծախել:

Զոփուրեան.— Կ. Կոմիտէն միշտ ուշադիր է եղել այդ լուրերին եւ տեղեկութիւններ է հաւաքել: Ճի՛շդ է, գործադուլ աւելի շատ հայ ֆիրմաներում է եղել. բայց դրա պատճառն այն է եղել, որ շատ ֆիրմաներ չեն կատարել «դեկտեմբերեան համաձայնութեան որոշումները»: Թէեւ Նոբէլը աւելի քիչ ռոճիկ է տալիս, քան հայ ֆիրմաներից մի երկուսը, բայց Նոբէլի միւս պայմանները շատ աւելի բարձր են հայ ֆիրմաներում եղածներից: Կոմիտէն բանուորների չափազանց պահանջները աշխատել է կանոնաւորել: Յաճախ բանուորները խիստ չափազանց պահանջներ են դնում այն նպատակով, որ գոնէ մի մասը ստանան: Ինչպէս այս վերջին գործադուլի ժամանակ, մի հայ ֆիրմայում, բանուորները «պարգեւ» են ուզեցել ստանալ օգոստի 60%ը, որպէսզի 15–20% գոնէ կարողանան ստանալ:

———

Ժողովը անցնում է «Քարի» տեղեկագրին, որը ներկայացրեց շրջանի պատգամաւոր Գուսանը: Ապա սկըսում են հարցերը:

Ընկերների ոմանց կողմից զարմանք է արտայայտւում, որ Քարը այժմ Նախագծի կողմնակից է հանդիսանում, քանի որ վաղուց չէ ինչ շատ զօրեղ ձայներ էին հնչում Նախագծի հակառակ. բազմատառագիր բողոքներ էին գալիս, թէ Դաշնակցութիւնը փոխանակ զբաղուելու իր միակ գործով, որ է Թրքահայաստանի դատը, շեղուել է Ծրագրից:

Գուսան բացատրում է, որ այդ բոլորը 6–12 ամիս առաջ էր. այժմ Դաշնակցութիւնը զտուած է բուրժուական տարրերից եւ եղած խմբերը ու արհեստակցական միութիւնները իրեն հրահանգել են՝ պաշտպանել Նախագիծը: Այժմ Քարում կան մօտաւորապէս 2000 դաշնակցականներ:

Շահխաթունեան իւր սեփական փորձից պատմում է, որ թէեւ Ռոստոմը Քարում նոր մարմին ընտրելու խոստում է առել մարմնի անդամներից, որ սրանք Նախագծին հակառակ լինելով հանդերձ չեն խանգարի Նախագծով գործողներին, բայց այնուամենայնիւ սըրանք չպահեցին իրենց խոստումը եւ ամէն կերպ արգելքներ էին յարուցանում Նախագծով գործողների դէմ: Կ. Կոմիտէի մի անդամը գործադուլարեկ եղաւ բանկի [դրամատան] գործադուլի ժամանակ. իսկ գինեվաճառների գործադուլի պահանջները բոլորը կատարեցին, բացի Կ. Կոմիտէի անդամներից մէկը, որը գինեվաճառ էր եւ չէր ընդունում առաջարկուած պայմանները:

Զեյլպեան.— «Քարում ինչո՞ւ դաշնակցականների թիւը այդքան պակասել է. ինձ ասել էին թէ այնտեղ 10.000 դաշնակցական կայ:

Թուփչեան բացատրում է, որ դա անշուշտ այն ժամանակ էր, երբ Քարում բոլորը դաշնակցական էին մեծից մինչեւ փոքրը. իսկ այժմ շարքերը զտուել են:

———

Փոքր ընդմիջումից յետոյ Երեւանի պատգամաւոր Զաւրեան ներկայացնում է իւր շրջանի տեղեկագիրը: Եւ սկսում են հարցերը:

Զարդարեան.— Տեղեկագրում ասուած էր թէ խմբերը քայքայուած են. ուրեմն ի՞նչպէս կազմուեց Շրջանային Ժողովը:

Տանատ.— Քայքայման պատճառների մասին արած տեսութեան համար, փաստերը վերցրած են Շրջանային Ժողովի արձանագրութիւններէ՞ց, թէ պատգամաւորի կարծիքն է:

Բարսեղեան.— Արդեօք կոմիտէն զէնքի համար վերջ ի վերջոյ բաւարարութիւն տուե՞ց ժողովրդին: Գիւղերից ինչո՞ւ համար են հեռացրել պրոպագանդիստներին եւ ի՞նչ նիւթի մասին էին սրանք խօսում: Արդեօք յիշուած տեղերից ժողովուրդը ընդմի՞շտ է գաղթում թէ ժամանակաւորապէս:

Անդրանիկ.— Ցաւում եմ, որ պատգամաւորներից շատերը, ոչ թէ Շրջանային Ժողովների կարծիքն են յայտնում, այլ իրենց անձնականը. իսկ ոմանք նոյնիսկ ծանօթ չեն իրենց շրջանի հետ: Այնուամենայնիւ հարցնում եմ, թէ արդեօք այլ շրջաններումն էլ կատարուե՞լ են այնպիսի բռնութիւններ, զինուորների կողմից, թէ միայն Երեւանի շրջանումն է: Ի՞նչպէս է որ խմբապետները գիւղերում հարուստների տանն էին իջեւանում: Ինչո՞ւ զէնքի պահանջին բաւարարութիւն չէ տրուած:

Մուրատ.— Զինուորների կատարած ապօրինի վարմունքների դէմ խմբապետները եւ մարմինները միջոցներ ձեռք չե՞ն առել:

Զաւրեան.— Մեր շրջանը ունի 21 կոմիտէ եւ դըրանց կողմից էլ պատգամաւորներ կային ժողովին եկած: — Ինչքան էլ որ խմբերը քայքայուած էին, այնուամենայնիւ կային մարմիններ, որոնք եւ ուղարկել էին պատգամաւորներ. իսկ երկու տեղում յաջողուել էր մինչեւ անգամ գիւղացիների ժողովներ անել, որոնց կողմից կային պատգամաւորներ: Կոմիտէի պատգամաւորը բերել էր կոմիտէի կարծիքը, իսկ գիւղացինե-

րին, որովհետեւ ժողովուրդը յեղափոխական գիտակցութիւն չէ ունեցել. հետաքրքրական է իմանալ, թէ մինչեւ հիմա Դաշնակցութիւնը ի՞նչ է արել յեղափոխական գիտակցութիւնը բարձրացնելու համար։

Անդրանիկ.— *Ընկ. Վռամեանը, Կովկասի օրինակը նկատի առնելով, ասում է, թէ ինչո՞ւ Տաճկաստանում էլ ժողովուրդը չպիտի կարողանայ պաշտպանուել։ Բայց մեր ժողովուրդը 20 տարի է, որ ոչ մի պատրաստութիւն չունի. դրա համար մենք նոր պիտի սկըսենք։ Գանձակի եւ Շուշուայ կամ այլ տեղերի ժողովուրդը վաղուց ի վեր զէնքի սովոր է, նրանք ստիպուած էին դիմադրել 4000 թաթարի, որն այնչափ էլ դժուար չէր. իսկ եթէ կառավարութիւնը գար այդ տեղերի վրայ թնդանօթներով եւ մեծ զօրութեամբ, հայերը չէին կարող դիմադրել։ Կովկասում հայերի աշխարհագրական դիրքը նպաստաւոր է. նոքա այնտեղ հոծ բազմութիւն են կազմում եւ կենտրոնները իրար մօտիկ են։ Տաճկահայաստանում կռուի հրապարակը շատ մեծ է եւ հայաբնակ վայրերը իրարից հեռու. կառավարութիւնն էլ չէզոք չէ մնում։ Մշոյ ժողովուրդը 15 տարուայ մէջ շատ առիթներ ունէր համոզուելու, որ ինքնապաշտպանութիւնը կարեւոր է. բայց նա չկարողացաւ մեր կռիւների ժամանակ մեզ օգնութեան գալ, մանաւանդ որ ունեցած զէնքերն էլ շատ չնչին էին եւ փամփուշտները կեղծ։ Վասպուրականի դրութիւնը շատ պայծառ պատկերացրին մեզ, ես էլ հաստատում եմ։ Բայց այնտեղի խաղաղութիւնը այն է, որ տնտեսական ճնշումով ստիպեցին հրացանը ծախել։ Երբ կառավարութեան զօրքերը եւ քրտերը յարձակւում են մեր վըրայ, գիւղերը չեն կարող իրար օգնութեան գալ։ Ընդհարումները լինում են 100ին 90ը քիւրտերի հետ. իսկ 100ին 10ն էլ մատնութեամբ. շատ անգամ մատնում են նոյնիսկ առանց տանջանքների ենթարկուելու։ Մենք չենք կարողացել Եւրոպայի ուշադրութիւնը գրաւել, որովհետեւ մեր զէնքը ուղղել ենք միայն կառավարութեան եւ քրտերի դէմ, մենք չենք վնասել եւրոպացիների շահերին. դրանց դէմ պիտի ուղղենք այժմ մեր զէնքը։*

Ստեփանեան *գտնում է, որ այս դրուած հարցը քննադատելու հարց չէ, դա ինքն ըստ ինքեան հասկանալի է. դա պիտի թողնել Երկրի ընկերներին, որ իրենք անեն։ Իսկ մենք այստեղ պիտի լուրջ ձեռնարկների վրայ մտածենք։ Մի մշակուած միջոց չեն առաջարկում, որ հիմնուած լինի տեղական ծանօթութեան վրայ, հայութեան թուի վրայ եւն։ Մի տեղ ուր կառավարութիւնը եւ բոլոր ժողովուրդները մեր թշնամիներն են, չեն ասում, թէ մենք ի՞նչ կերպ պիտի գործենք եւ ի՞նչ բանի պիտի ձեռնարկենք։*

Բարսեղեան.— *Մեր կազմակերպութեան նպատակը եղել է, ինչպէս ես հասկանում եմ, ոչ թէ հովանաւորել ամէն հայի կամ խումբի, կամ հատուածի, բաւական է որ նա հայ է, այլ հայ ազգի այն տարրերը, որոնք կազմում են հայ ազգը բնորոշող կոմպակտ մասսան [միակտուր դանգուածը]. ահա թէ ինչո՞ւ առաջարկում եմ՝ ինքնապաշտպանութեան գործը կազմակերպել ոչ թէ բոլոր վայրերում, այլ այն վայրերում միայն, որոնք նշանակութիւն կարող են ունենալ իբրեւ ապագայ ընդհանուր յեղափոխական շարժման աղբիւրներ եւ նեցուկներ, եւ այդ գործը կապել անպայման Դաշնակցութեան մարմինների հետ։ Այն վայրերում, ուր մարմիններ չկան, առաջ ստեղծել այդպիսիները եւ յետոյ նոքա կը ձեռնարկեն ինքնապաշտպանութեան գործին. ինչ վերաբերում է մարմնամարզական խմբակցութիւններին, դոքա երկրորդական դաստիարակիչ նշանակութիւն կարող են ունենալ։*

Մուրատ.— *Թէեւ Դաշնակցութեան սկզբունքն է եղել ինքնապաշտպանութեան համար զինելը, բայց դա առանց դրսի օգնութեան անկարելի էր. զէնք, ինտելիգենտ ուժեր եւ ռազմիկներ միշտ պակսել են։ Դրանք դրսից պիտի գան։*

Արամ.— *Հարցը պարզ է, իմ կարծիքով ինքնապաշտպանութիւնը պիտի Կազմակերպութեան ձեռներէցութեամբ լինի։ Տաճատի ասելով մենք գնում ենք դէպի արմենականութիւն։ Իսկ ես ասում եմ, որ բռնի յեղափոխութիւնը մեր վերջնական նպատակն է, եւ մենք այդ բանը պէտք է դնենք նպաստաւոր հողի վըրայ։ Իսկ եթէ արմենականները լաւ օրինակներ են տըւել, ինչո՞ւ չօգտուենք։ Ինքնապաշտպանութիւնը պիտի ձեռնարկներին նպաստող լինի։ Մենք ունեցել ենք ձեռնարկներ Սասուն, Վան. սրանք հմայք են ունեցել. մեր մամուլն ու գրականութիւնն էլ միշտ դէպի այդ կողմն են կոչ արել. իսկ Վասպուրականի գործունէութիւնը խաղաղ կերպով է տարւում եւ շատերը կարծում են թէ այնտեղ գործ չկայ եւ չեն գալիս այն կողմերը։ Այժմ պիտի երիտասարդութիւնը [լծուի] այս նոր ձեռնարկներին, եւ ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու համար պիտի գնայ ամէն կողմ. եւ ոչ թէ ընկ. Բարսեղեանի ասածի նման կենտրոնանայ միայն մի քանի տեղ։ — Տեղական զոհողութիւնը զէնքի համար պիտի լինի. դրամը՝ տեղական ժողովուրդը պիտի տայ. իսկ ղեկավարը՝ ի հարկէ, եթէ տեղացի չկայ, դրսից պիտի գայ, եւ ով ձեռնհաս է՝ նա պիտի ղեկավարէ։*

*Նիստը փակւում է ժամը 1ին, վիճաբանութեան շարունակութիւնը եւ ընկ. Վռամեանի պատասխանը թողնելով երեկոյեան նիստին։*

## 41ՐԴ ՆԻՍՏ (19 Մարտ, երեկոյ)

*Նախագահում է՝ Մալումեան։*
*Ներկայ են 23 պատգամաւոր։*
*Բացակայ են՝ Արշակ, Զաւրեան, Ցուչիկ, Սաֆօ։*



### Ինքնապաշտպանութեան հարցը

(շարունակութիւն նախորդ նիստի)

Սեպուհ.— *Ամէն ջանք պէտք է թափել, որպէսզի ժողովուրդն ամէնուրեք զինուած լինի, եւ ընդհանուր զինման տեսակէտից է որ պէտք է հասկանալ ինքնապաշտպանութեան նշանակութիւնը. ժողովուրդը պէտք է պատրաստ լինի՝ հարկաւոր դէպքում միահամուռ ուժերով ոտքի կանգնելու համար. երբ մի կէտում ապըստամբութիւն է պայթում, միւս վայրերն, արդէն նախօրօք պատրաստուած, պէտք է իսկոյն արձագանգ տան։*

Մալումեան.— *Ընկ. Վռամեանի հայեցակէտը հակասում է այն խնդրին, որ դրուած է մեր Օրակարգի մէջ. այնտեղ խօսւում է ինքնապաշտպանութեան գընդերի մասին, իսկ Վռամեան խօսեց ընդհանրապէս ինքնապաշտպանութեան մասին։ Նախ պէտք է ասել, որ ինքնապաշտպանութեան գաղափարը նոր չէ մեզանում. իսկ եթէ այդ գաղափարը մինչեւ այժմ չէ իրագործուել՝ պէտք է դրա պատճառը փնտռել ուրիշ հանգամանքների մէջ։ Վռամեան աշխատել է լայն կերպարանք տալ իւր ծրագրին՝ մի երեւոյթ, որը շատ բնորոշ է եղել մեր բոլոր ժողովների զբաղմունքներին եւ որին ես կը տայի ախտաւոր անունը։ Ախտաւոր՝ որովհետեւ մենք չենք ուզում մեր գործունէութիւնը սահմանափակել որոշ սահմաններով, այլ միշտ ընդարձակում եւ ծաւալում ենք։ Անկարելի է կազմակերպել ամբողջ Երկիրը, եւ այդ՝ 24 ամսուայ ընթացքում, ինչպէս կարծում է Վռամեանը. մի այդպիսի գործ կատարել մենք անկարող ենք նոյնիսկ 5 տարուայ ընթացքում, եթէ պայմանները մնան նոյնը։ Ի՞նչպէս կարող ենք այդ անել, երբ 15 տարուայ ընթացքում Երկիր ենք մտցրել շատ չնչին քանակութեամբ զէնք. ես չեմ խօսում այն զէնքերի մասին, որոնք գտնուելիս են եղել ժողովրդի ձեռքին, այլ այն զէնքերի մասին, որոնք Կազմակերպութեան տրամադրութեան տակ են եղել։ Կազմակերպութեան հրացաններից Սասունը վերջին ապստամբութեան միջոցին ունեցել է, ինչպէս ընկ. Անդրանիկն է ասում, միայն 173 [հատ]։ Վասպուրականը ստացել է սկզբից մինչեւ այսօր ընդամէնը՝ 5–600 հրացան։ — Արդ, եթէ մի կազմակերպութիւն կարողացել է միայն այդքան չնչին թուով զէնք հասցնել 15 տարուայ ընթացքում, նա երբեք չի կարող երկու տարուայ ընթացքում զինել ամբողջ ժողովուրդը։ Այսքանը քանակի մասին։ Ինչ վերաբերում է սիստեմին՝ պէտք է փոխել։ Ես լիովին համաձայն եմ ընկ. Բարսեղեանի մտքի հետ, որ նախքան մի շրջան հիմնովին կազմակերպելը՝ չպէտք է այլ շրջաններ անցնենք. մինչեւ Էրզրում, Վան եւն. չկազմակերպուին վերջնականապէս՝ կարիք չկայ դիմելու կենտրոնից շատ հեռու այլ վայրերին։ Քաղաքական տեսակէտից սխալ է՝ վազել դէպի ամէն մի անկիւն ուր մի խումբ հայ կայ. մենք արել ենք այդ սխալը, ձգտել ենք կազմակերպել հեռաւոր գաղութներ՝ Եգիպտոս, Ռումանիան, նոյնիսկ Հնդկաստանը եւն., եւ այդպիսով մենք միայն վնասել ենք մեր գործին, փոքր, երկրորդական վայրերի պատճառով՝ կենտրոնները յաճախ անուշադրութեան մատնելով։ Հարկաւոր չէ զբաղել բոլոր վայրերի հայերով միայն այն պատճառով, որ նրանք մեր ազգութեան ու կրօնին են պատկանում։ Պէտք է կազմակերպել միայն այն վայրերը, որոնք անմիջական մասնակցութիւն կարող են ցոյց տալ մեր քաղաքական գործին, որտեղ ուժերը կարող են կենտրոնանալ եւ նպաստել հայ համայնքի քաղաքական շարժման։ Գործունէութեան այս ընդլայնման սիստեմը ես համարում եմ հիմնովին սխալ։ Մեր գործունէութեանը պէտք է սահմաններ դնել։ Ինքնապաշտպանութեան գործի համար մի առանձին մարմին հաստատելու կարիք չկայ. Կազմակերպութիւնն ինքը կը հոգայ այդ մասին։ Ի վերջոյ ես կարծում եմ, որ աւելի յարմար կը լինէր, խնդրի իմաստի տեսակէտից «ինքնապաշտպանութեան» փոխարէն ասէինք՝ «ժողովրդի զինման գործ»։*

Արամ.— *Անցեալ գործողութիւններն տեղի են ունեցել բացառիկ պարագաներում. այդ պարագաների փոփոխուելովը առաջ են եկել դիւրութիւններ՝ աւելի յաջող գործողութիւններ կատարելու համար. օրինակ միայն այս տարուայ ընթացքում մենք կարողացել ենք աւելի ռազմամթերք փոխադրել Երկիր, քան ամբողջ 15 տարուայ ընթացքում։ Ուրեմն ներկայի գործողութիւնները չենք կարող հիմնել անցեալի բացառիկ հանգամանքների վրայ։*

Մալումեան.— *Ես համաձայն եմ ընկ. Արամի հետ, որ անցեալը շատ խնդիրներում չէ կարող չափ հանդիսանալ ապագայի համար. բայց դա վերաբերում է կա՛մ սկզբունքային հարցերին կամ նոր ձեռնարկներին. երբ սակայն խնդիրը գործի տեխնիկային է վերաբերում, այս դէպքում անհրաժեշտ է ուշադրութեան առնել անցեալը։ Եթէ վերջին մէկ տարում Վասպուրականը կարողացել է աւելի ռազմամթերք ստանալ, քան բոլոր նախկին տարիների ընթացքում, պատճառն այն է, նախ, որ Կազմակերպութիւնը 15 տարուայ փորձառութեան բովով է անցել. առանց այդ փորձառութեան այսօր անհնարին կը լինէր, Արամի ասած քանակութեամբ զինամթերք մտցնել Վասպուրական։ Բացի դրանից չպէտք է մոռանալ, որ նոր անակնկալ հանգամանքների շնորհիւ, ինչպէս օրինակ հայ–թրքական ընդհարումները Կովկասում, հեշտութեամբ կարող է դժուարանալ զէնքի փոխադրութեան գործը։*

Ստեփանեան.— *Ամբողջ Երկիրը զինելը դժուար է։ Վասպուրականը այո՛, միջոց կ՚ունենայ իւր աշխարհագրական դիրքի շնորհիւ զէնք ստանալու, քանի որ գտնւում է Ռուսաստանի եւ Պարսկաստանի սահման-*

ներին կից։ Բայց հարց է, արդեօք ուրիշ վայրերն էլ, ինչպէս՝ Տարօն, Տիգրանակերտ եւն, կարո՞ղ են Վասպուրականի չափ զէնք ձեռք բերել։

**Ջելալեան**·— Երբ Վռամեան խօսեց ինքնապաշտպանութեան մասին, նա որոշ պարագայ ունէր աչքի առաջ։ Այսօր հազարաւոր երիտասարդներ կան Ամերիկայում, որոնք բաղձանք ունեն, որ ինքնապաշտպանութեան գաղափարը իրագործուի Երկրի մէջ։ Նրանք այդ բանի համար պատրաստ են ամէն տեսակ զոհողութեան, միայն թէ գործի գլուխն անցնէր Դաշնակցութիւնը։ Եւ մենք պէտք է անշուշտ, ղեկավար հանդիսանանք այս դէպքում։ Ստեփանեան ասում է, թէ հեռաւոր գաւառներ անկարող կը լինեն զէնք ստանալ։ Բայց ինչպէ՞ս է եղել, որ Կովկասին զէնք է հասցուել, նոյնիսկ Մոսկուայից· եթէ ռուս կառավարութիւնը, որ աւելի զօրեղ է տաճիկ կառավարութիւնից, այսպէս թէ այնպէս միջոց է տալիս զէնք փոխադրելու, մենք եւս Տաճկաստանում կարող կը լինենք միջոցներ ունենալ· եթէ կարելի է կաշառել ռուս չինովնիկներին, նոյնը կարելի է անել եւ տաճիկ պաշտօնեաներին։

**Ռոստոմ**·— Պանդուխտ գաւառացիները, ինչպէս Ջելալեանն ասաց, ուզում են իրենց երկրի համար որեւէ գործ կատարած լինել։ Այս ձգտումը յաճախ երեւան է գալիս նաեւ Կովկասում, իւրաքանչիւրն ուզում է օգնել միայն իր սեփական գաւառին, խմբեր են կազմում ու զէնք հայթայթում յատկապէս այս կամ այն գաւառի համար։ Ես կարծում եմ, որ Կուսակցութիւնը պէտք է քաջալերէ այսպիսի ձգտումներին։

**Մուրատ**·— Ընկ· Մալումեանն ասում է, որ Դաշնակցութիւնն անկարող է ամբողջ Երկիրը զինել եւ որ 15 տարուայ ընթացքում շատ չնչին քանակութեամբ զէնք է մտցրել Երկիր։ Ինչո՞ւ, որովհետեւ ես կարծում եմ այդ տակտիկան եղել է պակասաւոր·— մենք ունեցել ենք գործողներ անընդհատ մի որոշ շրջանում· երբ եղած գործիչը հեռանում է, չէ գտնուել մի ուրիշը որ սկսած գործը շարունակէ այնտեղ։

**Վարդան**·— Այստեղ խօսուեց մի հարցի մասին, որը չափազանց լուրջ է· ուստի արժէ նրա վրայ կանգ առնել։ Դաշնակցութիւնը գործել է 15–16 տարի եւ ձեռք է բերել որոշ փորձառութիւն, որից պէտք է օգտուել այժմ։ Առաջ կարծւում էր, թէ 10–12 հոգով կարելի էր ազատել Հայաստանը· երբ մենք 12 հոգով Երկիր մտանք, 18 հրացանով, ո՛րքան վստահ էինք մեր այդ ուժի վրայ, մեծամեծ գործեր կատարելու յոյսն ունէինք։ Երկրորդ անգամ Երկիր մտանք 22 հոգով, 33 հրացանով·— այլեւս ո՞վ կարող էր մեզ դիմադրել։ Այդ ժամանակ ոչ թէ զգացմունքը, այլ խոր համոզումն էր մեր մէջ տիրողը, թէ այսպիսով կը լուծենք Հայկական Հարցը։ Այսօր սակայն մենք այլեւս չունենք այդ նախկին հաւատքը։ Սասունն ապստամբուեց, Վասպուրականի կռիւները տեղի ունեցան, Պոլիսը շարժուեց,— բայց այդ բոլորից յետոյ, ո՛չ մի դրական արդիւնք չունեցանք, որպէսզի կարողանայինք գործը շարունակել նոյն եռանդով։ Ոգեւորուած էինք ռամկավարութեան [ժողովրդավարութեան], սոցիալիզմի գաղափարներով, առանց մտածելու, որ դեռ Երկրում չըկայ նոյնիսկ կեանքի եւ գոյքի ապահովութիւն· բայց յետոյ համարեա թէ լքուեցինք· մեր ընկերներից շատերը ընկան,— ի զո՛ւր։ — Առաջ ինքներս մարդիկ էինք պահանջում՝ նորանոր կռիւներ մղելու համար, համոզուած որ, որքան աւելի մարդ ունենանք այնքան աւելի շուտ կը հասնենք մեր նպատակին։ Բայց մի շարք փորձերից յետոյ, մի տեսակ ընկճուեցինք· երբ մեզ հարցնում էին Երկրի մասին, մենք այլեւս չէինք կարողանում պատասխան տալ։ Հասկանալի է սակայն, որ մեր այդ նախկին տակտիկան ժամանակի բնական արդիւնքն էր. աչքի առաջ ունէինք Բուլղարիան, Կրետէն եւն, որոնք կռուով, ապստամբութեամբ ձեռք բերին ազատութիւնը· մենք էլ նոյնպէս պէտք է վարուէինք՝ մեր խորին համոզմամբ։ Մենք պէտք է կռուէինք անպայման, քանի որ մեզ էր վիճակուել կռուելը, մեր հայրերը մեզ համար հող չէին պատրաստած եղել, որպէսզի մենք այլեւս տակտիկայով շարունակէինք սկըսուած գործը։ Բայց այսուհետեւ էլ նոյն ճանապարհով ընթանալ՝ անկարելի է այլեւս։ Յեղափոխութեան պատճառով ժողովուրդը կոտորւում է· ի հարկէ պէտք է կոտորուէր, քանի որ իւրաքանչիւր յեղափոխական շարժում զոհեր է պահանջում· բայց կոտորուելուն էլ չափ ու սահման է հարկաւոր դնել· անվերջ կոտորուելը հերոսութիւն չէ։ Գոնէ մենք էլ փոխադարձաբար կոտորելու միջոց ունենայինք, դեռ էլի կարելի էր հաշտուել իրականութեան հետ, ինչպէս օրինակ Կովկասում, կոտորուելու հետ միասին նաեւ կոտորում ենք։ Բայց Երկրում, միայն կոտորւում ենք· եթէ մի 10 քիւրտ ենք սպանում, փոխարէնը ամբողջ գիւղեր են ոչնչացնում։ Մինչեւ ե՞րբ։ — Պէտք է փոխենք մեր ճանապարհը։ Սարսափելի է տաճկահայ իրականութիւնը։ Օգտուենք մեր անցեալից· մենք պէտք է մեղմենք նաեւ մեր ձգտումները։ Մենք այլեւս չենք ուզում անկախութիւն, ինչպէս առաջ· բաւական է, որ մեզ տան միայն կեանքի ու գոյքի ապահովութիւն, որ առնուազն մարդ լինելու իրաւունքն ունենանք։ Լեգալ ուժեր պէտք է մտցնել Երկիր, որոնց մեծ կարիք կայ այնտեղ։ Նրանց գործունէութիւնը անհրաժեշտ է, օրինակ, Կիլիկիայում։ Երբ ես երկու տարի առաջ գնացի Կիլիկիա, ժողովուրդը միանգամայն անպատրաստ գտայ յեղափոխական գործի համար։ Այնտեղ չգիտեն նոյնիսկ մայրենի լեզուն, գաղափար չունին բնաւ թէ ինչե՛ր են կատարւում Սասունում կամ այլ տեղերում։ Եկ ու այդպիսի մարդկանց քարոզիր, որ նրանք զինուեն։ Նախքան զէնքը, նրանց պէտք է գիտակցութեան բերել։ Այս պատճառով լեգալ գործիչներ են հարկաւոր այնտեղ։



Պէտք է աշխատել, որ փախստական մարդիկ քիչ լինին որքան կարելի է։ Եթէ դրսից մի քանի մարդիկ անցնեն Կիլիկիա, որպէս լեգալ գործիչներ, նրանք անհամեմատ աւելի օգտակար կը լինեն։ Ապա միայն դրսից սպասելի զէնքի վրայ յոյս դնել չէ կարելի, դրսի օգնութիւնը բաւականանում է միայն առժամանակ, եւ նրանով բացառապէս ապահովել ժողովուրդը՝ մենք չենք կարող։ Դրսից հրացաններ են ստացւում, բայց դրանցից իւրաքանչիւրը քանի՞ փամփուշտ է ունենում, — շատ քիչ, այնքան որ նրանով կարելի է կռուել հազիւ մէկ–երկու օր։ Ներսում հենց հարկաւոր է միջոցներ ստեղծել զէնք ձեռք բերելու համար։ Ներսում պէտք է ունենանք զինուորական ինստրուկտորներ [դաստիչներ]· քաջ տղաներ շատ կան, բայց զէնք բանեցընել չգիտեն, որովհետեւ սովորեցնողներ չեն ունեցել։ Այս բոլորը պէտք է ստեղծել ներսում։ Միեւնոյն ժամանակ դրսից եկած ուժերի ներկայութիւնը անհրաժեշտ է· ընդհանրապէս դրսեցին հաւատք է ներշնչում ժողովրդին եւ սրա ակնածութիւնը ձեռք բերում։ Ինքնապաշտպանութիւնը զատել յեղափոխական գործունէութիւնից՝ չէ կարելի, սրանք իրարից անբաժանելի են։

**Սաքօ**·— Ոչ մի գործիչ, դրսեցի թէ ներսեցի, չէ կարող լեգալ գործել, որովհետեւ իսկոյն գրաւում է կառավարութեան ուշադրութիւնը։ Հրայրն անգամ անկարող եղաւ լեգալ մնալ։

**Վռամեան**·— Ես կ՚ուզէի, որ այս խնդիրը աւելի շատ վիճաբանութեան նիւթ դառնար։ Եղած պատասխանների մէջ ես գտայ շատ իրաւացի դիտողութիւններ, նաեւ շատ թիւրիմացութիւններ։ Իմ հիմնական միտքս էր ա՛յն, որ ինքնապաշտպանութեան հողի վըրայ պէտք է կազմակերպել եւ զինել այն հայաբնակ վայրերը, որոնք մինչեւ այժմ դուրս են մնացել մեր ռազմական կէտերից։ Այդ այն վեց վիլայէթներն են, որոնց հետ 61րդ յօդուածի հիման վրայ կապուած է Հայկական Հարցի լուծման խնդիրը· իմ խօսքն այդ վայրերի մասին է, ուստի ես չեմ ուզել աչքի առաջ ունենալ այն բոլոր կէտերը ուր հայ կայ։ Այստեղ ասացին, որ ինքնապա՛շտպանութիւնը, ինքնըստինքեան, մի պահպանողական երեւոյթ է· բայց որովհետեւ դա մինչեւ այժմ գոյութիւն չէ ունեցել ժողովրդի մէջ, նրա երեւան գալն արդէն պէտք է մի յառաջադիմական քայլ համարել։ Շատ տեղերում ժողովուրդը զուրկ է զէնքի գիտակցութիւնից եւ այդպիսի վայրերում մեզ հարկաւոր է սկսել ուղղակի այբբենից· պէտք է այդ սիստեմով գործել։ Ընկերներից մէկը նկատեց, թէ իմ այսօրուայ զեկուցումը միակողմանի է· բայց այդ նկատողութիւնն ինքնին անհիմն է, քանի որ ես խօսում եմ մեր յեղափոխական ամբողջ ծրագրի միայն մէկ կէտի մասին· միւս կէտերին կը վերադառնամ հետագայում։

Անդրանիկը յոյս չունի, թէ միայն ինքնապաշտպանութեան միջոցով կարելի կը լինի յաջող կռիւ մղել կառավարչական զօրքերի դէմ· օրինակ բերեց Շուշին·— Եթէ զօրքերը շարժուէին, հայկական ոչ մի ինքնապաշտպանութիւն ույժ չէր ունենայ դիմադրելու։ Բայց ես ասում եմ, որ ինքնապաշտպանութիւնը խաղաղ ժամանակների համար է· միթէ անպատճառ եւ միշտ զօրքի՞ հետ է, որ պէտք է գործ ունենանք· չէ՞ որ կարող է յանկարծ մի այնպիսի օր գալ, երբ հրապարակի վըրայ զօրք թերեւս բոլորովին էլ չլինի։ Հարցի էութիւնը նրանումն է, որ ժողովուրդը ձեռքին զէնք ունենայ պատրաստ։ Մալումեան ախտաւոր կոչեց մեր ընդլայնացման սիստեմը։ Սակայն ինչպէս արդէն վերեւում նկատեցի, ես չեմ ասում, թէ մեր գործունէութիւնը պէտք է տարածել ամէնուրեք։ Ոչ էլ կարծում եմ, որ 24 ամսուայ ընթացքում կարող ենք ամբողջ Երկիրը զինել· խօսքս՝ գործի մեխանիզմը կազմելու մասին է, մի բան՝ որի համար ասածս երկու տարին՝ բաւական է լինելու։ Ստեփանեանը զուր է կասկածում, թէ Վասպուրականից դատ միւս շրջանները դժուարութեամբ են զէնք ստանալու· եթէ Վասպուրականը նպաստաւոր պայմաններ ունի, նոյնը կարող են ունենալ եւ միւս գաւառները· իւրաքանչիւր վայր ունի իր տեղական ուրոյն յարմարութիւնները։ Եթէ միայն փորձուած մարդիկ լինեն, բոլոր շրջաններին կարելի է զէնք հասցնել։ Լեգալ ուժերն անհրաժեշտ են· իլլեգալ գործիչները հալածւում են, իւրաքանչիւրը հազիւ երկու տարի կարողանում է ապրել· բայց բաւական է, որ իւրաքանչիւրը դրանից հերթով չորս հինգ ամիս մնայ կամ շրջի մի շրջանում, ահագին գործ կատարած կը լինեն այդպիսով։ Ես համաձայն չեմ, որ մեր ամբողջ գործունէութիւնը կենտրոնանայ միայն որոշ շրջանում։ Տաճկահայաստանը միայն Վասպուրական–Սասունով սահմանափակել չէ կարելի· բոլոր հայաբնակ վայրերն էլ պէտք է մասնակցեն գալիք ընդհանուր ապստամբութեան· որովհետեւ, երբ միայն Սասունն է ոտքի կանգնում, նրա պարտութիւնը լքում է առաջ բերում միւս վայրերի մէջ։ Մէկ կէտի վրայ չպէտք է կապել ժողովրդի յոյսերը· կազմակերպենք ե՛ւ մնացած վայրերը, Սեբաստիան, Տիգրանակերտը եւն· ոչ ոք չէ ուզել ուշադրութիւն դարձնել նրանց վըրայ· այսօր ժամանակն է վերջապէս որոշելու, թէ ո՞վ է լինելու պատասխանատուն այդ տեղերի համար։

**Նախագահը** փակում է վիճաբանութիւնները եւ հարց դնում, թէ մի բանաձե՞ւ կազմել քննուած հարցի վերաբերմամբ, թէ ընտրել մի յանձնախումբ, այդ մասին զեկուցում տալու համար։

Բանաձեւեր են առաջարկում՝

1· **Ռոստոմ** (բանաձեւ 1·)·— Յանձնարարում է Տաճկահայաստանում գոյութիւն ունեցող բոլոր մար-

Բայց ինչո՞ւ պատրաստութեան, զինման շրջանի մէջ մտցնեց նաեւ Էրզրումը, — քանի որ սա գտնւում է Կովկասի մօտիկ, քաղաքականապէս բաւական հաստատ հայութիւն ունի, եւ յարմարութիւն՝ զինուելու եւ շարժուելու: Այստեղ Թրքական շարժումը բաւական խոշոր քայլեր է անում եւ հենց համերաշխութեան[?] համար պիտի Էրզրումն ալ մտցնենք մեր զինման շրջանի մէջ, ստեղծելով այնտեղ կազմակերպական մարմիններ: — Ուրեմն Ապստամբական վայրի կենտրոնը պիտի լինի Վասպուրականը կցուած Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթների մի մի մասի հետ. իսկ այլ ապստամբական ձեռնարկներով չզբաղուենք: Ընդհանուր Ժողովը պիտի հրահանգէ չանել որեւէ ապստամբական ձեռնարկ, նախքան որոշ պատրաստութիւն ունենալը. սա բխում է մեր 15 տարուայ դառն փորձերից: Զինել կռուելու ընդունակ ժողովրդի մինչեւ 50%ը, ապա միայն ձեռնարկել շարժման: Իմ առաջարկը ամփոփում եմ երեք գլխաւոր կէտերում: 1) Կանգ առնել միայն մի ռայոնի [շրջանի] վրայ. 2) Որեւէ ապստամբական շարժում չլինի մինչեւ առաջիկայ Ընդհանուր Ժողովը. 3) Պարտաւորեցնել զինել զէնք կրելու կարող ժողովրդի 50%ը, անմիջական ձեռնարկներ սկսելուց առաջ:

Ստեփանեան.— Լաւ կը լինէր, որ նոր ձեռնարկ անելուց առաջ, անցեալ սխալները լաւ պարզուէին: Մի ապստամբական յաջող ձեռնարկ կազմելու համար, հարկաւոր է իմանալ տաճիկների ներքին շարժումների բնոյթը, որպէսզի հասկանանք, թէ նրանցից ո՞րքան կարող ենք օգտուել, որ մեր դատը իւր ինքնուրոյնութիւնը չկորցնի: Ո՞րքան պիտի լինեն մեր յոյսերը դիպլոմատիայի [դիւանագիտութեան] վրայ: Որեւէ շարժում անելու համար, ես կարծում եմ, պիտի սպասել մինչեւ ռուս-տաճկական պատերազմը, որը ես համարում եմ մեզ համար ամենանպաստաւոր մոմենտը [պահը]. հարկաւոր է այս խնդիրները բոլորը ուսումնասիրել, եւ ապա միայն գործի ձեռնարկել: Եթէ մենք այժմ էլ սկսենք միայն Վասպուրականում կենտրոնացնել մեր ուժերը, ինչպէս առաջ Սասունում էինք անում, այժմ էլ Թուրքը կը սկսի իր ուժերը կենտրոնացնել այնտեղ, ուր մենք ենք կենտրոնացնում, եւ մի օր ամէն բան կը խլի մեր ձեռքից: Սրա առաջն առնելու համար պիտի մի միջոց մտածել, որ մեր ամբարածը Թուրքը չտանի:

Արամ.— Ես կարծում էի, որ մեր բոլոր անցեալ անյաջողութիւնները նկատի առնելով, Ընդհանուր Ժողովը ոչ թէ պիտի նորից ապստամբութեան ծրագիր կազմէր, այլ մեզ մի բան ասէր, որ մեր գործելակերպը անցեալում աննպատակայարմար է եղել: Ներկայումս մենք ոչ թէ պիտի նոր ձեռնարկների մասին մտածենք, այլ պիտի աշխատենք մի նպատակայարմար տակտիկա ընդունել, որից կը բխեն նոր ձեռնարկները: Հին մեթոդը շարունակելով մենք նոյն հին սխալները կ'անենք: Ռոստոմի առաջարկած ծրագրի իրագործելու ծանրութեան կենտրոնը տեղափոխւում է արտասահման. նա խօսում է, այնպիսի խնդիրների մասին, որոնք կարող են խօսուել արտասահմանում: Այն ինչ ապստամբութեան կարելիութիւնը պիտի զատել Երկրի տեսակէտից. բայց նա ներսում լինելիք նախապատրաստական ձեռնարկների մասին ոչինչ չէ ասում: Այդ կողմից շատ է կաղում զեկուցումը. ես ուզում եմ այդ կէտի վրայ կանգ առնել: — Ռոստոմը խօսում էր այն մասին, թէ պէտք է շարժումը փոխանակ մի գաւառակով սահմանափակելու, ընդհանուր դարձնել: Նա յիշում է ռազմական, տեխնիկական և քաղաքական նպաստաւոր պայմաններ, բայց որոնք Երկրի հետ կապ չունեն: Մեր պակասութիւնը հենց այդ է եղել, որ ապստամբութեան ֆունդամենտը [հիմքը, էականը, պատուանդանը] փոխանակ ներսից կազմելու, դուրս ենք տարել: Օրինակ, Սասունի շարժումների ժամանակ, Ընդհանուր Ժողովի որոշման համաձայն պիտի նրանց օգնէին դրսից եկած խմբերով. բայց խմբեր սկսել են ուղարկել միայն այն ժամանակ, երբ արդէն Սասունը վաղուց ընկճուած էր: Մենք այնպէս չենք արել, որ Երկրի գործողութիւնների հրահանգը հենց Երկրից բխի. մենք միշտ ծանրութեան կենտրոնը տեղափոխել ենք արտասահման: Վասպուրականի մեր ընկերները առաջարկել են, որ Ընդհանուր Ժողովը ոչ մի ձեռնարկ չնախագծի: Այլ պիտի ստեղծել Երկրում ուժեղ կազմակերպութիւն, ժողովուրդը զինել: Տաճկաստանում ներկայիս դաշնակցական գործունէութեան վրայ նայել լոկ իբրեւ ինքնապաշտպանութեան վրայ: Իսկ երբ Երկրի մէջ ստեղծուած կը լինի ուժեղ մարմին եւ կը հաւաքի կարեւոր տեղեկութիւնները, այն ժամանակ միայն առաջիկայ Ընդհանուր Ժողովը կարող է ապստամբութեան որեւէ ծրագիր մշակել:

Ջեյլեան.— Խօսել ապստամբութեան մասին, նշանակում է խօսել այն մասին, թէ յեղափոխութիւնը կա՛մ դադարեցնել կամ շարունակել: Այնինչ ապստամբութիւնը մեր գլխաւոր գործն է, դրա մասին չէ, որ մենք պիտի խօսենք, այլ տակտիկի մասին. ո՞րտեղ եւ ի՞նչպէս անել ապստամբութիւնը: Միանում եմ այն կարծիքին, որ ապստամբավայրը պիտի լինի յարմարութիւն ունեցող վայր, ուր կայ հոծ հայութիւն եւ կապեր ունի արտասահմանի հետ: Ճիշդ է, որ Վասպուրականը եւ Մուշ-Սասունը պիտի կենտրոն լինին. իսկ Էրզրումը դրան չպիտի կցուած լինի: Մենք այնտեղի Թուրքերի հետ կարող ենք դաշնակցական [?] կապեր ունենալ եւ այդ շարժմանը որոշ ընթացք տալ. Էրզրումում մենք պիտի միայն ինքնապաշտպանութեան գործով զբաղինք եւ նպաստենք Թուրք յեղափոխութեանը, եթէ միայն դա գոյութիւն ունի: Պէտք է միաժամանակ ընդունել նաեւ ցուցական գործունէութիւնը, կապուած ապստամբական գործողութիւնների հետ: Թէ ե՞րբ անել ապստամբութիւնը, մեր ընկերների մէջ եւս կարծիքների տարբերութիւն կայ. ոմանք ասում են, թէ առաջ պէտք է լաւ ուժ ստեղծել, իսկ ոմանք ասում են, թէ դրանից աւելի պիտի նշանակութիւն տալ յարմար մոմենտին: — Շատ ուժ ունենալը ի հարկէ լաւ բան է: Բայց Սասունի օրինակը մեզ ցոյց տուեց, որ Թոյլ չեն տալիս պատրաստուելու: Ես առաջարկում եմ, անմիջապէս սկսել շատ ուժ պատրաստելը, մանաւանդ որ այժմ դրա համար պատրաստ հող ունենք, եւ յարմար մոմենտը ձեռքից բաց չթողնել: Սուլթանի մահը, մակեդոնական շարժումները, ռուս-Թրքական պատերազմը, սրանք յարմար մոմենտներ են: Տաճկաստանի հայութիւնը, նոյնիսկ ամենահոծ բազմութիւն եղած տեղում, չէ կարող քսան տարի եւս դիմանալ. ծանր հարկերը, գաղթը, ծննդաբերութեան դադարելը, այնպիսի բաներ են, որ սպառում են հայ ազգաբնակութիւնը Երկրում. երկար չէ կարելի սպասել: Լուրջ կերպով պիտի այդ մասին խորհել:

Զարդարեան.— Ասում են, որ մեր այժմեան դրութիւնը այն է, ինչ որ մի կառավարութեանը, որ պատերազմի առաջ է կանգնած: Բայց մի կառավարութիւն իւր ձեռքի տակ ունի այն բոլոր պայմանները, որոնք նրան հարկաւոր են պատերազմի պատրաստուելու համար: Իսկ մենք այդ չունենք, եւ այդ է պատճառը, որ մեր ձեռնարկները վիժել են: Ուստի մենք պիտի աչքի առաջ ունենանք յաջողութեան եւ անյաջողութեան բոլոր պայմանները: Անյաջողութեան պարագաները աւելի զօրաւոր են մեզ համար: — Ի՞նչ երաշխաւորութիւն կայ, որ կառավարութիւնը գծուած շրջանը կամ մեր ուժը չոչնչացնի հարստահարութեամբ եւ խուզարկութեամբ: Ինչպէս Սասունը, կառավարութիւնը կարող է նաեւ Վասպուրականը վիժեցնել: Բայց մենք այդ մասին չպիտի խօսենք: Միեւնոյնն է, ժողովուրդը խաղաղ ժամանակ էլ նոյն հարստահարութիւնը ու վնասը պիտի կրէ ինչ որ ապստամբութեան ժամանակ: — Մենք պիտի ունենանք երկու ծրագիր, մէկը այն դէպքի համար, երբ կառավարութիւնը ուզում է ոչնչացնել մեր ուժը, չսպասելով, որ մենք բաւական ուժ հաւաքենք. այդ դէպքում ընկերները չպիտի հանդուրժեն եւ պիտի ապստամբեն: Դրանով մենք կը շահենք այն, որ փոխանակ մեր ուժերը վատնելու, որոշ հարուած տուած կը լինենք: Սրանք անյաջողութեան ազդակներ են: — Իսկ երբ մենք ապստամբելու վիճակում լինենք, ի՞նչ յաջողութեան ազդակներ կան: Դրանք երկու տեսակ են՝ արտաքին եւ ներքին: Արտաքին յաջողութեան ազդակներն են՝ եւրոպական դիւանագիտութեան նպաստաւոր դիրքը եւ յարմար րոպէները. իսկ ներքինը՝ Թուրք ներքին խռովութիւնները եւ Սուլթանի մահը: Համոզուած ենք, որ Սուլթանի մահով նոր թատերաբեմ է բացւում Թուրքիայում. Թուրք շարժման մասին ես մեծ հաւատք չունեմ մօտաւոր ապագայում. բայց պալատական դաւադրութիւնները մեծ դեր պիտի խաղան: Այդ ժամանակից մենք կարող ենք օգտուել: Պուլկարիայի պատերազմը Թուրքիայի հետ գրեթէ անխուսափելի է. գուցէ դա սկսուի Սուլթանի մահի հետ միաժամանակ: Մենք պիտի այդ մոմենտները աչքի առաջ ունենանք եւ մեր ծրագիրը դրանց հետ յարմարեցնենք: — Ասում են, որ եւրոպական դիւանագիտութիւնը շօշափելի արդիւնք չէ տուել: Բայց նա կը տար եթէ մենք ապստամբութիւն արած լինէինք. մինչեւ այժմ մենք միայն ցոյցեր ենք արել եւ ոչ ապստամբութիւն: Միայն տեւական ապստամբութեան դէպքում դիւանագիտութիւնը կը միջամտէ: — Ես առաջարկում եմ կազմել երկու ծրագիր. 1.) Պատահականութեան համար, եթէ կառավարութիւնը չուզենայ թոյլ տալ, որ մենք մեր պատրաստութիւնները վերջացնենք: 2.) Երբ մենք մեր ծրագրած քանակութեամբ կը կարողանանք ուժ կենտրոնացնել Երկրում:

Անդրանիկ.— Շարունակ յիշում են, թէ անցեալում մեծ սխալներ ենք արել իբր թէ: Բայց պիտի նկատի ունենալ, որ գնացած խմբերից 90% զէնք բանեցնել չեն իմացել: Խմբերը ճանապարհ են ընկել, տեղին անծանօթ, միայն վալադի յուսով. պատահել է, որ մինչեւ անգամ խմբապետը չէ իմացել զէնք գործածել: Եթէ այս սիստեմով պիտի փորձենք, Երկրի 50%ը զինելը երազ է: Միթէ եղած գործողութիւնները, որ այժմ սխալ ենք համարում, օգուտ չե՞ն ունեցել: Սասունը 1894ին՝ հրացանով է կռուել միայն, բայց այն ժամանակ նա աւելի արձագանդ տուեց, քան 904ին: 94ից անմիջապէս յետոյ մենք ենք մտել Սասուն, ապա եկել են եւ ուրիշները, կառավարութիւնը այդ նկատել է. 903ին մի ձիաւոր խումբ է եկել, որ նոյնպէս կառավարութիւնը իմացաւ: Մենք այն ժամանակ կարող էինք շարժումը սկսել, թէեւ մենք պատրաստութիւն չունէինք, երկու օր միայն կարող էինք դիմանալ: Բայց մենք սպասեցինք, որ յաջորդ տարին նոր ուժ կ'աւելանայ մեզ համար. եթէ յաջորդ տարին էլ յաջող անցնէր, մենք 904ի աշնանը պիտի անէինք: Այժմ ասում են՝ այդքան տարածութեան վրայ կազմակերպել ժողովուրդը. բայց կառավարութիւնը մեզ թոյլ կը տա՞յ այդ անելու. ես չեմ կարող վստահեցնել: Դա միայն խօսք չմնա՛յ: Մենք պիտի Զարդարեանի ասածի նման երկու ծրագիր ունենանք: Մեր անցեալ գործերը սխալ չէին, ով էլ որ լինէր այդպէս պիտի գործէր, այլ կերպ չէր կարող: Մենք եթէ երեք ամիս էլ կարողանանք դիմանալ, ոչ մէկ երաշխաւորութիւն չկայ թէ եւրոպացիք կը միջամտեն, քանի որ մենք նրանց քիթն անգամ

չենք արիւնել: Եթէ մենք ուզում ենք եւրոպացիների միջամտութիւնը առաջ բերել, պիտի Երկրում, ամէն տեղ նրանց շահերին հարուածենք:

Զօփուրեան.— Ինչ որ ես ուզում էի ասել, արդէն միւս ընկերները ասացին. ես կ'ուզեմ միայն երկու հարց դնել ժողովի առաջ: 1.) Կարելի՞ է սպասել մի դրական հետեւանք ապստամբութիւնից, յիշեալ գաւառներում, այն պարագային, երբ տեղական միւս ժողովուրդները հայերի այդ ձեռնարկին թշնամաբար են վերաբերում, կամ առնուազն անտարբեր են. կամ ուրիշ խօսքով, հնարաւո՞ր է յուսալ, որ Վասպուրականը իւր շրջակայքով ձեռք բերէ ազատութիւն, երբ շրջապատող թուրք, քիւրտ եւ միւս ժողովուրդները պիտի մնան նախկին բռնակալ ռեժիմի տակ: 2.) Հարկաւոր չէ՞ հայերի ազատագրման գործը կապել տաճկահպատակ դրացի ժողովուրդների շարժման հետ եւ ուրեմն մեր ապստամբական նախապատրաստութիւնների հետ միաժամանակ աշխատել նոյն շարժումը եւ նոյն թըշնամութիւնը առաջ բերել դէպի կառավարութիւնը ե՛ւ այդ ժողովուրդների մէջ:

Իշխան.— Հարցը այդ ձեւով դնելով, մենք մեծ դժուարութիւնների ենք հանդիպում: Ասում ենք ապստամբութիւն կազմակերպենք. բայց ապստամբութիւնը պիտի չափել միջավայրի եւ տիրող քաղաքական պայմանների վրայ: Յաջողութիւն ունենալու համար հարկաւոր է ամենից առաջ ծանօթանալ, թէ ի՞նչ դրութիւն է ներկայացնում միջավայրը, որքա՞ն նա նպաստաւոր է մի այդպիսի բանի համար: — Եթէ մենք Կովկասում դիւրութիւններ ունենք զէնք ձեռք բերելու եւ տեղափոխելու, դա չի նշանակում, որ դա կ'ազդէ նաեւ Երկրի վրայ: Նկարագրուած վայրը ի հարկէ ամենայարմարն է ապստամբութեան համար: Բայց եթէ բոլոր այդ տեղերն էլ Վասպուրականով էք չափում, սխալւում էք: Վասպուրականը յեղափոխական տեսակէտով առաջ է գնացել, այդ պատճառով էլ նա երկար ապագայ չունի: Եւ Վասպուրականի հետ չէ կարելի կապել յեղափոխական տեսակէտից անպատրաստ տեղեր, ինչպէս Էրզրումը, Մուշը եւն: Ռոստոմի վերցըրած երեք շրջանները իրար չեն համապատասխանում. Վասպուրականը հասուն է. Մուշը տնտեսապէս քայքայուած, իսկ Էրզրումը բոլորովին անպատրաստ է: Դեռ ուզում ենք այդ ամբողջ շրջանի ժողովրդի 50%ը զինենք: Բայց պէտք է նկատի ունենանք, որ Տաճկաստանում, երբ մի մասը յեղափոխականապէս հասունացած է, նա իւր հետ բերում է եւ իւր վախճանը: Ես կրկնում եմ Արամի առաջարկը եւ ասում եմ որ չորոշենք ապստամբութեան ձեռնարկ, մինչեւ որ դրա հիմքերին մանրամասն չծանօթանանք:

Տաճատ.— Իշխանը լաւ սկսեց, բայց չխօսեց բոլոր պայմանների մասին: Սասունը այժմ գոյութիւն չունի, որովհետեւ Մշոյ գիւղացիութիւնը գոյութիւն չունի: Մշոյ դաշտեցին սոված է, ուրեմն Սասունը քանդուած է: Վանեցին էլ է սոված, որովհետեւ Վանի գիւղացիութիւնը քարուքանդ է եղած: Գաղթականութիւնը ընդհանուր է. բացի դրսի գաղթականութիւնից կայ նաեւ ներսի գաղթականութիւն. աշխատաւոր գիւղացիութեան հարուստ տարրերը հեռանում են գիւղերից եւ գնում դէպի քաղաքները: Արդիւնաւէտ գիւղերը դրաւում են օտարները, անասնապահութեան յարմար մասն էլ վերցրել են քրտերը: Ուրեմն երկրագործութիւն եւ անասնապահութիւն կորցրել ենք, առեւտուրն էլ մեր ձեռքից խլում են: Քիւրտերը հետզհետէ կենտրոնանում են սահմանների վրայ՝ հողով եւ կարողութեամբ: Մեզ համար կարեւոր տեղերում կառավարութիւնը աւելացնում է իւր զինուորական ուժը, Սասունում արդէն զօրանոցներ են շինուած, իսկ Վանում ուր 10 տարի առաջ 500 զինուոր կար, այժմ ամէն մի փողոցի գլխին զինուորական պահականոցներ կան: Թուրք կառավարութիւնը աշխատում է իւր ուժերը կենտրոնացնել Փոքր Ասիայում [?]: Թրքական յեղափոխական շարժումները վնասակար են հայութեան իրականութեան տեսակէտից. Թուրք յեղափոխականները, իրենց հրատարակութիւնների մէջ պարզապէս հակառակ են մեր շարժման: Արտաքին եւ ներքին հանգամանքները կարծես այնպէս են, որ քայքայեն ժողովուրդը: Սասունցին առաջուայ պէս գոյութիւն չունի. 600 ռազմիկ երիտասարդներ դուրս են գալիս Երկրից. մնում են այնպիսի տարրերը, որոնք անպէտք են ապստամբութեան համար: Ծնունդը կրճատւում է. իսկ երիտասարդութիւնը ամուսնանում է մեծ մասամբ դրսում: — Երկրում հայութեան գոյութիւնը օրաւուր վտանգւում է. մենք պէտք է մի բան անենք, եթէ ոչ հայութեան տականքն է մնում ներսում, պէտքական մասը կա'մ հեռանում է, կամ փչանում է տեղն ու տեղը: Ես համաձայն եմ, որ ապստամբութեան համար պիտի սպասել ամենայարմար ժամանակի: Մենք պիտի ծրագրենք որչափ կարելի է շուտ փրկել ժողովուրդը ապստամբութեան միջոցով: Մենք պիտի մտածենք նաեւ, թէ ի'նչ միջոցի ձեռնարկենք, եթէ վիժէ մեր ծրագիրը: Վանի կուսակալը այժմեանից արդէն միջոցներ է ձեռնարկում, որ գտնի յեղափոխականներին: Մենք պիտի նաեւ միջոցներ մտածենք, որ մեր ամբարած զէնքը Երկրում չկորչի, կամ կառավարութեան ձեռքը չանցնի:

Նիստը փակելուց առաջ՝

Վռամեան առաջարկում է, որ ընկերները պատրաստեն զեկուցումներ նոյն խնդրի մասին, եթէ կարելի է՝ տրամագծօրէն հակառակ առաջարկուած նախագծին:

Նիստը փակւում է ժամը 1ին վիճաբանութիւնների շարունակութիւնը ձգելով յաջորդ նիստին:



### 43ՐԴ ՆԻՍՏ (21 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Վռամեան:

Ներկայ են 19 պատգամաւոր:

Բացակայ են՝ Վահագն, Իսահակեան, Մաչուր, Տաճատ, Մանուկ, Ստեփանեան, Զարդարեան, Զաւրեան:

---

(Շարունակութիւն նախորդ զեկուցման քննութեան)

Ռոստոմ (պատասխանում է նախընթաց նիստի իր զեկուցման առթիւ եղած ընդդիմախօսութիւններին).— Ես չեմ արդարացնում, ինչպէս ընկ. Մալումեանն է կարծում, մեր անցեալը. բայց ես կ'ասեմ դարձեալ, որ այլ կերպ գործել մենք անկարող էինք: Ինչ տեսակի ծրագրեր էլ որ կազմած լինէինք, մեծ խնամքով ու խելացիութեամբ, միեւնոյն արդիւնքին պիտի հասնէինք: — Ասացի, որ Վասպուրականը իւր շրջակայքով, կենտրոն պէտք է դարձնել մեր գործունէութեան համար. այս միտքը նոր չէ, նոր է լինելու միայն նրա իրագործումը: Նոր ենք ուզում իրագործել այդ միտքը, որովհետեւ ներկայումս աւելի նպաստաւոր պայմաններ ունենք մեր տրամադրութեան տակ: Ես կանգ եմ առնում Վանի–Բաղէշի վրայ, եւ այն հանգամանքն ի նկատի առնելով, որ այդ կողմերում կառավարութիւնը ռազմական քիչ ուժեր ունի: Մինչդեռ Էրզրումը՝ ընդհակառակը. վերջինս զօրեղ բազա է [զին. խարիսխ] եւ այդ տեղ կենտրոնացած են մեծ քանակութեամբ զօրքեր. ապա հեռու չէ նաեւ Երզնկան, որտեղից անյապաղ օգնութիւն կը հասցուի Էրզրումին: Զինել հայ ազգաբնակութեան 50%ը, ինչպէս ցանկանում է Մալումեանը, անկարելի է:

Մալումեան.— Ինձ սխալ էք հասկացել. ես չեմ ասում, թէ բովանդակ ազգաբնակութեան 50%ը զինուի, այլ զէնք բռնելու ընդունակների 50%ը:

Ռոստոմ.— Ապստամբութեան մասին խօսելով, մենք ուշադրութիւն պէտք է դարձնենք ոչ այնքան զէնքի քանակի վրայ, որքան մոմենտի [պահ] վրայ. այս է եղել զեկուցման հիմնական միտքը: Կարելի է քիչ զէնք ունենալ, բայց յարմար մոմենտին ասպարէզ ելնելով՝ աւելի յաջողութիւն գտնել քան թէ անյարմար մոմենտին, թէկուզ խոշոր ուժերով: Ես ասում եմ, եթէ Սասունն ապստամբէր 1903ին եւ ոչ թէ մի տարի յետոյ, գուցէ որեւէ արդիւնք ստացուէր, քանի որ այդ թուականը յարմար մոմենտն էր ներկայացնում: Սըխալւում է Անդրանիկը ասելով, թէ 1903ին չէ ուզեցել շարժուել այն պատճառով միայն, որ արճիճի պակասութիւն էր ունեցել. սպասել է, որ արճիճի ու մարդկանց պակասը լրացուի եւ ապա միայն կռուի դուրս գայ. բայց չէ՞ որ միեւնոյն ժամանակ ե՛ւ կառավարութիւնն է աշխատելիս եղել՝ նորանոր ուժեր քաշելու դէպի Սասուն: Կրկնում եմ, մեզ համար նշանակութիւն ունի մոմենտը: Եթէ մենք զէնքի քանակը աւելացնելու հոգսով միայն տարուենք՝ յաջողութիւն քիչ կ'ունենանք: Ապառաժի շրջանում, հայ–թրքական ընդհարումների ժամանակ, մենք սկզբում քիչ զէնք ունէինք, բայց եւ այնպէս շարժուեցինք եւ ինքներս առաջինը նախայարձակ եղանք՝ մոմենտի պահանջի հետեւելով: Մեր յարձակումով, մենք չփոթեցրինք թուրքերին եւ թոյլ չտուինք, որ նրանք ոյժ կենտրոնացընեն: Ես հակառակ եմ որեւէ ապստամբական ձեռնարկի՝ ներկայ նորմալ պայմաններում. ո'չ մի ձեռնարկ, ոչ միայն մինչեւ առաջիկայ Ընդհանուր Ժողովը, այլ թէկուզ տասն այդպիսի ժողովներ: Ընդհանուր Ժողովը մեզ համար սահման չէ կարող լինել: Ի հարկէ, եթէ մինչեւ Ընդհանուր Ժողովը յարմար մոմենտ ներկայանայ — հարկաւոր է անմիջապէս գործի անցնել, առանց սպասելու, թէ ի՞նչ կ'որոշէ Ժողովը: Ես դառնում եմ հիմնական մտքին, որ Վասպուրականը շրջակայ մի քանի գաւառներով պէտք է կենտրոնավայր հանդիսանայ մեզ համար, որովհետեւ Վասպուրականը նպաստաւոր պայմաններ ունի գործի յաջողութեան տեսակէտից: Այդ գաւառներն, ի հարկէ, տարբեր են միմեանցից, իրենց տնտեսական կացութեամբ եւն., եւ նրանց մի ընդհանուր յայտարարի բերել, մենք չենք կարող. բայց եւ բոլորին կարելի է մի ձեռնարկի շուրջը համախմբել: Ես հակառակ եմ Զարդարեանի յայտնած այն մտքին, որ պէտք է շարժուել, եթէ կառավարութիւնը դրդէ մեզ այդ ուղղութեամբ. մենք ոչ մի դէպքում զոհ չպիտի գնանք կառավարական պրովոկացիային [գրգռութիւններուն]: Կառավարութիւնը կ'աշխատի գրգռել մեզ, որպէսզի մենք ստիպուած հրապարակ հանենք մեր ուժերը: Բայց համաձայն եմ նրա երկրորդ մտքի հետ, թէ հարկաւոր է ձեռքի տակ ունենալ երկու ծրագիր, մէկը խաղաղ ժամանակի համար, միւսը՝ անակնկալների: Ես աւելին կ'ասեմ, ոչ թէ երկու այլ հարկաւոր է ունենալ մի քանի այդպիսի ծրագիրներ, որոնցից իւրաքանչիւրը կը գործադրենք՝ փոխուած հանգամանքներին համեմատ: — Անդրանիկն ուզում է հարուածել ուղղակի եւրոպական շահերը. այո', բայց ես կարծում եմ, որ այդ շահերը երկու տեսակի են բաժանւում — «եւրոպացիների» շահեր եւ «եւրոպական» շահեր: Այս մասին ես կը խօսեմ այլ անգամ: — Իշխանը յոռետես հայեացք յայտնեց, թէ Վասպուրական ապագայ չունի: Անկասկած, եթէ մենք միջոցներ ձեռք չառնենք՝ մասնակի շարժումները յետ կանգնեցնելու, ժողովուրդը կը քայքայուի:

---

Նոյն «ապստամբական ձեռնարկների» հարցի մասին զեկուցում է անում ընկ. Թոփչեան: Զեկուցանողը

*տեսնել Սուլթանին կախաղան բարձրացած, արտայայտութիւնը մասսայական հատուցման, սակայն քանի որ այդ չկայ, նա պիտի մեռնի գնդակից, — արտայայտութիւն անհատական հատուցման»։*

*Ուրուագծելով տեռորական շարժումը Ռուսաստանում, եւ ցոյց տալով այն խոշոր ազդեցութիւնը, որ ունեցան Ստեպնեակ* — 1878, *Խալդուրին* — 1880, *Ժելեաբով* — 1881, *Պերովսկայա* — 1881, *Կարպովիչ* — 1901, *Բալմաշեւ* — 1902, *Կալեայեւ* — 1905 *եւ տեռորական ուրիշ հերոսներ, զեկուցանողը անցաւ ահաբեկչական գործողութիւններին՝ հայկական քաղաքական շարժման, յատկապէս Դաշնակցութեան մէջ՝ թէ՛ Կովկասում եւ թէ Թուրքիայում։ «Մեր տեռորական գործողութիւնները չեն ունեցել քաղաքական սիստեմատիկ բնոյթ, հիմնուած որոշ տեսակէտի վրայ. Նրանց մեծ մասը ուղղուած են եղել մանր մատնիչների, լրտեսների եւ յաճախ վաչխառուների դէմ, եւ միայն վերջին տարիներս Կովկասում եւս ունեցան ազդեցիկ արտայայտութիւն, գլորելով այնպիսի պաշտօնեաներ, ինչպէս՝ Նակաշիձէ, Անդրէեւ, Բոգոսլաւսկի, Սախարով, Բըկով»։*

*Զեկուցման մէջ բերուած էր տեռորի մի փոքրիկ հաշիւ, որ վերաբերում էր* 1904–1906 *թուին։ Այդ հաշուից երեւաց, որ տեռորի դէպքեր եղել են Շուշուայ շրջանում՝* 20, *Բագու՝* 8, *Գանձակ՝* 11, *Թիֆլիս՝* 5, *Ալեքսանդրապոլ՝* 7, *Կարս՝* 8, *Երեւան՝* 15, *Ռոստով՝* 2, *Վլատիկաւկաս՝* 4, *Բաթում՝* 2, *Ատրպատական՝* 3, *Վասպուրական՝* 12, *Սասուն–Մուշ՝* 17։

*Բացատրելով մանրամասն կերպով յեղափոխական այն խոշոր արդիւնքը, որ պիտի ունենայ քաղաքական սիստեմատիկ տեռորը Թուրքիայում, զեկուցանողը՝ ներկայացրեց մի նախագիծ, որի էական կէտերը հետեւեալներն են.* 1) *Կազմել տեռորիստական կենտրոնական գործօն կոմիտէ,* 2) *ընդունել իբրեւ կենտրոնատեղի՝ Պոլիսը եւ գործունէութեան վայր՝ Թուրքիայի ծովեզերեայ շրջանը, մայրաքաղաքը, եւ ի հարկին՝ Եւրոպան,* 3) *Տալ այդ գործին միջազգային բնոյթ, չաղկապելով այդ ձեռնարկի մէջ օսմանեան ռեժիմից դժգոհ բոլոր տարրերի ներկայացուցիչներին,* 4) *Ընտրել մի նախապատրաստական մարմին, թէ՛ գործի մանրամասները մշակելու եւ թէ կոմիտէն ստեղծելու համար։*

---

*Ապա սկսեցին հարցումներ ու վիճաբանութիւն։*

Մինասեան․— *Տեռորը անխուսափելի է մեր յեղափոխական գործունէութեան մէջ, բայց դժբախտաբար մինչեւ այժմ մեր տեռորը ուղղուած է եղել ազգայիններ [ազգակիցների ?] դէմ, մենք սպաննել ենք լրտեսներ, դաւաճաններ եւայլն, մանաւանդ եղել են եւ տեռորներ դրամի պատճառով։ Այդ պատճառով մեր ժողովրդի մէջ տարածուած է այն կարծիքը, որ մենք միայն հայեր ենք սպաննում։ Տաճկահայաստանում մենք չէինք կարող տեռորներ սկսել կառավարչական պաշտօնեաների դէմ, դա ցեղական բնաւորութիւն կը ստանար եւ կոտորած առաջ կը բերէր. Նրանք եւս կարող էին, Ռուսաստանի պէս, սեւ հարիւրեակ հանել մեր դէմ։ — Եւրոպայում էլ տեռորը անելը անհնարին է։ Թէեւ ռուսները Եւրոպայում տեռորներ արին, որի դէմ եւրոպական հասարակական կարծիքը չբողոքեց, բայց տեռորի ենթարկուածները այնպիսի մարդիկ էին՝ որոնք անպաշտօն կերպով անցել էին Եւրոպա։ Իսկ եթէ մենք տեռորը ուղղենք Եւրոպայում եղած տաճիկ դեսպանների դէմ, դրանով մենք մեր դէմ կը հանենք այն կառավարութիւնը, որի մօտ այդ դեսպանը ուղարկուած էր։ Իւրաքանչիւր կառավարութիւն պատասխանատու է իւր մօտ ուղարկուած դեսպանի համար։ — Տաճիկը մահից վախեցող է. եթէ մենք մի քանիսին տեռորի ենթարկած լինէինք, միւսները սարսափած իրենց հարուածը կ'ուղղէին դէպի ընդհանուրը, որովհետեւ չգիտէին թէ ո՞րտեղից պիտի գայ իրենց վրայ յարձակումը։ Մենք կարող ենք դրան միջազգային բնաւորութիւն տալ, բայց դրանով էլ մեր դատի ազգային բնաւորութիւնը կ'ոչնչանայ։ Ուստի, մենք կարող ենք տաճիկ յեղափոխականներին զէնք եւ ռումբ տալ եւ քաջալերել. Նրանց սպաննած մարդիկ մեծ մասամբ մեզ համար էլ վնասակար են։ Տեռորիզմը Տաճկաստանում յաղթող հանդիսացնելու համար, պիտի կազմակերպուի մի գաղտնի զօրեղ մարմնի ձեռքով. մարմնի գաղտնի լինելն է, որ սարսափեցնելու է կառավարութեանը։ Պէտք է աշխատել, որ այդ մարմնի մէջ տաճիկներ լինեն։*

Արամ․— *Կ'ուզէի ընկ. Մալումեանի առաջարկած ծրագրի միջազգային բնաւորութեան անհրաժեշտութիւնը շեշտելու համար՝ մի քանի տեղեկութիւններ տալ գաւառի մասին։ Գաւառներում տեռորները վերջացել են միշտ համայնական պատասխանատուութեամբ եւ ոչ թէ անհատական. մենք միշտ վախեցել ենք որեւէ տեռոր անելու, կարծելով, որ կոտորած առաջ կը գայ, թէ չէ մեզ ո՛չ տեռորիստներ են պակասել, եւ ոչ տեռորի ենթարկելու արժանի մարդիկ։ Մասսաների վրայ ազդելու համար ամենալաւ միջոցը տեռորն է. միւս կողմից՝ դա ահաբեկում է տաճիկ պաշտօնեաներին եւ զօրքին։ Սխալ է, որ ասում են, թէ տաճիկները վախկոտ են. ընդհակառակը. Նրանք չունին այն հաւատարմական զգացմունքը դէպի կառավարութիւնը, ինչ որ եւրոպացի պաշտօնեաները։ Միւս կողմից տաճիկ պաշտօնեաների եւ զօրքի մէջ ներկայ ռեժիմը այնպիսի զզուանք է առաջ բերել, որ նրանք այժմ հենց յանուն իրենց հայրենիքի չեն աշխատի պահպանել այդ ռեժիմը, ուստի եւ նրանց ահաբեկելը աւելի հեշտ է. այդ պատճառով էլ տեռորական գործողութիւնը Տաճկաստանում աւելի յաջողութիւն պիտի ունենայ եւ մեզ համար էլ լաւ հետեւանքներ։ Պաշտօնէութիւնը Տաճկաստանում միշտ վախենում է յեղափոխականներից. նրանք կարծում են, որ յեղափոխութիւնը միշտ դամոկլեան սրի պէս կախուած է նրանց գլխին եւ անպատճառ պատժելու է իրանց. այդ է պատճառը, որ երբ մի տեղ յեղափոխութիւնը զօրեղանում է, դրանք սկսում են մեզ մօտենալ եւ քծնել։ Մենք պիտի աշխատենք տեռորը համայնական պատասխանատուութիւնից փոխադրել անհատականի. իսկ դա կը լինի, երբ տեռորական գործի ազգային բնաւորութիւնը դարձնենք միջազգային։ Ես ոչինչ դէմ չունեմ, եթէ մեր արած տեռորը իրենց վերագրեն Թուրք յեղափոխականները, եւ թռուցիկներ բաց թողնեն այդ մասին։ — Իմ առաջարկս է, առաջնութիւնը տալ Թուրք յեղափոխականներին։ Երիտասարդ Թուրքեր ինձ ասել են, որ մենք երբեք առանձին շարժումներ չանենք, որովհետեւ ժողովուրդը տգէտ է եւ կարծում է, թէ մեղաւորը ամէն բանում Սուլթանն է եւ ոչ թէ ռեժիմը։ Երիտասարդ Թուրքերը ցանկանում են, որ մենք վարագոյրի յետեւից նրանց օգնենք, բայց մենք առանձին դուրս չգանք։ Լաւ է որ մենք տեռորի կազմակերպման գործին միջազգային բնաւորութիւն տանք, նոյնիսկ գաւառներում։*

Ռոստոմ․— *Ռուսաստանի քաղաքներում մեծ մասամբ ազգաբնակութիւնը խառն է, ուստի եւ կարելի է տեռոր անել եւ յարմարութիւն կայ թագնուելու. իսկ Տաճկաստանում պաշտօնեան այնքան մատչելի չէ եւ չէ կարելի այնպէս հեշտութեամբ թագնուել, ինչպէս դա այժմ լինում է Կովկասում։ Ինչո՞ւ համար է յատուկ Տեռորական Մարմինը։ Կովկասում, դա հասկանալի է, քանի որ այնտեղ արդէն կազմակերպութիւնը յայտնուել է, հետեւաբար յատուկ, գաղտնի մարմին անհրաժեշտ է։ Իսկ Թուրքիայում դա կարեւոր չէ, քանի որ մեր մարմինները գաղտնի են եւ գործողութիւնների մի մարմնում միացած լինելը անհրաժեշտ է. ուստի այնտեղ առանձին Տեռորական Մարմին չպէտք է լինի, այլ գործը պէտք է մեր կազմակերպութիւնների ձեռքը լինի։ Ջարդերի սիստեմը կառավարութիւնը գործ է դնում նաեւ խմբական ընդհարումների դէպքում. սա ցոյց է տալիս, որ նա չկարողանալով յեղափոխականներին պատժել, կոտորում է անմեղներին։ Այդ նոյն բանը արւում է այժմ Ռուսաստանում. երբ մի փողոցում մէկը սպաննւում է, կառավարութիւնը ռմբակոծում է ամբողջ թաղը։ — Ջարդի վտանգը Թուրքիայում այժմ մի քիչ փոխուած է, մենք կարող ենք մի քիչ աւելի համարձակութեամբ դիմել տեռորի։ Տաճիկ կառավարութիւնը այժմ գտնւում է մի վիճակում, երբ ամբողջ ժողովուրդը խօսում է ռեժիմի փոփոխութեան մասին։ Եւ տեռորները այժմ կարող են արագացնել ռեժիմի փոփոխութիւնը, ինչպէս դա եղաւ Ռուսաստանում։*

Զաւրեան․— *Ընդգծում եմ, որ Թուրքիայում չէ կարելի միայն իբրեւ հայ դուրս գալ եւ տեռոր անել. դա պիտի լինի միջազգային։ Սկզբում, առժամանակ թող մինչեւ անգամ հայ չմասնակցի տեռորներին, այլ լինին միայն օգնողներ։ Եթէ տեռորները միայն հայերի կողմից լինին, դրանք կը կորցնեն իրենց քաղաքական նշանակութիւնը։*

Մաշուր․— *Երկրի դրութեան հետ լաւ ծանօթ չլինելով, չեմ կարող ոչինչ ասել տեռորական ձեռնարկների մասին Թուրքիայում։ Բայց ես կ'ուզէի մի քանի խօսք ասել տեռորի էութեան մասին։ Ընկեր Մալումեանը շատ անյաջող կերպով համեմատեց սոցիալիստ-յեղափոխականների տեռորական ակտերը, դաշնակցական տեռորական ակտերի հետ։ Պէտք է այդ երկու տեսակի ակտերի ոգն ու ծուծը շօշափել։ Պատասխանատուութիւնը մեզանում ընդհանուր է դառնում, որովհետեւ տեռորիստը իւր գործը կատարում է, ոչ թէ համարձակ, ակնյայտնի կերպով, այլ թաքուն, եւ չի բռնւում։ Իսկ կառավարութիւնը իմանում է նրա ով լինելը, որ կուսակցութեան կամ ազգի պատկանելը եւ հնարաւորութիւն չունենալով տեռորիստին բռնելու, վրէժը առնում է անմեղներից։ Այլ բան է Ռուսաստանում։ Այնտեղ տեռոր կատարողը այնքան յեղափոխականացած է, այնքան գիտակից, որ ինքզինքը զոհում է եւ կառավարութիւնը նրան հնարաւորութիւնը ունենալով պատժելու, այլեւս ընդհանուր պատասխանատուութեան չէ ենթարկում ժողովրդին։ Իսկ մեր մէջ մէկը չեղաւ, որ խփէր եւ կանգնէր, որպէսզի մասսան պատասխանատու չմնար։ Վարանդայի դէպքերից յետոյ, օրինակ, մէկը չգտնուեց, որ համաձայնէր տեռորի ենթարկել Էրմալաեւին եւ միւսներին։*

Սեպուհ․— 1895 *թուին Խնուսում երկու քիւրտ տեռորի ենթարկուեցին՝ մէկը Հաջի Հայտար չէյխը, իսկ միւսը՝ Օզոյի լամուկը։ Թէեւ հաստատ իմացուեց, որ դրանց սպաննողները հայեր են, բայց դրա պատճառով հայկական կոտորած չեղաւ։ Վերջը միայն, երբ կոտորածները սկսուեցին, ոմանք կապում էին սա այն դէպքի հետ։ Մշոյ դաշտում Եսթերի եւ Անդրանիկի կատարած տեռորներից յետոյ կազմուեց սեւ հարիւրեակ եւ յարձակուեց գիւղի վրայ, բայց ընդհանուր ջարդ չեղաւ։ Եթէ մենք ծովեզերեայ քաղաքներում օտարների հետ միացած տեռորներ անենք, դա շատ նըպատակայարմար է։ Թող պաշտօնեաները դրանով լաւ իմանան, որ յեղափոխականի սուրը միշտ կախուած է իրանց գլխի վրայ։ Դրանք այդ քաղաքներով են անցնում իրենց պաշտօնատեղին գալիս եւ գնալիս. Նրանք կը զգուշանան եւ իրենց լաւ կը պահեն գաւառներում։*

Իսահակեան (*գրաւոր*)․— *Ինչպէս երեւում է, տեռորի սկզբունքային հիմնաւորման մասին այստեղ խօսելու կարիք չկայ. կուսակցութիւնը իւր ծագման օրից եղել է այն քաղաքական պատմական աշխարհա-*

գրեր, նախ Եւրոպայի համար. Հարկաւոր է նաեւ մասնաւոր տեղեկագրերը ամփոփել մէկ ընդհանուր տեղեկագրի մէջ՝ ինչպէս արել են մակեդոնացիք։ Մի այդպիսի ընդհանուր տեսութիւն յանձն կ'առնէ կազմել Քրիյարը, եթէ միայն նրան պէտք եղած նիւթերը տրուին։ Օտար ուսումնասիրողներ ուղարկելու առաջարկի հետ համաձայն եմ։ Ինչ վերաբերում է մեր սեփական ուսումնասիրողներին, սրանք նախ եւ առաջ պէտք է պատրաստութիւն ձեռք բերած լինեն, այսինքն՝ պէտք է ճշգրիտ ծանօթութիւն ունենան Երկրի մասին. այս նպատակով կարեւոր եմ գտնում, որպէսզի դասընթացքներ հիմնուեն՝ յատկապէս ուսումնասիրողներ պատրաստելու համար։

Ռոստոմ փաստեր է բերում, թէ ինչպիսի թիւր տեղեկութիւններ են ստանալիս եղել՝ կոտորածների ժամանակ զոհ գնացածների թուի մասին։

**Զաւրեան** — *Առհասարակ դժուար է ճիշդ գաղափար կազմել Երկրի ազգաբնակութեան թուի մասին, որովհետեւ ոչ միայն այնտեղից եկողները պակասաւոր տեղեկութիւններ են հաղորդում, այլեւ Երկրի մէջ իսկ, տեղն ու տեղը անկարելի է լինում ծանօթանալ դրութեան հետ։ Երկրում շրջագայած միջոցին ես գիւղերում այնքան սխալ տեղեկութիւններ էի ստանում, որ վերջը ստիպուած եղայ այլեւս չհաւատալ գիւղացիներին։ Բայց ես չեմ կարող համաձայնել Ռոստոմի հետ, իբրեւ թէ կոտորածները նիւթական եւ մարդկային վընասներ չեն տուել այն չափով, ինչ չափով մենք ենք կարծել մինչեւ այսօր։ Բայց բաւական է տեսնել օրինակ Մշոյ դաշտը, եւ իրականութիւնը կը պատկերանայ ձեզ իր անմխիթար կերպարանքով. դաշտն ամբողջովին անցայ ես եւ այդ լայնարձակ տարածութեան վրայ՝ վարած հող քիչ գտայ, որովհետեւ հայ գիւղացին միջոց չունի վարելու։ Էրզրումում, մի քանի Թուրք սպաներ, որոնք իմացել էին մեր Մուշ գնալու մտադրութեան մասին, ասացին մեզ, թէ «երբեմն ծաղկած Մուշը՝ այժմ աւերակներ է ներկայացնում»։ Աւելի լրջութեամբ մօտենանք հարցին եւ զգուշութեամբ վերաբերուենք մեզ հասնող տեղեկութիւններին։ Եթէ մէկ կողմից Տարակը(21) որոշ պոլիտիկա է բանեցնում մէջտեղում, միւս կողմից էլ զինուորականներն են, որ վարդագոյն կերպով են մեզ պատկերացնում շարունակ՝ ժողովրդի դրութիւնն ու տրամադրութիւնը։ Գէորգ Չաւուշը, օրինակ, մեզ շարունակ գրել է, թէ ժողովուրդը առանց իրեն թշուառ կը զգայ ինքնիրան, բայց Մուշի համարեա' իւրաքանչիւր գիւղում ես բողոքներ եմ լսել Գէորգ Չաւուշի գործած բռնութիւնների դէմ. չգիտեմ՝ գուցէ այս բռնութիւնները անհրաժեշտ են եղել. տխուր փաստն եմ ուզում միայն արձանագրել, որ եղել են մարդիկ որ նրան նոյնիսկ ուզեցել են թունաւորել։*

**Մուրատ** — *Համաձայն եմ Արամի հետ, որ հարկաւոր է ուսումնասիրել Երկիրը։ Ձեմ կարծում, սակայն, որ օտարները կարողանան լիովին բաւարարութիւն տալ այդ պահանջին, քանի որ նրանք իրենց ուսումնասիրութիւնը կ'անեն ո'չ դաշնակցական տեսակէտից։ Աւելի լաւ է, որ հայերից լինեն Երկիր ուղարկուելիք ուսումնասիրողները։*

**Խաժակեան** — *Մեր ժողովուրդը անվստահութեամբ կը վերաբերուի օտար ուսումնասիրողներին, քանի որ անվստահութիւն է տածել ե'ւ հայերի վերաբերմամբ։ Այս տեսակէտից, ես աւելի նպատակայարմար եմ գտնում, եթէ մեր ուզած վիճակագրական տեղեկութիւնները պատրիարքարանի միջոցով ստանանք։*

**Ռոստոմ** — *Մանրամասն ու ճշգրիտ ուսումնասիրութիւն կատարելը՝ առանձին անհատների գործ չէ', դրա համար հարկաւոր է ունենալ մի ամբողջ մարմին, հակառակ դէպքում, ուսումնասիրութիւնները կը լինեն ոչ բազմակողմանի։ Ճիշդ է նկատում Մուրատը, որ օտարները չեն կարող ուսումնասիրել՝ մեր կուսակցական տեսակէտից ելնելով. բայց նրանք կարող են յամենայն դէպս, մեզ տալ մի ընդհանուր յատակագիծ, որի հիման վրայ արդէն՝ մենք կը վարենք մեր գործը։ — Երկրի ռազմագիտական սկզբնական ուսումնասիրութեան համար մենք կարող ենք օգտուել ռուսական շտաբի կազմած քարտէսներից. Կովկասում մենք միջոցներ ունենք պէտք եղած նիւթերը ձեռք բերելու։*

**Սաֆօ** — *Օտար ուսումնասիրողները մեզ օգտակար կը լինեն միայն այն դէպքում, եթէ նրանք կաշառուող անձնաւորութիւններ չլինեն. կառավարութիւնը աշխատում է կաշառքի միջոցով, յետ դարձնել ամէն մի եւրոպացու, որը ցանկութիւն է ունենում Երկիրն ուսումնասիրելու։*

**Գուսան** — *Մենք կարող ենք ձեռք բերել ռուսական շտաբի ուսումնասիրութիւնները, քարտէսներ եւն։ Քարի եւ Ջրաբերդի մի քանի ռուս զինուորականներ մեզ գաղտնի առաջարկ են արել այդ ամէնը տալու, եթէ միայն մենք 300 ռուբլի դնենք նրանց տրամադրութեան տակ. տեղական կոմիտէները, սակայն, անհոգութեամբ վերաբերուեցին այդ բանին, չտուին խընդրուած 300 ռուբլին։*

**Թոփչեան** — *Այստեղ այնպէս խօսեցին, որպէս թէ ընդհանրապէս գոյութիւն չունի ո'չ մի ուսումնասիրութիւն եւ թէ մենք պէտք է սկզբից սկսենք գործը մեր փոքրիկ ուժերով։ Նախ օգտուենք եղածներից։ Ռուսական շտաբն առատ նիւթ է մատակարարում։ Գեներալ Զելէնովն ընդարձակ տեղեկութիւններ է տալիս։ Ես անհրաժեշտ չեմ գտնում, որ յատուկ ռազմագէտ–ուսումնասիրողներ ուղարկենք Երկիր. դեռ պէտք է օգտուենք շտաբում գտնուող նիւթերից։ — Ինչ վերաբերում է տնտեսական վիճակին՝ կարելի է մեր եւրոպացի բարեկամների միջոցով գիտական արշաւախմբեր կազմել, նոյնիսկ Գերմանիայի եւ Ֆրանսիայի հովանաւորութեան տակ. այդ արշաւախմբերի մէջ կը լինեն ե'ւ հայեր։*



**Մարդպետ** — *Նպատակայարմար եմ համարում Իսահակեանի առաջարկը՝ պատրիարքարանի միջոցաւ տեղեկութիւններ հաւաքելը։ Իւրաքանչիւր տարի Աղթամարի, Սսոյ կաթողիկոսարաններից, զանազան վանքերից եւն. նուիրակներ են ուղարկւում ամէն կողմ՝ հասոյթներ հաւաքելու. սրանցից եւ այս պատրուակով ուղարկուած որոշ անձնաւորութիւններից կարելի է օգտուել ըստ մեր նպատակի։*

**Մալումեան** — *Բոլոր այս առաջարկները լաւ են, անկասկած, բայց միայն հարց է, թէ ի՞նչպէս պէտք է իրագործել այդ ամէնը։ Արդէն քանի' քանի անգամ դիմել ենք մեր բարեկամներին Եւրոպայում, որպէսզի ուսումնասիրողներ գտնեն մեզ համար։ Մեր փորձերը յաջողութեամբ չեն պսակուել անցեալ տարի. մի խուլացի պրոֆէսոր միայն յանձնառու եղաւ Երկիր մտնելու. նա բանակցութիւններ ունեցաւ մեզ հետ, վերջը սակայն ստիպուած եղաւ հրաժարուել, որովհետեւ Թուրքիա մտնելու եւ ճամբորդելու համար հարկաւոր պայմաններ չեղան։ Ֆրանսական կառավարութիւնը չտուեց անհրաժեշտ յանձնարարականը։ Կովկասի համար միայն մի եւրոպացի ուսումնասիրող (Բերդրան) մեզ յաջողուեց գտնել, որի մասին տեղեկութիւն տուի Արեւմտեան Բիւրոյի տեղեկագրի մէջ։ Խորհուրդը մըտադիր էր մի եւրոպացի ռազմագէտ գտնել՝ Երկիրը զուտ ռազմագիտական տեսակէտից ուսումնասիրելու համար եւ այս նպատակին նոյնիսկ 15.000 ֆրանք յատկացրեց, բայց այդպիսին չգտնուեց։ Ինչ վերաբերում է ռուսական շտաբում գտնուող նիւթերին, այո', այնտեղ կան մեծ քանակութեամբ տեղեկութիւններ. ռուսական շտաբի ուսումնասիրութիւնը կատարուել է մանրամասն կերպով՝ գերմանական շտաբի արած մի գաղտնի ուսումնասիրութեան հիման վրայ. նրա մէջ կան կարեւոր նիւթեր։*

**Մուրատ** — *Ես կարծում եմ, որ ռուս–ճապոնական պատերազմին մասնակցած հայ զինուորականների միջից՝ փորձառուներին կարելի է ուղարկել Երկիր՝ ռազմագիտական ուսումնասիրութեան նպատակով։*

**Նախագահ** — *Գտնելով որ ժողովը սկզբունքով ընդունում է ընկ. Արամի զեկուցումը՝ առաջարկում է ներկայացնել բանաձեւեր։*

**Մալումեան** *առաջարկում է հետեւեալ բանաձեւը՝*

«Ընդհանուր ժողովը, լսելով Վասպուրականի ներկայացուցչի զեկուցումը՝ Երկիրը ուսումնասիրելու եւ այնտեղ ուսումնասիրողներ ուղարկելու մասին, եւ կատարելով այդ առիթով մտքերի փոխանակութիւն, յանգեցաւ հետեւեալ եզրակացութեան՝

1. Դնել այդ ուսումնասիրութիւնը, գլխաւորապէս վիճակագրական եւ ռազմական–յեղափոխական տեսակէտից՝ աւելի լայն եւ գիտական հիմքերի վրայ։

2. Պատրաստել մի հարցարան–ծրագիր եւ ուղարկել Երկրի մարմիններին եւ ընկերներին՝ վիճակագրական, ազգագրական, տնտեսագիտական եւ քաղաքական ուսումնասիրութիւններ անելու համար։

3. Գտնել հայ եւ օտար ձեռնհաս անձինք, յանձնելով [?] նրանց կազմակերպութեան հաշուով Երկիր մտնել (մեր ընկերների ուղեկցութեամբ) ռազմական ու քաղաքական ուսումնասիրութիւններ անելու նպատակով։

4. Բոլոր միջոցներով նպաստել մտաւորական ընկերների աւելի մեծ թուով Երկիր մտնելուն, նախօրօք պատրաստելով նրանց այդ աշխատանքի համար։

5. Անհրաժեշտօրէն պատրաստել հայկական գաւառների մանրամասն եւ մեծադիր քարտէսը։

6. Կազմել մի յատուկ մարմին Ուսումնասիրող Մարմին անունով, այդ ամբողջ գործը կարգադրելու համար, հիմնուած վերի որոշումների վրայ»։

*Այս բանաձեւի առթիւ վիճաբանութիւններ են տեղի ունենում։*

**Վռամեան** — *Առաջարկում եմ բանաձեւի մէջ մըտցնել հետեւեալ կէտը՝ «ուսումնասիրողներ պատրաստելու համար դպրոց ունենալ»։*

**Նախագահ** — *Այդ հարցը դրէք առանձին, երբ կը խօսենք պրոպագանդայի մասին։*

**Վարդան** — *Ոչ ոք չի վիճի, ի հարկէ, որ գիտական ուսումնասիրութիւնն անհրաժեշտ է։ Բայց արդեօք եւրոպացին կարող կը լինի՞ տալ մեզ մանրամասն վիճակագրական տեղեկութիւններ. ես կարծում եմ, չէ կարող, քանի որ նա այդ տեղեկութիւնները լրիւ ձեռք բերելու համար, ինքն անձամբ պէտք է մէկիկ–մէկիկ այցելէ ամէն մի հայ գիւղ — մի բան, որ նա հազիւ թէ անէ։ Ես առաջարկում եմ, ընկ. Զաւարեանի կազմած սիստեմով, հարցեր ուղղենք գիւղական ուսուցիչներին, եւ սրանք կը պատասխանեն մեզ։*

**Խաժակեան** — *Միանում եմ այդ առաջարկին, որովհետեւ դա ամենագործնականն է։*

**Ռոստոմ** — *Առաջարկում եմ ուսումնասիրութեան գործի համար առանձին մարմին ընտրելու խնդիրը թողնել Բիւրոներին. այս դէպքում ես այն համոզմանքն ունեմ աչքի առաջ, որ այդ մարմնի մէջ մտնել ցանկացող մի քանի անձնաւորութիւններ ուզում են անյայտ մնալ, նոյնիսկ Ընդհանուր Ժողովին։*

**Արամ** — *Ո'չ, առաջարկում եմ ընտրել մի մասնախումբ երեք հոգուց բաղկացած, որին յանձնուի գործը կազմակերպել։*

*Քուէարկւում է այս առաջարկը եւ ստանում մեծամասնութեան համաձայնութիւնը։*

*Ընկ. Մալումեանի առաջարկած վերեւի բանաձեւը ընդունուեց ժողովի կողմից։*

---

*Մի փոքր ընդմիջումից յետոյ, ընկ. Մինասեան կարդում է մի զեկուցում «Ցուցական գործունէութեան մասին» (տես Օրակարգ՝ Բ.— 1. բ.)։*

*Վիճաբանութիւնները թողնւում են յաջորդ նիստին։*

## 51ՐԴ ԵՒ 52ՐԴ ՆԻՍՏԵՐ (22)
## (26 Մարտ, առաւօտ)

*Նախագահում է Թոփչեան։*

*Ներկայ են 22 պատգամաւոր։*

*Բացակայ են՝ Զարդարեան, Զաւրեան, Վարդան, Անդրանիկ (հիւանդ)։*

*Օրակարգն է՝* «Ցուցական ձեռնարկների մասին» *տրուած զեկուցման առթիւ վիճաբանութիւնները։*

Մուրատ.— *Մինասեանի ասածներից ես համաձայն չեմ միայն այն կէտին՝ որ ցոյցերը պիտի լինեն ապստամբութեան լրացուցիչ. իմ կարծիքով ընդհակառակն։ Ցուցական գործը այնպիսի ձեռնարկ է, որ սպասելուց եւ երկար նախապատրաստուելուց կարող է վիժել, ցուցական ձեռնարկներ մենք շարունակ պիտի կրկնենք, որ Եւրոպայի ականջին հնչեցնենք մեր բողոքը։*

Ռոստոմ.— *Տեռորը եւ ցուցական ձեռնարկները սերտ կապ ունեն իրար հետ։ Տեռորները մենք որոշեցինք միջազգային կոմիտէի ձեռքով կազմակերպել. ցուցական ձեռնարկներում պիտի այդ հանգամանքը աչքի առաջ ունենանք։ — Ցոյցերը այսուհետեւ պիտի ագիտացիական [քարոզչական, խռովարարական] բնաւորութիւն ունենան, որ զարթեցնեն այն տեղերի ժողովուրդներին, որոնք մինչեւ այժմ յեղափոխութեան վերաբերմամբ անտարբեր են մնացել։ Եթէ այդպէս է, ապա հակասութիւն կը լինի եթէ ցոյցերը կապենք մեր ապստամբական շարժումների հետ։ Ցոյցերը կ'ունենան նաեւ այն բնաւորութիւնը, որ կը հեռացնեն կառավարութեան ուշադրութիւնը մեր կենտրոնացման վայրերից։*

Մալումեան.— *Ցուցական ծրագիրը մեր գործունէութեան մէջ եղել է ամենաանորոշ կէտերից մէկը, թէեւ հակառակը պէտք է լինէր։ Ընկ. Մինասեանի առաջարկած ծրագրում որոշ ձեռնարկի հարց չկայ։ Այն բոլոր բարի ցանկութիւնները, որ նա յայտնեց, կը մնան միայն արձանագրութիւնների մէջ։ Թող նա մեր առաջ դնէ որոշ առաջարկ՝ ի՞նչ ցոյց, ի՞նչպէս եւ ո՞րտեղ անել։ Այս նիստում մենք դա պիտի որոշենք, թէ ո՞րտեղ մենք կարող ենք մի բան անել։ Տարաբախտաբար Պոլսում եւ Զմիւռնիայում մենք պիտի բախենք մեծ դժուարութիւնների, այն բոլորից յետոյ, ինչ որ այնտեղ կատարուել է։ Հարկաւոր են որոշ նոր ձեռնարկներ։*

Վռամեան.— *Ես չեմ հաւատում, որ ապստամբութիւնը եւ ցոյցը իրար հետ գնան. մինը դրանցից մեր կամքից կախուած է շատ քիչ. ցոյց կարող է ամէն րոպէ պայթել, այն ինչ ապստամբութիւնը կապուած է շատ պայմանների հետ։ Այս Ընդհանուր Ժողովը պիտի իբրեւ սկզբունք ընդունէ, որ ցոյցը չկապուի ապստամբութեան հետ. ցոյցը միայն թէ չպիտի վնասէ ապստամբութեան. ան պիտի արթնացնէ Թուրքերին, քիւրտերին եւ եւրոպական միջամտութիւն առաջ բերէ։ Ցոյցը պիտի լինի ազատ եւ անկախ գործունէութիւն եւ նպատակ պիտի ունենայ վնասելու Եւրոպայի տնտեսական եւ քաղաքական շահերին։ Միայն [զուտ] տնտեսական շահերին տուած վնասները մենք շատ անգամ ստիպուած ենք վճարել մեր գրպաններից։ Մենք պիտի նաեւ նկատի ունենանք քաղաքական շահերը. պիտի ստիպենք Եւրոպային՝ միջամտել որեւէ տեղ։ Բանկ-Օտտոմանի ցոյցի նպատակն էր, ոչ այնքան այն, որ եւրոպացիներին մի քանի միլիոն վնաս տանք, այլ անարխիա առաջ բերենք, որ միջամտութիւն լինի։ Մենք պիտի թոյլ չտանք, որ եւրոպական շահերը ծաղկին, այլ մեր ձեռնարկներով շարունակ պիտի վտանգենք։ Ուրեմն եւ ցոյցը պիտի լինի մեր եւրոպական պրոպագանդին լրացուցիչ.* Pro Armeniaն *քիչ է։ Մեր ներքին նահանգների վիճակը մենք շարունակ պիտի ներկայացնենք մեր մարմինների միջոցով եւ ոչ թէ միայն «Դրօշակ»ի։ Ցոյցը կը կապուի սրա հետ։ Մենք նաեւ պիտի օգտուենք Թուրքերի տրամադրութիւնից, մեր մամուլում ունենանք Թրքերէնի բաժին։ — Տեռորը եւ ցոյցը չէ կարելի իրարից բաժանել. կան տեռորներ, որոնք ինքնըստինքեան ցոյց են։ Ցոյցը չպիտի շուտով մարի, նա պիտի լինի յաջորդական. դրա համար Ցուցական Մարմնի մէջ պիտի մտցնել նաեւ միջազգային տարրեր, ոչ թէ մարմիններ։ Ցուցական Մարմինը պիտի լինի բաժիններով, որ եթէ մի խումբը վտանգուեց, նրա տեղը անմիջապէս անցնի միւսը։*

Մաշուր *նկատում է, որ Ժողովը սկսում է այնպիսի խնդիրների անցնել, որոնց մասին մենք դեռ սկզբունքային որոշում չենք առել։ Օրինակ խօսում են եւրոպական միջամտութեան մասին, առանց խօսած եւ որոշած լինելու, թէ ո՞րքան մենք, այսուհետեւ, Եւրոպայի միջամտութեան վրայ յոյսեր պիտի ունենանք եւ ըստ այնմ անենք մեր շարժումները։ Ես դարձեալ կրկնում եմ, որ մեր ընդունած Օրակարգը սխալ է, որ մենք առաջ ծրագրի հարցը պիտի որոշենք եւ ապա անցնենք ձեռնարկների մշակման։*

*Ժողովը մաքերի կարճ փոխանակութիւնից յետոյ որոշում է շարունակել արդէն մի անգամ ընդունած Օրակարգը։*

Սեպուհ.— *Մենք ընդունեցինք, որ տեռորը միջազգային խմբի ձեռքով կազմակերպուի, այժմ ասում են, որ ցոյցն էլ միջազգային անենք։ Մեր յեղափոխութիւնը զուտ հայկական գործ է, ի՞նչպէս կարող ենք մեր ցոյցերը միջազգային անել, կամ ի՞նչպէս կարելի է ցոյցը կապել ապստամբութեան հետ։ Ապստամբութեան նախապատրաստութիւնները կարող են շատ երկար տեւել, իսկ ցոյցը պիտի յաճախակի հնչեցնէ մեր բողոքը եւ Երկրում անարխիա [անիշխանութիւն] առաջ բերէ։ Ի հարկէ, ճիշդ է որ զգոյշ պէտք է լինենք,*



*որ կոտորածներ առաջ չգան մեր ցոյցերի պատճառով, բայց եւ առանց արիւնի ոչինչ չի լինի։*

Ստեփանեան.— *Դեռ անցեալ Ընդհանուր Ժողովին է որոշուած եղել, որ ցոյցեր կազմակերպենք. այժմ նորից այդ հարցին ենք գալիս բայց չենք ասում, թէ ի՞նչ անենք եւ ո՞րտեղ կազմակերպենք։ Որոշ կերպով դրէք ցոյցի յատակագիծը, որ կարողանանք իմանալ, թէ մենք միայնակ կարո՞ղ ենք կազմակերպել դա, թէ պէտք է միջազգային անենք։ Չէ կարելի, որ տեռորը միջազգային լինի, իսկ ցոյցը հայկական։ Ի՞նչպէս վնասենք եւրոպական շահերին։ Եթէ պետութիւններից մէկի շահերին դիպչենք, դրանով օգնած ենք լինում միւսի շահերին եւ նրա ձեռքին գործիք դարձած։ Պէտք է պարզ ասէք, որ իմանանք, թէ պետութիւններից որի՞ դէմ ցոյց պիտի լինի եւ որի՞ց պէտք է օգնութեան յոյս ունենանք։*

Զաւրեան.— *Ես ցաւելով նկատում եմ, որ մեր 16 տարուայ գործունէութիւնը մեզ չէ ուղղել, եւ մենք դեռեւս տարւում ենք նոյն ցնորքներով, որ մենք իբր թէ կարող ենք որեւէ վնաս տալ եւրոպական շահերին։ Եթէ մենք մինչեւ անգամ Բանկ-Օտտոմանը օդը ցնդեցնենք, մի՞թէ դրանով վնասած կը լինենք եւրոպացիների շահերին, թէ՞ ընդհակառակն, նրանք իրենց ուժը աւելի մեր դէմ կ'ուղղեն, որ մեզ թոյլ չտան նոյնանման քայլեր անելով իրենց խանգարել։ Կամ եթէ մենք մի երկաթուղային կամուրջ պայթեցնենք, որը կարելի է երկու օրում վերաշինել, մի՞թէ դրանով վնասած կը լինենք եւրոպացիներին։ Որտեղի՞ց է մեզ այդքան տինամիտ [ուժանակ], այդպիսի փորձեր անելու համար։ Միթէ բաւական չէ՞ թափուած արիւնը, որ եթէ միջամտութիւն հնարաւոր լինէր, արդէն տեղի կ'ունենար։ — Ես ասում եմ, որ ամենից առաջ մեր ծրագիրը պիտի վերաքննել, ապա միայն նոր ձեռնարկներ նախագծել։*

Շահխաթունեան.— *Ես նկատում եմ մի խոշոր հակասութիւն։ Տեռորի մասին մեծամասնութիւնը մտածում էր, թէ նա միջազգային պիտի կազմակերպուի. հիմա ասում են, որ ցուցական գործողութիւնն էլ պէտք է դրուի միջազգային հողի վրայ։ Եթէ մեր ցուցական գործողութիւնները ուղղուած պէտք է լինեն միայն Թուրք կառավարութեան դէմ, այդ դէպքում կարիք չկայ դրանց տարբերել տեռորից։ Իսկ եթէ դրանք միջպետական նշանակութիւն պիտի ունենան, Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրելու համար, ի՞նչպէս կարող է այդ դէպքում Թուրք յեղափոխութիւնը միանալ այդ ցոյցերին. ինչո՞ւ նա պիտի ցանկայ Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրել Թուրքիայի վրայ։ Դրանց դատը ներքին է, ուղղուած է իրե՛նց կառավարութեան դէմ։ Ես դարձեալ պնդում եմ, որ թէ՛ տեռորը եւ թէ ցուցական գործունէութիւնը պիտի միանգամից պարզել, — արդեօք դրանք զուտ հայկական յեղափոխութեա՞ն համար են, թէ ամբողջ Թուրքիայի։ Պէտք է վճռել, թէ ի՞նչ է Հայկական Դատը, — զուտ հայկակա՞ն, թէ Թուրքիայի դատ։*

Խաժակեան.— *Ես չհասկացայ ընկ. Մինասեանի ռեֆերատի [զեկուցման] իմաստը։ Ցուցական գործունէութեան մասին խօսելիս, նրան կամ պէտք է թէորիապէս [տեսականապէս] հիմնաւորել կամ կոնկրէտ [շօշափելի] առաջարկներ անել։ Նա դրանից ոչ մինը չարեց։ Նրա ռեֆերատում մի աչքի ընկնող պակասութիւնն այն էր, որ նա կանգ չառաւ մեր ցուցական անցեալ գործողութիւնների վրայ եւ չգնահատեց նրանց արժէքը։ Նա ասում է. մենք պիտի վնասենք եւրոպական շահերին, բայց նա ամենից առաջ մեր առջեւ պիտի դնէր այդ շահերի ամբողջութիւնը։ Որո՞նց շահերին պիտի վնասենք, բոլո՞ր պետութիւնների թէ դրանցից մէկին կամ միւսին, եւ ի՞նչ կը լինի դրա հետեւանքը։ Ցոյցը պիտի լինի, ասում է, ընդհանուր ապստամբական ձեռնարկների հետ. բայց դա ընդհանուր խօսք է եւ գործնական ոչինչ չէ պարունակում։ Ապա ուզում եմ լրացնել Զաւրեանի խօսքը — մեր դիւանը լաւ տեսնում է, որ այս կերպ աշխատանքը շարունակելը անպտուղ է, բայց այնուամենայնիւ չենք փոխում մեր Օրակարգը։*

Վահագն.— *Եթէ մենք անպատճառ եւրոպական միջամտութիւն պիտի առաջ բերենք, դա կը լինի միայն նրանց շահերը վնասելով։ Հենց այն պատճառով, որ հայ ժողովուրդը քանի գնում՝ թուով պակասում է, մենք խիստ միջոցների պիտի դիմենք, թող դրանից վնասուին բոլոր եւրոպացիների շահերը. մենք կ'այրենք մաքսատներում եղած բոլոր ապրանքները, նրանց նաւերը կը պայթեցնենք. թող նրանք հասկանան, որ երկրի անկարգութիւնից նրանք էլ են վնասւում։ Պէտք է նրանց հասկացնենք, որ չենք թոյլ տայ, որ միշտ մեր արիւնը շահագործեն։ Մենք ամէն միջոց պէտք է անխնայ ի գործ դնենք։ Չենք կարող երկար սպասել, որովհետեւ, միեւնոյնն է, մի քանի տարի յետոյ Երկիրը մոխիր պիտի դառնայ. Երկիրը պարպւում է երիտասարդութիւնից։ Ցոյցերը չենք կարող կապել ապստամբութեան հետ։ Ցոյցը փափուկ [?] գործ է, օրինակ մի ական, մի դաւադրութիւն եւն. հեշտութեամբ կարող է վիժել։ Մենք այժմ այդ մասին պիտի մտածենք, թէ ի՞նչ անենք, որ եւրոպական միջամտութիւն յառաջ գայ։*

Սեպուհ.— *Մեր բնաբանը պիտի լինի չխնայել նրանց, որոնք կարող են հայ ժողովուրդի բախտը փոխել եւ չեն ուզում փոխել։ Երկրում ժողովուրդը սպառում է, ճիշդ է, բայց դա նոր չէ սկսուել, 500 տարի է։ Մենք պէտք է ցոյցեր անենք շարունակ, որ դրանով մեր բողոքի ձայնը բարձր հնչէ։*

Տանատ.— *Մեզ առաջարկում են ցոյցեր կազմակերպել, եւրոպացիների շահերին վնասելու համար։*

Բայց մենք չգիտենք, թէ այդ տեղերում, ուր ուզում ենք ցոյցեր կազմակերպել, արդեօք ունե՞նք կազմակերպութիւն· մենք տեղեկութիւն չունենք թէ ի՞նչ եւրոպական շահեր կան ծովափնեայ քաղաքներում։ Եթէ մենք այդ վայրերը չուսումնասիրած ցոյցերի ձեռնարկենք, մենք ոչ թէ եւրոպական, այլ մեր շահերին կը վնասենք։

Թոփչեան.— Կարծես թէ Դաշնակցութեան ամբողջ անցեալը պատկերանում է այս Ընդհանուր Ժողովում։ Ամէն մի ժողովում խօսուել է եւրոպացիների շահերի մասին, եւ միշտ ասել ենք «եթէ Եւրոպան ուզենայ»։ Բայց եթէ մենք այդ վնասները տանք, դրանով նպատակի կը հասնե՞նք։ Եւրոպացոց նաւերը կը գան, իրենց վնասները կը ստանան եւ յետ կը գնան։ Այդպիսով մենք աւելի նպաստում ենք եւրոպացոց շահերին եւ ոչ թէ վնասում։ Շահեր ասելով, մենք շատ աւելի խորը պիտի հասկանանք։ Եթէ այժմ էլ նոյնպիսի ցոյցեր անենք, ինչպէս Բանկ–Օտտոմանեանն էր, էլի հեռագիրները կը դղրդան ամէն կողմ, բայց ոչինչ չենք շահի· եւրոպացիք կը գան, իրենց ուզած կոնցեսիաները [զիջումներ, յատուկ արտօնութիւններ] կը ստանան եւ յետ կը գնան։ Առաջարկս է.— Ցոյց ասելով մենք պիտի հասկանանք խոշոր մասսայական տեռորներ։ Աւելի մեծ նշանակութիւն ունի 10 փաշա սպանելը, քան 100 նաւ պայթեցնելը։ Մի կեղեքչի տեռորի տալը աւելի կ'արժէ, քան 20 միլիոնի եւրոպական ապրանք այրելը։ Ցուցական ձեռնարկներ այն ձեւով, ինչպէս հասկանում են, չպիտի անենք, այլ՝ տեռորներ։ — Մենք աչքի առաջ պիտի ունենանք Թուրք մասսայի վերաբերմունքը, որովհետեւ երբ Եւրոպայի մի 10 նաւ գայ Պոլիս, Թուրք ամբոխի շարժումը կարող է ուղղուել մեր դէմ եւ ոչ թէ Մինասեանի ցանկացած ձեւով այդ շարժումը յօգուտ մեզ կը լինի։

Ջելալեան.— Երբ այս առաջարկած հարցերի լուծման մէջ դժուարութիւնների ենք հանդիպում, պատճառ աշխարհահայեացքների տարբերութիւնն է, որովհետեւ մենք այժմ ունենք մի Դաշնակցութիւն եւ երկու աշխարհահայեացք։ Եթէ այս Ընդհանուր Ժողովը ուզում է մի լաւ բան անել, նա պիտի կարեւորութիւն տայ ընկերների կարծիքին, երբ նրանք խօսում են Տաճկահայաստանի եւ Կովկասի գործունէութեան մասին։ — Տաճկահայաստանի համար կարող ենք ասել, որ «արջը օրհասականք հզօրագոյնս կռուեն»։ Եթէ կան բաներ, որ ընկերներից ոմանց տարօրինակ են թւում, դա նրա համար է, որովհետեւ Տաճկաստանը այնպիսի վիճակի մէջ է, որ այնտեղ միշտ հակազդեցութիւն կը լինի։ Կոտորածն ու ոչնչացումը միշտ կան, մինչեւ անգամ ամենախաղաղ ժամանակ։ Այնպէս որ լաւ է երկու օր առաջ մեռնել, քան բազմաթիւ չարչարանքներ կրելուց յետոյ։ Բանկ Օտտոմանի ցոյցով մենք եւրոպացիների շահերը չվնասեցինք· մենք օդը չհանեցինք Բանկը։ Մենք այդ պիտի արած լինէինք, որ կարողանայինք ասել, թէ եւրոպացիք կը միջամտե՞ն, թէ ոչ։ Քանի որ Թուրքիան եւրոպական կոնտրոլի տակ է, այդ պատճառով է, որ մենք ասում ենք, թէ եւրոպացիների դէմ պիտի ուղղենք ցոյցերը։ — Մինչեւ անգամ պէտք է այս ժողովը որոշէ վեց պետութեանց դեսպանները սպանել, — այսպիսով միայն կը լինի միջամտութիւն։ Ռէժի, Բանկ, դեսպաններ, մեծ քաղաքացիներ, գերմանական երկաթուղին, ամերիկեան կոլէջները, եւն., ամէնը ինչ որ Վահագն ասեց, պիտի վնասուին մեր ցուցական գործունէութիւնից։ Եթէ դրանից յետոյ էլ մի հետեւանք չեղաւ, այն ժամանակ միայն իրաւունք ունենք ասելու, որ Եւրոպան չէ միջամտում։ Իսկ այժմ քանի մենք դեռ այդ չենք արել իրաւունք չունենք հակառակը պնդելու։ Մենք պէտք է հիւանդին տանք վերջին դեղը, որը նրան կա՛մ կը փրկէ կամ կը մեռցնէ։

Վռամեան.— Ոմանք ցաւ են յայտնում, որ եւրոպական միջամտութիւն չէ եղել եւ առաջարկում են, որ այլեւս դա նկատի չունենանք։ Բայց այդ կապ ունի դեռ 1898ի Ընդհանուր Ժողովի հետ, որ աշխատած է ձգտել եւրոպական միջամտութիւն առաջ բերելու։ Քանի դեռ այդ որոշումը չէ փոխուած, մենք պիտի ձգտենք այդ ուղղութեամբ։ — Ընկերները խօսեցին Բանկ Օտտոմանի ցոյցի մասին, որի հետեւանքների մասին տեղեկութիւն չունին։ Բանկ Օտտոմանի դէպքը քաղաքական միջամտութեան տեսակէտից ունեցաւ իւր հետեւանքը, որը մթութեան մէջ է, շատերին անծանօթ, բայց ես ուսումնասիրել եմ։ Դրա հետեւանքները եղան 1) Ֆրանսական դեսպանը որոշել էր զրահանաւեր բերել տալ, եթէ մի երկրորդ դէպք էլ կրկնուէր, 2) կար մի մեծ ծրագիր, որ Պոլսի դեսպանները սկսան կազմել 1896ին, իրենց գաղտնի ժողովում, ուր քարտուղարներն էլ չէին մասնակցում, ուր Բարենորոգումների մի ծրագիր էր մշակուել, որը եւ 1897ին ստորագրուեց։ Այդ մասին հրատարակուեց «Թայմզ»ի մէջ, 3) Սոլզբըրին մի ընդարձակ տեղեկագիր կազմեց, ուր ասում է, որ պէտք է Թուրքիայի մասին մի որոշում անել։ Բայց ռուսները հակառակեցին։ Ուրեմն Բանկ Օտտոմանից յետոյ եղել են դիւանագիտական գաղտնի որոշումներ եւ դրանք անմիջապէս իրականացած կը լինէին, եթէ չլինէր Կրետէի ապստամբութիւնը, Վենեզուելայի խնդիրը եւ չին–ճապոնական պատերազմը։ Եթէ մենք այնուհետեւ էլ մի գործ անէինք, համոզուած պիտի լինէինք, որ միջամտութիւն կը լինէր· միայն թէ դա չզուգադիպէր մի այլ դէպքի, որ գրաւել էր Եւրոպայի բոլոր ուշադրութիւնը։ Ինչպէս մակեդոնացիների դէմ քայլեր չարեց Եւրոպան, երբ նրանք Միսս Ստոնը առեւանգեցին եւ երկաթուղիները վնասեցին, նոյնպէս եւ մեր դէմ չի լինի, եթէ մենք նրանց հարուածենք։ Համօսմանեան յեղափոխութիւն կարող է լինել, բայց դա այնքան հեռու ապագայի խնդիր է, որ մենք տաճկահայերս չենք կարող չբռնել դաշնագրերից եւ



մեր առանձին Հայկական Հարցը չպահանջել։ Մենք մեր իրաւունքները պիտի պահանջենք ամէն միջոցներով· մեզ համար աւելի լաւ է, որ մի հազար մարդ էլ կորցնենք, քան կամաց–կամաց քայքայուենք։ Ուրեմն մենք նկատի պիտի ունենանք քաղաքական շահերը եւ մեր ցոյցերը տեւական անենք։

Ռոստոմ.— Ցուցական որեւէ գործի վրայ մենք կարող ենք տարբեր տեսակէտներից համաձայնել.— մինը կարող է մի որեւէ կոնկրէտ ձեռնարկի վրայ նայել զուտ հայկական տեսակէտից, իսկ մի ուրիշը՝ համաթուրքական։ Մեր այդպիսի ձեռնարկներին կարող են մասնակցել Թուրքերն էլ։ 96ի դէպքից յետոյ տաճիկ յեղափոխականները մեզ մօտեցան եւ ցաւում էին, որ մեր դրած պահանջները միայն հայկական էին։ Երիտասարդ տաճիկները արդէն համոզուել են, որ ուզեն չուզեն՝ Եւրոպան պիտի միջամտի· բայց նրանց մի մասը ասում է՝ Թող եւրոպացիք մեզ ազատութիւն տան, եւ ապա հեռանան ու այլեւս չմիջամտեն մեր գործերին։ Մինչեւ անգամ Ահմէտ Ռիզան էլ ասում է, որ եւրոպական միջամտութիւնը պիտի լինի, բայց Միդհատ փաշայի սահմանադրութիւնը իրագործելու համար։ Եթէ մինչեւ անգամ մենք համոզուենք որ առանց համաթուրքական շարժման չենք կարող մեր դատը տանել, այնուամենայնիւ մենք չենք ձուլուելու Թուրքերի մէջ։ Մենք այնուամենայնիւ պիտի յենուենք մի որոշ տարրի վրայ։ Մինչեւ անգամ եթէ մենք ինքնավարութիւն ունենանք, մենք պիտի ձգտենք, որ համաթուրքական յեղափոխութիւն լինի, որպէսզի մեր ձեռք բերածը ապահովուի։ Ֆինլանդիան մեզ օրինակ, որը համարեա ինքնավար էր, բայց չկարողացաւ այդ վիճակը պահել, որովհետեւ ամբողջ պետութեան մէջ իշխում էր բռնակալութիւնը· կամ հայկական Սահմանադրութիւնը Թուրքիայում, որ ոչնչացաւ, որովհետեւ Թուրքիան ինքը՝ դեռեւս շատ յետ էր այդպիսի կարգերից։ Դաշնակցութիւնը, իբրեւ հայ ժողովուրդի յեղափոխական ձգտումների արտայայտիչ, պիտի յենուած լինի հայերի վրայ, բայց եւ պիտի ձգտի, որ առաջ գայ համաթուրքական յեղափոխութիւն։ Թէեւ 96ին մենք դրինք միայն հայկական պահանջներ, բայց հետեւանքը եղաւ ընդհանուր Տաճկաստանի ռեֆորմների խնդիր եւ ոչ միայն հայկական։ Բուն հայկական գաւառներից դուրս եղած ցոյցերը անպատճառ պիտի ընդհանուր բնաւորութիւն կրեն։ Մենք պիտի ցուցական գործունէութեան այդ բնաւորութիւնը տանք, որպէսզի շարժենք անտարբեր մասսաներին։ Իսկ հայկական գաւառներում, ցոյցերը հայկական պիտի լինին։

Զաւրեան.— Ընկ. Վռամեան շատ լաւ պատկերացրեց, թէ ի՛նչ ազդեցութիւն է ունեցել Բանկի դէպքը Եւրոպայի վրայ։ Բայց երբ հարցը եկաւ գործնականապէս օգնելուն, այն ժամանակ իմացանք որ անգլիական նաւերը չեն կարող բարձրանալ հայկական լեռների վրայ։ Ռուսաց կայսրը, Վիեննայում եղած ժամանակ, ասում է՝ թէ յայտնեցէ՛ք Սուլթանին, որ այդ հայերը ինձ էլ շատ են ձանձրացրել։ Վիլհելմ կայսրը ասում է՝ Հայաստան չկայ։ Մենք իրականութեան մէջ այս ուղղութիւնն ենք տեսնում միայն։ Ասել թէ, «աւելի լաւ է երկու օր առաջ մեռնել, քան այսքան տանջուել» — սա միայն գեղեցիկ խօսք է· հարցրէք ժողովուրդին, թէ նա էլ ուզո՞ւմ է երկու օր առաջ մեռնել։

Շահխաթունեան.— Ես չեմ կարող կանգնել ընկ. Ջելալեանի տեսակէտի վրայ, թէ փորձենք, մի անգամ վնասենք Եւրոպայի շահերը, տեսնենք նա կը միջամտէ՞ թէ ոչ· դա նշանակում է գործողութիւնների գնահատութիւն չանել։ Վռամեանի պատմածները չեն ապացուցանում, թէ այն ամէնը ինչ որ ծրագրւում էր Բանկի դէպքից յետոյ, արդեօք յօգուտ մե՞ր էր լինելու, թէ՞ պետութիւնները ծրագրում էին ուժեղացնել Օսմանեան կայսրութիւնը, որ զսպէ անարխիստներին [անիշխանականները, յեղափոխականները]։ — Ռոստոմն ասում է, որ մի կողմից սպասենք Հայկական Դատի լուծումը Եւրոպայից, իսկ միւս կողմից ուժ տանք Թուրքիայի յեղափոխական շարժմանը։ Թէեւ մենք կազմակերպական մտքով հայկական կուսակցութիւն ենք, բայց դա չէ նշանակում, որ մենք երկու ճանապարհով էլ պիտի ձգտենք մեր նպատակին հասնել։ Հենց այն՝ որ մենք Թուրքիայում հայկական կուսակցութիւն ենք, դա այլ բան է, քան Ռուսաստանում։ Թուրքիայում Հայկական Դատը ունեցել է իւր ուրոյն ծագումը եւ ընթացքը, իսկ Ռուսաստանում նա մի մասն է Ռուսաստանի յեղափոխութեան։

Մինասեան.— Ցոյցի մասին խօսելով մենք հայկական ցոյց նկատի ունենք։ Մենք Թուրքերի հետ կը միանանք, երբ նրանք կ'ընդունեն մեր ազգային ուրոյն պահանջները։ Դրա համար է, որ մենք ընդհանուր օսմանեան յեղափոխական մարմինների կոնգրէ [համաժողով] պիտի կազմենք, որ Թուրքերը իրենց զգալով միւս ազգութիւնների դիմաց, պատրաստուեն կատարել նրանց ազգայնական պահանջները։ — Տեռորը կապ չունի ցոյցի հետ։ Ցոյցը պիտի նպաստէ ապստամբական շարժման եւ ոչ թէ նպատակ ունենայ թըմրած տարրերը զարթեցնելու։ Մեր ցոյցերին կարող են հակառակ լինել Երիտասարդ Թուրքերը, որոնք չեն ուզում, որ մենք առանձին իրաւունքներ ունենանք· Թուրքերի միայն թոյլ մասն է, որ ցանկանում է Եւրոպայի միջամտութիւն յառաջ բերել· իսկ մեծ մասը ազգայնական հակումներ ունի եւ դէմ է դրան։ Մինչեւ անգամ Սաբահէդդինը համոզուած է, որ եւրոպական միջամտութիւնը վնասակար է Թուրքիայի համար։ — Ասում են, որ ես կոնգրէտ առաջարկ չարի։ Ի՞նչ լինէր այդ առաջարկը։ — Դա գերմանական մտքի ազդեցութեան հետեւանք է, որ պահանջում է մտածողութեան մէջ միշտ հետեւողական լինել, թէկուզ հակառակ ի–

Զուիցերիայում, օրինակ, կայ միլիցիա, բայց հարկ եղած ժամանակ կառավարութիւնն է որ հրահանգներ է տալիս· մեր մէջ այս մարմինը պիտի լինի Դաշնակցութիւնը։ Եթէ մենք այդ գործը ամբողջապէս յանձնենք ժողովրդին, այն ժամանակ կան այլ մարմիններ, որոնք այդ գործը կ'առնեն իրենց ձեռքը եւ կը վնասեն Դաշնակցութեան։

Շահխաթունեան պարզում է իւր միտքը, թէ հակա չէ, որ Դաշնակցութիւնը ինքնապաշտպանութեան մասնակցի, բայց դա պիտի լինի ժողովուրդի սանկցիայով· թող ժողովուրդը ինքը ընտրէ իւր համար ղեկավարող մի մարմին· եթէ նա ընտրեց Դաշնակցութիւնը, աւելի՛ լաւ։

Թոփչեան.— Ջելալեանը կարծում է, որ բուրժուաները կարող են ինքնապաշտպանութիւնը իրենց ձեռքը առնել։ Բայց փորձը ցոյց տուեց, ինչպէս Շուշում, որ բուրժուաները սիրում են միայն ընտրուել եւ բազմել աթոռների վրայ· իսկ գործ անելու անընդունակ են։ — Ով որ ծանօթ է մեր ինքնապաշտպանութեան գործին, նա գիտէ, թէ որքան վտանգաւոր է այդ գործը նոյն ձեւով տանել· դա կը քանդի Դաշնակցութիւնը։ Ինչո՞ւ ժողովրդեան վերաբերմամբ այդքան յոռետես ենք· չէ՞ որ նոյն ժողովրդից է առաջ եկել Դաշնակցութիւնը։ Ի հարկէ մի մարմին պիտի լինի, որ կապ պահպանէ զանազան տեղերի հետ եւ ղեկավարէ։

Ստեփանեան.— Ասում էք գործը յանձնենք ժողովրդին· ի՞նչպէս կարող ենք մենք զէնքը յանձնել ժողովրդին, քանի որ նա կազմակերպուած չէ։ Թաւրիզում պնդում էին, որ զէնքերը յանձնէինք ժողովրդի ներկայացուցիչներին, բայց իմացանք որ նրանք ուզում են զէնքերը ծախել յօգուտ դպրոցի։ Թող ժողովուրդը հասունանայ, կազմակերպուի, այն ժամանակ կը յանձնենք։

Զօփուրեան.— Իմ անձնական կարծիքս ամբողջապէս պարունակւում է Ոսկանապատի որոշման մէջ, որ հետեւեալն է՝ «Դաշնակցութիւնը իւր վերայ վերցնելով ինքնապաշտպանութեան գործը, իւր շարքերի մէջ ստիպուած եղաւ ընդունել ամէն տեսակի տարրեր, որոնք կուսակցութեան մէջ յառաջ բերին մի շարք բացասական երեւոյթներ· բայց չնայելով դրան, Դաշնակցութիւնը իւր միջամտութեամբ մի ահագին գործ կատարեց հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին մէջ։ Սակայն ապագայի նկատմամբ անհրաժեշտ է հոգալ, որ ինքնապաշտպանութեան գործը փոքր առ փոքր յանձնուի ժողովրդին· իրաւ է, նա այս րոպէին այնքան պատրաստ չէ, որ վաղն եւեթ կարելի լինի ամբողջ գործը յանձնելով ժողովրդին՝ միանգամայն ձեռնպահ մնալ, բայց հարկաւոր է ձգտել մօտիկ ապագայում դրան հասնելու»։

Տանա.— Վարդանն անցեալ անգամ խօսելիս ասեց, որ երբ Շուշում ժողովուրդը պահանջում էր, որ ինքնապաշտպանութիւնը իրեն յանձնենք, ինքը պատասխանել է թէ «քանի վտանգ կայ՝ մենք հակառակ ձեր ցանկութեան էլ պիտի ձեզ պաշտպանենք»։ «Յառաջ»ի հրատարակած «Դաշնակցութիւնը եւ նրա հակառակորդները» գրքում նոյնպէս ասուած է, որ ժողովուրդը դեռ պատրաստ չէ, եւ մենք դեռ պիտի շարունակենք ինքնապաշտպանութիւնը։ Մենք ինքնապաշտպանութեամբ կրթել ենք ժողովուրդը եւ դա հակասոցիալական գործ չէ եղել։ Մենք չենք ուզում մշտական զինուորական մարմին ունենալ, բայց ինչ արած, որ դա մի ճակատագրական չարիք է։

Վռամեան.— Ես ցանկանում եմ մի բան ճշդել։ Այդ ժողովրդական սանկցիա ասուածը ինձ համար անըմբռնելի է։ Մենք ժողովրդից սանկցիա չենք պահանջում, երբ էքսպրոպրիացիա [ապասեփականացում] ենք անում կամ երբ դասակարգային պայքար ենք սկսում։ Ի՞նչ է, մենք ամէն մի ձեռնարկի համար ժողովրդից սանկցիա՞ պիտի ուզենք· իմ կարծիքով, եթէ կարծում ենք, որ դա մի յեղափոխական ակտ է, մենք կարիք չունենք ժողովրդի սանկցիային։ Դաշնակցութեան գործերի դրական կողմերը այնքան շատ են, որ մի քանի բացասական կողմի պատճառով մենք նրան չպիտի նախատենք։ Այս գործին, Դաշնակցութիւնը ո՛չ թէ պիտի սկզբունքով նայէ, այլ թոյլ չպիտի տայ, որ ժողովրդի զինուորական ուժերը ուրիշի ձեռքը անցնեն եւ գործիք դառնան մեր դէմ կռուելու համար։ Մենք դրանով պիտի զբաղեցնենք մեր զինուորական ընկերներին, որոնք չեն կարող գործել պրոֆեսիոնալ [արհեստակցական] միութիւնների մէջ։ Դաշնակցութիւնը ոչ միայն պիտի բաւականանայ իւր մարտական խմբերով, այլ նա պիտի նկատի ունենայ ուժեր պատրաստել նաեւ տաճկահայ դատի համար։ Ինքնապաշտպանութեան գործից հրաժարուել, նշանակում է վնասել տաճկահայ գործին։

Վարդան.— Ձեկուցման մէջ ես արդէն ասացի, որ ինքնապաշտպանութիւն ասելով, մենք նկատի ունենք Թուրքերին, որոնց վտանգը դեռ բոլորովին անցած չէ· իսկ յեղափոխական նպատակների համար պիտի ծառայեն մեր մարտական խմբերը։ Ով որ կռիւների ընթացքում եղել է ինքնապաշտպանութեան գործում եւ իւր կաշու վրայ փորձել, նա կը գիտնայ թէ ի՞նչ ծանր բան է դա, բայց մենք դարձեալ մեր պարտքը կատարեցինք։ Այնքան ժամանակ մենք տեսել էինք, որ շարունակ Թուրքը մեզ ծեծել էր, այժմ տեսանք, որ Դաշնակցութեան շնորհիւ, ո՛չ միայն չծեծուեցինք, այլեւ կարողացանք ծեծող լինել։ — Ճիշդ է, ես ասել եմ, որ մենք ձեզ զոռով պիտի պաշտպանենք, բայց դա եղել է այն ժամանակ, երբ օրեցօր սպասւում էր յարձակում· մենք այդ ասել ենք ստիպուած։ Մենք ստիպուած ենք եղել մինչեւ անգամ Թուրք կանայք ու երեխաներ սպանել, որպէսզի Թուրքերին համոզենք, որ եթէ իրենք այդպէս են անում, մենք էլ կարող ենք անել, իրենց վրայ ազդելու համար։ Մենք Երկրում տաճիկ զաբթիէ էինք սպանում եւ նրա գրպանին ձեռք չէինք տալիս, որ երբ նրա դիակը տանեն, տեսնեն որ մենք փողի համար չենք սպանում։ Ով եղել է ինքնապաշտպանութեան մէջ, նա տեսած կը լինի, որ մենք ստիպուած ենք եղել անել այնպիսի գործեր, որոնք ոչնչո՛վ չեն հաշտւում մեր սկզբունքների հետ, բայց մենք հարկադրուած էինք· մենք միայն աշխատել ենք, որ դա սիստեմ չդառնայ մեր մէջ։ Ես ասում եմ, որ ինքնապաշտպանութիւնը յանձնենք ժողովրդին, որովհետեւ դա յեղափոխական գործ չէ։ Բնականաբար ժողովրդի ձեռքում նա այնպէս լաւ չէ կարող տարուել, ինչպէս Դաշնակցութեան ձեռքում, բայց այդ ոչինչ, ինչ գնով էլ լինի պիտի յանձնենք։ Մի գիւղ, որ Դաշնակցութեան ղեկավարութեամբ կռուէր 5 զոհ կը տար, թող այժմ 7ը տայ, բայց թող ինքնապաշտպանութիւնը ի՛նքը տանի։ Թող հրամանները, բանտարկութիւնը, թալանը եւն. ժողովուրդը ինքը անէ եւ ոչ թէ Դաշնակցութիւնը։ Ի հարկէ Դաշնակցութիւնը ձեռնպահ չի մնայ, այլ որքան հնարաւոր է կ'օգնէ, թէ՛ մարդով եւ թէ այլ կերպ։ Ինքնապաշտպանութեան մէջ չպիտի լինի Դաշնակցութեան անունը, բայց ժողովուրդը թող ընտրէ Դաշնակցութեան մարդկանց, եթէ ուզում է։ Թող մեր ընկերները չանհանգստանան, թէ ուժը կ'ընկնի մեր հակառակորդների ձեռքը։ Ուր էլ որ դառնան, դարձեալ պիտի ընտրեն դաշնակցականներին, որովհետեւ միակ կուսակցութիւնը, որ կարող է այդ գործը տանել, Դաշնակցութիւնն է։ Կուլտուրական ընկերութիւն կայ, որ ցորեն է բաժանում գաւառները, բժիշկներ եւ ֆելդշերներ է ուղարկում, չնայած որ դրանք մեր բարեկամները չեն, բայց առանց կարմրելու, ստիպուեցին դարձեալ մեզ դիմելու եւ մեր աջակցութիւնը ուզելու։ Ժողովուրդը շատ լաւ զգում է, որ միակ կարողը Դաշնակցութիւնն է, բայց չէ կարողանում իր զգացածը արտայայտել։ Ժամանակ է ժողովրդին ազատելու խնամակալութիւնից, եթէ ոչ նա յոյսը դրած Դաշնակցութեան վրայ ինքը ոչինչ չի անի։ Եթէ ժողովուրդը կարմիր յոյսեր չունենայ Դաշնակցութեան վրայ, ինքը շատ բան կարող է անել։ Այս անգամ էլ շատերը կարծում էին, թէ մեր արածը մանէօվր է, որ մենք չենք ուզում ինքնապաշտպանութիւնից հրաժարուել· ուստի սկզբում չէին յանձն առնում, բայց երբ համոզուեցին, որ մենք անկեղծ ենք՝ համաձայնեցին։ Ամփոփեմ ասածս՝ ժողովրդի մէջ որոշ չափով գիտակցութիւն կայ, նա այնքան էլ անփորձ չէ, կան անհատ քաջ տղաներ, որոնք կարող են անել։ Քանի մենք կանք, նրանք առաջ չեն գալիս։ Պէտք է Դաշնակցութեան ղեկավարութեամբ ինքնապաշտպանութեան մարմիններ առաջ բերել, դրանց որոշ ուղղութիւն տալ, ապա գործը յանձնել ժողովրդին։

Ժողովը փակուեց ժամը 7ին։





## 58ՐԴ ՆԻՍՏ (30 Մարտ, առաւօտ)

Նախագահում է Թոփչեան։

Ներկայ են 23 ժողովական։

Բացակայ են՝ Մինասեան (հիւանդ) Սեպուհ, Անդրանիկ (հիւանդ)։

Ընկ. Մալումեան զեկուցում է անում, իբրեւ Արեւմեան Բիւրոյի ներկայացուցիչ, այն հարցի մասին, թէ ո՞ր ատեանի իրաւասութիւն ունէր խորհուրդը «Կովկասեան Գործունէութեան Նախագիծը» հրատարակելու, ուրիշ խօսքով «Նախագծի» իրաւասութեան մասին։

Մալումեան (գրաւոր) — «Նախագծի հրատարակութեան հարցը պէտք է քննուի երկու տեսակէտից, ըստ իրաւասութեան եւ ըստ էութեան։ Թողնելով առայժմ վերջինը, ես կանգ կ'առնեմ առաջնի, այն է՝ իրաւասութեան հարցի վրայ, որովհետեւ շատ անգամ եւ շատ ընկերների կողմից — էլ չենք խօսում հակառակորդների մասին — այն կարծիքն է յայտնուած, թէ Խորհուրդը իրաւունք չունէր հրատարակելու «Նախագիծը», եւ որ նա դրանով գործել է անիրաւական մի քայլ՝ հակառակ իւր ձեռնհասութեան։ Այդ մեղադրանքը անհիմն է, եթէ ի նկատի ունենանք նախ՝ կովկասեան գործունէութեան մասին Երրորդ Ընդհանուր Ժողովի կայացրած վճիռը, այն որոշումները, որ դուրս են բերել Կովկասեան Ռայոնական Ժողովները, յենուած Ընդհանուր Ժողովի վճռի վրայ, եւ այն իրաւասութիւնը, որ ունի Դաշնակցութեան Խորհուրդը, համաձայն Ժողովից հաստատուած կազմակերպական կանոնագրին»։

Զեկուցանողը առաջ բերեց 1904 թուի Ընդհանուր Ժողովի որոշումը կովկասեան գործունէութեան մասին, քաղուած պաշտօնական արձանագրութիւններից եւ ցոյց տուեց, որ Ժողովը ընդունել է 1) Դաշնակցութեան գործունէութիւնը տարածել Կովկասի վրայ· 2) Կռուի համար դիմել ժողովրդական ցոյցերի, տեռորի, զինուած դիմադրութեան, գործադուլների եւն. 3) Թոյլ տալ Ռայոնական Ժողովին՝ մանրամասնօրէն մշակել տակտիկը եւ 4) Արտօնել Խորհրդին՝ քաղաքական տագնապների ժամանակ ծրագրել նոր ձեռնարկներ։ Ահա այս բոլորի հիման վրայ 1905 թուի Խորհուրդը մշակեց եւ հրատարակեց «Նախագիծը», թողնելով ներկայ Ժողովին նրա վերջնական մշակումը եւ հաստատումը։

Դա խնդրի միայն մի կողմն է, աւելացրեց զեկուցանողը։ Մեր հիմնական Ծրագիրը, հրատարակուած 1892ին, իւր ոգով ու դրած քաղաքական եւ տնտեսական պահանջներով, ընդունում է սոցիալիստական գաղափարների սկզբունքը. եւ հետեւաբար Նախագծի սոցիալիստական պահանջները չեն հակասում մեր Ծրագրին, այլ միայն լայնացնում այն, մանաւանդ, որ կովկասեան այժմեան իրականութեան մէջ այդ պահանջ-

ները կարող են եւ պէտք է լինեն աւելի չեչտուած, աւելի լայն եւ աւելի խոր։ Զեկուցանողը իր նիւթն հիմնաւորելու համար, առաջ բերեց Նախագծի պահանջների 8–9 կէտերը եւ ցոյց տուեց, որ դրանք ըստ էութեան նման են Ծրագրի համապատասխան պահանջներին։

Ապա յիշեց այն փաստը, թէ ինչպէս 1890 թուին, Դաշնակցութեան հիմնարկութեան տարին, երբ պէտք էր մի թռուցիկ տարածուէր Էջմիածնում, միւռոնօրհնութեան ժամանակ, այն ժամանակուայ ղեկավար մարմինը առանձին խնամքով չեչտեց Դաշնակցութեան տնտեսական պահանջները. յիշատակեց 1896ին Լոնտոնի սոցիալիստական միջազգային կոնգրէին «Դրօշակ»ի ներկայացուցած դիմումի բովանդակութիւնը, 1905ին Բրիւսէլի Սոցիալիստական Միջազգային Բիւրոյին «Դրօշակ»ի խմբագրութեան կողմից տրուած պաշտօնական պատասխանը, — որոնք բոլորն էլ այն միտքն էին յայտնում, որ կազմակերպութիւնը իր Ծրագրի մէջ ընդունում է սոցիալիզմը։

Խօսելով դրանից յետոյ կովկասեան վերջին դէպքերի բնոյթի, ինչպէս եւ Նախագծի առիթով ծագած դժգոհութիւնների մասին, զեկուցանողը չեչտեց, որ այդ դժգոհութիւնները — եթէ չհաշուենք քիչ բացառութիւններ տեղական ընկերների շրջանում — հետեւանք են զանազան անհատների անձնական դժգոհութեան եւ կամ այն հանգամանքի, որ մեր ժողովրդական մասսաները, յաճախ նոյնիսկ անգրագէտ, չեն կարդացել, չեն ծանօթացել Նախագծին եւ զոհ են գնացել դժգոհ անհատների կամ խմբերի գրգռումներին եւ չարամիտ մեկնաբանութիւններին։ Իբրեւ ապացոյց, ընկ. Մալումեան առաջ բերեց այն կարեւոր եւ նշանակալից փաստը, որ դաշնակցական 24 կենտրոնական մարմիններից, թէ՛ Երկրի, թէ՛ Կովկասի եւ թէ արտասահմանի, որոնք ներկայացուած են այս Ժողովում, 21ը ընդունում են Նախագիծը եւ միայն երկուսն են դէմ (Բալկանը եւ Ամերիկան). մէկի կարծիքն էլ յայտնի չէ դեռ (Ջրաբերդինը)։ Աւելի նշանակալից է այն, որ նոյնիսկ Երկրի մարմիններից, օրինակ Վասպուրականը ամբողջովին կողմնակից է Նախագծին, իսկ Սասուն–Մուշի ընկերները դէմ չեն Կովկասի գործունէութեան։

Այս բոլորի հիման վրայ՝ զեկուցանողը, իբրեւ եզրակացութիւն, առաջարկեց Ժողովին՝ վաւերացնել Խորհրդի արած քայլը, ճանաչել նրա իրաւասութիւնը, եւ դրանով վերջ տալ այդ հարցին շուրջ ծագած աղմուկներին։

---

*Դեռ վիճաբանութիւններին չանցած՝*

**Զաւրեան** *նկատում է, թէ Նախագծի հրատարակման իրաւասութեան մասին խօսք չպէտք է լինի, քանի որ այդ արդէն կատարուած իրողութիւն է։*

**Ռոստոմ** *միանում է Զաւրեանի նկատողութեանը։*

**Նախագահը** *մատնացոյց է անում այն հանգամանքի վրայ, որ զեկուցման էութիւնը՝ հենց այդ իրաւասութեան խնդիրն է. հետեւապէս պէտք է խօսել այդ մասին եւ եզրակացնել։*

**Մալումեան** *բաժանում է զեկուցումը երկու մասի 1) Խորհուրդը հրատարակել է Նախագիծը, հիմնուած Երրորդ Ընդհանուր Ժողովի որոշման վրայ։ 2) Նախագիծը բխում է կուսակցութեան 1892ի ընդհանուր Ծրագրի ոգուց։*

*Սկսում են վիճաբանութիւնները։*

**Մուրատ**.— Գտնում եմ, որ Ծրագիրն ու Նախագիծը համապատասխան չեն իրար։ Ո՞վ գիտէ, գուցէ ես չեմ կարողանում լաւ հասկանալ երկուսի էլ իմաստը, բայց կրկնում եմ, որ դոքա ինձ համար տարբեր բաներ են։ Ժողովը դրել է կովկասեան գործունէութիւնը ինքնապաշտպանութեան սահմաններում. նա հրահանգել է դիմադրել ռուս կառավարութեան ոտնձգութիւններին, բայց ոչ երբեք յարձակողական դիրք բռնել նրա վերաբերմամբ։ Եւ յետոյ Խորհուրդը իրաւունք չունէր հրատարակել Նախագիծը, քանի որ այդ խնդրին մասնակցած չեն եղել Պատասխանատու Մարմինների, մանաւանդ Երկրի ներկայացուցիչները։ Անդրանիկն, այո՛, այդ միջոցին Ժընեւում, մասնակցել է, բայց նա բոլորովին տեղեկութիւն չէ ունեցել՝ հրատարակուելիք Նախագծի մասին։ — Սխալ է նաեւ Մալումեանի տուած այն տեղեկութիւնը՝ իբր թէ Քարում [Ալեքսանդրապոլ] գումարուած տաճկահայերի ժողովը ընդունել է Նախագիծը։

**Շահխաթունեան**.— Առաջարկում եմ ամենեւին չխօսել Նախագծի ոգու մասին, քանի որ այդ ոգին՝ սոցիալիստական սկզբունքները՝ չեչտուած է ե՛ւ Ծրագրում, աւելի ուժեղ կերպով, քան կարծում է ընկ. Մալումեանը։ Վիճաբանութիւն չպէտք է լինի, թէ Դաշնակցութեան Ծրագիրը դասակարգային է. նա դասակարգային է՛, եւ եթէ այստեղ ոեւէ մէկը փորձէ հակառակը պնդել, այն ժամանակ ես կը թողնեմ ժողովը։ Հարցը պէտք է այսպէս դնել, թէ իրաւացի՞ քայլ արեց Դաշնակցութիւնը, իբրեւ մի դասակարգային կուսակցութիւն, գործ սկսելով նաեւ Կովկասում։

**Զարդարեան**.— Նախագծի հրատարակումը իրաւական տեսակէտից արդարացնելու համար, Մալումեանը մատնացոյց արեց կազմակերպական կանոնագրի 6րդ կէտը(29)։ Բայց Ծրագրի հիմնական փոփոխման եւ այստեղ առուած «ձեռնարկի» հասկացողութիւնների մէջ՝ մեծ տարբերութիւն կայ։ «Ձեռնարկ»ը ես հասկանում եմ շատ աւելի սահմանափակ մտքով։ Ինքնապաշտպանութիւն եւ յարձակողական կռիւ նոյն բաները չեն. Խորհուրդը շեղուել է Ընդհանուր Ժողովի որոշումներից՝ ինքնապաշտպանողականից անցնելով յարձակողականի։ Եւ այսպիսով, Խորհուրդը մնաել է կուսակցութեան հիմնական սկզբունքներին։



**Նախագահ**.— Ի՞նչպէս է մնաել։

**Զարդարեան**.— Կովկասում գործելն արդէն ինքնըստինքեան վնասակար է Դաշնակցութեան հիմնական խնդրին՝ տաճկահայ դատին։ Գոնէ այսպէս են համոզուած տաճկահայերը։

**Նախագահ**.— Բայց ինչո՞վ է կովկասեան գործունէութիւնը վնասակար թրքահայ դատին։

**Զարդարեան**.— Որովհետեւ այդ դատը՝ զուտ քաղաքական կռիւ լինելուց զատ, նաեւ յանձնուած է վեց մեծ պետութիւնների խնամակալութեանը։ Մինչդեռ այսօր դասակարգային – տնտեսական պայքարի սկըզբունքն է չեչտւում մեր կուսակցութեան մէջ։

**Նախագահ**.— Բայց չէ՞ որ 1892ի Ծրագրի մէջ է չեչտուած այդ սկզբունքը։

**Զարդարեան**.— Այո՛, մինչեւ հիմա, սակայն, մենք մղել ենք բացառապէս քաղաքական եւ ոչ թէ տնտեսական կռիւ։

**Սիգ** (*կանգնում է Ռոստոմի տեսակէտի վրայ, թէ Նախագծի իրաւասութեան իմաստի վրայ չպէտք է ծանրանալ*).— Օրինականութեան տեսակէտից, Խորհուրդն իրաւունք չպէտք է ունենար հրատարակելու Նախագիծը. բայց մենք այսօր չենք կարող դատապարտել նրա այդ «ապօրինի» քայլը, քանի որ Նախագիծը կեանքի պահանջ է եղել եւ մենք դեռ պէտք է շնորհակալութիւն յայտնենք Խորհրդին, որ հասկացել է այդ պահանջի հրամայողականութիւնը եւ նրան բաւարարութիւն տուել։

**Ռոստոմ**.— Փաստացի ուղղումներ եմ ուզում անել Մուրատի այն յայտարարութեանը, թէ Խորհրդին մասնակից չեն եղել Պատասխանատու Մարմինների եւ Երկրի ներկայացուցիչները։ Նախ որ Կովկասն ունեցաւ իր պաշտօնական ներկայացուցիչը՝ Մռաւը։ Ապա Տաճկաստանի կողմից եւս մարդիկ կային, Վիշապի Ցուցական Մարմնի կողմից ներկայ է եղել Սաֆօն, Լեռնավայրի Պատ. Մարմնի կողմից ընկ. Վարդան և Գալֆայեան։ Այստեղ պէտք է ասել, որ Լեռնավայրի շրջանը մեր դիմումին՝ ներկայացուցիչ ուղարկելու՝ պատասխանեց, թէ այնտեղ գոյութիւն չունի տեղական մարմին, որպէսզի կարելի լինէր մեր հրաւէրն ընդունել։ Բայց քանի որ Խորհրդում քննելիք Նախագծի հարցը նշանակութիւն էր ունենալու եւ Տաճկաստանի համար, — Արեւմտեան Բիւրոն Լեռնավայրի ձայնը տուեց Պատասխանատու Մարմնի վերոյիշեալ անդամին։ — Բարձրաւանդակի կողմից ներկայ էր Անդրանիկը, — թէեւ այդ միջոցին այլեւս գոյութիւն չունէր Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմինը, անդամները սպաննուել էին, մենք Բարձրաւանդակի ձայնը տուինք Անդրանիկին՝ Պատասխանատու Մարմնի ողջ մնացած միակ անդամին։ — Շամը, թէեւ սա իրաւունք չունէր ներկայացուցիչ ունենալու, բայց եւ այնպէս մենք ձայն տուինք նրան եւս։ Անսպասելի հանգամանքների պատճառով ընտրուած պատգամաւորը անկարող եղաւ տեղ հասնել։ — Այսպէսով այլեւս պէտք է հերքուած համարել Մուրատի արած նկատողութիւնը։ Գանք Նախագծի հրատարակման խնդրին։ Ընդհանուր Ժողովը մեզ լայն սահմաններ տուեց՝ Կովկասում գործունէութիւն սկսելու համար, եւ այդ այնքան լայն, որ երբ նախքան Խորհրդի գումարումը, մենք ուզեցինք հարցնել մեր բոլոր մարմինների կարծիքները քննուելիք խնդրի վերաբերմամբ՝ Քրիստափորը այդ աւելորդ համարեց, ասելով թէ «մենք միանգամայն իրաւունք ունենք յեղափոխական բուռն կռիւ սկսելու Կովկասում»։ Եւ մենք հրատարակեցինք Նախագիծը՝ հիմնուելով մեր ընդհանուր սկզբունքների վրայ։ Սըխալւում է Զարդարեանը, որպէս թէ մենք մինչեւ այսօր չենք ունեցել սոցիալիստական գործունէութիւն. մեր Ծրագիրը կանգնած է եղել խիստ դասակարգային հողի վրայ եւ մենք Տաճկաստանում չենք վարել զուտ քաղաքական կռիւ, այլեւ տնտեսական. օրինակ, վերցրէք Անդրանիկի խմբագրած պահանջները Առաքելոց վանքում, ուղղուած հիւպատոսներին. դոքա գլխաւորապէս տնտեսական բնաւորութիւն ունին։

**Խաժակեան**.— Ի՞նչպէս պէտք է հասկանալ «ինքնապաշտպանութիւն» բառի իմաստը, այս է ահա, որ կենտրոնական տեղ է բռնում մեր վիճաբանութեան մէջ։ Ես չեմ հասկանում այդ բառը այն սահմանափակ իմաստով, թէ սպասիր, մինչեւ որ քեզ զարնեն, եւ ապա միայն պաշտպանուիր։ Ո՛չ, ինքնապաշտպանութիւնը չպէտք է այդպէս հասկանալ։ Նրա նշանակութիւնը անհամեմատ աւելի մեծ է եւ բնաւ չէ հակասում Նախադծում չեչտուած յարձակողական տակտիկային։ Ընդհանուր Ժողովը «ինքնապաշտպանութիւն» տերմինն է գործածել իբրեւ մի սանձահարող միջոց, որպէսզի մենք անտեղի ու անմտածած քայլերի չդիմենք Կովկասում։ Ես օրինական եմ գտնում Նախագիծը իրաւացիութեան տեսակէտից։ Իսկ ըստ էութեան նա մեր հին Ծրագիրն է. վերջինիս մէջ այնքան բացորոշութեամբ են չեչտուած դասակարգային կռուի սկզբունքները, որ եթէ Նախագիծը ապօրինի համարուի, այս դէպքում մեր ամբողջ գործունէութիւնն եւս պէտք է համարել ապօրինի։ «Տրամաբանօրէն ապօրինի», քանի որ այդ գործունէութիւնը չէ կրել սոցիալիստական բնոյթ։

**Զեյթլեան**.— Մեր նպատակն է եղել սկզբից մինչեւ այսօր Տաճկահայաստանի քաղաքական ազատութիւնը եւ «Դաշնակցութիւն» ասելով մենք միշտ էլ հասկացել ենք բացառապէս տաճկահայ դատի նուիրուած մի կուսակցութիւն։ Դաշնակցութիւնը ճիւղեր է ունեցել Կովկասում, Ամերիկայում, Եգիպտոսում, եւ բոլոր այդ վայրերի գործունէութիւնը ուղղուած է եղել դէպի Տաճկաստան։ Դաշնակցութիւնը տաճկահայերի սեփականութիւնն է, եւ ոչ ոք իրաւունք չունի այդ սեփականութեանը ձեռնամուխ լինելու։ Ուստի, նախքան Կովկասում եւս տեղական մի առանձին գործ սկըսելը, կովկասահայ պատգամաւորները պէտք է հար-

ցընէին Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին, թէ արդեօք վերջինս կարեւո՞ր է գտնում կովկասեան գործունէութիւնը:

Նախագահ.— *Այստեղ չպէտք է խօսք լինի տաճկահայի եւ կովկասահայի մասին, այլ միայն դաշնակցականների մասին:*

Ջելալեան.— *Մենք տաճկահայերս, ի հարկէ, չենք ուզում, որ կովկասահայ դատը ջուրն ընկնի, բայց հարցը նրանումն է. արդեօք չե՞ն խանգարի իրար՝ տաճկահայ եւ կովկասահայ դատերը, չե՞ն հակասի միմեանց այդ երկուսը:*

Գուսան (*կրկնում է Ջելալեանի վերջին հարցը*).— *Այստեղ է խնդրի էութիւնը: Տաճկահայերը բողոքում են ո՛չ Նախագծի ապօրինի հրատարակման դէմ. եթէ Ընդհանուր Ժողովն իսկ լինէր հրատարակողը, դժգոհութեան չէր կարելի վերջ տալ:*

Վռամեան.— *Դասակարգային պայքարի գաղափարը չեչտուած է մեր Ծրագրում եւ մենք մեր գործունէութեան մէջ ենք մտցրել ընկերվարութեան սկզբունքներ: Միայն թէ այդ ամէնը ծայրէ ի ծայր եղել է բացառապէս Տաճկահայաստանի համար, ո՛չ մի խօսք Կովկասի մասին: Ընդհանուր Ժողովն իրաւունք չունէր դուրս գալու մի անգամ ընդգծուած սահմաններից. հակառակ դէպքում, նա պէտք է կոչուէր ոչ սոսկ Ընդհանուր Ժողով, այլ «Սահմանադիր Ժողով»: Երրորդ Ընդհանուր Ժողովը, սակայն, դուրս եկաւ սահմաններից՝ կուսակցութեան գործունէութիւնը տարածելով ն'ւ Կովկասի վրայ: Ես բողոքեցի Ժողովի ընդունած այդ ընթացքի դէմ եւ իմ բողոքը մտցուեց արձանագրութեան մէջ: Ցամենայն դէպս Ժողովը ինքնապաշտպանութեան վրայ կանգ առաւ, բայց ո՛չ երբեք յարձակողական տակտիկայի, ինչպէս վարուել է Խորհուրդը: Խորհուրդը իրաւունք չունէր յարձակողականի անցնելու: Ընդհանուր Ժողովը, այո՛, այս կամ այն «ձեռնարկը» կատարելու իրաւունքը տուեց. կովկասեան գործունէութիւնը, սակայն, մի մասնաւոր ձեռնարկ չէ, այլ մի ամբողջ քաղաքականութիւն: Խորհուրդը իրաւասու չէր նոր քաղաքականութիւն սկսելու: Ա՛յս է էականը: Բայց իրողութիւնը արդէն կատարուած է, — Նախագիծը հրատարակուած. այլեւս չխօսենք այդ մասին, այլ հաշտուենք Ռոստոմի ասածի հետ, որ Դաշնակցութիւնը կեանքից բխած մի կուսակցութիւն լինելով, անկարող էր Նախագիծը չհրատարակել, քանի որ կեանքն է այդպէս պահանջել:*

Թոփչեան.— *Բողոքում եմ Ջելալեանի նկատողութեան դէմ. այստեղ բնակավայրի խտրութիւն չպէտք է լինի, չկայ ոչ տաճկահայ եւ ոչ կովկասահայ, այլ դաշնակցական: Կան կովկասահայեր՝ որոնք աւելի ջերմ կերպով են նուիրուած տաճկահայ դատին քան տաճկահայերն իրենք, եւ ընդհակառակն: Վռամեանը լաւ նկատեց, որ կովկասահայ գործունէութիւնը կեանքի պահանջ է եղել: Կեանքի պահանջ է, այո՛, որ Դաշնակցութիւնը ռուս կառավարութեան դէմ կռուի ելաւ դեռ այն ժամանակ, երբ Ընդհանուր Ժողովը ոչ մի որոշում չէր կայացրել ինքնապաշտպանութեան մասին: Հետաքրքիր է, ինչո՞ւ հենց այն ժամանակ ոչ մի բողոք չլսուեց: Տաճկահայ դատի տեսակէտից հենց, անհրաժեշտ էր, որ Դաշնակցութիւնը սկսէր ն'ւ կովկասեան գործունէութիւնը. առանց այս վերջինի Դաշնակցութիւնը իւր այսօրուայ ուժը չէր ունենայ երբեք: Կովկասումն էր, որ Դաշնակցութիւնը զօրեղացրեց իւր բանակը, խտացրեց իւր գաղափարակիցների շարքերը, անցաւ կռիւների բովով...: Եւ Կովկասում ձեռք բերած ուժն ու փորձառութիւնը, ռազմական եւ նիւթական տեսակէտից, խոշոր օգուտ են տալու տաճկահայ դատին: Կրկնում եմ, կեանքի պահանջ է եղել կովկասեան գործունէութիւնը եւ ամենից առաջ նախորդ Ընդհանուր Ժողովը ի՛նքը հասկացել է այդ պահանջը: Ասում են՝ Ժողովը դրել է ինքնապաշտպանութեան սահմաններ, բայց չէ՞ որ նոյն Ժողովը արձանագրել է, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը Կովկասում պէտք է մասնակցի քաղաքական ցոյցերին, բանուորական գործադուլներին, պէտք է համերաշխութիւն հաստատէ ուրիշ քաղաքական կուսակցութիւնների եւ առանձնապէս սոցիալիստ-յեղափոխականների հետ: Ասացէք խնդրեմ, մի՞թէ մեր գործունէութիւնը անցել է սահմաններից. երբե՛ք: Մենք դուրս ենք եկել կարմիր դրօշակներով քաղաքական ցոյցի, որպէսզի մեր բողոքն յայտնենք բռնակալութեան դէմ, մեր իրաւունքները պաշտպանենք. մենք մասնակցել ենք գործադուլներին, որպէսզի մեր ընկեր բանուորների դատն քրտինքը պաշտպանենք ընդդէմ շահագործողների: Այո՛, ընկերներ, մեր գործունէութիւնը Կովկասում եղել է ն'ւ իրական եւ օգտակար: Զփակենք աչքերս իրականութեան առաջ. թողնենք մանր հարցերը, սեղմուենք իրար եւ առաջ գնանք մէկ ընդհանուր դրօշի տակ — եթէ միայն չենք ուզում ամրացնել մեր հակառակորդ կուսակցութիւնների ոտքի տակի հողը:*

Մալումեան.— *Համաձայն չեմ այն ընկերների հետ, որոնք Նախագծի հրատարակման հարցի իրաւական կողմը ուզում են մի կողմ թողնել բոլորովին: Ներկայ դէպքում այդ ընկերները սուբյեկտիւ [ենթակայական] կերպով են մտածում: Դուրսը կայ ահագին բազմութիւն, որի համար էական նշանակութիւն ունի իրաւասութեան հարցը: Այդ իսկ պատճառով կարեւոր է, որ Ընդհանուր Ժողովը իր կարծիքը յայտնէ, թէ որքա՛ն իրաւունք ենք ունեցել մենք Նախագիծը հրատարակելու. կուսակցութեան դիսցիպլինան [կարգապահութիւնը] եւս այդ է պահանջում: Եւ քանի որ Խորհուրդը օրինական հողի վրայ է կանգնած եղել, յոյս ունեմ, որ Ժողովն իւր վստահութեան քուէն կը տայ Խորհրդին: Վռամեանի առարկութիւնը, թէ Ընդհանուր Ժողովը միայն ձեռնարկներ կատարելու իրաւունք է տուել Խորհրդին, հերքւում է ինքնըստինքեան, քանի որ Նախագիծն եւս ձեռնարկ անելու նպատակ ունի: Գալով արուած հակաճառութիւններին, որոնց մէջ ամենահիմնաւորը համարում եմ Զարդարեանինը, թէ կովկասեան գործունէութիւնը վնասելու է տաճկահայ դատին, բարեբախտաբար այդ երկիւղը անցած պիտի համարել. փաստերը այժմ ցոյց են տալիս, որ կովկասեան դատը, ընդհակառակն, աւելի զարկ է հաղորդում տաճկահայ շարժմանը. այդ երկուսը շաղկապուած են իրար հետ շատ բանով եւ մէկի դադարումը վնասակար կարող է լինել միւսի համար: Վերջին երկու տարուայ փաստերը, որ ձեզ ծանօթ են, ապացոյց են իմ այդ մտքի:*

Ռոստոմ (*բողոքում է Ջելալեանի դէմ*).— *Ինձ վրայ ծանր տպաւորութիւն թողին Ջելալեանի «տաճկահայ» եւ «կովկասահայ» բառերը. մէկ անգամ ընդմիշտ պէտք է վերջ տրուէին այդօրինակ մտքերի:*

Ջելալեան.— *Ես չեմ ուզել խտրութիւն դնել. խնդրում եմ ինձ սխալ չհասկանալ:*

Մալումեան.— *Կարդում է այն բանաձեւը, որ խմբագրուել է Ալեքսանդրապոլի մէջ գումարուած տաճկահայերի Ժողովում: Այդ բանաձեւը հետեւեալն է՝*

*«Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոյի հրաւիրմամբ գումարուած կովկասաբնակ դաշնակցական տաճկահայերի համագումարը, քննելով Նախագծի շուրջը ծագած տարաձայնութիւնները, անկախ շրջաններից բերած մանդատներից, եկաւ այն եզրակացութեան, որ նա համապատասխան է Հ. Յ. Դաշնակցութեան Գ. Ընդհանուր Ժողովի դրած սկզբունքներին, եւ որ կովկասեան գործունէութիւնը կեանքի հրամայողական պահանջ է: Իսկ Նախագծի վերջնական ընդունելութիւնը եւ գործադրութեան չափը թողնում է առաջիկայ Ընդհանուր Ժողովին»:*

*Ինչպէս տեսնում էք այս բանաձեւը ընդունում է Նախագիծը. ուրեմն սխալ է Մուրատի վերոյիշեալ նկատողութիւնը, թէ Կարի Ժողովը դէմ է եղել Նախագծին:*

Ջելալեան.— *Այդ բանաձեւի բովանդակութիւնը սխալ եմ գտնում:*

Մուրատ.— *Կարի Ժողովին մասնակցած պատգամաւորներից ոչ ոք անկեղծ կողմնակից չէ եղել Նախագծին. իսկ եթէ այնուամենայնիւ ստորագրել են այդ բանաձեւը, այդ եղել է, որովհետեւ նրանց վրայ բարոյական ճնշում է գործ դրուել:*

Վահագն.— *Ես ներկայ էի այդ Ժողովին. սխալ է, ոչ մի ճնշում չէ գործ դրուել: Ճիշդ է, 22 շրջաններից եկած պատգամաւորների մանդատների մեծ մասը հականախագծական բնաւորութիւն է ունեցել, բայց իրե՛նք, պատգամաւորները Ժողովի ընթացքում փոխեցին իրենց հայեացքները Նախագծի վերաբերմամբ, երբ նրանց բացատրուեց վերջինիս էութիւնը: Պատգամաւորները իրենց ունեցած մանդատներից անկախ, ընդունեցին Նախագիծը եւ յօժար կամքով ստորագրեցին այդ բանաձեւը: Իսկ թէ Ժողովից յետոյ նրանք նորից հականախագծական են դարձել՝ չգիտեմ:*

---

*Վիճաբանութիւնների շարունակութիւնը թողնւում է յաջորդ նիստին:*

## 59ՐԴ ՆԻՍՏ (30 Մարտ, երեկոյ)

*Նախագահում է Թոփչեան:*
*Ներկայ են 26 ժողովական:*
*Բացակայ են՝ Մուրատ, Անդրանիկ (հիւանդ):*

---

*Օրակարգ՝ Վարդանի եւ Սիրականի զեկուցումները Լեռնավայրի մասին եւ Մալումեանի լրացուցիչ զեկուցման շուրջը յարուցած վիճաբանութեան շարունակութիւնը:*

*Նախքան օրակարգին անցնելը Ժողովը լսեց նախորդ 2 նիստի արձանագրութիւնները, եւ հաստատեց:*

Նախագահ.— *Այսօր եկան Բաթումի ներկայացուցիչ Մ. Յովհաննիսեան (Վարանդեան) եւ Հ. Օհանջանեան. ուստի յանձնարարւում է մանդատները ստուգող յանձնաժողովին՝ քննել պաշտօնական գրութիւնները: Այժմ անցնենք օրակարգին. խօսքը Վարդանինն է:*

Վարդան.— *Ես մի քանի խոշոր գծերով կը ներկայացնեմ Լեռնավայրի դրութիւնը եւ կ'անցնեմ գրաւոր տեղեկագրին, որը շատ մանրամասն է: Մանաւանդ իմ նպատակն է առանձնապէս կանգ առնել մի երկու կէտի վրայ, որոնք անձամբ տեսել եմ: Այն ժամանակ որոշուած էր չորս ընկերներով անցնել Լեռնավայր: Բայց այս չորսից միայն ես եւ Սիմոնը անցանք, իսկ միւսները չգիտեմ ինչո՞ւ ներս չմտան, թէեւ դիմումներ յաճախ եղել են: Ես գացի Աթէնք, տեսայ Սարդարին [Սարհատին ?], կարգադրեցի այնտեղ եղած 100 հրացանները եւ փամփուշտները ուղարկել, բայց շատ սպասեցինք ու չստացանք: Յետոյ անցայ Բէյրութ, Հալէբ, Քիլիսի վրայով գնացի Այնթապ, ամէն տեղ էլ դրութիւնը անմխիթար էր, ամէն տեղ էլ հանդիպեցի նոյն անկերպարան վիճակին: Չկային պաշտօնական մարմիններ, այլ միայն անհատներ, այն էլ ոչ նուիրուած գործին: Հալէբում, թէ՛ մարմին եւ թէ՛ ամէն ինչ՝ Ռահվերն էր(26): Գործ չեն կատարում, իսկ խոստումներ՝ անթիւ ու առատ: Բայց սխալ կը լինի եթէ ասեմ թէ Լեռնավայրում մարդիկ չկան. ո՛չ, կան երիտասարդներ, որոնք դուրս են գալիս կոլէջից, բայց շատ անտարբեր են: Բացի այդ՝ ժողովուրդը գիտակից եւ պատրաստուած չէ. նա չափազանց շահասէր է. եւ բնորոշ է այն երեւոյթը, որ եթէ դրամ կայ՝ բարեւ էլ*

կայ. աչքերը տնկել են փողին։ Եւ թէեւ ահագին փող է ծախսուել — Սիմոնն էլ մեծ գումար էր բերել իւր հետ — բայց դրա համեմատ շատ աննչան բան է արուած։ Մեր ընկերներն էլ շատ անխնայ, անխիղճ կերպով են վերաբերուել ղրկուած փողերի հետ։ Ծախսել են շատ լայն չափերով։ Ժողովուրդը յեղափոխութեան մասին գաղափար չունի, յեղափոխութիւնից նա փախչում է։ Կայ նաեւ մի բնորոշ հանգամանք, որ իրար մօտ խմբուած հայ գիւղեր չկան. Զէյթունն է միայն բացառութիւն կազմում։ Դրանք առանձնացած են եւ շրջապատուած մահմետականներով։ Այդ շրջանի ամբողջ հայ ազգաբնակութիւնը կարելի է հաշուել ոչ աւելի քան 100–130 հազար։ Միակ վստահելին է Զէյթունը։ Նրանք յեղափոխական տեմպերամենտ չունեն, այլ միայն արկածախնդիր բնաւորութեան տէր են. գաղափարական ոչինչ չկայ։ Աշխարհագրական դիրքը լաւ է եւ նպաստաւոր, ինչպէս ծովափնեայ տեղերը, անառիկ դիրքերը, բայց նշանակալի ապստամբութիւն առաջացնել անհնարին է ուղղակի։ Մենք ոչինչ չենք արել, հետեւապէս բան էլ չպիտի սպասենք։ Այժմ հարկաւոր է Երկի՛ր ուղարկել ձեռնհաս գաղափարական մարդիկ, որպէսզի պատրաստեն մտքեր, առաջ տանեն կազմակերպչական գործը։ Տարիների անդուլ, անդադրում գործ է հարկաւոր ցանկալի եւ յաջող ապստամբութեան համար։ Իսկ Կիլիկիայում, դա իմ անհատական կարծիքս է, ապստամբութիւնը միանգամայն անկարելի է, իսկ ցուցական կռիւներ կարելի է յառաջացնել. եւ քանի որ եւրոպական նաւերը մօտիկ կանգնած են, գուցէ Եւրոպայի միջամտութիւնը առաջացնեն։ Կ'ուզէի եւ այն հանգամանքի վրայ շեշտել, որ անհրաժեշտ է երկրի մարդիկ [տեղացիներ ?] մըտնեն Լեռնավայր, քանի որ նրանք ազատ կարող են ապրել, շրջել եւ ոչ թէ ինձ նմանները, որոնք անկարող են երկար մնալ եւ թաքուն գործել։ Ուրեմն գործը առայժմ դնել կուլտուրական հողի վրայ, բայց դրա հետ նաեւ զուգընթացաբար յառաջ տանել զինման գործը։ Սրանով վերջացնում եմ իմ դիտողութիւնը եւ դառնում գրաւոր տեղեկագրին, եթէ ժողովը կարեւոր դատի նրա ընթերցումը։

Նախագահ — Այդ գրաւոր տեղեկագիրը յետոյ կը լսենք, այժմ խօսքը ընկ. Սիրականինն է։

Սիրական — Ես այժմ անկարող եմ զեկուցանել, կ'ուզէի վաղը աւելի լրացուցած ներկայացնել. չպէտք է աճապարել։

Նախագահ — Մենք անկարող ենք դրանով վաղն էլ զբաղուելու, ես առաջարկում եմ այժմ կարդալ զեկուցումը։

Ռոստոմ — Ես կարծում եմ, որ ընկ. Սիրականը պատրաստի զեկուցում ունի, նորը պատրաստելու պէտք չունի, քանի որ նա այսօր պիտի զեկուցանէր առանց Վարդանի էլ, իսկ վրիպող կէտերը կարող են նաեւ միւս ընկերները լրացնել։

Նախագահ — Ես նորէն պնդում եմ, որ ընկ. Սիրական այսօր պիտի կարդայ, մենք չենք կարող վաղը նորէն վերադառնալ նոյն հարցին։

Սիրական — Ես կրկնում եմ, որ անկարող եմ այսօր կարդալ. ես կը տամ գրաւոր զեկուցում։

Նախագահ — Մենք սրանով փակուած ենք համարում այս հարցը։ Նա կը տայ իւր զեկուցումը դիւանին. եթէ վերջինս յարմար դատէ, կը դնէ Օրակարգի մէջ։

Ժողովը համաձայնում է վերջին կէտին։ 5 րոպէ ընդմիջում։

---

Նախագահ — Վերաբանալով ժողովը. ես դնում եմ Վարդանի գրաւոր զեկուցման խնդիրը, արդեօք կարդա՞լ այդ տեղեկագիրը թէ ոչ։

Ժողովը համաձայնում է լսել ընթերցումը։

Վարդան — Այս տեղեկագիրը, որ կարդալու եմ, կազմուած է մօտ երկու տարի առաջ եւ այժմ մեր կարծիքը մի յայտնի չափով փոխուած է դրա վերաբերմամբ։

Զայնեդ — Դէպի լա՞ւը թէ վատը։

Վարդան — Իմ կարծիքով դէպի վատը։

Ընկեր Վարդանը կարդում է այդ զեկուցումը, որի ընթերցումը տեւում է 20 րոպէ։

Նախագահ — Այժմ անցնենք հարցումներին եւ որոշ կէտերի լուսաբանութեան։

Վռամեան — Ես կ'ուզէի գիտնալ ա) Ընկ. Սիմոնի եւ Վարդանի կարծիքը մեր առաջիկայ գործունէութեան մասին Կիլիկիայում. բ) Ովքե՞ր էին Պատասխանատու Մարմնի միւս անդամները եւ ինչո՞ւ չանցան Երկիր. գ) Նոր անդամներ ընտրուեցա՞ն նրանց փոխարէն եւ դ) Ինչո՞ւ Սիմոնը եւ Վարդանը հեռացան Երկրից։

Վարդան — Իմ, ինչպէս նաեւ Սիմոնի խորին համոզմունքն է, որ այժմ Զէյթունի ապստամբութեան մասին երազելն անգամ անհնար է։ Մեր կարծիքով այժմ միայն գիտակից, նուիրուած ընկերներ պէտք է մտցնել Երկիր, խաղաղ միջոցներով պատրաստել մըտքեր, կազմակերպել ժողովրդին լինի դա խօսքի պրոպագանդայով, գրքով, թերթերով, բայց ոչ զէնքով. կարող են, ի հարկէ, ինչպէս ասացի, զուգընթացաբար զինման համար էլ հոգալ։ Գլխաւորն է՝ կազմակերպել, գիտակցութիւն առաջացնել։ Պէտք է կշիռ տալ տեղական ուժերին, տաճկահայ ինտելիգենտ ընկերներին. այդ բանը դրսեցիների գործը չէ։ — Իսկ թէ ովքե՞ր են եղել Պատասխանատու Մարմնի 2 անդամները եւ ինչո՞ւ չեն դնացել՝ հաստատ չգիտեմ, նրանց չեմ էլ տեսել. գուցէ Ռոստոմը գիտէ։

Ռոստոմ — Դրանք Աղասէրն ու Առանձարն(26) էին. բայց թէ ինչո՞ւ չմտան Երկիր, իսկական շարժառիթը չգիտեմ։ Հիմնական պատճառ էլ չկար։ Ասում են ոմանք, թէ առանց նրանց համաձայնութիւնը առնելու են ընտրել։



Մալումեան — Նրանք հենց սկզբից տրամադրութիւն ցոյց չէին տալիս գործի մէջ մտնելու։

Մանուկ — Ես որքան գիտեմ, նրանք ընտրուել են մի պայմանով, որ Եուսուֆեանն էլ անցնի Երկիր. բայց վերջինս հրաժարուել է, հետեւապէս Աղասէրն ու Առանձարն էլ յետ էին կանգնել որոշումից։

Վարդան — Գալով ընկ. Վռամեանի երրորդ հարցին, պիտի ասեմ, որ ի նկատի ունէինք միայն Աւոյին, ուրիշ ընկերներ ուղղակի չկային. իսկ Աւոն էլ դրամականի կողմէ շատ թոյլ էր։ Նա վերցրել էր 50 ոսկի վաճառականական գործ ձեռնարկելու, թէեւ նա կարող էր ուսուցիչ լինել եւ կազմակերպութեան գործ էլ վարել, առանց ծանրանալու կազմակերպութեան վրայ. բայց նա չէր ցանկանում եւ ուզում էր առեւտուր անել։ Իսկ չորրորդ հարցին գալով, կարող եմ իմ մասին միայն ասել — Սարհատը(24) եւ Մարտինը(26) պիտի մտնէին Երկիր, այդ որոշուած էր, բաւականին դրամ էր ծախսուած, զէնքեր գնուած, եւն.։ Բայց նրանք չէին ուզում տեղերից շարժուել։ Ես եւ Սիմոնը խորհրդակցեցինք եւ յարմար գտանք, որ ես անցնեմ Աթէնք, նրանց գործերը քննելու եւ Երկիր չմտնելու պատճառները իմանալու, վերջապէս՝ ամբողջ անցած դարձածը պարզելու։ Գնացի Աթէնք եւ քննեցի. նրանք աւելի քան անբարեխիղճ էին վերաբերուել կազմակերպութեան դրամների հետ. ամսական ծախսել էին 350–400 Ֆրանք. այն ինչ, ես նոյն տեղում ապրելով ծախսել եմ միայն 150 Ֆրանք։ Ես կտրուկ եւ որոշ կերպով դրի Երկիր անցնելու հարցը։ Նրանք համաձայնեցին, բայց խիստ դրամական պահանջներ առաջադրելով։ Իմ վերջին խօսքն էր՝ կա՛մ մտնել Երկիր, միանուագ 15 ոսկի ստանալով, եւ կա՛մ պատասխանատու [նկատուել] ծախսած փողի համար, աւելացնելով, որ դրամը կը ստանաք ա՛յն ժամանակ, երբ կը մտնէք Երկիր։ Այս դրութեան մէջ էր գործը, երբ ես անցայ Ժընեւ։

Վռամեան — Ովքե՞ր են եղել կազմակերպութեան փողերը ծախսողները եւ ի՞նչ միջոցներ են ձեռք առնուած դրա դէմ։ Բացի այդ, ի՞նչ եղան 100 հրացանները։

Վարդան — Մի շարք մարդիկ, օրինակ՝ Մարտին, Սարհատ, Ռահվեր եւ Աչոտ Լեւոն։ Ասում են, որ վերջինս սիրուն մի տուն է շինել։ Չգիտեմ ծախսուած դըրամի իսկական քանակը։ Իսկ այդ զէնքերը մինչեւ այժմ էլ մնում են Աթէնք, թողնուած են մի վաճառականի մօտ, երբ ուզենք կարող ենք ստանալ. բայց նա ասում է, որ Սարդարը [Սարհատը ?] պարտք ունի, հետեւապէս առանց պարտքը վճարուելու չէ կարող զէնքերը յանձնել։

Մալումեան — Զէնքերի այս հարցը շուտափոյթ կարգադրութեան է կարօտ։ Այդ մթերքի ստացագիրը դտնւում է Բիւրոյի թղթերի մէջ։ Ցաւօք մարդ է ուղարկուած եղել կարգադրելու այդ հարցը։ Վերջերս Բիւրոյում, յոյն փաստաբանից ստացած թղթերին նայելով, մենք նորէն պիտի վճարենք 3500 Ֆր. զէնքերը յետ ստանալու համար։ Աւելի ձգձգել այս խնդիրը անկարելի է. քանի որ Սարհատը այստեղ է, պիտի օգտըւել այդ առիթից, եւ որոշ բացատրութիւն պահանջել նրանից Աթէնքի գործերի համար։ Խնդրում եմ մասնաժողովին այդ կէտը ի նկատի ունենալ։

Վռամեան — Ես շեշտում եմ, որ դա մէկն է կարեւորագոյն հարցերից, որի լուծումը իսկոյն պէտք է տալ։ Դա մասնաժողովի պարտականութիւնն է։ Կը խնդրէի մի վերջին հարցման էլ պատասխանել, թէ արդեօք ո՞րքան է ծախսուած Լեռնավայրում այդ երեք տարուայ ընթացքում։

Մալումեան — Ինչպէս տեսաք տպած հաշուից՝ 26,164 Ֆր. է ուղարկուած։ Այդ գումարի մի մասը մնում է Եգիպտոս։

Զարդարեան — Քանի որ Մարտինը վստահելի չէր, հապա ի՞նչպէս առաջարկում էիք Երկիր մտնել։

Վարդան — Սիմոնը լաւ զեկուցում արաւ նրա մասին. նա միայն յետոյ է աղդուել ընկերներից։ Մենք դա նրա համար իբր պաշտպանք էինք դիտում. միւս կողմից՝ ուրիշ մարդիկ չկային։

Սեպուհ — Մի հարց շատ թեթեւ կերպով շօշափուեց եւ անցաւ, դա Պատասխանատու Մարմնի Երկրից հեռանալու հարցն է։ Ես շատ էլ բանաւոր եւ պատճառաբանուած չեմ տեսնում դրա մասին լսուած բացատրութիւնները։ Դա կարեւոր հարց է եւ պիտի երկար խօսել։

Նախագահ — Մենք խօսում ենք ընդհանրապէս տեղեկագրի մասին եւ յետոյ կը լուսաբանուի այդ հարցը իր հերթին եւ տեղին։ Դրա վրայ այժմ երկար չպիտի կանգ առնել։

Համօ — Ես միանում եմ Սեպուհի դրած հարցին եւ գտնում դիտողութիւնը իրաւացի։ Այդպիսի ընդհանուր խօսակցութիւնների, դիտողութիւնների միջոցին էլ պիտի նման խնդիրներ խորհրդակցութեան նիւթ դարձնել։

Մալումեան — Ճիշդ գտնելով ընկ. Համոյի կարծիքը, հակառակ եմ, որ հարցը այժմ երկար վիճաբանութիւնների նիւթ դարձուի։ Անհրաժեշտ է Սիմոնի ներկայութիւնը, քանի որ նա աւելի ուշ է դուրս եկել Երկրից քան Վարդանը։ Բացի այդ՝ նոր զեկուցում ունենք (Սիրականինը), — մի առիթ՝ հարցը լուսաբանելու համար, երբ կը վերադառնանք Լեռնավայրին։

Տաճատ — Ցանկալի է, որ Սիրականի զեկուցումը յետաձգուի մինչեւ Սիմոնի գալը։

---

Հինգ րոպէ ընդմիջումից յետոյ վերաբացւում է ժողովը։

Նախագահ — Օրակարգի առաջին կէտը փակուած

համարելով, այժմ դառնում ենք ընկ. Մալումեանի զեկուցման քննութեան շարունակութեանը։ Խնդրում եմ կենտրոնանալ զեկուցման գլխաւոր կէտի, այսինքն Խորհրդի իրաւասութեան կողմի վրայ։

Մալումեան.— Եթէ հակաճառողներ չկան, մենք կարող ենք անցնել բանաձեւերին։ Ուրախալի է եւ այն, որ Բաթումն էլ, ինչպէս ընկ. Յովհաննիսեանն է ասում, դրական ձայն է տուել Նախագծին։ Ուրեմն պաշտօնական մարմինների ճնշող մեծամասնութիւնը, այն է 24 մարմիններից 21ը համաձայն են, 2ը հակառակ, իսկ մէկն էլ անորոշ է(Կարս)։

Համօ.— Ես որքան գիտեմ՝ Կարսն էլ հակառակ չէ։

Սեպուհ.— Ասում են բողոքողներ չկան, դա աւելի քան չափազանցութիւն է, առնուազն ինքնախաբէութիւն։ Հապա մամուլը, որ երկար ժամանակ այդ էր դարձրած տենդոտ պայքարի նիւթը. մի՞թէ սա բողոքի ձայն չէ։ Ժողովուրդի լայն շերտեր բողոքում են դրա դէմ։ Մենք շատ էլ չոգեւորուինք պաշտօնական մարմիններով։ Այդտեղ կասկածի տեղիք կայ։ Գանձակից ընտրուել է ընկ. Մաշուրեանը, բայց ի՞նչպէս է ընտրուել, ո՞րքան է օրինաւոր եւ մի՞թէ կարծում էք բոլորն էլ Նախագծի համար պայքարողներ են... Մենք պէտք է լուրջ վերաբերուենք այդ հարցին։

Մաշուրեան.— Եթէ Սեպուհի պէս մտածենք, այն ժամանակ գուցէ ոչ մի շրջանից այստեղ պատգամաւոր չպէտք է ընդունելի համարուի, որովհետեւ մենք այնպիսի ժամանակ ենք Շրջանային Ժողով գումարել, երբ քայքայուած էին, ինքնապաշտպանութեան հետեւանքով, բոլոր մեր նախկին մարմինները. մի բան՝ որ ամէն շրջանում է տեղի ունեցել, սկսած Արեւմտեան Բիւրոյից։ Մեր Շրջանային Ժողովում ներկայ էին բոլոր այդ ժամանակ գոյութիւն ունեցող մարմինների ներկայացուցիչները եւ նրանք, որոնք ցենզի իրաւունք է տուել տեղական մարմինը։ Սեպուհի պէս եթէ մտածենք, պիտի ամբողջ ժողովուրդից ընտրուած լինէինք, որովհետեւ Շրջանային Ժողովից քիչ առաջ ամբողջ ժողովուրդը — բոլոր գիւղերը — դաշնակցական էին համարւում։ Այստեղ 30 պատգամաւորների առաջ Մուրատը վեր կացաւ ու յայտարարեց Ընդհանուր Ժողովի առաջ, թէ Նախագծի շնորհիւ Դաշնակցութիւնը բաժանուել է 4 մասի, 4 մասից մէկն էլ ինքն է, եւ առայժմ 100աւոր զոհերի պատճառ պիտի դառնան։ Այսպիսի յայտարարութիւն անելու համար մի բարձր Ժողովում, պէտք է նա իւր խօսքերը հիմնէր այսօր տեղի ունեցող փաստերի վրայ. իսկ եթէ այդ այդպէս չէ, այն ժամանակ, նա՝ Մուրատը՝ լռելեայն լսող Ընդհանուր Ժողովի առաջ կոտորածի սպառնալիք է անում, 100աւորների արիւնի մասին է յիշում։ Ես բողոքում եմ այդպիսի սեւ խօսքեր Ժողովում արտայայտելուն համար։

Նախագահ.— Ես թոյլ չեմ տայ մանդատների մասին վէճ յարուցանելու, քանի որ դա ստուգուած է, եւ եթէ ապօրինութիւն կար, առաջ պիտի բողոքէին։

Համօ.— Անհրաժեշտ էր մի յանձնաժողով, որը քննէր մանդատները, որպէսզի այժմ Ժողովի իրաւասութեան մասին խօսք եւ կասկած չյարուցուէր։

Նախագահ.— Յանձնաժողով ընտրուած է ժամանակին եւ մանդատները ստուգուած. ուստի ոչ մի խօսք այդ մասին։

Համօ.— Սեպուհի ասածների մէջ ճիշդ է այն, որ Դաշնակցութեան մէջ, իբր մի ժողովրդական կուսակցութիւն, տիրում են այժմ երկու հակադիր տեսակէտներ, երկու հոսանքներ։ Այդ իրական փաստ է։ Եւ մի կողմը, այսպէս ասած Միհրանականները, համարում են Նախագիծը ապօրինի վիժուածք։ Այժմ հասել է ժամանակը, որ Դաշնակցութեան Բարձրագոյն Մարմինը, նրա կամքը ներկայացնող ներկայացուցչութիւնը ասէ իւր հեղինակաւոր խօսքը այդ կնճռոտ հարցի մասին։ Գուցէ ոմանք նկատեն եւ առարկեն, թէ չ'արժէ դրանով զբաղուել, բայց ես բոլորովին հակառակ տեսակէտի վրայ եմ կանգնած։ Անհրաժեշտ է այդ մանրամասն լուսաբանել։ «Ինքնապաշտպանութիւն» հասկացողութիւնը այդ խմբակի մօտ ըմբռնւում է շատ նեղ եւ սահմանափակ։ Նրանց տեսակէտով այդ գաղափարի տակ պիտի հասկացուի միայն կռիւ Թուրք ազգաբնակութեան դէմ։ Դա, ասել է, խելքի սնանկութիւն է։ Ամէն մի յարձակում մեր դէմ, որը վտանգում է մեր իրաւունքները, մեր գոյքը եւ ստացուածքը, լինի դա Թուրքերի թէ կառավարութեան կողմից, յառաջ է բերում ինքնապաշտպանութիւն։ Ռուսաց ներկայ ռէակցիոնէր կառավարութեան ամէն մի քայլը, ամէն մի ձեռնարկը հարկադրում են ինքնապաշտպանութեան դիմելու։ Դեռ աւելին. նրա գոյութեան ամէն մի օրը, ամէն մի ժամը թոյն է մեզ, ինչպէս նաեւ ամէն մի հպատակ ժողովուրդի համար։ Ուրեմն կեանքի հրամայողական թելադրութիւնն է, կռուել ռուսաց կառավարութեան ամէն մի ձեռնարկի դէմ եւ պայքարել այնքան, մինչեւ որ ստեղծենք իրական պետութեան կարգեր։ Սա էլ ինքնապաշտպանութիւն է, որը չեն ուզում ընդունել մեր ընկերներից ոմանք։ Այսպէս է հասկացուել այդ 1904 թուի Ռայոնական [Ընդհանուր ?] Ժողովում եւ ըստ այնմ ընդգծուել մեր գործելակերպը կառավարութեան դէմ։ Դա կեանքի անհրաժեշտութիւն էր։ Եւ եթէ չտայինք այդ ծրագիրը, Դաշնակցութիւնը գոյութիւն չէր ունենայ. դա ամենահեռատես քայլն էր։

Զարդարեան.— Ես կ'ուզէի որ հենց այդպէս էլ դրուէր հարցը. այն, որ այդ ակտը եղել է կեանքի հրամայողական անհրաժեշտութիւն. իսկ իրական տեսակէտը մի կողմ թողնել, քանի որ վերջինս աւելի քան թոյլ է պատճառաբանուած եւ հիմք էլ չունի։

Ռոստոմ.— Մի բնորոշ հանգամանք, որ արժէ չեշտել, այն է՝ որ մինչեւ այժմ պաշտօնական մարմիններից շատերն անգամ չէին ուզում ճանաչել Նախագիծը. իսկ այժմ, տալիս են իրենց դրական ձայնը։ Այդ է բնորոշ կողմը։ Այդ ասելով, չեմ հակաճառում այն բանի դէմ, որ ժողովրդի մէջ խոշոր թուով հակառակորդներ կան։



Ջելալեան.— Ընկ. Համօն Նախագծի հակառակորդներին բնորոշեց Միհրանական անունով։ Ամերիկան եւ Բալկանն էլ հակառակ են...։

Զայներ.— Համօն այդպէս չէ ձեւակերպել, սխա՛լ է։

Ջելալեան.— Լա՛ւ. կան անշուշտ մարմիններ, որ հակառակ են եղել. բայց ափսոս, կարծիքները չեն բերուած։ Մենք, կ'ուզէի շեշտել, Միհրանական չենք կարող լինել, քանի որ Դաշնակցութեան դէմ չենք կարող լինել։ Բայց մեզ համար ցանկալի էր երկու կողմերի տեսակէտները եւ լուսաբանութիւնները լսել։ Մենք լսում ենք միայն մի կողմինը։ Չէ կարելի ուրանալ, որ անգամ ինտելիգենտ [մտաւորական] ընկերների մէջ տիրում է երկու ըմբռնում։

Նախագահ.— Ընկ. Ջելալեան մոռանում է, որ տեղեկագրերի մէջ յիշուած են բոլոր թեր ու դէմ կարծիքները, նաեւ այն հականախագծական դաշնակցականների կարծիքը, որոնք Դաշնակցութեան մէջ են։ Խնդրում եմ կանգ չառնել դրա վրայ։

Վռամեան.— Ի զուր է ջանալ հերքել այն բանը, որ իրօք Դաշնակցութիւնը ինքնապաշտպանութեան հողի վրայ չէ կանգնել, այլ անցել է զուտ մարտական յեղափոխութեան։ Սխալ է նաեւ, պնդել 21 մարմինների վրայ յենուելով, թէ Նախագիծը իրաւական մի ձեռնարկ է։ Այդ մարմինների դիմաց կանգնած է աղատ մասսա, որ ոչինչ չգիտէ այդ մասին եւ չէ էլ ուզում լսել։ Հարցը չպէտք է դնել այս հողի վրայ, այլ ասել, որ նա կեանքի գործն է, նրա իրական թելադրութիւնը։ Ահա գլխաւորը։ Խորհուրդը, որ անցել է իր իրաւունքի սահմաններից, դա անվիճելի է ինձ համար։ Նման բնոյթ էր կրում նաեւ Դաշնակցութեան 1904 թուի [1903 ?] ռուսաց կառավարութեան դէմ մղած կռիւը։ Առանց իրաւասութեան հարց բարձրացնելու, այդ իբր կեանքի հրամայողական թելադրութիւն ընդունելով, Ընդհանուր Ժողովը միայն ծափահարութեամբ ընդունեց։ Ուրեմն ես եզրակացնում եմ, Դաշնակցութիւնը ըմբռնել է իրական կեանքի թելադրութիւնը, քաղաքական մոմենտի արժէքը եւ արձագանգ տուել։ Իրաւական հարցերի առաջ չպիտի եյլել։ Թողնենք այդ բոլորը, սեղմենք մեր շարքերը, համերաշխ դիմենք մեր առաջ դրուած ստեղծագործական հարցերին. մեր թշնամիների ուրախութեան համար մի փոքրիկ առիթ անգամ չտանք, որոնք աչքերը տնկած Ընդհանուր Ժողովի վրայ, սպասում են երկպառակութեան ձայներին։

Մալումեան.— Ես խնդրում եմ իրաւական կողմը դուրս չհանել եւ կենտրոնանալ այդ կէտի վրայ։

Միք. Յովհաննէսեան (Վարանդեան).— Ընկ. Սեպուհը մեզ յիշեցրեց մի իրական փաստ, մանդատների համեմատութիւնը այնքան էլ չի համապատասխանում իրականութեանը։ Ճիշդ է որ շատ վայրերում ընտրութիւնները կայացել են 3ը 2ի դէմ։ Կարծիքների խիստ տարբերութիւն կայ նաեւ իմ շրջանում, թէեւ նախագծական են ընտրել։ Ուրեմն լուրջ պիտի մօտենալ հարցին։ Գալով Նախագծի իրաւական կողմին, պիտի ասեմ, որ ընկ. Վռամեանի դիտողութիւնը անհիմն է եւ խախուտ։ Ընդհանուր Ժողովի որոշումների թելադրութեան վրայ յենուելով մարմինները իրաւասութիւն ունէին դիմելու յարձակողական քաղաքականութեան։ Մի՞թէ յարձակում չեն տեռորը, որ միշտ կատարել է Դաշնակցութիւնը, գորդածուլները, քաղաքական ցոյցերը. ընկ. Համօն ասում է, թէ Դաշնակցութիւնը քայքայուելու վախից դիմեց այդ գործին։ Ո՛չ, այդ կեանքի պահանջն է, իսկ Դաշնակցութիւնը, իբր կենսունակ կեանքի կուսակցութիւն, ըմբռնեց րոպէն եւ եկաւ իւր Նախագծով դրան արձագանգ տալու։

Մինասեան.— Ես պնդում եմ որոշել Խորհուրդի իրաւասութեան սահմանները, որպէսզի նման հակասութիւնների առաջը միանգամ ընդմիշտ փակենք։ Դա Խորհրդի իրաւասութիւնից դուրս էր հենց այն պարզ պատճառով, որ Դաշնակցութեան մինչեւ այժմ վարած գործը՝ տաճկահայկական դատը, մի համազգային հարց էր իսկ Նախագծով բացուած գործունէութիւնը մի տեղական, մի համայնքի գործ է. ու դա գալիս է վնասելու համազգային գործին։

Համօ.— Ես շատ ցաւում եմ, որ ընկ. Ջելալեան, ինձ սխալ հասկացաւ, կարծելով, որ ես իբր թէ բոլոր հականախագծականներին «Միհրանական» անուանեցի։ Իրաւական կողմին գալով, ես կ'ասեմ, որ Դաշնակցութիւնը իբրեւ մի յեղափոխական կուսակցութիւն, ուրիշ դիրք էլ չէր կարող բռնել նման պահանջների հանդէպ։ Մենք չպէտք է շատ էլ հետեւենք բառերին։ Մենք չենք կարող մի կէտ ցոյց տալ, որ Դաշնակցութեան հակառակ լինի։ Գ. Ընդհանուր Ժողովի ոգին թելադրում է նոյնիսկ քաղաքական յաջող րոպէներին միանալ ուրիշ յեղափոխական կուսակցութիւնների հետ, եւ միացած ուժերով մղել պայքարը։ Յովհաննէսեանն ասում է այն ինչ՝ որ սոցիալ-դեմոկրատներն (են ասում). ես չեմ ասում, որ Դաշնակցութեան քայքայումի վախից է որ ձեռնարկել ենք նման գործունէութեան, այլ այն, որ դա պահանջ էր եւ եթէ մենք արձագանգ չտայինք այդ պահանջին, ուղղակի կը քայքայուէինք։

Ստեփանեան.— Իմ կարծիքով մեզ մնում է միայն մեր վստահութեան քուէն տալ Խորհուրդին եւ անցնել բանաձեւերին։

Ռոստոմ.— Կ'ուզէի մի բնորոշ հանգամանք շեշտել. Երրորդ Ընդհանուր Ժողովի որոշումները դառել են այնպիսի օրէնք, որ ամէն մէկը իր տեսակէտով կարող է բացատրել, իր իրաւական հողն ունենալ։ Եւ

*դա արդիւնք է անորոշութեան։ Ուրեմն եթէ օրինաւորութեան խօսք կայ, պիտի Ընդհանուր Ժողովին պատասխանատուութեան կանչել, քանի որ մեզ՝ նման անորոշ դրութեան մէջ է դրել։ Բայց ես ընդունում եմ, որ Խորհուրդը իրաւունք ունէր սանկցիա [վաւերացում] տալ Ռայոնական Ժողովին։*

Մալումեան.— *Որ իրականութեան մէջ բաւական թուով հականախագծական մարդիկ կան, այդ ես ընդունում եմ, բայց չեմ սխալւում, յենուելով պաշտօնական մարմինների տուած վաւերական թղթերի վըրայ, եզրակացնելու, որ ճնշող մեծամասնութիւնը, 21ը 3ի դէմ, համաձայն է Նախագծին։ Ի զուր են մի քանի ընկերներ նկատում, որ մենք իբր թէ հակառակ կարծիքներ չունենք. ո՛չ, մենք ունենք այդ եւ իր ժամանակի դիւանը կը ներկայացնէ Ժողովին։ Ընկ. Ջելալեանը սխալւում է, երբ ասում է, որ իրենք իբր թէ տեղեկութիւն չեն ունեցել։ Մի՞թէ Կովկասում յարուցած այն աղմկալի կռիւը ձեզ անծանօթ է մնացել։ Եթէ այդ ճիշդ է, մեզ մնում է միայն ցաւել։ Եւ զարմանալին այն է, որ դուք գացիք Կովկաս, տեսաք ամէն ինչ տեղն ու տեղը եւ էլի հականախագծական վերաբերմունք։ Ուրեմն փաստն այն է, որ դուք ոչ թէ անտեղեակ էք եղել, այլ չէք ուզեցել։ Նախագիծը կեանքի պահանջ էր, որը գեղեցիկ կերպով բացատրեց ընկ. Վռամեանը։ Կովկասեան մեր թերթերը այդ մասին երկար եւ մանրամասն գրել են. «Դրօշակ»ը, իբր պաշտօնական օրգան, տարաբախտաբար լիազօրութիւն չունէր այդ խնդրի լուսաբանութեամբ զբաղուելու։ Ընկ. Վռամեան ասում է, որ անցեալ ժողովում ընկերները ծափահարութեամբ ընդունեցին եկեղեցական կալուածների առթիւ ռուսաց կառավարութեան դէմ մղած գործունէութիւնը։ Իսկ ինչո՞ւ այժմ նման ծափահարութեամբ չեն դիմաւորում նման մի ուրիշ ձեռնարկ, մի ամբողջ գործունէութիւն՝ բխած մեր դառն իրականութիւնից։ Չէ՞ որ այդ երկուքն էլ կեանքի նման պահանջների արձագանքներ էին։ Համաձայն չեմ նաեւ այն կարծիքի հետ, որ իբր թէ ժամանակին չէ քարոզուել, մտքեր չեն պատրաստուել եւ Նախագիծը տարածուել։*

Տաճատ.— *Ես ընդունում եմ Նախագիծը, օրինակ, յենուելով երեք հանգամանքի վրայ.* ա) *որ դա 1892ի Ծրագրի ոգուց է բխած.* բ) *յետոյ եղած ժողովների, եւ* գ) *նա կեանքի պահանջ էր։ Բայց ես չեմ ուզում սրա վրայ երկար կանգ առնել։ Ես շեշտում եմ ուրիշ բան. արդեօք դաշնակցական մարմինները աշխատե՞լ են Նախագիծը դարձնել ժողովրդի սեփականութիւն, արդեօք բաւարար կերպով զբաղուե՞լ է դրանով, եւ մղուե՞լ է պրոպագանդա։ Ես դրականապէս կ'ասեմ, ո՛չ։ Ես, ինչպէս Իսահակեան, թէեւ պաշտօնական մարդիկ ենք, բայց շատ յետոյ ենք իմացել։ Եթէ որոշ տարրեր Կովկասում, Բալկանը, Ամերիկան հակառակ են Նախագծին, միայն այն պատճառով է որ անծանօթ են այդ հարցին եւ չգիտեն նրա մէջ զարգացրած մտքերը։*

Վահագն.— *Իբր փաստ կարող եմ յիշատակել, որ 1904ի Ընդհանուր Ժողովի տեղեկագիրը միայն մի տարի յետոյ է մեզ հասել, այն էլ շատ սակաւ օրինակներ։ Նոյնը եւ Նախագիծը։ Եւ մենք ստիպուած եղանք յատուկ մարդիկ ղրկել Կովկաս, ուսումնասիրելու համար այդ։*

Ջելալեան.— *Ես ճանաչուած եմ հականախագծական, իսկ Վահագնը՝ նախագծական։ Բայց այն ժամանակից ի վեր երբ պաշտօնական Ժողովում բազմակողմանի կերպով պարզուել է այդ հարցը, ես ոչ մի բան չեմ ասել Նախագծի դէմ, եւ ոչ էլ կ'ասեմ։ Բայց կայ ստուար մաս մը, որը խիստ հականախագծական է։ Այդ չէ կարելի ջրել։ Իմ խօսքը Կովկասի մասին է։ Ի՞նչ տպաւորութիւն կարող էի ստանալ, երբ պաշտօնական մարմինները ուրիշ տեսակէտ ունէին, իսկ դրսի ընկերները՝ տարբեր։ Մեր ամերիկական մամուլը չէ զբաղուել, չէր էլ կարող զբաղուել այդ հարցով։ Բայց այժմ ձեզ հետ շփուելով, աւելի ու աւելի պարզւում է մեզ համար հարցը։*

Համօ.— *Ես եւս ընդունում եմ, որ Արեւելեան Բիւրօն տեղեկութիւն հաղորդելու իր պարտականութեան վրայ չէ կանգնել։*

Նախագահ.— *Ես էլ միանում եմ Տաճատի հետ. մասսան դուրս է մնացել եւ անտեղեակ է Ծրագրին։ Վիճաբանութիւնը կարծում եմ սպառուած է եւ կարող ենք անցնել բանաձեւերին։*

Ռոստոմ.— *Պիտի թողնել բանաձեւերի առաջարկը։ Ես էլ համամիտ եմ այն արտայայտուած կարծիքին, որ Բիւրոները մեղաւոր են, բայց Արեւմտեան Բիւրոն՝ աւելի, մանաւանդ՝ «Դրօշակ»ի խմբագրութիւնը։ Լաւ է որ ընկ. Մալումեանն է զեկուցանողը։ Եթէ իրաւական է եղել Խորհրդի որոշումը, ինչո՞ւ պաշտօնական օրգանը մանրամասն լուսաբանութեան առարկայ չէ դարձրել Նախագիծը։*

Մալումեան.— *Շատ պարզ պատճառով. «Դրօշակ»ը այդ չէր կարող անել եւ այդ մասին ես արդէն խօսել եմ Արեւմտեան Բիւրոյի տեղեկագիրը ներկայացնելիս։*

Վահագն.— *Ես էլ կարծում եմ, որ բանաձեւերի հարցը պիտի յետաձգել, քանի որ երկու կարեւոր շըրջանների ներկայացուցիչներ՝ Անդրանիկ եւ Մուրատ՝ բացակայում են։ Ցանկալի է, որ բանաձեւերը քուէարկելիս Ընդհանուր Ժողովի ամբողջ կազմը ներկայ լինի։*

*Ժողովը փակուեց ժամը 7½ին։*

## 60ՐԴ ՆԻՍՏ (1 Ապրիլ, առաւօտ)

*Նախագահում է՝ Վռամեան։*
*Ներկայ են՝ 28 ժողովական։*
*Բացակայ է՝ Անդրանիկ (հիւանդ)։*



---

*Շարունակութիւն՝ Մալումեանի զեկուցման առթիւ եղած վիճաբանութիւնների (Խորհրդի իրաւասութեան խնդիր)։*

Սեպուհ.— *Կարդում է կանոնագրութեան 119րդ յօդուածը(30).— Այս յօդուածի հիման վրայ, Խորհուրդը՝ Դաշնակցութեան գործունէութիւնը դուրս չպէտք է բերէր Տաճկահայաստանի սահմաններից։*

Ռոստոմ.— *Գ. Ընդհանուր Ժողովը ինքը որոշեց՝ գործել եւ Կովկասում։ Այդ 119րդ յօդուածը կանոնագրութեան մէջ է մտել կովկասեան գործունէութեան մասին որոշում կայացնելուց յետոյ։*

Մինասեան.— *Նախագիծը՝ ես համարում եմ հակառակ Դաշնակցութեան ոգուն, որովհետեւ Դաշնակցութիւնը, յատկապէս Տաճկահայաստանի համար ստեղծուած՝ տաճկահայ դատից դուրս չպէտք է սկըսէր ոչ մի ուրիշ դատ։ Դաշնակցութիւնը համազգային կազմակերպութիւն չէ, որպէսզի յանձն առնէ վարել թէ՛ Կովկասի եւ թէ բոլոր միւս հայերի դատերը։ Եթէ յանկարծ վաղը բուլղարաբնակ հայերի մի դատ ասպարէզ գայ, արդեօք Դաշնակցութիւնը պէ՞տք է անցնի շարժման գլուխը։ Իսկ եթէ Դաշնակցութիւնը համազգային էք ուզում համարել, այս դէպքում Կովկասում պարտաւոր էք չմղել ոչ մի դասակարգային պայքար։ Կալուածների գրաւման հարցը համազգային հարց էր եւ Դաշնակցութիւնն իր վրայ առաւ այդ հարցի լուծման գործը. բայց երբ այսօր նոյն Դաշնակցութիւնը դասակարգային սկզբունքներով է ձգտում ղեկավարուել — նա այլեւս կորցնում է իր համազգային բնոյթը...։ Ո՛չ, Դաշնակցութիւնը չպէտք է ունենայ կովկասահայ դատ, ի նկատի ունենալով այն հանգամանքն եւս, որ տաճկահայ դատի լուծման տեսակէտից անհրաժեշտ է Եւրոպայի միջամտութիւնը, մինչդեռ Եւրոպան չի խառնուի կովկասեան գործերի մէջ։ Ի վերջոյ ես մի տեսակ դուալիզմ [երկուութիւն] եմ գտնում՝ Ընդհանուր Ժողովի եւ Խորհուրդի գործունէութեան մէջ. դուալիզմ՝ որովհետեւ Խորհուրդը, հրատարակելով Նախագիծը, մտել է Ընդհանուր Ժողովի իրաւասութեան սահմանների մէջ, կատարել է նրա դերը... Հապա այլեւս ի՞նչ նշանակութիւն ունի Ընդհանուր Ժողովը, եթէ Խորհուրդն է, որ գործում է միեւնոյն իրաւունքներով։*

Մուրատ.— *Խորհուրդն իրաւունք չունէր Նախագիծն հրատարակելու, բայց եւ այնպէս ես ոչինչ դէմ չեմ ունենայ, եթէ այսօր Խորհուրդն ինքը խոստովանի իւր քայլի ապօրինի լինելը. սա կուսակցական դիսցիպլինի պահանջն է. Թող Խորհուրդն արտայայտէ այստեղ, որ ինքը իրաւունք չէ ունեցել, միայն թէ հանգամանքներից ստիպուած է հրատարակել Նախագիծը։ Նախագիծը ես համարում եմ վտանգաւոր, դա մի սխալ է, որը մենք ապագայում քաւելու ենք՝ հարիւրաւոր զոհերի արիւնով։ Այդ չարաբաստիկ Նախագծի շնորհիւ է, որ Դաշնակցութեան մէջ այսօր չորս հոսանք գոյութիւն ունի. ճիշդ չէ սակայն, իբր թէ բոլոր այդ հոսանքները բնական են ու անխուսափելի. ո՛չ, նրանք արհեստական են։ Եւ յետոյ թող ընկ. Մալումեանը կարդալ - գրել չգիտնալուն չվերագրի, որ մենք դէմ ենք Նախագծին։ — Կարդացած ենք ու հետեւապէս հասկացած։*

Շահխաթունեան.— *Եթէ ընկ. Մինասեան պնդում է, որ իւր այսօրուայ ասածները մտցուեն արձանագրութեան մէջ, այս դէպքում ես ստիպուած եմ քննադատել նրա արտայայտած մտքերը, քանի որ սրանք բոլորովին չեն համապատասխանում Դաշնակցութեան ոգուն։ Ընկե՛ր Մինասեան, Դաշնակցութիւնը, կալուածների գրաւման պատճառով կռիւ յայտարարեց ռուս կառավարութեանը ո՛չ երբեք մեր եկեղեցու ու հոգեւոր պետի իրաւունքները պաշտպանած լինելու նպատակով. ընդհակառակն, մեր կուսակցութիւնը իւր սկզբունքներով, խիստ կերպով պայքարում է եկեղեցականութեան դէմ։ Եւ եթէ դուք կը պնդէք ձեր այդ հայեացքի վրայ, Դաշնակցութեան մասին, ես կ'ասեմ, որ դուք միայն թիւրիմացութեամբ էք «դաշնակցական» համարւում։ Եւ ես կ'ուզէի, որ Ժողովը ցոյց տար ձեզ, թէ ձեր այդօրինակ կարծիքը, ձեր անհատական կարծիքն է, այլ ոչ կուսակցական։*

Մալումեան.— (*Պատասխանելով Մուրատին*).— *Հականախագծականների շարժումը ես բացատրում եմ երկու կերպ. առաջին, որ զանազան մարդիկ, դժգոհ կազմակերպութիւնից, անձնական հաշիւներից դրդըւած, իրենց անհատական դժգոհութեանը տուել են սկզբունքային բնաւորութիւն. եւ երկրորդ, որ մեր ամբոխային խաւերը կարդալ չկարողանալով, ո՛չ մի գաղափար չունեն Նախագծի մասին, եւ իրենց այդ անգիտութեան պատճառաւ, հետեւում են վերոյիշեալ մարդկանց։ Իմ խօսքը դաշնակցական ընկերներին չէ վերաբերում, հարկաւ.— Ինչ վերաբերում է Մուրատի ասած դիսցիպլինային, այո՛, Ժողովը պէտք է իւր կարծիքը յայտնի, թէ որքան ապօրինի է եղած Խորհուրդի քայլը։ Եթէ ապօրինութիւն է կատարուել, թող Ժողովը դատապարտի Խորհրդին։*

Ջելալեան.— *Խորհրդի իրաւասութեան սահմանների մասին ընդհանրապէս չեմ խօսի։ Ես միայն ուզում եմ ասել, որ Խորհրդի գումարման միջոցին՝ Երկրի Պատասխանատու Մարմիններից շատերը չեն ունեցել իրաւական գոյութիւն, որպէսզի կարող լինէին մասնակցել Խորհրդին, եւ քանի որ այսուամենայնիւ մասնակցել են, այս դէպքում Խորհուրդն այլեւս ո՛չ օրինական պէտք է համարել։ Պատասխանատու Մարմինների կողմից երկու հոգի են մասնակցել, սրանցից մէկը՝ Անդրանիկը, սակաւ է ներկայ գտնուել նիստերին (հիւանդութեան պատճառով), իսկ միւսը, Վիշապի*

ծաղուլներին: — Անկասկած, եթէ այդ բանուորների խոշոր տոկոսութիւնը չլինէր, նրանք անյապաղ կը հեռանային Դաշնակցութիւնից: Ես ի հարկէ, չեմ մեղադրում Դաշնակցութիւնը, որ մեծ թափով չէ գործել բանուորական շահերի համար. չեմ մեղադրում, որովհետեւ Դաշնակցութիւնը, անցեալում չէ եղել քաղաքական կուսակցութիւն: Ի զուր չջանանք հաւատացնել, թէ մեր ներկայ սոցիալիստական գործունէութեան շրջանը՝ անմիջական շարունակութիւն է նոյնպիսի մի շրջանի՝ անցեալում: Ռուսական յեղափոխութեան յախուռն զարգացման շնորհիւ է, որ Դաշնակցութեան մէջ՝ մտքերի էվոլիւցիա [հոլովոյթ] տեղի ունեցաւ. Ահարոնեանը, օրինակ, որ երկու երեք տարի առաջ սոցիալիզմի կողմնակից չէր, այսօր յարել է նրան: — Այսուհետեւ է միայն, որ պէտք է դառնանք քաղաքական–սոցիալիստական մի կուսակցութիւն: Բայց դառնալու համար, նախ եւ առաջ հարկաւոր է որոշել մեր տեսակէտը՝ ազգայնութեան գաղափարի մասին: Թոփչեանի ասելով մինչեւ այժմ ունեցած մեր ազգայնութիւնը չի հակասում սոցիալիզմին: Սխալ է բոլորովին: Այո՛, ազգայնութիւնը առհասարակ չէ հակասում սոցիալիզմին — բայց միայն այն դէպքում, երբ այդ երկուսի հասկացողութիւնները չէին զատուած իրարից, այլ կազմում են մի ամբողջութիւն: Եւ երբ ասում ենք ազգային պահանջներ — կապուած սոցիալիստական պահանջների հետ — հասկանալի է. բայց երբ ասում էք՝ ազգային կռիւ, անկախ սոցիալիզմից, այս դէպքում՝ այդ առանձնացած ազգայնութիւնը հակասում է սոցիալիզմին: Ես կ'ասեմ, որ սոսկ ազգայնութեան տեսակէտ ունենալ անկարող ենք, քանի որ մենք աշխատաւորական կուսակցութիւն ենք ուզում դառնալ. այո՛ կազմակերպենք հայ մասսաներ միայն, պաշտպանենք մեր ազգային պահանջները, բայց այդպիսով մենք չենք դառնայ ազգային կուսակցութիւն: Արամի այն ասածին, որ կովկասեան շարժումը մի տեսակ յեղափոխական մարզարան է տաճկահայ շարժման համար, — կը դառնամ յետոյ:

**Ռոստոմ**.— Ես կանգ կ'առնեմ նախ այն կէտի վրայ, իբր թէ մեր թուլանալու պատճառը Կովկասում՝ Նախագիծն է: Սա մեր հակառակորդ բուրժուազիայի սիրած փաստարկութիւնն է. եւ մեր այն ընկերների բերանով, որոնք այդ պատճառաբանութիւնն են բերում՝ խօսում է ինքը բուրժուազիան: Իսկական պատճառները դիտմամբ մի կողմը թողած, բուրժուազիան Նախագիծն է մատնացոյց անում՝ մեզ վնասելու նպատակով: Մուրատը մատնացոյց է անում Զրաբերդի վրայ, որ տեղի խմբերը, նրա կարծիքով Նախագծի շնորհիւ են կազմալուծուել: Ես էլ յատկապէս Զրաբերդի վրայ կանգ կ'առնեմ, ապացուցանելու, որ Մուրատի կարծիքը սխալ է միանգամայն: Կազմալուծումը Զրաբերդում կատարուել է Նախագծից վեց ամիս — մէկ տարի առաջ: Տարօրինակ է, ի հարկէ, որ մենք թուլացել ենք Զրաբերդի նման մի վայրում, որտեղ Դաշնակցութիւնը լայնարձակ գործունէութիւն է ունեցել եւ որը ռէակցիայի օրերին, վառ պահեց իր մէջ յեղափոխական ոգին: Որպէսզի պարզ լինի մեզ համար մեր թուլանալու պատճառը, մենք պէտք է յիշենք թէ ի՛նչ պարագաներ բարձրացրին կազմակերպութեան նշանակութիւնը Զրաբերդի շրջանում 1898 թուի զօրեղ ռէակցիայից յետոյ: Այդտեղ էր, որ զարգացաւ դատաբանական սիստեմը (եւ այն պատճառի որ «Դաշնակցութիւն» ասելով ժողովուրդը մինչեւ վերջին ժամանակները հասկանում էր «դատարան»), սկսուեց Դաշնակցութեան ղեկավարութեամբ կուլտուրական գործունէութիւն՝ թատրոն, դպրոց, գրադարան եւն., բոյկոտ արուեց կառավարութեանը, — այս պարագաները վերակենդանացրին Կովկասում մեր Կազմակերպութիւնը. իսկ կալուածների գրաւումը՝ եկաւ աճեցրեց մեր ուժերը: Երբ, սակայն կալուածները վերադարձուեցին, Հոկտեմբերեան մանիֆեստը լոյս տեսաւ, որով որոշ իրաւունք էր տրւում ժողովուրդին, մեզանից հետզհետէ հեռացան բոլոր այն տարրերը, որոնց պահանջները կալուածները յետ ստանալուց այն կողմը չէին անցնում. այսպէսով մենք սկսեցինք թուլանալ, բնական էր այդ թուլացումը, — իւրաքանչիւր կուսակցութիւն թուլանում է յաղթանակ տանելուց յետոյ: Զրաբերդում, մասնաւորապէս, մեր թուլացման պրոցեսին [ընթացքին] նպաստեց եւ այն հանգամանքը, որ այդ միջոցին մենք փոխել էինք մեր գործելակերպը տաճկահայ շարժման վերաբերմամբ. առաջուայ պէս այլեւս խմբեր չէինք կազմակերպում, ինչպէս՝ Թումանի, Խանի խումբերը, որոնցով մի ժամանակ ոգեւորուելիս են եղել Զրաբերդում: Ապա կար նաեւ մի ընդհանուր պատճառ՝ մեր թուլացումների, բոլոր տեղերում. դա տնտեսական տագնապն էր: Կովկասահայ ժողովուրդը տնտեսապէս քայքայուել էր այնքան, որ իր ինքնապաշտպանութեան հրամայական գործի համար իսկ դժուարութեամբ էր փող տալիս: Կրկնում եմ, Զրաբերդի բոլոր խմբերը կազմալուծուել են նախքան Նախագծի երեւան գալը: Ասում են՝ կովկասեան գործունէութիւնը վնասներ է տուել տաճկահայ շարժմանը: Ես կ'ուզէի, որ ինձ այստեղ մի առ մի թուէին թէ որո՞նք են այդ վնասները, որպէսզի ես միջոց ունենամ կէտ առ կէտ խօսել նրանցից իւրաքանչիւրի մասին: Շեշտուում է, որ կովկասեան գործունէութեան պատճառով Դաշնակցութեան մէջ ուժերի ջլատում է առաջանում: Առհասարակ կարծում են, թէ յեղափոխական կուսակցութիւնը կառավարութեան նման միշտ էլ մնայուն, որոշ ուժ ունի, որին կարելի է ցանկալի կիրառումը տալ: Շատ հասկանալի է, որ Դաշնակցութիւնը գործ սկսելով և Կովկասում, չէր կարող իւր բոլոր ուժերը առաջուայ նման յատկացնել բացառապէս Տաճկաստանին: Բայց չնայելով ուժերի կարծեցեալ ջլատման, փաստն այն է, որ Դաշնակցութիւնն այնուամենայնիւ օգնութիւն է



հասցրել տաճկահայ շարժմանը՝ աւելի քան երբեք. եւ տրուած այդ օգնութիւնը եղել է համեմատաբար մեծ՝ շնորհիւ կովկասեան գործունէութեան. Կովկասում սկսած կռիւները հրապարակ հանեցին յեղափոխական բազմաթիւ անհատներ, բարձրացրին ընդհանրութեան ոգին. եւ այս բոլորից տաճկահայ դատը միայն շահ ունեցաւ: Առաջներում, մեր դրամական եկամուտն ամբողջովին յատկացուել է Տաճկաստանին. այդ ամբողջը սակայն, շատ քիչ է համեմատած եկամուտի այն մասի հետ, որ հիմա է յատկացւում (թուեր է յառաջ բերում): — Այս չպէտք է մոռանալ: Ցետոյ, մեզանից ուժեր է խլել, ոչ թէ բուն քաղաքական կռիւը ցարիզմի դէմ, այլ ինքնապաշտպանութիւնը. սա էր որ զբաղեցրել է ամենքիս, Բիւրոյի անդամներից սկսած մինչեւ Մուրատը, Սեպուհը...: Եթէ Կովկասում մի վտանգ կայ տաճկահայ դատի համար, դա ինքնապաշտպանութեան կռիւներն են եւ մենք պարտաւոր ենք ճիգ թափել, որպէսզի վերջ տրուի այդ կործանարար կռիւներին. իսկ վերջ տուած լինելու համար, մենք պէտք է քաղաքական լոզունգ [բնաբան] ունենանք, որը կը միացնէ մեզ մեր հարեւանների հետ: Սա մի հրամայողական պահանջ է մեր կուսակցութեան համար: Վարդանը հարց տուեց, եթէ Նախադիծը չհրատարակուէր, ի՞նչ կը լինէր ոչ–աշխատաւորական տարրը.— կը հեռանայի՛ն մեզանից. կալուածական հարցը, հայ–թուրքական ընդհարումները, որոնք անցողական ազդակներ էին, եւ սրանց վերանալու կամ թուլանալու հետ միասին, պէտք է թուլանար նաեւ մեր ուժը: Շահխաթունեանը նկատում է, որ Դաշնակցութիւնը Կովկասում քաղաքական կռիւ չէր մղում. այո՛, նա եղել է տաճկահայ շարժման մի օժանդակիչ մարմին, մի կիսա–յեղափոխական կազմակերպութիւն (Կովկասում). 1905ից յետոյ միայն նա դառնում է (Կովկասում) քաղաքական կուսակցութիւն. բայց մենք միշտ էլ ունեցել ենք յեղափոխական բազա — այլ կերպ՝ մենք չէինք կարող քաղաքական կուսակցութիւն դառնալ: Նախքան կովկասահայ դատը մեզ վրայ առնելը, մենք աշխատել ենք, որպէսզի կազմուի մի այլ քաղաքական կուսակցութիւն, յատկապէս այդ դատը վարելու համար (մեր աջակցութեամբ). դեռ կալուածական խնդրից առաջ մենք փորձել ենք մի այդպիսի ջոկ կազմակերպութիւն ստեղծելու. բայց ասպարէզի վրայ մնացին դարձեալ նոյն դաշնակցականները, որոնք միայն ընդունակ գտնուեցին յեղափոխական կռիւ մղելու և՛ւ Կովկասում: Եւ այդ կռուին մենք տուին ազգային դրոշմ, հիմնուելով, սակայն, միայն աշխատաւոր դասակարգի վրայ: Ամէն մի կուսակցութիւն հիմնւում է մի որոշ դասակարգի վրայ. մենք էլ հիմնուեցինք աշխատաւորների դասակարգային ձգտումների վրայ: Ու այս ձըգտումների տեսակէտից՝ հասկանում ենք եւ մեր ազգայնութիւնը. մեր դաւանած ազգայնութիւնը՝ մեղուականի ու մշակականի ազգայնութիւնը չէ (բացատրում է ազգայնութեան ըմբռնման աստիճանական ֆազերը մեր կեանքի մէջ): «Մեղու» ազգային է եղել՝ զուտ կղերական տեսակէտից, «Մշակը»՝ բուրժուական, մեր տեսակէտն է այսօր՝ աշխատաւորականը, եւ այս աշխատաւորական տեսակէտից մենք եղել ենք եւ պիտի մնանք ազգային: Մեր դաւանած ազգայնութիւնը տարբերւում է բուրժուականից մանաւանդ այսօր, երբ մեր բանակի, աշխատաւորների եւ բուրժուազիայի միջեւ դասակարգային անխուսափելի բաժանումներ են առաջ գալիս: Այս բաժանումները այնքան սուր կերպարանք են ստանում հետզհետէ, որ մեր հակառակորդները սկսել են մօտենալ խուլիգաններին, սրանց մեր դէմ հանելու նպատակով: — Ի վերջոյ մի քանի խօսք նրանց՝ որոնք ասում են, թէ «բանուորական կոպեկներով օգնած չենք լինի տաճկահայ շարժմանը. չենք ուզում այդ կոպեկները»: Մեզանից ոչ մէկը թոյլ չպէտք է տայ իրեն՝ արհամարհանքով վերաբերուելու բանուորի կոպեկներին: Ռէակցիայի ճգնաժամային րոպէներին, բանուորական–արհեստաւորական կոպեկները չէի՞ն, որ փրկեցին մեր կուսակցութիւնը. աշխատաւորներն են եղել, որ իրենց քսակները միշտ էլ լայն բաց են արել յօգուտ մեր գործի, եւ ուրիշ ոչ մի տարր՝ նրանց չափ չէ նպաստել մեզ երբեք: Զմոռանանք այս:

**Սիգ**.— Հարցը հարկաւոր է այսպէս դնել. երբ մենք կը տեսնենք որ Կովկասում մենք հող ունենք սոցիալիստական գործունէութեան համար, մենք պէտք է գործի անցնենք, թէկուզ այդպիսով վնաս հասցնելու լինենք տաճկահայ դատին: Ես անհատապէս գտնում եմ, որ մեր կովկասեան սոցիալիստական գործունէութիւնը՝ վնասակար է լինելու այդ դատին, բայց եւ այնպէս պէտք է գործենք:

**Մուրատ**.— Մենք դէմ ենք ոչ թէ Նախագծին, այլ միայն նրա գործադրութեանը եւ գործադրութեան ժամանակին: Սկսել էին հայ–թրքական ընդհարումները. մենք սրանց վերջ չտուած, հրապարակ հանեցինք Նախագիծը՝ ռուս կառավարութեան դէմ կռուելու համար, մինչդեռ մենք այդ միջոցներին աշխատել ենք ամէն կերպ՝ նոյն այդ կառավարութեանը ասել՝ որ մենք հաւատարիմ հպատակներ ենք. վերջին սարաժնիկի [պահնորդ, դիւղական ոստիկան] սիրտն ենք ուզել շահել եւ յանկարծ մեր կուսակցութիւնը բացարձակ կռիւ է յայտարարում կառավարութեանը: Այժմ, այո՛, երբ հայ–թրքական ընդհարումները վերջացել են, Կովկասում կարելի է ցարիզմի դէմ ելնել. սկսել նոյնիսկ դասակարգային կռիւ: Միայն թէ, ես չեմ ուզում, որ Դաշնակցութիւնը գլուխ անցնի այդ դասակարգային կռուին, քանի որ Տաճկահայաստանում Դաշնակցութիւնը չէ կարող ունենալ ոչ մի դասակարգային գործ: Մեր դատը ազգային դատ է: Դասակարգային ոչ մի տարաձայնութիւն տեղ չպէտք է գտնի մեր գործունէութեան մէջ: Արամը կարիք է համարում չեշտելու, որ Կովկասից ինտելիգենտ ուժեր են անցնում

Վահագն.— *Այդ բարոյական պարտաւորութիւնը խախտուած է միայն վերջին 2–3 տարիներում. առաջ նկատուած չէր այդ։ Աւելի քան բնական է, որ մենք, իբրեւ ներկայ սկզբունքների մշակողներ, պարտաւոր ենք, դրանց գործադրութիւնը մեր վրայ վերցնել, քան հեռու ընկերները, որոնք մասն չեն ունեցել ծրագրի մշակման հարցում։ Նամանաւանդ կեանքի ներկայ փոթորկալից րոպէում ամէն մէկը պարտաւոր է մեր որոշումները կեանքի մէջ իրականացնելու դերի մէջ էական մասն ունենալ, լինի դա Կովկասում թէ Տաճկահայաստանում։ Գործից չպէտք է փախչել, սա մեր ամէն մէկիս բարոյական պարտաւորութիւնն է. մենք պէտք է հետեւենք մեր խղճի ձայնին։ Ես միանում եմ ընկ. Մուրատի առաջարկին, գործի յաջողութեան տեսակէտից այդ շատ կարեւոր է։*

Մալումեան.— *Ես բարոյական պարտք եմ համարում, ինչպէս եւ շատ ընկերներ, ինձ դնել ժողովի լիակատար տրամադրութեան տակ։ Բայց երբեք թոյլ չեմ տայ քուէարկութեան դնել իմ բարոյական պարտաւորութեան հարցը։ Այդ տեսակ հարցեր քուէներով չեն որոշւում։*

Նախագահ.— *Վիճաբանութիւնը համարում եմ սպառուած։ Եւ արտայայտուող կարծիքների եզրակացութիւնն այն է, որ ոչ ոք հակառակ չէ բարոյական պարտականութեան՝ սկզբունքային որոշումները կեանքի մէջ գործադրելու վերաբերմամբ։ Կարծիքները բաժանւում են օրինական ձեւով դրուած ստիպողականութեան շուրջը։*

*Սրանից յետոյ ժողովն անցաւ հետեւեալ բանաձեւերի քուէարկութեան.*

ա) *Մուրատ–Վահագնի առաջարկ–բանաձեւը (տես 62րդ նիստում) ստացաւ 10 ձայն։*

բ) *Իսահակեանի բանաձեւը, որ ստացաւ 12 ձայն, հետեւեալն է.—* «Ընդհանուր ժողովը լսելով ընկ. Մուրատի եւ Վահագնի առաջարկը՝ պատգամաւորների վրայ պարտաւորութիւն դնելու, որ նրանք իրենց տրամադրելի անեն Ընդհանուր ժողովի որոշումներին՝ մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշեց, համարելով ինքնըստինքեան հասկանալի՝ որ իւրաքանչիւր կուսակցական պարտաւոր է իր ուժերի չափով աջակցել Ընդհանուր ժողովի որոշումները իրագործելուն, անցնել հերթական հարցերին»։

գ) *Թոփչեանի բանաձեւը.—* «Աչքի առաջ ունենալով հայկական ներկայ իրականութեան տագնապալից րոպէն եւ Հ. Յ. Դաշնակցութեան ապագայ գործունէութեան պատասխանատու նշանակութիւնը, այդ տեսակէտից ներկայ պատգամաւորական ժողովը, նախքան ծրագրային եւ տակտիկայի որոշումներին անցնելը շեշտում է Դաշնակցութեան հիմնական բարոյական սկզբունքները եւ ընդունում՝ որ պատգամաւորներից իւրաքանչիւրը պարտաւոր է իր ամբողջ ուժով աշխատել արծարծելու եւ իրականացնելու ժողովի բոլոր որոշումները, եւ մինչեւ յառաջիկայ Ընդհանուր ժողովը իրան տրամադրելի դարձնել կուսակցութեան կամքը ներկայացնող ներկայ ժողովի վճիռներին»։

*Այս երեք բանաձեւերից ոչ մէկը չստանալով ձայների օրինական մեծամասնութիւն, մնաց անկախ։ Եւ ժողովը անցաւ ընկ. Թոփչեանի ռեֆերատի [զեկուցման] շուրջն առաջացած վիճաբանութեան։*

Թոփչեան.— *Ընկ. Մուրատը նկատում է որ, թէեւ Դաշնակցութեան գործունէութիւնը ընդլայնուել է, բայց չէ օգտուել տաճկահայկական դատը։ Թէ այդ որքան հիմք ունի, ես արդէն խօսել եմ մանրամասնօրէն, ուստի չեմ ուզում դրանով զբաղուել։ Գէորգ Ջաւուշի վերաբերմամբ եղած անուշադրութիւնը կազմակերպութեան կողմից, ոչ մի առնչութիւն չունի պրոֆեսիոնալ [արհեստակցական] միութիւնների, հողաբաժական եւ կենտրոնական ժողովի հետ։ Նման դէպքեր միշտ էլ եղել են, այո՛, եղել են Նախագծից առաջ եւ դրա մէջ տեղ ունեն այլ պատճառներ։ Պրոֆեսիոնալ միութիւնները պիտի լինեն անկուսակցական, — ասում է Մուրատը, նոյնը պահանջում են նաեւ սոցիալ–դեմոկրատները։ Այս հանգամանքը մի բնորոշ հիմք ունի. սոցիալ–դեմոկրատները անկուսակցականութեան կեղծ քողի տակ ուզում են գրաւել բանուորներին եւ քայքայել Դաշնակցութեան միութիւնները։ Մեզանում պրոֆեսիոնալ միութիւնը Մուրատի նման մտածողների համար դարձել է քաւութեան նոխազ։ Ասում եմ, բնորոշ, որովհետեւ նրանք այսպէս են մտածում, — եթէ չլինեն արհեստակցական միութիւնները, գոյութիւն չունենար նաեւ Նախագիծը, հետեւապէս նաեւ սոցիալիստական գործունէութիւնը։ Մի խիստ թիւր կարծիք։ Մեր դէմ բողոքողներ կան եւ շատերը դրա պատճառը դժբախտ Նախագիծն են համարում. սխալ է։ Նոյնանման բողոքողներ կան նաեւ ուրիշ սոցիալիստ կուսակցութիւնների դէմ, որոնք ոչ մի Նախագծի կամ տաճկահայ դատի հարցեր չունեն։ Ինչպէս սոցիալ–դեմոկրատների մէջ ջուհուբիստները, սոցիալ–ռեւոլուցիոներների մէջ մաքսիմալիստները. նոյնը լեհական սոցիալիստների [եւ ?] լատիշների ռազմիկ բողոքողները։ Ամէն տեղ էլ վերջերս ռազմիկ ուժերը բողոքել են եւ իրե՛նց համարել կուսակցութեան իսկական կրողները։ Ուրեմն այդ երեւոյթը մեր մէջ բացառութիւն չէ, այլ ընդհանուր. անտարակոյս պիտի փնտռել նաեւ ընդհանուր պատճառ։ Այդ ընդհանուր պատճառը պիտի փնտռել յեղափոխութեան մէջ։ Յեղափոխութեան ժամանակամիջոցում առհասարակ կռուող տարրերը ոյժ են ստանում եւ ձգտում են գերիշխել։ Նոյն երեւոյթը կատարուեց նաեւ մեզանում։ Բայց երբ տարածւում է ռէակցիան, բնականօրէն պիտի ռազմիկ ուժերը, զինուորները յետ քաշուեն։ Բայց նրանք հեշտութեամբ չեն ուզում իրենց դրաւիչ դերը թողնել։ Ասում եմ. նոյն բնոյթն է կրում մեր ներկայ շարժումը։ Ես հարցնում եմ, ընկ. Մուրատ, ինչո՞ւ բողոքներ չէին լսւում Նախագծի դէմ առաջ, 1905 թուին, ինչո՞ւ չկային Միհրաններ։ Ոչ միայն այդ չէ եղել, այլ աւելին. ես յիշեցնում եմ 1905 թուի աշնանը Թիֆլիսի կարմիր դրօշակներով ցոյցերի մասին, որոնց մասնակցում էին նաեւ այժմեան բողոքողները՝ զինուորներ, խմբապետներ։ Բայց երբ տիրեց ռէակցիան, երբ խաղաղ նորմալ կեանք սկսուեց, երբ ռազմիկ տարրերը տեսան,*



*որ այլեւս գերիշխել չեն կարող, որ Կենտրոնական Կոմիտէն արգելում է նրանց դատեր վարել, նրանք ծառացան Դաշնակցութեան դէմ, բողոքողներ դարձան՝ պատրուակ բռնելով Նախագիծը. եւ ամբոխին վրայ ազդելու համար, իրենց ձեռքին վարդագոյն քող դարձնելով տաճկահայ դատը, այդ բողոքաւորների հերոսները դարձան մարդիկ, որոնք չունին մաքուր տենչեր. իմ խօսքը բացառութիւնների մասին չէ, քանի որ նրանց շարքերում, կան անկեղծ տղաներ, որոնք գործիք են դառել։ Նրանք ունեն ներքին պղտոր միտումներ, որոնք ուզում են տաճկահայկական դատի վարագոյրի տակ ծածկել։ Ահա այդ է, որ մենք չպէտք է թոյլ տանք։ Մուրատը խմբերի համար ասում է, որ դրանք նոր չեն, այլ կազմալուծուածները նոր են վերակազմուել։ Լաւ, ընկ. Մուրատ, մի՞թէ խելացի եւ լաւ բան չենք արել, որ մենք ենք կազմակերպել եւ չենք թողել, որ բուրժուաները կամ ուրիշ կուսակցութիւններ իրենց կործանարար ազդեցութիւնը տարածեն նրանց վրայ։ Մուրատը առանձին թոնով շեշտում է, որ խոշոր գումարներ կարող ենք բուրժուաներից ստանալ։ Ո՛չ, ընկ. Մուրատ, բուրժուաները չեն կարող անկեղծ պայքարողներ լինել տաճկահայկական դատի համար. նրանք միայն ձեւացնում են. իսկ նրանց տըւած դրամը միայն տաճկահայերի դատի գերեզմանը կը լինի։ Բուրժուազիան միայն ուզում է մեր աշխատաւոր տարրերի ուշադրութիւնը գրաւել սահմանի այն կողմը, որպէսզի ինքը հանգիստ մնայ Կովկասում՝ սոցիալիզմի անողոք հարուածներից եւ հալածանքներից։ Բայց այդպիսի խաղերը, ինչպէս ասացի, միայն գերեզման են փորում հենց տաճկահայ դատի համար։ — Ընկերներ, զգուշացէ՛ք այդպիսի խաղերից։ Ես կրկնում եմ, մենք պիտի յենուենք աշխատաւոր դասի վրայ եւ իմ խորին համոզմունքն է, որ միայն նա է ընդունակ գերագոյն զոհաբերութեան. այդ ջղուտ ձեռքերն են, որ կարող են առաջ տանել յեղափոխական դրօշակը եւ մեր ապագան բնորոշել։ — Ասում են, Դաշնակցութիւնը չէ եղել քաղաքական սոցիալիստական կուսակցութիւն։ Այո՛, ե՛ս էլ համաձայն եմ, որ կուսակցութիւնը չէ եղել շեշտուած կերպով սոցիալիստական քաղաքական կուսակցութիւն, բայց մի շարք ակտեր, որոնք եղել են Դաշնակցութեան անդամների միջոցով, կրում են զուտ սոցիալիստական բնաւորութիւն։ — Շահխաթունեանը ասում է, որ Դաշնակցութիւնը եղել է մի լիգա, — տարօրինա՛կ կարծիք։ Մի՞թէ լիգա կարող է կոչուել մի կուսակցութիւն, որ դնում է որոշակի քաղաքական սոցիալիստական ծրագիր, թէեւ թերի, պակասաւոր. մի կուսակցութիւն՝ որ բարձրացնում է կարմիր դրօշակ, կռիւ է մղում բռնակալութեան դէմ, որ ունի յեղափոխական տակտիկ, մի՞թէ, ընկ. Շահխաթունեան, դա լիգա է։ Այն օրուանից երբ Նախագիծը հրատարակուեց, Դաշնակցութիւնը սոցիալիստական քաղաքական կուսակցութիւն է։ Ապացուցանելու համար, որ Դաշնակցութիւնը չէ եղել սոցիալիստական կուսակցութիւն, ոմանք առաջ են բերում այն փաստը, թէ Դաշնակցութիւնը դեռ 90ական թուականներին կռուել է հնչակեանների դէմ, իբր սոցիալիստների։ Ո՛չ, ընկերներ, Դաշնակցութիւնը, ոչ թէ հակառակ է եղել սոցիալիզմին, այլ կռուել է աղաւաղուա՛ծ սոցիալիզմի դէմ. նա այն ժամանակ ընդունել է այդ գործունէութիւնը վաղաժամ։ Գալով ազգային հարցին, կրկնում եմ նորից, որ մեր կուսակցութիւնը ազգային սոցիալիստական է եւ դրանից երբեք չէ խրտչել, ինչպէս ամէն մի սոցիալիստ կուսակցութիւն։ P. P. S.ը [?] բաց ճակատով է այդ ասում. ազգային կռիւը անհրաժեշտ է ներկայ բուրժուական կարգերի մէջ։ Բուրժուաները, ազգային հարցը հասկանում են իրենց ձեւով. իսկ մենք սոցիալիստներս՝ մեր ձեւով։ Ոչ մի տեղ իսկական սոցիալիստները դէմ չեն իսկական ազգային մաքուր հարցին։ Բեբէլ յայտարարում է, որ զէնքը ձեռքին՝ իւր հայրենիքի պաշտպանութեան համար դուրս կը գայ։ Ժորէսը շեշտում է, որ կողմնակից է ազգային գաղափարին, երբ նա բխում է ազգութեան հիմք կազմող աշխատաւոր դասակարգի շահերից։ Իտալացի սոցիալիստ Էնրիկօ Ֆերրի զգացուած դարձուածքներով խօսում է հայրենիքի մասին եւ յայտնում, որ զգում է որոշ պարտականութիւն դէպի իւր հայրենիքը, ինչպէս եւ դէպի իր ընտանիքը եւ համայնքը։ Մի՞թէ մենք, որ մեր առաջ ունենք հայկական արիւնոտ իրականութիւնը եւ հարիւր հազարաւոր զոհերի գնով սրբագործուած տաճկահայ դատը, կարող ենք ժխտել ազգային հարցը, — երբե՛ք։ Մենք ջերմ պաշտպաններ կը լինենք այդ հարցին. բայց սոցիալիստական հասկացողութեամբ եւ ոչ բուրժուական։ — Ես վերջացնում եմ պնդելով նորէն, որ կովկասեան գործունէութիւնը սոցիալիստական հողի վրայ ոչ միայն չի վնասում, այլ գալիս է լրացնելու տաճկահայկական դատին, մի մղում տալու, տարրերի գիտակցութիւնը բաց անելով։*

Մուրատ.— *Մենք գնում ենք վարից վեր։ Ոչ ոք չէ կարող հակառակ լինել կովկասեան գործունէութեան, ինչպէս եւ ես. բայց մենք չենք կարող թէ՛ սուլթանի եւ թէ ցարի դէմ կռուել։ Բացի այդ, չենք կարող միաժամանակ թէ՛ կառավարութեան եւ թէ բուրժուաների դէմ կռուել Կովկասում։ Երբ պետական յետադէմ ռեժիմը կը տապալենք, յետոյ կը կռուենք բուրժուազիայի դէմ։ Գալով դժգոհութեան հարցին, կ'ասեմ, որ Ալեքսանդրապոլում, Կարսում սոցիալիզմին դէմ դըժգոհութիւններ կային դեռ այն ժամանակ, երբ Միհրանը չկար։ Մենք լաւ տակտիկ չբռնեցինք, դրա համար էլ դժգոհութիւն ծագեց։ Ես հակառակ չեմ 8 ժամուայ աշխատանքին բանուորի համար, եւ այլ բարեփոխումների. ես հակառակ եմ գործադրութեան եղանակի՛ն Կովկասում։*

*Ժողովը փակուեց ժամը 7ին։*

*բարութիւններն, ի հարկէ, իրենց ազդեցութիւնն էին անում մտքերի վրայ. եւ ահա ռուսահայերն եղան, որ եկան, թէորիայից ու ցանկութիւններից գործի անցան։ Այս բոլորից յետոյ, սխալ է կարծել, թէ տաճկահայ յեղափոխական շարժումը՝ սկզբից հենց սոցիալիզմի ճանապարհովն է առաջ մղուել։ Սոցիալիստական սկզբունքներ են ունեցել միայն մի քանի երիտասարդ գործիչներ, եւ սա մնացած է իրենց համար անձնական համոզմունք։ Ապա թէ ո՛չ, որի՞ դէմ էր ուղղուելու դասակարգային պայքարը, երբ Տաճկահայաստանում գոյութիւն չէ ունեցել եւ չունի՝ դասակարգային շահերի հակամարտութիւն։ Իրողութիւնն այն է, որ Թուրքն է կեղեքողը բոլոր հայերին անխտիր։ Այնտեղ չունինք մենք պրոլետարիատ, որովհետեւ չունինք եւ ինտուստրիա [ճարտարարուեստ]. վաչխառուներին մի համարէք շահագործող մի դասակարգ, քանի որ նրանք ապօրինի մարմիններն են կամ հիւանդ ռեժիմի վրայ տգեղ վէրքեր. դասակարգ չեն կազմել ե՛ւ ամիրաները. Նրանք սոսկ միջնորդների դեր են կատարելիս եղել պատրիարքարանի եւ կառավարութեան միջեւ։ Դասակարգային պայքարի համար հող չկայ Հայաստանում. սոցիալիզմը այնտեղ* raison d'être *[գոյութեան իմաստ] կ'ունենայ միայն այն ժամանակ, երբ ինտուստրիա ստեղծուի ընդարձակ չափերով։ Այսօր Թուրքիոյ մէջ կան հատուկտոր գործարաններ. բայց կարո՞ղ էք գնալ ու եղած հայ բանուորներին սոցիալիստական գաղափարներ ներշնչել. մի որեւէ շարժում առաջ բերելու փորձի համար՝ իսկոյն կը քշեն բոլորին եւ նրանց տեղերը կը տան ուրիշ ազգութիւններին պատկանող բանուորներին։ — Կայ հողային հարց. բայց նախքան այդ հարկաւոր է փշրել քաղաքական բռնութիւնների շղթան։ Շեշտում եմ, մեր շարժումը ունի զուտ ազգային քաղաքական բնաւորութիւն եւ մեր ազգայնութեան ամբողջութիւնը մենք չպէտք է զոհենք դասակարգային վաղահաս նկատումներին։ Դասակարգային տարաձայնութիւններ եղել են միշտ էլ, մօտիկ ու հեռաւոր անցեալներում, կը լինեն ե՛ւ այսուհետեւ. այդպէս է մարդկային պատմութեան շրջանը։ Եւ ինչո՞ւ ձգտել դասակարգայնութեան, մի՞թէ մեր ազգային ազատագրութեան իդէալը բաւական չէ մեզ. այս իտէալը պէտք է լինի Դաշնակցութեան գործունէութեան սահմանը։ Այստեղ ասացին, թէ ազգայնութիւնը պէտք է հասկանալ աշխատաւոր դասակարգի տեսակէտից։ Բայց ազգայնութեան գաղափարը լայն է. եւ բանուորների լոկ տնտեսական կարիքին բաւարարութիւն տալու ձգտումը՝ երբեք չէ կարող համեմատուել այդ գաղափարին, որ անմիջապէս եւ անհրաժեշտ լուծումի կարօտ է։ Մեր գործը լայն հողի վրայ պէտք է դնել. պէտք է պահպանել Հայաստանի ապագան, իբրեւ հայ ժողովուրդի գոյութեան խարիսխ։ Մի՛ կարծէք, որ մի ժողովրդի ազատագրման խնդրում բուրժուազիայի մասնակցութիւնը կարեւոր չէ, եւ որ ժողովուրդը ինքը, իւր սեփական ուժերով, կարող կը լինի գործն առաջ տանել. բուրժուազիան աւելի գիտակից է լինում միշտ եւ նա ուրիշ ազգերի ազատագրութեան մէջ նիւթական միջոցներն է հայթայթած։ Համոն ասում է, որ մեր դատը՝ ազգային դատ չէ. ես կը պնդեմ հակառակը։ Մենք ձգտում ենք ազատութեան եւ ազգային անկախ զարգացման։ Եւրոպան միշտ նպաստել է տաճկական բռնակալ ռեժիմի տակ տանջըւող քրիստոնեայ ազգերի ազատագրմանը, որպէսզի սրանք միջոց ունենան՝ ինքնուրոյն կերպով զարգանալու։ Տաճկահայ դատը՝ նաեւ համազգային դատ է։ Կովկասահայ շարժումը համազգային չէ կարող լինել, որովհետեւ նա դասակարգային պայքարի բնաւորութիւն ունի. մի բան, որ բոլորովին չէ հետաքրքրում ամերիկահայերին։ Ապա Տաճկահայաստանն է եղած հայութեան պատմական օրրանը, այս հանգամանքն էլ աւելի համազգային է դարձնում տաճկահայ դատը։ Մենք հայրենիք ենք ուզում, ճիշդ այնպէս, ինչպէս հրեաներն են ձգտում սեփական հայրենիք ունենալուն Պաղեստինի մէջ. եւ մեր ուզած հայրենիքը Տաճկահայաստանն է։ — Իսկ եթէ հայրենիքի գաղափարը չենք ընդունում, Դաշնակցութիւնն այլեւս գոյութիւն ունենալ չէ կարող. այս դէպքում հայերիս ճակատագիրը պէտք է կապել՝ Թուրքերի, յոյների եւ միւսների ճակատագրին։ Բայց մենք պէտք է ունենա՛նք այդ գաղափարը. հայրենիքը չէ պատկանում այս ու այն դասակարգին. նա ամբողջ հայ ժողովուրդի հայրենական ժառանգութիւնն է, հաւասարապէս՝ թէ՛ հարուստին եւ թէ աղքատին։ Թուրքերը մեզ հալածում են ոչ իբրեւ մի դասակարգ, այլ իբրեւ հայ։ Սոցիալիզմը մենք դարձրել ենք մեր իրականութեան համար՝ Պրոկրուստի մահճակալ։ Նա* raison d'être *ունի Եւրոպայում, բայց ոչ երբեք՝ մեզ մօտ։ Ես անհատապէս չեմ ընդունում, որ սոցիալիզմը լինի մարդկութեան վերջին հանգրուանը. ուրիշները թող հաւատան այդ բանին։ Ո՞րն է սոցիալիզմի իդէոլոգիան [գաղափարաբանութիւնը] — կապիտալիզմի [դրամատիրութեան] ջնջումը, մարդկանց տնտեսական հաւասարեցումը, ջնջելով անհատական սեփականութիւնը։ Շատերը կը պնդեն որ սոցիալիզմը միմիայն դասակարգային շահերը պաշտպանում է։ Ես չեմ կարծում, որ սոցիալիստն այնքան խենթ լինի, որ միայն գործաւորների շահերը պաշտպանի եւ ջանայ ստեղծել բանուորական դասակարգի տիրապետութիւնը. ընդհակառակը՝ համամարդկային է անոր նպատակը. դասակարգերը վերիվայր շրջել չէ, այլ համահաւասարել։ Սոցիալիզմը, ստամոքսի, այսինքն՝ տնտեսական հարց է. հանեցէք ստամոքսի հարցը մէջտեղից եւ սոցիալիզմը կը վերանայ. սոցիալիզմը իր էութեանը եւ նպատակին մէջ կը ձգտի, ամէն բանէ առաջ, ժողովուրդների տնտեսական բարօրութեանը. սոցիալիզմը մեզ չէ տալիս փիլիսոփայական հարցեր, այդ դուրս է նրա իրաւասութիւնից։ Եւ մի՞թէ ստամոքսի հարցով կարող կը լինենք մարդկային հաւասարեցում յառաջ բերել...։ Բուրժուազիան ինձ համար դասակարգ չէ, քանի որ նա իւր գոյութիւնը հիմնում է փողի վրայ. վերցրէք նրանից այդ փողը եւ նա կ'աղքատանայ, եւ իւրաքանչիւրը փողի միջոցով հեշտութեամբ կը դառնայ բուրժուա։ Դասակարգ է սակայն արիստոկրատիան, որից որքան փող էլ վերցնելու լինենք, չէ կորցնում իւր առանձնաշնորհումը։ Իմ կարծիքով պրոլետարիատը պաշտպանել, չէ նշանակում՝ ամբողջ մարդկութիւնը պրոլետար դարձնելու ձգտել. ընդհակառակն, պրոլետարիատը պէտք է բարձրացնել բուրժուական կեանքի բարեկեցիկ ըմբռնումին, եւ իւրաքանչիւրը իւր աշխատանքով ձրգտելու է այդ բանին։ Ժորէսը ասել է, թէ «ես ունեմ իմ մտաւոր եւ ֆիզիքական պահանջները. ես չեմ ուզում ճգնաւոր դառնալ»։ Գալով այն խնդրին, իբր թէ մեր սկզբնական ծրագրի մէջ, սոցիալիստական ձրգտումներ կան, խիստ կերպով շեշտուած — ես կ'ասեմ որ դոքա արդիւնք են եղել Դաշնակցութեան յառաջադէմ վարիչների մասնաւոր համոզմունքին, որոնց համակերպեցնել չէր կարելի իրականութիւնը. այն մի քանի բրոշիւրները, սոցիալիզմի մասին, եղել են սոսկ դաստիարակող միջոցներ՝ օրուայ ընթացիկ հարցերի եւ ձգտումների հետ ծանօթացնելու նպատակով։ Տաճկահայերը միշտ էլ անտարբեր են եղել սոցիալիզմի նկատմամբ, շեշտելով շարունակ, որ «մենք ազգային կռիւ ունենք եւ միայն դրա մասին պէտք է մտածենք»։ Հայութի՛ւնը վտանգուած է, եւ ոչ թէ սոցիալիզմը։ Միայն քաղաքակա՛ն կռիւը կարող է մեզ համար միջոց լինել ազատութիւն ձեռք բերելու համար։ Ոչ ոք չէ կարող մեղադրել մեզ, որ մենք սոցիալիստներ չենք. բոլորն էլ, ով ծանօթ է տաճկահայ իրականութեանը՝ Ժորէսը, Վիվիանին եւն., միանգամայն արդարացնում են մեր ներկայի բացասական վերաբերմունքը դէպի սոցիալիզմը։ Մենք կոչ ենք անում, աշխարհի բոլոր հայերին՝ մեր համազգային դատին աջակցութիւն ցոյց տալու։ Կովկասահայերն եւս պէտք է օգնեն մեզ՝ թէ՛ բարոյապէս եւ թէ նիւթապէս. բաւական չէ, որ գան մեզ սկզբունքներ թելադրեն, ու ինչ որ սակարկութեան մէջ մտնեն.— «եթէ այսպէս անէք — այնպէս չանէք»։ — Ի՛նչ ուզում էք եղէք, սոցիալիստ թէ մոնարխիստ [միապետական], միայն թէ աջակցեցէք մեզ — իբրեւ հայերի։ Մենք, ի հարկէ, չենք կարող կանգնեցնել կովկասահայ շարժումը. կ'ասենք սակայն, որ դա վնասում չէ մեր դատին, բայց կրնայ հակազդել։ Երկու տարի առաջ որոշուեց, որ մարդիկ ուղարկուեն Սեբաստիա, բայց ոչ ոք չուղարկուեց, որովհետեւ Դաշնակցութիւնն ամբողջովին կլանուել էր Կովկասի գործերով։ Դաշնակցութեան գործունէութիւնը պէտք է կենտրոնանայ Տաճկահայաստանի վըրայ, քանի որ սա է մեր իսկական հայրենիքը. մի ժողովուրդ չէ կարող երկու հայրենիքի համար կռուել։ Ուստի կարեւոր է միանգամ ընդմիշտ որոշել մեր դիրքը՝ թէ՛ Տաճկահայաստանում եւ թէ Ռուսաստանում։ Դաշնակցութիւնը կովկասահայ շարժման հետ կը շարժի ինչպէս կը պահանջեն տեղական պայմաններն ու պահանջները, որոնք մէկէ աւելի տարբեր կէտեր, պահանջներ ու տեսակէտներ ունեն տաճկահայ դատի հետ։*

Խանակեան.— *Մենք սիրում ենք շեշտել, որ անցեալում սոցիալիստ ենք եղել. ուրեմն եւ նոյնը կը լինենք ե՛ւ ապագայում. եւ մասսաներին հաւատացնում ենք, թէ մեր ներկայ ու անցեալ գործունէութեան միջեւ ոչ մի տարբերութիւն չկայ.— բայց մենք կը պընդենք, որ այդ այդպէս չէ, անցեալում մենք չենք եղել ո՛չ սոցիալիստ, ոչ էլ նոյնիսկ յեղափոխական։ Փաստերը շատ են պերճախօս։* 1902*ին, մի քանի ընկերներ առաջարկում են ակտիւ գործունէութիւն սկսել Կիլիկիայում, բայց կտրուկ մերժում է տրւում կուսակցութեան կողմից։* 1903*ի շարժումները, կալուածների գրաւման առթիւ, չեն ունեցել յեղափոխական ոգի. մեր պրոպագանդն այդ միջոցին կրել է ոչ-յեղափոխական բնաւորութիւն. եւ երբ կալուածները վերադարձուեցին, կռուի ասպարէզից յետ քաշուեցին նոյն այդ մասսաները, որոնք բողոքներ էին բարձրացրել միաժամանակ։ Մեր հարցին, թէ «ինչո՞ւ խոշոր յեղափոխական ձեռնարկներ չենք արել», մեզ պատասխանում են, որ հայ-թրքական ընդհարումները արգելք են հանդիսացել։ Բայց չէ՞ որ ընդհարումներից զերծ մնացած վայրերում, միջոց ունէինք յեղափոխական ակտեր կատարելու։ Գուրիացիներն էլ ճնշուեցին, բայց եւ չդադարեցին ակտիւ գործունէութիւն վարելուց։ Նոյնպէս եւ հրեաները։ — Յետոյ, ինչո՞ւ դուրս եկանք Թիֆլիզի «Համաձայնութեան Բիւրոյից»։ Մեր հեռանալու պատճառաբանութիւնը արդեօք վայե՞լ էր մի յեղափոխական կազմակերպութեան։ Մեր, անցեալում սոցիալիստ լինելն ապացուցանելու համար, ասում ենք, թէ ահա աշխատաւորական տարրեր ենք ունեցել։ Բայց վերջապէս, բուրժուական կուսակցութիւններն էլ աշխատաւորներին տեղ են տալիս իրենց մէջ։ «Քրիստոնեայ սոցիալիստներն» եւս իբր թէ բանուորներին պաշտպան են հանդիսանում։ — Ոչ, մենք վարել ենք, միայն միջակ տեսակի սոցիալ-տնտեսական քաղաքականութիւն։ Այսուհետեւ, այո՛, մեր գործունէութիւնը պէտք է լինի զուտ դասակարգային, եւ մեր գործունէութեան սոցիալիստականութիւնն այնպէս պէտք է շեշտուած լինի, որ կողմնակի մոմենտներ, վայրկեան անգամ չկանգնեցնեն մեր յառաջխաղացութիւնը։ Մեր կուսակցութեան միջից պէտք է դուրս գան այն տարրերը, որոնք իրենց սկզբունքներով համաձայն չեն կուսակցութեան աշխարհահայեացքին։ Եւ ես յոյս ունեմ, որ մեր յաջորդ Ընդհանուր Ժողովում, եթէ միայն այդպիսին տեղի ունենայ, չլինի մտքերի այն խառնաշփոթը, որպիսին տեսնում ենք այստեղ։*

Զարդարեան.— *Իմ համոզմունքն է, որ Կովկասն իրաւունք ունի իր գործը տնօրինելու այնպէս, ինչպէս ինքն է ուզում: Բայց մենք այն հրամայական հարցը կը դնենք միշտ, թէ ի՞նչ յարաբերութեան մէջ պէտք է լինեն կովկասահայ եւ տաճկահայ դատերը: Այս հարցը մեզ մտահոգութիւն է պատճառում: Մեր դատը պէտք է մնայ ոչ-դասակարգային, այլ ընդհանուր ազգային: Ես չեմ կարող համաձայնել ընկ. Համոյի հետ, որ մեր շարժումը պէտք է լինի միջազգային յեղափոխութեան մի ֆրակցիա: — Ինչ որոշում կ'ուզէք առէք Կովկասի վերաբերմամբ. իսկ երկու դատերի փոխադարձ յարաբերութեան հարցի մասին կը խօսեմ յետոյ:*

Իշխան.— *Այստեղ այնպէս են նկարագրում Դաշնակցութիւնը, կարծես թէ նա զուտ սոցիալիստական կուսակցութիւն է եղել: Բայց այդպէս չէ. մենք չենք կատարել ոչ մի սոցիալիստական գործ: Մեր ծրագիրը սոցիալիստական է, — այս դեռ բաւական չէ, սակայն, ասելու, թէ գործնականում եւս եղել ենք սոցիալիստական կուսակցութիւն: Տաճկահայաստանում մեր պրոպագանդան տարել ենք զուտ ազգային ուղղութեամբ. իսկ Կովկասում եղել ենք միայն օժանդակող մարմին, եւ այնքան հեռու սոցիալիզմից, որ հնչակեաններին հետ վիճելիս մենք նրանց մեղադրելիս ենք եղել, որ նրանք սոցիալիզմի սկզբունքներով են ուզել գործել: Կալուածների գրաւման առթիւ, ցոյց տուած մեր դիմադրութեան մէջ՝ սոցիալիզմի մասին խօսք չէ կարող լինել: Միայն Նախագիծն է որ պարզորոշ կերպով սոցիալիստական ուղղութիւն է մտցրել մեր գործունէութեան մէջ: Ի՞նչ սկզբունքներով է հարկաւոր գործել այսուհետեւ: Հարցի պատասխանը պարզ է, — պէտք է գործել մեր Ծրագրի ոգւով. մենք պէտք է յենուենք աշխատաւոր դասակարգի վրայ եւ պաշտպանենք նրա շահերը: Այլ խնդիր է, ի հարկէ, երբ համազգային որեւէ վտանգ է առաջանում. այսպիսի արտակարգ եւ կրիտիկական վայրկեաններում, մենք առժամանակ բլոկ* [bloc] *կը կազմենք այլ տարրերի հետ: Ազգային կը լինենք այն մտքով, ինչ մտքով որ հասկանում են բոլոր սոցիալիստները:*

Վռամեան.— *Մենք ուզում ենք այստեղ որոշել մեր գործունէութիւնը: Չենք եկել այստեղ, ոչ իբրեւ սոսկ թէորետիկոսներ [տեսաբաններ], քանի որ վճռելու ենք մեր ժողովուրդի բախտը: Մեր քաղաքական կռիւը Տաճկաստանում սկսել է դաշնագրերից շատ առաջ.* 1870*ի պատրիարքարանի տեղեկագրերը, որոնք տնտեսական բացայայտ չէշտ ունէին, Սահմանադրութիւնը, — սրանք այն նախապատրաստական շրջանն են կազմել, որից յետոյ միայն, ասպարէզ եկան «Հնչակը» եւ «Դաշնակցութիւնը»: — Ոմանք ասում են, որ Դաշնակցութիւնը բացառապէս Թուրքաց Հայաստանի համար է ստեղծուել: Սխալ է այս կարծիքը: Բովանդակ հայութիւնը, Պոլսից մինչեւ Թիֆլիս եւ Էջմիածին, ընդհանուր ձգտում է ունեցել, իր գոյութիւնը ապահովելու: Առաջ հայերը յոյս էին դրել ռուս կառավարութեան վրայ, թէ սա կատարելու է իրենց փափաքը. բայց երբ Ռուսաստանը դրժեց իր բոլոր խոստումները, հայերը իրենց աչքը դարձրին դէպի Տաճկաստան: Ասել է, թէ նախքան տաճկահայ ինքնավարութեան հարցը՝ արդէն գոյութիւն է ունեցել ռուսահա՛յ ինքնավարութեան գաղափարը. առաջ կարծել ենք, որ փրկութիւնը գալու է Ռուսաստանից, բայց յետոյ ընդհակառա՛կը: Կրկնում եմ, որ Դաշնակցութիւնը միայն օսմանեան Հայաստանի համար չէր, որ հրապարակ եկաւ, այլ տառապող հայութեան: Դաշնակցութեան մէջ մտան անխտիր ե՛ւ Ռուսաստանի ե՛ւ Տաճկաստանի հայերը: Իսկ եթէ մեր Ծրագրի մէջ Կովկասի մասին խօսք չէ եղել, պատճառն այն էր, որ մենք անխոհեմութիւն ենք համարել կռիւ յայտարարել ռուս կառավարութեանը մի այնպիսի ժամանակ, երբ թոյլ էր ռուս յեղափոխական շարժումը: Սխալ է, երբ թէ Դաշնակցութիւնը միայն Տաճկահայաստանում ունի պատմական միսիա: Ինձ համար գոյութիւն ունի մի ընդհանուր Հայաստան, առանց սահմանային բաժանումների՝ բռնակալների ձեռքով կատարուած: Ես այս ասում եմ իբրեւ հա՛յ: Այն ընկերները, որոնք կարծում են թէ տաճկահայերը դէմ են կովկասահայ շարժմանը, լաւ կը լինէր, որ այդպիսի մտքեր այլեւս չարտայայտէին այստեղ: Տաճկահայերը կ'ընդունին եւ կը պնդեն, որ Դաշնակցութիւնը իբրեւ համահայկական կուսակցութիւն, պատրաստ է անցնել եւ ա՛յդ շարժման գլուխը: (Ես յետոյ կը խօսեմ, թէ ինչո՞ւ տաճկահայ եւ կովկասահայ դատերը հարկաւոր է կապել իրար հետ): Տաճկահայաստանում մենք վարել ենք միայն անջատական-քաղաքական կռիւ, քանի որ դասակարգային պայքարի համար բնաւ հող չէ եղել այնտեղ: Ի հարկէ, եթէ Կովկասում այդ հողը արդէն պատրաստուած էք գտնում, սկսեցէք դասակարգային պայքար, դէմ ոչինչ չունենք: Բայց եւ այնպէս, մենք չենք կարող ժխտել դասակարգային կռուի գաղափարը, Տաճկահայաստանի վերաբերմամբ, քանի որ դասակարգային ըմբռնումն արմատացած է մեր ժողովուրդի մէջ. հարուստները չեն, որ վարում են մեր դատը (ծախահարութիւններ): Բուրժուա կոչեցէք նրանց, ամիրա, կղերական կամ այլ ինչ՝ խոստումներ են տուել, բայց ո՛չ մէկը դրանցից չեն իրագործել: Եւ ես այսօր տաճկահայ շարժման հիմքը տարբեր չեմ գտնում կովկասեանից, մենք ունենք Թուրքիայում խոշոր թուով գիւղացիութիւն, որն եւ իր ուսերի վրայ է տարել գործի ծանրութիւնը: Այս հարցը մենք աշխատել ենք արծարծել, օրինակ, Ամերիկայի մեր մամուլում. բայց մեր լուսաբանութիւնները գիտական հողի վրայ չեն եղել. մենք երբեք «բուրժուա» բառը չենք էլ գործածել, մի անգամ ընդմիշտ ժողովրդական զանգուածները կարելու համար բուրժուաներու գործակցութեան այնքան*



*աղխտաբեր պատրանքէն, որով ցարդ օրօրուած են եղել իրենք: Այսօր պարզենք, ամբողջացնենք մեր դասակարգային սկզբունքները, սրա դէմ ես անհատապէս ոչինչ չեմ ունենայ. միայն թէ, մեր մշակած թէորիաները հարկաւոր է զգուշութեամբ մօտեցնել ժողովրդին. մենք իրականութիւնը պէտք է աչքի առաջ ունենանք միշտ, եւ ոչ իբրեւ աղանդաւոր երեւան գանք: Մենք ամէն օր ականատես ենք, թէ ինչպէ՛ս քաղաքակիրթ երկիրներու ընկերվարական կուսակցութիւններ (Գերմանիա, Աւստրիա, Ֆրանսիա) աներկդիմի յայտարարած են միշտ, թէ իրենք իրենց աշխատաւոր դասակարգի կուլտուրան եւ հայրենիքը պաշտպանելու են իրենց արիւնով, ամէն անգամ երբ օտար նուաճումի մը սպառնալիքի առջեւ գտնուին: Որքան աւելի եւս մե՛նք, որ անկախ հայրենիք չունենք եւ թշնամիներով շրջապատուած ենք.— ուստի Դաշնակցութիւնը պարտաւոր է հայրենիքի գաղափարին կառչած մնալ, պատմական հողի վրայ ինքնավարութիւն պահանջելով: Այդ տեսակէտով մենք ազգային ենք եւ պարտաւոր ենք յայտարարել: Ընկ. Համոն ալ, որ այնքան հակառակ խօսեցաւ «ազգային» բառին, ստիպուած է սակայն ընդունելու, որ իրենց կռիւը Կովկասի մէջ զուտ ազգային եղած է, — դպրոցներու, կալուածներու խնդիրը, գաղթականներու վերադարձի հարցը, թատրոնական եւ գրականութեան ընկերութիւններու կազմումը, եւն.: Մենք ունենք հայութեան պատմական դատ մը, որուն անբաժանելի մասերը կը կազմեն տաճկահայ եւ կովկասահայ դատերը: Այդ գաղափարով միայն կրնանք կապել հայ գաղութները Երկրի դատին հետ. եթէ այդ իդէալը չդնենք, տնտեսական պայքարը չի կրնար հրապուրել գաղութները, որոնք ինքնին արդէն բարեկեցիկ են. այն ատեն կ'իյնանք հրեաներու օրին. սիոնիզմին հակառակ են այսօր բոլոր բարեկեցիկ հրեաները, չհաւատալով քաղաքական վերածնութեան հնարաւորութեան Պաղեստինի մէջ: Դաշնակցութիւնը պատմական հայրենիքի վրայ ապրող սովատանջ ու խեղճ ժողովրդի տնտեսական դատը չէ, այլ տառապող հայութեան տնտեսական ու քաղաքական ազատագրումի՛ դատը՝ ազգային կուլտուրայով անկախ հայրենիքի մէջ: Այդ իմաստով է, որ ես հասկացած եմ համահայութիւնը, որ այնքան քաշքշուքների տեղի է տուած Կովկասի մէջ: Գալով այն կէտին, որ պէտք է քննել, թէ այդ երկու դատերը կը միասե՞ն իրար, ինչպէս հարցուց ընկերներէն մէկը — բնական է, ո՛ր տեսակէտի վրայ ալ կանգնելու ըլլանք — դասակարգային, թէ ազգային —, պէտք է իմանալ թէ իրար կը միասե՞ն թէ ոչ: Համերաշխութիւնը հասկանալի է միայն փոխադարձ օգտակարութեան պարագային: Ես կը կարծեմ, որ կովկասահայ դատը տաճկահայ դատին չվնասելէ զատ, ընդհակառակն, պիտի օգնէ: ա) Ցեղային համերաշխութեան մեծ ազդակ մը պիտի ըլլայ, մեր ժողովուրդի յոյսերը վառ պահելու գիտակցութիւնը՝ անվրդով, ապագան՝ ապահով: Տաճկահայ դատը համազգային դատ մը եղած է, բոլոր հայերու գործակցութեամբ: Երկու տարրերու բաժանումը այն հետեւանքը կրնայ ունենալ, թէ տաճկահայոց դատը դադարած է այլեւս կովկասահայը հետաքրքրելէ եւ ան ալ այսպիսի տագնապի պահուն: Այդպիսի կասկած մը աղխտաբեր կրնայ ըլլալ հայութեան երկու հատուածներուն համար: բ) Արտաքին քաղաքականութեան տեսակէտէն նպաստաւոր է, մեր դատի թշնամիներու համար սովորական եղած է մեզ «ռուսի գործիք» անուանել. անգլիացիք, գերմանացիք յաճախ այդ դրպարտութիւնը ըրած են: Այդ անվստահութիւնը ինքնին կը ջնջուի: գ) Ռուս եւ Թուրք կառավարութիւնները աւելի զգուշաւոր կը դառնուին իրենց արտաքին եւ ներքին քաղաքականութեան մէջ հայերու հանդէպ, իւրաքանչիւր դրացի պետութեան մէջ բնակող հայ հատուածին քաղաքական-ռազմական գործակցութիւնը նկատի ունենալով: դ) Թուրք ժողովրդի մէջ հնարաւոր կ'ըլլայ ատրճանաբար նուազեցնել ցարդ տարածուած կասկածոտութիւնը հայ տարամերժ չովինիստ նպատակներուն մասին, երբ ընկերվարական ծրագրով միացած գործենք հոն: — Գալով այն հինցած կարծիքին, թէ ընկերվարական կուսակցութիւն հռչակելով մեզ, եւրոպական միջամտութիւնը կը դժուարացնենք, — անտեղի կը գտնեմ: Եւրոպական դիւանագիտութիւնը ո՛չ մեր կարծիքը, ո՛չ կրօնը եւ ոչ լեզուն կը հարցնէ միջամտելու ատեն, այլ իր քաղաքական եւ տնտեսական շահերը: — Երկու խօսք ալ տաճկահայ պրոպագանդի, գործելակերպի մասին. ես կը կարծեմ որոշ վերապահութիւն պիտի ունենանք, քանի որ Թուրքիոյ հողային հարցը տակաւին ուսումնասիրուած չէ, ուստի զգուշաւոր ըլլալու ենք* a priori *որոշումներ ընելէ, Թուրք հողատէրերը եւ քիւրդ ցեղապետները չգրգռելու աւելորդ կերպով: — Եզրակացութիւնս է՝ Դաշնակցութիւնը ընդունել իբրեւ ազգային ընկերվարական կուսակցութիւն, որ տառապող հայութեան պատմական դատը պաշտպանելու կոչուած է, երկու երկիրներու քաղաքական եւ հասարակական պայմաններու համեմատ՝ որոշելով իր գործելակերպը:*

*Նիստը փակւում է:*

## 67ՐԴ ՆԻՍՏ (5 Ապրիլ, առաւօտ)

*Նախագահում է Թոփչեան:*

*Ներկայ են 24 ժողովական:*

*Բացակայ են՝ Մուրատ, Սեպուհ, Անդրանիկ (հիւանդ), Գուսան:*

---

Նախագահ.— *Այսօր եկաւ Զիֆանի ներկայացուցիչ Գայիկ [Սա. Տէր Մկրտչեան]:*

Նրանք իրաւունք չունեն ժողովուրդի անունից խօսելու: — 1883ին Վասպուրականի էֆենտիները շնորհակալական Թուղթ են ուղղում Սուլթանին, թէ «մենք գոհ ենք մեր վիճակից»: Եւ ժողովուրդն է որ քաշում ծեծում է այդ էֆենտիներին: Վանումն էր նոյնպէս (1886ին) որ՝ դասակարգային շահերի հակամարտութեան հողի վրայ՝ արիւնահեղ ընդհարում տեղի ունեցաւ (Փօղոսեանների եւ Ապօղոսեանների խնդիրը): Ուրեմն զուր են կարծում ընկերները, իբր թէ Տաճկահայաստանում չկայ դասակարգային դիֆերենցիացիա. կա՛յ, թէեւ փոքր աստիճանով: Որքան էլ ամիրաներն ու էֆենտիները ճառեն, նոյնիսկ փող տան, ես երբեք չեմ կարող վստահանալ նրանց: Ի՞նչ էին անում մեր բուրժուաները Թիֆլիզում, այն ժամանակ, երբ երիտասարդութիւնը, կալուածական հարցի պատճառով, խանդավառ ցոյցեր էր անում. այդ բուրժուաները լուտանքներ էին թափում, թէ՝ «Տաճկաստանում կոտորել տուիք ժողովուրդը, այստեղ էլ նոյնն էք ուզում անել»: Նրանք աշխատում էին փաստաբանների միջոցով՝ յետ ստանալ խլուած կալուածները: Ես չեմ ուզում, որ բուրժուազիան մաղաչափ անգամ, նիւթական նպաստներ տալով, ազդէ մեր գործի վրայ. ես չեմ ուզում, որ տաճկահայ դատը այս կամ այն կերպ կովկասահայ բուրժուազիայի հովանաւորութեան տակ մտնի. բուրժուազիայի ձեռքին նա կը դառնայ մի գործիք՝ մեր սոցիալիստական գործունէութեանը, Կովկասում, վնասելու համար: Մի Ադելխանով հեշտութեամբ կը շահագործէ տաճկահայ գաղթականների (բանուորների) ազգային զգացմունքները. որքան էլ այդ բանուորները գիտակից լինին, այնուամենայնիւ նրանք կ՚ազդուին Ադելխանովի մի խօսքից իսկ, թէ՝ «ես 1000 րուբլի եմ տուել ազգի համար. գործադուլ մի՛ անէք», եւ գործադուլ չանելով պառակտումների պատճառ են դառնալու բանուորութեան մէջ: Այս կորստաբեր է լինելու մի սոցիալիստական կուսակցութեան համար: Կրկնում եմ, միայն փողը չէ, որ ուժ է տալու մեր դատին եւ որի պատճառով անհրաժեշտ գտնուի բուրժուազիայի մասնակցութիւնը: Ունեցել ենք Իսրայէլ Օրիներ, Էմին Յովսէփեաններ, որոնք համոզուած են եղել, թէ մի քանի միլիոններով կարելի կը լինի Հայաստանը գնել: Հանգուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփանէն էլ կարծում էր, որ Սուլթանին կարելի է կաշառել եւ այդպիսով ազատութիւն ստանալ նրանից, բայց ուտօպիաներ [ցնորքներ] են այդպիսի յոյսերը. յեղափոխութեան յենակէտը փողը չէ. Թող բանուորները փող չտան, բայց կը տան իրենց կեանքը, որ աւելի բարձր ու մեծ է մեզ համար, քան փողը: Ընկերներն ասում են, որ տաճկահայ դատի ազգայնութիւնը մթնացրել է կովկասահայ բանուորութեան դասակարգային գիտակցութիւնը. բայց եթէ նրանց առաջարկած ձեւով բանուորներից շարունակենք դրամական նպաստներ հաւաքել, ինչպէս դուք էք առաջարկում, արդեօք այս դէպքում եւս չե՞նք վնասելու նրանց դասակարգային գիտակցութեան արթնանալուն. եթէ ոչ, այլեւս ի՞նչ կարիք կայ բաժանուելու: Ի՞նչ տեսակ թէորիաներ [տեսութիւններ] կ՚ուզէք, վերցրէք, բայց մի մոռանաք կեանքի թէորիաները, տեսական մի գեղեցիկ ժեստի պատճառով մի դաւաճանէք կեանքի պահանջներին: Մեր այդ բաժանումներից կ՚օգտուեն մեր հակառակորդները. կը ստեղծուի մի խառնաշփոթ կացութիւն եւ մեր բոլորիս սկզբունքները կը վտանգուեն: Բաժանման անհրաժեշտութիւն չկայ, միեւնոյն ուղղութեամբ մենք կը գործենք երկու վայրերում եւս. եթէ պրոֆեսիոնալ միութիւններ ենք կազմում եւ ագրարային շարժումներ առաջացնում Ալեքսանդրապոլում, նոյնը կարելի է անել եւ Սարիղամիշում, Բասենում, հետզհետէ անցնելով սահմանի այն կողմերը: Տաճկահայաստանում մենք հող ունենք սոցիալիստական սկզբնական գործունէութեան համար. ես հաւատում եմ, որ այնտեղ հնարաւոր է դասակարգային գիտակցութիւն եւ գործունէութիւն առաջացնել: Սկզբում չէինք հաւատում, թէ Կովկասում հնարաւոր է լինելու այդ, բայց պայմանները փոխուեցին. նոյնը կը լինի եւ Տաճկահայաստանում: Ռուսաստանի եւ Տաճկաստանի պայմանների մէջ մեծ տարբերութիւն չկայ: Սխալ է ընկերների կարծիքը, թէ մի կուսակցութիւն անկարող է գործել տարբեր երկիրներում: Ինչպէ՞ս է հապա որ R.R.S.-ները (Գերմանիայում, Աւստրիայում, Ռուսաստանում) չեն ուզում ճանաչել սահմանները, այլ ձգտում են միահամուռ եւ ամբողջական գործունէութեան. մե՞նք պէտք է սահմաններ ճանաչենք: Սոցիալիստ յեղափոխականները իրենք խորհուրդ են տալիս մեզ՝ չբաժանուել, որովհետեւ, բաժանումը կործանարար կը լինի: Բաժանումը այսօր աննկատելի կը մնայ. բայց ապագայում՝ խոշոր իրարանցումների առիթ է դառնալու: Սարաֆովն եւս ջերմ կողմնակից է միացեալ գործունէութեան. նա արդէն մակեդոնական փորձերով հասկացել է, թէ որքան աղէտաբեր է բաժանումը: Եւ յանուն ինչի՞ ենք ուզում բաժանուել. յանուն կովկասահայ աշխատաւորների՞, — չէ՞ որ դրանք ամէնքը դէմ են բաժանման: Ուրեմն ուզում էք վերեւի՞ց սկսել բաժանումը: Պատկերացրէք ձեզ գալիք դառն դէպքերը. զգոյշ եղէք, որպէսզի ոչ կովկասահայ գործունէութիւնը վնասուի, ոչ տաճկահայ դատը, ոչ էլ մեր ընդհանուրին սոցիալիստական սկզբունքները: Մէկ աշխարհահայեացք, մէկ դրօշակ, եւ միայն տարբեր գործելակերպ, տեղական պայմանների համեմատ, — ահա ա՛յդ պէտք է լինի մեր նշանաբանը:

Մինասեան.— Եթէ կովկասահայերը ցոյց տան, որ դատերի միացումով տաճկահայ շարժումը չի վնասուի, այսինքն սոցիալիստական և ազգային ուղղութիւնները մեր գործունէութեան մէջ չեն հակասի իրար, — լա՛ւ, հարցը փակենք: Ինչ ուզում էք, սակայն, եղէք Կովկասում, տաճկահայ դատի [համար] կարեւոր է,



[որ] նրան նիւթական եւ բարոյական օգնութիւն տրուի: Ի վերջոյ, ես գոհունակութեամբ եմ ողջունում ուսանող ընկերների մտքերը, թէ Տաճկահայաստանում անկարելի է սոցիալիստական սկզբունքներով գործել. ուրախ եմ, որ նրանք թէորիաների մէջ չեն մոլորուել, այլ դաժան իրականութիւնն են ուշադրութեան առել: — Թոփչեանին կ՚առարկեմ այն, որ տաճկահայ հարցը ազգային հարց է, ո՛չ սոցիալիստական: Դաշնակցութիւնը երբեք դասակարգային կռիւ չէ մղել, մեր ուժը հիմնուած է ամբողջ ազգի վրայ. փող պէտք է վերցնենք ե՛ւ հարուստներից: Նկատելի է, որ տաճկահայ բարձր պաշտօնէութիւնը աւելի ազգասէր է եղել, քան կովկասահայ բուրժուազիան: Ինձ համար տաճկահայ դատը գորդեան հանգոյցն է, որը միայն սրով պէտք է լուծել. իսկ այդ լուծումը կարելի կը լինի կատարել, ոչ սոցիալիզմի, ոչ այլ բանի միջոցով, այլ միայն փողի. փողն է մասնաւորապէս՝ ջիղը ազատագրութեան գործի մէջ:

Ջելալեան.— Տաճկական առած կայ թէ «աղօթքը պէտք է սրտաբուխ լինի»: Առաջ կովկասահայերը գործել են տաճկահայերի համար. իսկ այժմ մեզ ասում են, թէ «մենք մեր սեփական գործն ունենք, այսուհետեւ դիմեցէք բուրժուաներին, նրանց աջակցութեամբ վարեցէք ձեր դատը»: Կարծես մեր դատը հոմանիշ է բուրժուական ձգտումների: Բայց եւ այնպէս, այդպէս ասողներն ամենից աւելի անկեղծ են հանդիսանում (բողոքներ են լսւում): Կովկասն ու Տաճկաստանը միեւնոյն կանոնով չպէտք է չափել: Ի հարկէ, չկայ ոչ մի ժողովուրդ, որ սոցիալիզմի կարիքը չզգայ. բայց ժամանակն ու տեղը հարկաւոր է միշտ աչքի առաջ ունենալ. Կովկասում, ռուս յեղափոխութեան շնորհիւ, նպաստաւոր պայմաններ կան. Տաճկաստանում, աննպաստ են: Մեզ նախ մեր կեանքն է հարկաւոր ապահովել, այնուհետեւ արդէն կը մտածենք ե՛ւ հացի մասին: Աւելի լաւ է, որ մեր դատը արհեստական կապերով չմիացուի կովկասահայ սոցիալիստական գործունէութեան հետ:

Համօ.— Շահխաթունեան նկատում է, իբր թէ, «բուրժուականութիւնը կը շարունակի իշխել մեր կուսակցութեան մէջ ե՛ւ ապագայում, եթէ միայն միջոցներ ձեռք չառնուեն նրա ազդեցութեան դէմ»: Այստեղ ես գտնում եմ փաստացի սխալ. բուրժուազիան չէ իշխել եւ չի էլ իշխէ երբեք: Բաժանումը վնասակար է լինելու, այն շատ պարզ պատճառով, որ Կովկասում առաջ է գալու, տաճկահայ հարցի շուրջը, մի նոր կուսակցութիւն, բուրժուազիայի ղեկավարութեամբ. եւ այդ բուրժուական-ազգային կուսակցութեան յետեւից կը գնան մասսաները, որովհետեւ նրանց մօտ ուժեղ է ազգայնութեան զգացմունքը: Ի հարկէ այդ զգացմունքը պէտք է պահպանել. առանց ազգային իդէալիզմի՝ մենք կը դառնանք չոր նիւթապաշտներ, ինչպէս սոցիալ-դեմոկրատները. բայց միեւնոյն ժամանակ տաճկահայ դատի վրայ չպէտք է նայել զուտ ազգային տեսակէտից, ինչպէս անում է ընկ. Մինասեանը: Տաճկահայաստանում մենք պէտք է դառնանք մի «համապետական» կուսակցութիւն, որովհետեւ կեանքն է այդպէս պահանջում:

Մինասեան.— Այդ հայեացքը նոր է: Ասել է թէ Բեռլինի դաշնագիրը ջնջե՞լ:

Թոփչեան.— Մենք մումիա չենք, որ շարունակենք մնալ մեր նախկին վիճակի մէջ: 15 տարուայ ընթացքում պայմանները փոխուել են եւ նոր պահանջներ են դրուել մեր առաջ: Մենք համապետական կուսակցութիւն դառնանք, քաղաքական տեսակէտից, բայց որովհետեւ քաղաքական շարժումն եւս, իսկական յեղափոխական ճանապարհով, կարող է վարել միայն ընկերվարական կուսակցութիւնը, մենք պէտք է լինենք ընկերվարական: Մենք թոյլ չպէտք է տանք, որ բուրժուազիան ստանձնէ տաճկահայ շարժման ղեկը. մե՛նք պէտք է լինենք միակ ղեկավարը:

Ստեփանեան.— Ես համոզուած եմ, որ ընկերները բաժանման առաջարկ են անում, աչքի առաջ ունենալով տաճկահայ դատի շահը. բայց ակամայից, անգունդն են ձգում նոյն այդ դատը: Ինչո՞ւ են կարծում, որ աշխատաւորների միջոցներով չէ կարելի ապահովել տաճկահայ դատը: Անցեալի փորձերը ցոյց են տալիս, որ նիւթականը հայթայթել են միշտ էլ նոյն այդ աշխատաւորները. բուրժուաների հետ մենք ոչ մի գործ չունենք եւ չենք կարող ունենալ: Ձեր բաժանումով, ընկերներ, ուժ կը տաք միհրանական շարժմանը: Ժողովը պէտք է ընդգծէ մէկ եւ միացած գործունէութիւն, երկու վայրերի համար էլ. վաղը-միւս օրը Տաճկաստանում եւս կը փոխուի դրութիւնը, ինչպէս անսպասելի կերպով փոխուեց Կովկասում(38):

Արամ.— (Սխալ է գտնում Իսահակեանի ասածը՝ թէ Տաճկահայաստանում դասակարգային շերտաւորումներ չկան եւ թէ տաճիկը ճնշում է հաւասարապէս բոլոր հայերին): Ես հակառակը կ՚ասեմ. կառավարութիւնը հաւասար չափով հովանաւորում է թէ՛ թուրք եւ թէ հայ հարուստներին: Մինչդեռ հարուստ հայերը ազատ մուտք ունեն Պոլիս, չունեւորները զրկուած են այդ արտօնութիւնից: Գաւառական քաղաքներում, այժմ եւս, դէպքերից յետոյ, հայ հարուստները վայելում են կառավարութեան լիակատար վստահութիւնը, աւելի քան քիւրտերը, ինչպէս օրինակ՝ Վասպուրականում: Ասել ուրեմն, որ հայ հարուստը Տաճկաստանում նոյնքան է ճնշուած, որքան աղքատը, սխալ է. նշանակում է ծանօթ չլինել տաճկահայ իրականութեան հետ: Այնտեղ գոյութիւն ունեն դասակարգային շերտաւորումներ: Բայց որքան էլ կողմնակից եմ սոցիալիզմի, ես գտնում եմ, որ ներկայումս հարկաւոր է վարել քաղաքական կռիւ (Տաճկաստանում), միայն թէ՝ սոցիալիստական ոգուով. այս ոգին պէտք է մըտցնել մեր գործունէութեան մէջ, նախ հենց համերաշ-

դել եւ պնդել, թէ Թրքահայկական դատը եւ քաղաքական շարժումը մի բուրժուական շարժում է, ստեղծուած հայ բուրժուազիայի ձեռքով եւ ջանքերով, եւ հետեւաբար ծառայել այդ շարժման կը նշանակէ ծառայել բուրժուազիային: Դա քաղաքական խակութեան մի մարգարիտ է, արժանի բացառիկ հիացման...: Սակայն մի համառօտ ակնարկով տեսնենք թէ ի՞նչ է հայկական շարժումը եւ ի՞նչ հողի վրայ է դրած նա: — (Այս ճառախօսը կանգ առաւ Թրքահայ շարժման հիմնական կէտերի վրայ, պարզեց նրա զարգացման փուլերը. այն տարբերութիւնը, որ կայ ռամկավարական հակումներով ներշնչուած հայ աշխատաւոր ժողովրդի եւ ստրկական քրդութեան, կրօնական ճորտութեան ենթակայ Թուրքերի եւ կամ ազնուապետական կարգերով տարուած վրացիների մէջ) —: Մեր շարժման յենակէտ եղել է ոչ թէ մեր քաղքենի բուրժուա դասակարգը, այլ ինքը աշխատող ժողովուրդը. այդ շարժմանը կեանք եւ ոյժ տուողը հարստահարող տարրերը չեն եղել, այլ աշխատաւորների գաղափարախօս հանդիսացող յեղափոխական խաւերը, որոնք 20 տարուց ի վեր չեն խնայել, ո՛չ կեանք, ո՛չ խօսք, ո՛չ զէնք եւ ոչ գրիչ՝ փշրելու քաղաքական եւ տնտեսական ճնշման շղթաները եւ բանալու այն ճանապարհները, որոնցով պիտի անցնի մէն մի ժողովուրդ, որ ուզում է զարգանալ եւ ապրել, փոխանակ փտելու եւ հաշմանդամ լինելու: Եւ դրանով միայն պէտք է բացատրել այն փաստը, որ Թրքահայ դատին նուիրուեցին, այսքան տարիներից ի վեր, հայոց երիտասարդութեան եւ մտաւորականութեան լաւագոյն ուժերը, որոնք շովինիզմի եւ բուրժուական գաղափարների թշնամիներ են, ջերմ կողմնակիցներ միջազգային գաղափարների ու յեղափոխական լայն ծրագիրների: Դրանով պէտք է մեկնել այն, որ մեր շատ ընկերները, սոցիալիստ՝ համոզմունքով եւ յեղափոխական՝ մտածելակերպով, հետեւեցին այդ գործի մէջ եւ կրեցին կռուի, բանտի եւ կախաղանի ամբողջ ծանրութիւնը: — (Դրանից յետոյ ընկ. Մալումեան առաջ բերեց մի շարք հեղինակաւոր եւրոպացիների կարծիքը, մեր ժողովրդական դատի մասին, ինչպէս են՝ Կաստելար, Էնգելհարտտ, Գրին, Շոլէ, Մակ-Կոլ, Էվերատ, Բրայս, Բէկլիւ, Բայար, Կոնստան, Զիպրիանի, Լամպրէխտ, Ժորէս, Պրեսանսէ, Քիյար եւ ուրիշ շատերը, — ցոյց տալու համար, որ այդ դատը՝ իբրեւ քաղաքակրթական մի շարժում, արժանի է մեր ամբողջ աջակցութեան: — Կանգ առնելով այն հարցի վրայ, թէ ի՞նչ կապ կայ կովկասահայ եւ Թրքահայ դատերի միջեւ, նա պաշտպանեց այն միտքը, որ կուսակցութիւնը այդ երկու դատն պէտք է առաջ տանի միեւնոյն դրօշակի տակ: Ապա անցաւ այն կէտին, թէ ի՛նչ դժբախտ հետեւանքներ կ'ունենայ անջատումը, իբրեւ մի առիթ զանազան թիւրիմացութիւնների, կռիւների, նոյնիսկ արիւնոտ ընդհարումների, կուսակցական հողի վրայ: Իբրեւ ապացոյց առաջ բերեց մի շարք փաստեր հնչակեան խմբերի կեանքից եւ ռուսական մի քանի կազմակերպութիւնների փորձերից): — Շատ կարեւոր է եւ այն փաստը, որ անջատման առաջարկը ոչ մի համակրանք չէր գտնում կազմակերպական շրջաններում եւ նրա մասին առաջարկ է բերել միմիայն մի պատգամաւոր՝ Ռուսաստանի ուսանողութեան ներկայացուցիչը: Մեր մարմիններից 22ը վճռական կերպով դէմ են անջատման մտքին եւ հենց այդ հանգամանքը մեզ պիտի ստիպէ խոստովանելու, որ առաջարկը չէ բխում կեանքից, իրականութեան մէջ հող չունի եւ հետեւաբար այս ժողովում լուրջ կասկածների առիթ տալ չէ կարող: Մեր եւրոպացի բարեկամներն իսկ, որոնք փոքր ի շատէ ծանօթութիւն ունեն մեր շարժման մասին, սոսկումով են խօսում այդ տեսակ պառակտման եւ անջատումների մասին: Դուք կարդացիք, օրինակ, Քիյարի գեղեցիկ կոչը, տպագրուած «Դրօշակ»ի մէջ անցեալ տարի: Ես չեմ բերի ուրիշ եւրոպացի բարեկամների կարծիքը: Կը բաւականանամ յիշելով խօսքերը մեր թանկագին մի ընկերոջ՝ Քրիստափորի, որը մեր գործին եւ կազմակերպութեան զոհ բերեց իր կեանքի լաւագոյն տարիները, իր կեանքն իսկ.— «Ժամանակ է վերջապէս, գրում է նա, որ ներկայ մահաշունչ կացութեան դիմաց, երբ տաճկահայկական կոտորածներից յետոյ, գուցէ, գտնւում ենք կովկասահայկական կոտորածների նախօրեակին, կռուելու անդրդուելի վճռողականութիւնը եւ իրար խառնուելու, իրար հետ միանալու, իրօք մի ամբողջութիւն կազմելու միահամուռ, միահոգի պահանջը մեր ընդհանուր նշանաբանը դառնայ: Պատռե՛լ է հարկաւոր քարտէզների վրայ այս կամ այն աւազակապետի կամքով գծած սահմանները, ջնջե՛լ է հարկաւոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից եւ որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատեւ են լինում: Ո՛չ մի բռնութիւն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, տոգորուած ընդհանուր շահերի գիտակցութեամբ, ունի նաեւ կռուելու անսասան վճռողականութիւն»: — Այդ կռիւը պահանջում է՝ յետ մղել անջատման եւ պառակտման որեւէ առաջարկ: Մի՛ ծրագիր, յեղափոխական մի՛ բանակ.— ահա՛ կռուի յաջողութեան լաւագոյն միջոցը:

Խահակեան.— Մեր ընկերները միշտ էլ, մոռանալով մանր բուրժուաները, ծանրանում են խոշոր բուրժուաների վրայ: Այո՛, վերջինները տուել են բռնի կերպով, բայց մանր բուրժուաների նուիրաբերութիւնը եղել է կամաւոր: Մենք ի՞նչ բաւարար քանակութիւն կարող ենք ստանալ աղքատ բանուորներից, եթէ դուրս գցենք մանր բուրժուաներին (բացականչութիւն՝ Երեւանի տարեկան մուտքի 40.000 ռուբլուց 35.000ը տուել են աշխատաւորները): Ռայոնական ժողովում, երբ մանր բուրժուաներին դուրս հանելու մասին խօսք եղաւ, Խաժակն ասում էր «այդ դէպքում կը մնանք



հրամանատարներ առանց բանակի»: Մենք չենք ուրանում, որ եղել է սոցիալիստական ծրագիր, բայց այդ ծրագիրը կեանքի համար եղել է մեռած տառ: Երկրի տնտեսական դրութեան մասին գրել եմ 15 երես, դեռ ընկ. Թոփչեանը ասում է, որ այդ մասին ոչինչ չասացի: Մենք պնդում ենք, որ Տաճկաստանում տնտեսական յարաբերութեան ուժերը զարգացած չեն սոցիալիստական գործունէութիւն սկսելու համար: Գալով բուրժուաներին, կ'ասեմ, որ նրանք մեզ համար վտանգաւոր չեն մինչեւ մի որոշ աստիճան, մինչև կեանքի եւ գոյքի ապահովութիւն ձեռք բերելը: Այո՛, մինչեւ այստեղ նրանք կարող են մեզ հետ լինել: Մենք չենք ասում, որ բաժանումից խառնաշփոթութիւն, իբարանցում չի յառաջանայ, այլ մենք դնում ենք հարցը ըստ էութեան.— ո՞ւր է տանում այդ միութիւնը: Այդ երկու հարցերը իրենց էութեամբ բաժանելի են: Ես վերջացնում եմ Վռամեանի խօսքերով եւ համամիտ եմ նրա հետ, երբ հարցը հասունացած լինի, այլեւս հնար չլինի միասին տանելու, այն ժամանակ կը բաժանուենք:

Շահխաթունեան.— Սխալ է կարծել, որ Տաճկաստանում գործող կուսակցութիւնը իր ծրագիրը պէտք է համաձայնեցնէ Կովկասում գործող զանազան կուսակցութիւնների պահանջներին՝ նպաստներ ստանալու նպատակով: Ո՛չ երբեք: Նա կ'ունենայ իր չեչտուած եւ որոշակի ծրագիրը եւ դրանով էլ կ'առաջնորդուի, առանց ղեկավարուելու միւս կուսակցութիւնների ցանկութիւններով: Վերջիններս կը լինեն միայն օժանդակողներ: Եւ ասել՝ թէ այդ լիգան կ'ազդէ Տաճկահայաստանի գործին (Երկրում), աւելի քան անհիմն է: Մերը կը լինի, կրկնում եմ, միայն աջակցութիւն: Սխալ է նաեւ կարծել, որ կովկասեան բոլոր քաղաքական եւ սոցիալիստական կուսակցութիւնները անպայման մասն են ունենալու այդ լիգայի մէջ: Դրանով էլ սահմանափակւում է մեր գործը: Մենք իրաւասու չենք նրանց համար ծրագիր մշակելու եւ գործադրութեան առաջադրելու, քանի որ մենք Երկրից դուրս ենք եւ չենք աշխատում նրանց հետ. եւ ի զուր են մեր ընկերները կարծում, որ միայն Դաշնակցութիւնը, կամ Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութիւնն է կանչուած՝ տաճկահայ դատին օժանդակելու, ուրիշ խօսքով՝ միայն աշխատաւորական մասը: Ահա 15 տարի օգնել է մանր բուրժուան եւ սրանից յետոյ էլ օժանդակելու է: Այդ գործում, իմ կարծիքով, մասն ունեն թէ՛ սոցիալիստական եւ թէ բուրժուական կուսակցութիւնները: Գալով R.R.S. կուսակցութեան, պիտի ասեմ, ի յաւ ընկ. Թոփչեանի, որ ես էլ բարեբախտաբար ծանօթ եմ այդ հարցի հետ: Ճիշդ է, լեհական այդ երեք հատուածները կապուած են իրար հետ, բայց այդ կապը միայն բարոյական բնոյթ է կրում եւ ոչ թէ իրական: Ռուսաստանի լեհ սոցիալիստական կուսակցութեան ընդհանուր ժողովներին մասնակցում են միւս տեղերի լեհ պատգամաւորները՝ լոկ խորհրդատու, բայց ոչ վճռողական ձայնով: Նրանք ներկայանում են իբրեւ հիւրեր: Ուրեմն ուրիշ բան է ընդհանուր ծրագիրը, ուրիշ է կազմակերպական հարցը: Այդ հարցերը կազմակերպօրէն կապելը վնասակար է եւ կը խանգարէ, իսկ, եթէ ուզում էք, կարելի է ընդհանուր ծրագիր մշակել: Պարզ է ուրեմն, որ մենք սոսկ օգնողներ կը լինենք, հետեւապէս նաեւ ոչ իրաւասու՝ Կովկասում նստելու եւ Տաճկաստանի գործունէութեան համար վճռական ձայն ունենալու: Թող մեր տաճկահայ ընկերները վճռեն, թէ կարելի՞ է Երկրում սոցիալիստական գործունէութիւն սկսել եւ ես կը խոնարհուեմ նրանց որոշմանը, բայց ես պատասխանատուութեան ամբողջ ծանրութիւնը կը թողնեմ նրանց վրայ:

Թոփչեան.— Թէեւ ընկ. Շահխաթունեանը ձըգտում է հաւատացնել մեզ, որ նա R.R.S. կուսակցութեանը ծանօթ է, բայց պէտք է ասեմ, որ նրա տեղեկութիւնները այդ հարցի վերաբերմամբ աւելի քան պակասաւոր եւ թերի են: Նա գուցէ լսել է մէկի կարծիքը, բայց անհրաժեշտ է այդ կուսակցութեան անցեալի հետ ծանօթանալ: R.R.S. իւր գոյութիւնը ստացել է 1892 թուին եւ ունի իւր կուսակցութեան երկար պատմութիւնը. չափազանց մեծ նմանութիւն ունի Դաշնակցութեան հետ: Կուսակցութիւնը ունենալով մի ընդհանուր աշխարհահայեացք եւ ծրագիր, տարիներ շարունակ գործել է 3 երկրներում: Տարբերութիւնը եղել է միայն տակտիկայի մէջ: Ուրեմն թող ծանօթանան այդ բոլորի հետ եւ ապա չեչտեն, թէ սխալ են իմ տուած տեղեկութիւնները: Միւս հարցերի մասին ես աւելորդ եմ համարում խօսել, որովհետեւ ընկերները ոչնչով չհերքեցին ասածներս: Առանց ծանօթ լինելու Տաճկահայաստանի տնտեսական սոցիալական պայմանների հետ, միանգամայն անհիմն է բացականչել, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը չէ կարող այնտեղ էլ, Կովկասում էլ իբրեւ մի՛ կուսակցութիւն գործել: Ես անցնում եմ բանաձեւի:

Թոփչեան կարդում է իւր բանաձեւը, բայց քուէարկութիւնը յետաձգւում է:

Նիստը փակւում է ժամը 7½ին:

## 70ՐԴ ԵՒ 71ՐԴ ՆԻՍՏԵՐ (7 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է՝ Համօ Մհերեան:

Ներկայ են 25 ժողովական:

Բացակայ են՝ Մուրատ, Սեպուհ, Անդրանիկ (հիւանդ):

---

Յուցականի յանձնաժողովի կողմից գրաւոր առաջարկ է լինում, հրաւիրելու ընկ. Թորգոմին: Յուցականի յանձնաժողովի անդամներ Արամ եւ Զաւրեան՝

Ի նկատի ունենալով, որ Տաճկահայաստանում քաղաքական կռիւը երբէք չէ հակասում սոցիալիստականին, այլ պատրաստում է վերջինիս համար գործունէութեան լայն ասպարէզ, որ տաճկահայ ժողովուրդի 90%ը կազմող աշխատաւոր դասերի դատը անկուսակցական հողի վրայ դնել կը նշանակէ բուրժուազիայի ձեռքը տալ նրան մեռցնել այդ դատը, եւ որ տարբեր քաղաքական ու տնտեսական պայմանների տակ ապրող հայ մասսաների ներկայացուցիչները չեն կարող մի Ընդհանուր Ժողովում մշակել տարբեր միջավայրերի համապատասխան եւ նրանց համար մերձաւոր ծրագիր ու տակտիկա այդ գործի համար, — ուստի, հիմնուելով Դաշնակցութեան սկզբնական Ծրագրի ոգու վրայ, այս Ընդհանուր Ժողովում պէտք է մշակել յեղափոխական սոցիալիստական ծրագրի ընդհանուր մասը, հիմնաւորուած պատմափիլիսոփայական որոշ աշխարհահայեացքով. իսկ մինիմում ծրագիրն ու տակտիկական խնդիրները թողնել համապատասխան երկրների Ռայոնական Ժողովներին (տաճկահայ դատինը կարելի է յանձնել յատուկ նրա համար գումարուած մի ձեռնհաս մարմնի)»:

Մալումեան.— *Առաջարկում եմ անջատման հարցին վերաբերեալ իմ բանաձեւը՝ պատճառաբանութիւնով հանդերձ, պարզելու համար թէ ինչո՞ւ է Ժողովը յետ մղում անջատման առաջարկը։*

Նախագահը *քուէարկութեան է դնում այս առաջարկուած պատճառաբանութիւնով բանաձեւը։*

*Բանաձեւը անցնում է, որի դէմ են՝ Շահխաթունեան, Իսահակեան. ձեռնպահ են՝ Մաշուր, Մինասեան եւ Սիգ։*

Սիգ.— *Համաձայն Նալբանդի Շրջանային Ժողովի դրած պայմանի, տաճկահայ եւ կովկասահայ դատերի յարաբերութեան խնդրում մնում եմ ձեռնպահ քուէարկութեան առթիւ։ Իսկ անձնապէս կողմնակից եմ բաժանման բանաձեւին։*

---

*Ժողովն անցնում է հերթական այլ հարցերի։ Քուէարկւում է Նախադծի հրատարակման իրաւասութեան խնդրի վերաբերմամբ ընկ. Զարդարեանի բանաձեւը, որը ընդունւում է միաձայն։*

*Ընկ.* Զարդարեան *զեկուցում է տալիս Ոսկեհանքի շրջանի տեղական գործունէութեան մասին, որ հետեւեալն է.—*

«Իկմիրի շրջանը կ'ընդգրկէ Մանիսան, Տէնիզլին, Գասապան եւ այս շրջանակին մէջ գտնուող միւս հայ բնակչութիւնները: -- 1904էն մինչեւ ներկայ Ընդհանուր Ժողովը՝ Իկմիրը եղած է Յուցականի մէկ վայրը եւ այս ուղղութեամբ կատարած որոշ գործունէութիւն, որուն տեղեկագիրը եւ հաշուետուութիւնը արդէն Յուցական Մարմնի կողմէ առանձնապէս ներկայացուած է Ընդհանուր Ժողովին: Հետեւաբար ես պիտի տամ միայն տեղեկութիւններ, որ կը վերաբերին տեղական կազմակերպութեան եւ անոր արդի վիճակին: -- Իկմիրը իր հայաշատ բնակչութեամբ, հայերու մտաւորական եւ նիւթական կարգացումով, իր աշխարհագրական դիրքովն ու եւրոպական այլեւայլ խառն ազգաբնակութիւններովը՝ ինչպէս նաեւ Կիլիկիոյ, Փոքր Ասիոյ հետ յարաբերուելու իւր բացառիկ դիւրութիւններովը, պէտք է, որ ներկայ Ընդհանուր Ժողովի լուրջ ուշադրութիւնը գրաւէ, մանաւանդ երբ ժողովը նկատի ունենայ թէ Իկմիրը անցեալին մէջ իր դրամական օժանդակութեամբը եւ բարոյական լաւագոյն ուժերովը նշանակալից դեր մը խաղացած է: Դժբախտաբար ասկէ առաջ Յուցականի գործունէութիւնը, ինչպէս Պոլսոյ, նոյնպէս Իկմիրի տեղական կազմակերպական գործին մեծապէս վնասած է, քանի որ ոչ միայն դուրսէն գացող ընկերները, այլ նոյնիսկ տեղական աչքի ընկնող ընկերները կլանուած են եղեր Յուցականով. մինչ, եթէ տրամադրելի ուժերը նուիրուած ըլլային աւելի լայն պրոպագանդի եւ կազմակերպչական աշխատութեան, տեղական գործը այսօր պիտի ներկայացնէր աւելի խոր հիմնաւորում ու մխիթարական վիճակ: Յուցականի վիժումէն ետքը, ինչպէս ծանօթ է ժողովին, բազմաթիւ ձերբակալութիւններ եղան թէ՛ Իկմիրի, թէ՛ Մանիսայի, Գասապայի եւ միւս քաղաքներուն մէջ, եւ ընկերներէն մէկ մասը արտասահման անցաւ, այնպէս որ Կազմակերպութիւնը ջըլատուեցաւ, որովհետեւ ձերբակալուածներուն մեծագոյն մասը դատապարտուեցան: Մէկ քանիները թէեւ անպարտ արձակուեցան, բայց այսօր կառավարական խիստ հսկողութեան տակ են եւ ոստիկանական խստութիւնները չափազանց ծանրացած են: Այս պահուս Իկմիրի շրջանին մէջ իրաւ է թէ գոյութիւն ունին խումբեր, կայ մարմին մը, որուն գործունէութեան հեռուէն ընթացք տուած է Բալկանի Կ. Կոմիտէն եւ օժանդակած է նիւթապէս, բայց կարեւոր է անկեղծութեամբ ըսել՝ թէ Իկմիրի կազմակերպութիւնը գոհացուցիչ վիճակի մէջ չէ: Դժբախտաբար տեղական ընկերներու մշակած հարցերը պիտի չկրնամ ներկայացնել ժողովին, քանի որ նախապէս այդ հարցերը ղրկուած են եղեր Իկմիրի կողմէ նշանակուած նախորդ պատգամաւորին՝ որու ընտրութիւնը բեկանեց ժողովը. այս իսկ պատճառով պիտի օգտուիմ նախապէս Բալկանի միջոցով Ընդհանուր Ժողովին ղրկուած տեղեկագրէ մը: -- Իկմիրը կոչուած է մեր յառաջիկայ գործունէութեան մէջ ալ կարեւոր տեղ մը բռնելու, թէ՛ Յուցականի, թէ նիւթական ու բարոյական օժանդակութեան տեսակէտով: Բայց անհրաժեշտ է, որ կազմակերպիչ ընկեր մը նշանակուի Իկմիրի համար, որպէսզի մէկ կողմէն՝ տեղական կազմը կրկին հիմնաւորէ, եւ միւս կողմէն՝ հետամտի իրագործել բոլոր այն պարտականութիւնները, որ ժողովը պիտի դընէ նոյն վայրին վրայ: Ասոր համար կ'առաջարկեմ որ ժողովը առժամաբար նիւթապէս օժանդակէ Իկմիրի գործին, մինչեւ որ անիկա կարող ըլլայ ինքնիրեն բաւելու: Իկմիրը միշտ ընդունակ է տալու բարոյական ուժեր եւ նիւթական մեծ գումարներ. անիկա ամէն յարմարութիւն ունի ծառայելու, իբրեւ յարաբերութեան գլխաւոր կեդրոն՝ Պոլսոյ, Կիլիկիոյ եւ Փոքր Ասիոյ կեդրոններու հետ, ուստի ժողովին կը մնայ համապատասխան որոշումներ տալ եւ օգտուիլ այս վայրէն: Վերջացնելով այս համառօտ տեղեկութիւնները, պատրաստ եմ պատասխանելու ինծի տրուած հարցերուն:



Մալումեան.— *Ցանկալի է, որ Ոսկեհանքի շրջանը մտնէ Պոլսում կազմուելիք Կենտրոնական Կոմիտէի իրաւասութեան տակ։ Որովհետեւ Ոսկեհանքում մենք չենք կարող ունենալ այնքան լայն գործունէութիւն, որպէսզի կարեւոր լինի մի ջոկ Կ. Կոմիտէ հիմնել այնտեղ։*

Զարդարեան.— *Ես համաձայն չեմ, նոյնիսկ հակառակը կ'ասեմ, որ Ոսկեհանքին տրուի առաջնութիւնը Պոլսի հանդէպ։ Որովհետեւ, նախ՝ Պոլսի հետ կապուած մնալը ինքնըստինքեան բարդութիւնների աղբիւր է դառնալու, եւ ապա՝ Ոսկեհանքը ունի լաւ երիտասարդ ուժեր եւ կարող է նիւթական միջոցներ տալ։*

Մալումեան.— *Բայց այնտեղ կայ մի ոչ-յեղափոխական մթնոլորտ, որը փչացնում է գործը։ Կարծում եմ, որ առժամանակ գոնէ Ոսկեհանքում չպէտք է կազմել որեւէ անկախ մարմին։*

Վռամեան.— *Սխալ է ընկ. Մալումեանի ասածը, թէ Ոսկեհանքում տիրում է ոչ-յեղափոխական մթնոլորտ։ Պոլսից յետոյ բարձրացաւ Ոսկեհանքը. այնտեղ կատարուել են մի շարք տեռորներ։ Իսկ որ տղաներն ըմբոստացել են, այդ եղել է ոչ նրանց անյեղափոխական լինելուն պատճառաւ, այլ այն՝ որ գործելու նիւթ չէ տրուել նրանց։ Շատ լաւ տղաներ են. բայց որովհետեւ գործ չունեն ձեռքերնին, ինքնագլուխ քայլեր են անում։ Եթէ նրանց գործ տրուի, անպայման օգտակար են լինելու մեզ։ — Յետոյ Ոսկեհանքը շատ աւելի դիւրութիւններ է տալիս՝ Փոքր Ասիոյ գործերը վարելու համար, քան Պոլիսը. այդտեղ կան՝ երկաթուղի, փոստ, եւն. եւրոպական քաղաք է, եւ մենք միջոց ունենք յաճախ մտնել այնտեղ. Ոսկեհանքի միջոցով մենք մօտ կապեր կ'ունենանք Լեռնավայրի հետ։ Այնպէս որ Մալումեանի առաջարկը՝ այնտեղ առայժմ միայն ենթակոմիտէ ունենալ, գտնում եմ սխալ։ Ես միանում եմ Զարդարեանի կարծիքի հետ, որ ժամանակի ընթացքում Պոլիսը թերեւս տեղի տայ Ոսկեհանքի առաջ։ Հարկաւոր է միայն փորձուած եւ մնայուն գործիչներ ուղարկել այնտեղ, որոնք ընդունակ լինեն՝ գործը հաստատուն հիմքերի վրայ դնելու։*

Ռոստոմ.— *Ճիշդ է, որ այնտեղ յեղափոխական ուժեր կան. բայց միայն՝ նրանց եռանդը շատ է չափազանց. եւ այդ չափազանց եռանդի շնորհիւ, նրանք չեն ուզում ճանաչել ոչ մի օրէնք, չեն հպատակւում Ընդհանուր Ժողովի ոչ մի որոշմանը, չեն ուզում ենթարկուել Պատասխանատու Մարմիններին. գործում են ինքնագլուխ։ Ուրեմն, նախ մեզ միջոցներ ցոյց տուէք, որոնցով կարելի լինի եռանդի այդ չափազանցման առաջն առնել, որպէսզի մենք գործունէութիւն սկսենք այնտեղ։*

Մանուկ.— *Դրսեցիներն են, որ դժգոհութիւնների ու խռովութիւնների առիթ են տալիս եւ ո՛չ թէ տեղացի գործիչները։*

Զարդարեանը *եւս չեշտում է նոյն բանը՝ թէ, եթէ դրսից եկող գործիչները տակտով վարեն գործը, անկարգութիւններ տեղի չեն ունենայ։ Վիճաբանութիւնները վերջանում են։*

Նախագահը *առաջարկում է՝ կա՛մ բանաձեւ կազմել ընկ. Զարդարեանի շօշափած հարցի վերաբերմամբ, կամ թողնել նրան առկախ։*

*Հարցը թողնւում է առկախ։*

---

*Ընկ. Վարդանի կողմից բանաձեւ է առաջարկւում,* «Կովկասի ինքնապաշտպանութեան գործի» *խնդրի վերաբերմամբ։*

Համօ.— *Ինքնապաշտպանութեան կռիւների ընթացքում արած դիտողութիւնների հիման վրայ, ես այն եզրակացութեան եմ յանգել, որ ինքնապաշտպանութեան գործը ամբողջովին պէտք է զատել կուսակցութիւնից եւ դնել անկուսակցական հողի վրայ, կազմել մի անկուսակցական մարմին, որի մէջ ե՛ւ կը մըտնեն անհատ դաշնակցականներ՝ գործին մեր ուզած ուղղութիւնը տալու համար։ Այսպիսով կուսակցութիւնը ազատ կը մնայ պատասխանատուութիւնից։ Այժմ երբ ժողովուրդը զինուած է եւ որոշ չափով պատրաստուած, մենք յետ պէտք է քաշուենք։ Այս տեսակէտից, Վարդանի առաջարկը եւս գտնում եմ պակասաւոր։*

Մաշուր.— *Ամէն տեղ ցանկութիւն է յայտնուած, որպէսզի գործը յանձնուի իրեն՝ ժողովրդին, եւ մենք ընդառաջ ենք գնալու այդ ցանկութեանը։ Ինքնապաշտպանութիւնը համաժողովրդական գործ պէտք է դարձնել եւ ո՛չ թէ կուսակցական. ժողովուրդի մէջ պէտք է արծարծել միլիցիայի գաղափարը. իսկ մեր դաշնակցական շարքերում, մենք պէտք է կազմակերպենք մարտական խմբեր՝ որոնք ե՛ւ կը լինեն առաջնորդողները կռիւների ժամանակ։*

Մինասեան.— *Ինքնապաշտպանութեան գործը յաւիտենապէս շարունակելու անհրաժեշտութիւնը չկայ, ես համոզուա՛ծ եմ, — քանի որ պետական դումայի շնորհիւ վտանգը մասամբ վերացուած կարելի է համարել։ Յամենայն դէպս, Դաշնակցութիւնը ժողովրդին պէտք է թողնէ այդ գործը։*

Գագիկ.— *Ես չեմ կարծում, որ ժողովուրդը կարողանայ ինքն իրան բաւարար չափով տանել ինքնապաշտպանութիւնը, եթէ չլինի մի ընդհանուր ղեկավարութիւն։ Եթէ անցեալ ընդհարումների ժամանակ կարելի եղաւ այնպէս յաջող ու փառաւոր կերպով տանել ինքնապաշտպանութիւնը, — դա շնորհիւ նրա էր, որ կար մի ընդհանուր ղեկավարող եւ ուղղութիւն տուող հիմնարկութիւն՝ ի դէմս Դաշնակցութեան, որին են-*

*տին էլ կը միջամտէ, բաւականին անհիմն է եւ խիստ լաւատեսութեան արդիւնք: Հարկաւոր է ցոյց տալ նըպաստող ազդակները:*

**Նախագահ.**— *Այդ տակտիկը Հ. Յ. Դաշնակցութիւնը ընդունել է տարիներից ի վեր: Անհրաժեշտ է որ հակառակ կողմը խօսի:*

**Ռոստոմ.**— *Մեզնից ոչ ոք չի թոյլ տայ իրեն, պնդելու, որ եւրոպական պետութիւնները միջամտելու են, անպայման, մեր դատի օգտին. դա հաւանական, բայց յամենայն դէպս թէական բան է: Ակնկալել մի միայն Եւրոպայի մարդասիրութիւնից, դա աւելի քան միակողմանի [միամտութիւն ?] է: Եւրոպայի միջամտութիւնը անխուսափելի կը լինի միայն այն պատճառով, որ նա տէր եւ խնամակալ է այն երկրին, որի հետ կապուած է մեր դատը: Հետեւապէս ակնկալած միջամտութիւնը առանց մեզ էլ տեղի կ'ունենայ, եւ դա կը լինի հենց եւրոպական պետութիւնների սեփական շահերի թելադրութիւնը: Այս առաջին եւ գլխաւոր պայմանն է: Կան նաեւ երկրորդական պարագաներ. օրինակ՝ մեր գործօն դերը: Բոլոր պետութիւնները միատեսակ եւ միեւնոյն չափով չեն շահագրգռուած Տաճկաստանով: Մենք պէտք է պարզենք մեզ համար այդ յարաբերութիւնները եւ մանաւորապէս փնտռենք այն պետութիւնները, որոնց բռնած դիրքը մեր դատի հանդէպ դրական է, եւ որոնց շահերը Տաճկաստանում մեր օգտին եւս ծառայում են: Միջազգային այդ բարդ յարաբերութիւնների մէջ մենք պիտի միջամտենք, իբրեւ մի ինքնուրոյն ազդակ. իրական եւ զօրաւոր միջամտութիւն առաջ բերելու համար, պէտք է յարատեւ վառ պահենք այդ հարցը եւ աշխատենք սպառնական ոյժ ներկայացնել, որպէսզի յաջող մոմենտներում մեր ձայնն էլ թելադրող լինի, որպէսզի մենք էլ մեր կողմից կարողանանք թելադրութիւններ անել եւ ազդել առաջանալիք փոփոխութիւնների, յեղաշրջումների վրայ:*

**Զաւրեան.**— *Այն հարցը որ դնում է Մալումեան՝ գործնական, երկրորդական է: Գլխաւորը եւրոպական միջամտութիւնն է եւ դա երեւան է գալիս բոլոր խնդիրների վերաբերմամբ. մեր հարցում եւրոպական բոլոր պետութիւնները շահագրգռուած են, ոմանք ուղղակի, ոմանք անուղղակի: Եւ դա ճիշդ է ոչ միայն մեր, այլեւ բոլոր խոշոր քաղաքական հարցերի վերաբերմամբ. օրինակ՝ ռուս-ճապոնական պատերազմը: Գրեթէ բոլոր պետութիւնները ուղղակի կամ անուղղակի կերպով շահագրգռուած էին այդ խնդրով: Ամերիկան անգամ, ինչպէս գիտէք, նշանաւոր դեր խաղաց դրա մէջ: Նոյն այդ ընդհանուր բնոյթ կրող երեւոյթի առաջ ենք կանգնած Պարսկաստանի վերաբերմամբ: Անգլիա մի կողմից է շահագրգռուած, ի հարկէ իբրեւ դեմոկրատիկ կարգերի ներկայացուցիչ, իսկ Ռուսաստանը միւս կողմից, իբրեւ ռէակցիօն տարր: Թուրքիան էլ քաղաքականապէս իբրեւ թոյլ, տկար պետութիւն, աւելի քան անխուսափելի է Եւրոպայի միջամտութիւնը եւ խնամակալութիւնը նրա նկատմամբ: Եւրոպան ձգտում է դարձնել Օսմանեան պետութիւնը ազատ առեւտրական շուկայ եւ շահագործել նրա տնտեսական հնարաւորութիւնները: Այո՛, դիպլոմատիան խաղացել է եւ խաղալու է խոշոր նշանակալի դեր բոլոր շարժումների մէջ: Սա տնտեսական կողմն է: Մեզ համար կարեւորը գործնականն է: Տրուե՞լ է արդեօք վերջին 3 տարուայ ընթացքում կատարուած եւրոպական պրոպագանդի մասին զեկուցում, այդ ես չգիտեմ: Ես գիտեմ միայն որ թէեւ ընկ. Լորիսը անցեալ Ընդհանուր Ժողովի կողմից ընտրուեց իբր ղեկավար Եւրոպայի պրոպագանդի, բայց նա չկատարեց լիուլի իր պարտականութիւնը. ամէն ինչ թողնուած էր առանց այն էլ ծանրաբեռնուած Արեւմտեան Բիւրոյի վրայ: Եթէ այժմ էլ այդպէս պիտի տարուի եւրոպական պրոպագանդը, ես միանգամայն հակառակ եմ: Ահագին ծախսեր են լինում եւ արդիւնքը նրա համեմատ շատ աննշան է:*

**Մալումեան.**— *Եւրոպական պրոպագանդի մեր տեսակէտը ամենից առաջ հիմնուած է այն փաստի վրայ, որ Օսմանեան պետութիւնը, միջազգային դաշնագրերով դրուած է Եւրոպայի հսկողութեան տակ, եւ պաշտօնական Եւրոպան, հակառակ նրա մէջ տիրող տարաձայնութիւններին, մի քանի անգամ եւ այն էլ վըճռական եղանակով միջամտել է սուլթանահպատակ երկրի ներքին գործերի մէջ: Այդ միջամտութիւնը երբեմն եղել է նոյնիսկ յանուն քաղաքակրթական համակրելի դիտումների: 1839, 1842, 1856 եւ վերջապէս 1876ի նշանաւոր օրէնքները, որոնք կազմում են արեւելեան քրիստոնեաների պատմութեան մէջ կարեւոր էջեր, մեծ մասամբ արդիւնք են այդ միջամտութեան: Մեր դատը, յատկապէս, քանի անգամ, 1878ին, 1883ին, 1895ին եւ 1904ին, ստացել է եւրոպական պատասխանատուութեան բնոյթ եւ այդ հանգամանքը անտես առնել մենք իրաւունք չունենք: Եւ չենք էլ կարող այն որոշ պատճառով, որ մեր յեղափոխական գործունէութիւնը քաղաքական ընդհանուր տեսակէտից, ինչպէս եւ մեր գործելավայրի աշխարհագրական դիրքի տեսակէտից, այնպիսի աննպաստ պայմանների մէջ է դրուած, որ անկարող ենք անտես առնել եւ անտարբերութեան մատնել այդ գործօնը՝ Եւրոպայի միջամտութիւնը: Ցանկալի է, անկասկած, մեր ազատութեան գործը յաղթանակել տալ, իրագործել սեփական ուժերով, մեր կռուող աշխատաւոր տարրերի սեփական միջոցներով, սակայն այդ ցանկութեամբ խնդիրը չի լուծուիր եւ իրականութեան մէջ մենք հարկադրուած ենք դիմել դրսի օգնութեան, քաղաքական աշխարհի միջամտութեան: — Այդ միջամտութեան համար մենք երբեք չենք դիմել այն միջոցներին, որոնք յեղափոխական կռուող կազմակերպութեան նպատակին եւ գործելակերպին վնասել կարողանային: Եւրոպական մեր պրոպագանդը չէ եղել հիմնուած աղերսանքի սկզբունքի վրայ, երբեք չէ եղել ուղղուած այն տարրերին, որոնք թշնամի են յեղափոխութեան: Այլ էր, օրինակ, Հայաստանի խմբի, Զերադի, արմենականների, ինչպէս եւ հայոց պատրիարքների դիմումը եւ այլ՝ մերը: Նրանք աղերսում էին: Մենք պահանջել ենք: Նրանք դիմել են եւրոպական դիպլոմատիայի մարդասիրութեան, մենք դիմել ենք նորագոյն Եւրոպայի յեղափոխական մտքին: Մեր բոլոր օրգանները, հայերէն թէ ֆրանսերէն, մեր բոլոր բարեկամները, Ֆրանսայում թէ այլուր, մեր միտինգները՝ մեծ թէ փոքր, հիմնուած են այն մարտական տրամադրութեան վրայ, որ ցոյց է տուել հայ յեղափոխութիւնը յանուն հայ ժողովրդի, եւ այն պահանջների արդարութեան վրայ, որոնք կազմել են մեր կռուի եւ մեր յեղափոխութեան հիմնաքարը: Ահա այս է պատճառը, որ թրքահայ շարժումը, հակառակ իր արիւնոտ կերպարանքին, միշտ գտել է խորը համակրանք եւրոպական հասարակաց կարծիքի առջեւ, մամուլի մէջ եւ պարլամենտներում: — Բայց այդ բոլորը չէ: Կայ եւ մի այլ հանգամանք, որը կազմում է մեր պրոպագանդի, եթէ կարելի է ասել՝ փիլիսոփայական կողմը: Եւրոպայում, ինչպէս գիտէք, փոքր առ փոքր, բայց հաստատօրէն կազմւում է միջազգային մի բանակ, մտածողների եւ գործիչների մի արտազգային զինուորութիւն, որի մտքերն ու ցանկութիւնները չեն սահմանափակւում իրենց հայրենիքի սահմաններով, որ ձգտում է սոցիալիստական եւ քաղաքական յեղափոխութեան գործը դարձնել միջազգային, տարածել մարդու եւ աշխատաւորի իրաւունքի գաղափարը նոյնիսկ Եւրոպայից դուրս: Այդ բանակը կա՛յ. նրա մէջ են մտնում սոցիալիստական եւ յեղափոխական շրջանները, մամուլի, պարլամենտների եւ քաղաքական այլ ասպարէզում գործող այն մարդիկ, որոնք ունեն միջազգային ձգտումներ եւ նրանց համար նոյնքան թանգ կարող է լինել թուրքերի, քրտերի, չինացիների հարցը, որքան այսօր թանգ է լեհերի, ֆինների, ռուսների, հայերի կամ վրացիների հարցը: Ահա այդ շրջանին են պատկանում մեր շարժման բազմաթիւ բարեկամները, եւ որոնց դրաւիչ անունները ձեզ, ընկերներ, քաջածանօթ են: Մենք թէ՛ իբրեւ յեղափոխականներ եւ թէ իբրեւ մտքի աշխատաւորներ, ձգտում ենք մերձենալ այդ շրջանին, կապուել այդ բանակի հետ եւ լինել նրա փոքրիկ զօրագունդը մեր երկրի մէջ, Փոքր Ասիայում, այնտեղ, որը հանդիսանում է եւրոպական մտքերի տեղափոխութեան համար մի կարեւոր կամուրջ: Այդ հիմնական պատճառով, մեր քաղաքական ձգտումները չեն կարող եւ չպէտք է նկատուեն իբրեւ նեղ ազգայնական, լոկ հայկական, այլ իբրեւ անբաժան մի մասը այն լայն եւ ընդհանուր շարժման, որի հիմքերը դրուած են միջազգային մտածողների եւ գործողների պլեադի ջանքերով, եւ որոնք պէտք է կազմեն մեր քաղաքական գործունէութեան ուղեցոյցը, մեր յեղափոխական շարժումների հիմնաքարը: Եւրոպական պրոպագանդը, իբրեւ մեր կազմակերպութեան գործերի մի էջը, ներշնչուած է եւ ներշնչուած պիտի լինի այդ մտածողութեամբ, իբրեւ մի նոր միջոց, որը մեզ կապում է միջազգային յեղափոխական բանակին եւ նրա կենտրոնական շրջաններին: — Դա է ահա մեր քաղաքական-փիլիսոփայական հայեացքը, առանց որի մեր բոլոր ընկերների եւ մարմինների գործունէութիւնը կը լինի երերուն, զուրկ ղեկավար սկզբունքից, եւ հետեւաբար անհամակրելի: — Ապա ընկ. Մալումեան անցաւ պրոպագանդի համար ձեռնարկուած միջոցներին, համեմատելով նրանց լեհերի, ֆինների, մակեդոնացիների եւ ռուս կազմակերպութիւնների այդ նպատակով արած քայլերին եւ վերջացրեց՝ եզրակացնելով, որ այդ մեր պրոպագանդը Եւրոպայում արդէն հող է գտել եւ պէտք է այդ ուղղութեամբ շարունակել:*



**Իսահակեան.**— *Եւրոպայի միջամտութիւնը Թուրքիայի վերաբերմամբ պիտի հասկանալ երկու կերպ, ա) Թուրքիայի գործերը կարգադրելու եւ բ) մեր հարցի համար: Շատերը մեղադրում են, որ Եւրոպայի ուսանողութիւնը եւրոպական պրոպագանդի տեսակէտից ոչինչ չէ արել: Այդ մեղադրանքը անհիմն է, քանի որ այդ հարցը մեզ համար միշտ էլ մութ եւ անորոշ է եղել: Ասում էք, միջամտութիւն կը լինի Հայաստանի պատճառով. ինչո՞ւ: Ես լսում եմ միայն ընդհանուր խօսքեր: Ես չեմ ընդունում, որ մենք կարող կը լինենք այնպիսի շարժում, այնպիսի սպառնական ոյժ առաջ բերել Թուրքիայում, որը պայմանաւորուած լինի Եւրոպայի անխուսափելի միջամտութեամբ: Ի՞նչ պիտի լինի մեր դիրքը հակադիր շահեր ունեցող պետութիւնների միջեւ: Իմ կարծիքով եւրոպական պետութիւնները իրենց շահերը վերջնական քայքայումից փրկելու համար կարող է պատահել որ միջամտեն Տաճկաստանի գործերում, եւ այդ կը լինի երկու նկատումով, կա՛մ բաժան-բաժան անելու այդ երկիրը, եւ կամ իրաւական կարգեր հաստատելու ամբողջ Տաճկաստանում: Երկու դէպքումն էլ միջամտութիւնը վերաբերում է ամբողջ երկրին եւ ոչ թէ միայն հայկական նահանգներին:*

**Միքայէլեան.**— *Եթէ մինչեւ այժմ Եւրոպան չէ միջամտել, պատճառն այն է, որ մեր գործունէութիւնը շատ սահմանափակ է եղել: Մենք մեր յոյսը Եւրոպայի միջամտութիւնից չենք կտրել, նա կը կատարուի վաղ թէ ուշ: Երկրում տեղի ունեցող ամէն մի ապստամբութեան միջոցին մեր աչքը տնկում ենք միշտ էլ Եւրոպայի վրայ: Այս պատմական փաստ է, որ Եւրոպան հակամէտ է դէպի քրիստոնեաները եւ դրանց է միշտ էլ առաւելութիւն տալիս, իբր կենսունակ, լաւ եւ յառաջադիմող տարրի. նոյնը եւ Հնդկաստանում: Եւ ես Եւրոպայի միջամտութիւնը մեր դատի վերաբերմամբ համարում եմ դուրս ամէն կասկածից եւ ընդունում*

ներ կազմեն, ձեռք ու ոտքը կապեն՝ նստեն. եթէ ծուլութիւն չսիրող եւ գործօն ուժեր կան, թող հանդէս գան իրենց կենդանի խօսքով: Թիֆլիզի կենտրոնական թերթը իւր ամսաթերթով առ այժմ թող բաւականանցնէ եւ թող նրա շուրջը համախմբուեն թերթի ղեկավարող ուժերը եւ ոչ թէ ցրիւ գան: Դաշնակցութիւնն այնքան տարի է կռւում է եւ կռուի այդ ամենատարրական օրէնքը չի ուզում կիրառել իր կարեւոր ձեռնարկութեան մէջ: Մենք մոռանում ենք, որ մի սոցիալ-դեմոկրատիա չենք, նրա վարդապետութեան եւ կռուի միօրինակ պարզութեամբ եւ սկզբունքների որոշ ֆորմուլաներով: Մեր զանազան թերթերը կը սկսեն այնպէս իրար հակասել տարրական խնդրի լուսաբանութեան կամ հենց սկզբունքների մէջ, որ կարմրելով միայն չենք բաւականանայ, ստիպուած կը լինենք ուղղակի ասելու՝ թէ նա Դաշնակցութեան թերթը չէ: Այսպիսի տարուբերուող շրջանում բազմաթիւ թերթերը մեզ ամենամեծ վնասները կը հասցնեն, կարեւոր կենդանի ուժերը կ'ամլացնեն, մտքերի այնպիսի շփոթ կը ստեղծեն, որ էլ դժուար կը լինի պրծնել: Ապա ես ուզում եմ խօսել նաեւ պրոպագանդիստների մասին. խօսքը միայն կազմակերպչական բնոյթ պիտի կրի, որովհետեւ մենք նիւթերի զբաղմունքի տարօրինակ սխտեմ ենք մշակել, — Ծրագիրը, որից պիտի բխէին մեր ուժերը, թողնուած է ամենից վերջը: Գանձակի եւ Ապառաժի շրջաններում պրոպագանդիստների եւ պրոպագանդի խնդիրը ամենաայրող եւ կենտրոնական խնդիրներից մէկն է եղել եւ է, մանաւանդ այս ճգնաժամին: — Առաջներում, դեռ այն ժամանակ, երբ կատարեալ տէր չէինք դրութեան, մեր գաւառական շրջաններում չկար մի քիչ շատ բաւարար ուժ, որ մտքի դէմ մտքի զէնքերով կռուէր եւ կուսակցութեան վարկն ու պատիւը պաշտպանէր: Այսօր, երբ ինքնապաշտպանութեան, զինուորականութեան շրջանը անցնում է, երբ նոյնպիսի կամացուկ կերպով սկսում է գիտակցութեան գալ մեր հարեւանը, որին հենց մեր շահերի տեսակէտից պիտի օժանդակենք, այսօր, երբ մեր դէմ կանգնած է բազմագլխանի հակառակորդների գրոհը, երբ ժողովրդական միտքը սկսել է ցնցուել եւ ուժգին կերպով հետաքրքրուել մեր հասարակական խնդիրներով եւ երբ մեր բոլոր հակառակորդները հիանալի հող կը գտնեն իրենց գործի համար, ասացէք, խնդրեմ, ո՞վ պիտի նրանց հարուածներին հակահարուածներ տայ եւ պահպանի Դաշնակցութեան հինաւուրց ծառը տապալումից. զուցէ ռո՞ւմբը, գնդա՞կը. միամիտները միայն չգիտեն, որ այդ բռնութիւնները Դաշնակցութեան թշնամիներին կ'ուժեղացնեն եւ ուրեմն մնում է միայն մեր ձեռքը՝ ամենահիմնական զէնքը՝ կենդանի յեղափոխական պրոպագանդը: Դաշնակցութիւնը, որպէս մի յեղափոխական կուսակցութիւն, պէտք է մեր կեանքի լաւագոյն ուժերը իր մէջ կենտրոնացնէ, լինի մի կենդանի կուսակցութիւն եւ հանդիսանայ մեր կեանքի գլխաւոր զարկերակներից մէկը. եթէ ուզում ենք, որ Դաշնակցութիւնը ապրի եւ զարգանայ՝ մենք չենք կարող այսօր նախկին կիսատ-պռատ պատրաստակամութեամբ հանդէս գալ մեր շուրջը, մեր դուրսն ու ներսը վխտացող հակառակորդների դէմ: — Այսպիսի պայմաններում, մի յեղափոխական կուսակցութեան կենդանութեան համար, օրաթերթերը, ամսաթերթերը, թէկուզ մի հանճարեղ կերպով հեղեղուեն էլ՝ չեն կարող նրան վտանգից փրկել, եթէ չկան նրանց հետ միատեսակ կենդանի մտաւոր ուժեր, որոնք հրապարակական ժողովներում, մեր դէմ կանգնած հակառակորդներին կենդանի խօսքով հարուածեն, աշխատաւոր ամբոխին իրենց եռեւից տանեն, հողի տան տպաւորական մեռած տառերին: Զպէտք է մոռանալ, որ մենք պիտի լինենք մի կենդանի մարտիկ կուսակցութիւն, ուժեղ իւր գիտակից ընկերների թուի ստուարութեամբ: Այս բոլորը ի նկատի առնելով ես խոնարհաբար խնդրում եմ ի դիմաց իմ բազմաթիւ ընկերների եւ ի դիմաց այն շրջանի, որ ինձ ուղարկել է Ընդհանուր Ժողովին, ամենամեծ ուշադրութիւն դարձնել մտաւոր ուժերի պատրաստութեան վրայ, մաքուր-կուսակցական-յեղափոխական-սոցիալիստական պրոպագանդայի խնդրի վրայ. մի բան, որի վրայ մենք մինչեւ այսօր ուշք չենք դարձրել: Մենք 100 հազարներ ենք ծախսում մեր ռազմական գործի համար, մասնագէտների, տեխնիկների, զինուորական դպրոցի, արհեստաւորների, զինապայթուցիկ արհեստանոցների կառուցման համար, բայց չպէտք է զլանանք մտածել մեր այդ հսկայական ապագայի զէնքերի համար պատրաստելու գիտակից յեղափոխականների բանակ, հըմուտ մտաւորական ղեկավարներով, որպէսզի մի օր չմնանք զօրապետներ առանց բանակի: Այն ինչ ես ուզում եմ առաջարկել կարելի է եւ հնարաւոր: — Անհրաժեշտ է ունենալ երկու կենտրոնական քաղաքներում՝ Բագւում եւ Թիֆլիզում, մի մշտական մարմին՝ պատասխանատու պրոպագանդային մարմին. նրա անդամները պէտք է ազատ լինեն կազմակերպչական եւ լրագրական աշխատանքներից: Նրանց պարտականութիւնը պիտի կայանայ մշտական շրջագայութեան մէջ՝ այն վայրերը, ուր արտակարգ պահանջ կը զգացուի: Նըրանք պիտի այս ու այն քաղաքներում հրապարակական եւ կուսակցութեան անդամների համար դասախօսութիւններ կազմեն: Երկու կենտրոնական քաղաքներում նրանք պիտի ունենան մշտական պրոպագանդիստների դպրոց: Նրանք պիտի գաւառական ուժերը լոյս աշխարհ հանեն եւ ուղղութիւն տան: Նրանք ամէն տեղ Ծրագիրն ու նրա հետ կապուած տեսական խնդիրները պիտի պարզեն եւ պայքարեն հակառակորդների դէմ: Վերջացնում եմ խօսքս. — Այսօր մեր ժողովրդի աշխատաւորական միտքն ու հոգին պահանջում են մեզանից իւր հոգու համար իտէալներ. իսկ իւր մտածողութեան համար՝ նա մեզանից սպասում է



այդ իտէալները, երկաթի օրէնքներով հիմնաւորուած մտքեր: Դաշնակցական ինտելլիգենցիան, հաւատացէք, պատրաստ է զոհաբերութեան. նա պահանջում է միայն իւր ծարաւ մտքի ու հոգու համար սնունդ, եւ մենք պարտաւոր ենք նրան բաւարարութիւն տալ: Եթէ դուք սիրում էք Դաշնակցութիւնը, այն ժամանակ դուք պարտական էք մեր ապագայ գործունէութեան մէջ ամենամեծ տեղը տալ յեղափոխական պրոպագանդայի, յեղափոխական ուժերի զարգացման ու մեր մասսաներին գիտակցութեան բերելու խնդրի վրայ: Եթէ իմ առաջարկած միջոցը անբաւարար է, պէտք է մտածել, աւելի կատարեալ միջոցների դիմելու:

Մինասեան. — Մենք աչքի առաջ ունենք երկու տեսակ պրոպագանդա — օտար եւ հայ — եւ երեք միջոց՝ գրաւոր, բանաւոր եւ գործնական: Զմոռանանք, որ մինչեւ այժմ մեր պրոպագանդը միայն գործնական է եղել: Կեանքը դնում էր կենդանի գործունէութիւն եւ ժողովուրդը յարում էր Դաշնակցութեան: Դաշնակցութիւնն յաղթեց հնչակեաններին, ոչ թէ պրոպագանդայով, այլ կենդանի գործով: Եթէ կենդանի գործը կորցնենք, պրոպագանդը մեզ չէ կարող պահել, որովհետեւ մասսան մեզ հետ կապուել է միայն գործով: Եթէ դուք կ'ուզէք ժողովրդին բերել մեր իտէալին, պրոպագանդայով չէք յաջողի: Կենդանի գործը կը տայ միայն ժողովրդի սպասածը: Կովկասի հարցը միայն իւր դասակարգային կողմով յառաջ բերաւ գաղափարական պրոպագանդի կարեւորութիւնը. իսկ Տաճկաստանի մասին ժողովուրդը գիտէ պէտք եղածը, — Հայաստանի բարենորոգումների պահանջը: Կովկասում միայն պրոպագանդի պահանջ առաջ եկաւ. եւ եթէ կ'ուզենք մեր ամբողջութիւնը պահել, բաւարարութիւն պէտք է տալ: — Թերթերը շատացնելով բան դուրս չի գար. այդ նոյնպէս մեծ նիւթական զոհողութիւն կը պահանջէ: Պէտք է որակին նայել, եւ ոչ քանակին: Երբ լոյս տեսաւ «Ցառաջ»ը, նա առաջ բերաւ որոշ յուզում. «Մուրճ»ի դէմ բոյկոտ յայտարարելով եւ «Մուրճ»ի դէմ անձնական բանակռիւ մղելով լայն հակառակութիւն յառաջ բերաւ: «Ցառաջ»ը դուրս գալով, կարծեց թէ ինքն է հայոց ազգի տէրը եւ իւր ձեռքը առաւ կրօնական եւ այլ հարցեր, ինչպէս էջմիածնի կենտրոնական ժողովը: Առաջ Դաշնակցութիւնը ազգային էր միայն, ապա ստեղծուեց դասակարգային հարց. «Ցառաջ»ը չկարողացաւ հաշտեցնել այդ երկու գաղափարները եւ որոշ խլրտում յառաջ բերաւ: Ես համակարծիք եմ, թէ «Ցառաջ»ն ուրիշ կերպ չէր կարող, երբ նրա վարիչները չգիտէին, թէ ի՞նչ է նրա ուղղութիւնը: «Ցառաջ»ի վարիչները չպէտք է որոշ սահմանից դուրս գային եւ գռեհկութեան հասնէին, ինչպէս «Մուրճ»ի եւ «Մշակ»ի դէմ բռնած դիրքում: — Գալով «Դրօշակ»ին, պէտք է ասեմ, որ նա մեզ համար պիտի լինի մի պատմական արխիւ՝ հայ պատմութեան եւ հայ կուսակցութեան, միայն որոշ բարեփոխութիւն պէտք է անել: Օտար պրոպագանդի մեր օրգանը պիտի լինի միայն «Pro Armenia»ն, որ նոյնպէս մեր արխիւն է այն քաղաքական անձանց համար, որոնք պիտի զբաղուեն մեր դատով: Ժողովուրդը նրանից չի օգտուեր, որովհետեւ հայկական կեանքը նրա համար այժմէութիւն չունի: Ընկ. Վռամեան շատ ճիշդ ասաց, որ «Pro Armenia»ն իր բարձրութեան վրայ չէ. բայց դրա մեղքը մերն է, որովհետեւ լուրեր, տեղեկութիւններ չենք տալիս: Կլեմանսոն, Ժորէսը, որոնց անունը գըրուած է դրա մէջ, այդ չեն կարող անել. մե՛նք պիտի անենք: Ուրիշ թերթեր մեզ պէտք չեն՝ օրինակ գերմաներէն, — պրոպագանդի ուրիշ միջոցներ կան, — միթինգ, պարլամենտ, կոնֆերանս եւն.: Ամենազօրեղ միջոցն է հանրային կարծիքին վրայ՝ կոնֆերանսը, որ պէտք է անել յայտնի մարդկանց միջոցով, որոնց անունն ու նիւթը ժողովուրդին կը գրաւեն:

Իսահակեան. — Ասում են, որ «Դրօշակ»ը պէտք է լինի կենտրոնական օրգան. այդ կարող ենք մի քանի տեսակ հասկանալ. նախ՝ կենտրոնական օրգան, որ կարող է սկզբունքային ղեկավարող օրգան լինել եւ երկրորդ՝ պաշտօնական տեղեկատու: Ո՞րը պէտք է լինի: «Դրօշակ»ը, իմ կարծիքով, պէտք է լինի մեր կուսակցութեան սկզբունքային հարցերը լուսաբանող օրգան: Ասում են, որ «Դրօշակ»ը շատ է սիրուած Տաճկաստանում. բայց այն ժամանակ, նա չէ կարող նըրանց բաւարարութիւն տալ. երկուսից մէկը, — կա՛մ «Դրօշակ»ը պէտք է լինի գիտական սկզբունքային հարցերով զբաղուող թերթ եւ կամ ժողովրդական հրատարակութիւն: Ի՛նչ բաժնով ուզում էք արէք, բայց այդ երկու մասերն իրարից անջատեցէք: Ես կարծում եմ, որ «Դրօշակ»ը կարող ենք պահել իբրեւ զուտ ժողովրդական թերթ, իսկ յետոյ կ'ունենանք հետը՝ յաւելուած բաժին, գիտական, որ կը տպուի սահմանափակ թուով: Իսկ ինչ վերաբերում է «Ցառաջ»ին, չենք կարող պահանջել նրանից, որ նա բացատրէր կուսակցութեան սկզբունքները: Օրաթերթի դերն է առօրեայ հարցերով զբաղուել. բայց ի նկատի ունենալով այն պայմանները, որոնց մէջ նա երեւան եկաւ, նա պիտի այդ անէր: Կովկասեան ամսաթերթն աւելի քան անհրաժեշտ է, նա պէտք է բանավէճի բնոյթ ունենայ: «Դրօշակ»ը այդ չէ կարող անել, որովհետեւ նա պէտք է որոշ, հաստատուն բնաւորութիւն ունենայ: Զանազան թերթեր հրատարակելու արգելք չենք կարող դնել, որովհետեւ ամէն դաշնակցական անհատ կարող է հրատարակել, նոյնը կարող է անել եւ Կենտրոնական Կոմիտէն. միայն պէտք է լինի մի կենտրոնական օրգան, որ հսկէ ընդհանուր ուղղութեան վրայ: — Ովքե՞ր պէտք է լինեն «Դրօշակ»ի խմբագրութիւնը. ով էլ լինի, նա պէտք է պատասխանատու լինի Խորհրդի առաջ: Կովկասի թերթի խմբագրութիւնը պէտք է ընտրուի Կովկասեան Ոայոնական Ժողովից եւ պատասխանատու՝ կովկասեան կենտրոնական մարմնի առաջ,

*հենց այնպէս, ինչպէս ուրիշ տեղերի թերթերը։ — Ի նկատի ունենալով, որ պրոպագանդն ընդունում ենք կուսակցական անհրաժեշտութիւն, պէտք է ապահովել «Ցռուպ»ի եւ ամսագրի գոյութիւնը։ Արեւմտեան չըրջանի թերթերի համար այդ չպէտք է լինի, որովհետեւ նրանք մեզ համար նպատակ չեն, այլ միայն օժանդակող։*

**Զոփուրեան.**— *Խնդիրը չբաժանուեց առանձին առանձին մասերի, որ եւ առիթ տուեց այսպիսի շփոթ վէճերի։ Ես ուզում էի պրոպագանդի կարեւորութեան մասին խօսել։ Սոցիալ–դեմոկրատները, իրենց բիւջէի գրեթէ 95%ը գործ են դնում պրոպագանդի համար։ Պրոպագանդն է այն ոյժը, որ ամենից աւելի զարկ է տալիս կուսակցութեան ծաւալման։ Այնպիսի կենտրոնական տեղերում, ինչպիսիք են Թիֆլիզը, Բագուն, եթէ գրաւորի հետ բանաւոր պրոպագանդ չլինի, մասսայից շատերը կը կորցնենք։ Ամսաթերթի եւ օրաթերթի պէտքն ընդունում եմ։ — Անհրաժեշտ է ռուսերէն թերթ։ Յիշում եմ, որ ընկերներից մէկը՝ Զաւարեանը ասաց, որ նոյնիսկ Պետերբուրգում մեզ համարում են մաֆիա, ինչ որ աւելի եւս շեշտում է ռուսերէն թերթի կարեւորութիւնը, որ ոչ միայն Կովկասի համար է հարկաւոր, այլեւ Տաճկահայ հարցի։ Մասնաւորելով խօսքս Ոսկանապատի մասին, իբրեւ բանուորական կենտրոնի, պէտք է ասեմ, որ շատ խեղճ վիճակի մէջ է, նոյնիսկ ամէնօրեայ յարձակումների դէմ չենք կարող պատասխանել։ Շատ կ'ուզէի, որ Ընդհանուր Ժողովը արտօնէր Ոսկանապատին գոնէ շաբաթը երկու անգամ թերթիկներ հրատարակել, որովհետեւ շատ վատ տպաւորութիւն է թողնում, երբ յաճախ չենք կարողանում հերքել տեղացող մեղադրանքները։*

**Ստեփանեան.**— *Այսքան խօսում էք, բայց ոչ մի միջոց չէք առաջարկում։ Դաշնակցութեան թերթերից մենք ճանաչում ենք օրգան՝ «Դրօշակ»ը եւ ուզում ենք շարունակել։ Կ'ուզէի լսել ընկ. Մինասեանից՝ Պարիզի հայ ուսանողութեան օրգանի մասին, որը նոյնպէս իւր ճակատին կրում էր՝ «Հ. Յ. Դաշնակցութեան Եւրոպայի Ուսանողական Միութիւն» անունը։*

**Շահխաթունեան** (*շարունակում է իւր ընդհատուած խօսքը*).— *Տեղի ունեցաւ մի խոշոր թիւրիմացութիւն։ «Ցռուպ»ն իրեն դրեց մասնաւոր թերթի դրութեան մէջ եւ կորցրեց կուսակցական օրգանի բնոյթը։ Եւ այդ բանակռուի առթիւ տեղի ունեցաւ, անհատական զըտում, բայց ոչ երբեք կուսակցական։ Օրաթերթի առթիւ ես համաձայն եմ ընկ. Իսահակեանի հետ. երիտասարդների մէջ կայացած այն խոշոր անտարբերութիւնը թերթի գործունէութեան նկատմամբ մեծ արգելք ներկայացուց, հենց օրինակ իմ մասին. բանակռուի մեթոդն իմ եւ խմբագրութեան միջեւ՝ ուրիշ էր. դրա համար էլ չէի կարող մասնակցել։ Իմ առաջարկներն են՝ Կովկասի համար օրաթերթ եւ ամսաթերթ. հարկաւոր են եւ ուրիշ թերթեր. բայց որովհետեւ թողնելով անհատներին՝ մի ուղղութիւն պահելը դժուար է, այդ պատճառով էլ հարկաւոր է, որ դրան յատկացրած մարմինը տայ ուղղութիւններ, որ լինին մեծամասնութեան կարծիքի արտայայտութիւնը, եւ որոնցից ոչ մի խմբագրութիւն չպէտք է շեղուի։ Բոլոր կուսակցութիւնների նպատակը գործնականն է, որն այնքան էլ պարզ չէ, ինչպէս կարծում է ընկ. Մինասեանը, եւ ահա պրոպագանդն այդ պէտք է պարզէ։*

**Մինասեան.**— *Ընկ. Ստեփանեան մի քանի անգամ հարց դրեց Պարիզի ուսանողութեան թերթի մասին. բայց նա երեւի անծանօթ է գործին։ Այդ թերթը մասնաւոր բան է եղել, որին մասնակցել են բ'ւ դաշնակցականներ։ Այդ հրատարակութեան նպատակն էր տալ հայոց մասին եղած հրատարակութիւնների անալիզը։ Վրան դրած «Հ. Յ. Դաշնակցութեան Եւրոպայի ուսանողական միութիւն» անունը՝ պաշտօնական բան չէ։ Մասնաւոր թերթ հրատարակելուն ես դէմ չեմ. ամէն մարդ ազատ է. եթէ նա դաշնակցական է, թերթն էլ դաշնակցական կը լինի. բայց ի հարկէ, ոչ պաշտօնական։*

**Զաւարեան.**— *Ասածների վրայ երկու բան կ'ուզեմ աւելացնել. որ մեր հրատարակութիւնների մէջ եղել են սխալներ, դա անկասկած է. ապացոյց, որ մեր, «Մշակ»ի ու «Մուրճ»ի մէջ բաժանումն այնքան էլ էական չէ։ Նրանք օրինակ տպում են բ'ւ սոցիալ–դեմոկրատական յօդուածներ։ Խոշոր չափով այստեղ դեր է խաղացել անձնականը. սկզբունքային լուրջ պայքար չէ եղել։ Հենց պայքարն էլ ծագեց այն ժամանակ, երբ հարց բարձրացաւ, թէ ո՞վ պէտք է լինի Ներսիսեան կամ Յովնանեան դպրոցների հոգաբարձու։ Մեր եւ նրանց մէջ ըստ էութեան տարբերութիւն չկար. տարբերութիւնը տակտիկայի մէջ է. Նրանք համարում էին մեր դրած պահանջները չհասունացած։ Մեր մղած պայքարը գունաւորւում էր անձնականով եւ ոչ գաղափարականով։ — Շեշտուեց, որ ամէն շրջանի հրատարակութիւններն արտայայտիչ պէտք է լինին կուսակցութեան մէջ տիրող հոսանքի. այդ էլ չէ եղել։ Մալումեանն ասում է, թէ «Դրօշակ»ը տարածւում է 10 հազարով. ես վախենում եմ, որ մեր թերթերով խնձոր են փաթաթում. բացի դրանից թերթերի մեծ մասը կորչում է։ Եթէ ձրի տարածելու լինենք, այն ժամանակ կարող ենք «Դրօշակ»ը 20·000 էլ տպել. բայց ի՞նչ օգուտ դրանից. «Դրօշակ»ը պէտք է բաժնեգնով լինի։ — Գալով բանաւոր պրոպագանդին, պէտք է ասեմ, որ նա սերտ կերպով կապուած է գրաւորին. զատել այդ երկուսը չէ կարելի։ Մենք այդ թերութիւնը կատարել ենք, բայց մենք պէտք է խոյս տանք դրանից ապագայում։*

**Մալումեան.**— *Շատ ցաւալի է, որ հարցերը չբաժանուեցին, որպէսզի աւելի հեշտ լինէր դրանց մօտենալ եւ քննել։ Ընկ. Զարդարեանն ու Ջելալեանն ասում են, որ փոխանակ նոր թերթ հիմնելու՝ գերմաներէն, կարող էք ուրիշ թերթերի մէջ գրել։ Ջելալեանի կողմից ինձ այդ չէ զարմացնում. բայց զարմացընում է ինձ Զարդարեանի կողմից, որ ծանօթ է եւրոպական մամուլին։ Այդ փորձերը արել ենք մենք եւ յաճախ շատ թերթերի դուռ բախել, բայց անյաջող։ Եւրոպական լրագիրը չի տպի ձեր յօդուածը, եթէ շօշափուած հարցը չի ներկայացնում օրուայ հետաքրքրութիւն։ Նոյնիսկ դրամական առաջարկութիւն է եղել «l'Aurore»ի խմբագրութեան, բայց մերժուել է։ Այս իրողութիւնն ահա ստիպեց մեզ սեփական օրգանի վրայ կանգ առնել։ Սիմոն եւ Ռոստոմ նորից կանգ առան այն հարցի վրայ, թէ «Դրօշակ»ի մէջ տեղ չէ տրուած տեսական հարցերի լուսաբանութեան. իսկ Ռոստոմը նոյնիսկ փորձեց ցոյց տալ, թէ տեղ շատ է եղել.— ես չեշտում եմ, նորից, որ այդ չէ արուել դիտմա'մբ, համարելով «Նախագծի» եւ դրա հետ կապուած խնդիրը՝ կազմակերպութեան տեսակէտից անյարմար պաշտօնական օրգանի էջերի համար, մի խընդիր, որ կարող էր փոթորկի տեղիք տալ։ Ներկայ Ընդհանուր Ժողովը պէտք է իրաւունք տայ «Դրօշակ»ին իր էջերը բանալու այդօրինակ հարցերի համար։ Մի քանի ընկերներ խօսեցին ընդդէմ գերմաներէն օրգանի. ես նրա խորը կողմնակից չէի, քանի որ Կովկասն փոթորկալից վիճակի մէջ էր. բայց այժմ, երբ այնտեղ խաղաղ է, ես ոչինչ չունեմ հակառակ այդ ձեռնարկութեան. մանաւանդ, որ յարմարութիւններ կան եւ ծախսը չնչին է՝ 6000 ֆրանք։ Զնայած այն հայեացքին, որ Գերմանիայում մեզ համար նպաստաւոր կարծիք չըկայ, պրոպագանդն արւում է հենց այնտեղ, որ հակառակ տրամադրութիւն կայ։ Ճիշդ է որ հանրային կարծիքը ազդեցութիւն չունի Վիլհելմի վրայ, բայց այնտեղ կայ մեծ քանակութիւն մտաւորականների, գրողների, պրոֆեսորների, ազատ մտածողների, որոնք կողմնակից են մեզ, ինչպէս եւ առհասարակ կողմնակից են ճնշուածների, եւ այդպիսիներին պէտք է ծանօթացնել մեր դատի հետ. պէտք է պատռել մթութեան քողը, որով ծածկուած է մեր հարցը, ամբողջ Գերմանիայում։ Ընկ. Թոփչեանի առաջարկը, թէ մեր Կովկասի օրգանը պէտք է պաշտօնական լինի եւ խմբագրութիւնն Ընդհանուր Ժողովից ընտրուած՝ անկարելի բան է։ Մի կազմակերպութիւն երկու պաշտօնական օրգան չէ կարող ունենալ։ Ինչ դիրքի մէջ ուզում էք դրէք կենտրոնական օրգանը, ամսաթերթ թէ օրաթերթ.— ուր ուզում էք բանտարկէք, Ժընեւում, թէ Թիֆլիսում, նա պիտի լինի մէկ հատ։ Հակառակ որոշումը առաջ կը բերէ մտքերի քաոսական վիճակ։ Կովկասի թերթն անհրաժեշտ է եւ պիտի գտնուի Ռայոնական Ժողովի տրամադրութեան տակ, բայց պաշտօնական անուն չպէտք է կրէ։ Միանգամայն կողմնակից եմ ռուսերէն մի թերթի անհրաժեշտութեանը, որ պիտի վերացնէ այն բոլոր թիւրիմացութիւնները հայերի մասին ընդհանրապէս եւ կազմակերպութեան մասնաւորապէս, — ընդունում եմ եւ ամսաթերթի կարեւորութիւնը. բայց գաւառաթերթերը, որոնց մասին խօսք եղաւ, չեն յաջողուի. ուժեր չունենք։ Գուցէ միայն Բաղւում կարող է յաջողուել, այն էլ խլելով մեզանից կազմակերպական ուժերը։ Թող Ընդհանուր Ժողովը թոյլտուութիւն տայ Բաղուին թերթ ունենալու, չեշտելով, որ անէ, երբ միջոց եւ ազատ ուժեր կ'ունենայ։ Համաձայն չեմ ընկ. Մինասեանի մտքին. ի՞նչ բարոյական իրաւունքով դուք «Դրօշակ»ն արխիւ էք ուզում դարձնել։ «Դրօշակ»ը պէտք է լինի կազմակերպութեան կռւող օրգանը, նրա գաղափարների եւ շահերի պաշտպանը. պիտի լուսաբանէ ծրագրային հարցերը. պէտք է գրաղուի եւ տաճկահայ դատով։ Նոյնպէս արխիւ չպիտի լինի եւ «Pro Armenia»ն, որ երբեմն ճարահատուած հնացած նիւթեր է տպում. տուէք նոր եւ թարմ նիւթեր, որպէսզի նա մնայ մեր դատի կենդանի բերանը։ Գալով ընկ. Զաւարեանի առաջարկին, թէ «Դրօշակ»ը պէտք է մնայ վճարովի, ինձ անհամոզեցուցիչ է թւում նրա պատճառաբանութիւնը։ Ես համաձայն եմ, եթէ դուք օրինակ 10 Ֆր. նշանակէք տարեկան բաժնեգին. բայց նշանակէք 3 Ֆր. որ նոյնիսկ տպագրութեան ծախսը չէ հանում, աւելի քան աննպատակայարմար է։ Հակառակ եմ այն կարծիքին, թէ աւելի լաւ է վճարով 1000 օրինակ հրատարակել քան ձրի 10·000 օրինակ։ Տպագրութեան ծախսերը հասարակութիւնն է տալիս, ուրեմն նրա էժան կամ ձրի տարածումը որոշ արդարացումն ունի։ Պահանջ կայ, հետեւաբար պէտք է աւելցնել «Դրօշակ»ի քանակը։ Այդ պահանջը կը հասնէր անպայման 25·000ի, եթէ Կովկասում «Դրօշակ»ը ազատ մուտք ունենար եւ Պարսկաստանի արգելքը չլինէր։ Այդքան տարածուելն ես համարում եմ արդիւնք կազմակերպութեան աճման։ — Վռամեանը երէկուայ երկար ճառի մէջ զարմանալի տրամադրութիւն ցոյց տուեց ամէն բանի մասին խօսելու եւ ամէն բան խառնելու։ Դուք, ընկ. Վռամեան, որ բաւական ծանօթ էք մամուլի գործին, ի՞նչ հիման վրայ առաջարկ էք անում, կապել «Դրօշակ»ը, «Հայրենիք»ը, «Ռազմիկ»ը, որոնք տպագրւում են միմեանցից այնքան հեռու, որպէսզի ամէն լուր իրար հաղորդեն փոխադարձաբար։ Ձեր առաջարկը միանգամայն անգործնական եմ գտնում եւ համեմատութիւնը «Թայմզ»ի եւ «Հերալդ»ի հետ՝ շատ միամիտ։ — Եւրոպական պրոպագանդը Պարիզում կենտրոնացնելու ձեր կարծիքը, որոշ չափով ճշմարիտ է։ Բայց այդ կարելի է անել բաւական յաջող, կազմակերպուած ձեւով բ'ւ Ժընեւում, ինչպէս ցոյց տուեց 7 տարուայ փորձը։ Հարցեր եղան, թէ ինչու համար անյարմար է «Դրօշակ»ը այժմ եւեթ փոխադրել Պարիզ։ Այդ հարցը մասնաժողովն անցել է հարեւանցի կերպով, տալով իրաւունք Բիւրոյին՝ փոխադրել, երբ յարմար կը լինի։ Փոխադրելու համար պէտք է տես–*

ձրնէ ծրագրուած միութեան հիմնումը։ Հետեւապէս կարեւոր է որ Դաշնակցութիւնը հենց սկզբից որոշ առաջադրութիւններ անի ապագայ անախորժ Թիւրիմաթիւնների առաջն առած լինելու համար։

Զաւրեան.— Անցեալ Դեկտեմբերին էս-էրների կենտրոնական կոմիտէի հետ բանակցելով, ինձ համար պարզուեցին նրանց տրամադրութիւնն ու ձգտումները։ Նրանք ցանկութիւն ունեն՝ մի ընդհանուր էս-էրական դաշնակցութիւն ստեղծել, որի մէջ մտնեն Ռուսաստանի բոլոր էս-էրական կուսակցութիւնները. այդ դաշնակցութիւնը կազմուելու է ֆեդերատիւ սկզբունքների հիման վրայ, որպէսզի նրա մէջ մտնող իւրաքանչիւր ջոկ կուսակցութիւն միանգամայն ինքնուրոյն մնայ իր շրջանում։ Էս-էրները չեն ուզում, որ իրենք լինեն ընդհանուր կազմակերպողներն ու վարիչները բոլոր ազգերի մէջ. նրանց փափաքն է էս-էրական սկզբունքները յաղթանակած տեսնել, — միեւնոյնն է իրենց անմիջական ղեկավարութեամբ Թէ ուրիշների. ամէն մի շրջանի, ժողովրդի կազմակերպման գործը նրանք Թողնում են տեղացիներին։ — Ռուսաստանի էս-էրների դաշնակցութեան մէջ՝ իւրաքանչիւր կուսակցութիւն իւր ներկայացուցիչը կ՚ունենայ, պայմանով, որ ենԹարկուի որոշ ընդհանուր պարտականութիւններին, ինչպէս օրինակ՝ պէտք եղած դէպքում կռուի դուրս գալ բոլոր միւսների հետ։ Վերջին կէտի վերաբերմամբ մեր կողմից առաջադրուեց, Թէ նոր Հայ-Թուրքական ընդհարումների դէպքում Դաշնակցութիւնը անկարող լինի Թերեւս ակտիւ քայլերի դիմելու կառավարութեան դէմ, բայց այդ պակասը մենք կը լրացնենք այլ ձեռնարկներով։ Նրանք համաձայն են այդ բանի։ ԵԹէ մենք էս-էրական ոգու համապատասխան մի ծրագիր մշակենք — մենք կ՚ընդունուենք կազմուելիք միութեան մէջ։ Մեր երկու դատերի յարաբերութեան խնդրի վերաբերմամբ, էս-էրները սկզբունքով կողմնակից են նրանց միացման. տակտիկայի հարցում՝ նրանք իրենց ձեռնհաս չեն զգում։ — Իմ այս բանակցութիւնները, սակայն տեղի են ունեցել ամիսներ առաջ եւ քանի որ այդ ընԹացքում մեր հակառակորդները խստացրել են իրենց յարձակումները Դաշնակցութեան դէմ, — չգիտեմ, արդեօք էս-էրները նոյն բարեկամական տրամադրութեամբ կը վերաբերուե՞ն մեզ։ — Նրանք ցանկութիւն յայտնեցին, որ այս Ընդհանուր Ժողովը վերջնականապէս որոշի կուսակցութեան ծրագիրը և որ այդ մասին անմիջապէս յայտնուի նրանց, որպէսզի իրենց առաջիկայ կոնֆերանսում քննութեան դրուի։

Աւարոնեան յայտնում է, որ Թիֆլիս էր եկել էս-էրների ներկայացուցիչը եւ խնդրել Դաշնակցութեան ծրագիրը՝ Ապրիլի 15ին կայանալիք իրենց համագումարի մէջ ուշադրութեան առնելու համար։

Մալումեան.— Համաձայն եմ ընկ. Համոյի առաջարկին։ Արդէն ժամանակն է, որ մեր կուսակցութեան մէջ բացուի գործունէութեան մի նոր եւ դրական շրջան — համերաշխ գործակցութիւն ուրիշ կուսակցութիւնների հետ։ Ցարդ, մեր բոլոր որոշումները այդ ուղղութեամբ՝ մնացել են մեծ մասամբ Թղթի վրայ եւ մեր ընկերներից մի քանիսը նոյնիսկ դէմ են եղել նրանց իրագործմանը։ Մի կէտում միայն համաձայն չեմ Համոյի հետ, այն՝ որ Դաշնակցութիւնն ինքը ղեկավար հանդիսանայ Թուրք մասսաների մէջ։ Ի նկատի ունենալով այն ատելութիւնը, որ Թուրք ամբոխն այսօր ունի դէպի հայերը, առանձնապէս դէպի Դաշնակցութիւնը, ես գտնում եմ այդ առաջարկը անգործնական։ Թուրք մտաւորականների միջոցով միայն մենք կարող ենք մտցնել մեր գաղափարները Թուրք մասսաների մէջ՝ Կովկասում. ինչպէս եւ համերաշխ գործակցութեան համար, ես կարեւոր եմ գտնում, որ հաստատուեն երեք միջկուսակցական բիւրոներ. մէկը Պետերբուրգում (ռուսական ընդհանուր գործերի համար), երկրորդը՝ Կովկասում, տեղական գործերի համար եւ երրորդը՝ արտասահմանում՝ Թուրքիայի շարժումների համար։

Սաքօ.— Ղազախի շրջանում մենք հող ունենք՝ համերաշխութեան գաղափարի համար. այնտեղի Թուրքերը կռիւներից յետոյ, այնքան են մօտեցել մեզ, որ նոյնիսկ մարդ են խնդրում մեզանից՝ իրենց մէջ եւս գործելու։

Համօ.— Վերածնուող ժողովուրդների մէջ՝ ինտելլիգենցիան աւելի շովինիստ [Թթու ազգայնական] է լինում, քան մասսաները. այդպէս են եւ Թուրք մտաւորականները. եւ ես կասկածում եմ, արդեօք կարող կը լինե՞նք նրանց միջոցով որեւէ դրական արդիւնքի հասնել։ Մենք սկսելու ենք անմիջապէս մասսաներից. ես չեմ ասում, որ Թուրք գիւղացուն կազմակերպենք իբրեւ դաշնակցականի, հարկաւոր է միայն նախապատրաստել նրան, որպէսզի հենց ներքեւից առաջացած լինեն ապագայի Թուրք աշխատաւորական կուսակցութիւնները։ Էս-էրների կոնֆերանսում քննուելու են ազգայնութեան ու ֆեդերացիայի հարցերը, որոնք չպարզաբանուած են մնացել նրանց վերջին համագումարում (Ֆինլանդիայում). սկզբունքով էս-էրներն արդէն դրական հայեացք ունեն այդ հարցերի մասին. բայց պէտք է որոշեն նրանց լուծման միջոցները. այս տեսակէտից, նրանք ուզում են լսել Ռուսաստանի զանազան ազգութիւնների ցանկութիւնները։

Վարդան.— Շատ է կարեւոր, ի հարկէ, որ գործենք Թուրքերի մէջ, բայց ներկայ պայմաններում մեզ հազիւ Թէ յաջողուի այդ։ Բացի այն, որ սառնութիւն է տիրում մեր եւ նրանց միջեւ, կառավարութիւնն եւս կ՚աշխատի նոր պրովոկացիաներ անել, երբ տեսնէ, որ մենք հակակառավարչական պրոպագանդա ենք վարում Թուրքերի շրջանում։ Որքան էլ ատելու լինի իր բէգերին, Թուրք գիւղացին այնուամենայնիւ դեռ պատրաստ է առաջինը մեզ հարուածելու։ Անկարելի է մտնել Թուրք մասսաների մէջ. Թուրք ինտելլիգենցիայի միջնորդութիւնն անհրաժեշտ է մեզ։



Աւարոնեան.— Դա տակտիկայի խնդիր է. եԹէ այսօր անկարելի էր վաղը կը դառնայ հնարաւոր։

Մուրատ.— Ես այնքան էլ լաւատես չեմ Թուրք-հայկական ցանկալի համերաշխութեան հանդէպ եւ Սաքօյի յոյսերը ես գտնում եմ վաղահաս։ Մեր մուտքը Թուրք մասսաների մէջ՝ վտանգաւոր է, եւ մենք միայն Թուրք ինտելլիգենտների միջոցով կարող ենք մեր նպատակներն իրագործել։

Զաւրեան.— Որոշ տեղերում, անկասկած, մենք վտանգների կ՚ենԹարկուենք. բայց չէ՞ որ հայ գիւղերում եւս մենք զերծ չենք մնում զանազան վտանգներից։ Պրովոկացիան կը շարունակէ գործել։ Բայց այդ բոլորը դեռ չէ նշանակում, որ պէտք է յետ կանգնել. հարկաւոր է միայն որոշ տակտիկայով ղեկավարուել։

Վարդան.— Կրկնում եմ, որ այսպէս ասած, պաշտօնապէս մտնել Թուրք մասսաների մէջ, մենք չենք կարող. գնալ այս ինչ գիւղը, հաւաքել գիւղացիներին եւ քարոզել, հակակառավարչական տրամադրութիւն ներշնչել նրանց, — անկարելի է, — նախ հենց այն պատճառով, որ Թուրքերն իրենք կը յայտնեն այդ մասին կառավարութեանը։ Անհատական պրոպագանդա միայն կարող կը լինենք վարել, այսինքն՝ անհատ Թուրքերին քարոզել։

Արամ.— Ընկ. Մինասեանի զեկուցումից որոշ կերպով ես չկարողացայ հասկանալ համերաշխութեան այն խարիսխը, որի վրայ պիտի յենուէր մեր ապագայ գործակցութիւնը։ Այժմ պարզ է, որ լոկ համերաշխութեան կոչերով մենք չենք կարող գործ յաջողցնել. այսուհետեւ հարցը կարող է դառնալ միմիայն համերաշխ գործակցութեան մասին։ Այս տեսակէտից շատ անորոշ է ընկ. Մինասեանի զեկուցումը, նա շարունակում է պնդել, որ մենք չենք կարող փոխել մեր ծրագիրը. այսինքն պիտի շարունակենք մեր անջատողական ձգտումները, եւրոպական միջամտութիւնը միայն հայերիս համար եւն.։ Բաւական չէ որ մենք պիտի փոխենք մեր տակտիկան, ժամանակի եւ պարագաների համեմատ, հարկաւոր է ունենալ մի ընդհանուր ծրագիր, որի շուրջը կարելի լինի համախմբել բոլոր դժգոհ տարրերին։ Մենք բաց ճակատով եւ յեղափոխական շիտակութեամբ պէտք է դուրս գանք նրանց դէմ և ոչ յետին ու մուԹ ծրահիրներով։ Ես դժբախտաբար քաղաքական հարցերում ձեռնհաս չլինելով, չեմ կարող այս հարցի մասին որեւէ հեղինակաւոր բան ասել, այլ պիտի բաւականանամ այն գործնական տպաւորութիւններով, ինչ որ ստացել եմ Երկրում։ Մեր ամբողջ 17ամեայ գործունէութիւնը մեզ ապացուցանում է, որ մենք մեն մենակ, մեր ուժերով, անկարող ենք որեւէ նպատակայարմար գործ կատարել։ Մեր դէմ դուրս եկան, ոչ միայն կառավարութիւնը, այլեւ մահմետական մասսաները։ Սրանց կից, մեծ դեր են կատարում ե՛ւ մեր Թուական քանակութիւնը, մանաւանդ ցրուած լինելը մեծ տարածութեան վրայ, շրջապատուած օտար տարրերով, որով չենք յաջողում կանոնաւորապէս կազմակերպուել եւ զանազան վայրերը իրար հետ կապել։ Այս բոլորից յետոյ դարձեալ շարունակել հին սիստեմը՝ անհնարին է, մանաւանդ որ տաճիկ մասսաները վերջին շարժումներով մեծ անակընկալ են տուել մեզ։ Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, անմիջապէս աւելացնեմ, որ ես ամբողջապէս չեմ բաժանում դրսում տարածուած այն կարծիքը, որ ըստ մոդայի ծախւում է քաղաքական շուկայում, — որ իբր Թէ Դաշնակցութիւնը տարուած իր ազգայնական ֆանատիզմով, արհամարհել է հարեւաններին, կամ անկարող է եղել նկատել այն կայծերը, որ Թաղնուած էին Թուրք մասսաների մէջ։ — Հեշտ է կեանքում առաջ եկած մի երեւոյԹից, յետին Թուով եզրակացութիւններ հանել, մոռանալով ամբողջ անցեալը, Թուրք մասսաների տգիտութիւնը, Թուրք ինտելլիգենցիայի քաղաքական սնանկութիւնը, մանաւանդ ռուսական մեծ յեղափոխութեան ազդեցութիւնը, պարսկական շարժումների տպաւորութիւնը եւ այլ փոփոխութիւնները, որոնք անցեալում եւ ներկայում ազդել են Թուրք ժողովրդի տրամադրութեան եւ վիճակի վրայ. Նրանք մոռանում են մանաւանդ տնտեսական այլ ճնշումներ, որ վերջերս ծանրացել են Թուրք ժողովրդի վզին։ Իմ անհատական համոզումն է, որ մենք ձեռք պիտի քաշենք մեր առանձնացած շարժումներից եւ միանանք կամ սկիզբ դնենք համապետական շարժման, մեր երկրում բնակուող բոլոր ցեղերի հետ։ Այդ գաղափարը կեանքում իրագործելու համար ես մի այլ ճանապարհ եմ առաջարկում. ես մեծ հաւատ չունեմ Եւրոպա ապաստանած «Երիտասարդ Թուրքեր»ի կամ այսպէս կոչուած «Ժէօն Թուրքեր»ի վրայ. Նրանք մեծ մասամբ պալատական յեղափոխականներ են, որոնք ունեն այս կամ այն դինաստիական Թախումային [?] շահեր. դրանցից սկսելով շատ դժուարութիւնների կը հանդիպենք։ Ըստ ամենայնի նպատակայարմար է սկսել հենց բուն Երկրից, հենց Թուրք մասսաներից եւ նրա ծոցում ապրող գործիչներից։ Պէտք է յայտնեմ, որ այդ շարժումները ոչ մի կապ չունին արտասահմանի «Երիտասարդ Թուրքեր»ի հետ. նոյնիսկ վերջինների Թերթերը եւ գրականութիւնը մենք ենք տարածում Երկրում։ Ես առաջարկում եմ կազմել Երկրում Թուրքերի հետ միացեալ ուժերով խառն կոմիտէներ։ Սրանք զբաղուելու են մասնաւորապէս այն բոլոր հարցերով, որ ընդհանուր են բոլոր ազգութիւնների համար, օրինակ՝ պրոպագանդա, քաղաքական տեռորներ, միացեալ ուժերով բողոքներ, բոյկոտ եւն.։ Ի հարկէ ժամանակի ընԹացքում պիտի կազմուի մի ընդհանուր ծրագիր ըստ յեղափոխական կեանքի զարգացման։ — Այս բոլորի հետ մենք շարունակելու ենք մեր գործունէութիւնը եւ նպատակը առայժմ այդ է լինելու։ Առայժմ մենք մեծ ուշադրութիւն ենք դարձնելու

## ՁԻՖՈՆԻ ՀԱՇԻՒԸ
### ԳՆԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՎՃԱՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

| | ՔանակՔ | արժէք ռուբլի | կոպէկ |
|---|---|---|---|
| Մօսինի հրացան | 982 | 54·155 | 59 |
| Բերդանի հրացան | 998 | 34·367 | 80 |
| Մաւզեր եւ այլ տեսակ հրացաններ | 324 | 14·910 | 90 |
| ընդամէնը | 2·304 | 103·434 | 29 |
| Մաւզեր եւ Բօրխարդի ատրճանակներ | 793 | 32·901 | 30 |
| Պարաբելլում ատրճանակներ | 210 | 7·709 | — |
| Սմիտվէսըն, Նագան, Բարաւնինկ եւ այլ տեսակ ատրճանակներ | 2·839 | 55·581 | 93 |
| ընդամէնը | 3·842 | 96·192 | 23 |
| Փամփուշտ կանապան տեսակ հրացանների | 639·196 | 70·858 | 23 |
| Դատարկ գիլզի կանապան տեսակ հրացանների | 735·767 | 40·905 | 23 |
| Փամփուշտ կանապան տեսակ ատրճանակների | 518·727 | 31·968 | 98 |
| ընդամէնը | 1·893·690 | 143·732 | 44 |
| Հրացանի մեծ եւ փոքր մասեր | 2·628 | 13·966 | 31 |
| Փամփուշտի մասեր (վառօդ, գնդակ, շապիկ, արճիճ եւն), | | 12·876 | 66 |
| Ճաթռուկ (պիստոն) | 1·305·000 | 2·547 | 50 |
| Ձանապան գործիքներ | | 6·017 | 52 |
| Ամաններ (ճամբրուկ, սնտուկ, պարկ եւն.) | 817 | 1·483 | 86 |
| Հագուստեղէն պինուորների եւն. (եափունջի, գլխարկ եւն.) | | 4·306 | 44 |
| Դաշոյններ եւ ֆիննական դանակներ | 375 | 580 | — |
| Խնձորի եւ հրթիռի պարագաներ, մաքս, եւն. | | 2·905 | 25 |
| Վերադիր ծախսեր ընդհանուր փոխադրութեան | | 69·745 | 79 |
| Ընդհանուր գումար | — — — — | 457·788 | 29 |

## ՁԻՖՈՆԻ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

| | ռուբլի | կոպէկ |
|---|---|---|
| **Մուտք** | | |
| Բիւրոյից ստացուած 1905-1906 թ. | 307·788 | 58 |
| «Փոթորիկ»ից ստացուած է | 113·000 | — |
| Եկեղեցու հանգանակութիւնից — Փոթոյի հաշիւ | 43·000 | — |
| Մեծ Քաղաքի վաճառականական կոմիսիայից | 25·000 | — |
| Համպասպից՝ աւանս ապրանքի գնման համար | 9·100 | — |
| Գիւղացիներից՝ աւանսներ ապրանքի գնման համար | 21·096 | — |
| Վաճառուած ապրանքներից | 3·188 | — |
| Բանկի տոկոսներ | 1·208 | 50 |
| Այլ մարմիններից | 104·629 | 03 |
| | 628·010 | 11 |
| **Ելք** | | |
| Տրուած՝ ռազմամթերքի, գործիքների, հագուստների | 386·595 | 50 |
| Ծախսուած՝ փոխադրութեան, ճանապարհածախսի, կաշառքների, հիւանդանոցների, պահեստների, ապրուստի, դիւանական | 69·745 | 79 |
| Փոխադրած՝ այլ մարմինների | 98·778 | 00 |
| Կորուստ կամ կասկածելի ապառիկներ | 6·266 | 97 |
| | 561·386 | 26 |
| Մնացորդ աւանսներ՝ առ 1 Դեկտ. 1906 թ. | 34·551 | 43 |
| Մնացորդ կանխիկ դրամ կանապան վայրերում առ 1 Դեկտ. 1906 | 32·072 | 42 |
| Գումար | 628·010 | 11 |



## 99ՐԴ ՆԻՍՏ (23 Ապրիլ, առաւօտ)

Նախագահում է Մալումեան։

Ներկայ են 27 ժողովական։

Բացակայ են՝ Իշխան, Վարդան (հիւանդ), Անդրանիկ (հիւանդ)։

---

Օրակարգն է՝ «Թուրքիոյ ընդդիմադիր տարրերի հետ համերաշխութեան» բանաձեւը։

Բանաձեւ ներկայացնում են՝ Մինասեան եւ Արամ։ Նախագահը քուէարկութեան է դնում Արամի բանաձեւը։

Ժողովը անհրաժեշտ է համարում մի երկու կէտերի վերաբերմամբ արտայայտուելու։ Եւ վիճաբանութիւն ու կարծիքների փոխանակութիւն է տեղի ունենում գլխաւորապէս անջատ թէ խառն կոմիտէներ ունենալու հարցին շուրջը։

Ռոստոմ.— Որ մեր կուսակցութիւնը անջատողական ձգտումներ չէ ունեցել, դրան իբր ապացոյց կարող է ծառայել հենց մեր գործունէութիւնը։ Եթէ այժմ այստեղ այս խնդրի վերաբերմամբ հարց է բարձրանում, պատճառն այն է, որ մեր ընկերներից շատերը ուղղակի չգիտեն մեր որոշումների մասին։ Մեր 17 տարուայ գործունէութեան ընթացքում մենք ապացուցել ենք շատ անգամներ [որ նման ձգտում ունեցած չենք]։ Բացի այդ, 1904ի Ընդհանուր ժողովում եղել է չեշտուած որոշում։ Գալով համերաշխութեան, պէտք է ասեմ, որ այդ կեանքի մէջ լայն չափով չէ իրագործուում։ Այդ ուղղութեամբ կազմակերպութիւնը մեծ ջանք է գործ դրել, բայց աչքի զարնող յաջողութեան չի հասել։ Ես, ի հարկէ, միանգամայն համաձայն եմ համերաշխութեան գործառնութեան օտար ընդդիմադիր տարրերի հետ. բայց ես վտանգաւոր եմ համարում միանալ Թուրքերի եւ քիւրտերի հետ, խառն կոմիտէներ կազմակերպելով, քանի որ վերջիններս ղեկավարւում են հարուստների եւ բէգերի կողմից։ Էրզրումի շարժման ղեկավարները եղել են երեք ամենայայտնի վաշխառուներ։ Դժգոհութիւնը աշխատաւոր տարրերի մէջ, տգիտութեան պատճառով, դեռ շատ աղօտ է եւ թոյլ։ Իմ կարծիքով տեղական մարմինները կարող են համաձայնութեան գալ քիւրտերի, Թուրքերի եւ ասորիների հետ, եւ ի հարկին համերաշխութեան ձեռնարկներ անել։

Զարդարեան.— Ես միանգամայն հակառակ եմ խառն կոմիտէներ կազմելու առաջարկին։ Դեռ ժամանակը չէ նման ձեռնարկներ անելու, քանի որ Թուրք մասսան անգիտակ է եւ անկարող մեր ծրագրով ղեկավարուելու։ Սրանից զատ մեր գործակցութիւնը Թուրքերի հետ առիթ կը տայ նոր կոտորածների եւ խըլրտումների։ Մենք պէտք է աշխատենք հեռուից տոն տալ շարժումներին եւ խիստ վերապահութեամբ վերաբերուել։

Համօ.— Ընդունելով հանդերձ, որ մեր շարժման մէջ երբեք անջատողական բնոյթ չկայ, բայց մենք միշտ էլ եւ այժմ, պէտք է չեշտենք դրա վրայ։ Ինքնըստինքեան հասկանալի է, որ հենց մեր դրած իդէալից չէ բխում սեպարատիստական տենչ։ Բայց ինձ բոլորովին զարմացնում է ընկ. Զարդարեանի առարկութիւնը։ Մի՞թէ նա կարծում է, որ եթէ մենք մենակ գործենք եւ չմիանանք ընդդիմադիր տարրերի հետ, կառավարութիւնը չպէտք է կոտորէ Հայերին։ Առարկութիւնն ու վախը անհիմն լինելով, ես չեմ ուզում ծանրանալ դրա վրայ։ Կառավարութիւնը միշտ էլ առիթներ կարող է գտնել կոտորածներ առաջ բերելու, եթէ ուզէ։ Թուրքերը դիմում են մեզ եւ խնդրում մեր աջակցութիւնը եւ ղեկավարութիւնը։ Մենք չպէտք է մերժենք այդ։

Արամ.— Փաստ է, որ Թուրքիայում տեղի ունեցող եւ քաղաքական գոյն կրող շարժումները ղեկավարուել են մեր ձեռքով. գուցէ մեր ընկերներից շատերը չգիտեն այդ մասին։ Թուրքերը յաճախ ասել են մեր ընկերներին՝ Վանում, Էրզրումում եւ Եւրոպայում, որ դուք պէտք է լինէք մեր ուսուցիչները։ Մենք պէտք է մօտենանք այդ ընդդիմադիր ուժերին. այդ է պահանջում մեր իսկ շահը։ Գալով անջատման խնդրին, ես առաջարկում եմ, ոչ թէ սոսկ որոշումով բաւականանալ, այլ պաշտօնապէս յայտարարել, քանի որ մինչեւ այժմ էլ տիրում է առաջուայ թիւր կարծիքը եւ միշտ էլ կրկնւում է։

Մուրատ.— Մեր ընկերներից մի քանիսը խիստ լաւատես են. բայց ես դժբախտաբար անկարող եմ նրանց լաւատեսութիւնը բաժանել։ Եթէ համոզուած լինեմ, որ Թուրքերի մէջ առաջացած շարժումը յեղափոխական բնաւորութիւն է կրում, ես խնկով մոմով կը դիմաւորեմ, բայց իրականութիւնը այդպէս չէ։ Նրանք ոչ թէ նոր պետական կարգեր են պահանջում, այլ հին խալիֆայութիւնը։ Նրանց մէջ չկայ յեղափոխական շարժում, հետեւապէս չենք էլ կարող միացած գործ ձեռնարկել։ Շատ շատ մենք կարող ենք հեռուից տոն տալ, թելադրումներ անել, բայց երբե՛ք խառն կոմիտէներ կազմել։ Հայերս դեռ ջուրը չտեսած հանուել գիտենք։

Վռամեան.— Ես եւս այն կարծիքին եմ, որ մենք խիստ վերապահութեամբ պիտի վարուենք։ Ես համաձայն եմ աջակցելուն, դրամ տալուն, բայց մենք աշխատելու ենք երեւան չգալ։ Այս էլ պիտի ասեմ, որ մենք շատ էլ չոգեւորուենք հեռուէն եկած ձայներով։

Նախագահ.— Զգուշութիւնը ինքնըստինքեան հասկանալի է. դրա վրայ խնդրում եմ չծանրանալ։

Ահարոնեան.— Մեր մէջ կայ անջատողական ձըգտում, այդ չպէտք է ուրանալ։ Մենք պահանջում ենք

*ռաղիր ստացանք, որով յայտնում էին Ռաշիտին ընդունելու մասին, բայց, յետոյ, ինչպէս Նամակից պարզուեց, դա ոչ թէ Ռաշիտին, այլ Տաճատին էր վերաբերում։*

Տաճատ.— *Ես կ'ուզէի ժողովի ուշադրութիւնը հրաւիրել եւ մի այլ հանգամանքի վրայ։ Բալկանում ընկերական յարաբերութիւնը շատ վատ է եւ ամբողջ կազմակերպական գործը կազմալուծուած։ Իմ կարծիքով, ուղարկուած ընկերների միխան պիտի լինի, աւելի կազմակերպութիւնը վերակազմել, քան Ռաշիտի խնդիրը։*

Սեպուհ.— *Ես առաջարկում եմ կանոնագրութեան մէջ մտցնել այսպիսի մի կէտ, որ եթէ մէկը հեռացւում է, մարմինը պարտաւոր է մի թուղթիկ բաց թողնել եւ յայտարարել այդ մասին միւս պաշտօնական մարմիններին։*

Ստեփանեան.— *Միանում է այդ մտքին։*

Համօ.— *Մեր ստացած տեղեկութիւնները եւս ցոյց են տալիս, որ դրութիւնը խիստ տխուր է Բալկանում։ Այնտեղ տիրում է անկարգապահ գործունէութիւն։ Հրապարակային ժողովներում խօսում են կովկասեան գործունէութեան դէմ, եւ մեր ընկերները չեն պաշտպանում։ Զրպարտում են Բիւրոներին զեղծումների մէջ, եւ Բալկանի Կ. Կոմիտէն լռութեամբ է անցնում, առանց հերքելու։*

Զարդարեան.— *Ես բողոքում եմ ընկ. Համոյի դէմ եւ կ'ուզէի որ իր աղբիւրը ստուգէր։ Ոչ մի հրապարակային ժողովում չեն զրպարտուել Բիւրոները։ Ընկ. Համոյի տուած տեղեկութիւնը միանգամայն անհիմն է։*

Վահագն.— *Ցամենայն դէպս փաստը սխալ չէ։ Բայց մեղադրել մարմիններին՝ անարդար եւ սխալ կը լինի։ Ճիշդ է, Ռաշիտը թոյլ տուաւ Կ. Կոմիտէի ժողովում Թիֆլիզի Բիւրոյի անդամների վերաբերմամբ մութ ակնարկներ անել։ Մենք բողոքեցինք ի հարկէ դրա դէմ։ Միւս կողմից չպէտք է մոռանալ եւ այն, եթէ չլինէր Ռաշիտը, Զինուորական Դպրոցի մէջ նրան յանձնուած ճիւղը կը մնար առանց դասատուի։*

Զարդարեան.— *Նրանք, որոնք թոյլ են տուել Կովկասի ընկերներին մասին խօսելու եղել են գլխաւորապէս ձեր տղերքը։ Բալկանը լինելով ճամբուն վրայ, յաճախ մարդիկ գնում-գալիս եւ թունաւորում են մեր տեղական տղաների միտքը։ Պէտք է մի չափ դնել, մենք անկարող ենք բոլորին ընդունել եւ տեղ տալ։*

Տաճատ.— *Ես պնդում եմ իմ առաջարկի վրայ, աւելի ուշադրութիւն պիտի դարձնել ընկերական յարաբերութիւնների եւ կազմակերպական գործերի վրայ եւ հենց դրա համար մարդ պիտի ղրկել, քան Ռաշիտի համար։*

*Այս նկատումները եւ վիճաբանութիւնն ի նկատի ունենալով ժողովը 6րդ կէտը ձեւակերպեց այն ձեւով, ինչպէս առաջ է բերւում Ներքեւում։*

*Ահա ընդունուած որոշումների ցանկը.*

1. Ընտրել երկու ընկեր, յանձնարարելով նրանց մեկնել Պետերբուրգ, յարաբերութեան մէջ մտնել Սոցիալիստ-յեղափոխականների կենտրոնական մարմնի հետ, թէ՛ նրանց համագումարին մասնակցելու եւ թէ համերաշխութեան եւ ընդհանուր ձեռնարկների ծրագիր մշակելու նպատակով (միշտ հետեւելով Արեւելեան Բիւրոյի հրահանգներին)։

2. Խմբագրել բոլոր որոշումներն ու բանաձեւերը եւ ըստ կարելւոյն շուտ հաղորդել մարմիններին եւ կամ հրատարակել պաշտօնական օրգանի միջոցով։ Այդ խմբագրութիւնը պիտի կատարէ Ինքի յանձնաժողովը, ղեկավարուելով ժողովի տուած ցուցմունքներով։

3. Ժողովից անմիջապէս յետոյ տպագրել, ոչ ուշ քան 15 օր, եւ մարմիններին բաժանել «Կազմակերպական Կանոնները», եղած փոփոխութիւններով եւ յաւելումներով։

4. Թղթածրարների մէջ եղած բոլոր դիմումներն ու առաջարկները, որոնք համարագրուած են դիւանի թղթերում՝ քննել եւ նրանց վերաբերմամբ որոշումներ կայացնել, առաջնորդուելով ժողովի հրահանգներով։ Այդ գործը յանձնել Ինքի յանձնաժողովին։

5. Ուղարկել յատուկ մի ընկեր Աթէնք, լիազօրութիւն տալով լուծարքի ենթարկել Աթէնքի զինա-դրամական գործը եւ արդիւնքը տեղեկագրել Արեւմտեան Բիւրոյին։

6. Ուղարկել երկու ընկեր Բուլղարիա, որոնք Կ. Կոմիտէի մի ներկայացուցչի հետ տեղն ու տեղը ծանօթանան Զինուորական Դպրոցի մէջ տեղի ունեցող դժգոհութիւններին, իրաւունք տալով նրանց, խորհրդակցութեամբ Արեւմտեան Բիւրոյի, պատասխանատուութեան ենթարկել այդ դժգոհութիւնների պատճառ եղողներին, կարգի բերել դպրոցի դասընթացքը, դրամական վիճակը եւ գործերը։ Նոյն ընկերներին յանձնել խստօրէն քննել շրջանի կազմակերպական անկերպարան գործերը եւ կարգի բերել։ Արդիւնքը տեղեկագրել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներին։

7. Արեւմտեան Բիւրոյին [պարտականութիւն] յանձնել, շատ շուտով յատուկ ընկեր ուղարկել Եգիպտոս, խիստ քննութեան ենթարկելու այնտեղի գործերը եւ վերակազմել մարմինները։

8. Կազմել երեք ընկերներից բաղկացած մի հաշուեքննիչ մասնաժողով, պարտաւորութիւն դնելով նրա վրայ՝ քննելու ամբողջ կազմակերպութեան հաշիւները, հարկ եղած ժամանակ նոյնիսկ պտոյտ անելով այլեւայլ շրջաններ եւ զեկուցանել արդիւնքը երկու Բիւրոներին։

9. Ինքի յանձնաժողովին յանձնել կարգադրելու եւ վերջ տալու 1) զեղծումների գործերը (տես թղթածրար), 2) Ոսկեհանքի Ցուցական Մարմնի խնդիրը, 3) Լոռիսի դիմումի խնդիրը, եւն.։

10. Մնայուն գործիչներ ուղարկել Բալկան, Եգիպտոս, Ամերիկա՝ Արեւմտեան Բիւրոյի միջոցով, նրանց յանձնարարելով պրոպագանդայի եւ կազմակերպական գործեր։

11. Վրէժստանի արհեստանոցը դնել Կ. Կոմիտէի լիակատար տնօրինութեան տակ, մինչեւ զինապայթուցիկ մարմնի կազմուելն ու գործի սկսելը։

12. Ընտրել Ինքի յանձնաժողովի համար՝ ինն անդամներ տալով նրանց լիազօրութիւն կարգաւորելու վերեւի յիշուած գործերից նշանակուածները եւ վերջացնելու, յանուն ժողովի, հերթական խնդիրները։ Ինքի յանձնաժողովի գործունէութիւնը պիտի դադարի ոչ ուշ քան 15 օր ժողովի փակումից յետոյ։

13. Յանձնել [պարտականութիւն] Արեւելեան Բիւրոյին՝ անյապաղ ընկերներ ուղարկել Էրզրում, կազմակերպելու այդ կարեւոր շրջանը եւ տրամադրելի անել նախահաշուով այդ շրջանին յատկացրած 15 հազար ֆրանքը։ Անհրաժեշտ է այդ շրջանի գործին տալ թուրք-հայկական միացած գործունէութեան կերպարանք, համերաշխութեան հողի վրայ։

14. Յանձնարարել Վասպուրականի եւ Տարօնի մարմիններին, ինչպէս եւ Արեւելեան Բիւրոյին, բարոյական աջակցութիւն ցոյց



տալ մեր անմոռանալի ընկերներ Սերոբի եւ Հրայրի ընտանիքներին, հոգալով, կողմնակի, կամ եթէ այդ անհնարին լինի՝ «Կարմիր խաչ»ի միջոցներով, նրանց զաւակների ուսման գործը Երկրի մէջ կամ Կովկասում,

## 104ՐԴ ՆԻՍՏ (25 Ապրիլ, երեկոյ)

*Նախագահում է Մալումեան։*

*Ներկայ են 19 ժողովական։*

*Բացակայ են՝ Շահխաթունեան, Իսահակեան, Իշխան, Ռոստոմ, Թոփչեան, Մուրատ, Սեպուհ, Վարդան, Զաւարեան, Ահարոնեան, Անդրանիկ։*

---

Նախագահը *յայտնում է դիւանի կողմից, որ ոչ ոք չպէտք է բան արտագրէ արձանագրութիւններից, քանի որ դրանք չեն հաստատուած, թէ չէ կարող են թիւրիմացութիւններ առաջ գալ։*

*Կարդացւում է Նալբանդի պատգամաւորի հետեւեալ առաջարկը.*

«Քանի որ Ժլատը միացւում է Նալբանդի հետ եւ որովհետեւ այդ լայնածաւալ շրջանում կանոնաւոր կազմակերպութիւն առաջ բերելու համար հարկաւոր են առնուազն երկու ազատ գործիչներ, որ այդ շրջանում գտնել անհնարին է, եւ ի նկատի ունենալով, որ Ընդհանուր Ժողովը համանման հարցի վերաբերող որոշում արել է ուրիշ շրջանների համար, առաջարկում եմ ժողովին Նալբանդին եւս տալ ազատ ընկերներ, որոնք զբաղուեն բացառապէս այդ շրջանի կազմակերպական [եւ] պրոպագանդայի գործով»։

*Այս հարցի շուրջը տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն, որի ժամանակ արտայայտուեց այն կարծիքը, թէ պէտք է հարցը լուծել սկզբունքով, գործադրութիւնը յանձնելով համապատասխան մարմնին։*

Մալումեանի *առաջարկութեամբ ժողովը որոշեց, որ Արեւելեան Բիւրոն յատուկ ուշադրութիւն դարձնի այդ շրջանի վրայ եւ առաջին հնարաւոր դէպքում բաւարարութիւն տայ։*

*Ապա տրւում է Այգեստանի Ներկայացուցչի առաջարկը, որ մարդիկ ուղարկուեն Պարսկաստան՝ Թուրքերէն սովորելու համար, որոնք պիտի յետոյ Անդրկովկասի Թուրքերի մէջ պրոպագանդ անեն։*

*Այս առթիւ ոմանք առարկում են, թէ փոխանակ Թուրքերէն սովորելու համար մարդ ուղարկելու Պարսկաստան, կարելի է Թուրքերէն իմացող հայ երիտասարդներին պատրաստել եւ ուղարկել պրոպագանդի. միւսներն այս հարցը կապում են ընդհանուր պրոպագանդի հետ, առաջարկելով բանալ կենտրոնական պրոպագանդների դպրոց, որտեղ սովորեցնեն եւ Թուրքերէն։*

*Ժողովը սկզբունքով համաձայն լինելով այս առաջարկին, գործադրութիւնը թողնում է Արեւելեան Բիւրոյին։*

---

*Ժողովն անցնում է Էրզրումի շրջանի հարցին։*

*Կարդացւում է գրաւոր զեկուցում Էրզրումի եւ շրջակայքի մասին, որից յետոյ մտքերի փոխանակութիւն է տեղի ունենում։*

Նախագահ.— *Ես կարծում եմ, որ Էրզրում կարելի է ուղարկել Թուրք ընկերներ, որոնք ցանկութիւն են յայտնում գործել մեր դրօշակի տակ. վերջին շարժումներից յետոյ՝ կազմակերպութիւնը ոչ մի հիմք եւ իրաւունք չունի անուշադրութեան մատնելու այդ կարեւոր կէտը։*

Զարդարեան.— *Իմ ձեռքն ընկան մի քանի նամակներ Էրզրումից, որոնք ցոյց են տալիս, որ այնտեղ տիրում է երկպառակութիւն՝ Հների եւ Նորերի մէջ, որ բաւականին դժուար կացութիւն է ստեղծել։ Հետաքրքիր էր լսել այդ մասին տեղեկութիւններ։*

Արամ.— *Կարնոյ գործը ոչնչացաւ 1904ին, Յանի խումբը ղընալուց յետոյ։ Այժմ այնտեղ ունենք մօտ 80 բանտարկեալ ընկերներ, որոնցից 13ը ուսաստանցի են։ Էրզրումում այժմ կայ երեք ընկեր, մի ժամագործ, մի արհեստաւոր եւ մի ուսուցիչ։ Վերջինս գերմանական համալսարանում կրթութիւն ստացած եռանդոտ մի երիտասարդ է։ Նա էր բոլոր գործերի վարիչը։ Բայց ամառը գրել էր Բիւրոյին, թէ ինքը այլեւս անկարող է շարունակել կազմակերպութեան գործը, որովհետեւ Թուրքերի շարժումը, որի ղեկավարներից է եւ ինքը, քանի գնում աճում է եւ ժամանակ շատ խլում. բացի այդ, իբրեւ ուսուցիչ անյարմար է գտնում գործի մէջ լինել։ Նա առաջարկում է ուշք դարձնել Թըրքական շարժման վրայ եւ կազմակերպել հայ ինտելիգենցիան ու գաւառները։ Հների եւ Նորերի կռիւը այժմ գոյութիւն չունի։ Դաշնակցութիւնը լաւ գործ կարող է անել՝ աշակերտների մէջ, որոնք հետաքրքրւում են յեղափոխական շարժումներով. պէտք է նրանց կազմակերպել եւ գրքեր ուղարկել։ Էրզրումն իմ կարծիքով շատ կարեւոր դեր ունի կատարելու, դրա համար էլ պէտք է կազմակերպել եւ աշխատել համերաշխութիւն առաջ բերել Թուրքերի հետ, որոնց կողմից այդպիսի տրամադրութիւն նկատւում է. լաւ կը լինէր լեզու մարդ ուղարկել, որ շատ բան կարող է անել. կարելի է ուղարկել Չերքէզովին (Ժընեւից եկած), որ ցանկութիւն է յայտնել՝ գնալու իբրեւ մեր մարդը։*

*Ժողովը որոշեց Էրզրումի մէջ առաջ բերել կազմակերպութիւն, եւ յատկացնել այդ նպատակի համար որոշ գումար։*

---

*Ապա կարդացւում է Վասպուրականի երկու Ներկայացուցիչների՝ Արամի եւ Իշխանի առաջարկը, ուր խնդրում են իրենց հսկողութեանը թողնել Վրէժի Մենաւոր եւ Աւարայրի վայրերն, իբրեւ յարմար ճանապարհներ Երկիր զէնք փոխադրելու։*

*Ահա այդ առաջարկը՝*

«Վասպուրականի շրջանի երկու Կ. Կոմիտէները խնդրում են Ընդհանուր Ժողովէն, Վրէժի շրջանի Աւարայր եւ Մենաւոր վայրերը թողնել Բիւրոյի Երկիր գործով զբաղող հատուածի եւ Վանայ մարմինների անմիջական հսկողութեան տակ։ Դա կարեւոր է փոխադրութեան գործի կանոնաւորութեան, դրամական հաշիւների խնայողութեան, գաղտնապահական եւ այլ տեսակէտներից»։

Ստեփանեան (*Վրէժի Ներկայացուցիչ*) *բողոքում է առաջարկի դէմ եւ ցոյց է տալիս, որ յիշեալ երկու վայրերի միացումը Երկրի հետ՝ հենց Երկրի գործի համար վնասակար է։ Եթէ ժողովը որոշէ այդ վայրերը միացնել Վասպուրականի հետ, այն ժամանակ այդ տեղերի համար պատասխանատուութիւնն էլ պէտք է Երկրի ընկերների վրայ ընկնի. Վրէժն այլեւս այնտեղ ոչ մի գործ չպէտք է ունենայ։*

Արամ *համաձայն չէ եւ պնդում է, որ Մենաւորն ու Աւարայրը դրուեն Վասպուրականի տրամադրութեան տակ, իսկ պատասխանատուն այդ տեղերի կազմակերպութեան համար՝ մնայ Վրէժը։*

Նախագահը *առաջարկում է ընկ. Ստեփանեանին եւ Արամին՝ իրենց մէջ համաձայնութեան գալ այդ հարցի համար եւ յաջորդ նիստին մի բանաձեւ ներկայացնել։*

*րեմն մեզ ի՞նչը կը ստիպէ համերաշխիլ: Միմիայն հանրային կարծիքը: Բայց մենք չենք կարող հասարակութեան տարտամ, անհիմն կարծիքին հետեւել: Մեր ցանկութիւնն է վերացնել այդ կռիւներն ու սպանութիւնները, իսկ այդ կարելի է անել եւ այլ միջոցներով: Մենք չենք կարող յանուն ժողովրդի շահերի դրանց ներս թողնել: Թոյլ տալու չէ Երկրում մի այլ կուսակցութիւն մեր կողքին բռնելու:*

Ստեփանեան.— *Նրանք դիտմամբ Տաճկաստանի հարց են դրել, որպէսզի հնարաւորութիւն ունենան Երկիր մտնելու. իսկ յետոյ էլ, բնական է, կը դառնան մեր թշնամիները: Թաւրիզում մի կողմից մեզ հետ բանակցութիւն էին վարում, միւս կողմից էլ մեր ընկերների ոտի տակը փորում:*

Մինասեան.— *Թերթերի մէջ էլ այդ հարցը արծարծուել է. անհրաժեշտ է մի կերպ բաւարարութիւն տալ: Կոնկրէտ առաջարկների վրայ չենք կարող կանգ առնել: Պիտի այնպիսի պատասխան տալ, որ ո՛չ այս եւ ոչ այն կողմը վնասի. բոլորովին անուշադրութեան չէ կարելի մատնել:*

Զարդարեան.— *Բոլոր յայտնուած բացասական կարծիքների հետ համամիտ եմ. բայց հետեւանքների մասին չխօսուեց: Ճիշդ է, Երկրում նրանք ուժ չունեն, դուցէ եւ բոլորովին գոյութիւն չունեն. բայց դրսում դրանք կան եւ բաւական ուժ կը ներկայացնեն: Այդ չպէտք է մոռանալ: Ուրեմն համերաշխութեան առաջարկը սկզբունքով պիտի ընդունել եւ մի բանաձեւ անցկացնել, որ արգիլէ առաջանալիք չարիքների անխուսափելիութիւնը:*

Զաւարեան.— *Այսքան չէր երկարի խնդիրը, եթէ դնէինք միջկուսակցային հարցին կից: Դեռ 98–1904 թուերին պնդում էին ոմանք, ինչպէս եւ Վռամեանը, որ Հնչակեանութիւնը կուսակցութիւն չէ: Բայց կեանքը այդ չէ ասում: Քանի քանի անգամ նրանք բաժանուել են, բայց մենք անկարող ենք եղել նրանց ձուլելու, մեզ միացնելու: Դա փաստ է: Գուցէ այդտեղ աւելի դեր են խաղում թայֆայական ոգին, պատուախնդրութիւնը եւն., քան գաղափարի տարբերութիւնը: Բայց փաստը մնում է փաստ: Նրանք այնքան էլ ցածր չեն ինչպէս կարծւում է: Դասակարգային գիտակցութեան տեսակէտից, նրանք աւելի բարձր են քան մենք: Գուցէ նաեւ ուրիշ կուսակցութիւններ հրապարակ գան տաճկահայ դատին նուիրուած, ուստի ցանկալի՛ է համերաշխութիւնը: Գալով ներկային, պիտի մենք որոշակի ասենք, որ նրանց հետ կը միանանք, երբ նրանց շարքերը կը մաքրուեն, եւ երկրորդ՝ ուժ կ'ունենան Երկրում: Առանց դրան մենք չենք կարող համերաշխութեանը ընթացք տալ:*

Համօ.— *Երկու բան խառնում ենք իրար. ոմանք կարծում են, որ մեր բանակցութիւնը Կովկասում եղել է համերաշխութեան տեսակէտից. բոլորովին ո՛չ, այլ միայն միջ-կուսակցային սպանութիւններին վերջ տալու նպատակով. Նոյն այդ մտքով եղել է նաեւ մեր բանակցութիւնը Պարսկաստանում: Ի՞նչպէս կարելի է կոնգրէսի մասին խօսք ընել, երբ հրապարակում կան միայն երկու կուսակցութիւն, դեռ չեմ ասում, որ Տաճկաստանում Հնչակեանները որեւէ գործունէութիւն չունեն:*

Մալումեան.— *Առնուազն անյարմար էր, այսպիսի ձեւով խօսել մի կուսակցութեան մասին Ընդհանուր Ժողովում, ուր խօսւում է համերաշխութեան մասին բազմապիսի կուսակցութիւնների եւ տարրերի հետ, ինչպէս քիւրտերի, թուրքերի, ասորիների, մակեդոնացիների եւն.: Իսկ մի անձնաւորութեան մասին, որպիսին է Մուրատը, որը գնահատելի յեղափոխական անցեալ ունի, այդպիսի անվայել ածականներ ասել առնուազն անյարմար է: Այն համերաշխ ձեռնարկները, որոնք եղել են մեր ընկերների եւ Հնչակեան խմբերի մէջ՝ Պարսկաստանում, Վանում, Թիֆլիսում եւն., մի զօրեղ հակադրութիւն է այստեղ արտայայտուած, անհիմն կարծիքների եւ մի քանի ընկերների տարօրինակ վերաբերմունքի: Պէտք է մատնանշել եւ բողոքել Հնչակեանների շարքերում տեղի ունեցող կեղտերի դէմ. բայց այդ չէ նշանակում, որ պիտի աչքերը փակել մեր պակասութիւնների վրայ եւ խօսել համերաշխութեան դէմ: Իմ կարծիքով մենք պէտք է յայտնենք, որ մենք ջերմ կողմնակիցներ ենք համերաշխութեան, ինչպէս եւ միջ-կուսակցային ատեանին, եւ երրորդ՝ որ կոնգրէն չէ կարող ընդունուել, քանի որ դրա համար բաւական թուով մարմիններ չկան, եւ չեշտել, որ համերաշխութիւն ունենալու ամենալաւ միջոցն է յեղափոխական շարքերի մաքրութիւնը:*

*Ժողովը համարելով վիճաբանութիւնը սպառուած, անցնում է բանաձեւերի քննութեան: Կային երկու բանաձեւեր՝ Զաւարեանի եւ Զարդարեանի: Քուէարկուեց Զաւարեանի բանաձեւը, որն անցաւ միաձայն, երկուսի բացառութեամբ:*

*Ահա այդ բանաձեւը.*

«Լսելով Հնչակեան Պարիզի Կենտրոնական Վարչութեան առաջարկը յեղափոխական կոնգրէի գումարման եւ համերաշխութեան մասին եւ լսելով ընկերների յայտնած կարծիքները հնչակեան այլեւայլ հատուածների բռնած ընթացքի եւ զանազան վայրերում ունեցած գործունէութեան մասին, Ընդհանուր ժողովը

ա) Չգտնելով, որ հնչակեան անուան տակ գործող հատուածները ու խմբակցութիւնները բաւականաչափ զտուած լինին անվստահելի տարրերից (որոնց մասին ժամանակին յիշուած է եղել կուսակցութեանս գրութիւնների մէջ),

բ) Համարելով, որ Դաշնակցութեան եւ հնչակեան հատուածների մէջ համերաշխ գործակցութիւնը կարող է տեղի ունենալ միայն այն դէպքում, երբ տեղական հնչակեան մարմինները իրենց առօրեայ ընթացքով եւ յեղափոխականին վայել գործունէութեամբ վստահութիւն կը ներկայացնեն դաշնակցական տեղական մարմիններին,

գ) Գիտակցելով, որ կոնգրէի եւ համերաշխութեան հարցը էապէս լուրջ նշանակութիւն կարող է ունենալ այն դէպքում, երբ լինեն հնչակեան եւ այլ մարմիններ Երկրի ներսում,



Որոշեց՝

Պաշտօնական կոնգրէի գումարումը ներկայումս համարել վաղաժամ, յուսալով, որ վերը յիշուած պատճառաբանութիւնների թուլանալն ու վերանալը ապագայում հնարաւոր կը դարձնէ Դաշնակցութեան համերաշխ գործակցութիւնը հայ յեղափոխական այլ տարրերի հետ:

Սրա հետ միասին Ընդհանուր ժողովը յիշեցնում է, որ Դաշնակցութեան Երրորդ Ընդհանուր ժողովի որոշմամբ այլեւայլ մարմիններին չպատկանող, գործին նուիրուած եւ վստահելի անհատների ու խմբերի հետ համերաշխօրէն կռիւ մղելը ընդհանուր թշնամուն դէմ (մանաւանդ՝ Երկրին մէջ) եղել է եւ այժմ էլ լինելու է Դաշնակցութեան բաղձանքը:

Իսկ ներկայումս Ընդհանուր ժողովը յանձնարարում է բոլոր իր մարմիններին՝ ամէն կերպ խոյս տալ կուսակցական ընդհարումներից եւ դաշնակցական ու այլ կուսակցութիւնների ու խմբակցութիւնների մէջ ծագող վէճերն ու թիւրիմացութիւնները լուծել միջնորդական, միջ-կուսակցական ատեանի միջոցաւ»:

---

*Ահա ընկ. Զարդարեանի բանաձեւը, որը որոշուեց անցկացնել արձանագրութեան մէջ.—*

«Ընդհանուր ժողովը լսելով Հնչակեանների Պարիզի կենտրոնին պաշտօնական դիմումը, ուղղուած Դաշնակցութեան Ընդհանուր ժողովին, միջ-կուսակցական ատեանի, տաճկահայ դատի համար կազմուելիք կոնգրէի եւ համերաշխութեան մասին, որոշեց.

Նկատելով, որ ժողովը արդէն իր նախորդ որոշումներուն մէջ ընդունած է միջ-կուսակցային ատեանի մը հաստատումը կուսակցութեանց եւ խմբակցութեանց միջեւ ծագած վէճերն ու անհամաձայնութիւնները քննելու եւ հաշտարար կերպով կարգադրելու համար,

Նկատելով մանաւանդ, որ համերաշխութեան գաղափարը, միշտ Դաշնակցութեան հաստատուն եւ անխախտ բաղձանքներէն մէկն եղած է,

Ժողովը կը յանձնարարէ իր բոլոր մարմիններուն՝

ա) Առաջնորդուել յառաջիկային մէջ ալ՝ նոյն սկզբունքով:

բ) Ամէն միջոց գործ դնել խոյս տալու համար հնչակեան խումբերու եւ անհատներու հետ ընդհարումներ ունենալ է, ենթարկելով կուսակցական ամէն թիւրիմացութիւն ու անհամաձայնութիւն՝ վերոյիշեալ միջնորդ ատեանին:

Ընդհանուր ժողովը սկզբունքով համակիր լինելով հանդերձ հայ յեղափոխական կուսակցութեանց կողմէ կազմուելիք կոնգրէի մը գաղափարին, կը նկատէ թէ մեր մէջ յեղափոխական կուսակցութեանց թիւը չափազանց անբաւական է՝ կոնգրէի մը կազմութիւնն արդարացնելու:

Այս առիթով ժողովը յարմար կը դատէ շեշտել, թէ կուսակցական համերաշխութեան ամենալաւ կռուանը յեղափոխական մաքրութիւնը եւ շիտակ գործունէութիւնն է, որուն վրայ միայն կարելի է հիմնել իրական եւ տեւական ամէն համերաշխութիւն»:

*Ժողովը փակուեց ժամը 1½ին:*

*ԾԱՆՕԹ.— Հնչակեաններին վերաբերեալ բանաձեւը Ընդհանուր ժողովի որոշման համաձայն Իննի յանձնաժողովի կողմից ենթարկուեց խմբագրական փոփոխութիւնների: (Տես բանաձեւերի հաւաքածուն):*

*Յանձնաժողովի կողմից՝*

*Ե. ԹՈՓՉԵԱՆ*

## 106ՐԴ ՆԻՍՏ (26 Ապրիլ, երեկոյ)

*Նախագահում է Մալումեան:*

*Ներկայ են 24 ժողովական:*

*Բացակայ են Շահխաթունեան, Իսահակեան, Թոփչեան, Վարդան, Զաւարեան, Անդրանիկ (հիւանդ):*

---

Նախագահը *առաջադրում է կարդալ Քրիստափոր Միքայէլեանի ընտանիքի ապահովութեան խնդրի մասին եղած բանաձեւը:*

Մալումեան *կարդում է բանաձեւը, որն անցնում է միաձայն:*

*Ահա այդ բանաձեւը՝*

«Ընդհ. ժողովը հանոյքով լսեց Կովկասեան Ռայոնական ժողովի որոշումը և Երեւանի ընկերների առաջարկը՝ մեր անմոռանալի ընկ. Քրիստափոր Միքայէլեանի ընտանիքը ապահովելու մասին, ու աչքի առաջ ունենալով, որ այդ հոգսը մինչեւ այժմ ծանրացած է եղել հանգուցեալի անձնական ընկերների վրայ եւ որ այդ եղանակով դժուար է ապահով պայմանների մէջ դնել նրա զաւակի կրթութեան գործը, այլեւ այն, որ կազմակերպութեան համար բարոյական պարտաւորութեան խնդիր է՝ օգտուելով այս առիթից արտայայտելու յարգանք մեր ընկերոջ թանկագին յիշատակին, որոշեց՝ կուսակցութեան վրայ առնել այդ գործի կարգաւորումը եւ պարտաւորեցնել Թիֆլիզի եւ Բագուի մեր մարմիններին՝ անյապաղ գործի գլուխ անցնել եւ ամենաուշը մինչեւ 1907 թուի վերջը կողմնակի միջոցներով կազմել մի փոնդ եւ յատկացնել այդ՝ Քրիստափորի ընտանիքին եւ նրա զաւակի ուսման գործին»:

---

*Ժողովը անցնում է* «Պարսկահայ դաշնակցական կազմակերպութեան բռնելիք դիրքին՝ ներկայ պարսկահայ ընդհանուր յեղափոխական շարժման հանդէպ»:

*Նախքան բուն խնդրին անցնելը Վրէժստանի ներկայացուցիչ՝ Ստեփանեան առաջադրում է Ժողովին պարսկահայ վերջին Ռայոնական Ժողովի որոշումը՝ Վրէժը բաժանել երկու կենտրոնական կոմիտէների՝ I Թեհրանի, Իսպահանի եւ Գիլանի շրջանը, II Ատրպատականի՝ Թաւրիզի, Սալմաստի, Ուրմիի եւ Ղարադաղի շրջանը:*

*Ժողովը լսեց այդ առաջարկը եւ ի նկատի ունենալով, որ Պարսկաստանը չէ կարող երկու Կենտրոնական Կոմիտէի դրամական ցենզ ներկայացնել, ուստի չընդունեց այդ առաջարկը եւ որոշեց շարունակել՝ ճանաչել Պարսկաստանը իբրեւ մի Կ. Կոմիտէ, մինչեւ նա կարող կը լինի ներկայացնել երկու Կենտրոնական Կոմիտէի համապատասխան գործիչ ուժերի եւ դրամական ցենզ:*

Պարսկահայերի ինքնապաշտպանութեան գործը: *Ժողովը լսելով ներկայացուցչի այդ մասին տուած համառօտ զեկուցումը, պատճառաբանուած տեղի բնակչութեան վիճակագրական (75·000 հայ, 6 միլիոն պարսիկ) եւ պետական ու հասարակական աննպաստ պայմանները, առանձնապէս ծանրանալով ներկայ անար-*

*Նով ընդդէմ 5ի (որանց մէջ՝ Սեպուհը)։*

*Ահա բանաձեւը՝*

«Լսելով բանի հանգանակութեան մասին եղած զեկուցումն ու վիճաբանութիւնները, Ընդհանուր ժողովը, նկատի ունենալով՝

1) 1904ի Ընդհանուր ժողովի որոշումը, որ այդ ձեւի հանգանակութիւնը նկատած է իբրեւ բացարձակ չարիք,

2) 1905ի խորհուրդի վճիռը, որ կարգադրում է «դադարեցնել «Դրամ» կոմիտէի կողմից նոր դիմումներ անելը»:

Այլեւ նկատելով՝

1) Այն բարոյական լքումը, որ առաջ է բերել բանի հանգանակութիւնը հասարակական լայն խաւերում, թուլացնելով միաժամանակ մարմինների գործունէութիւնը,

2) Դաշնակցութեան եւ այլ մարմինների ունեցած դառն փորձերը, հակայեղափոխական հետեւանքները եւ կազմակերպական շարքերի քայքայումը,

Որոշեց՝

1) Խստիւ արգիլել բանի միջոցների գործածութիւնը հանգանակութեան գործում.

2) Ամենախիստ պատասխանատուութեան ենթարկել այն անդամներին եւ մարմիններին, որոնք կը շարունակեն դիմել բանի միջոցների.

3) Ազդու միջոցներ ձեռք առնել վերջ տալու այն բանի հանգանակութիւններին, որ կատարում են այլեւայլ քաղաքախնդիրներ, կազմակերպութեան անունից, գաղտնի կամ խարդախուած միջոցներով.

4) Ժողովի այս որոշման մասին յայտարարել կազմակերպութեան պաշտօնական օրգանի մէջ»:

Վռամեանի *բանաձեւը ստացաւ միայն 8 ձայն եւ որոշուեց, համաձայն ընդունուած սովորութեան, մըտցնել արձանագրութեան մէջ։*

*Ահա Վռամեանի բանաձեւը՝ բռնի հանգանակութեան մասին.*

«I Նկատելով, որ յեղափոխութեան վախճանական նպատակի համար, եթէ յեղափոխութիւնը իրաւունք կը համարէ իրեն՝ թէ՛ իր հետեւորդներու եւ թէ հակառակորդներու արիւնը թափել, անըմբռնելի փափկանկատութիւն մը պիտի ըլլայ մերժել նոյն հակառակորդներու դրամը պահանջել,

Նկատելով, որ ազատագրութեան կռուի հանգամանքը կը պահանջէ, որ ժողովրդի բոլոր դասակարգերը պարտաւոր են աջակցել, այն ինչ ունեւոր դասակարգը երբեք ինքնաբերաբար չեն օգնած ազատագրութեան այդ դատին,

Նկատելով, որ դրամագլուխը, նկատենք այդ իբրեւ պարզ դրամ թէ արտադրութեան միջոց, իբրեւ յաւելեալ արժէքի կուտակում, որոշ չափով համայնական սեփականութեան բնոյթ ունի,

Ժողովը անկարելի կը գտնէ մերժել բռնի հանգանակութիւնը, յեղափոխական սկզբունքի տեսակէտէ։

II Սակայն նկատելով նաեւ որ՝

Բռնի հանգանակութիւնը սիստեմի ձեւ ստանալով կովկասեան ինքնապաշտպանութեան տագնապալի օրերում, անբարոյացումի եւ դրամաշորթութեան տխուր երեւոյթի մը յանգաւ,

Ժողովը մերժեց անկէ ետք իբրեւ սիստեմ ընդունել, որոշելով ծանր պատասխանատուութեան ենթարկել զանցառու մարմինները, ի հարկին կազմալոյծ հռչակելով զանոնք։

III Ժողովը նկատելով միանգամայն որ՝

ա) Դրամի քանակութիւնը չէ, որ կ'անբարոյացնէ անոնք գործադրողը, այլ դրամի անկոնդրոլ եւ անբարեխիղճ գործածումը՝ անպատասխանատու մարդու ձեռքով, ոչ բուն յեղափոխական նպատակներու համար,

բ) Եթէ Դաշնակցութիւնը առաջիկային ունի կատարելիք ուժգին գործունէութիւն մը, մինչդեռ նախահաշիւը անկարող է գոհացում տալ բոլոր պահանջներուն,

Ժողովը Դաշնակցութեան խորհրդին կը վերապահէ բռնի հանգանակութիւն մը կատարելու բացառիկ որոշումը, հետեւեալ չորս պայմաններու տակ.

1) Եթէ Ընդհանուր ժողովի որոշումներու համաձայն կատարելիք կարեւոր ձեռնարկներ անիրագործելի կը մնան դրամի չգոյութեան պատճառով.

2) Երբ Դաշնակցութիւնը անկարող ըլլայ հայթայթելու որոշուած գումարը այդ ձեռնարկներու համար, տրուած պահուն.

3) Հանգանակութիւնը կը կատարուի որոշ յեղափոխական ձեռնարկի համար պահանջուած գումարին չափով.

4) Ձեռք բերուած գումարը չի կրնար գործածուիլ, որեւէ պարագայի տակ, ուրիշ որեւէ նպատակի համար, բացի այն նպատակէն, որուն համար հանգանակուած է»:

---

*Քուէարկւում է նաեւ ընկ. Զաւարեանի բանաձեւը Ջրաբերդի վերաբերմամբ եւ աննշան փոփոխութիւններով անցնում է միաձայն՝ բացառութեամբ Մուրատի։*

*Ահա այդ բանաձեւը.*

«Լսելով Ջրաբերդի շրջանի մասին տրուած զեկուցումը եւ գտնելով որ այնտեղ տիրող տնտեսական տագնապը եւ զանազան հարստահարութիւնները արդիւնք են կառավարական ընդհանուր անարխիայի, գիւղացու սակաւ անողութեան ու աղքատութեան, ինչպէս եւ յեղափոխական նախկին մարտիկներից ոմանց կամ խմբերի անբարոյական սանձարձակութեան,

Ընդհանուր ժողովը յայտարարում է 1) Դաշնակցութիւնից մերժւում են ժողովրդի վրայ բռնացող զինուորները եւ նրանց դէմ կռիւ է յայտարարւում կազմակերպական միջոցներով եւ 2) աւարառութիւնների, աւազակային խմբերի, ինչպէս եւ անարխիայի առաջն առնելու համար անհրաժեշտ է դատւում կազմակերպել եւ իրար շաղկապել գիւղերը. 3) կազմակերպել գիւղացիութիւնը, նպաստել նաեւ ռուս յեղափոխական շարժումներին, որոնց յաղթանակը միայն կարող է լուծել հողային տագնապը, բարձրացնելով թէ՛ տեղացուն եւ թէ գաղթականին, իրենց տնտեսական ծանր կացութիւնից»:

## 108ՐԴ ՆԻՍՏ (28 Ապրիլ, երեկոյ)

*Նախագահում է Մալումեան։*

*Ներկայ են 25 ժողովական։*

*Բացակայ են՝ Ստեփանեան, Սեպուհ, Վարդան, Ահարոնեան, Անդրանիկ։*

---

Նախագահ.— *Այսօրուայ նիստը համաձայն անցեալ օրուայ որոշման, զբաղուելու է բացառապէս Ցուցական Մարմնին վերաբերեալ հարցով։ Ներկայ է այդ մարմնի անդամներից մէկը եւս՝ ընկ. Թորգոմը, որ



կանչուած է յանձնաժողովի առաջարկութեամբ։ Նիստի 2 ժամը տրւում է Սաֆոյին, 1 ժամը պատասխանի եւ բացատրութիւնների, մէկ ժամն էլ յանձնաժողովին։ Այսօր նախագահութեան հերթը իմը չէ, Ահարոնեանինն է, որը բացակայ է. իսկ միւսներն էլ յանձնաժողովի անդամ են։ Դուք ոչինչ չունէ՞ք նախագահութեանս դէմ, Գ. Սաֆօ։*

Սաֆօ.— *Ոչ։*

Նախագահ.— *Իսկ դո՞ւք, ընկ. Թորգոմ։*

Թորգոմ.— *Ոչ։*

Նախագահ.— *Խօսքը ձերն է, Գ. Սաֆօ։*

Սաֆոն *շարունակում է նախորդ նիստում կիսատ մնացած հակազեկուցումի շարունակութիւնը, որ վերաբերում է Ցուցականի կազմակերպական հարցին։ Մասնաժողովի զեկուցման Գ. մասին, որ վերաբերում է ընկերական թիւրիմացութիւններին եւ յատկապէս Քրիստափորին, Սաֆոն պատասխանում է բանաւոր։*

Սաֆօ.— *Գալիս է մեղադրութեան երրորդ մասը, որ ամենածանրն է. դա ընկերական յարաբերութիւնների խնդիրն է։ Այս մասը կազմուած է բաւականին լաւ, եւ մենք ոչինչ չէինք ասի, եթէ չլինէին մի քանի հակասութիւններ, որ եւ մատնանիշ կ'անենք։ Հարցը ընկերների մասին է՝ Սարգիսի, Աշոտի եւ գլխաւորապէս Քրիստափորի։ Քննադատը կարծում է, որ այդ մասը չէ կարելի անտես առնել եւ պէտք է զրպարտութիւնը պարզել։ Զրպարտութիւն բառը՝ քննադատը շատ շտապ է գործածում, առանց իրեն համար պարզելու հարցի էութիւնը։ Ինձ թւում է, որ շատ ծանրակշիռ հանգամանքներ կային մեր այսպէս վերաբերմունքին, այն էլ դէպի մեռած մարդը։ Այստեղ ասուած է եղել, որ Էլլէնը [Քրիստափորը] պէտք է հեռանայ եւ Ռուբինային մօտը չպիտի պահի. իսկ Սաֆոյի եւ Էմիլի մասին այդպիսի որոշում չէ եղել։ Դրա պատճառն այն է, որ որոշումը շատ շտապ է եղել եւ անցադիրը բաժանելու ժամանակ չենք ունեցել։ Ապա պարտք եմ համարում յիշել, որ իմ արձանագրութեան մէջ երբեք Էլլէնին չէ վերագրւում եղեռնագործութիւն։ Ի՞նչպէս կարելի է, որ այդպիսի բան ասող մարդիկ նոյնպէս առաջարկեն նրա զաւակը ապահովել։ Ես չեշտում եմ, որ այն ինչ որ մենք ենք ասել Էլլէնի մասին, ամենաբարձր բանն է, որ կարելի է ասել. երբ բանաստեղծները երգեր են յօրինում, եւ ուրիշները գովասանքներ մատուցանում, դա այն արժէքը չունի, ինչ որ Ցուցականի խօսքը. նրանք ասում են նրան «ընկեր», այն էլ՝ «աւագ ընկեր»։ Ես կը կարդամ ձեզ արձանագրութիւններից մի կտոր. «Միաձայն որոշուեց Քրիստափորի եւ Շապուհի թաղման ծախքը........ (բերել շարունակութիւնը)»։ Այսպէս ուրեմն, յանձնախմբի բերած «դառն հեգնանք է» արտայայտութիւնը, Ցուցականի վերաբերմամբ դէպի Քրիստափորը, միանգամայն անտեղի է։ Մենք բացարձակ եւ մանրամասն գրել ենք մեր մտածումները Էլլէնի մասին. տըւէք ինձ մեր գրած նամակը այդ առթիւ...։ Բայց ես կ'ասեմ եւ բերանացի, միայն խնդրեմ, Օրիորդ, ի չարը գործ մի՛ դնէք իմ համբերութիւնը։ Այնտեղ գրըւած է մի երեսաչափ, որ Վիտոշի աղէտը հետեւանք է Քրիստափորի մէջ այդ վայրկեանին սառնութեան եւ շրջահայեցողութեան բացակայութեան. այդ նամակում օրինակ եմ բերել, թէ ինչպէս մի բաժակ ջուր տանելու համար պէտք է սառնութիւն. եթէ մարդ վըրդովուած է՝ կը թափէ։ Իսկ մի ուժանակի փորձի պէս բանի ժամանակ, պէտք է որ մարդ սառը, կենտրոնացած վիճակի մէջ լինի. բաւական է վրդովուել՝ եւ աղէտով կը վերջանայ, ինչպէս եւ եղաւ։ Եթէ Քրիստափորը վրդովուած չլինէր, նա թոյլ չէր տայ, որ ռումբը դզէր անփորձ մարդը, որ պատրոյգը կարճ լինէր, խշշոցը լսելուց յետոյ գցէր։ Գաւիլլոնից գցելու համար խշխշոց լսել պէտք չէր. այդ սխալը նա չէր կարող չնկատել, եթէ անդորր լինէր։ Ահա այդ հոգեկան դրութիւնն է եղել պատճառը. իսկ որ նա վրդովուած էր մեր դէմ, վրդովուած էր Վռամի դէմ, այդ փաստ է եւ մի ստիպէք այժմ կրկնելու. քանի որ դատ է լինելու, այն ժամանակ կ'ասեմ։ Վրդովուելու շատ պատճառներ ունէր։ Ոսկեհանքի [Իզմիրի] փողին նա հակառակ էր. մենք պնդում էինք Լիսին [Գոլսոյ ?] ուղարկելու 3000 ռուբլի. նա դէմ էր, դարձեալ մենք պնդում էինք. տասնեակ առիթներ ունէր վրդովուելու, եւ այդ վրդովմունքը չէր կարող նրան սառնասիրտ դրութեան մէջ թողնել։ Եւ այդ առթիւ, մեր գրածն ու ջնջածը ի չարն է գործ դրել յանձնաժողովը։ Թոփչեանը չեշտում է, որ որոշ տեղեր են թողնուած, որ կարելի է կարդալ, եւ իբր թէ այդ միտումով է արած. այդ սխալ է, — դա իմ գրելու ձեւն է։ Ես վերջացրի։*

---

*5 րոպէ ընդմիջում։*

Ռուբինա.— *Ես իբրեւ Ցուցականի գործին մասնակից մի անձ, կ'ասեմ մի քանի խօսք, որպէսզի տեսնէք թէ ինչպէս փոխուեց ձեռնարկութեան ծրագիրը եւ թէ ի՛նչ վերաբերմունք էր ցոյց տալիս Սաֆոն։ Մենք եկանք Զմիւռնիայից Սեպտեմբերին, եւ քիչ ժամանակ յետոյ գնացինք կառքով Սելամլըք. կառքով մօտ չեն թողնում. մենք կանգնեցուցինք եւրոպացւոց տեղը. ես եւ հայրիկը [Քրիստափորը] դիտում էինք տերրասից. եւ նա այդ ժամանակ որոշեց ռումբով գործել տերրասից. կառքի մասին չէինք էլ մտածում։ Երբ Կարոյին եւս հեռացրին եւ որովհետեւ խնձորները [ձեռնառումբերը] գլխաւոր զէնքն էին մեզ համար, հայրիկն ի՛նքը որոշեց գործը գլուխ բերել։ Սաֆոն ասում էր՝ խընձորները կատարելագործուած չէին. չգիտեմ ի՛նչ հիմք ունի։ Պակաս էր միայն զսպանակը, որի համար մի քանի յաջող փորձեր կատարուել էին Սոֆիայում։ Երբ ես Վիեննայից դարձայ Պոլիս, Սաֆոն զանազան յօդ-*

## ՆԱԽԱՀԱՇԻՒ 1907 ԹՈՒԻ

| | մնացորդ 1906 թուից | սպասելիք 1907 թուին | տեղական ծախս 1907ին | տարեկան եկամտից 5% անձեռնմխելի | մնացորդ՝ տրամադրելի ընդհանուր ծախսերի համար |
|---|---|---|---|---|---|
| | հազար ֆր. | հազ. ֆր. | հազ. ֆր. | հազ. ֆր. | ֆր. |
| Արեւել. Բիւրօ | 15 | 15 | – | 0·75 | 29·250 |
| Ռուսաստան | 40 | 60 | 30 | 3 | 67·000 |
| Մեծ Քաղաք | 5 | 25 | 12·5 | 1·25 | 16·250 |
| Նաւահանգիստ | – | 20 | 10 | 1 | 9·000 |
| Մրգաստան | 2 | 30 | 15 | 1·5 | 15·500 |
| Քար | – | 20 | 7 | 1 | 12·000 |
| Ջրաբերդ | – | 20 | 6 | 1 | 13·000 |
| Ապառաժ | 10 | 20 | 10 | 1 | 19·000 |
| Այգեստան | – | 20 | 10 | 1 | 9·000 |
| Ժլատ–Նալբանդ | 12·5 | 20 | 8 | 1 | 23·000 |
| Ռուս. Ուսանող. | – | 5 | 1 | 0·25 | 3·750 |
| Կարմիր Խաչ | – | 20 | – | 1 | 19·000 |
| Վրէժ | 0·2 | 20 | 10 | 1 | 9·200 |
| Զէֆոն | 150 | – | – | – | 150·000 |
| Վասպուրական | 50 | 10 | 5 | 0·5 | 54·500 |
| Մուշ–Սասուն | 10 | 10 | 8 | 0·5 | 11·500 |
| Զաւրեանի միսիան | 26 | – | – | – | 26·000 |
| Արեւմտեան Բիւրօ | 12 | 25 | – | 1·25 | 35·750 |
| Ամերիկա | 50 | 60 | 12 | 3 | 95·000 |
| Բալկան | – | 25 | 5 | 1·25 | 18·750 |
| Արտասահմ. Ուս. | – | 1·2 | 0·2 | 0·06 | 940 |
| Եգիպտոս | – | 5 | 1 | 0·25 | 3·750 |
| Վիշապ | 0·15 | 5 | 3 | 0·25 | 1·900 |
| Տրապիզոն | 18·482 | 1 | 0·5 | 0·05 | 18·932 |
| Ոսկեհանք | – | 10 | 5 | 0·5 | 4·500 |
| Լեռնավայր | 10 | 4 | 3 | 0·2 | 10·800 |
| Գումար ֆր. | 411·332 | 451·200 | 162·200 | 22·566 | 677·772 |

| Ընդհանուր գումարների եւ ծախսերի բաշխումը | ֆրանք |
|---|---|
| Վասպուրականին | 172·000 |
| Մուշ–Սասունին | 83·000 |
| Ցուցականին | 35·000 |
| Տեռորական մարմնին | 23·000 |
| Արեւելեան Բիւրոյին | 11·000 |
| Արեւմտ. Բիւրօ եւ «Դրօշակ»ին | 16·000 |
| «Pro Armenia»ին | 15·000 |
| Եւրոպական պրոպագանդ | 15·000 |
| Ռազմագիտական մասնախմբին | 48·000 |
| Զէնքի փոխադրութեան | 37·000 |
| Բանտարկեալների օգնութիւն | 23·000 |
| Փոքր Ասիային | 8·000 |
| Կիլիկիային | 15·000 |
| Կարինին | 12·000 |
| Զէֆոնին | 105·000 |
| Կովկ. ինքնպշտ. եւ քաղ. կռուին | 53·000 |
| Կովկ. կազմի վերակազմութեան | 30·000 |
| Արեւել. շրջանի պրոպագանդ | 64·000 |
| Անակնկալներ | 66·000 |
| Բուլղարիոյ դպրոցին | 46·000 |
| Ընդհ. Ժողովի ծախս | 31·000 |
| Գումար | 913·000 (*) |

(*) Մարմիններից կը ստացուի 677·772
«Փոթորիկ»ից պիտի վերցնել 235·228

*Բացի վերոյիշեալից, պէտք է յատուկ հանգանակութիւն կատարուի յօգուտ Մշոյ եւ Սասնոյ ռովեալներին՝ 100·000 ֆր.:*



### 113ՐԴ ՆԻՍՏ (30 Ապրիլ, առաւօտ)

*Նախագահում է Մալումեան:*
*Ներկայ են 28 ժողովական:*
*Բացակայ են՝ Վարդան, Անդրանիկ:*

---

*Օրակարգն է ընտրութիւնների նախապատրաստութիւնը: Նախքան օրակարգին անցնելը, Ընդհանուր ժողովը որոշեց ա) ընտրել Սասունի հանգանակիչ մասնաժողովի անդամները՝ Ընդհանուր ժողովի կողմից, բ) եւրոպական հանգանակութեան անդամները ընտրել Արեւմտեան Բիւրոյի կողմից եւ գ) Դաշնակցութեան կովկասեան խմբագրական կազմի ընտրութիւնը թողնել Արեւելեան Բիւրոյին:*

---

*Առաջարկւում են Մուշ–Սասունի եւ Վասպուրականի Պատասխանատու Մարմնի համար թեկնածուներ՝*

| | |
|---|---|
| 1) Գէորգ Չաւուշ | 6) Տաճատ |
| 2) Կոմս | 7) Վահագն [Տաթեւեան] |
| 3) Սարգիս Վարդանեան | 8) Վարդան վարդապետ |
| 4) Արամ | 9) Մուրատ [Սեբաստ.] |
| 5) Ռոստոմ | |

*Չաւուշի վերաբերմամբ երաշխաւորում է Արամը:*

Վռամեան.— *Իմ կարծիքով սխալ է Չաւուշին Պատասխանատու Մարմնի անդամ ընտրելը, քանի որ նա ապստամբ է, Թուրք կառավարութիւնը ճանաչում է եւ հետամուտ է լինում: Հերիք է, որ նա Վանում երեւայ, իսկոյն աղմուկ կը բարձրանայ: Իմ կարծիքով կարելի է նրան կարճ ժամանակով Երկրից դուրս բերել:*

Մուրատ.— *Եթէ մտադրութիւն չունինք ապստամբական ցոյց անելու եւ քանի որ բիւդճէն էլ չի ներեր այդ, ես էլ համոզուած եմ, որ աւելի լաւ է նրան դուրս բերել. խաղաղ՝ այստեղ որոշուած տակտիկով գործելու համար հարկաւոր են աւելի ինտելիգենտ ուժեր:*

Ռոստոմ.— *Խնդիրը սխալ է դրւում: Սա տակտիկի հարց է, հետեւապէս պէտք է թողնել Երկրի Պատասխանատու Մարմնին: Քանի որ Չաւուշը Երկրումն է, պէտք է ընդունել նրա թեկնածութիւնը:*

Արամ.— *Ես էլ կանգնած եմ Ռոստոմի տեսակէտի վրայ, աւելի լաւ է թողնել այս հարցը Երկրի ընկերներին: Սխալ է կարծել, որ Չաւուշը սարերի վրայ է. ընդհակառակն, նա միշտ դաշտումն է, գիւղերի մէջ: Ճիշդ չէ ընկ. Մուրատի դիտողութիւնը: Մեզ ոչ թէ պակասում է դրամը, ոչ թէ բիւդճէն է որ անբաւարար է, այլ կազմակերպուած զօրաւոր ուժն է պակասում: Այժմ շատ աւելի դրամ կայ, քան երբեւիցէ:*

Ռոստոմ.— *Չաւուշին հեռացնելով, ոչինչ չենք շահի: Նրա տեղ նոր փախստականներ կը յառաջանան: Քանի որ նա հեղինակաւոր անձ է, ծանօթ է շրջանին, մի շարք կապեր ունի եւ վառ է պահում գործը, հետեւապէս մինչեւ իսկ անհրաժեշտ է նրա ներկայութիւնը այնտեղ:*

Նախագահը *եզրակացնում է, յայտնելով, որ Չաւուշի թեկնածութիւնը մնում է ցանկի մէջ:*

Նոյնը *կոմսի, Սարգիս Վարդանեանի, Արամի, Մուրատի եւ Տաճատի թեկնածութեան վերաբերմամբ: Ընկ. Արամը խնդրում է մի քանի անգամ իրեն դուրս հանել ցանկից եւ տեղը թողնել միւս ընկերներին:*

Վռամեան.— *Ես դնում եմ այս հարցը — արդեօք Վասպուրականի մարմինը դրսի ուժերի կարիք ունի՞, թէ տեղական ուժերը հերիք են:*

Իշխան.— *Մինչեւ այժմ եղածը բաւարար է համարուել, բայց ներկայումս մեծ կարիք կայ, մանաւանդ, որ երկուսը հեռանում են:*

Արամ.— *Մենք ընդհանրապէս պատրաստուած ընկերների պակասը ունենք, կազմը ուժեղացնելու համար, բայց ոչ այս կամ այն դիրքի համար առանձնապէս: Կովկասում երկու ուժեր աւելի առաջ ունենք, վերադառնալիս նրանց պէտք է վերցնենք հետներս:*

Զօհրաբեան.— *Ես ուզում էի գիտնալ, թէ կովկասից ղրկուած տղաները ի՞նչ դեր են ստանձնում այնտեղ. արդեօք նրանք հեղափոխութեամբ տեղ գտնո՞ւմ են կենտրոնական կոմիտէի կազմի մէջ:*

Արամ.— *Արեւելեան կամ Արեւմտեան Բիւրոների կողմից ուղարկուած եւ յանձնարարուած ընկերները ընտրւում են ընդհանրապէս կենտրոնական կոմիտէի անդամներ:*

---

*Արեւելեան Բիւրոյի համար առաջարկւում են հետեւեալ թեկնածուները՝*

| | | |
|---|---|---|
| 1) Զաւարեան | 6) Թոփչեան | 11) Մինասեան |
| 2) Համօ | 7) Անդրանիկ | 12) Գիւլխանդանեան |
| 3) Ռոստոմ | 8) Սահակեան | 13) Բարսեղեան |
| 4) Գարօ | 9) Վռամեան | 14) Զարզարեան |
| 5) Յովեան | 10) Ահարոնեան | 15) Զաւրեան |
| | | 16) Գագիկ |

*Արեւմտեան Բիւրոյի համար առաջարկւում են 9 թեկնածուներ, որոնք հետեւեալներն են.*

| | |
|---|---|
| 1) Մ. Յովհաննէսեան | 6) Մինասեան |
| 2) Մալումեան | 7) Վռամեան |
| 3) Ահարոնեան | 8) Մար |
| 4) Զարզարեան | 9) Գագիկ |
| 5) Յովեան | |

1) *Անդրանիկի եւ Մուրատի առաջարկը, որի վերաբերմամբ Ժողովը որոշեց, մտցնելով այդ առաջարկը արձանագրութեան մէջ, յանձնարարել Սասունի հանգամանկիչ յանձնաժողովին կարգադրել այդ գործը։*

2) *Ցուցական Մարմնի երեք անդամների՝ Սաֆոյի, Թորգոմի եւ Քրիսի նամակը։*

*Ժողովը որոշեց այդ թուղթը կցել Ցուցական Մարմնի տեղեկագրին եւ անցնել հերթական հարցերին, առանց նրա վրայ կանգ առնելու։*

*Ահա Անդրանիկի եւ Մուրատի առաջարկը․*

«Մենք ստորագրեալքս կը խնդրենք Ընդհանուր Ժողովէն, որ պարտք դնէ նաեւ Սասունի նպաստամատոյց յանձնաժողովին վըրայ, որ ուշադրութեան առնէ Սասունէն եւ Մուշի դաշտէն 60 որբերու տեղին վրայ դաստիարակութեան խնդիրը։

Մենք այդ 60 որբերու կրթութեան համար (40 Սասունէն եւ 20՝ Դաշտէն) հաշուած ենք 10·000 ռուբլի, ամբողջ հինգ տարուայ համար, ուրեմն տարեկան 2000 ռուբլի։ Իսկ անոնց հոգատար հսկողութիւնը յանձնել Վարդան Վարդապետին։

Այդ որբերը պէտք է կրթուին տեղին վրայ եւ բաժնուին շըրջանի չորս վանքերուն մէջ՝ Առաքելոց, Ս. Յովհաննէսի, Ս. Կարապետի եւ Մատնավանքի։

Մենք այս առաջարկը կ'ընենք, յուսալով որ Ընդհանուր Ժողովը օգտակար կը գտնէ եւ նպատակայարմար՝ յեղափոխական եւ բարոյական տեսակէտով եւ միանգամայն դրական յարգանք մը կ'ընծայէ հերոսական լեռնականներու յիշատակին, անոնց որբերուն ապագան ապահովելով»։

---

*Սրանից յետոյ Ժողովը անցաւ ընտրութիւններին։*

*Բոլոր ընտրութիւնները կատարուեցին գաղտնի քուէարկութեամբ։*

Վասպուրական–Տարօնի Պատասխանատու Մարմնի *անդամ ընտրուեցին՝*

1) *Գէորգ Չաւուշ՝ 27 ձայնով․*
2) *Սարգիս Վարդանեան՝ 27 ձայնով․*
3) *Կոմս՝ 25 ձայնով․*
4) *Տաճատ՝ 22 ձայնով․*
5) *Մուրատ՝ 21 ձայնով։*

*Ընտրութեանը մասնակցում էին 26 հոգի 27 ձայնով։*

---

Արեւելեան Բիւրոյի ընտրութիւնը․

Զաւարեան․— *Առաջարկում եմ, նոր ուժեր առաջ քաշելու համար, հին ընկերներին, որոնք տարիներից ի վեր եղել են Արեւելեան Բիւրոյում, դուրս հանել Արեւելեան Բիւրոյի թեկնածուների ցանկից։ Հին ընկերները, նոյնիսկ առանց ընտրուելու, միշտ էլ մասնակցել են Արեւելեան Բիւրոյի նիստերին վճռական ձայնով եւ կը մասնակցին։ Այս բանը, որ միշտ էլ կեանքի մէջ իրագործուել է, մենք կարող ենք այժմ դարձնել որոշում եւ մտցնել կանոնադրութեան մէջ։*

Զոփուրեան․— *Այդ առաջարկը խիստ անգործնական է եւ սկզբունքով սխալ։ Անկարելի է այդպիսի օրէնք մտցնել մեր գործերու մէջ․ նրանց աջակցութիւնը, ինչպէս մինչեւ այժմ եղել է, կը լինի միայն ընկերական–բարոյական հողի վրայ դրուած, եւ ոչ թէ պաշտօնական։*

Զարեան *միանում է Զաւարեանի կարծիքին, առաջարկելով որ Ժողովը արտօնութիւն տայ՝ ընկերների վճռական ձայնով մասնակցելուն։*

Թոփչեան․— *Ես սկզբունքով միանգամայն հակառակ եմ Զաւարեանի առաջարկին։ Մենք անկարող ենք «ցուցակ ծառայութեան» կազմել եւ արտօնութիւններ տալ այս կամ այն անձանց։ Սրանով ստեղծում ենք մի խիստ անյարմար դրութիւն։ Դրանք, այդ իրաւատէրերը կը գան, որոշումներ կը տան եւ կը հեռանան, առանց հետեւելու որոշումների գործադրութեան։ Սա ընդունելի չէ։ Այժմ պէտք է ընտրել նրանց, որոնք բովանդակ կուսակցութեան վստահութիւնն են վայելում։ Ներկայ կրիտիկական պայմաններում պէտք է զգուշութեամբ մօտենալ ընտրութեանը եւ հիմնական փոփոխութիւններ չմտցնել հին կազմի մէջ։*

Զաւարեան․— *Եթէ մեր ընկերներից մի քանիսը վախենում են այդ իրաւատէր անդամներից, այն ժամանակ ես կ'առաջարկեմ որ նրանց մասնակցութիւնը լինի խորհրդակցական եւ ոչ վճռական ձայնով։*

*Այս առաջարկները քուէարկութեան դրուեցին եւ մերժուեցին։ Փորձուած ընկերների մասնակցութիւնը կը շարունակուի նոյն հողի վրայ, ինչ մինչեւ այժմ եղել է։*

Գագիկ *մի քանի փոփոխութիւններ է անում Զաւարեանի առաջարկի մէջ, ասելով, որ ոչ թէ ընդհանրապէս բոլոր հին ընկերներին պիտի ձայնի իրաւունք տալ, այլ մի քանի փորձուած, պատրաստուած ընկերների, որոնց կը մատնանշի Ընդհանուր Ժողովը։*

*Այս առաջարկն էլ մերժուեց եւ վճռուեց Արեւելեան Բիւրոյի թեկնածուների ցանկը պահել անփոփոխ։*

Արեւելեան Բիւրոյի անդամ ընտրուեցին՝

1) *Համօ 27 ձայնով*
2) *Զաւարեան 24 ձայնով*
3) *Գարօ 28 ձայնով*
(*Կրկնաքուէարկութեամբ*)
4) *Թոփչեան 23 ձայնով*
5) *Վռամեան 19 ձայնով։*

*Մասնակցում էին առաջին ընտրութեան միջոցին 27 հոգի՝ 28 ձայնով․ իսկ կրկնաքուէարկութեան ժամանակ 23 հոգի՝ 24 ձայնով։*

---



Արեւմտեան Բիւրոյի ընտրութիւնը․

Մալումեան *հրաժարւում էր քուէարկուել Արեւմտեան Բիւրոյի համար․ համաձայնեց քուէարկուել այն պայմանով միայն՝ որ Արեւմտեան Բիւրոյի համար 3ի փոխարէն 4 անդամ ընտրուեն, որպէսզի ինքը, ցանկացած ժամանակ, կարողանայ իրեն ազատ համարել Արեւմտեան Բիւրոյի աշխատանքներից եւ մտնել այն ձեռնարկի մէջ, որը հաստատուած է Ժողովի կողմից։*

*Ժողովը ընդունեց այդ առաջարկը։*

Արեւմտեան Բիւրոյի անդամ ընտրուեցին՝

1) *Միքայէլ Յովհաննիսեան 27 ձայնով*
2) *Խաչատուր Մալումեան 24 ձայնով*
3) *Յովնան Դաւթեան 22 ձայնով*
4) *Սարգիս Մինասեան 18 ձայնով։*

*Վերջին երկուքը ընտրուեցին կրկնաքուէարկութեամբ։*

*Առաջին քուէակութեան մասնակցում էին 26 հոգի 27 ձայնով․ կրկնաքուէարկութեանը՝ 23 հոգի 24 ձայնով։*

*Ի նկատի ունենալով, որ երկու ընկերների՝ Յովհաննիսեանի եւ Դաւթեանի համաձայնութիւնը նախօրօք չէ առնուած, Ժողովը որոշեց, մերժման դէպքում, պակաս անդամների թիւը լրացնեն երկու Բիւրոները․ բացի այդ, երկու Բիւրոներին թողնուեց նաեւ այդ երկու ընկերների նիւթական ապահովութեան խնդիրը։*

---

Ցուցա–տեռորական մարմին։

*Քուէարկութեամբ Ցուցա–տեռորական Մարմնի անդամ ընտրուեցին՝*

1) *Մալումեան* 2) *Անդրանիկ* 3) *Վահագն։*

*Այս մարմնի համար նախորոշուած 5 թեկնածուները չունենալու պատճառով, Ժողովը՝ մտքերի փոխանակութիւնից յետոյ, որոշեց բաւականանալ 3 հոգի ընտրելով։ Համաձայն ընդունուած բանաձեւի (տես արձանագրութիւն), Ժողովը ընտրեց Ցուցա–տեռորական Մարմին, որը պէտք է տեսնէ բոլոր նախապատրաստութիւնները եւ ստեղծէ միջազգային տեռորական գործօն կոմիտէն։ Դրա հետ միասին՝ տեռորիստական կազմուած մարմինը պիտի մշակէ ցուցական գործողութիւններին վերաբերեալ մի ծրագիր, եւ ներկայացնէ երկու Բիւրոներին կամ Խորհրդի հաստատութեան։*

### 121ՐԴ ՆԻՍՏ (4 Մայիս, առաւօտ)

*Նախագահում է Մալումեան։*
*Ներկայ են 27 ժողովական։*
*Բացակայ են՝ Մուրատ, Զարդարեան, Անդրանիկ։*

---

*Վռամեան, Ջելալեան, Մինասեան եւ Զարդարեան ստորագրութեամբ առաջարկ կը բերուի Ժողովին վերըստուգելու Սարհատի մասին Ապրիլ 22ի երեկոյեան նիստի որոշումը։ Այս ընկերները կ'առաջարկեն՝ Ընդհանուր Ժողովի կողմէն բաւականանալ միայն խիստ յանդիմանութիւն կարդալով Սարհատին, առանց մըտնելու Լեռնավայրի Պատասխանատու Մարմնի վճռին վերաքննութեան մէջ, որպէսզի այդպիսով միջոց տրուի Սարհատին՝ ինքզինքն ուղղելու եւ օգտակար ըլլալու, առանց իւր գլխու վրայ կախուած ունենալու Ընդհանուր Ժողովի վճիռը։*

Զաւարեան *կը յայտնէ, թէ Սարհատ կազմակերպական դրամներու անբարեխիղճ գործածութեան համար Լեռնավայրի ընկերական ժողովի մը որոշումով հեռացուած է, եւ մինչեւ իւր աւելորդ ծախսած 750 Ֆրանքը չհատուցանէ կազմակերպութեան, չի կրնար մնալ շարքերու մէջ։*

*Ժողովականներից շատերը բողոքներ կը բարձրացնեն, թէ անտեղի է այլեւս զբաղուիլ Սարհատի գործով, աւելի կարեւոր խնդիրներ կան սեղանի վրայ, թէ վերաքննութեան այդ առաջարկը 10 ընկերներու կողմէ ստորագրուած ներկայացուելու էր Ժողովին։*

Նախագահը *խնդիրը փակուած կը նկատէ ժողովականներու մեծամասնութեան պահանջով։*

*Վռամեան կը բողոքէ Ժողովի այդ հապճեպ որոշման դէմ եւ կը խնդրէ իր բողոքը արձանագրել։*

---

*Ժողովը կ'անցնի* Ծրագրի քննութեան․

Զաւարեան *կը կարդայ իր բանաձեւը՝ Դաշնակցութեան նպատակը եւ հիմնական պահանջները ուրուագծող։*

Թոփչեան *կը կարծէ, որ կուսակցութեան ծրագիրը պէտք է որոշապէս երկու մասէ բաղկանայ՝ Թրքահայկական եւ կովկասահայկական․ գրեթէ անփոփոխ թողնելով 1892ի ծրագրային հատուածը, պէտք է սպասել մինչեւ որ Թուրքիոյ դաշնակցական Ռայոնական Ժողով մը գումարուի ու մշակէ իր պահանջները։ Այդ բաժանումով անխուսափելի կը դառնան անշուշտ կրրկնութիւնները երկու մասերուն մէջ․ բայց մոռնալու չէ որ Զաւարեանի նախագծի պահանջներուն մանրամասնութիւնները հետաքրքրութիւն չեն ներկայացներ Թուրքիոյ հայերուն համար։*

# Բ. — ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՆՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## (1907 Մայիս 20)

Իր 117-118րդ նիստին, Ընդհանուր ժողովը ընտրած է ԻՆՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ մը (տեսնել էջ 285), Ծրագրի, կազմակերպական կանոններու եւ Ընդհ. ժողովի բանաձեւ-որոշումներու վերջնական խմբագրութեան, ինչպէս նաեւ առկախ մնացած կարգ մը հարցերու լուծում տալու պարտականութեամբ: Ընդհանուր ժողովի ատենագրութեանց կցուած է ԻՆՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ներկայ ամփոփ արձանագրութիւնը, հաւանաբար Ա. Վռամեանի ձեռագրով, եւ ստորագրուած՝ ՄՀԵՐԵԱՆ (Հ. Օհանջանեան), Ե. ԹՈՓՉԵԱՆ, Ա. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆ, ԳԱԳԻԿ (Ստ. Տէր Մկրտչեան), ՌՈՍՏՈՄ, Ա. ՎՌԱՄԵԱՆ, Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ (Ակնունի), Ս. ՕՀԱՆԵԱՆ (Անտոն, Ս. Զաւարեան) եւ Ս. ՄԻՆԱՍԵԱՆ. նաեւ՝ փոխանդամ ԲԱՐՍԵՂԵԱՆ: Միեւնոյն ձեռագրով, կցուած է նաեւ Ցուցակաձի մասին տրուած ամբողջական որոշումը:

Ընդհ. ժողովից ընտրուած եւ լիազօրութիւն ստացած կարգաւորելու այն խնդիրները, որոնք յիշատակուած են ժողովի ատենագրութիւններուն մէջ, ինչպէս եւ միւս յարակից խնդիրները, Իննի Յանձնաժողովը վերջացրեց հետեւեալ աշխատանքները եւ կայացրեց հետեւեալ որոշումները·

1.— Վերջնականապէս խմբագրեց եւ տպագրութեան յանձնեց Դաշնակցութեան «Կանոնագիրը»:

2.— Լրացրեց եւ Դիւանի ստորագրութեամբ վաւերացրեց Ընդհ. ժողովի ատենագրութիւնները, որոնք պիտի մնան Արեւմտեան Բիւրոյի մէջ, եւ որոնց կարեւոր մասերը՝ խմբագրուած լոյս պիտի տեսնեն առանձին գրքոյկով:

3.— Մշակեց եւ լրացրեց Ընդհ. ժողովի որոշումբանաձեւերը, որոնք լոյս պիտի տեսնեն «Դրօշակ»ի մէջ եւ այլ մարմինների համար, զանազան յապաւումներով:

4.— Որոշեց ձեռնարկել Կովկասում հանգանակութիւն Մուշ-Սասունի օգտին, յանձնելով այդ գործը բժիշկ Զաւրեանին, Կ. Խատիսեանին եւ Արեւելեան Բիւրոյի անդամներէն մէկին:

5.— Կազմել Բեդերպուրկի մէջ մի ժամանակաւոր կոմիտէ, բաղկացած Դումայի դաշնակցական պատգամաւորներից, Արեւելեան Բիւրոյի անդամ Անտոնից [Զաւարեան] եւ Զաւրեանից, այնտեղի հետ կապուած գործերը կարգադրելու համար:

6.— Կցել «Կանոնագրին» մի փոքրիկ գլուխ, համաձայն Ընդհ. ժողովի ցանկութեան, վերաբերմամբ արհեստակցական եւ գիւղացիական միութիւններին եւ քաղաքական խմբերին:

7.— Ընդհ. ժողովը դոսիէի [թղթածրարի] մէջ եղած հարցերու եւ գանգատներու վերաբերմամբ, վճռեց յայտնել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներին, ընթացք տալու համաձայն այն որոշման՝ որ կայացրել է Իննի Յանձնաժողովը (տես՝ այդ մասին կայացրած որոշումները պարունակող տետրակը: Հարցերը թուով 22 են):

8.— Համաձայն Ընդհ. ժողովի տուած որոշման, Իննի Յանձնաժողովը մշակեց եւ ընդունեց հետեւեալը·

### I.— *Հայ-Թրքական ընդհարումներ*

Քննութեան առնելով կովկասեան մարմինների մանրամասն զեկուցումները հայ-թրքական ընդհարումների մասին, որոնք աղմկեցին ամբողջ Անդրկովկասը 1905, 1906 թուականներին, Դաշնակցութեան Ընդհ. ժողովը, լեցուած խորագոյն վշտով երկու հարեւան ժողովուրդները կործանող այդ իրողութեան հանդէպ, եւ նկատելով որ՝

1.— Այդ թշնամութիւնը զգալապէս վնասում է ընդհանուր յեղափոխութեան գործին,

2.— Որ ցարական կառավարութիւնը բոլորովին տրամադիր չէ հրաժարուել իր պառակտող քաղաքականութիւնից,

3.— Որ թուրք անգիտակից ամբոխը հարստահարող բէգութիւնն ու հոգեւորականութիւնն, մերթ իր շահերից դրդուած, մերթ արտաքին քաղաքական պրոպագանդի ազդեցութեան տակ, շարունակում է շահագործել մասսաների տգիտութիւնն ու հակահայկական տրամադրութիւնները,

Որոշեց՝

ա) Յանձնարարել Դաշնակցութեան բոլոր մարմիններին՝ համերաշխութեան ընդհանուր եւ զօրեղ պրոպագանդ մղել, գրաւոր եւ բանաւոր, ոչ միայն հայ այլեւ թուրք ժողովուրդի համար:



բ) Ջանք չխնայել առաջ բերելու, ուղղակի կամ թուրք մտաւորականութեան միջոցով, յեղափոխական կազմակերպութիւններ մեր հարեւան ժողովրդի շարքերում, իբրեւ լաւագոյն միջոց՝ խլելու անգիտակից մասսաները մոլորեցնող թուրք տարրերի ազդեցութիւնից:

գ) Խստօրէն հալածել հայ ժողովրդի բոլոր խաւերի մէջ այն տարրերն, օրգաններն ու անհատները, որոնք խօսքով թէ գործով, յաճախ անգիտակցաբար, գրգռում են փոխադարձ ատելութիւններ եւ առիթ տալիս թշնամութեան վերսկսման:

դ) Աջակցել այն թուրք կազմակերպութիւններին, հրատարակութիւններին եւ անհատներին, որոնք ծառայում են երկու ժողովուրդների համերաշխութեան եւ մերձեցման:

ե) Յեղափոխական կապեր հաստատել հայ եւ թուրք աշխատաւորների մէջ՝ քաղաքներում, եւ գիւղացիութեան մէջ՝ գիւղերում, միացած ուժով կռուելու այն քաղաքական եւ տնտեսական գործօնների դէմ, որոնք կասեցնում են երկու ժողովուրդների քաղաքական-տնտեսական ազատագրութիւնը:

Այս յանձնարարման հետ միասին՝ Ընդհանուր ժողովը ջերմ յոյս է տածում, որ հակառակ ընթացիկ դժուարութիւնների եւ լայնատարած յոռետեսութեան, այսօրուայ ատելութիւնն ու պառակտումը կ'ընկնուեն եւ տեղի կը տան միջազգային այն համերաշխութեան, որը պիտի լինի ամենազօրեղ պատուանդանը մեր ապագայ կռուի ու երկու ժողովուրդների յեղափոխական յաղթանակի:

### II.— *Գործակցութիւն սոցիալիստ կուսակցութիւնների հետ*

Անհրաժեշտ համարելով, մանաւանդ ներկայ քաղաքական մոմենտում, յեղափոխական տարրերի միութիւնը ընդդէմ բռնակալական կարգերի, ժողովը յանձնարարում է իր կովկասեան մարմիններին՝ աշխատել գործակցութիւն առաջ բերելու սոցիալիստական-յեղափոխական այն կուսակցութիւնների ու կազմակերպութիւնների միջեւ, որոնք իրանց դաւանանքով ու գործելակերպով մօտ են Հ. Յ. Դաշնակցութեան, այսինքն,

1.— Ընդունում են աշխատաւորական հայեցակէտը եւ իբրեւ գործունէութեան յենակէտ՝ իբրեւ այլ աշխատաւորների՝ նաեւ գիւղացիութիւնը:

2.— Զգտում են ազգային հարցը լուծել ամենալայն փեդերացիայի միջոցով:

Այդ գործակցութեան նշանաբանն է լինելու, պաշտպանել համայն Ռուսաստանի աշխատաւոր ժողովրդի շահերը թէ՛ պետական դումայում եւ թէ ընթացիկ կեանքում:

Այդ տեսակ գործունէութիւնը օր առաջ իրականանալի դարձնելու նպատակով, ժողովը հրաւիրում է իր պատշաճ մարմիններին ձգտել միջկուսակցական մի մնայուն մարմին կազմակերպելու, իբրեւ շաղկապող օղակ յիշեալ աշխատաւորական տարրերի միջեւ:

### III.— *Գործակցութիւն վրացիների հետ*

Խորապէս կողմնակից հայերի եւ վրացիների քաղաքական ներդաշնակ գործակցութեան, Դաշնակցութեան Ընդհ. ժողովը հրահանգում է կուսակցութեան բոլոր մարմիններին եւ ընկերներին, իրանց յեղափոխական գործողութիւնների, ինչպէս եւ գրաւոր եւ բերանացի պրոպագանդի ընթացքում, երբեք չմոռանալ այն սերտ կապը, որ պիտի լինի վրացի եւ հայ աշխատաւորների միջեւ, հանդէպ քաղաքական եւ տնտեսական կռուի՝ որով բռնկուած է Անդրկովկասը:

Կապուած միմեանց հետ հայրենիքով, քաղաքական եւ տնտեսական շահերով, նոյնի՛սկ կռուի տակտիկով, երկու ժողովուրդները պէտք է գործեն ձեռք ձեռքի տուած, ներշնչուած նոյն տենչով, եւ հետեւաբար, փոխադարձ անհամաձայնութեան եւ գժտութեան ամենափոքրագոյն նշանն անգամ պիտի նկատուի քաղաքական մեծ սխալ երկու ժողովուրդների համար:

Դրդուած այս տեսակէտներից, Ընդհ. ժողովը թելադրում է դաշնակցական ղեկավար մարմիններին՝ ամենամօտիկ կապեր հաստատել եւ, ի հարկին, ձեռնարկներ անել վրաց ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւնների հետ, դուրս չգալով, հարկաւ, մեր Ծրագրի եւ տակտիկի սահմաններից:

Շեշտելով իր այդ անվերապահ ցանկութիւնը, Դաշնակցութեան Ընդհ. ժողովը ստիպուած է, անկեղծ ցաւով, մատնանիշ ընել այն փաստը, որ վրաց մէջ գործող կուսակցութիւններից ամենախոշորը, ռուսական սոցիալ-դեմոկրատիայի կովկասեան բաժինը, հակառակ այն վարդապետութեան ոգուն որու դրօշակիրն է ուզում ներկայանալ, իր գործելակերպով, որ հեռու է շիտակութիւնից, եւ իր պրոպագանդի ձեւով, որ յաճախ շովինիզմի կնիքն է կրում, փոխանակ նպաստելու երկու ժողովուրդների քաղաքական համերաշխ գործակցութեան, սերմանում է անօգուտ գրգռումն, անվստահութիւն եւ նոյնիսկ թշնամանք:

Առանց հետեւելու կովկասեան սոցիալ-դեմոկրատների գործելակերպին եւ շեղուելու քաղաքական շիտակ պայքարի շաւղից, Դաշնակցութեան բոլոր մարմինները հրաւիրւում են՝ մերկացնելով հանդերձ սոցիալ-դեմոկրատական գործելակերպի ամբողջ տգեղութիւնը, անսասան եւ անյողդողդ առաջ տանել երկու դրկից ժողովուրդների ներդաշնակ գործակցութեան աշխա-

տանքը, միշտ հաւատարիմ սոցիալիզմի եւ համերաշխութեան հիմնական պահանջներին:

IV.– *Դժգոհութիւններ եւ բողոքներ*

Մանրամասն քննութեան առնելով դժգոհութիւնների եւ բողոքների այն փաստերը, որոնք արձանագրուած են տեղեկագրերի ու անհատական դիմումների մէջ, Ընդհ. Ժողովը, ամէն մի կարեւոր դէպքի համար յատուկ կարգադրութիւն անելով, միաժամանակ որոշեց.

1.– Յանձնարարել դաշնակցական բոլոր մարմիններին հաղորդելու ի գիտութիւն իրանց շրջանի հասարակութեան, որ ոչ մի զեղծում, բռնութիւն եւ անկանոնութիւն, կատարուած անհատների եւ խմբերի կողմից, չի մնայ առանց անկողմնապահ քննութեան եւ խիստ պատժի:

2.– Դիւրութիւն տալ, որ ամէն ոք, կուսակցական թէ անկուսակցական, հնարաւորութիւն ունենայ կազմակերպութեան ղեկավարող մարմինների գիտութեան հասցնելու ժողովրդի մէջ եղած գանգատները ու բողոքները:

3.– Յանձնել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոներին, իբրեւ Ընդհ. Ժողովի որոշումներին ճիշդ գործադրութեան վրայ հսկող օրգաններ, պատասխանատուութեան կանչել այն բոլոր դաշնակցականներին — զինուոր, պրոպագանդիստ, հայդուկ, կազմակերպող — որոնք իրենց քայլերով արդար բողոքի առիթ են տալիս, ինչպէս եւ այն մարմիններին որոնք վարագուրում են այդ տեսակ քայլերը կամ թերանում են պատժելու նրանց հեղինակներին:

Ընդհ. Ժողովը լիայոյս է որ իր այս հրահանգի ճիշդ կիրառութեամբ կարելի պիտի լինի արմատախիլ անել կուսակցութեան անուան հետ, յաճախ անհիմն կերպով, կապուող զեղծումները եւ ներշնչել հայ ժողովրդի բոլոր խաւերին այն գիտակից վստահութիւնը՝ որ միշտ վայելեր էր Դաշնակցութիւնը, ոչ միայն կողմնակիցների այլեւ ազնիւ հակառակորդների կողմից:

V.– *Գաղութներ*

Ընդհ. Ժողովը քննելով Բալքանի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պարսկաստանի եւ հարաւային Ռուսաստանի գաղութների մասին ներկայացրած զեկուցումները, յանձնարարում է իր այնտեղի մարմիններին,

1.– Կազմակերպական – դրամական աշխատանքների կից, հիմնադրել մի լայն պրոպագանդ, գրաւոր եւ բերանացի, նպատակ ունենալով տարածել մեր ծրագրի սկզբունքները եւ սերտիւ կապել գաղութները յեղափոխական գործին հետ:

2.– Ոչ մի ջանք չխնայել՝ յարաբերութեան մէջ դնելու հայ գաղութները տեղական աշխատաւորական շրջանների եւ սոցիալիստական կազմակերպութիւնների հետ, իբրեւ մի ցանկալի մեթոտ՝ փոխադարձ համերաշխութիւնը զօրացնելու համար:

3.– Տեղական օտար մամուլի մէջ պրոպագանդ մղել յօգուտ հայ ժողովրդի դատի, ինչպէս եւ այն քաղաքական նպատակի, որին ձգտում է Դաշնակցութիւնը:

---

1.– Իննի Յանձնաժողովը մշակեց եւ խմբագրեց Դաշնակցութեան Ծրագիրը, համաձայն Ընդհ. Ժողովի տուած բանաձեւերի եւ ցուցմունքների, եւ յանձնեց Արեւմտեան Բիւրոյին՝ տպագրելու եւ մարմիններում տարածելու:

2.– Հաստատեց Ցուցական Մարմնի վերաբերեալ պատճառաբանուած բանաձեւը, որ կցուած է ներկայ արձանագրութեան:

3.– Մնացած մանր խնդիրների կարգադրութիւնը յանձնեց երկու Բիւրոներին, եւ

4.– Որոշեց Ընդհ. Ժողովի բոլոր թղթերը յանձնել Արեւմտեան Բիւրոյի արխիւին:

ՌՈՍՏՈՄ
ՄՀԵՐԵԱՆ — Ս. ՕՀ. (ԱՆՏՈՆ)
Ե. ԹՈՓՃԵԱՆ — Ա. ՎՌԱՄԵԱՆ
Ա. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆ — Ս. ՄԻՆԱՍԵԱՆ
ԳԱԳԻԿ — Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆ
Կանդիդատ՝ ԲԱՐՍԵՂԵԱՆ

## ՈՐՈՇՈՒՄԸ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ

Ժողովը նկատի առնելով Ցուցական Մարմնի տեղեկագիրը, Քննիչ Յանձնախումբի զեկուցագիրը, իր բոլոր յարակից տոքիւմաններով, ինչպէս նաեւ Սաֆոյի պատասխան-զեկուցումը Յանձնախմբի եզրակացութիւններուն, եւ նոյն Մարմնի երեք անդամներու՝ Սաֆոյի, Թորգոմի եւ Ռուբինայի բերանացի յայտարարութիւնները, որոշեց.

Չծանրանալով «Ձեռնարկին» արհեստագիտական (տեխնիքական) կողմի մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ, քննութեան առնել Ցուցական Մարմնի գործունէութիւնը՝ կազմակերպական եւ ընկերական-բարոյական կրկնակ տեսակէտներով. ուստի

1.– Նկատելով որ Ցուցական Մարմնի անդամները էլլէնի մահէն ետք, «Ձեռնարկի» պատրաստութեան վերաբերեալ իրենց բոլոր խորհուրդներու եւ անոնց կիրառութեան մէջ, փոխանակ ամէն հնարաւոր միջոց



ձեռք առնելու, «Ձեռնարկին» յաջողութեան հաւանականութիւնները բազմապատկելու, — ընդհակառակն, տարամերժ մտահոգութիւնը ունեցած են, ամէն բանէ առաջ, իրենց անձերու փրկութիւնը ապահովել, խուսափելով իրենց ստանձնած մեծ պատասխանատուութենէն.

2.– Նկատելով որ լոկ իրենց գլուխն ազատելու այդ սեւեռուն գաղափարէն մղուած, Ցուցական Մարմնի անդամները գիտակից անհոգութեամբ մը թերացեր են ուշադրութեան առնելու եւ ըստ այնմ կանխել կամ մեղմել փորձելու այն վտանգները, որոնք կը սպառնային նաեւ նոյն վայրը գործող օժանդակ ընկերներուն, ընկերներ, որոնք դատապարտուեցան մահուան ու երկարատեւ բանտարկութեան պատիժներու.

3.– Նկատելով որ Ցուցական Մարմինը իր ընկերական յարաբերութիւններուն մէջ ընդհանրապէս այլանդակ վարմունք մը ցուցադրած է, եւ ինչ որ մանաւորապէս եզական է դաշնակցական տարեգրութիւններուն մէջ՝ այն վրդովիչ ընթացքն է, որով այդ մարմինը հետամուտ եղած է, թէ գրաւոր կերպով (Պոլսի ատենագրութեան մէջ) եւ թէ բերանացի տարաձայնութիւններով, արատաւորել թանկագին յիշատակը պարտականութեան դաշտին վրայ ինկած մեր անմոռանալի ընկ. էլլէնին, Սոֆիայի դժբախտ արկածը ներկայացնելով իբր դաւ մը նիւթուած էլլէնի կողմէ Շապուհի դէմ.

Այս բոլոր նկատումներուն վրայ, ժողովը լուսաբանուած համարեց Ցուցական Մարմնի ծանր թերացումը ընկերական պարտականութիւններու մէջ եւ անոր պատասխանատուութիւնը «Ձեռնարկի» անյաջողութեան մէջ, այն չափով որ այդ արդիւնք էր այդ մարմնի անդամներու անձնուիրութեան պակասին, ու պէտք չտեսաւ անդրագոյն քննութեան եւ դատի:

Միեւնոյն ատեն, ժողովը աներկդիմի կերպով ապացուցուած գտնելով որ Սաֆոն եղած է ղեկավարը, էլլէնի մահէն ետք, Ցուցական Մարմնի գործերուն, պատրաստողը՝ այդ մարմնի անունով կազմած տոքիւմաններուն, հեղինակը՝ էլլէնի եւ Շապուհի մահուան շուրջը կուտակուած կասկածներուն եւ զրպարտութեանց, եւ գլխաւոր ստեղծիչը այդ մարմնի շուրջը տիրող անբարոյական հեղձուցիչ մթնոլորտին, որոշեց նկատել վերոյիշեալ Սաֆոն իբր գլխաւոր պատասխանատուն եւ յանցաւորը Ցուցական Մարմնի գործունէութեան մէջ, եւ ըստ այնմ՝

1.– Ցուցական Մարմնի անդամ Սաֆոն ի սպառ արտաքսել Հ. Յ. Դաշնակցութենէն եւ այդ մասին յայտարարել պաշտօնական օրգանին մէջ:

2.– Ցուցական Մարմնի անդամ Աշոտ, Թորգոմ եւ Քրիս հեռացած նկատել կազմակերպութենէն, յայտնելով այդ մասին կազմակերպական ճամբով դաշնակցական բոլոր մարմիններուն, եւ տալ անոնց իրաւունք ներկայացնել Դաշն. Խորհուրդին մեղմացուցիչ բացատրութիւններ եւ իրենց անկեղծ զղջման ապացոյցները: Խորհուրդին լիազօրութիւն կը տրուի ըստ այնմ փոխել այս որոշումը՝ եթէ հնարաւոր տեսնէ:

3.– Ցուցական Մարմնի անդամ Ռուբինային գալով, ժողովը չգտաւ որեւէ հիմք նոյն պատասխանատուութեան ենթարկելու, առաւել եւս որ Ռուբինան արդէն իսկ իր պարտաճանաչութեան բարձրութեան վրայ գտնուած էր:

## Գ. — ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԳՐՔՈՅԿԸ

Ընդհանուր ժողովի եւ իննի յանձնաժողովի աշխատանքներու աւարտէն անմիջապէս ետք, Արեւմտեան Բիւրոն հրատարակեց «ՈՐՈՇՈՒՄՆԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ (Քաղուածքներ)» գրքոյկը, տրամադրելի դաշնակցական մարմիններուն միայն: Գրքոյկի բովանդակութիւնը կու տանք լրիւ, թէեւ որոշումներու եւ քուէարկուած բանաձեւերու ամբողջութիւնը, ցրուած, կը գտնենք նաեւ ատենագրութեանց մէջ (Ա. եւ Բ. բաժիններ): Կատարուած յապաւումներու ծանօթացումն իսկ (գրքոյկի կիտաւոր մասեր) ունի իր շահեկանութիւնը: Իբրեւ յաւելուած, կու տանք նաեւ լուսապատճէնը 1907 տարուան նախահաշուին, առանձին թուղթի վրայ հրատարակուած Արեւմտեան Բիւրոյին կողմէ, 1907 Յունիսին (տեսնել նաեւ ատենագրութիւնները՝ էջ 276):

Ստորեւ՝ Որոշումներու Գրքոյկի Ա. էջի պատճէնը.


ՄԱՐՏԻՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

(Քաղուածքներ)

1907
ԺԸՆԵՎ

Դաշնակցութեան
ՏՊԱՐԱՆ



## ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

## (1907)

*Մռայլ, յոռետես մտքեր ներշնչող պարագաների տակ գումարուեց Դաշնակցութեան կուսակցաժողովը: — Հազիւ անցած արիւնոտ կռուի ճամբան, ռազմադաշտից նոր դարձած զօրագնդի հոգսերը ճակատին, յաղթական՝ բայց տրտում — յաղթութը իր անգիտակից հարեւանն էր — կանգնած անորոշ ապագայի հանդէպ, կուսակցութեան գերագոյն ժողովը զգում էր իրեն նոր եւ խոշոր պատասխանատուութեան առջեւ, բարդ եւ վտանգաւոր կռիւների հանդէպ — կռիւ արտաքին թշնամիների դէմ, որոնց յաղթահարելը իր տենչն էր ու նպատակը, կռիւ ներքին պառակտող տարրերի դէմ, որոնց սանձելը իր վիշտն էր եւ ուժերի վատնումը...*

*Այդ մի կողմից: Իսկ միւս կողմից՝ մի տարտամ Դումա, «Թերխաչ» ծնունդը յեղափոխական հսկայական երկունքի, քաղաքացիական ներքին ընդհարումներ, թշնամութիւն երէկեան մարտակից բանակների միջեւ, բռնապետութեան նոր գրոհ, անորոշութիւն վաղուան համար. իսկ սահմանի միւս կողմը՝ սովալլուկ հատուածներ արիւնաքամ ժողովրդի, դատարկուող գիւղեր, յեղափոխական մարտիկների հալածանք եւ բանտարկութիւն, եւ կեդրոնում՝ նոյն Ոճրագործը, դեռ կենդանի, դեռ յղացող մեծագոյն աղէտների, որոնց սոսկաբեր դառնութիւնը ճաշակեցինք, բայց վախճանը չտեսանք:*

*Ընդհանուր Ժողովի բացումն ու կազմն իսկ կրում էր աղետաւոր վիճակի դրոշմը — շատ ընկերներ, որոնք անցեալ Ընդհանուր Ժողովից ճամբայ ելան, յեղափոխականի ցուպը ձեռքին, նուիրուելու սիրած ժողովրդին եւ սիրած գաղափարին, այլեւս յետ չեկան: Զոհուած են նրանք... Միւսները թէեւ կենդանի, բայց կապուած իրենց վայրին ու գործին, անկարող էին յեղափոխական ժամադրավայրին գալու: Տխրաշունչ լուրերն ու նամակները, օրը օրին, նոր բօթեր էին բերում եւ չտապեցնում գործող-ընկերների դարձն ու մեկնումը, ժողովի փակումն եւ վերջաբանը: Մարտական հաշուետուների ժողով չէր այն, այլ մօտալուտ կռուի համար սպառազինուողների մի գումարտակ, բաժանուած կռուի յատակագծով, տակտիքով, նոյնիսկ ծրագրով...*

*Ու հակառակ այդ չարագուշակ, ճնշող պարագաների, կազմակերպութիւնը դարձեալ մի անգամ ցոյց տուեց, որ «բախտաւոր աստղի տակ է ծնուել», գիտէ անարատ պահել 17ամեայ դրօշակը, եւ գաղափարի ուժով յաղթահարել այն բոլոր կրքերը, որոնք չեն ստեղծագործում, այլ միայն աւերում են ու պառակտում...*

*Ժողովի պարապմունքների արդիւնքն եւ հիմնական որոշումները՝ դրա խրախուսիչ ապացոյցներն են:*

1. Անջատման ծրագիրը, *որ մի քանի ժամանակից ի վեր դարձել էր խլրտումների եւ նոյնիսկ կռիւների պատճառ, կուսակցաժողովը յետ մղեց մի ոգեւորիչ ժեստով, համարեա միաձայն: Նա որոշեց իր անցեալին եւ ուժին վայել վճռականութեամբ՝ երկու դատերն էլ՝ Թիւրքահայ եւ Կովկասեան՝ առաջ մղել Դաշնակցութեան դրօշակի տակ, շաղկապուած եւ միացած:*

2. Կովկասեան գործունէութեան նախագիծը, *որ 1905ի Խորհուրդից ի վեր, հանդիսանում է իբրեւ մի քաղաքական* կռուածաղիկ *կազմակերպութեան շարքերում եւ այդ շարքերից դուրս, եւ իր պարունակած սկզբունքներով մեր շարքերը ոգեւորելու փոխարէն, մի անըմբռնելի թիւրիմացութեամբ ամենատխուր ընդհարումների եւ պառակտումների պատրուակ եղաւ — ընդունուեց, վաւերացուեց, թէ ըստ* իրաւասութեան, *եւ թէ ըստ* էութեան, *եւ դարձաւ այն հիմնաքարերից մէկը, որի վրայ պէտք է յենուի Դաշնակցութեան սոցիալիստական գործունէութիւնը Անդրկովկասեան հայ ժողովրդի մէջ: Այդ հարցի լուծումը, որ պահանջեց ուժերի լարումն, երկար ժամանակ, մեծ աշխատանք եւ մտքերի լայն փոխանակութիւն — ներկայ ժողովի ամենադրական արդիւնքներից մէկն է, արժանի յատուկ յիշատակութեան:*

3. Սոցիալիստական ծրագրի *հիմնական սկզբունքների վաւերացումը, իբրեւ տրամաբանական շարունակութիւն նախորդ որոշման, պիտի համարուի Չորրորդ Ընդհանուր Ժողովի մտածողութեան եւ աշխատանքների պսակը: Հիմնուած իր ընդհանուր Ծրագրի վրայ, եւ ուշադիր քաղաքական-տնտեսական կեանքի պահանջներին, որոնք հրապարակ են եկել վերջին 15 տարուայ ընթացքում, կազմակերպութեան ղեկավար մարմինը վճռեց՝ յայտարարել Դաշնակցութիւնը իբրեւ հայ աշխատաւոր դասակարգի կուսակցութիւն, որ ձգտում է քաղաքականապէս եւ տնտեսապէս կազմակերպել նրան, պաշտպանել նրա տնտեսական-դասակարգային եւ քաղաքական-ազգային իրաւունքները, նպատակ ունենալով՝ միւս աշխատաւորների հետ միասին, ձեռք գցել կառավարութեան ղեկը, եւ այժմեան միապետական ու կապիտալիստական կարգերը փոխարինել լայն ռամկավարութեամբ եւ համայնական կարգերով: Ժողովը ընդունեց եւ վաւերացրեց* սոցիալիստական *ծրագիրը եւ* յեղափոխական *տակտիքը: Ահա այդ Ծրագիրը, հիմնաւորուած Ընդհանուր Ժողովի մէջ, պիտի լոյս տեսնի մօտակայում եւ պիտի հանդիսանայ իբրեւ* ուղեցոյց *մեր գործունէութեան, պրոպագանդի եւ ձեռնարկների, իբրեւ յենարան կուսակցութեան աշխատանքների եւ մտածողութեան: — Իր այդ կարեւոր ո-*

(Պատճառաբանութեամբ)

Ընդհ. Ժողովը լսելով Դաշնակցութիւնը երկու հատուածների — կովկասեան եւ Թրքահայկական — բաժանելու մասին եղած զեկուցումները, ինչպէս նաեւ այդ առիթով ծագած վիճաբանութիւնները եւ նկատի ունենալով,

1) Որ հայ աշխատաւոր ժողովրդի այդ երկու հատուածների քաղաքական-տնտեսական կռիւը հիմնըւած է միեւնոյն Ծրագրի վրայ, վաւերացուած 1892ին եւ լրացուած Գ. Ընդհ. Ժողովի որոշումներով եւ 1905ի «Նախագծով»,

2) Որ Թրքահայկական եւ կովկասեան գործունէութիւնները, ինչպէս այդ չեշտուեց Ժողովի ընթացքում, ոչ միայն չեն վնասում այլեւ նպաստում են երկու երկիրների աշխատաւոր ժողովրդի շահերի յաղթանակին,

3) Որ Թրքահայ ժողովրդի շարժումը — որին կազմակերպութիւնը ծառայում է 17 տարիներից ի վեր, այժմ մանաւանդ, երբ Թրքական ռեժիմից դժգոհ տարրերը սկսել են շարժուել — պահանջում է համերաշխ գործունէութեան համար մեր յեղափոխական ուժերի կրկնակի լարումն ու շաղկապումը,

Որոշեց.

1) Ցետ մղել անջատման առաջարկը, իբրեւ մի տեսակէտ, որ չէ հիմնուած մեր աշխարհահայեացքի եւ գործունէութեան վրայ եւ չէ բխում կազմակերպութեան շրջանների որոշումներից (21 մարմիններից 20ը հակառակ անջատման, միայն մէկն է կողմնակից):

2) Երկու գործունէութիւնն էլ վարել Հ. Յ. Դ. դրօշակի եւ ղեկավարութեան ներքոյ:

3) Հաւատարիմ մնալով կուսակցութեան Ծրագրին, վայրերի գործունէութիւնը առաջ տանել տակտիքի ուրոյն եղանակով, յարմարցրած տեղական հանգամանքներին եւ պայմաններին:

## ՏԱԿՏԻՔԱՑԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

### ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ (3)

Ընդհանուր Ժողովը լսելով զեկուցումները ապըստամբական ձեռնարկների մասին եւ մանրամասն քննութեան ենթարկելով շօշափած հարցը՝ կայացրեց հետեւեալ որոշումները.

1) . . . . . . . . . . . . . . .

2) . . . . . . . . . . . . . . .

3) Երկրում համապատասխան կազմակերպութիւններ առաջ բերել, զինել ժողովուրդը, առաջ բերել ռազմական ու կազմակերպիչ ուժեր, մեծ քանակութեամբ ռազմամթերք ու հարկաւոր դրամական օժանդակութիւն ուղարկել:

4) Գործունէութեան գլխաւոր վայրերում ...... տառաջացնել կազմակերպութիւններ, սրանց շուրջը լայն ժողովրդական խաւեր համախմբելով, եւ յատուկ պատասխանատու մարմին՝ այդ ամբողջ վայրի համար, որ իր շրջանի բոլոր գործերի կարգադրողն ու պատասխանատուն է:

5) Ցանձնարարել նոյն մարմնին երկրի լայն ռազմական ուսումնասիրութիւն անել եւ պատրաստել ռազմական ծրագիրներ, այս կամ այն պատահականութեան համար:

6) Անակնկալ պատահարների դէպքում յիշեալ վայրերում պատասխանատու մարմինը կարող է դիմել ակտիւ ձեռնարկների, նախօրօք ստանալով Դաշնակցութեան Խորհուրդի համաձայնութիւնը:

---

### ՏԵՌՈՐ (4)

Ընդհանուր Ժողովը լսելով տեռորի մասին եղած զեկուցումը եւ այդ առիթով տեղի ունեցած մանրամասն եւ բազմակողմանի վիճաբանութիւնը, որոշեց.

1) Կազմակերպել քաղաքական սիստեմատիկ տեռոր՝ ուղղուած կառավարական կարեւոր ներկայացուցիչներին... ընդունելով ներկայ պայմաններում նրա ունենալիք խոշոր հետեւանքները:

2) . . . . . . . . . . . . . . . .

3) Ընդունել գործունէութեան վայր . . . . .

4) Հաստատել «Տեռորական Գործօն Կոմիտէ» . .

5) Ընտրել մի նախապատրաստական կոմիտէ, բաղկացած երեք ընկերներից, այդ գործի բոլոր նախապատրաստութիւններն անելու եւ Գործօն Կոմիտէն ստեղծելու համար.

6) . . . . . . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . .

---

### ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ (5)
Թուրքիոյ հայաբնակ վայրերուն մէջ

Ժողովը լսելով ինքնապաշտպանութեան գործի կազմակերպման վերաբերեալ զեկուցումը եւ նկատի առնելով ինքնապաշտպանութեան մասնախմբի եզրակացութիւնները, որոշեց՝

Լուրջ հիմքերու վրայ դնել ինքնապաշտպանութեան գործի կազմակերպումը.... հայաբնակ վայրերու մէջ, առաջնորդ ունենալով հետեւեալ չորս կէտերը.



1) Ինքնապաշտպանութեան խմբերը կը զինուին տեղացիներու նիւթական միջոցներով:

ԾԱՆՕԹ.— Դաշնակցութիւնը կ'ընդունի պանդուխտ համագիւղացիներէ զինման հիմնադրամի համար նուէրներ, որոնք կը գործադրուին երկրի պատկան մարմնի ձեռքով, ոչ բացառապէս նուիրատուներու գիւղին, այլ շրջանի գիւղախմբի համար:

2) Եթէ նոր կազմակերպուած մարմինները վըստահութիւն ներշնչեն իրենց գործունէութեամբ եւ կազմի հաստատուն հանգամանքով, Դաշնակցութիւնը կըրնայ, եթէ պէտք տեսնէ, փոխ տալ շրջաբերութեան գումար մը՝ զէնքի շուկայ ստեղծելու համար:

ԾԱՆՕԹ.— Դաշնակցութեան նախահաշուի մէջ կ'որոշուի այդ նպատակին յատկացնելիք առաւելագոյն գումարի քանակը:

3) Ինքնապաշտպանութեան խմբերու ձեռք բերած զէնքերը կը համարուին համայնական սեփականութիւն, կը դրուին Դաշնակցութեան կոնտրոլի տակ եւ կը գործադրուին միմիայն անոր հրահանգներով:

4) Զինման գործը պէտք է կատարուի ատինճանաբար, ինքնապաշտպանութեան խումբերու կազմութեան եւ անոնց զինուորական կրթութեան զարգացման զուգընթաց:

Երկրի կազմակերպուած վայրերէ դուրս եւս ինքնապաշտպանութեան գործի սիստեմ ստեղծելու նպատակով՝ որոշուեցաւ.

1) Ձեռնարկել կազմակերպելու այդ վայրերը. արեւմտեան շրջանը թողնելով Արեւմտեան Բիւրոյի Շըրջանային Ժողովին, եւ Արեւելեանը՝ Երկրի պատասխանատու մարմիններու եւ Արեւելեան Բիւրոյի համաձայն գործակցութեան:

2) Վերի յօդուածի մէջ յիշուած մարմիններու կը յանձնարարուի մշակել ընդհանուր կանոնագիր մը ինքնապաշտպանութեան խումբերու եւ ժողովրդի զինման մասին, անոր կիրառումը պարտաւորիչ ընելով բոլոր մարմինների համար:

---

### ԱՐՇԱՒԱԽՄԲԵՐ (6)

Ժողովը քննելով արշաւախմբերի խնդիրը, յանգաւ հետեւեալ եզրակացութեան.

1) Ապագայում մեր մղելիք կռուի մէջ, այլեւայլ յեղափոխական ձեռնարկների հետ միասին՝ արշաւախմբերն եւս կարող են օգտակար լինել, երբ ներսի վարիչ մարմինները վստահ են, որ այդ խմբերը կը դարձնեն կռիւը աղդու, լայն եւ յարատեւ:

2) Միջոցներ ձեռք առնել՝ միլիցիայի սկզբունքով կամ այլ ձեւով, առանց վարձի, մարտական դաշնակցական խմբեր մարզել՝ ապագայ այդօրինակ գործողութիւնների համար:

---

### ԿՈՎԿԱՍԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ (7)

Ընդհանուր Ժողովը, լսելով Կովկասի հայ ազգաբնակութեան ինքնապաշտպանութեան եւ զինման գործի մասին եղած զեկուցումները եւ վիճաբանութիւնները՝ յանգաւ հետեւեալ որոշման՝

ա) Ինքնապաշտպանութեան գործը՝ իբրեւ համաժողովրդական գործ՝ պէտք է ամբողջովին թողնել ժողովրդին:

բ) Կուսակցութեան անդամները կարող են մասնակցել ինքնապաշտպանութեանը՝ իբրեւ քաղաքացի անհատներ, աշխատելով մտցնել ժողովրդական միլիցիայի սիստեմը եւ կազմակերպել ժողովրդական ինքնապաշտպանութեան մարմիններ:

գ) Անակնկալ դէպքերում, եթէ ժողովուրդը հրաւիրէ Դաշնակցութիւնը՝ ղեկավարելու ինքնապաշտպանութեան գործը, իր՝ ժողովրդի պատասխանատուութեամբ, նրա անունից եւ նրա միահամուռ աջակցութեամբ, Ընդհանուր Ժողովը վերապահում է ազատութիւն տեղական մարմիններին՝ վարուելու ըստ իրենց հայեցողութեան:

---

### ՑՈՒՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ (8)

Ժողովը լսելով ցուցական գործունէութեան վերաբերեալ զեկուցումներն ու վիճաբանութիւնները եւ նըկատելով՝

ա) Այն մեծ նշանակութիւնը, որ ունի ցուցական գործունէութիւնը տաճիկ բռնակալ ռեժիմը տապալելու, նրա հեղինակութիւնը կոտրելու տեսակէտից,

բ) Որ ցուցական գործունէութիւնն աւելի բացորոշ կերպով է շարժման մէջ դնում Տաճկաստանի խըրնամակալ պետութիւնների քաղաքական եւ տնտեսական ընդհանուր եւ հակամարտ շահերը,

գ) Որ նա դիւրութիւններ է ներկայացնում աւելի աղդու կերպով արտայայտելու բողոքող տարրերի ձըգտումները եւ այդպիսով ներկայանում է ագիտատորական մեծ աղդակ ցնցելու համար եւ մահմեդական մասսան,

դ) . . . . . . . . . . . . . . . .

Որոշեց՝

1) Ընդունել ցուցական գործունէութիւնը շարունակելու անհրաժեշտութիւնը կազմակերպութեան առաջիկայ տակտիքի մէջ,

2) Կեդրոնացնել ցուցական գործունէութիւնները...

3) Կախման մէջ չդնել այդ տեսակի ձեռնարկները Երկրի ապստամբական շարժումներից եւ օգտուել քաղաքական ներքին կամ արտաքին յարմար մոմենտներից:

4) Զգտել ապահովել Թուրքիայի ոչ-հայ դժգոհ տարրերի գործակցութիւնը,

5) Ցուցական մարմնի կազմը, տրամադրելի դրամական միջոցների սահմանները եւ իրաւասութեան հիմնական կէտերը որոշել Ընդհանուր Ժողովում։

---

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժողովը ծանօթանալով . . . Դաշնակցութեան կազմի եւ պրոպագանդի այժմեան վիճակին եւ նկատելով՝

ա) Կազմի եւ պրոպագանդի սահմանափակ վիճակը.

բ) Այն խոշոր դերը, որ կարող է կատարել յեղափոխական գործունէութիւնը այդ վայրում եւ թէ շրջակայքում, աչքի առաջ ունենալով վայրի քաղաքական կարեւոր նշանակութիւնը,

Որոշեց՝

Ցանձնարարել Կազմակերպական Մարմիններին, յատկապէս Արեւմտեան Բիւրոյին եւ Բ. Կոմիտէին չխնայել ոչ մի ջանք, ուղարկել այդտեղ կարող ընկերներ լայն կազմակերպութիւն առաջ բերելու... եւ շրջակայքում։

### ՎԵՐՆԱՇԷՆԻ ՇՐՋԱՆ

. . . . . . . . . . . . . . . .

### ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ (9)

. . . . . . . . . . . . . . . .

### ԲԱՍՏԻ ՇՐՋԱՆ (10)

. . . . . . . . . . . . . . . .

### ՍԻՄԻ ՇՐՋԱՆ (11)

. . . . . . . . . . . . . . . .

---

## ԶԻՆԱ-ՊԱՅԹՈՒՑԻԿ(12)

Նկատելով որ անհրաժեշտ է մեր յեղափոխական ձեռնարկներու համար ունենալ ըստ կարելւոյն շատ հմուտ արհեստաւորներ զինագործական-պայթուցիկ եւ այլ յարակից արհեստներու համար, Ընդհանուր Ժողովը որոշեց.

1) . . . . . . . զանազան վայրերուն մէջ՝ ինչպէս նաեւ Վրէժում, հիմնել արհեստանոցներ, ուր ընդունակ եւ տրամադրելի ընկերներ վարժուեն զինական արհեստագիտական այլեւայլ ճիւղերու մէջ, մասնաւորապէս կանոնաւորել . . . արհեստանոցը։

2) . . . . . . . . . . . . . . . .

3) . . . . . . . . . . . . . . . .

4) . . . . . . . . . . . . . . . .

---

## ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

### ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԱՅԼԱՏԱՐՐ ՑԵՂԵՐՈՒ ՀԵՏ(13)

Ընդհանուր Ժողովը լսելով զեկուցումը Թուրքիոյ յեղափոխական տարրերու հետ համերաշխութիւն կայացնելու մասին, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Խորին ուրախութեամբ դիտելով Թուրք ժողովրդի մէջ ծայր տուած հակակառավարական դժգոհութեան երեւոյթները, նպաստաւոր վայրկեանը հասած կը նկատուի համերաշխութեան գաղափարի իրականացումը գործնական հողի վրայ դնելու, — ինչ որ, դժբախտաբար, ցարդ չէր յաջողած Դաշնակցութեան՝ հակառակ տարիներէ ի վեր ձեռք առած միջոցներուն, հակառակ իր Ծրագրին եւ նախորդ իր Ընդհանուր Ժողովի որոշումներուն։

Ուստի Ժողովը ստիպողաբար կը յանձնարարէ . . . . . մարմիններուն ամէն կերպով աջակցիլ Թուրք ժողովրդի դիմադիր տարրերուն՝ ղեկավարելով զանոնք, իրենց կռուին մէջ, այդ ռեժիմի դէմ։ Այդ գործակցութիւնը պէտք է այնպէս կարգաւորել եւ առաջ տանիլ, որ Թուրք բողոքող եւ ըմբոստ տարրը կարկառուն կերպով ասպարէզ ելլէ, եւ կառավարութիւնը զրկուի ամբոխային կրօնամոլութիւնը հայ ժողովրդի եւ հայ յեղափոխութեան դէմ գրգռելու առիթէն։

Այս տեսակէտներէն առաջնորդուելով՝ Ժողովը կը յանձնարարէ,

1) Իր . . . . . . . . մարմիններուն, որպէսզի ամէն կերպ աշխատին սկիզբը դնելու համերաշխ գործակցութեան եւ առաջ բերեն համերաշխութեան մարմիններ։

2) . . . . . . . . պատշաճ մարմիններուն՝ որպէսզի նախապատրաստական բանակցութիւններ սկսին — յարմարագոյն եղանակով — յեղափոխական Թուրք եւ այլ տարրերու խմբակցութեանց հետ, որոնց քաղաքական հայեացքները եւ ձգտումները աւելի կը մօտենան Դաշնակցութեան սկզբունքներուն, ինչպէս նաեւ աշխատին անոնց պրոպագանդին ուժ տալ, տարածելով . . . . . . Թուրք ժողովրդին մէջ անոնց հրատարակութիւնները, հրահանգելով միանգամայն . . . . . . . մարմինները ամէն կերպով աջակցիլ այդ աշխատութեան։

3) . . . . . . . . . . . . . . . .

4) Նկատելով մանաւանդ որ Թուրքիոյ մէջ առանձին ազգութիւններու ինքնուրոյն ձգտումները, իրենց անջատ գործունէութիւնով, չեն կազմեր միացած ընդհանուր ուժ մը ընդհանուր թշնամուն դէմ, աշխատիլ ձգտիլ Թուրքիոյ այլ ազգութիւններու յեղափոխական կուսակցութիւններու եւ տարրերու մէջ համերաշխութիւն առաջ բերել եւ կազմել յեղափոխական դաշնակցութիւն մը, փեդերատիվ սկզբունքի վրայ հիմնուած քաղաքական ծրագրով, որ ապահովէ բոլոր ազգութիւններու իրաւունքը։ Այս գաղափարի իրականացման համար՝ առաջին պատեհութեամբ իսկ հրաւիրել համաժողով մը վերոյիշեալ տարրերու մասնակցութեամբ։

Միեւնոյն ատեն Թուրքերու մէջ տարածուած անհիմն թիւրիմացութիւններուն վերջ տալու համար, Ժողովը պարտք կը համարի յայտարարել, որ Դաշնակցութիւնը Թուրքիոյ մէջ ունեցած չէ եւ չունի անջատական ոչ մէկ ձգտում, այլ իր նպատակն է եղած ազգերու կատարեալ հաւասարութիւն, եւ տեղական լայն ինքնավարութեան սկզբունքի համաձայն՝ հայկական վեց վիլայէթներու մէջ վարչական ինքնավարութեան հաստատումը, ինչ որ չի հակասեր միւս ազգերու իրաւունքին։

---

## ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ(14)

Քննութեան առնելով կովկասեան մարմինների մանրամասն զեկուցումները հայ-թրքական ընդհարումների մասին, որոնք աղմկեցին ամբողջ Անդրկովկասը 1905 եւ 1906 թուականներին, Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը, լցուած խորագոյն վշտով երկու հարեւան ժողովուրդները կործանող այդ իրողութեան հանդէպ, եւ նկատելով որ,

1) Այդ թշնամութիւնը զգալապէս վնասում է ընդհանուր յեղափոխութեան գործին.

2) Որ ցարական կառավարութիւնը բոլորովին տրամադիր չէ հրաժարուել իր պառակտող քաղաքականութիւնից.

3) Որ Թուրք անգիտակից ամբոխը հարստահարող բէգութիւնն ու հոգեւորականութիւնը, մերթ իրենց շահերից դրդուած, մերթ արտաքին քաղաքական պրոպագանդի ազդեցութեան տակ, շարունակում են շահագործել մասսաների տգիտութիւնն ու հակահայկական տրամադրութիւնները.

Որոշեց,

ա) Ցանձնարարել դաշնակցական բոլոր մարմիններին՝ համերաշխութեան ընդհանուր եւ զօրեղ պրոպագանդ մղել, գրաւոր եւ բանաւոր, ոչ միայն հայ, այլեւ Թուրք ժողովրդի համար։

բ) Ջանք չխնայել առաջ բերելու, ուղղակի կամ Թուրք մտաւորականութեան միջոցով, յեղափոխական կազմակերպութիւններ մեր հարեւան ժողովրդի շարքերում, իբրեւ լաւագոյն միջոց՝ խլելու անգիտակից մասսաները մոլորեցնող Թուրք տարրերի ազդեցութիւնից։

գ) Խստօրէն հալածել հայ ժողովրդի բոլոր խաւերի միջից այն տարրերն, օրգանները եւ անհատները, որոնք խօսքով թէ գործով, յաճախ անգիտակցաբար, գրգռում են փոխադարձ ատելութիւն եւ առիթ տալիս թշնամութեան վերսկսման։

դ) Աջակցիլ այն Թուրք կազմակերպութիւններին, հրատարակութիւններին եւ անհատներին, որոնք ծառայում են երկու ժողովուրդների համերաշխութեանը եւ մերձեցմանը։

ե) Յեղափոխական կապեր հաստատել հայ եւ Թուրք աշխատաւորների միջեւ՝ քաղաքներում եւ գիւղացիութեան մէջ՝ գիւղերում, միացած ուժով կռուի մղելու քաղաքական եւ տնտեսական այն գործօնների դէմ, որոնք կասեցնում են երկու ժողովուրդների քաղաքական եւ տնտեսական ազատագրութիւնը։

Այս յանձնարարման հետ միասին՝ Ընդհանուր Ժողովը ջերմ յոյս է տածում, որ հակառակ ընթացիկ դժուարութիւնների եւ լայնատարած յոռետեսութեան, այսօրուայ ատելութիւնն ու պառակտումը կ՚ընկճուին եւ տեղի կը տան միջազգային այն համերաշխութեան, որը պիտի լինի ամենազօրեղ պատուանդանը մեր ապագայ կռուի ու երկու ժողովուրդների յեղափոխական յաղթանակին։

---

## ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ(15)

Որպէս կողմնակից հայերի եւ վրացիների քաղաքական ներդաշնակ գործակցութեան, Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը հրահանգում է կուսակցութեան բոլոր մարմիններին եւ ընկերներին, իրենց յեղափոխական գործողութիւնների, ինչպէս եւ գրաւոր ու բերանացի պրոպագանդի ընթացքում՝ երբեք չմոռանալ այն սերտ կապը, որ պիտի լինի վրացի եւ հայ աշխատաւորների միջեւ, հանդէպ քաղաքական եւ տնտեսական այն կռուի, որով բռնկուած է Անդրկովկասը։

Կապուած միմեանց հետ հայրենիքով, քաղաքական եւ տնտեսական շահերով, նոյնիսկ կռուի տակտիքով, երկու ժողովուրդները պէտք է գործեն ձեռք-ձեռքի տուած, ներշնչուած նոյն տենչով, եւ հետեւաբար, փոխադարձ անհամաձայնութեան եւ դժտութեան ամենափոքրագոյն նշանն անգամ պիտի նկատուի քաղաքական մեծ սխալ երկու ժողովուրդների համար։

Դրդուած այս տեսակէտներից՝ Ընդհանուր Ժողովը թելադրում է դաշնակցական ղեկավար մարմիններին՝ ամենամօտիկ կապեր հաստատել եւ, ի հարկին, ձեռնարկներ անել վրաց ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւնների հետ, դուրս չգալով, հարկաւ, մեր Ծրագրի եւ տակտիքի սահմաններից։

Շեշտելով իր այդ անվերապահ ցանկութիւնը,

Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը ստիպուած է, անկեղծ ցաւով, ժամանիշ անել այն փաստը, որ վրաց մէջ գործող կուսակցութիւններից ամենախոշորը, ռուսական սոցիալ-դեմոկրատիայի կովկասեան բաժինը, հակառակ այն վարդապետութեան ոգուն, որի դրօշակիրն է ուզում հանդիսանալ, իր գործելակերպով, որ հեռու է չխտակութիւնից, եւ իր պրոպագանդի ձեւով, որ յաճախ շովինիզմի կնիքն է կրում, փոխանակ նըպաստելու երկու ժողովուրդների քաղաքական համերաշխ գործակցութեան, սերմանում է անօգուտ գրգըռումն, անվստահութիւն եւ նոյնիսկ թշնամանք։

Առանց հետեւելու կովկասեան սոցիալ-դեմոկրատների գործելակերպին եւ չեղուելու քաղաքական չիտակ պայքարի շաւղից, Դաշնակցութեան բոլոր մարմինները հրաւիրւում են՝ մերկացնելով հանդերձ սոցիալ-դեմոկրատական գործելակերպի ամբողջ ազդեցութիւնը, անսասան եւ անյողդողդ առաջ տանել երկու ցեղից ժողովուրդների ներդաշնակ գործակցութեան աշխատանքը, միշտ հաւատարիմ սոցիալիզմի եւ համերաշխութեան հիմնական պահանջներին։

---

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ(16)

Անհրաժեշտ համարելով, մանաւանդ ներկայ քաղաքական մոմենտում, յեղափոխական տարրերի միութիւնը ընդդէմ բռնակալական կարգերի, ժողովը յանձնարարում է իր կովկասեան մարմիններին, աշխատել՝ գործակցութիւն առաջ բերել սոցիալիստական եւ յեղափոխական այն կուսակցութիւնների ու կազմակերպութիւնների միջեւ, որոնք իրենց դաւանանքով ու գործելակերպով մօտ են Հ. Յ. Դաշնակցութեան, այսինքըն,

1) Ընդունում են աշխատաւորական հայեցակէտը և իբրեւ գործունէութեան յենակէտ, ի թիւս այլ աշխատաւորների, նաեւ գիւղացիութիւնը։

2) Ձգտում են ազգային հարցը լուծելու ամենալայն ֆեդերացիայի միջոցով։

Այդ գործակցութեան նշանաբանն է լինելու՝ պաշտպանել համայն Ռուսաստանի աշխատաւոր ժողովրդի շահերը թէ՛ պետական Դումայում եւ թէ ընթացիկ կեանքում։

Այդ տեսակ գործունէութիւնը օր առաջ իրականանալի դարձնելու նպատակով, ժողովը հրաւիրում է իր պատշաճ մարմիններին՝ ձգտել միջկուսակցական մի միայուն մարմին կազմակերպել, իբրեւ շաղկապող օղակ յիշեալ աշխատաւորական տարրերի միջեւ։

---

## ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՏԵԱՆ(17)

Ընդհ. Ժողովը, բարձր պահելու համար յեղափոխական հմայքը եւ վերջ մը դնելու համար վերջերս տեղի ունեցած ցաւալի դէպքերուն, պարտաւորիչ կը դարձնէ միջկուսակցական իրաւարար ատեանները Հ. Յ. Դաշնակցութեան եւ ուրիշ կուսակցութիւններու կամ խմբակցութիւններու միջեւ, համաձայն հետեւեալ կէտերուն՝

1) Միջկուսակցական ատեանները կը կազմուին չահագրգռուող կողմերու ներկայացուցիչներէ, չէզոք ձեռնհաս անձերէ կամ ուրիշ կուսակցութիւններու ներկայացուցիչներէ, ըստ յարմարութեան։

2) Միջկուսակցական ատեանները կը կազմուին շրջանի պատասխանատու մարմնի հաւանութեամբ եւ գործակցութեամբ, ընդհանուր տեսակէտ մը պահպանելու համար այդ գործին մէջ։

3) Միջկուսակցական իրաւարար ատեան ունենալ այնպիսի կուսակցութիւններու կամ խմբակցութիւններու հետ, որոնք կը համակերպին այդ ատեաններու որոշումներուն՝ ամէն պարագայի տակ, եւ խօսք չեն տար այդ ատեաններուն ենթարկուելէ, իրենց աննըպաստ եղող պարագային եւս։

4) Միջկուսակցական ատեաններու որոշումներն անբեկանելի են եւ չեն ենթարկուիր Ընդհանուր Ժողովին։

5) Ատեաններու կազմութեան մանրամասնութիւնները մշակելը կը թողնուի ռայոնական ժողովներուն։

---

## ՀՆՉԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԻՄՈՒՄԸ(18)

Լսելով Հնչակեան Պարիզի կեդրոնի վարչութեան պաշտօնական դիմումը, ուղղուած Ընդհ. Ժողովին՝ Հայ յեղ. կուսակցութիւնների կոնգրէի, միջկուսակցական ատեանի և համերաշխութեան մասին, ինչպէս և այդ առիթով ժողովականների յայտնած կարծիքները հնչակեան այլեւայլ հատուածների բռնած ընթացքի եւ զանազան վայրերում ունեցած գործունէութեան վերաբերմամբ, Ընդհ. Ժողովը,

1) Նկատելով որ Դաշնակցութեան եւ Հնչակեան հատուածների մէջ համերաշխ գործակցութիւնը կարող է տեղի ունենալ միայն այն դէպքում, երբ հնչակեան տեղական մարմիններն իրենց առօրեայ ընթացքով եւ յեղափոխական գործունէութեամբ վստահութիւն կը կը ներշնչեն դաշնակցական տեղական մարմիններին,

2) Նկատելով որ կուսակցական հողի վրայ տեղի ունեցած ընդհարումները իրենց ցաւալի հետեւանքներով վնասում են համերաշխութեան գործին եւ պահանջում են խաղաղեցնող միջոցների կիրառութիւն,

3) Ընդունելով որ յեղ. կուսակցութիւնների կոն-



գրէի հարցը լուրջ նշանակութիւն եւ գործնական արժէք կարող է ունենալ այն դէպքում միայն, երբ Երկրում, բացի դաշնակցական մարմիններից, գոյութիւն կ'ունենան նաեւ հնչակեան եւ այլ յեղափոխական մարմիններ,

Որոշեց.

ա) Հայ յեղափոխական կուսակցութիւնների կոնգրէի գումարումը ներկայումս համարել վաղաժամ։

բ) Միջկուսակցական ատեանի առաջարկը ընդունել (համաձայն ներկայ Ժողովի նախորդ որոշման)։

Դրա հետ միասին Ժողովը յոյս է յայտնում, որ առաջին կէտում յիշուած պայմանների առաջ գալը՝ ապագայում հնարաւոր կը դարձնեն Դաշնակցութեան համերաշխ գործակցութիւնը հայ յեղափոխական այլ մարմինների հետ։

Ընդհանուր Ժողովը պարտք է համարում դարձեալ մի անգամ կրկնել, որ այլեւայլ յեղափոխական կազմակերպութիւններին պատկանող՝ գործին նուիրուած եւ վստահելի անհատների եւ խմբերի հետ համերաշխօրէն կռիւ մղելը ընդհանուր թշնամու դէմ (մանաւանդ Երկրի մէջ) եղել է եւ այժմ էլ պէտք է լինի Դաշնակցութեան բաղձանքը եւ ձգտումը։

Նոյն այդ համերաշխութեան գործը պատրաստելու համար, Ընդհ. Ժողովը յանձնարարում է բոլոր իր մարմիններին՝ ամէն կերպ խոյս տալ կուսակցական ընդհարումներից եւ ծագող վէճերն ու թիւրիմացութիւնները լուծել յիշատակուած միջկուսակցական ատեանի միջոցով։

---

## ՊՐՈՊԱԳԱՆԴ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ (19)

Հիմնուած այն տեսակէտի վրայ, որ գրաւոր եւ բանաւոր լայն պրոպագանդը կարեւոր գործօններից մէկը պիտի լինի, կազմակերպական գաղափարները տարածելու և ձեռնարկները յաջողցնելու համար, Ընդհանուր Ժողովը որոշեց առաջիկայում եւս ուժգին կերպով առաջ մղել պրոպագանդի գործը այն հիմունքներով, որոնք մշակուած են նախորդ Ժողովում եւ այն լրացումներով՝ որոնք կատարուեցին ներկայ Ժողովի ընթացքում.

### ա) ԵՒՐՈՊԱՅԻ ՊՐՈՊԱԳԱՆԴ

. . . . . . . . . . . . . . . . . .

### բ) ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊՐՈՊԱԳԱՆԴ

. . . . . . . . . . . . . . . . . .

### գ) ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴ

. . . . . . . . . . . . . . . . . .

### դ) ՊՐՈՊԱԳԱՆԴ ԵՐԿՐՈՒՄ

. . . . . . . . . . . . . . . . . .

Համապատասխան մարմիններու յանձնելով թէ՛ գրաւոր թէ բանաւոր պրոպագանդի գործը, որոշած նախահաշուի սահմաններում, Ընդհ. Ժողովը յանձնարարում է ղեկավարուել հետեւեալ որոշումներով.

I

## «ԴՐՕՇԱԿ» ԵՒ ԿԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Դրօշակ»ը մնում է կուսակցութեան պաշտօնական կեդրոնական օրգան։

2) . . . . . . . . . . . . . . . . .

3) Արտօնել խմբագրութեանը, եթէ հարկ տեսնի, «Դրօշակ»ը հրատարակել աւելի մեծ ծաւալով՝ եւ ի հարկին՝ անել յաւելուածներ։

4) Ճշդութեամբ հետեւելով Ընդհ. Ժողովի նախագծած ուղղութեան, ազատութիւն տալ խմբագրութեանը՝ մտնելու ինչպէս ծրագրային, նոյնպէս եւ տընտեսական-քաղաքական հարցերի եւ ուղղութիւնների մանրամասն մեկնաբանութեան եւ քննադատութեան մէջ։ Տեսական խնդիրները նրա մէջ պիտի բռնեն առաջնակարգ տեղերից մէկը։

5) Պարտաւորեցնել բոլոր մարմիններին՝ հաղորդելու պաշտօնական օրգանին կազմակերպական բոլոր ազդերը, որոշումները եւ թռուցիկները։ Պաշտօնական բնոյթ ունեցող ազդերը չտպագրել որեւէ այլ թերթում, առանց հեղինակող մարմնի թոյլտուութեան։

6) . . . . . . . . . . . . . . . . .

7) . . . . . . . . . . . . . . . . .

8) Տեսական եւ հիմնական հարցերի մանրամասն ուսումնասիրութեան համար՝ հրատարակել «Դրօշակ»ին կից, տարեկան 2–3 անգամ, հատորի ձեւով, առանձին հանդէս, մասնակցութեամբ մեր եւ օտար գըրողների։

9) Նկատի առնելով մամուլի այժմեան՝ համեմատաբար ազատ վիճակը Անդրկովկասում, հայերէն բրոշիւրների հրատարակութիւնը Ժընեւում սահմանափակել եւ հրատարակել միմիայն այնպիսիները, որոնք Կովկասում տպագրուել չեն կարող։

10) Հրատարակել, պրոպագանդային նպատակով, Թուրքահայ եւ կովկասեան շարժման եւ յեղափոխութեան նուիրուած գրքոյկներ, եւրոպական զանազան լեզուներով, գրուած ձեռնհաս անձանց ձեռքով։

11) Օժ տալ Թուրքերէն, քիւրտերէն, Ֆարսերէն եւ այլ լեզուներով բրոշիւրներին, որոնց նպատակը պիտի լինի նպաստել հայերի հետ ապրող այլեւայլ ժողովուրդների համերաշխութեան եւ մերձեցման։

II

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակել Կովկասում,

1) Մի օրաթերթ, որ հանդիսանալով օրգան Հ. Յ. Դաշնակցութեան Կովկասեան շրջանի, արձագանգ պիտի տայ ընթացիկ տնտեսական-քաղաքական հասարակական բոլոր հարցերին՝ ղեկավար ունենալով մեր աշխարհահայեացքը եւ արծարծելով մեր կուսակցութեան սկզբունքը։

2) Մի ամսագիր — հասարակական, գիտական, գրական — որի ծաւալի, բաժնեգնի եւ այլ մանրամասնութիւնների որոշումը թողնել Կովկասեան Ռայոնական Ժողովին։

3) Մի ռուսերէն թերթ (շաբաթաթերթ կամ օրաթերթ), որի բուն նպատակն է լինելու պարզաբանել հայ կեանքն եւ առանձնապէս Հ. Յ. Դաշնակցութեան իսկական պատկերը Ռուսաստանի հասարակութեան առաջ։

4) Շարունակել «Յառաջ»ի գրադարանի հրատարակութիւնը (առնուազն 100 տպագրական թերթ — 3000 երես տարեկան), լոյս ընծայել մեր Ծրագրին եւ գործելակերպին համապատասխան ինքնուրոյն եւ թարգմանական գրուածքներ, գիտական-հասարակական ընդհանուր հարցերի շարքերում՝ կարեւոր տեղ տալով նաեւ տաճկահայ դատի եւ Երկրի տնտեսական-սոցիալական ուսումնասիրութեան վերաբերեալ աշխատութիւններին (տաճկահայ բարբառով եւս)։

III

## ՕՐԳԱՆՆԵՐ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Ժողովը որոշեց.

1) Շարունակել Փարիզի «Pro Armenia»ի հրատարակութիւնը՝ ճանաչելով թէ՛ օրգանի եւ թէ խմբագրական մարմնի մատուցած ծառայութիւնները հայոց հարցին։

2) . . . . . . . . . . . . . . . . .

3) Մտցնել «Pro Armenia»ի էջերի մէջ տեղեկութիւններ՝ Դաշնակցութեան գործունէութեան մասին։

4) . . . . . . . . . . . . . . . . .

5) Փակել Լոնդոնի «Pro Armenia»ի հարցը եւ նրա հրատարակութիւնը համարել, ներկայ պայմաններում, անկարեւոր, յանձնելով անգլիական պրոպագանդի գործը . . . .

6) Եւրոպական մամուլի մէջ պրոպագանդ անելու համար, բիւջէի սահմանած չափով, թղթակիցներ պահել։

7) Դրամապէս նպաստել . . . . . . հրատարակուող թերթին՝ զբաղուելու մեր հարցով։

Աչքի առաջ ունենալով Ռուսաստանում առաջ եկած բարեփոխութիւնները, Ժողովը յանձնարարում է պատշաճ Մարմիններին՝ ուշադրութիւն դարձնել նաեւ այն պրոպագանդի վրայ, որ կարող է կատարուել Ռուսաստանում՝ դիմադիր տարրերի աջակցութեամբ։

---

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

### ԲՌՆԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ(20)

Լսելով բռնի հանգանակութեան մասին եղած զեկուցումն ու վիճաբանութիւնները, Ընդհանուր Ժողովը աչքի առաջ ունենալով՝

1) 1904 թուի Ընդհ. Ժողովի որոշումը, ուր այդ ձեւի հանգանակութիւնը նկատուած է իբրեւ բացարձակ չարիք։

2) 1905 թուի Խորհուրդի վճիռը, որը կարգադրում է՝ «դադարեցնել Դրամ կոմիտէի կողմից նոր դիմումներ անելը»։

Այլեւ նկատելով՝

1) Այն բարոյական լքումը, որ առաջ է բերել բռնի հանգանակութիւնը հասարակական լայն խաւերում՝ թուլացնելով միաժամանակ մարմինների գործունէութիւնը.

2) Դաշնակցութեան եւ այլ մարմինների ունեցած դառն փորձերը, հակայեղափոխական հետեւանքները . . . . . .

Որոշեց՝

1) Ի սպառ արգիլել բռնի միջոցների գործածութիւնը՝ հանգանակութեան գործում.

2) Ամենախիստ պատասխանատուութեան ենթարկել այն անդամներին եւ մարմիններին, որոնք կը շարունակեն դիմել բռնի միջոցների.

3) Ազդու միջոցներ ձեռք առնել վերջ տալու այն բռնի հանգանակութիւններին, որ կատարում են այլեւայլ բախտախնդիրներ, կազմակերպութեան անունից, գաղտնի կամ խարդախ միջոցներով.

4) Ժողովի այս որոշումը յայտարարել կազմակերպութեան պաշտօնական օրգանի մէջ։

---

### «ՆԱԽԱԳԻԾԸ» ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆԸ(21)

Ընդհանուր Ժողովը, լսելով ներկայացուած զեկուցումը՝ «Խորհուրդի իրաւասութեան մասին՝ Նախագծի հրատարակութեան գործում» եւ այս առթիւ



տեղի ունեցած կարծիքների փոխանակութիւնն ու վիճաբանութիւնները՝ հասաւ հետեւեալ եզրակացութեան.

Խորհուրդը՝ հիմնուելով Դաշնակցութեան հիմնական Ծրագրի, Գ. Ընդհանուր Ժողովի կողմից կովկասեան գործունէութեան մասին տրուած որոշումների ոգու, Կովկասեան Շրջանային Ժողովի այս առթիւ տրուած որոշումների, ինչպէս նաեւ կեանքի հրամայողական պահանջների վրայ, պարտաւոր էր հրատարակել «Կովկասեան Նախագիծը» իբրեւ ուղեցոյց կովկասահայ կեանքի քաղաքական եւ տնտեսական գործունէութեան, վերապահելով նրա վերջնական հաստատութիւնը ներկայ Ընդհանուր Ժողովին։

---

### ԵՐԿՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ(22)

Ընդհանուր Ժողովը լսելով՝

Երկիրը ուսումնասիրելու եւ այնտեղ ուսումնասիրողներ ուղարկելու մասին եւ կատարելով այդ առիթով մտքերի փոխանակութիւն՝ յանգեց հետեւեալ եզրակացութեան.

1) Դնել այդ ուսումնասիրութիւնը՝ գլխաւորապէս վիճակագրական եւ ռազմական-յեղափոխական տեսակէտից՝ աւելի լայն եւ գիտական հիմքերի վրայ.

2) Պատրաստել մի հարցարան-ծրագիր եւ ուղարկել Երկրի մարմիններին եւ ընկերներին՝ վիճակագրական, ազգագրական, տնտեսագիտական եւ քաղաքական ուսումնասիրութիւններ անելու համար։

3) Գտնել . . . . ձեռնհաս անձինք՝ յանձնելով նրանց կազմակերպութեան հաշուով Երկիր մտնել (մեր ընկերների ուղեկցութեամբ) ռազմական եւ քաղաքական ուսումնասիրութիւններ անելու նպատակով։

4) Բոլոր միջոցներով նպաստել մտաւորական ընկերների . . . . մտնելուն աւելի մեծ թուով՝ նախօրօք պատրաստելով նրանց՝ այդ աշխատանքի համար։

5) Անհրաժեշտօրէն պատրաստել հայկական գաւառների մանրամասն եւ մեծադիր քարտէս։

6) Կազմել մի յատուկ մարմին «Ուսումնասիրող Մարմին» անունով, այդ ամբողջ գործը կարգադրելու համար, հիմնուած վերի որոշումների վրայ։

---

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԻՒՐՕ(23)

Ընդհանուր Ժողովը լսելով Բրիւքսէլի Միջազգային Սոցիալիստական Բիւրոյի կողմից եղած առաջարկը (տես «Դրօշակ» 1905 № 6) եւ հիմնուելով մեր Ծրագրի հիմնական կէտերի վրայ, որոշեց՝ յանձնարարել Արեւմտեան Բիւրոյին՝ բանակցութեան մէջ մտնել յիշեալ Բիւրոյի հետ, յայտնել նրան՝ Դաշնակցութեան յարումը Միջազգային Սոցիալիստական Կոնգրէսների որոշումներին եւ միջոցներ ձեռք առնել կարգաւորելու Դաշնակցութեան մասնակցութիւնը Միջազգային Սոցիալիստական Բիւրոյին եւ կոնգրէսներին։

---

### ԱՌԱՋԻԿԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ(24)

Ընդհանուր Ժողովը մտքերի փոխանակութիւնից յետոյ, որոշեց.

1) Առաջիկայ, Հինգերորդ Ընդհանուր Ժողովը նշանակել գալ տարուայ վերջերը, ոչ ուշ քան 1908ի աշունը։

2) Ընդհանուր Ժողովի տեղի որոշումը թողնել երկու Բիւրոներին, հրահանգելով որ ամէն ջանք գործ դրուի Ժողովը կայացնելու . . . . . . սահմաններում, Երկրին մօտիկ։

3) Արտակարգ պարագաների դէպքում թողնել Խորհուրդին՝ հրաւիրելու արտակարգ Ընդհ. Ժողով։

---

### ԳԱՂՈՒԹՆԵՐ(25)

Ընդհանուր Ժողովը քննելով Բալկանի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պարսկաստանի եւ հարաւային Ռուսաստանի գաղութների մասին ներկայացրած զեկուցումները՝ յանձնարարում է իր այնտեղի մարմիններին.

1) Կազմակերպական-դրամական աշխատանքներին կից հիմնադրել մի լայն պրոպագանդ, գրաւոր եւ բերանացի, նպատակ ունենալով տարածել մեր Ծրագրի սկզբունքները եւ սերտ կերպով կապել գաղութները յեղափոխական գործի հետ։

2) Ոչինչ ջանք չխնայել՝ յարաբերութեան մէջ դնելու հայ գաղութները՝ տեղական աշխատաւորական շրջանների եւ սոցիալիստական կազմակերպութիւնների հետ, իբրեւ մի ցանկալի մեթոդ փոխադարձ համերաշխութիւնը զօրացնելու համար։

3) Տեղական եւ օտար մամուլի մէջ պրոպագանդ մղել յօգուտ հայ ժողովրդի դատի, ինչպէս եւ այն քաղաքական նպատակի, որին ձգտում է Դաշնակցութիւնը։

---

### ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ(26)

Նկատելով որ պարսկական ներկայ շարժումը կարող է դառնալ ժողովրդական արթնացման բնոյթ ունեցող հասարակական խոշոր երեւոյթ՝ թէ՛ Պարսկաս-

տանի, թէ Արեւելքի համար եւ գտնելով դրա տարածումն ու լայնանալը ցանկալի թէ՛ համամարդկային, թէ հայկական տեսակէտից,

Ընդհանուր Ժողովը յանձնարարում է Պարսկաստանի դաշնակցական մարմիններին եւ անհատներին՝ բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման զարգացման, մտցնելով պարսկական արթնացման մէջ այն ազատագրական, ռամկավարական եւ աշխատաւորական ոգին, որը բխում է Դաշնակցութեան Ծրագրից։

## ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

## ԴԺԳՈՀՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ԲՈՂՈՔՆԵՐ(27)

Մանրամասն քննութեան առնելով դժգոհութիւնների ու բողոքների այն փաստերը, որոնք արձանագրուած են տեղեկագրերի ու անհատական դիմումների մէջ, Ընդհանուր Ժողովը, ամէն մի կարեւոր դէպքի համար յատուկ կարգադրութիւն անելով, միաժամանակ որոշեց․

1) Յանձնարարել դաշնակցական բոլոր մարմիններին՝ հաղորդելու ի գիտութիւն իրանց շրջանի հասարակութեան, որ ոչ մի զեղծում, բռնութիւն եւ անկանոնութիւն, կատարուած անհատների եւ խմբերի կողմից, չի մնայ առանց անկողմնապահ քննութեան եւ խիստ պատժի։

2) Դիւրութիւն տալ, որ ամէն ոք, կուսակցական թէ անկուսակցական, հնարաւորութիւն ունենայ, կազմակերպութեան ղեկավարող մարմիններին իմաց տալու Ժողովրդի մէջ եղած գանգատներն ու բողոքները։

3) Յանձնել Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոններին, իբրեւ Ընդհանուր Ժողովի որոշումների ճիշդ գործադրութեան վրայ հսկող օրգաններ, պատասխանատուութեան կանչել այն բոլոր դաշնակցականներին — զինուոր, պրոպագանդիստ, հայդուկ, կազմակերպող — որոնք իրենց քայլերով արդար բողոքի առիթ են տալիս, ինչպէս եւ այն մարմիններին, որոնք վարագուրում են այդ տեսակ քայլերը կամ թերանում պատժելու նրանց հեղինակներին։

Ընդհանուր Ժողովը լիայոյս է որ իր այս հրահանգի ճիշդ կիրառութեամբ՝ կարելի պիտի լինի արմատախիլ անել կուսակցութեան անուան հետ, յաճախ անհիմն կերպով, կապուող զեղծումները, եւ ներշնչել հայ Ժողովրդի բոլոր խաւերին այն գիտակից վստահութիւնը, որ միշտ վայելել է Դաշնակցութիւնը ոչ միայն կողմնակիցների այլեւ ազնիւ հակառակորդների կողմից։

---

## ՈՐՈՇՈՒՄ
## ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ(28)

Ընդհանուր Ժողովը նկատի առնելով Ցուցական Մարմնի տեղեկագիրը, Քննիչ Յանձնախմբի զեկուցագիրը, իր բոլոր յարակից դոկումաններով, ինչպէս նաեւ Ցուցական Մարմնի ներկայացուցիչ Սաֆոյի պատասխան-զեկուցումը Յանձնախմբի եզրակացութիւններուն, եւ նոյն մարմնի անդամներու՝ Սաֆոյի, Թորգոմի եւ Ռուբինայի բերանացի յայտարարութիւնները, որոշեց․

Զծանրանալ ձեռնարկին տեխնիքական կողմի մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ, եւ քննութեան առնել Ցուցական Մարմնի գործունէութեան կազմակերպական եւ ընկերական-բարոյական կրկնակ տեսակէտները։ Ուստի,

1) Նկատելով որ Ցուցական Մարմնի անդամները, էլլէնի մահէն ետք, «ձեռնարկի» պատրաստութեան վերաբերեալ իրենց բոլոր խորհուրդներուն եւ անոնց կիրառութեան մէջ, փոխանակ ամէն հնարաւոր միջոց ձեռք առնելու, ձեռնարկին յաջողութեան հաւանականութիւնները բազմապատկելու, ընդհակառակն՝ տարամերժ մտահոգութիւնը ունեցած են, ամէն բանէ առաջ, իրենց անձերու փրկութիւնը ապահովել, խուսափելով իրենց սահմանած մեծ պատասխանատուութենէն․

2) Նկատելով՝ որ լոկ իրենց գլուխն ազատելու այդ սեւեռուն գաղափարէն մղուած, Ցուցական Մարմնի անդամները գիտակից անհոգութեամբ մը թերացեր են ուշադրութեան առնելու եւ ըստ այնմ կանխել կամ մեղմել փորձելու այն վտանգները, որոնք կը սպառնային նաեւ նոյն վայրը գործող օժանդակ ընկերներուն, ընկերներ՝ որոնք դատապարտուեցան մահուան եւ երկարատեւ բանտարկութեան պատիժներու․

3) Նկատելով որ Ցուցական Մարմինը իր ընկերական յարաբերութիւններուն մէջ ընդհանրապէս այլանդակ վարմունք մը ցուցադրած է, եւ ինչ որ մասնաւորապէս եզական է Դաշնակցութեան տարեգրութիւններուն մէջ՝ այն վրդովիչ ընթացքն է, որով այդ մարմինը հետամուտ եղած է, թէ գրաւոր կերպով (Վ…ի ատենագրութեան մէջ) եւ թէ բերանացի տարաձայնութիւններով, արատաւորել Թանկագին յիշատակը պարտականութեան դաշտին վրայ ինկած մեր անմոռանալի ընկ. էլլէնին, Ս. . . ի դժբախտ արկածը ներկայացնելով իբր դաւ մը՝ նիւթուած էլլէնի կողմէ Շապուհի դէմ․

Ժողովը լուսաբանուած համարեց Ցուցական Մարմնի ծանր թերացումը ընկերական պարտականութիւններու մէջ եւ անոր պատասխանատուութիւնը «ձեռնարկի» անյաջողութեան մէջ, այն չափով որ այդ արդիւնք էր այդ մարմնի անդամներու անձնուիրութեան պակասին, պէտք չտեսաւ անդրագոյն քննութեան եւ դատի։



Միեւնոյն ատեն, աներկդիմի կերպով ապացուցուած գտնելով որ Սաֆոն եղած է ղեկավար էլլէնի մահէն ետք Ցուցական Մարմնի գործերուն, պատրաստողը՝ այդ մարմնի դոկումաններուն, հեղինակը՝ էլլէնի եւ Շապուհի մահուան շուրջը կուտակուած կասկածներուն եւ զրպարտութեան, եւ գլխաւոր ստեղծիչը այդ մարմնի շուրջը տիրող անբարոյական հեղձուցիչ մթնոլորտին։

Վճռեց,

1) Ցուցական Մարմնի անդամ Սաֆոն ի սպառ արտաքսել Հ. Յ. Դաշնակցութենէն եւ այդ մասին յայտարարել պաշտօնական օրգանին մէջ։

2) Ցուցական մարմնի անդամներ՝ Ա…, Թ… եւ Ք… հեռացած նկատել կազմակերպութենէն, յայտնելով այդ մասին կազմակերպական ճամբով դաշնակցական բոլոր մարմիններուն, եւ տալ անոնց իրաւունք ներկայացնել Դաշն. Խորհուրդին մեղմացուցիչ բացատրութիւններ եւ իրենց անկեղծ զղջման ապացոյցներ։ Խորհուրդին լիազօրութիւն կը տրուի ըստ այնմ փոխել այս որոշումը եթէ հնարաւոր տեսնէ։

3) . . . . . . . . . . . . . . . . .

---

## «ՎԱՐԴՈՅԻ ԽՆԴԻՐԸ»(29)

Ընդհանուր Ժողովը, Ապրիլ 28ի նիստին մէջ, լսելով Վարդոյի գործին համար կազմուած Դատական Յանձնաժողովի մանրամասն զեկուցումը՝ եկաւ հետեւեալ եզրակացութեան․

1) Նկատելով, որ պաշտօնական թէ անպաշտօն բազմաթիւ փաստաթղթեր կը հաստատեն Վարդոյի անարդարանալի մեղաւորութիւնը՝ գիտակցաբար իւրացուցած եւ իւր անձնական պէտքերուն ծախսած ըլլալուն համար Բալկանի Կեդր. Կոմիտէի 2139 ոսկի լեւ եւ 4673 արծաթ լեւը, ինչպէս նաեւ Արեւելեան Բիւրոյի կողմէն իրեն ղրկուած՝ կազմակերպական 2000 ռուբլին, — ընդամէնը՝ 12,112 Ֆրանկ․

2) Նկատելով որ դրամական այս յայտնի զեղծումներէն զատ՝ Վարդոն շահագործած է նոյնիսկ նահատակ ընկերոջ մը՝ Պետրոս Սերեմճեանի յիշատակը, հանգանակութիւն բանալով իւր թերթին մէջ՝ հրատարակելու համար նոյն ընկերոջ գրութիւններուն հաւաքածուն, եւ այդ հանգանակութենէն գոյացած հանրային դրամն եւս իւրացուցած է առանց յատկացնելու իսկական նպատակին․

3) Նկատելով վերջապէս որ Վարդոն իւր բոլոր անմաքուր գործերը եւ, մանաւանդ, իւր զեղծումները չքմեղելու համար հանրային կարծիքին առջեւ՝ դիմած է ամէն տեսակ անորակելի միջոցներու՝ ջանալով արատաւորել Դաշնակցութիւնը, դաշնակցական ամենամաքուր գործիչները, նկրտելով կասկածի ստուեր ձգել անոնց գործունէութեան վրայ, անուանարկութեան ու խեղաթիւրման հակասական ամէն փորձ ի գործ դնելով իւր թերթին մէջ,

Որոշեց․

Հաստատել դատական յանձնաժողովի եզրակացութիւնը եւ Բալկանի Շրջանային Ժողովի որոշումը, յանձնարարելով անոնց գործադրութիւնը պատշաճ մարմիններուն, այն է՝

ա) Արեւմտեան Բիւրոյի միջոցով պահանջել, որ Վարդոն իւրացուցած 12,112 Ֆր. գումարը վճարէ՝ յայտարարելէն 15 օրուայ ընթացքի մէջ․

բ) «Դրօշակ»ի մէջ յայտարարել Վարդոյի վերջնական արտաքսումը Դաշնակցութենէն՝ իբրեւ զեղծարար, յեղափոխութիւնը արատաւորող եւ անբարոյական անձնաւորութիւն։

գ) . . . . . . . . . . . . . . . . .

---

## «ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ
## ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ»
## «Միիրանական խումբ»(30)

Քննիչ Յանձնաժողովը, հիմնուած Ընդհ. Ժողովին ներկայացուած պաշտօնական զեկուցումների եւ նոյն Ժողովի դիւանում եղած գրաւոր դոկումենտների վրայ, խնդիրը մանրամասն քննելուց յետոյ՝ եկաւ հետեւեալ եզրակացութեան․

1) «Ժամանակաւոր Զինուորական Խորհուրդ» անուն կրող մարմինը Հ. Յ. Դաշնակցութեան մէջ կազմակերպուած է ապօրինի ճանապարհով։

2) Այդ ապօրինի մարմինը շինել եւ գործ է ածել կեղծ կնիք Հ. Յ. Դաշնակցութեան անունով։

3) Հրատարակել է Հ. Յ. Դաշնակցութեան անունից մի շարք թռուցիկներ եւ յատուկ ամբաստանագրեր, ջանալով ամենասուտ զրպարտութիւններով արատաւորել Դաշնակցութեան 1904ի Ընդհ. Ժողովի կողմից ընտրուած մարմինները։

4) Տաճկահայ դատի պաշտպանութեան պատրուակով՝ երեւան գալով եւ նրա անունը շահագործելով, բուրժուական եւ հակադաշնակցական այլ մութ տարրերի ձեռքը գործիք է եղել կազմակերպութեան դէմ եւ որոշ չափով վարկաբեկել է այդ դատը՝ հայ հասարակութեան առաջ։

5) Կազմակերպելով «Զինուորական Խորհուրդ», այդ խումբը նպատակ է ունեցել յայտարարել զինուորական դիկտատուրա եւ բռնի միջոցներով իր ձեռքն առնել կուսակցութեան վարչական գործը, դրամը, կայքը, Թիֆլիսի խմբագրութիւնը եւայլն։

6) Իւրացրել է կազմակերպութեան մի քանի զէնքերը։

7) Գործիք է դարձել իշխանութեան ձեռքին եւ գտնւում է գաղտնի ոստիկանութեան յատուկ հովանաւորութեան ներքոյ:

8) Ապօրինի այդ մարմնի գործունէութիւնը անպայման աներկդիմի կերպով պարսաւի է արժանացնել դաշնակցական բոլոր մարմինների եւ գործիչ ընկերների կողմից (Երկրի, Կովկասի եւ արտասահմանի):

9) «Ժամանակաւոր Զինուորական Խորհուրդ» անուան տակ միացած ուժերի գործունէութիւնը ոչ միայն խուլիգանական շարժում է, ունենալով նեցուկ բուրժուական հակայեղափոխական մի խմբակ եւ ռուս ոստիկանութիւնը, այլեւ մի սուր դաւաճանութիւն մասնաւորապէս ռամկահայ դատին, որի անունն է շահագործում:

Այս բոլոր փաստերի հիման վրայ՝ Ժողովը վերաքննելով խնդիրը, որոշեց.

1) Համարել Միհրանի եւ «Զինուորական Խորհրդի» միւս գործակից անդամների վարմունքը ծանր յանցանք կազմակերպութեան եւ նրա պաշտպանած ռամկահայ դատի դէմ, եւ այդ հիման վրայ ճանաչել նրանց ի սպառ արտաքսուած Դաշնակցութեան շարքերից:

2) Հրատարակել այդ որոշումը պաշտօնական օրգանի մէջ:

3) . . . . . . . . . . . . . . . . .

4) Հրաւիրել դաշնակցական իրաւասու մարմինների ուշադրութիւնն այն հանգամանքի վրայ, որ ապագայում այդ տեսակ անձինք պէտք է անյապաղ ենթարկուեն «Կանոնագրով» նախորոշուած պատասխանատուութեան, առանց սպասելու եւ բերելու այդօրինակ խնդիրները Ընդհանուր Ժողովին:

## ԶԵՂԾԱՐԱՐՆԵՐ(31)

Լսելով Զրաբերդի շրջանի մասին ներկայացուած զեկուցումը եւ գտնելով որ այնտեղ տիրող տնտեսական տագնապը եւ զանազան հարստահարութիւնները արդիւնք են կառավարական ընդհանուր անարխիայի, գիւղացու սակաւահողութեան եւ աղքատութեան, ինչպէս եւ յեղափոխական նախկին մարտիկների կամ խմբերի մի մասի անբարոյական սանձարձակութեան, Ընդհանուր Ժողովը յայտարարում է.

1) Դաշնակցութիւնից հեռացւում են ժողովրդի վրայ բռնացող զինուորները, եւ նրանց դէմ կռիւ է յայտարարւում կազմակերպական միջոցներով:

2) Աւազակութիւնների, աւազակային խմբերի, ինչպէս եւ անարխիայի առաջն առնելու համար, պէտք կազմակերպել եւ իրար շաղկապել գիւղերը:

3) Կազմակերպել գիւղացիութիւնը, նպաստել նաեւ Ռուսաստանի յեղափոխական շարժումներին, որոնց յաղթանակը միայն կարող է լուծել հողային տագնապը՝ ազատելով թէ՛ տեղացուն եւ թէ գաղթականներին տնտեսական ծանր կացութիւնից:

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆ
### Քրիստափոր Միքայէլեանի յիշատակին (32)

Ընդհանուր Ժողովը հաճոյքով լսեց Կովկասեան Ռայոնական Ժողովի որոշումը եւ Երեւանի ընկերների առաջարկը՝ մեր անմոռանալի ընկ. Քրիստափոր Միքայէլեանի ընտանիքը ապահովելու մասին, ու աչքի առաջ ունենալով, որ այդ հոգսը մինչեւ այժմ ծանրացած է եղել հանգուցեալի անձնական ընկերների վրայ, եւ որ այդ եղանակով դժուար է ապահով պայմանների մէջ դնել նրա զաւակի կրթութեան գործը, այլեւ այն, որ կազմակերպութեան համար բարոյական պարտաւորութեան խնդիր է՝ օգտուելով այս առիթից՝ արտայայտելու յարգանք մեր ընկերոջ թանկագին յիշատակին, որոշեց՝ կուսակցութեան վրայ առնել այդ գործի կարգաւորութիւնը ու պարտաւորեցնել Թիֆլիզի եւ Բագուի մեր մարմիններին՝ անյապաղ գործի գլուխ անցնել եւ ամենաուշը՝ մինչեւ 1907 թուի վերջը, կողմնակի միջոցներով, կազմել մի ֆոնդ ե յատկացնել այդ՝ Քրիստափորի ընտանիքի ապահովութեան եւ նրա զաւակի ուսման գործին:

Յանձնարարել Վ...ի եւ Տ...ի մարմիններին, ինչպէս եւ Արեւելեան Բիւրոյին, բարոյական աջակցութիւն ցոյց տալ մեր անմոռանալի ընկերներ Ս.ի եւ Հ.ի ընտանիքներին՝ հոգալով կողմնակի կամ, եթէ այդ անհնար լինի, «Կարմիր Խաչ»ի միջոցներով, նրանց զաւակների ուսման գործը . . . . . . . . . .
. . . . . . . . . . . . . . . . . . .

## ՆԱԽԱՀԱՇԻՒ

(1907)

1) Առձեռն դրամական միջոցները . . . . .
2) Մարմինների սպասելիք եկամուտները . . .
3) Բաշխումն . . . . . . . . . . .

Բաշխման մասը տպագրուած է առանձին եւ ուղարկուած մարմիններին(33):



## ՀԱՇՈՒԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1) Մարմինների հաշիւները . . . . . . .
2) Դաշնակցութեան ընդհ. հաշիւները . . . .
3) «Դրամ» կոմիտէի հաշիւները . . . . . .
4) Կազմումն հաշուական յանձնաժողովի, որի պարտաւորութիւնն է՝ քննել, եթէ հարկ լինի նոյնիսկ պտոյտներ ընելով, կազմակերպութեան բոլոր մարմինների հաշիւները եւ ներկայացնել իր եզրակացութիւնը հսկող օրգաններին:

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ(34)

1) Արեւելեան Բիւրօ . . . . . . . . . . .
2) Արեւմտեան Բիւրօ . . . . . . . . . . .
3) Պատասխանատու Մարմիններ . . . . . . .
4) Ծուցա-տեռորական Մարմին . . . . . . .

## ՋԱՆԱԶԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

. . . . . . . . . . . . . . . . . .

## ՎՃԻՌՆԵՐ ԱՅԼԵՒԱՅԼ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Այս վճիռները կը հաղորդուին երկու Բիւրոների միջոցով, կազմակերպական ճանապարհով:

(1) Տեսնել էջ 11:
(2) Տեսնել էջ 189–190:
(3) էջ 121, 122, 123, 138 եւ 140:
(4) էջ 140:
(5) էջ 215–216:
(6) էջ 204:
(7) էջ 204:
(8) էջ 140–141:
(9) Կիլիկիա: Տեսնել էջ 283:
(10) Սեբաստիա: Տեսնել էջ 124–125:
(11) Տերսիմ (Դերսիմ): Տեսնել էջ 261:
(12) Տեսնել էջ 214–215:
(13) Տեսնել էջ 250–251:
(14) Տեսնել Իննի Յանձնաժողովի արձանագրությունները, էջ 294–295:
(15) Նոյն, էջ 295:
(16) Նոյն, էջ 295:
(17) Տեսնել էջ 213:
(18) էջ 258–259:
(19) Տեսնել էջ 205, 208, 232, 233, 234:
(20) էջ 262:
(21) էջ 161:
(22) էջ 133:
(23) էջ 289:
(24) էջ 284:
(25) Իննի Յանձնաժողով, — էջ 296:
(26) էջ 260:
(27) Իննի Յանձնաժողով, — էջ 296:
(28) Ամբողջական բանաձևը տեսնել՝ Իննի Յանձնաժողովի արձանագրութեանց կցուած, — էջ 296–297:
(29) Տեսնել էջ 270:
(30) էջ 243:
(31) էջ 262:
(32) էջ 259:
(33) Տեսնել էջ 276, ինչպէս նաև էջ 314ի լուսապատճէնը:
(34) էջ 286–287:

ԿՈՄԻՏԷՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԳԱՂՏՆԻ

# ԴՐԱՄԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՒ

## ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 1907 ԹՒԻ ՀԱՄԱՐ

(ՎԱՒԵՐԱՑՈՒԱԾ Դ-րդ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ)

| ՄԱՐՄԻՆՆԵՐ | ՄՈՒՏՔ (ֆրանկ) Մնացորդ 1906 թուից | Սպասուելի 1907 թուին | Տեղական ծախս 1907 թուին | Տարեկան եւ կանոնից 5% անդամավճար | Մնացած տրամադրելի գումար |
|---|---|---|---|---|---|
| Արեւելեան Բիւրօ | 15000 | 15000 | „ | 750 | 29250 |
| Ռոկոնապատ | 40000 | 60000 | 30000 | 3000 | 67000 |
| Մեծ Քաղաք | 5000 | 25000 | 12500 | 1250 | 16250 |
| Նուաճահանգիստ | „ | 20000 | 10000 | 1000 | 9000 |
| Մրգաստան | 2000 | 30000 | 15000 | 1500 | 15500 |
| Քար | „ | 20000 | 7000 | 1000 | 12000 |
| Ջրաբերդ | „ | 20000 | 6000 | 1000 | 13000 |
| Ապառաժ | 10000 | 20000 | 10000 | 1000 | 19000 |
| Այգեստան | „ | 20000 | 10000 | 1000 | 9000 |
| Ծլատ-Նալբանդ | 12500 | 20000 | 8000 | 1000 | 23500 |
| Ռուսաստ. դաշն. ուսանող. | „ | 5000 | 1000 | 250 | 3750 |
| Կարմիր Խաչ | „ | 20000 | „ | 1000 | 19000 |
| Զիֆոն | 150000 | „ | „ | „ | 150000 |
| Վրէժ | 200 | 20000 | 10000 | 1000 | 9200 |
| Շամ | 50000 | 10000 | 5000 | 500 | 54500 |
| Դուրան-Բարձրաւանդակ | 10000 | 10000 | 8000 | 500 | 11500 |
| Զօ-Միսաքեան | 26000 | „ | „ | „ | 26000 |
| Արեւմտեան Բիւրօ | 12000 | 25000 | „ | 1250 | 35750 |
| Ամերիկա | 50000 | 60000 | 12000 | 3000 | 95000 |
| Բալկան | „ | 25000 | 5000 | 1250 | 18750 |
| Եւրոպ. դաշն. ուսանող. | „ | 1200 | 200 | 60 | 940 |
| Եգիպտոս | „ | 5000 | 1000 | 250 | 3750 |
| Վիշապ | 150 | 5000 | 3000 | 50 | 1900 |
| Ծովափ | 18482 | 1000 | 500 | 50 | 18932 |
| Ոսկեհանք | „ | 10000 | 5000 | 50 | 4500 |
| Լեռնավայր | 10000 | 4000 | 3000 | 200 | 10800 |
| Փոթորիկ | „ | „ | „ | „ | 235228 |
| | | | | | 913000 |

| ԲԱՇԽՈՒՄՆ | ԵԼՔ (ֆրանկ) | | |
|---|---|---|---|
| Շամին | 172000 | — | |
| Դուրան—Բարձրաւանդակին * | 83000 | — | |
| Ցուցականին | 35000 | — | |
| Տեղօրական մարմին | 23000 | — | |
| Արեւելեան Բիւրոյին | 16000 | — | |
| Արեւմտեան Բիւրօ—„Դրօշակին“ | 16000 | — | |
| „Պրօ-Արմէնիային“ | 15000 | — | |
| Եւրոպական պրոպագանդին | 15000 | — | |
| Ռազմագիտական-մարմնին | 48000 | — | |
| Զէնքի փոխադրութեան | 37000 | — | |
| Բանտարկեալների օգնութեան | 23000 | — | |
| Բաստ-Սիմին | 10000 | — | |
| Լեռնավայրին | 15000 | — | |
| Վերնաշէնին | 12000 | — | |
| Զիֆոնին | 105000 | — | |
| Կովկասեան ինքնապաշտպանութեան } Քաղաքական կռուին } | 53000 | — | |
| Կովկաս-կազմակերպական | 30000 | — | |
| Արեւելեան բաժնի պրոպագանդին (գրաւոր և բանաւոր) | 64000 | — | |
| Անակնկալների | 65000 | — | |
| Զինուորական դպրոցին | 46000 | — | |
| Ընդհանուր ժողովի ծախսերին | 30000 | — | 913000 |
| | | | 913000 |

* Բացի յիշեալ գումարէն յատուկ հանգանակութիւն պիտի կատարուի յօգուտ Դուրան-Բարձրաւանդակի կարօտեալներին—100,000 ֆր.:

1907. յունիս
ԺԸՆԵՎ

Հ. Յ. Դ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ



# Դ. — ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

Հ. Յ. Դաշնակցութեան անդրանիկ Ծրագիրը տուած ենք ՆԻՒԹԵՐու Բ. հատորին մէջ, էջ 11–16:

Չորրորդ Ընդհանուր Ժողովը մշակեց նոր Ծրագիր, որու կարգ մը հիմնական գաղափարներն ու պահանջները բանաձեւուած էին արդէն 1905ին, Դաշնակցութեան Խորհուրդի հրատարակած Կովկասեան Նախագիծին մէջ: Ընդհանուր Ժողովի փակումէն ետք, Ծրագրի վերջնական խմբագրութիւնը կատարեց Իննի Յանձնաժողովը (տեսնել էջ 296): Հրատարակութեան պարտականութիւնը յանձնուեցաւ Արեւմտեան Բիւրոյին:

Հետաքրքրական են, թէեւ շատ ամփոփ կերպով տրուած, ծրագրային հարցերու շուրջ Ընդհանուր Ժողովի ընթացքին տեղի ունեցած զեկուցումները, ներկայացուած բանաձեւերն ու վիճաբանութիւնները (տեսնել էջ 244, 251–253, 270–274, 287–289): Շահեկան է նաեւ Յ. Շահրիկեանի Նախագծային զեկուցագիրը՝ ուղղուած Ընդհանուր Ժողովին (տեսնել ԱԶԴԱԿ ՇԱԲԱԹՕՐԵԱԿ-ԴՐՕՇԱԿ, Զ. տարի, թիւ 13, 14 եւ 15):

Հետաքրքրական է նաեւ նկատել՝ որ, մինչ անդրանիկ Ծրագիրը, իր ներածական բաժնին մէջ, ընկերային–քաղաքական ընդհանուր աշխարհահայեացքի կողքին կարեւոր տեղ կը յատկացնէր տանկահայ իրականութեան եւ թուրք–հայ յարաբերութիւններուն՝ իբրեւ մեկնակէտ մեր պայքարի, մինչ Կովկասեան Նախագիծը կը մեկնէր կովկասահայ իրականութենէն՝ զարգացնելու համար ընկերվարական պատմափիլիսոփայութեան կարգ մը էական կէտերը, մի՛շտ փորձելով սակայն պահել կապը կովկասեան պայմաններուն եւ անընդմէ թխող մեր գործունէութեան հետ, նոր Ծրագրի ներածական տեսութիւնը բոլորովին ընդհանուր է եւ անմիջական աղերս չունի Հայ Դատին եւ մեր ազգային–ազատագրական պայքարին հետ: Ազգային դատի հիմնական առաջադրանքները տրուած են Ընդհանուր Տեսութեան հետեւող Քաղաքական Պահանջներու բաժնին մէջ, առանց պատմա–քաղաքական առանձին հիմնաւորման:

1907ի Ծրագրի Ընդհանուր Տեսութիւնը ցարդ կը մնայ անփոփոխ: Գրեթէ անփոփոխ մնացած են նաեւ Տնտեսական Պահանջները: Քաղաքական Պահանջներն են միայն՝ որ փոփոխութիւններ են կրած պարբերաբար (Օսմանեան Սահմանադրութենէն ետք շատ մասնակի, եւ 1919–1925ին՝ հիմնական):

Պատկերը ամբողջական եւ հարազատ կերպով տուած ըլլալու համար, ստորեւ կը ներկայացնենք, ձախ սիւնակին վրայ, 1907ի Ծրագրի արեւելահայերէն բնագիրը (առնուած 1908ի հրատարակութենէն) եւ, աջ սիւնակին վրայ, արեւմտահայերէն *թէքսթը* (առնուած 1910ի մէկ հրատարակութենէն):

## ԾՐԱԳԻՐ

I

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*Մարդկութեան առաջադիմութիւնը, որ գնալով ազատում է մարդուն բնութեան ուժերի հպատակութիւնից եւ նրա հլու սպասաւորը դարձնում երբեմնի աատուածներին, չէ կարող կատարեալ նկատուել, քանի դեռ մարդկային մտքի եւ աշխատանքի նուաճումները հաւասարապէս չեն ծառայի հասարակութեան բոլոր անդամների բարօրութեան:*

*Բոլոր հասարակութիւնների մէջ՝ դեռ անյիշատակ ժամանակներից ի վեր՝ մենք դիտում ենք* դասակարգային բաժանումներ — *իշխողներ եւ հպատակներ, կեղեքողներ եւ կեղեքուողներ:*

## ԾՐԱԳԻՐ

I

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*Մարդկութեան յառաջդիմութիւնը — որ հետզհետէ կ'ազատէ մարդը բնութեան ուժերու հպատակութենէն եւ անոր հլու սպասաւորը կը դարձնէ երբեմնի աստուածները — չի կրնար կատարեալ նկատուիլ, ցորչափ մարդկային մտքի եւ աշխատանքի նուաճումները հաւասարապէս չեն ծառայեր հասարակութեան բոլոր անդամներու բարօրութեան:*

*Բոլոր հասարակութիւններու մէջ՝ դեռ անյիշատակ ժամանակներէ ի վեր՝ մենք կը տեսնենք* դասակարգային բաժանումներ — *իշխողներ եւ հպատակներ, կեղեքողներ եւ կեղեքուողներ:*

Հասարակութիւնը ամէն տեղ վերածուած է երկու անհաւասար հատուածների․— շահագործող փոքրամասնութիւնը, իր ձեռքն առած համայնքի, ցեղի հասարակական եւ քաղաքական կեանքի ղեկը, ստեղծում է օրէնքներ ու իրաւակարգեր, որոնց միջոցով խլում է աշխատաւոր մեծամասնութեան ձեռքից նրա արտադրած բարիքները եւ դարձնում նոր զէնք՝ նոյն աշխատաւորներին աւելի եւ աւելի հպատակեցնելու, կեղեքելու համար։

Աշխատանքի կազմակերպուած շահագործման նախնական եւ ամենակոպիտ ձեւն էր հնադարեան ստրկութիւնը, մի սիստեմ՝ որով աշխատաւորների ահագին բանակներ, զուրկ մարդկային ամենատարրական իրաւունքներից, մատնուած էին իրենց տէրերի անսահման քմահաճոյքին։

Նրան յաջորդեց միջնադարեան ճորտութիւնը, համեմատաբար աւելի մեղմ, բայց աւելի լայն շրջան ընդգրկող սիստեմ, ուր աւատականութիւնը (ֆէոդալիզմ) — Թագաւոր ու զօրավարներ, վասալներ, աշխարհիկ ու հոգեւոր իշխանութիւններ — կազմակերպուած իբրեւ կեղեքիչների մի հզօր ու համատարած բանակ, ծծում էր բազմամիլիոն գիւղացիութեան վաստակը, հրով ու սրով լռեցնելով նրա ազատագրական ամէն մի ձգտումը։

Փոքր ինչ ազատ շունչ էին քաշում այդ միջնադարեան հասարակութեան մէջ՝ առեւտրական ու արհեստաւոր դասերը, որոնց ծառայութեանը առանձնապէս պէտք ունէին իշխողները։ Արդիւնագործութեան ու հաղորդակցութեան միջոցների զարգացման հետ՝ բնական տնտեսութիւնը միշտ աւելի եւ աւելի վերածւում էր փողային տնտեսութեան․ հնչուն դրամը դառնում էր փոխանակութեան միակ միջոցը, մի ոյժ, որի առջեւ խոնարհւում էին պատերազմասէր, արկածախնդիր հրամանատարները, եւ առեւտրական տարրը, իբրեւ այդ նոր ոյժի ներկայացուցիչ, իբրեւ միջնորդ արժէքների փոխանակութեան մէջ, ստանում էր միշտ աւելի ու աւելի ծանրակշիռ գործօնի նշանակութիւն պետական կեանքում, վայելում էր զանազան առանձնաշնորհումներ եւ յարաբերական ազատութիւն։

Արհեստաւոր տարրերը եւս, շնորհիւ իրենց մէջ վաղաժամ առաջացած համքարական կազմակերպութիւնների ու հաւաքական պայքարների, կարողանում էին որոշ չափով մեղմացնել իրենց դրութեան վրայ ծանրացած ճնշումները։

Ահա այդ տեսակ, համեմատաբար նպաստաւոր պայմաններում աճելով, հասարակական երկու դասերը առաջ բերին ժամանակի ընթացքում այն պատմական, հռչակաւոր երրորդ դասակարգը, բուրժուազիան, որին վիճակուած էր՝ գիտակից ուժերի աջակցութեամբ՝ ահագին յեղաշրջում կատարել հասարակական յարաբերութիւնների մէջ։

Հասնելով զարգացման որոշ աստիճանի՝ նա ըմ-

Հասարակութիւնը ամէն տեղ վերածուած է երկու անհաւասար հատուածներու․— շահագործող փոքրամասնութիւնը, իր ձեռքն առած համայնքի, ցեղի, հասարակական եւ քաղաքական կեանքի ղեկը, կը ստեղծէ օրէնքներ եւ իրաւակարգեր, որոնց միջոցով կը խլէ աշխատաւոր մեծամասնութեան ձեռքէն անոր արտադրած բարիքները եւ զանոնք նոր զէնք կը դարձնէ աւելի եւ աւելի հպատակեցնելու ու կեղեքելու համար նոյն աշխատաւորները։

Աշխատանքի կազմակերպուած շահագործման նախնական եւ ամենակոպիտ ձեւն էր հնադարեան ստրկութիւնը, — սիստեմ մը՝ որով աշխատաւորներու ահագին բանակներ, զուրկ մարդկային էն տարրական իրաւունքներէ՝ մատնուած էին իրենց տէրերու անսահման քմահաճոյքին։

Անոր յաջորդեց միջնադարեան ճորտութիւնը, համեմատաբար աւելի մեղմ, բայց աւելի լայն շրջան ընդգրկող սիստեմ մը, ուր աւատականութիւնը — Թագաւոր ու զօրավարներ, աշխարհիկ ու հոգեւոր իշխանութիւններ — կազմակերպուած իբրեւ կեղեքիչներու հզօր եւ համատարած բանակ մը՝ կը ծծէր բազմամիլիոն գիւղացիութեան վաստակը, հրով եւ սրով լռեցնելով անոր ազատագրական ամէն մէկ ձգտումը։

Այդ միջնադարեան հասարակութեան մէջ քիչ մը ազատ շունչ կը քաշէին առեւտրական եւ արհեստաւոր դասերը, որոնց ծառայութեանը առանձնապէս պէտք ունէին իշխողները։ Ճարտարարուեստի եւ հաղորդակցութեան միջոցներու զարգացման հետ՝ բնական տնտեսութիւնը միշտ աւելի եւ աւելի կը վերածուէր դրամական տնտեսութեան, հնչուն դրամը կը դառնար փոխանակութեան միակ միջոցը, ուժ մը, որուն առջեւ կը խոնարհէին պատերազմասէր, արկածախնդիր հրամանատարներ եւ, առեւտրական տարրը, իբրեւ այդ նոր ուժի ներկայացուցիչ, իբրեւ միջնորդ արժէքներու փոխանակութեան, կը ստանար միշտ աւելի եւ աւելի ծանրակշիռ ազդակի նշանակութիւն պետական կեանքի մէջ եւ կը վայելէր զանազան առանձնաշնորհներ եւ յարաբերական ազատութիւն մը։

Արհեստաւոր տարրերն ալ շնորհիւ իրենց մէջ վաղաժամ առաջ եկած էսնաֆական կազմակերպութիւններու եւ հաւաքական պայքարներու, կը կարողանային որոշ չափով մեղմացնել իրենց վրայ ծանրացած ճնշումները։

Ահա այդ տեսակ, համեմատաբար նպաստաւոր պայմաններու մէջ աճելով, հասարակութեան երկու դասերը առաջ բերին, ժամանակի ընթացքին, այն պատմական հռչակաւոր երրորդ դասակարգը, բուրժուազին, որուն վիճակուած էր, գիտակից ուժերու աջակցութեամբ, ահագին յեղաշրջում յառաջ բերել ընկերային-հասարակական յարաբերութիւններուն մէջ։

Հասնելով զարգացման որոշ աստիճանի, ան ըմբոստացաւ աւատական կարգերուն դէմ եւ սկսաւ կազ-



բոստացաւ աւատական կարգերի դէմ եւ սկսեց կազմակերպուած, երկարատեւ կռիւ։ Հրապարակ իջնելով յանուն ազատութեան՝ նա քաշեց իր ետեւից եւ աշխատաւոր մասսաներին։ Աւատական ու յարակից կարգերը չդիմացան նրանց միացած գրոհին եւ խորտակուեցին․ Այդ կարգերի մնացորդները, այլեւայլ չափերով, յարատեւեցին միայն յետամնաց երկրներում․

Ազատուած աւատականութեան կապանքներից՝ բուրժուազիան մի նոր դարագլուխ բաց արաւ համաշխարհային էւոլիւսիոնի մէջ, հսկայական թռիչք հաղորդեց մարդկային աշխատանքին, արդիւնագործութեան ու առեւտրին։

Այն բոլորը բուրժուազիայի պատմական դերի դրական կողմն է։ Սակայն խորտակելով աւատական իրաւակարգը, նոյն բուրժուազիան հաստատեց իր սեփական իշխանութիւնը։ Կեղեքման մենաշնորհը՝ վայրենի բիրտ ուժից անցաւ աւելի քաղաքակիրթ ոյժին — կապիտալին։

Մեծ Յեղափոխութեան հռչակաւոր նշանաբանները — ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն — որոնց համար աշխատաւորը չէր ղլացել իր արիւնը թափելու, մնացին իբրեւ պատրանք նրա համար, իսկ բուրժուազիայի ձեռքին՝ իբրեւ միջոց գրաւած դիրքը ամրապնդելու։

Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի դեռ անձեռնմխելի էր մնում մասնաւոր սեփականութեան սկզբունքը, որ հիմնաքարն է հասարակական անհաւասարութեան։

⁂

Որքան աւելի է առաջադիմում տեխնիկան, որքան աւելի է զարգանում խոշոր մեքենային արդիւնագործութիւնը, այնքան աւելի է ուժեղանում ու ծաւալւում բուրժուազիայի տիրապետութիւնը։ Մանր արդիւնագործողները, անկարող լինելով դիմանալ մրցման, հետզհետէ զրկւում են իրենց աշխատանքի միջոցներից եւ խտացնում օրավարձով բանող սեփականազուրկների շարքերը։ Արդիւնագործութիւնը կենտրոնանում է։ Կապիտալը, հարստութիւնները ամբարւում են շահագործող փոքրամասնութեան ձեռքում, որը յենուած իր նիւթական ուժի վրայ, իր ձեռքն առած քաղաքական ղեկը — առաջադէմ երկրներում, — ձգտում է յաւերժացնել իր դիրքը, յարմարեցնել ամբողջ հասարակական կազմը իր դասակարգային շահերին, դնել իր յատուկ դրոշմը հասարակական բոլոր երեւոյթների վրայ։

Միլիտարիզմի, կանգուն, մշտական զօրաբանակների միջոցով՝ նա ապահովում է ներսում իր տիրապետութիւնը, իսկ դրսում գրաւում է շուկաներ, իր ապրանքները արտահանելու համար։ Յաճախ արհեստական կերպով նա ոյժ է տալիս միլիտարիզմին՝ ազատ

մակերպուած երկարատեւ կռիւ մը։ Հրապարակ իջնելով յանուն ազատութեան՝ ան իր ետեւէն քաշեց նաեւ աշխատաւորներու զանգուածները։ Աւատական եւ յարակից կարգերը չդիմացան անոնց միացած գրոհին եւ խորտակուեցան․ Այդ կարգերու մնացորդները, այլեւայլ համեմատութեամբ, յարատեւեցին միայն յետամնաց երկիրներու մէջ։

Աւատականութեան կապանքներէն ազատելով՝ բուրժուազին նոր դարագլուխ մը բացաւ համաշխարհային ընաշրջումին (évolution) մէջ, հսկայական թռիչք մը տուաւ մարդկային աշխատանքին, ճարտարարուեստին եւ առեւտուրին։

Այս ամէնը բուրժուազիին պատմական դերին դրական կողմն է։ Սակայն խորտակելով աւատական իրաւակարգը՝ նոյն բուրժուազին հաստատեց իր սեփական իշխանութիւնը։ Կեղեքումի մենաշնորհը վայրենի բիրտ ուժէն անցաւ աւելի քաղաքակիրթ ուժին — դրամագլխին (capital)։

Մեծ յեղափոխութեան հռչակաւոր նշանաբանները — ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն, — որոնց համար աշխատաւորը չէր զլացեր թափել իր արիւնը, մնացին իբրեւ պատրանք անոր համար, իսկ բուրժուազիի ձեռքին իբրեւ միջոց՝ գրաւած դիրքը ամրապնդելու։

Այլապէս չէր ալ կրնար ըլլալ, ցորչափ անձեռնմխելի կը մնար մասնաւոր սեփականութեան սկզբունքը, որ հիմնաքարն է ընկերային անհաւասարութեան։

⁂

Քանի՛ յառաջդիմէ արհեստը, քանի՛ զարգանայ մեքենական խոշոր արդիւնագործութիւնը, այնքան աւելի կ'ուժովնայ եւ կը ծաւալի բուրժուազիի տիրապետութիւնը։ Մանր արտադրիչները անկարող ըլլալով մրցումի դիմանալ, հետզհետէ կը զրկուին իրենց աշխատութեան միջոցներէն եւ կը խտացնեն օրականով բանող ընչազուրկներու (prolétaire) շարքերը․ Արդիւնագործութիւնը կը կեդրոնանայ։ Դրամագլուխը, հարստութիւնները կ'ամբարուին շահագործող փոքրամասնութեան ձեռքին մէջ, որ կռթնելով իր նիւթական ուժին եւ ձեռքն առած քաղաքական ղեկը — յառաջադէմ երկիրներու մէջ — կը ձգտի յաւերժացնել իր դիրքը, յարմարցնել ամբողջ ընկերային կազմը իր դասակարգային շահերուն եւ դնել իր յատուկ դրոշմը ընկերային բոլոր երեւոյթներուն վրայ։

Ռազմոյթի (militarisme) կանգուն, մշտական զօրաբանակներու միջոցով՝ ան կ'ապահովէ ներսը իր տիրապետութիւնը, իսկ դուրսը՝ կը գրաւէ շուկաներ, իր ապրանքները արտածելու համար։ Շատ անգամ արհեստական կերպով ան ուժ կու տայ ռազմոյթին՝ ազատ դրամագլուխներու գործածութեան նոր ասպարէզ-

*Այդպիսով, ինդուստրիական շրջանում, աշխատանքն արդէն համայնացած լինելով, սոցիալիզմի իրականացումը պահանջում է միայն* արդիւնագործութեան միջոցների *համայնացումն, մինչդեռ գիւղական աշխարհում, ուր չի նկատւում հողերի կենտրոնացում՝ սոցիալիզմի իրականացման համար անհրաժեշտ է համայնացնել ե՛ւ արդիւնաբերութեան միջոցները — հող, մեքենաներ եւայլն, — ե՛ւ աշխատանքը՝ կօօպերատիւ ձեռնարկների միջոցով։*

***

*Հասարակական ընդհանուր էւոլիւսիոնի այդ ընթացքը առաջ բերելով՝ մրցում անհատ շահագործողների միջեւ, մրցում առանձին երկիրների շահագործող դասակարգերի միջեւ, կռիւ դրամատէրերի եւ աշխատաւորների միջեւ, կռիւ յաճախ նոյնիսկ աշխատաւորական խմբումների միջեւ — պատճառ է դառնում մարդկային անչափ էներգիայի ապարդիւն վատնումին։ Բաժին տալով մարդկութեան մի մասին մաշող աշխատանքը, միւսին պարապ ու զուարճամոլ կեանքը, մէկին թողնելով քայքայուել թշուառութիւնից, միւսին այլասերուել հարստութիւնից — նա դրանով իսկ հանդիսանում է զօրեղ խոչընդոտ մարդկային առաջադիմութեան գործում։*

*Կապիտալիզմի սնանկութիւնը ակներեւ է. կուլտուրական յառաջադիմութեան դրօշակը իրօք անցել է արդէն աշխատաւոր դասակարգերի ձեռքը, որոնք հակադրում են կապիտալիզմին՝* սոցիալիզմը։

*Սոցիալիզմի վարդապետութեամբ առաջնորդուելով, աշխատաւոր դասակարգերը ձգտում են վերացնել* կապիտալիստական *մասնաւոր սեփականութիւնը եւ նրա հետ կապուած անարխիական արդիւնագործութեան սիստեմը, հասարակական ընդհանուր սեփականութիւն դարձնել աշխատանքի, արդիւնագործութեան միջոցները — հողը, հանքերը, գործարանները, հաղորդակցութեան ու փոխանակութեան միջոցները եւ այլն — եւ բովանդակ տնտեսութիւնը կազմակերպել ու ղեկավարել* հաւաքականօրէն։

*Այդ հսկայական յեղաշրջումը կը կատարուի յօգուտ ոչ միայն աշխատաւորների, այլեւ բովանդակ մարդկութեան։ Բայց քանի որ նա հակասում է ունեւոր, իշխող դասակարգերի անմիջական շահերին, ուստի աշխատաւոր ընդհանրութեան ազատագրումը կարող է էապէս կատարուել նոյն աշխատաւորների ճիգերով, նրանց հաւաքական կռւով։ Այդ կռւի մէջ միանում են, ձեռք-ձեռքի տալիս՝ քաղաքային արդիւնաբերական պրոլետարիատը, աշխատաւոր գիւղացիութիւնը եւ յեղափոխական ինտելիգենցիան։*

*Ինչպէս յաճախ դիտուել է պատմութեան ընթացքում, այսօր եւս ամենաառաջադէմ հոսանքի՝ սոցիալիզմի կողմն են անցնում երբեմն նոյնիսկ իշխող դա-*

*աշխատանքը համայնացած ըլլալով արդէն, ընկերվարութեան իրագործումը կը պահանջէ միայն* արդիւնագործութեան միջոցներուն *համայնացումը, մինչդեռ գիւղական աշխարհին մէջ, ուր չի նկատուիր հողերու կեդրոնացում՝ ընկերվարութեան իրագործումին համար անհրաժեշտ է համայնացնել թէ՛ արդիւնաբերութեան միջոցները — հող, մեքենաներ եւայլն — եւ թէ՛ աշխատանքը՝ գործակցական* (coopératif) *ձեռնարկներու միջոցով։*

***

*Հասարակութեան ընդհանուր բնաշրջումին այդ ընթացքը առաջ բերելով մրցում անհատ շահագործողներուն միջեւ, մրցում տարբեր երկիրներու շահագործող դասակարգերուն միջեւ, պայքար դրամատէրերուն եւ աշխատաւորներուն միջեւ, պայքար շատ անգամ նոյնիսկ աշխատաւորական խումբերու միջեւ, պատճառ կը դառնայ մարդկային անչափ կորովի ապարդիւն վատնումին։ Մարդկութեան մէկ մասին բաժին ընելով մաշող աշխատանքը, միւսին՝ պարապ եւ զուարճամոլ կեանքը, թողնելով որ մին քայքայուի թշուառութենէ, իսկ միւսը ապասերի հարստութենէ, ան կը հանդիսանայ հզօր խոչընդոտ մը մարդկային յառաջադիմութեան գործին։*

*Դրամատիրութեան սնանկութիւնը ակներեւ է. մըշակութային յառաջդիմութեան դրօշակը իրապէս անցած է արդէն աշխատաւոր դասակարգերուն ձեռքը, որոնց դրամատիրութեան կը հակադրեն* ընկերվարութիւնը։

*Ընկերվարութեան վարդապետութեամբ առաջնորդուելով, աշխատաւոր դասակարգերը կը ձգտին վերցնել դրամատիրական մասնաւոր սեփականութիւնը եւ անոր հետ կապուած անիշխանական արդիւնագործութեան սիստեմը, հասարակութեան ընդհանուր սեփականութիւն դարձնել աշխատանքի՝ արդիւնագործութեան միջոցները — հողը, հանքերը, գործարանները, հաղորդակցութեան ու փոխանակութեան միջոցները եւայլն — բովանդակ տնտեսութիւնը կազմակերպել ու ղեկավարել* հաւաքաբար (collectivement)։

*Այդ հսկայական յեղաշրջումը կը կատարուի յօգուտ ոչ միայն աշխատաւորներու, այլեւ բովանդակ մարդկութեան։ Բայց որովհետեւ ան կը հակասէ ունեւոր, իշխող դասակարգերու անմիջական շահերուն, աշխատաւոր ընդհանրութեան ազատագրումը կարող է իրապէս կատարուիլ նոյն աշխատաւորներու ճիգերով, անոնց հաւաքական պայքարով։ Այդ պայքարին մէջ կը միանան եւ ձեռք ձեռքի կու տան՝ քաղաքներու արդիւնաբերական ընչազուրկները — աշխատաւոր գիւղացիութիւնը եւ յեղափոխական մտաւորականները։*

*Ինչպէս յաճախ դիտուած է պատմութեան ընթացքին մէջ, այսօր ալ էն յառաջադէմ հոսանքին՝ ընկեր-*



*սակարգերից առաւելապէս գիտակից տարրերը, մտաւոր ու բարոյական հեղինակութիւնները, որոնք եւ ուժեղ աջակից են հանդիսանում աշխատաւոր ժողովրդի դատին, նրա վարած կռւին։*

*Այդ կռիւը մղուել է ամբողջ պատմութեան ընթացքում. հարստահարուած աշխատաւորութիւնը ըմբոստացել է յաճախ տիրող ռեժիմի դէմ, բայց անկազմակերպ, տարտամ վիճակում, առանց նպատակի պարզ գիտակցութեան եւ առաջնորդուելով ուրիշ տարրերից, ծառայելով գլխաւորապէս նրանց շահերին։ Միայն այն ժամանակ, երբ աշխատաւոր դասակարգերը իրենց արեամբ նուաճեցին քաղաքական եւ քաղաքացիական շատ թէ քիչ ընդարձակ իրաւունքներ, երբ նրանք ձեռք բերին հնարաւորութիւն՝ որոշ չափով օգտուելու քաղաքակրթութեան ընդհանուր հոսանքից — այն ժամանակից միայն նրանք սկսեցին իրենց սեփական քաղաքականութիւնն ունենալ. Նրանց ձգտումները՝ մինչ այն անկերպարան՝ արտայայտուեցին դասակարգային շահերի ներհակութեան աւելի եւ աւելի յստակ գիտակցութեամբ, նրանց ըմբոստացումները՝ մինչ այն տարերային ու բաժան-բաժան՝ վերածուեցին կազմակերպուած ու սիստեմատիկ պայքարի, աշխատաւորական ուրոյն լոզունգներով։*

*Սոցիալիստական շարժումը իր էութեամբ* միջազգային *է։ Բոլոր երկրների աշխատաւոր տարրերը, իբրեւ միեւնոյն տնտեսական սիստեմի զոհեր, պիտի միանան եւ արդէն միանում են համաշխարհային մի հզօր եղբայրակցութեան մէջ, ու գիտակ իրենց բարձր առաքելութեան, վստահ իրենց յաղթանակի վրայ, դիմում են կազմակերպուած կռւի ճանապարհով դէպի նոր, սոցիալիստական կարգերը։*

***

*Աշխատաւոր ընդհանրութեան կազմակերպուող եւ միշտ աւելի աճող ուժին՝ բուրժուազիան հակադրում է իր յատուկ քաղաքականութիւնը, որը տարբերւում է, համաձայն միջավայրի պայմաններին։ Այն երկրներում, ուր նա դերիշխող է, ուր նրա ձեռքումն է քաղաքական ղեկը, նա բացարձակ կռիւ է մղում աշխատաւորական բանակի դէմ, միացնելով իր հետ բեկորները աւատական իշխանութեան, որի դէմ էր հանում նա մի ժամանակ նոյն աշխատաւոր մասսաներին։ Իսկ այն երկրներում, ուր աշխատաւորները սթափուել են կապիտալիզմի դեռ մատաղ հասակում եւ սկսել են իրենց կռիւը միաժամանակ շահագործման բոլոր ձեւերի դէմ, բուրժուազիան, լինելով թշնամի ե՛ւ միապետական ռեժիմին ե՛ւ աշխատաւորական շարժման՝ մերթ խրախուսում է աշխատաւոր բանակը ընդդէմ միապետութեան, որի գոյութեամբ կաշկանդուած է տեսնում*

*վարութեան կողմը կ՚անցնին — երբեմն նոյնիսկ իշխող դասակարգէն — առաւելապէս գիտակից տարրերը, մտաւոր եւ բարոյական հեղինակութիւնները, որոնք ուժեղ աջակից կը հանդիսանան աշխատաւոր ժողովրդեան դատին, անոր վարած պայքարին։*

*Այդ կռիւը մղուած է ամբողջ պատմութեան ընթացքին մէջ. հարստահարուած աշխատաւորութիւնը ըմբոստացած է յաճախ տիրող ռեժիմին դէմ, բայց անկազմակերպ, տարտամ վիճակի մէջ, առանց նպատակի պարզ գիտակցութեան եւ առաջնորդուելով ուրիշ տարրերէ ու ծառայելով գլխաւորապէս անոնց շահերուն։ Միայն այն ատեն, երբ աշխատաւոր դասակարգերը իրենց արիւնով նուաճեցին քաղաքական եւ քաղաքացիական քիչ թէ շատ ընդարձակ իրաւունքներ, երբ անոնք ձեռք բերին հնարաւորութիւնը՝ որոշ չափով օգտուելու քաղաքակրթութեան ընդհանուր հոսանքէն — այն ատեն միայն անոնք սկսան իրենց սեփական քաղաքականութիւնն ունենալ. անոնց ձգտումները, որոնք մինչեւ այն ատեն անկերպարան էին, արտայայտուեցան դասակարգային շահերու ներհակութեան աւելի եւ աւելի յստակ գիտակցութեամբ, անոնց ըմբոստացումները՝ որոնք մինչեւ այն ատեն տարերային ու բաժնուած էին՝ վերածուեցան կազմակերպուած ու սիստեմատիք պայքարի, աշխատաւորական ուրոյն նըշանաբաններով։*

*Ընկերվարական շարժումը իր էութեամբ* միջազգային *է։ Բոլոր երկիրներու աշխատաւոր տարրերը, իբրեւ միեւնոյն տնտեսական սիստեմի զոհեր, պէտք է միանան եւ արդէն կը միանան համաշխարհային հզօր եղբայրակցութեան մը մէջ, ու գիտակից իրենց բարձր առաքելութեան, վստահ իրենց յաղթանակի վրայ, կը դիմեն կազմակերպուած պայքարի ճամբով դէպի նոր, ընկերվարական կարգերը։*

***

*Աշխատաւոր ընդհանրութեան կազմակերպուող եւ յարաճուն ուժին՝ բուրժուազին կը հակադրէ իր յատուկ քաղաքականութիւնը, որ կը տարբերի միջավայրի պայմաններուն համեմատ։ Այն երկիրներուն մէջ, ուր ինքը դերիշխող է, ուր իր ձեռքն է քաղաքական ղեկը, ինք բացարձակ կռիւ կը մղէ աշխատաւորական բանակին դէմ, միացնելով իր հետ բեկորները աւատական իշխանութեան, որու դէմ կը հանէր ատեն մը նոյն աշխատաւոր զանգուածները։ Իսկ այն երկիրներուն մէջ, ուր աշխատաւորները սթափած են դրամատիրութեան դեռ մատաղ հասակին մէջ եւ սկսած են իրենց կռիւը միաժամանակ շահագործումի բոլոր ձեւերուն դէմ, բուրժուազին, ըլլալով թշնամի թէ՛ միապետական ռեժիմին եւ թէ՛ աշխատաւորական շարժումին՝ մերթ կը խրախուսէ աշխատաւոր բանակը միապետութեան դէմ, որու գոյութեամբ կաշկանդուած*

իր զարգացումը, մերթ թեւ է տալիս նոյն միապետութեան, երբ աշխատաւորների յաջողութիւնները սպառնում են խախտել իր հիմնական դիրքերը։

Դասակարգային կռիւը բարդանում է մասնաւորապէս այն երկրներում, ուր դերիշխող ազգութեան ներկայացուցիչները, իրենց ձեռքն առնելով պետական եւ հասարակական բոլոր հաստատութիւնները, ճնշում են թոյլ ազգերին եւ առհասարակ փոքրամասնութիւն կազմող միութիւններին։

Զրկուելով հասարակական ու պետական կեանքին ակտիւ մասնակցելու հնարաւորութիւնից, տուժելով ե՛ւ նիւթապէս ե՛ւ կուլտուրապէս, այդ թոյլ միութիւնները յետ են մնում յառաջադիմութեան ճանապարհի վրայ, եւ այդպիսով դանդաղում է համամարդկային կուլտուրայի հետ աշխատաւորի սոցիալական ազատագրութիւնը, քանի որ այդպիսով խոչընդոտ է դրւում մի կողմից՝ դասակարգային հակամարտութեան զարգացմանը ճնշուած ազգութիւնների մէջ, միւս կողմից՝ ճնշող ու ճնշուող ազգերին պատկանող աշխատաւոր դասակարգերի համերաշխութեանը։

Փոքրիկ, նուաճուած կուլտուրական միութիւնների մէջ աշխատաւոր տարրերը, կռուելով հանդերձ իրենց ցեղակից բուրժուազիայի դէմ, միեւնոյն ժամանակ նախանձախնդիր են իրենց ուրոյն ազգային կուլտուրայի, որը ստեղծել է ժողովրդական առանձնայատուկ հոգեբանութիւն։

Ազգային ճնշումների դէմ մղուող կռիւը աւելի յամառ ու յաղթանակող է դառնում՝ շնորհիւ այն հանգամանքի, որ այժմ այդ կուլտուրայի ներկայացուցիչները միայն ազգի «վերին» խաւերը չեն. ազգային կուլտուրան թափանցում է ժողովրդական լայն մասսաների մէջ ու դառնում նրանց սեփականութիւնը եւ յառաջդիմութեան միջոցը. ժողովրդական մասսաները իրենց իներտ դրութիւնից գիտակից կեանքի ասպարէզ նետուելով, երեւան են հանում թաքնուած ուժեր՝ կուլտուրական-հասարակական աշխարհում։

Փափաքելով հանդերձ ոչնչացնել բոլոր սահմաններն ու խտրութիւնները ազգերի միջեւ, ձգտելով հանդերձ կազմակերպել մէկ, ներդաշնակ, ամբողջական մարդկութիւն, ի տեղի այսօրուայ կտրատուած, բաժան-բաժան ու հակամարտ աշխարհի, սոցիալիզմի իրականացումը չի պահանջում այժմեան ուրոյն ազգայնական միութիւնների ի սպառ ձուլումը. միութիւններ, որոնք իրենց պատմականօրէն ժառանգած բեղմնաւոր առանձնայատկութիւններով կարող են միայն հարստացնել ապագայ սոցիալիստական մարդկութիւնը։

* * *

Աշխատաւոր դասակարգերի կռիւը յանուն սոցիալիզմի առաջ է տարւում բոլոր հնարաւոր միջոցներով,

կը տեսնէ իր զարգացումը, մերթ ալ թեւ կու տայ նոյն միապետութեան, երբ աշխատաւորներուն յաջողութիւնները կը սպառնան խախտել իր հիմնական դիրքերը։

Դասակարգային պայքարը կը բարդանայ մասնաւորապէս այն երկիրներուն մէջ, ուր գերիշխող ազգութեան ներկայացուցիչները, իրենց ձեռքն առնելով պետական եւ ընկերային բոլոր հաստատութիւնները, կը ճնշեն թոյլ ազգերը եւ առհասարակ փոքրամասնութիւն կազմող միութիւնները։

Զրկուելով ընկերային եւ պետական կեանքին գործօն մասնակցութեան հնարաւորութենէն, տուժելով թէ՛ նիւթապէս եւ թէ՛ մշակութապէս, այդ թոյլ միութիւնները ետ կը մնան յառաջդիմութեան ճամբուն վրայ, եւ այդպէսով կը դանդաղի համամարդկային զարգացման հետ աշխատաւորին ընկերվարական ազատագրումը, քանի որ այդպէսով խոչընդոտ կը դրուի, մէկ կողմէն՝ դասակարգային հակամարտութեան զարգացումին՝ ճնշուած ազգութիւններու մէջ, միւս կողմէ՝ ճնշող ու ճնշուող ազգերուն պատկանող աշխատաւոր դասակարգերուն համերաշխութեանը։

Փոքրիկ, նուաճուած մշակութային միութիւններու մէջ աշխատաւոր տարրերը պայքարելով հանդերձ իրենց ցեղակից բուրժուազիի դէմ, միեւնոյնատեն նախանձախնդիր են իրենց ուրոյն ազգային մշակոյթին (culture), որ ստեղծած է ժողովրդական առանձնայատուկ հոգեբանութիւն մը։

Ազգային ճնշումներու դէմ մղուող պայքարը աւելի յամառ ու յաղթանակող կը դառնայ, շնորհիւ այն հանգամանքին, որ հիմա այդ մշակոյթի ներկայացուցիչները միայն ազգին «վերին» խաւերը չեն. ազգային մշակոյթը կը թափանցէ ժողովրդական լայն զանգուածներու մէջ եւ կը դառնայ անոնց սեփականութիւնը եւ անոնց յառաջդիմութեան միջոցը։ Ժողովրդական զանգուածները իրենց անշարժ դրութենէն նետուելով գիտակից կեանքի ասպարէզը, երեւան կը հանեն թաքուն ուժեր՝ մշակութային-ընկերային աշխարհին մէջ։

Փափաքելով հանդերձ ոչնչացնել բոլոր սահմաններն ու խտրութիւնները ազգերու միջեւ, ձգտելով հանդերձ կազմակերպել մէկ, ներդաշնակ, ամբողջական մարդկութիւն մը, այսօրուան կտոր-կտոր, բաժան-բաժան ու հակամարտ աշխարհին տեղ, — ընկերվարական իրագործումը չի պահանջեր արդի ուրոյն ազգայնական միութիւններուն ի սպառ ձուլումը. միութիւններ, որոնք իրենց պատմականօրէն ժառանգած բեղմնաւոր մասնայատկութիւններով կարող են միայն ճոխացնել ապագայ ընկերվար մարդկութիւնը։

* * *

Աշխատաւոր դասակարգերու պայքարը յանուն ընկերվարութեան առաջ կը տարուի բոլոր հնարաւոր մի-



— տնտեսական եւ քաղաքական հողի վրայ։ Օգտուելով խոշոր տնտեսութեան ներկայացրած առաւելութիւններից, գործարանական բանուորները ձգտում են կազմակերպուել, առաջ տանել տնտեսութեան բոլոր բարդ գործառնութիւնները միմիայն իրենց ուժերով եւ իրականացնել դեռ ներկայ կարգերում, — կոոպերասիոնների, արդիւնաբերող ու սպառող ընկերակցութիւնների միջոցով — համայնական սեփականատիրութեան ու տնտեսութեան մի քանի ձեւերը։

Կոոպերատիւ աշխատանքը տարածւում է նաեւ գիւղական աշխարհում, ուր միեւնոյն ժամանակ կատարելագործւում են արդէն վաղուց գոյութիւն ունեցող համայնական սեփականատիրութեան ու աշխատանքի տեսակները։ Կոոպերասիոնները ոչ միայն միջոց են որոշ չափով պաշտպանելու աշխատաւորների առօրեայ շահերը, այլեւ ճանապարհ՝ գործնականապէս համայնական ոգով դաստիարակելու աշխատաւորներին, պատրաստելու նրանց ապագայ սոցիալական կազմակերպութեան համար։

Աշխատաւորական կուսակցութիւնները միւս կողմից անդադար կռիւ են մղում քաղաքական հողի վրայ, քանի որ տիրող անհաւասարութիւնը պահպանւում է գլխաւորապէս բուրժուազիայի քաղաքական գերիշխանութեամբ։

Օգտուելով անցեալի փորձերից եւ իրենց յարաճուն աղդեցութիւնից, նրանք պատրաստւում են ձեռք ձգելու քաղաքական ղեկը, որպէսզի ստեղծեն նպաստաւոր պայմաններ իրենց սոցիալական իդէալի իրագործման համար, ռամկավարացնել ամենալայն չափերով քաղաքական կազմակերպութիւնը, վերածել պետութիւնները դաշնակցական-ռամկավար հանրապետութիւնների, ապակենտրոնացման ամենաընդարձակ հիմքերի վրայ եւ իրագործել էքսպրոպրիացիայի (արտագրաւում) միջոցով սոցիալիստական կարգերը։

Սոցիալիզմը կը հաւաքէ իր դրօշակի տակ ամբողջ տառապող մարդկութիւնը, կռուելու համար միջազգայնօրէն կազմակերպուած շահագործման ու բռնակալութեան դէմ։

Նա կը հարթէ ճանապարհը դէպի անհատի եւ հասարակական միութիւնների ազատ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացումը. նա հրապարակ կը հանէ այն բոլոր դրական ուժերը, որոնք թաքնուած են մնում այլ եւ այլ ձեւերով արտայայտուող ճնշումների տակ։

Նա կը խորտակէ այն բոլոր անջրպետները, որոնք չերտաւորում են ժամանակակից հասարակութիւնը, բաժանելով նրան հպատակ ու հակամարտ, թշնամացած դասակարգերի։

Նա վերջ կը դնէ շահագործման բոլոր յայտնի ու դիմակաւորուած ձեւերին. կը միացնէ բոլոր ժողովուրդները մի հոյակապ Դաշնակցութեան մէջ, խաղաղ աշխատակցութեան հողի վրայ. նա կ'առաջնորդէ դէպի իսկական թագաւորութիւնը «ազատութեան, հա-

ջոցներով, — տնտեսական եւ քաղաքական հողի վրայ։ Օգտուելով խոշոր տնտեսութեան ներկայացուցած առաւելութիւններէն, գործարանի բանուորները կը ձըգտին կազմակերպուիլ, առաջ տանիլ տնտեսութեան բոլոր բարդ գործառնութիւնները միմիայն իրենց ուժերով եւ իրագործել տակաւին ներկայ կարգերուն մէջ — գործակցութիւններու, արդիւնաբերող եւ սպառող ընկերակցութիւններու միջոցով — համայնական սեփականատիրութեան ու տնտեսութեան քանի մը ձեւերը։

Գործակցական աշխատանքը կը տարածուի նաեւ գիւղական աշխարհին մէջ, ուր միեւնոյն ատեն կը կատարելագործուին՝ արդէն շատոնց գոյութիւն ունեցող համայնական սեփատիրութեան ու աշխատանքի տեսակները։ Գործակցութիւնները ոչ միայն միջոց են որոշ չափով պաշտպանելու աշխատաւորներու առօրեայ շահերը, այլեւ ճամբայ մը՝ գործնականապէս համայնական ոգւով դաստիարակելու աշխատաւորները, պատրաստելու զանոնք ապագայ ընկերվար կազմակերպութեան համար։

Աշխատաւորական կուսակցութիւնները միւս կողմէ անդադար պայքար կը մղեն քաղաքական հողի վրայ, քանի որ տիրող անհաւասարութիւնը կը պահպանուի գլխաւորապէս բուրժուազիի քաղաքական գերիշխանութեամբ։

Օգտուելով անցեալի փորձերէն եւ իրենց յարաճուն ազդեցութենէն, անոնք կը պատրաստուին ձեռք ձգել քաղաքական ղեկը, որպէսզի ստեղծեն նպաստաւոր պայմաններ իրենց ընկերվարական իդէալին իրագործման համար, — ռամկավարացնել ամենալայն համեմատութեամբ քաղաքական կազմակերպութիւնը, վերածել պետութիւնները դաշնակցական – ռամկավար հանրապետութիւններու, ապակեդրոնացման էն ընդարձակ հիմերու վրայ եւ իրագործել արտասեփումի (expropriation) միջոցով ընկերվարական կարգերը։

Ընկերվարութիւնը կը հաւաքէ իր դրօշին տակ ամբողջ տառապող մարդկութիւնը, կռուելու համար միջազգայնօրէն կազմակերպուած շահագործումի ու բռնակալութեան դէմ։

Ան կը հարթէ ճամբան անհատին եւ ընկերային միութիւններուն դէպի ազատ, բազմակողմանի եւ ներդաշնակ զարգացումը. հրապարակ կը հանէ այն բոլոր դրական ուժերը, որոնք պահուած կը մնան այլեւայլ ձեւերով արտայայտուող ճնշումներու տակ։

Ան կը խորտակէ այն բոլոր անջրպետները, որոնք կը շերտաւորեն ժամանակակից հասարակութիւնը, բաժնելով զայն հպատակ ու հակամարտ, թշնամացած դասակարգերու։

Ան վերջ կը դնէ շահագործման բոլոր յայտնի ու դիմակաւոր ձեւերուն. կը միացնէ բոլոր ժողովուրդները հոյակապ դաշնակցութեան մը մէջ, խաղաղ աշխատակցութեան հողի վրայ. կ'առաջնորդէ դէպի իս-

ւասարութեան եւ եղբայրութեան»։

Եւ այդ իդէալը բոլոր տանջուածների ու հալածուածների՝ չի ներկայանում մեզ՝ իբրեւ մի անհող, անխարխուխ ցնորք, այլ միանգամայն իրագործելի մի հնարաւորութիւն, որովհետեւ նա ոչ միայն բխում է իրերի օբեկտիւ, տարերային ընթացքից, այլեւ թելադրւում է հրամայականօրէն՝ պատմութիւնը առաջ շարժող մասսաների ու անհատների կամքից, խղճից ու բանականութիւնից։

Պատմութեան օբեկտիւ եւ սուբեկտիւ ստեղծագործող ուժերի զուգաւորման մէջն է գրաւականը այն անտարակուսելի յաղթանակի, որ պիտի տանէ աշխատաւոր մարդկութիւնը ընդդէմ թէ՛ բնութեան կոյր ուժերի եւ թէ՛ հասարակութեան մէջ դարերով թագաւորող ստրկութեան ու անարդարութեան։

II

## ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբրեւ յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւն, ձգտում է պաշտպանել հայ աշխատաւոր մասսաների բովանդակ շահերը, թէ՛ տնտեսական–դասակարգային, թէ՛ մարդկային–քաղաքական եւ թէ՛ ազգային–կուլտուրական, նպատակ ունենալով ժողովրդի ձեռքը տալ կառավարութեան ղեկը եւ այժմեան միապետական ու կապիտալիստական կարգերը փոխարինել լայն ռամկավարութեամբ ու արդիւնաբերութեան միջոցների համայնացումով։

Ղեկավար ունենալով սոցիալիստական սկզբունքները եւ կանգնած մեր բնակած վայրերի իրական ու հասունացած կարիքների վրայ՝ կուսակցութիւնը առաջադրում է հետեւեալ նուազագոյն – minimum պահանջները.

1) ԹԻՒՐՔԱՑ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ Քաղաքական–տնտեսական ազատութիւն, հիմնուած տեղական լայն ինքնավարութեան եւ դաշնակցական(1) կապերի վրայ, Օսմանեան պետութեան սահմաններում։

2) Օսմանեան կենդրոնական կառավարութիւնը, հիմնուած ժողովրդական ռամկավար(2) ներկայացուցչութեան սիստեմի վրայ, վարում է պետութեան ընդհանուր գործերը — արտաքին քաղաքականութիւն,

ՆԻՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

կական թագաւորութիւնը «ազատութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան»։

Ու բոլոր տանջուածներու եւ հալածուածներու այդ իդէալը չի ներկայանար մեզի իբրեւ անհող, անխարխուխ ցնորք մը, այլ իրագործելի հնարաւորութիւն մը, որովհետեւ ան կը բխի ոչ միայն իրերու առարկայական, տարերային ընթացքէն, այլ կը թելադրուի հրամայաբար՝ պատմութիւնը առաջ շարժող զանգուածներու եւ անհատներու կամքէն, խղճէն ու բանականութենէն։

Պատմութեան առարկայական եւ ենթակայական ստեղծագործող ուժերու դաշնադրութեան մէջն է գրաւականը այն անտարակուսելի յաղթանակին, զոր պիտի տանի աշխատաւոր մարդկութիւնը թէ բնութեան կոյր ուժերուն եւ թէ հասարակութեան մէջ դարերով թագաւորող ստրկութեան եւ անարդարութեան դէմ։

II

## ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբրեւ յեղափոխական եւ ընկերվարական կուսակցութիւն, կը ձգտի պաշտպանել հայ աշխատաւոր զանգուածներուն բովանդակ շահերը, թէ՛ տնտեսական–դասակարգային, թէ՛ մարդկային–քաղաքական եւ թէ ազգային–մշակութական, նպատակ ունենալով ժողովուրդին ձեռքը տալ կառավարութեան ղեկը եւ արդի միապետական եւ դրամատիրական կարգերը փոխարինել լայն ռամկավարութեամբ եւ արդիւնաբերութեան միջոցներու համայնացումով։

Ղեկավար ունենալով ընկերվարական սկզբունքները, եւ նկատի ունենալով մեր բնակած վայրերու իրական ու հասունցած պէտքերը՝ կուսակցութիւնը կ՚առաջադրէ հետեւեալ նուազագոյն պահանջները.

## ԹԻՒՐՔԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

1) Թիւրքաց Հայաստանի մէջ՝ քաղաքական–տնտեսական ազատութիւն, հիմնուած տեղական լայն ինքնավարութեան եւ դաշնակցական(1) կապերու վրայ, Օսմանեան պետութեան սահմաններուն մէջ։

2) Օսմանեան կեդրոնական կառավարութիւնը, հիմնուած ժողովրդական ռամկավար(2) ներկայացուցչութեան սիստեմի վրայ, կը վարէ պետութեան ընդհանուր գործերը — արտաքին քաղաքականութիւն,



զօրք, դրամ, մաքս, փոստ–հեռագիր, պետական միւս ֆոնկսիոնները թողնելով տեղական ինքնավար շրջաններին։

3) Թիւրքաց–Հայաստանը, իբրեւ Օսմանեան ֆեդերատիւ պետութեան մի մասը, վայելում է ազատութիւն իր ներքին գործերում։ Նրա բոլոր շրջաններն ու համայնքները ներքին խնդիրներում նոյնպէս վայելում են տեղական ինքնավարութիւն։

4) Թիւրքաց–Հայաստանի թէ՛ կենտրոնական եւ թէ առանձին շրջանների օրէնսդրական–վարչական բոլոր մարմինները պէտք է ընտրուին ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական ձայնատուութեան սկզբունքով, առանց ցեղի, կրօնի եւ սեռի խտրութեան։

5) ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ռամկավար(2) հանրապետութիւնը կազմում է Ռուսաստանի ֆեդերատիւ հանրապետութեան անբաժան մասը, կապուած նրա հետ պետական ինքնապաշտպանութեան, դրամական սիստեմի, մաքսի եւ արտաքին քաղաքականութեան խնդիրներով։

6) Ներքին բոլոր գործերում Անդրկովկասեան հանրապետութիւնը անկախ է, ունի իր կենտրոնական պարլամենտը, ընտրուած՝ ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական ձայնատուութեան սիստեմով։ Իւրաքանչիւր անդրկովկասցի, որ անցել է 20 տարին, իրաւունք ունի, առանց սեռի խտրութեան, ընտրելու։

7) Անդրկովկասը ուղարկում է Ռուսաստանի համապետական պարլամենտը իր ներկայացուցիչներին՝ ընտրուած ձայնատուութեան նոյն սիստեմով։

8) Անդրկովկասեան հանրապետութիւնը բաժանւում է կանտոնների, որոնք վայելում են տեղական ամենալայն ինքնավարութիւն։ Համայնքները նոյնպէս վայելում են ինքնավարութիւն՝ զուտ համայնական խնդիրներում։

9) Կանտոնների սահմանները որոշելիս՝ պէտք է նկատի առնել ազգաբնակութեան տեղագրական եւ կուլտուրական առանձնայատկութիւնները, ըստ կարելւոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար։

10) Օրէնսդրական, դատաստանական, վարչական բոլոր մարմինները, ինչպէս եւ պաշտօնեաները ընտրըւում են, ժողովրդի կողմից, վերեւ յիշուած ընտրողական սիստեմով։

11) Ուղղակի օրէնսդրութիւն, ռեֆերէնդումի եւ նախաձեռնութեան իրաւունք։

զօրք, դրամ, մաքս, թղթատարութիւն եւ հեռագիր — պետական միւս գործերը ձգելով տեղական ինքնավար շրջաններուն։

3) Թիւրքաց–Հայաստանը, իբրեւ Օսմանեան դաշնակցական(1) պետութեան մէկ մասը, ազատութիւն կը վայելէ իր ներքին գործերուն մէջ։ — Անոր բոլոր շրջաններն ու համայնքները ներքին խնդիրներու մէջ նոյնպէս կը վայելեն տեղական ինքնավարութիւն։

4) Թիւրքաց–Հայաստանի թէ՛ կեդրոնական եւ թէ՛ առանձին շրջաններու օրէնսդրական–վարչական բոլոր մարմինները պէտք է ընտրուին ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական քուէարկութեան սկզբունքով, առանց ցեղի, կրօնի եւ սեռի խտրութեան։

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

5) Անդրկովկասի ռամկավար(2) հանրապետութիւնը կը կազմէ Ռուսաստանի դաշնակցական հանրապետութեան անբաժան մասը, կապուած անոր հետ պետական ինքնապաշտպանութեան, դրամական սիստեմի, մաքսի եւ արտաքին քաղաքականութեան խնդիրներով։

6) Ներքին բոլոր գործերուն մէջ Անդրկովկասեան հանրապետութիւնը անկախ է, ունի իր կեդրոնական Երեսփ. Ժողովը, ընտրուած՝ ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական քուէարկութեան դրութեամբ։ Իւրաքանչիւր անդրկովկասցի, որ անցուցած է 20 տարին, առանց սեռի խտրութեան իրաւունք ունի ընտրելու։

7) Անդրկովկասը Ռուսաստանի համապետական Երեսփ. Ժողովը կը ղրկէ իր ներկայացուցիչները՝ ընտրուած քուէարկութեան նոյն դրութեամբ։

8) Անդրկովկասեան հանրապետութիւնը կը բաժնուի նահանգներու (canton), որոնք կը վայելեն տեղական ամենալայն ինքնավարութիւն։ Համայնքները նոյնպէս կը վայելեն ինքնավարութիւն՝ զուտ համայնական խնդիրներու մէջ։

9) Նահանգներու սահմանները որոշածատեն՝ պէտք է նկատի առնել ազգաբնակութեան տեղագրական եւ մշակութական մասնայատկութիւնները, ըստ կարելւոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար։

10) Օրէնսդրական, դատաստանական, վարչական բոլոր մարմինները, ինչպէս եւ պաշտօնեաները կ՚ընտրուին ժողովրդեան կողմէ, վերեւ յիշուած ընտրական դրութեամբ։

11) Ուղղակի օրէնսդրութիւն, համաժողովրդական քուէարկութեան (référendum) եւ նախաձեռնութեան իրաւունք։

18) *Աշխատանքի օրէնսդրական հովանաւորութիւն, գիտական առողջապահական պահանջների համեմատ: Վերացումն գիշերային աշխատանքի (բացի այն գործառնութիւններից, որոնց տեխնիկական բնոյթը այդ թոյլ չէ տալիս):*

19) *Վերացնել կանանց եւ երեխաների գիշերային աշխատանքը: Կանայք ազատ պիտի լինեն աշխատանքից՝ ծննդաբերութիւնից վեց շաբաթ առաջ եւ վեց շաբաթ յետոյ: Արգելել երեխաների աշխատանքը մինչեւ* 15 *տարեկան հասակը. իսկ* 15*ից մինչեւ* 18 *տարեկան հասակը՝ սահմանափակել օրական* 6 *ժամով: Վերացնել պայմանաժամից դուրս աշխատանքը: Արգելել տուգանքի ձեւի տակ օրավարձի նուազեցումը:*

20) *Կիրակնօրեայ լիակատար հանգստութիւն: Մահմեդականների համար՝ իրենց յատուկ օրը:*

21) *Գործարանական վերատեսչութեան ընտրութիւնը՝ բանուորների կողմից: Բանուորների մասնակցութիւն գործարանների ներքին վարչական գործերում:*

22) *Բանուորների ապահովագրումն՝ դժբախտ պատահարներից, հիւանդութիւնից, պետութեան եւ գործատէրերի հաշուով:*

23) *Ջրի բժշկութիւն: Տեխնիկական ձրի աջակցութիւն:*

24) *Աշխատանքի բորսաներ:*

18) *Աշխատանքի օրէնսդրական հովանաւորում գիտական, առողջապահիկ պահանջներու համեմատ: Խափանում գիշերային աշխատանքի (բացառութեամբ այն աշխատանքներուն, որոնց արուեստական բնոյթը ընդմիջում չի ներեր):*

19) *Խափանել կիներու եւ մանուկներու գիշերային աշխատանքը: Կիները ազատ պէտք է ըլլան աշխատանքէ՝ ծննդաբերութենէ վեց շաբաթ առաջ եւ վեց շաբաթ ետքը: Արգիլել մանուկներու աշխատանքը մինչեւ* 15 *տարու, իսկ* 15*էն* 18 *սահմանափակել օրական* 6 *ժամով: Վերցնել պայմանաժամէ դուրս աշխատանքը: Արգիլել տուգանքի ձեւին տակ օրավարձի նուազեցումը:*

20) *Կիրակնօրեայ լիակատար հանգստութիւն: Մահմետականներուն համար՝ ուրբաթ օրը:*

21) *Գործարանական վերատեսչութեան ընտրութիւնը՝ բանուորներու կողմէ: Բանուորներու մասնակցութիւն գործարաններու ներքին վարչական գործերուն:*

22) *Բանուորներու ապահովագրում դժբախտ պատահարներու, հիւանդութեան, ծերութեան եւ անգործութեան հանդէպ, պետութեան եւ գործատէրերու հաշուով:*

23) *Ջրի դարմանում: Արհեստային* (technique) *ձրի աջակցութիւն:*

24) *Աշխատանքի սակարաններ:*

---

Դաշնակցութեան իւրաքանչիւր գործելավայրի (Թուրքիա, Կովկաս, Պարսկաստան) Ռայոնական ժողովները կը մշակեն *պլատֆորմ* իրենց ընթացիկ եւ անմիջական պահանջներու համար:

---

(1) Ներկայիս կը գործածենք «դաշնակցային» (fédératif)·

(2) Ներկայիս կը գործածենք «ժողովրդավար» (démocratique)·



# Ե. — ԿԱՆՈՆԱԳԻՐ — ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Չորրորդ Ընդհանուր Ժողովը վերամշակեց նաեւ Դաշնակցութեան կազմակերպական կանոնները, որոնք, «ԿԱՆՈՆԱԳԻՐ ՀԱՅ ՅԵՂ· ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ (Մարմիններու համար)» խորագրին տակ, 1907ին իսկ առանձին գրքոյկով հրատարակուեցան Ժընեւի մէջ, Իննի Յանձնաժողովին կողմէ վերջնական խմբագրութեան ենթարկուելէ ետք (տեսնել էջ 294): Հրատարակուած բնագիրը արեւմտահայերէն է:

1907ի Կանոնագիրը փաստօրէն ի զօրու մնաց մինչեւ 1919ի Երեւանի 9րդ Ընդհանուր Ժողովը, հակառակ յաջորդական Ընդհանուր Ժողովներու կողմէ որոշուած կազմակերպական կառոյցի մասնակի փոփոխութիւններուն:

1907էն առաջ ի զօրու էին Երրորդ Ընդհանուր Ժողովին մէջ մշակուած կազմակերպական կանոնները: Անոնք թէեւ տեղ գտած են համապատասխան ատենագրութիւններուն մէջ (տեսնել ՆԻՒԹԵՐ Հ· Յ· Դ· ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Բ· հատոր, էջ 119–126), սակայն առանձին, եւ յօդուածներու վերջնական թուագրումով, վերահրատարակուած չեն ներկայ շարքին մէջ:

Ուստի, փոփոխութիւնները յստակ դարձնելու համար, այս բաժնին մէջ հրատարակութեան կու տանք նախ 1904ին վերամշակուած կանոնագրութիւնը, որու 1906ի թ· տպագրութիւնը ունինք մեր տրամադրութեան տակ (ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ, Ժընեւ, Դաշնակցութեան տպարան), եւ ապա միայն 1907ի ԿԱՆՈՆԱԳԻՐԸ:

Կիտաւոր կերպով տրուած յօդուածներու բովանդակութեան համար՝ տեսնել Երրորդ Ընդհանուր Ժողովի ատենագրութիւնը, ՆԻՒԹԵՐ Հ· Յ· ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, Բ· հատոր, — ի մասնաւորի՝ էջ 120–130:

## ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

*Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Երրորդ Ընդհանուր Ժողովը, գումարուած ներկայ* 1904 *թուի Փետրուար–Մարտ ամիսներում, ի միջի այլոց, որոշել է՝*

*«Նկատելով, որ Գ·րդ Ընդհանուր Ժողովի մէջ ընդունուեցան կարգ մը փոփոխութիւններ նախկին ժողովներու վճիռներու վերաբերմամբ, Ընդհ· Ժողովը որոշեց յանձնարարել Արեւմտեան Բիւրոյին՝* ա) *Ըստ կարելւոյն շուտով ցրուել դաշնակցական մարմիններուն կազմակերպական փոխուած կանոնները եւ* բ) *Մինչեւ ներկայ տարուան վերջը կարգաւորել նախորդ ու ներկայ ընդհանուր ժողովներու ատենագրութիւնները, ինչպէս նաեւ յարակից բոլոր նիւթերը ու «Դաշնակցութեան Խորհրդի» վերջնական խմբագրութենէ յետոյ հրատարակութեան տալ:*

*Յետաձգելով, համաձայն այդ որոշման, ատենագրութիւններու եւ յարակից խնդիրներու հրատարակումը մինչեւ տարուան վերջը, կը շտապենք ներկայ տետրակով հաղորդել դաշնակցական բոլոր մարմիններուն այն կազմակերպական փոփոխուած կանոնները, որոնք կը վերաբերին անոնց իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն, խնդրելով ճիշդ եւ անշեղ գործադրութիւն:*

*ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈ*

1904 Յուլիս
Ժընեւ

---

### ԱՆՀԱՏ ԳՈՐԾԻՉՆԵՐ

*Անհատ-գործիչները կը բաժնուին երեք կարգի՝*

1) *Շրջուն գործիչ (պրոպագանդիստ),* 2) *Պատուիրակ եւ* 3) *Ներկայացուցիչ:*

Շրջուն գործիչ *կը կոչուին այն ընկերները, որոնք կեդրոնական կոմիտէներու ընտրութեամբ բացառապէս կը զբաղին այդ կոմիտէներու շրջաններու կազմակերպական գործերով:*

ԾԱՆՕԹ·— Թէ՛ Արեւելեան եւ թէ Արեւմտեան շրջանի մարմիններուն իրաւունք կը տրուի մշտական շրջուն գործիչներ ունենալ:

Պատուիրակ *կը կոչուի այն գործիչը, որ դաշնակցական մարմնի կողմէն կ'երթայ որոշ տեղ մը, որոշ առաքելութեամբ եւ որոշ ժամանակամիջոցի մը համար, որ կը ճշդուի անոր վկայագրին մէջ:*

Ներկայացուցիչ *կը կոչուին Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէներու եւ Բիւրոներու այն պատուիրակները, որոնք այդ մարմիններու կողմէն լիազօրութիւն կը ստանան Թուրքիոյ մէջ անոնց յայտնի որոշումները ի գործ դնելու կամ Թուրքիայէն դուրս անոնց ձայնը ներկայացնելու:*

*46.— Իւրաքանչիւր Կեդր. Կոմիտէ իր ունեցած դրամէն զեղչելով տեղական ծախքերու գումարը, որը չպիտի անցնի ընդհանուր մուտքի 10%, մնացածը կը յատկացնէ, իր Բիւրոյի խորհրդակցութեամբ, անոր միջոցով, կամ ուղղակի, Ընդհանուր Ժողովի որոշումներով գծուած ձեռնարկներուն։*

*47.— «Կեդրոնական Կոմիտէներ՝ Թուրքիոյ մէջ» բաժնի յօդուածներ 19, 20, 21, 22, 23, 24, 25 եւ 27 պարտաւորիչ են նաեւ դրսի Կեդրոնական Կոմիտէներու համար։*

*48.— Թիւրքիայէն դուրս ոչ մէկ մարմին առանց իր Բիւրոյի խորհրդակցութեան եւ առանց զէնքը ստացող եւ պահող մարմնի համաձայնութեան, իրաւունք չունի զէնք գնելու։*

*49.— Կեդրոնական Կոմիտէն պարտաւոր է տարին գէթ մէկ անգամ կոնտրոլի ենթարկել իր շրջանի մարմիններու հաշիւները։*

*50.— Վրէժստանի, Բալկանեան թերակղզիի, Եգիպտոսի եւ Ամերիկայի պատգամաւորական ժողովներուն, ինչպէս նաեւ Սարուստանի Կեդր. Կոմիտէներու պատգամաւորական ժողովին կը վերապահուի Ընդհանուր Ժողովի այս որոշումներէն դուրս մնացած կազմակերպական խնդիրները գծել, իւրաքանչիւրն իր ներքին կանոնագրով, առանց հակասելու Դաշնակցութեան ծրագրին եւ Ընդհանուր Ժողովի վճիռներուն։*

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

### ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

*51.— Պատասխանատու Կեդր. Կոմիտէ կը կոչուի Ընդհանուր Ժողովի կողմէն ընտրուած այն մարմինը, որուն կը յանձնուի վճռուած խոշոր ձեռնարկի մը իրագործման պատասխանատուութիւնը երկրի որոշ շրջանին մէջ։*

*52.— Պատասխանատու Կեդր. Կոմիտէի վայրեր որոշուեցան . . . . . . . . . . . . . . . . .*

*. . . . . . . . . . . . . . . . . . . . . .*

*53.— Պատասխանատու Մարմինը կը կազմուի առնուազն երեք անդամէ, ընտրուած Ընդհանուր Ժողովի կողմէ, իսկ Կովկաս՝ շրջանական ժողովէն։*

*54.— Պատասխանատու մարմինները պարտաւոր են ամէն ջանք ի գործ դնել իրենց շրջանի տեղացիներէն եւս կարող ընկերներ միացնելու իրենց։*

*55.— Որեւէ պատճառով պակասող անդամին տեղ՝ նորը կ'ընտրուի մնացած ընկերներու եւ շրջանի Բիւրոյի խորհրդակցութեամբ։*

*56.— Պատասխանատու Կեդր. Կոմիտէն վարիչ դեր ունի իր գործունէութեան շրջանը կազմող երկրին մէջ։*

*57.— Պատասխանատու Կեդր. Կոմիտէի խորհրդակցութիւնը պարտաւորիչ է հարեւան Կեդր. Կոմիտէներու եւ միւս կոմիտէներու համար, ամէն անգամ, երբ վերջիններու կողմէն քիչ–շատ կարեւոր յեղափոխական գործ մը կատարել որոշուի։*

*58.— Պատասխանատու Կեդր. Կոմիտէն իր ստանձնած խոշոր ձեռնարկին գործադրութեան վայրկեանը որոշելէ առաջ, պարտաւոր է այդ մասին խորհրդակցիլ դանէ իր շրջանի Բիւրոյին եւ մէկ Պատասխանատու Մարմնի հետ։*

*59.— Պատասխանատու մարմնի անդամը, երբ գտնուի Դաշնակցութեան ուեւէ մէկ մարմնի մէջ, ունի ձայնի իրաւունք։*

*60.— Պատասխանատու մարմնի անդամները պարտաւոր են Երկիր, իրենց գործունէութեան վայրը մտնել։ Առանց ընկերներու համաձայնութեան դուրս մնացած անդամը կը համարուի հրաժարուած։*

*61.— Երկրի Պատասխանատու Կեդր. Կոմիտէն կը համարուի «Դաշնակցութեան Խորհրդի» անդամ։*

*62.— Երկրի Պատասխանատու Կեդր. Կոմիտէները ունին իրենց ներկայացուցիչները պատկանեալ Բիւրոյի կազմին մէջ։*

*63.— Պատասխանատու Կեդր. Կոմիտէները պարտաւոր են տարին դէթ մէկ անգամ կոնտրոլի ենթարկել իրենց շրջանի բոլոր մարմիններու հաշիւները։*

*64.— Պատասխանատու Կեդր. Կոմիտէները, դրամական տագնապի օրերուն մէջ, իրենց անդամներէն մէկը դուրս կը ղրկեն՝ հարեւան կոմիտէներու եւ Բիւրոյի կողմէ ընտրուած ընկերներու հետ ժողովարարութեամբ զբաղուելու համար։*

### ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

*65.— Անցեալ 1903 թ. ի վեր հաստատուած Ինքնապաշտպանութեան Կեդր. Կոմիտէն կ'ընդունուի ի շարս Պատասխանատու Մարմիններու։*

*66.— Կովկասեան գաւառական բոլոր կոմիտէները, ինքնապաշտպանութեան գործին մէջ, պարտաւոր են գործել Պատասխանատու Մարմնի ղեկավարութեան տակ, որ կը հետեւի Ընդհանուր եւ շրջանական ժողովներու որոշումներուն։*

*67.— . . . . . . . . . . . . . . . . .*

*. . . . . . . . . . . . . . . . . . . . . .*

*68.— Ինքնապաշտպանութեան Կեդր. Կոմիտէի կազմը կ'որոշէ Կովկասի շրջանական ժողովը։*

*69.— Գաւառական մարմիններու եւ Կովկասեան Պատասխանատու Մարմնի մէջ փոխադարձ յարաբերութիւնները կը պատահին Բիւրոյի եւ ուրիշ դաշնակցական մարմիններու միջոցով։*



## Բ Ի Ւ Ր Օ

*70.— Բիւրոն պիտակ կը պահէ իր շրջանի Կեդր. Կոմիտէները գործի ընթացքի մասին ամիսը անգամ մը եւ կը հաղորդէ անոնց իր բիւրոյական հաշիւը առնուազն իւրաքանչիւր 6 ամիս։*

*71.— Ըստ կարիքի Բիւրոն պարտաւոր է տեղացիներու համաձայնութեամբ, հաւասար ձայնի իրաւունքով ընկերներ ղրկելով՝ զօրացնել Կեդր. Կոմիտէները։*

*72.— Բիւրոն կանոնաւորիչ դեր ունի դրամի բաշխումին մէջ՝ Ընդհանուր Ժողովի որոշած նախահաշուի համաձայն։*

*73.— Բիւրոներուն կը վերապահուի կնիք պատրաստել տալ եւ յանձնել ուր անկ է, այդ մասին արդէն գծուած օրէնքներու համաձայն։*

*74.— Բիւրոները պարտաւոր են տարեկան առնուազն մէկ անգամ իր անդամներէն մէկը ղրկել այցելելու իր շրջանի Կեդրոնական Կոմիտէները կամ իր իրաւասութեանը ենթարկուած մարմինները եւ ստուգել նաեւ անոնց հաշիւները։*

*75.— Բիւրոները պարտաւոր են 3 օրուան մէջ պատասխանել Երկրէն եկած նամակներուն։*

*76.— Բիւրոն պարտաւոր է տարուան վերջը ամփոփել բոլոր իր իրաւասութեան տակ գտնուած մարմիններու հաշիւները եւ ցրուել Կեդրոնական Կոմիտէներուն։*

*77.— . . . . . . . . . . . . . . . .*

*78.— Դաշնակցութիւնը ունի երկու Բիւրօ՝ Արեւելեան եւ Արեւմտեան։*

### Ա) ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

*79.— Արեւելեան Բիւրոյի շրջանը կը կազմեն՝* ա) *Երկիր՝ Կիրասուն–Խարբերդ–Տիգրանակերտի գծէն արեւելք.* բ) *Ռուսաստան եւ Պարսկաստան։*

*80.— Արեւելեան Բիւրոն կը բաղկանայ 5 անդամէ, որոնց երեքը կ'ընտրէ Կովկասի շրջանական (Ռայոնական) ժողովը, իսկ միւս երկուքը կը ղրկուին Բարձրաւանդակի եւ Շամիրի կողմէն։*

*Շրջանական (Ռայոնական) ժողովի կողմէն ընտրուած անդամները պատասխանատու են ոչ միայն զիրենք ընտրող շրջանական ժողովի եւ Պատասխանատու Մարմիններու, այլեւ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովի առջեւ։*

*81.— Երեք ընտրուած անդամներու համար ամէն տարի պիտի կատարուի վերընտրութիւն Ռայոնական ժողովի կողմէն։*

ԾԱՆՕԹ.— Հին անդամները վերընտրելի են։

*82.— Արեւելեան Բիւրոյի տեղը (քաղաքը) կ'որոշէ շրջանական ժողովը։*

*83.— Արեւելեան Բիւրոյի անդամներէն գէթ երկուքը պարտաւոր են զբաղուիլ միմիայն յեղափոխական գործով, ստանալով կազմակերպութենէն իրենց ապրուստի ծախսը։*

*84.— Ծանրակշիռ խնդիրներու լուծման համար Արեւելեան Բիւրոն կը հրաւիրէ արտակարգ շրջանական ժողով։*

### Բ) ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

*85.— Արեւմտեան Բիւրոյի շրջանը կը կազմեն՝*

ա) *Փոքր–Ասիա՝ Կիրասուն–Խարբերդ–Տիգրանակերտի գծէն արեւմուտք։*

բ) *Եգիպտոս, Բալկանեան թերակղզի, Ամերիկա եւ ամբողջ արտասահմանը՝ Ռուսաստանէն եւ Պարսկաստանէն դուրս։*

*86.— Արեւմտեան Բիւրոն կը բաղկանայ հինգ (5) անդամէ, որոնց երեքը կ'ընտրէ Ընդհանուր Ժողովը, իսկ երկուքը կը ղրկուին . . . . . եւ . . . . Պատասխանատու Մարմիններու կողմէն։*

*87.— Եթէ որեւէ պատճառով Արեւմտեան Բիւրոյի անդամներէն մէկը պակսի, նորը կ'ընտրուի Բիւրոյի եւ շրջանի Պատասխանատու Մարմիններու համաձայնութեամբ։*

*88.— Արեւմտեան Բիւրոն իր ընդհանուր կազմակերպական գործերէն դուրս՝*

ա) *Կը հրատարակէ «Դրօշակ»ը — ուղղութեան մասին առաջնորդուելով Ընդհանուր Ժողովի կողմէն մշակուած ծրագրով մը — եւ Դաշնակցութեան անունով ուրիշ հրատարակութիւններ՝ հայ եւ օտար լեզուներով։*

բ) *Կը հրատարակէ . . . . . . . . . . . . . .*

*. . . . . . . . . . . . . . . . . . .*

գ) *Կը վարէ արտասահմանեան պրոպագանդը։*

*89.— Բիւրոյական անդամներու մէջ աշխատանքի բաժանում ընդունելով հանդերձ՝ Բիւրոն* in corpore *պատասխանատու է իր բոլոր գործերուն համար։*

*90.— Արեւմտեան Բիւրոյին կը յանձնարարուի դաշնակցական ընկերներ հրաւիրել օժանդակելու իրեն՝* ա) *Խմբագրական,* բ) *Պրոպագանդի,* գ) *Տեղականվարչական գործերու մէջ։ Այդ կարգի ընկերներ բիւրոյական ընկերներու հաւասար ձայն կ'ունենան՝ բայց միայն իրենց ստանձնած գործերու մէջ։*

*91.— Բիւրոն պարտաւոր է ի հարկին իր մէջէն մէկը կամ երկուքը զբաղեցնել իբրեւ շրջուն գործիչ՝ իր շրջանի գործերով։*

## ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

92·— *Պատասխանատու Կեդր· Կոմիտէներու եւ Բիւրոներու ներկայացուցիչները կը կազմեն «Դաշնակցութեան Խորհուրդը»։*

93·— *Դաշնակցութեան Խորհուրդը նիստ կը գումարէ պարբերաբար տարին անգամ մը Դեկտեմբեր ամսուն։ Կրնայ արտակարգ կերպով եւս գումարուիլ, երբ Բիւրո մը եւ իր շրջանի Պատասխանատու Մարմիններէն մէկը համաձայնին իրարու։*

94·— *Դաշնակցութեան Խորհուրդը անձեռնհաս կը համարուի, եթէ Երկրի Պատասխանատու Կեդր· Կոմիտէներու ներկայացուցիչներու օրինական թուին 2/3ը բացակայ գտնուի ժողովէն։*

95·— *Դաշնակցութեան Խորհրդի պարտականութիւններն են՝*

ա) *Քննութեան ենթարկել Պատասխանատու Կեդր· Կոմիտէներու եւ Բիւրոներու գործունէութիւնը Ընդհանուր Ժողովի որոշած ձեռնարկներու իրագործման սահմանին մէջ։*

բ) *Յեղափոխական ուժերու եւ դրամի նպատակայարմար բաշխումը կարգաւորել։*

գ) *Վերակազմել Պատասխանատու Կեդր· Կոմիտէները եւ Բիւրոները։*

դ) *Դրամական միջոցներ գտնել։*

ե) *Վարել արտաքին բոլոր յարաբերութիւնները յանուն Հ· Յ· Դաշնակցութեան ուրիշ կուսակցութիւններու եւ տարրերու հետ։*

զ) *Քաղաքական անակնկալ տագնապի առեն իր պատասխանատուութեան տակ նոր ձեռնարկ սկսիլ, առանց հակասելու նախորդ Ընդհանուր Ժողովի որոշումներուն։*

96·— *Երբ յօդուած 92ի մէջ յիշուած մարմիններէն մէկը լուծուի՝ մնացածները պարտաւոր են անոր ձայնը յանձնել նոյն շրջանի ամենէն ձեռնհաս կոմիտէին՝ այդ կարգադրութիւնը հաղորդելով բոլոր Կեդր· Կոմիտէներուն։*

97·— *Դաշնակցութեան Խորհրդին կը յատկացուի երկու կնիք՝ հայերէն եւ ֆրանսերէն, վերջինս հետեւեալ ձեւով՝* Conseil de la Fédération révolutionaire arménienne։ *Այդ կնիքները կը պահուին Արեւմտեան Բիւրոյի քով։*

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

98·— *Ընդհանուր Ժողովի յաջորդական գումարումներու ժամանակը կ'որոշուի Ընդհանուր Ժողովէն, արտակարգ պարագաներու մէջ կը հրաւիրուի «Դաշնակցութեան Խորհրդի» կողմէն։*

99·— *Յառաջիկայ Ընդհանուր Ժողովը որոշուեցաւ գումարել 1906ի Դեկտեմբեր 1ին։*

100·— *Երկու Բիւրոները կ'որոշեն ժողովին գումարման վայրը եւ կ'ուղղեն հրաւիրագիրները։*

ԾԱՆՕԹ·— Եթէ Ճշանակուած ժամանակէն երեք ամիս անցնի եւ ժողով չհրաւիրուի, Սարուստանի Կեդր· Կոմիտէները, համաձայնութեամբ Երկրի ռեւէ Պատասխանատու Կեդր· Կոմիտէի, կը հրաւիրեն ժողով՝ իրենք որոշելով նաեւ տեղն ու ժամանակը։

101·— *Բոլոր ձայնատու մարմինները պարտաւոր են 6 ամիս առաջ Արեւմտեան Բիւրոյին ուղարկել այն հարցերու ցանկը, որ անոնք կը փափաքին ժողովին քննութեան ենթարկել։ Այդ ցանկերէն օգտուելով՝ Արեւմտեան Բիւրոն կը կազմէ խնդիրներու օրակարգը, որ եւ 4 ամիս առաջ կը ղրկէ բոլոր ձայնատու մարմիններուն, որպէսզի առանց պատգամաւորները ժողովի եկած ատեն, իրենց հետ բերեն իրենց ներկայացուցած մարմիններու կարծիքները, հարկաւ լիազօրութիւն ունենալով ցուցակէն դուրս նոր խնդիրներ եւս առաջարկելու ժողովին եւ տեղի ունենալիք մտքերու փոխանակութենէն ետքը՝ ձայն տան իրենց համոզումներու համաձայն։*

102·— *Ընդհանուր Ժողովին կը մասնակցին կազմակերպութեան բոլոր Կեդր· Կոմիտէները, որոնց կազմը եւ գործունէութիւնը նուազագոյն պահանջներուն կը համապատասխանէ։*

103·— *Բիւրոները եւ Պատասխանատու Մարմինները կ'ունենան մի մի ձայն։*

104·— *Դաշնակցական ուսանողութիւնը (Ռուսաստանի եւ արտասահմանի) ձայն կը ստանան Ընդհանուր Ժողովին մէջ, եթէ ունենան որոշեալ ցենզը։*

105·— *Դաշնակցութեան Խորհրդին իրաւունք կը տրուի Ընդհանուր Ժողովին հրաւիրելու նաեւ Կեդր· Կոմիտէներու շրջաններէն դուրս որոշ գործունէութիւն ցոյց տուող կոմիտէներ։*

106·— *Բիւրո մը եւ իր շրջանի մէկ Պատասխանատու Կոմիտէն՝ փոխադարձ համաձայնութեամբ՝ կարող են Ընդհանուր Ժողովի հրաւիրել հեռու տեղեր գտնուող այնպիսի ընկերներ, որոնք իրենց յեղափոխական գործունէութեամբ այդ մարմիններուն որոշ երաշխաւորութիւն կը ներկայացնեն՝ Ընդհանուր Ժողովի որոշումներուն գգալապէս նպաստելու։ Իսկ ժողովի գումարման վայրը կամ անոր մօտ գտնուող այդպիսի ընկերներ անպայման Ընդհանուր Ժողովը միայն կարող է հրաւիրել։*

107·— *Նախորդ յօդուածի համաձայն հրաւիրուած ընկերները պատգամաւորի հաւասար ձայնի իրաւունք կ'ունենան Ընդհանուր Ժողովին մէջ։*

108·— *Ընդհանուր Ժողովը որոշ նիստերուն խորհրդակցական ձայնով կը հրաւիրէ նաեւ յօդուած 106ին չհամապատասխանող այնպիսի ընկերներ եւ ուրիշ յեղափոխական կուսակցութիւններու պատկանող կամ չպատկանող անհատներ եւ օտարներ, որոնց մասնակցութիւնը օգտակար կը դատուի այս կամ այն խնդրի աւթիւ բացուելիք վիճաբանութիւններուն։*

109·— *Երկրի ամէն ձայնատու մարմին Ընդհ· Ժողովին տեղեկագիր կամ պատգամաւոր ղրկելէ առաջ, պարտաւոր է (տես կազմ· յօդ· 16) շրջանի պատգամաւորական ժողով գումարել, հակառակ պարագային գոնէ իր շրջանի կոմիտէներու կարծիքներն իմանալ։*

110·— *Երկրէն դուրս պատգամաւորները կ'ընտրուին Կեդր· Կոմիտէի շրջանական ժողովի կողմէն։*

111·— *Ամէն պատգամաւոր պարտաւոր է իր շրջանի ո'չ միայն մեծամասնութեան, այլեւ փոքրամասնութեան կարծիքները բերել ժողովին։*

112·— 102, 103, 104, 105, 106 *յօդուածներու տրամադրութեան համաձայն հրաւիրուած պատգամաւորներու եւ գործիչներու 2/3ի ներկայութեամբ Ընդհանուր Ժողովը օրինաւորապէս բացուած կը համարուի։*

113·— *Ընդհանուր Ժողովը իր բոլոր վճիռները կու տայ ներկայ եղող բոլոր ձայներու 2/3ի մեծամասնութեամբ։*

114·— *Իւրաքանչիւր պատգամաւոր մէկ ձայն ունի, բայց կարող է մէկ ձայն եւս ունենալ այն վայրի համար միայն, որուն մօտէն ծանօթ է։*

115·— *Պատգամաւորը իրաւունք չունի առանց զինք ընտրող մարմնի համաձայնութեան՝ ձայնը ուրիշին տալ։*

116·— *Գործիչ մը երբ շրջանի մը ձայնը կը ստանայ՝ կը համարուի պատգամաւոր եւ կը կորսնցնէ իր գործիչի ձայնը* (*յօդուած* 107)։

117·— *Ընդհանուր Ժողովի նիստերը բացուած յայտարարուելէն ետք՝ պատգամաւորները կը ներկայացնեն ամէն մէկն իր շրջանի համարատուութեան տեղեկագիրը։*

118·— *Ընդհանուր Ժողովի վճիռները վերջնական կը համարուին այն ատեն միայն, երբ բոլոր ատենագրութիւնները կ'արձանագրուին եւ Ժողովը փակուած կը յայտարարուի։*

119·— *Դաշնակցութեան նպատակի եւ կազմակերպութեան սիստեմի վերաբերեալ ոեւէ արմատական փոփոխութիւն չի կրնար որոշել Ընդհանուր Ժողովը, եթէ կանխապէս այդ խնդիրը չէ ներկայացուած Կեդրոնական Կոմիտէներուն։*

## ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

*Ի նկատի ունենալով կազմակերպութեան ծաւալումը եւ դաշնակցական մարմիններու պարտականութիւններու եւ իրաւասութիւններու աւելի որոշակի կերպով ճշդելու կարիքը, Ընդհանուր Ժողովը՝ բացի դաշնակցական մարմիններու կազմի մասին գծած պարտաւորիչ յօդուածներէ՝ անհրաժեշտ կը սեպէ մասնաւորապէս Կեդր· Կոմիտէներու, Բիւրոներու եւ ուսանողութեան վերաբերմամբ հետեւեալ առանձին պահանջները դնել։ Այն մարմինը, որ այս պահանջներուն գոհացում չէ տուած, կը զրկուի Ընդհանուր Ժողովին մասնակցելու իրաւունքէն։*

120·— *ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ·— Իւրաքանչիւր Կեդրոնական Կոմիտէ պարտաւոր է՝*

ա) *Տարեկան առնուազն* 10,000 *Ֆր· մուտք ունենալ։*

ԾԱՆՕԹ·— 10,000ի մուտքը նշանակուած ըլլալով ամենադժբաղդ երկրի հաշուով, Կեդր· Կոմիտէի շրջանի պատգամաւորական ժողովը պարտի տեղական հանգամանքներու համաձայն բարձրացընել այս գումարը։

բ) *Ամէն տարի կազմակերպութեան համար պատրաստել կամ գտնել կազմակերպող, ռազմագէտ կամ յեղափոխական գործի համար պահանջուած ուրիշ կարգի մասնագէտ ընկերներ, համաձայն իւրաքանչիւր շրջանի ներքին պայմաններուն։ Ատոնց քանակը կ'որոշէ շրջանի պատգամաւորական ժողովը։*

ԾԱՆՕԹ·— Այն Կեդրոնական Կոմիտէն, որ իր ցենզով կը համապատասխանէ երկու կամ աւելի Կեդր· Կոմիտէներու եւ իր շրջանական ժողովի որոշումով չ'ուզեր բաժնուիլ երկուքի, պարտաւոր է կազմակերպութեան տրամադրութեան տակ դնել տարեկան գոնէ երեք ինտելիգենտ կազմակերպող ուժեր, որպէսզի իրաւունք ունենայ երկու ձայն տանալ Ընդհանուր Ժողովին մէջ։

գ) *Իւրաքանչիւր տարի պատրաստել ամենապակասը* 50 *զինավարժ ընկերներ, որոնցմէ* 10*ը պատրաստ՝ Երկիր մտնելու իրենց հաշուով, եւ* 2 *հոգի զինուորական զանազան մասնագիտութիւններու վարժեցնել։*

121·— *ԲԻՒՐՈՆԵՐ·— Երկու Բիւրոները պարտաւոր են՝*

ա) *Տարեկան առնուազն* 10,000 *Ֆրանքի մուտք ունենալ, չհաշուելով հրատարակութիւններու հասոյթը։*

բ) *Պատրաստել կամ գտնել* 6 *մտաւորական ուժեր, մէկ մասը ռազմագէտ եւ միւս մասը կազմակերպող։*

*Մասնաւորապէս Արեւմտեան Բիւրոն պարտաւոր է՝*

գ) *Հրատարակել տարեկան առնուազն* 12 *թիւ «Դրօշակ»։*

դ) *Տարեկան առնուազն* 500 *երես գրքոյկներ՝ գոնէ հինգ տարբեր կարգի թեմաներ շօշափող։*

122·— *ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ·— Արտասահմանի և Ռուսաստանի դաշնակցական ուսանողութիւնը կը մասնակցի Ընդհ· Ժողովին, երբ անդամներու թիւը պակաս չէ քան* 50՝ *արտասահմանի մէջ, իսկ* 100՝ *Ռուսաստանի մէջ։*

կան գործելէն եւ կամ գործունէութեան ուրիշ վայր ընտրել:

164 — Դաշնակցական ոեւէ ուրիշ մարմին այս կարգի չհամակերպող անհատի կամ փոքրամասնութեան հետ յարաբերութեան մէջ կը մտնէ տեղական մարմնի համաձայնութեամբ միայն:

165 — Մարմնի ոեւէ անդամ կրնայ բացակայիլ իր գործունէութեան վայրէն երկար ժամանակով միմիայն ընկերներու մեծամասնութեան հաւանութեամբ:

166 — Մարմին մը իրաւունք չունի ոեւէ ձեռնարկ ընել ուրիշ մարմնի շրջանի մէջ առանց վերջինիս գիտութեան եւ հաւանութեան:

167 — Շրջանի մը բարձր մարմինը կրնայ լուծուած յայտարարել իր շրջանի ստորադրեալ ոեւէ մարմին, եթէ անոր անդամներու մեծամասնութիւնը կը պակսի հրաժարման կամ ոեւէ այլ պատճառով:

## Դ Ա Տ Ա Կ Ա Ն

168 — Ամէն մէկ դաշնակցական մարմին կարող է կարգապահական պատիժներ տնօրինել իր անդամի նկատմամբ:

169 — Պատժական բնոյթ ունեցող ամէն վճիռ կը տրուի ձայներու 2/3ի մեծամասնութեամբ:

170 — Տանր յանցանքի եւ զեղծումի պարագային՝ ամէն մարմին իր մէջէն կ'արտաքսէ յանցաւոր կամ զեղծարար անդամը՝ գգուշութեան համար՝ խսկոյն տեղեկացնելով իր անմիջական բարձր մարմնին:

171 — Արտաքսման ամէն դատավճիռ, որ պէտք է հաստատուի Կեդր. Կոմիտէի կողմէն, ժամանակաւոր է մինչեւ Ռայոնական Ժողովէն վերահաստատուիլը:

ԾԱՆՕԹ — Երկրի մէջ վերահաստատելու իրաւունքը թողնուած է Պատասխանատու Մարմնին:

172 — Ռայոնական Ժողովը պարտաւոր է հրաւիրել մեղադրեալը, միջոց տալու համար անոր՝ ինքզինք պաշտպանելու:

173 — Ռայոնական Ժողովէն, իսկ Երկրի մէջ՝ Պատասխանատու Մարմնէն վաւերացուելէ ե՛տքը միայն արձակուած վճիռը վերջնական կը նկատուի եւ դատապարտեալին Դաշնակցութենէն ի սպառ արտաքսումը կը յայտարարուի «Դրօշակ»ի մէջ:

174 — Բիւրոները իրաւունք ունին դադարած յայտարարել ոեւէ Կեդր. Կոմիտէ, զեղծումներ կատարած ըլլալուն համար, անոր վերջնական կազմալուծումը վերապահելով Ռայոնական Ժողովին:

175 — Շրջանի մը մէջ կազմակերպական տեսակէտով կասկածուած կամ արտաքսուած ընկերոջ մասին պէտք է անմիջապէս նախազգուշացնել շրջակայ Մարմինները եւ Բիւրոները:

176 — Ոեւէ Կեդր. Կոմիտէի շրջանէն հեռացուած անդամը չի կրնար ուրիշ Կեդր. Կոմիտէի շրջանի մէջ ընդունուիլ, մինչեւ որ Բիւրոյի կամ Պատասխանատու Մարմնի կողմէն հարցը պարզուի:

ԾԱՆՕԹ — Արտաքսուած ընկերը — եթէ ուղղութեան գայ — կարելի է վերընդունիլ միմիայն արտաքսող մարմնի հաւանութեամբ:

177 — Դաշնակցականի մը եւ ուրիշ յեղափոխական կազմակերպութեան կամ խմբակցութիւններու պատկանող անհատներու միջեւ կուսակցական հողի վրայ ծագած վէճերու եւ ընդհարումներու խնդիրները կը յանձնուին միջնորդ կամ միջկուսակցային ատեանի մը:



# ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՅԱՋՈՐԴԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԸ, ՕՐԱԿԱՐԳԵՐԸ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

| ՆԻՍՏԻ ԹԻՒ | ԷՋ | ՔՆՆՈՒԱԾ ՕՐԱԿԱՐԳ ԿԱՄ ՇՕՇԱՓՈՒԱԾ ՆԻՒԹ |
|---|---|---|
| 1 | 11 | Անուններ — բացում — ժամանակաւոր դիւան — ժողովական ներքին կանոնագրութիւն։ |
| 2 | 12 | Սափոյի մասնակցութեան հարց — պատգամաւորներու իրաւասութեան խնդիր։ |
| 3 | 13 | Շնորհաւորական գիր՝ Աւստրիոյ Ընկերվարական Կուսակցութեան — հրաւիրելի ընկերներ։ |
| 4 | 13 | Հրաւիրելի ընկերներու հարց — Ծովափի եւ Ոսկեհանքի ներկայացուցչութեան խնդիր։ |
| 5 | 13 | Նախագահներու եւ քարտուղարներու ընտրութիւն — Օրակարգի քննութիւն — Սափոյի եւ Ցուցականի տեղեկագրի հարց։ |
| 6 | 15 | Առաջարկներ օրակարգի կէտերու յաջորդականութեան մասին։ |
| 7 | 16 | Դատական յանձնախումբի հարց — Օրակարգի կէտեր — դուրսի ընկերներու հետ կապի հարց։ |
| 8 | 17 | Տեղեկագիր Լեռնապարի (Իշխան) — հարցապնդում։ |
| 9 | 19 | Եգիպտոսի ներկայացուցիչի հարց — շար. Լեռնապարի տեղեկագրի քննարկման։ |
| 10 | 21 | Նոյն։ |
| 10(բ.) | 26 | Տեղեկագիր Մուշ-Սասունի (Սեպուհ)։ |
| 11 | 29 | Շար. տեղեկագրի եւ քննարկում։ |
| 12 | 29 | Նոյն։ |
| 13 | 30 | Պալքանի Զինուորական Դպրոց — շար. Մուշ-Սասունի տեղեկագրի քննարկման։ |
| 14 | 32 | Սափոյի հարց — խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ — հաշուական յանձնախումբ։ |
| 15 | 33 | Տեղեկագիր Արեւմտեան Բիւրոյի (Ակնունի) — Աւստրիացի Ընկերվարականներու պատասխանը։ |
| 16 | 36 | Քննարկում Արեւմտ. Բիւրոյի տեղեկագրի։ |
| 17 | 38 | Տանտի հարց — շար. Բիւրոյի տեղեկագրի քննարկման։ |
| 18 | 41 | Նոյն։ |
| 19 | 47 | Սափոյի հարց — շար. Բիւրոյի տեղեկագրի քննարկման։ |
| 20 | 51 | Տեղեկագիր Պալքանի (Զարդարեան) — հարցապնդում։ |
| 21 | 54 | Տեղեկագիր Ամերիկայի (Ջելալեան) — հարցապնդում։ |
| 22 | 57 | Նոյն։ |
| 23 | 60 | Պալքանի Զինուորական Դպրոցի հարց։ |
| 24 | 62 | Սեպուհի հարց — ժողովական կարգը — քննարկում Ամերիկայի տեղեկագրի — քարտուղարներու հարց — Ց. Եուսուփեան — Սեպուհի հարց։ |
| 25 | 68 | Ամերիկա-Վասպուրական հարց — Ցուցականի տեղեկագիր (Սափօ)։ |
| 26 | 68 | Քննարկում Ցուցականի տեղեկագրի։ |

| | | |
|---|---|---|
| 27 | 70 | Նոյն. — ընտրութիւն Ցուցականի գործի քննիչ յանձնախումբի — Տեղեկագիր Վասպուրականի (Արամ). |
| 28 | 72 | Ժողովական կարգ — Վասպուրականի տեղեկագրի քննարկում. |
| 29 | 75 | Նոյն. |
| 30 | 77 | Ժողովական կարգ. |
| 31 | 77 | Տեղեկագիր Թիֆլիսի (Թոփչեան) — քննարկում. |
| 32 | 82 | Նոյն. — Տեղեկագիր Ռուսաստանի եւ Եւրոպայի Ուսանող. Միութեանց — քննարկում. |
| 33 | 86 | Նոյն. |
| 34 | 91 | Տեղեկագիր Ապառաժի (Բարսեղեան) — քննարկում. |
| 35 | 94 | Ժողովական կարգ — Տեղեկագիր Արեւելեան Բիւրոյի (Ռոստոմ) — քննարկում. |
| 36 | 96 | Տեղեկագիր Գանձակի (Մաշուրեան) — քննարկում. |
| 37 | 97 | Տեղեկագիր Ժլատի (Տիկ. Ցուշիկ) — քննարկում — Տեղեկագիր Ոսկանապատի (Զոփուրեան). |
| 38 | 97 | Ոսկանապատի տեղեկագրի քննարկում — Տեղեկագիր Քարի (Աւ. Իսահակեան) — Տեղեկագիր Երեւանի (բժ. Զաւրեան) — քննարկում. |
| 39 | 100 | Օրակարգի կէտեր եւ ժողովական կարգ — Զարդարեանի 2րդ ձայնը. |
| 40 | 101 | Զեկուցում Վռամեանի՝ *«Ինքնապաշտպանութիւնը Երկրի մէջ»* — քննարկում. |
| 41 | 104 | Քննարկման շարունակութիւն — Բանաձեւեր — Հեռագիր՝ Քրիստափորի այրիին. |
| 42 | 109 | Զեկուցում Ռոստոմի՝ *«Ազատամարտական ձեռնարկներ»* — քննարկում. |
| 43 | 113 | Քննարկման շարունակութիւն — Զեկուցում Թոփչեանի՝ նոյն նիւթով — քննարկում. |
| 44 | 116 | Շար. *«Ազատամարտական ձեռնարկներ»* հարցի քննարման — զեկուցում Մինասեանի — քննարկում. |
| 45 | 118 | Ժողովական կարգ — Զեկուցում Վռամեանի — քննարկում. |
| 46 | 120 | Ապստամբական ձեռնարկներու մասին բանաձեւեր. |
| 47 | 123 | Սեբաստիոյ կազմակերպութիւն — *«Թռուցիկ խումբեր»*, զեկուցում Անդրանիկի — բանաձեւեր. |
| 48 | 125 | Ժողովական կարգ. |
| 49 | 125 | Զեկուցում Մալումեանի՝ *«Տեռորի մասին»* — քննարկում. |
| 50 | 131 | Զեկուցում Արամի՝ *«Ուսումնասիրողներ, գործակալներ եւ դրսից եկող մըտաւորական ուժեր»* — քննարկում — բանաձեւեր — Զեկուցում Մինասեանի՝ *«Ցուցական գործունէութիւն»*. |
| 51–52 | 134 | Քննարկում Ցուցական գործունէութեան մասին զեկուցման. |
| 53 | 138 | Բանաձեւեր — շար. ապստամբական ձեռնարկներու հարցի քննարկման. |
| 54 | 140 | Քուէարկում բանաձեւերու, — *ա*) ապստամբական ձեռնարկներ *բ*) տեռոր. |
| 55 | 140 | Քուէարկում բանաձեւերու, *գ*) Ցուցական գործունէութիւն — Զեկուցում Բարսեղեանի՝ *«Դաշնակցութեան դերը Ռուսաստանի յեղափոխական շարժման մէջ»*. |
| 56 | 141 | Զեկուցում Ռոստոմի՝ Արեւելեան Բիւրոյի գործունէութեան մասին — ընտրութիւն Միհրանական հարցի քննիչ յանձնախումբի. |
| 57 | 142 | Սարհատի հարց — Զեկուցում Վարդանի՝ *«Զինական-ինքնապաշտպանական գործը Կովկասում»* — քննարկում. |
| 58 | 145 | Զեկուցում Մալումեանի (Ակնունի)՝ *«Նախագծի հրատարակութեան մէջ Խորհուրդի իրաւասութեան հարցը»* — քննարկում. |
| 59 | 149 | Զեկուցում Վարդանի՝ Լեռնավայրի մասին — ընթերցում տեղեկագրի — հարցապնդում — շար. Խորհուրդի իրաւասութեան հարցի քննարկման. |
| 60 | 155 | Նոյն. |
| 61 | 159 | Զեկուցում Շահխաթունիի՝ *«Կովկասեան գործունէութեան մասին»* — Տեղեկագիր Փոլսոյ (Զաւարեան) — քննարկում — բանաձեւ. |



| | | |
|---|---|---|
| 62 | 161 | Բանաձեւ Նախագիծի մասին — Զեկուցում Թոփչեանի՝ *«Դաշնակցութիւնը Կովկասում կամ Նախագիծը ըստ էութեան»* — քննարկում. |
| 63 | 164 | Նոյն. |
| 64 | 169 | Սալմանի նամակը — առաջարկ՝ Մուրատի եւ Վահագնի — շար. կովկասեան գործունէութեան քննարկման. |
| 65 | 172 | Նոյն. |
| 66 | 173 | Շրջաններու կարծիքները՝ ապագայ գործունէութեան մասին — շար. կովկասեան գործունէութեան եւ ընկերվարութեան մասին վիճաբանութիւններու. |
| 67 | 177 | Նոյն — բանաձեւեր. |
| 68 | 180 | Զեկուցում Շահխաթունեանի եւ Արշ. Իսահակեանի (Ջամալեան)՝ *«Բաժանման հարցը»* — քննարկում. |
| 69 | 184 | Նոյն. |
| 70–71 | 187 | Նոյն, բանաձեւեր — յաւելեալ քննարկում — վերջնական բանաձեւ — Տեղեկագիր Ոսկեհանքի (Զարդարեան) — քննարկում — Վարդանի բանաձեւը՝ *«Կովկասի ինքնապաշտպանութեան»* մասին. |
| 72 | 192 | Արեւելեան Բիւրոյի հաշիւը — յանձնաժողովներու ընտրութիւն — կովկասեան թերթերու հարցը. |
| 73 | 195 | Զեկուցում Լոռիսի տեղեկագրի մասին — Զեկուցում Արամի՝ *«Արշաւախումբերի մասին»* — քննարկում. |
| 74 | 198 | Ցուցականի քննիչ յանձնախումբի զեկուցումը — քննարկում. |
| 75 | 200 | Նոյն. |
| 76 | 201 | Դիմում Միջազգ. Սոցիալիստ. Բիւրոյին — ժողովական կարգ. |
| 77 | 201 | Քննարկում արշաւախումբերու հարցի — բանաձեւեր — կովկասահայերու ինքնապաշտպանութիւն— դիմում Լա Հէյի ժողովին. |
| 78 | 205 | Նոյն — բանաձեւ — բռնի հանգանակութեան հարց. |
| 79 | 213 | *«Միջկուսակցական ատեան»*, զեկուցում Վռամեանի — քննարկում — Զինապայթուցիկ դպրոցի հարց — Տանկահայքի ինքնապաշտպանութիւն — բանաձեւեր. |
| 80 | 215 | Բանաձեւերու քուէարկութիւն — կովկասեան զեղծումներու հարց. |
| 81 | 218 | Հրատարակութիւններու հարց. |
| 82 | 221 | Նոյն. |
| 83 | 225 | Նոյն — բանաւոր եւ գրաւոր պրոպագանդ. |
| 84 | 231 | Հաշուական սիստեմի հարց — բանաձեւեր հրատարակութիւններու մասին — Միհրանական խնդիր. |
| 85 | 234 | Զեկուցում Մինասեանի՝ *«Յեղափոխ. ուրիշ կուսակցութիւններու հետ համերաշխութեամբ գործելու հարցը»* — քննարկում. |
| 86 | 240 | Կովկասեան զեղծարարներու մասին — բանաձեւ Միհրանականներու մասին — քննիչ յանձնախումբի եզրակացութիւնները. |
| 87էն 92 | 244 | Կազմակերպական կանոններ. |
| 93–95–97–98 | 244 | Ծրագրային հարցեր. |
| 94 | 244 | Ցուցականի հակա-զեկուցումը. |
| 96 | 245 | Զիփոնի հաշիւը (Գազիկ) — հարցապնդում. |
| 99 | 247 | Բանաձեւ *«Թուրքիոյ ընդդիմադիր տարրերու հետ համերաշխութեան»* մասին — քննարկում — զեկուցում Նախահաշուի. |
| 100 | 248 | Նոյն — քննարկում. |
| 101 | 250 | Բանաձեւեր բռնի հանգանակութեան եւ համերաշխութեան մասին — քուէարկութիւն — ծրագրային հարցեր. |
| 102 | 251 | Ծրագրային հարցեր. |
| 103 | 253 | Պալքանի հարց — զանազան մանր հարցեր եւ որոշումներ. |
| 104 | 255 | Ժլատ-Նալբանդի հարց — Էրզրումի շրջան — Արամի եւ Իշխանի առաջարկը՝ Մեծաւորի եւ Աւարայրի մասին. |

105 256 Ստացուած գրութիւններ, բողոքներ, մանր հարցեր — համերաշխութեան հարց՝ հնչակեաններուն հետ — բանաձեւեր։

106 259 Օժանդակութիւն Քրիստափորի ընտանիքին — Դաշնակցութիւնը եւ Պարսկական յեղափոխութիւնը — բանաձեւ։

107 260 Տերսիմի շրջան — բանաձեւ — բռնի հանգամանակութեան մասին վերջնական բանաձեւ — Ջրաքերդի հարց։

108 262 Ցուցականի գործի քննութիւն։

109 268 Վարդոյի գործը — բանաձեւեր Ռուսաստանի յեղափոխ. կուսակցութեանց հետ գործակցութեան մասին։

110 269 Բանաձեւ Վարդոյի մասին — Կազմակերպական կանոններ — Ծրագրային հարցեր։

111 273 Ծրագրային հարցեր։

112 274 Փոթորիկի հաշիւ եւ նախահաշիւ — օգնութիւն՝ Մուշ–Սասունի։

113 277 Մարմիններու համար թեկնածուներու նշդում։

114 278 Ցուցականի գործի քննութիւն — բանաձեւեր — Երկրի Պատասխանատու Մարմին։

115 281 Զեկուցում Զաւարեանի՝ Կիլիկիոյ մասին — բանաձեւ։

116 283 Զանազան բանաձեւեր — յաջորդ Ընդհ. ժողովի թուականը։

117–118 284 Զանազան հարցեր — ընտրութիւն Իննի Յանձնաժողովի — Ատրպատականի ներկայացուցչի կարծիքը՝ Արամի եւ Իշխանի առաջարկի մասին։

119–120 285 Անդրանիկի եւ Մուրատի առաջարկը Սասնոյ որբերուն մասին — ընտրութիւն՝ ա) Երկրի Պատ. Մարմնի բ) Արեւելեան Բիւրոյի գ) Արեւմտեան Բիւրոյի դ) Ցուցա-տեռորական մարմնի։

121 287 Սարհատի հարց — Ծրագրային հարցեր — վերաքննութիւն եւ հաստատում բանաձեւ-որոշումներու — կոչի հարց — Փակում։

294 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՆՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

295 Հայ-թրքական ընդհարումներ։

Գործակցութիւն սոցիալիստ կուսակցութիւնների հետ։

Գործակցութիւն վրացիների հետ։

296 Դժգոհութիւններ եւ բողոքներ։

Գաղութներ

Որոշումը Ցուցական Մարմնի մասին։

298 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԳՐՔՈՅԿԸ

299 Չորրորդ Ընդհանուր ժողովը (ընդհանուր ակնարկ)

301 Ընդհանուր ժողովի կազմը։

Անջատման խնդիրը (առանց պատճառաբանութեան)

302 Նոյն (պատճառաբանութեամբ)

ՏԱԿՏԻՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

— Ապստամբական ձեռնարկներ։

— Տեռոր։

— Ինքնապաշտպանութեան գործը Թուրքիոյ մէջ։

303 — Արշաւախումբեր։

— Կովկասի ինքնապաշտպանութիւն։

— Ցուցական գործունէութիւն։

304 — Կազմակերպութիւններ։

— Զինա-պայթուցիկ։





ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

— Համերաշխութիւն Թուրքիոյ այլատարր ցեղերու հետ։

305 — Հայ-թրքական ընդհարումներ։

— Գործակցութիւն վրացիների հետ։

306 — Սոցիալիստական կուսակցութիւնների հետ գործակցութիւն։

— Միջկուսակցական ատեան։

— Հնչակեան կեդրոնի դիմումը։

307 ՊՐՈՊԱԳԱՆԴ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

— «Դրօշակ» եւ կից հրատարակութիւններ։

308 — Կովկասեան հրատարակութիւններ։

— Օրգաններ եւրոպական լեզուներով։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

— Բռնի հանգամանակութիւն։

— «Նախագիծ»ը եւ Խորհուրդի իրաւասութիւնը։

309 — Երկրի ուսումնասիրութիւնը։

— Միջազգային Սոցիալիստական Բիւրօ։

— Առաջիկայ Ընդհանուր ժողովը։

— Գաղութներ։

— Պարսկաստանի շրջանում։

310 ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

— Դժգոհութիւններ ու բողոքներ։

— Որոշում Ցուցական Մարմնի մասին։

311 — Վարդոյի խնդիրը։

— «Ժամանակաւոր Զինուորական Խորհուրդ»։

312 — Զեղծարարներ։

Բարոյական աջակցութիւն Ք. Միքայէլեանի յիշատակին։

Նախահաշիւ

313 Հաշուական խնդիրներ։

Ընտրութիւններ։

Զանազան որոշումներ։

Վճիռներ այլեւայլ դիմումների առիթով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

# ՆԻՒԹԵՐ Հ. Յ. Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

## Գ. ՀԱՏՈՐ

Հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց ՀՐԱՉ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

կեդրոնատեղի

HAMAZKAYIN LIBRARY
P.O.BOX 80 - 1096
BOURJ HAMMOUD - LEBANON
Tel.: 00961 - 1 - 241263 / 4
Fax: 00961 - 1 - 260329
E-mail: imphamaz@inco.com.lb
www.hamazkayin-bookstore.com

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ